ԱՅԺ

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԽՍԿՂԵՐ

II

АКАДЕМИЯ НАУК АРМЯНСКОЙ ССР
ИНСТИТУТ АРХЕОЛОГИИ И ЭТНОГРАФИИ
ГОСУДАРСТВЕННЫЙ ИСТОРИЧЕСКИЙ МУЗЕЙ АРМЕНИИ
АРМЯНСКИЙ ГОСУДАРСТВЕННЫЙ ИНСТИТУТ ФИЗИЧЕСКОЙ КУЛЬТУРЫ

АРМЯНСКИЕ НАРОДНЫЕ ИГРЫ

Подготовка текста и исследование
В. БДОЯНА

ИЗДАТЕЛЬСТВО АН АРМЯНСКОЙ ССР
ЕРЕВАН 1980

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱ
ՀՆԱԴԻՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՋԳԱԳՐՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԹԱՆԳԱՐԱՆ
ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԿՈՒԼՏՈՒՐԱՅԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԽԱՂԵՐ

Աշխատասիրությամբ՝
Վ. ԲԴՈՅԱՆԻ

II

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ԳԱ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ 1980

902.7 (C 43) ինդեքս ԳՄԴ 63.5 (2 Հ)
Հ 24

Պատասխանատու խմբագիրներ՝

ՀՍՍՀ ԳԱ թղթակից անդամ Մ. Ս. ՀԱՍՐԱԹՅԱՆ,

մանկավարժական գիտ. թեկնածու Ա. Ե. ՉԱՐՉՈՂԼՅԱՆ

Բանահավաքչական աշխատանքների մասնակից՝
Մ. Մ. ՄԱՄԻԿՈՆՅԱՆ

Գիրքը հրատարակության են երաշխավորել գրախոսներ՝
պատմական գիտ. դոկտոր Ա.Ս. Շ. ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆԸ
և բանասիրական գիտ. դոկտոր Գ. Ա. ԳՐԻԳՈՐՅԱՆԸ:

Հ 24 Հայ ժողովրդական խաղեր /ՀՍՍՀ ԳԱ, Հնագիտ. և ազգագր. ին-տ, պատմության պետ. թանգարան, /Պատ. խմբ.՝ Մ. Ս. Հասրաթյան, Ա. Ե. Չարչօղլյան.— Եր.: ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1980. [գիրք] II /Աշխատասիրությամբ Վ. Բդոյանի... 240 էջ, 4 թ. նկ.

Հատորն ընդգրկում է հայկական ժողովրդական ռազմամրցակցական խաղերը, ուժային վարժությունները, մենամարտերի ձևերը, գնդակախաղերը, ցատկախաղերը, ձիախաղերը և այլն, որոնք առանձին կարևորություն են ներկայացնում ազգագրության, սպորտի, ռազմական արվեստի պատմության և կիրառական արվեստի մասնագետների համար: Համառոտ ներածությունը և գրչանկարները բացահայտում են խաղերի կիրառման ձևերն ու բովանդակությունը:

Հ 0508000000 / 703 (02)—80 45—78

902.7 (C 43)
ԳՄԴ 63.5 (2 Հ)

© Հայկական ՍՍՀ ԳԱ հրատարակչություն, 1980

902.7 (C 43) ինդեքս ԳՄԴ 63.5 (2 Հ)
Հ 24

Պատասխանատու խմբագիրներ՝

ՀՍՍՀ ԳԱ թղթակից անդամ Մ. Ս. ՀԱՍՐԱԹՅԱՆ,

մանկավարժական գիտ. թեկնածու Ա. Ե. ՉԱՐՉՈՂԼՅԱՆ

Բանահավաքչական աշխատանքների մասնակից՝
Մ. Մ. ՄԱՄԻԿՈՆՅԱՆ

Գիրքը հրատարակության են երաշխավորել գրախոսներ՝
պատմական գիտ. դոկտոր Ա.Ս. Շ. ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆԸ
և բանասիրական գիտ. դոկտոր Գ. Ա. ԳՐԻԳՈՐՅԱՆԸ:

Հ 24 Հայ ժողովրդական խաղեր /ՀՍՍՀ ԳԱ, Հնագիտ. և ազգագր. ին-տ, պատմության պետ. թանգարան, /Պատ. խմբ.՝ Մ. Ս. Հասրաթյան, Ա. Ե. Չարչօղլյան.— Եր.: ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1980. [գիրք] II /Աշխատասիրությամբ վ. Բդոյանի... 240 էջ, 4 թ. նկ.

Հատորն ընդգրկում է հայկական ժողովրդական ռազմամրցակցական խաղերը, ուժային վարժությունները, մենամարտերի ձևերը, գնդակախաղերը, ցատկախաղերը, ձիախաղերը և այլն, որոնք առանձին կարևորություն են ներկայացնում ազգագրության, սպորտի, ռազմական արվեստի պատմության և կիրառական արվեստի մասնագետների համար: Համառոտ ներածությունը և գրչանկարները բացահայտում են խաղերի կիրառման ձևերն ու բովանդակությունը:

0508000000
Հ ———— 45—78
703 (02)—80

902.7 (C 43)
ԳՄԴ 63.5 (2 Հ)

© Հայկական ՍՍՀ ԳԱ հրատարակչություն, 1980

ԵՐԿՈՒ ԽՈՍՔ

«Հայ ժողովրդական խաղերի» առաջին գիրքը, որն ընդգրկում է հատկապես հասարակական հարաբերություններն արտացոլած խաղերը, տոնածիսական և դիցաբանական նյութերով օժտված դրամատիկական խաղատեսակները ևն, լույս է տեսել 1963-ին: Ներկա գիրքը հիմնականում ներկայացնում է հաղաբացիական և ռազմամարցակցական խաղերը, որոնք ունեն գիտական ու գործնական մեծ արժեք: Խաղանյութերն ընդգրկում են պատմական բոլոր ժամանակների կյանքի երևույթների ճստվածքները՝ նախապատմական ժամանակաշրջանի ամուսնության ու ընտանիքի ձևերը, ֆեոդալական հարաբերությունները, նախնադարյան և հեթանոսական-դիցաբանական պատկերացումները, ազգային կենցաղավարության առանձին դրվագները ևն: Դրանք հագեցած են ֆեոդալական Հայաստանի ռազմական արվեստի հարուստ նյութերով, որոնք մեր երկրի ռազմական կյանքի և պաշտպանության կազմակերպման ու հայրենասիրական պատմության համար կարևոր աղբյուրներ են: Հայկական ռազմամարզական մենամարտերն ուսումնասիրող պատմաբանները չեն կարող անտեսել այն խաղերն ու ուժային վարժությունները, որոնք վաղ միջնադարից սկսած անընդմեջ պահպանվել և օգտագործվել են ժողովրդի կողմից:

Բացի գիտական արժեքից, ներկա գրքի նյութերն ունեն նաև գործնական նշանակություն: Մասնագիտական շրջաններում կարելի է և պետք է կազմել համապատասխան դասագրքեր ու ձեռնարկներ, ընդգրկելով գործիքավորված շարժական խաղերը, ուժային վարժությունները, մենամարտերը, հետիոտն և ձիերով մականախաղերը ևն: Ձիերով մականախաղերը, նիզակախաղերը, ձիագնդակախաղերը, ձիարշավները և կառարշավները մեծ հետաքրքրություն են ներկայացնում: Մինչդեռ ձիասպորտով զբաղվող արդի կազմակերպությունները Հայաստանում գրեթե չեն օգտագործում այդ հարուստ նյութերը, նյութեր, որոնց մի մասը վերամշակելով կարելի է օգտագործել:

1950-ական թթ. կեսերին, երբ ավարտված էր սույն աշխատության շարադրանքը, խաղերի մի մասը դեռևս գոյատևում էր: Ուստի, պատմականացած խաղերը շարադրված են անցյալ կատարյալով, գոյատևածները՝ ներկա ժամանակով:

Ժողովածուն ունի հավելված, որի առաջին բաժնում զետեղված են նշանավոր մենամարտիկների կյանքի և գործունեության հակիրճ նկարագրները,

իսկ երկրորդ բաժնում՝ միջնադարյան այն օրենքները, որոնք վերաբերում են խաղացողների իրավահարաբերություններին:

Բոլոր պարագաներում «Հայ ժողովրդական խաղեր» ժողովածուի նյութերը մեզ հնարավորություն են ընձեռում կազմակերպելու խաղերի ազգագրական կինոնկարահանումները: Դա ժամանակի պահանջն է, մեր այս գեղեցիկ բնագավառի հաստատագրումը և հետագա սերունդներին նվիրաբերելու մեր սրբազան պարտքը:

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Ռազմամրցակցական խաղերը, ի թիվս այլ խաղերի, ժողովուրդներին ուղեկցել են դեռևս նախնադարից։ Ժամանակի ընթացքում դրանք թեև կրել են փոփոխություններ, բայց երբեք դուրս չեն եկել ժողովրդի կենցաղից։ Դրա պատճառները երկուսն են եղել՝ պատանի և երիտասարդ սերնդի մարմնի կոփումը, առողջ մարմնի դաստիարակությունը և ռազմական նկատառումները։ Այս երկու անբաժանելի հանգամանքների հիմքում ընկած են եղել հայրենի երկրի պաշտպանության գաղափարը և տնտեսական զբաղմունքները։

Ռազմամրցակցական յուրաքանչյուր խաղի հիմքում ընկած են այնպիսի երևույթներ, որոնք հատուկ են ամեն մի երկրի քաղաքացիական, քաղաքական և ռազմական կյանքին ու արվեստին, որովհետև խաղը կյանքի բարդ երևույթների վերարտադրություն է։ Ներկա գրքի խաղանյութերի մեջ առկա են մասնավորապես բնակավայրը, հայրենիքը, դրանք պաշտպանելու համար հաստատված ամրոցները, այն թիզ հողը, որի համար ծավալվող խաղակռիվների մեջ մինչև իսկ անձնազոհություններ էին լինում։ Դրանով էլ պետք է բացատրել խաղերի ընթացքում տեղի ունեցող դժբախտ դեպքերի՝ մարմնի խեղման և մինչև իսկ մահվան փաստերի ներելիությունը։

Ռազմամրցակցական խաղերի մեջ առկա են հակադիր «բանակներ» կազմելու եղանակներ, ուժերի հավասարակշռության համար վիճակահանման անխախտ օրենքներ, որ ստեղծել են ժողովուրդները իրենց դարավոր կյանքի ընթացքում։ Դրանք այսպես կոչված խաղաղ շրջանի գործող օրենքներն են, որոնք, սակայն, խախտվում են այն դեպքում միայն, երբ խաղային կռիվները ծագում են այնպես անակնկալ, ինչպես իրական կռիվները։

Խաղերը, նայած իրենց բնույթին, դրսևորվում են խաղապետների՝ հրամանատարների միջոցով։ Սրանք են, որ վիճակահանության կարգով խմբեր են ձևավորում։

Ռազմախաղերի մեջ առկա են պաշտպանության ենթակա կոնկրետ օբյեկտները, ինչպես, օրինակ՝ բերդերը, գործողությունների սահմանները և այլն։ Խաղը խմբերի կամ անհատ մրցողների միջև ստեղծում է մի շարք պատրանքներ՝ ռազմաճակատներ, հետախուզումներ, հայտարարությամբ կամ անակնկալ հարձակումներ, պատերազմական գործողություններ։ Այստեղից էլ՝ մահ-չեզոքացումը, գերեվարումը, գերիներին ազատելու եղանակները, գերիների փոխանակման ձևերը և այլն։ Իսկ անհատի կամ խմբի հաղթանակը ռազմական հաղթանակի պատրանքն է, որը խրախուսվում է հանդիսատեսների կողմից։ Այդ բոլորը դառնում է զրույցի նյութ, որը համաձուլվածք կազմելով իրական ռազմադաշտային հերոսների գործողությունների պատմությունների հետ, վեր է ածվում ավանդությունների ու հերոսապատումների՝ անդրադարձ ազդեցություններ գործելու համար։

Այս գրքի նյութերից պարզ երևում է, որ հայկական մրցակցական խաղերի մեծ մասը նահապետական բնույթ ունի։ Մրցախաղերի զգալի մասին աղջիկները չեն մասնակցել այն պատճառով, որ ֆեոդալական կարգերն ու հայրիշխանությունը Հայաստանում խիստ երկար են տևել։

Ուժային վարժություններ։ *Ուժային վարժու-*

թյունները կամ ծանրություններ հաղթահարելու ձևերը կարևոր տեղ են գրավում երիտասարդության ֆիզիկական դաստիարակության մեջ։ Սթե մենամարտերն ու կռվամարտերն այն ձևերն են, որոնք հատկապես մարդու ճկունությունն ու ճարպկությունն են մարզում, ապա ծանրություններ հաղթահարելը, բարձրացնելը, մղելը, նետելը, շրջելը, ձգելը և այլն նրան հզորացնում են։ Ուժային վարժությունները ժողովուրդը կիրառում է տակավին մանկական տարիքից։ Ծնողներն անցյալում մանկան մարմնի կոփմանն են դիմել դեռևս ծնված րոպեից. լոգանքի, շփումների, գրկախաղերի, քայլքախաղերի, քայլելուն նպաստող սայլակների և այլ պարագաների միջոցով կոփում էին մարմինը և սովորեցնում իրենց կարողության չափով ուժ գործադրել։ Իսկ երբ երեխան ինքնուրույն խաղալ էր սկսում, սովորում էր մեկ ձեռքով կամ պարսատիկով քարեր նետել, երկու ձեռքով քար ու փայտ բարձրացնել, գլորել, մեջքով կամ գրկով ծանրություններ տեղափոխել ևն։ 5—6 տարեկան հասակում, հնուց սահմանված կարգի համաձայն, տղան մասնակցում էր իր հասակային դասին պատկանող երեխաների խաղերին ու կատակակռիվներին։

Որոշակի դեր էր խաղում պատանուն ամուսնացնելու սովորությունը՝ կապված հողային հարաբերությունների հետ։ Իսկ դա պատանուն մղում էր դեպի ֆիզիկական վարժությունները, որովհետև հնում հայերի մեջ սովորություն է եղել փեսայի ֆիզիկական հմտություններին կարևորություն տալը։ Փեսացուն նախապես պետք է գյուղին կամ համայնքին հայտնի լիներ իբրև ուժեղ տղա։ Այսպես, օրինակ՝ Մշո սովորության համաձայն, երբ փեսան առաջին անգամ այցելում էր ճշանածին, պետք է վերցներ փեսի ֆարը, որ լուսյամբ հրամցնում էին աներանք։ Այս սովորությունն, անշուշտ, ընդհանուր է եղել, բայց մեր դարի սկզբներին, կապիտալիստական հարաբերությունների ներթափանցման հետևանքով տեղի է տվել։ Դա փաստորեն յուրատեսակ հասունության վկայական էր կամ նրա մի էջը։ Այդ երևում է թեկուզ նրանից, որ երիտասարդ կամ տարեց մարդկանց տարերային ղեկավարությամբ ամուսնությանը նախորդող բազմապիսի ուժային վարժություններ էին կատարվում։ Դրանք նպաստում էին ձեռքերի, ոտքերի ու մեջքի մկանների զարգացմանը։ Գյուղական հավաքույթներում, մեծ մասամբ աշնանն ու ձմռանը, հրապարակ էին հանվում տարբեր չափերի ողորկ և ծակոտկեն քարեր։ Պատանիներն ու երիտասարդները շարունակ ուժփորձություններով էին զբաղվում։ Ձեռքին հորիզոնական կամ ուղղահայց դիրք տալով, նրանք քարը երկու ձեռքով բարձրացնում էին, հավասարեցնում ուսերին, գլխից վեր էին բարձրացնում, ապա հանդարտ վայր իջեցնում։ Մեջքի մկանների զարգացմանը նպաստում էին երկու ձեռքով ծանրություններ բարձրացնելու տարբեր ձևերը։ Նույն Մշո մի խաղի համաձայն, ուժը չառած պատանուն դիտողություն անելիս տարեց ղեկավարը ճկույթը մեկնում էր դեպի նա, որ նշանակում էր՝ «Դու տակավին մանուկ ես»։ Այս կարգի դիտողությունները հայտնի էին բոլոր շրջաններին։ Երիտասարդ տղաներն ավելի շատ էին զբաղվում մարզական խաղերով ու մրցումներով։ Այսպիսի ստուգումները հաշվի էին առնվում նաև ընտանիքներում, որովհետև հասարակական ծաղրը վիրավորական էր։ Ձեռնամկանների զարգացմանը բավական նպաստում էին ծանր մահակները, բահերն ու թիակները ծայրերից բութ մատի ուժով բարձրացնելու փորձերը։ Այս վարժությունները մեծ մասամբ կատարում էին գառնարածները, հովիվները, հոտաղները, կալվորները և այլն։ Իսկ մեջքի մկանների զարգացմանը օգնում էին երեխաներին մի ձեռքով բարձրացնելու ձևերը (նկ. 7)։

Այս կարգի վարժությունների մասին ակնարկներ կան նաև միջնադարյան գրականության մեջ։ Վահրամ վարդապետը հաղորդում է, որ Ռուբեն իշխանին իր ժամանակ համեմատում էին խրայելացի Սամսոնի հետ։ Այդ իշխանը, ըստ պատմիչի, ծանրությունը «քաջի նման վերցնում և բերում դնում է կայսեր առջև»[1]։ Սեբեոս եպիսկոպոսը, նկարագրելով Սմբատ Բագրատունու զեղեցիկ կազմվածքը, հպարտությամբ հիշում է այն դեպքը, երբ Բագրատունին, ի զարմանս ականատեսների, ձեռքերով ծառից կախվում, ոտքերով գրկում է իր ձին ու գետնից կորում (նկ. 1)[2]։

---

1 Վիպասանութիւն Հայոց չափեալ ոտիւք՝ ւտն Վահրամայ մեծի վարդապետի (տե՛ս «Ոդր եդեսեայ քաղաքի» գրքում), Կալկաթա, 1832, էջ 112—113։

2 Սեբէոսի Եպիսկոպոսի Պատմութիւն, Երևան, 1939, էջ 54։

Բոլոր խաղերի նման ծանրությունների հաղթահարումն էլ երբեմն դժբախտ դեպքերի առիթ է դառնում։ Մ. Գողը նշում է, թե «երիտասարդները սովորություն ունեն միմյանց վայրիվերո շարժել, բարձրացնել ծանրություններ, ինչպես օրինակ՝ քարեր և այլ այսպիսի առարկաներ, որի հետևանքով վնասում են միմյանց»[3]։ Ապա հեղինակը դատապարտում է գրավ-գրազով ծանրություններ հաղթահարելու սովորությունները. առանձնապես դիտողություն է անում հրահրողներին։ Նույն հարցի մասին Սմբատ Սպարապետը գրում է. «Իսկ եթե գրավով ծանր առարկա վերցնեն, կամ ուժ-փորձուկ կատարեն, որ երիտասարդների համար սովորական երևույթ է և խաղի ժամանակ անում են, ապա նա, որ մյուսին հրահրել է այդպիսի գործողության և վնասել է ընկերոջը, նույնպես նրա վնասի կեսի տերն է, որ գրեցինք»[4]։

Ծանրություններ հաղթահարելու երևույթները զեղեցիկ չափազանցումներով արտացոլված են նաև ժողովրդական բանահյուսության մեջ։ «Սասնա ծռեր» էպոսից հայտնի է, թե ինչպես փոքր Մհերը փրկում է հայրենի քաղաքը հեղեղի տարերքից՝ նրա առաջ հսկա մի քար դնելով ու ջուրը ճեղքելով[5]։ Սինամ-Սարիմը երկար ժամանակ իր ծունկը սնքարի տեղ է ծառայեցրել, որի վրա հանգչում էր Սասնա նորակառույց տունը[6]։ Դևերի աշխարհն ընկած Հյուսնի Որդին մենակ վերցնում է մսով ու ջրով լի պղինձը, որ յոթ դևերը հազիվ էին վերցնում։ Այսպիսի առասպելներ բանահյուսության մեջ շատ են, որոնց արժեքը տվյալ դեպքում ուժային վարժություններով զբաղվելու, ուժը գործողության մեջ դնելու սովորությունների արտացոլումն է։

Ուժային վարժությունների մեջ կարևոր տեղ է գրավում նետելու արվեստը, որի տարրերը ևս ընկած են հայկական խաղերի հիմքում։ Սրանք հին հույների և հռոմեացիների սիրած զբաղմունքներից էին, որոնց օլիմպիական խաղերի ժամանակ նշանակալից տեղ էր տրվում։ Նետմամբ առավելապես զբաղվում էին երեխաները և պատանիները։

Հիշենք գավազանները ոտքերի շեքից դեպի ետ նետելը, թափահարելով դեպի առաջ նետելը, փոքր քարերը հեռու նետելը, մեծ քարերը մի կամ երկու ձեռքով առաջ նետելը, մանր քարերը դեպի երկինք նետելը և այլն։ Հենց այս տարբեր ուղղությունները ցույց են տալիս, որ նետումների նպատակը մարմնի բազմակողմանի մարզումն է, կյանքին պիտանի դարձնելը։

Այսպես, օրինակ՝ Ագաթանգեղոսը վկայում է, թե Տրդատն ընդունակ էր մարդկանց պարիսպներից դուրս նետել[7]։ Ուխտանես եպիսկոպոսը և Ներսես Շնորհալին մասամբ չափազանցնելով հավաստում են, թե Տրդատը նաև երիվարներ ու էշեր էր նետում[8]։ Իսկ առասպելն ասում է, որ Տորք Անգեղը հսկա քարեր էր նետում դեպի ծովը և նավեր խորտակում[9]։ Այս և սրա նման շատ առասպելներ ժողովուրդն ստեղծել էր երիտասարդ սերնդին ծառայեցնելու համար։

Ձգել-քաշելու գործողությունը նույնպես վաղ հասակից է սկսվում։ Սրա տարրական ձևերն են՝ իրար ձգելը, գավազանը հորիզոնական դիրքում պահելով միմյանցից խլելը, սահնակով և սայլակով բեռներ քաշելը և այլն։ Մանկական և պատանեկան խաղերի մեջ առավելապես պահպանված են խմբերով իրար ձգելու ձևերը։ Ընդ որում, այդպիսի խաղերն ունեն բարդ սյուժե. մի շարք խաղային ձևեր կատարելուց հետո, հակադիր խմբերը շղթաներ կազմած իրար ձգում են և այս վերջաբանով խաղն ավարտում։

Ձգելու ձևերին տիրապետելը նույնպես կյանքի պահանջներից էր բխում։ Միջնադարյան տեխնիկայի հետամնացության պայմաններում իր տնտեսությունը կազմակերպելու տեսակետից մարդու բազողունակությունը կարևոր գործոն էր։ Իսկ այդ

---

3 Տե՛ս Հավելված II-ը։

4 Դատաստանագիրք Սմբատ Իշխանի (Գունդստաբլի), էջմիածին, 1918, էջ 69։

5 «Սասնա ծռեր», հատ. Ա, 239։

6 «Սասնա ծռեր», հատ. Բ, II մաս, էջ 657։

7 Ագաթանգեղայ Պատմութիւն Հայոց, Թիֆլիս, 1914, էջ 32։

8 Ուխտանէս եպիսկոպոս, Պատմութիւն հայոց, Վաղարշապատ, 1871, էջ 82. Տե՛ս նաև Ներսեսի Շնորհալւոյ Հայոց կաթողիկոսի բանք չափաւ, Վենետիկ, 1830, էջ 516—517։

9 Մովսիսի Խորենացւոյ Պատմութիւն հայոց, Տփղիս, 1913, էջ 115. Ստեփանոսի Տարօնեցւոյ Ասողկան Պատմութիւն տիեզերական, Ս. Պետերբուրգ, 1885, էջ 36. Մեծին Վարդանայ Բարձրբերդցւոյ Պատմութիւն տիեզերական, Մոսկվա, 1861, էջ 45—46. Տե՛ս նաև Ներսեսի Շնորհալւոյ Հայոց կաթողիկոսի բանք չափաւ, էջ 583։

գործում մարմնամարզությանը կարևոր դեր էր պատկանում։

Հայտնի է, որ ֆեոդալական Հայաստանի լեռնային նահանգներում ճանապարհների բացակայության պատճառով բեռները մեծ մասամբ գրաստներով, շալակով և մարդու ուժով քաշելով էր տարվում։ Սահնակը գետնի և, մանավանդ, ձյան վրայով քաշում էր մարդը կամ լծկանը։ Սասունում դահուկ կոչվող այդ սահնակին միայն մարդն էր լծվում և լեռներից անասնակերը հասցնում փարախները։ Միայն քաջավարժներն էին, որ կարողանում էին այս ծանր աշխատանքը կատարել, որովհետև վայրէջքներում երբեմն սահնակը քաշողին անդունդն էր նետում. այդ սահանքներին պետք էր զսպել ամբողջ բեռը։ Ուստի բնական է, որ Սասունում ձգելու խաղերը դեղեցիկ ու դժվարին ձևեր ունեին։ «Բամբակի գնալ» խաղի մեջ ցույց է տրված, թե ինչպես խաղացողը կանգնում էր պարաններով կապված ձողին և կապերի մյուս ծայրերը առիքի գերանին գցելով, ինքն իրեն վեր էր քաշում (№ 67)*։ Իսկ մի այլ խաղի մեջ, որ Հայաստանում ընդհանրացած էր, երկու հոգի միևնույն փայտ-գավազանից բռնելով միմյանց ձգում, բարձրացնում էին և այլն։

Ժողովրդին ծանոթ էր նաև սայլին լծվելը, լծկանի հետ բեռ քաշելը։ Ըստ երևույթին, մարդու ուժով հողը հերկելու հնագույն սովորության մնացուկն է պահպանվել էպոսի մեջ, երբ Դավիթը մենակ մի ողջ գութան է քաշում[10]։ Միանգամայն հնարավոր է, որ ստրկատիրական հասարակարգում մարդը հողագործության մեջ երբեմն ծառայեր իբրև քաշող ուժ, ինչպես ճորտատիրական վրաստանում։ Այսպիսի երևույթի մի արտահայտություն գտնում ենք Զաքարիա Սարկավագի մոտ (XVII դ.). քանաքեռցի Մովսես անունով «քաջ և կորովի և ուժեղ» գյուղացին շարքից դուրս եկած գոմշի փոխարեն սայլին լծվում և օրանը Ավանափոսից գյուղ է տեղափոխում[11] (նկ. 2)։ Այնուհետև վիրավոր գոմեշը շալակով նա տուն է տեղափոխում։ (Գոմեշի հետ լծվելու մասին է պատմում նաև № 114 խաղը)։ Այսպիսի աննախադեպ հզորության մարդը կարող է հասնել նման գործերով նախապես զբաղվելու շնորհիվ։

Ձգելուց ավելի կարևոր էր շալակելը։ Վերոհիշյալ պատճառներով լեռնային նահանգներում օրանը, անասնակերի տեսակները, վառելիքը, աղունը, մթերքները և այլ բազմաթիվ բեռներ մարդիկ շալակով էին տեղափոխում։ Կային գավառներ, ուր գրաստը երկրորդական էր. օրինակ՝ Մոկսում հիմնական բեռնակիրը մարդն էր։ Այստեղից էլ խաղերի մեջ շալակելու անթիվ կրկնություններ, որ առավելապես արտահայտվում էին իբրև տուգանք-վերջաբաններ։

Տարոնի «Թեռ բարձրացնել» խաղի մեջ երեխաներից երկուսը թեռ (խուրջինաձև պարկ) էին ձևանում և երրորդը բերանքսիվայր պառկած տեղից նրանց բարձրացնում էր և բռնած քայլում (№ 41)։ Նույն տեղում «ջվալ» ձևացող պատանուն ծնկած տեղից վեր էին բարձրացնում (№ 40)։

Շալակելով բեռ տեղափոխելու կենցաղային երևույթներից էր դաշտային աշխատողներին կեր ու ջուր տանելը, որ մեծ մասամբ կանանց գործն էր։ Այս երևույթն արտացոլված է էպոսի մեջ, ուր Դավիթը մերթ հարխայի կարաս և մերթ քառասուն կանթանի պղինձ է շալակում, որի մեջ ղևերը 40 հորթ են եփել[12]։

Մատների, բազուկների և ոտքերի ուժեղացման հետ են կապված մի շարք խաղ-վարժություններ, որոնք պատկանում են շրջելու ձևերին։ Այդ խաղերից էին՝ զանազան դիրքեր ընդունելով մատներով իրար հետ մրցելը, բազուկներ շրջելը, մատներով երկար փայտաձողեր շրջելը, բերանքսիվայր պառկածին ձեռքով շրջելը, մեջքին պառկելով և ոտքերն իրար կանթելով միմյանց շրջելը, բերանքսիվայր պառկած վեր ծալած սրունքն ուղղելը և այլն։

Ինչպես երևում է, խաղերի այս տեսակները փաստորեն մենամարտերի ժամանակ կիրառվող ձևերի արտահայտություններն էին։ Դրանց հարակիցներն էին՝ ծալելը, ոլորելը. կորելը, սեղմելը և այլն։

---

* Այստեղ և այսուհետև փակագծերում №-ները ցույց են տալիս խաղերի բնագրերի համարները։

10 «Սասնա ծռեր», հատ. Բ, I մաս, էջ 285—286։

11 Զաքարեայ Սարկաւագի Պատմագրութիւն, Վաղարշապատ, հատ. 3, էջ 43։

12 «Սասնա ծռեր», հատ. Գ, I մաս, էջ 23, 258, 371—372 և այլն։

Այսպիսով, պարզ տեսանելի է, որ հայ պատանիներն ու երիտասարդներն իրենց խաղերի ու վարժությունների մեջ կիրառում էին բազմապիսի մարզաձևեր։ Այդ արվեստին տիրապետելու համար երեխաները հասակի հետ մեծացող դժվարությունների հաղթահարման գործում ունեին իրենց տարերային կարգով ուսուցողները՝ ավագ սերունդը։

Մենամարտեր.— Հայկական խաղաշխարհում մենամարտերը գեղեցիկ բնագավառ են ներկայացնում։ Հենվելով ուժային վարժությունների բազմապիսի ձևերի վրա, մենամարտիկներն իրենց մրցություններում ցուցադրել և ցուցադրում են երիտասարդության ուժի ամբողջ գեղեցկությունը։

Մենամարտերն իրրև այդպիսիք, ունեն տարբեր առումներ. դրանք կիրառվելով տակավին մանուկ հասակից, աստիճանաբար ընդլայնում են իրենց շրջանակները, ձեռք բերում նորանոր ֆունկցիաներ։ Մենամարտն իր հասարակ մարզական վիճակից հասնում է հասարակական առումների, ընդհուպ մինչև ռազմական ու պետական կարևորություն ներկայացնող երևույթները։

Մենամարտերն սկսվում են տղաների այն հասակից, երբ նրանք քայլել են սկսում և կարողանում են ձեռնամարտել։ Ծնողները և մանավանդ պապը մանուկների հրահրողներն ու դատավորներն են։ Մենամարտի մասին դեռևս գաղափար չունեցող երեխաներն իրար փաթաթվում և միմյանց գետին են գլորում. նրանց օգնում են մեծերը։ Երեխայի հետ մենամարտի է բռնվում նաև ինքը՝ տարեց տղամարդը, ստեղծելով այն կեղծ դրությունը, թե իբր երեխան նրան գետնում է։ Այս շրջանը բավական երկար է տևում, մինչև երեխան կեղծն անկեղծից տարբերում և մտնում է ինքնուրույն մենամարտելու շրջանը։ Հինգ-վեց տարեկանից սկսած տղաներն անվերջ մենամարտում են մինչև պատանեկության վերջը։ Այստեղ 1—2 տարով մեծերն իրենցից փոքրերի հրահրողներն ու դատավորներն են։ Այս շրջանի մենամարտերի համար որպես հրապարակ ծառայում են փափուկ փոցոները և կանաչ տարածությունները։

Մենամարտերը հասարակական ուշադրության առարկա են դառնում պատանիների 16—18 տարեկան դառնալուց հետո։ Այս փուլում արդեն աչքի ընկած կամ միջին ուժատեր պատանիներին գյուղական կամ քաղաքային հրապարակ հանողը մի կողմից անձնական հետաքրքրություն է, մյուս կողմից՝ երիտասարդ և տարեց հետաքրքրասերներն են։ Հրապարակներում հանպատրաստից մրցող պատանիներին դրդողը նյութական շահագրգռվածությունը չէ։ Մրցության գրավը սակավ բացառությամբ եղել ու մնում է բարոյական վարձատրումը։ Նյութական շահագրգռվածություն չունեն նաև մարտը ոգևորողները՝ տարերային **գուպարադիրները և թափիչները**։

Անցյալում այսպես էին ծավալվում նաև երիտասարդների մենամարտության տեսարանները։ Պատասխանատվությունն աստիճանաբար մեծանում էր, բայց այստեղ ևս մենամարտերը պարզև չէին ենթադրում։ Խորհրդատուները կանխում էին սխալներն ու պատահականությունները, պահպանում հասակային կարգը, թեև լինում էին նաև հասակը հաշվի չառնելու փորձեր։ Յուրաքանչյուր մենամարտության ժամանակ հանդիսատեսները կողմերի էին բաժանվում. դրա հիմքերն էին՝ ազգակցական, ընկերական և խնամիական կապերը։ **Գուպարադիրներն ու թափիչները** ջանում էին, որպեսզի մրցությունները բարդություններ չտային։ Բոլոր դեպքերում մրցությունները կատարվում էին հասարակական ընդհանուր գիտակցության պայմաններում, որովհետև այդ արվեստին տիրապետելը բխում էր կյանքի բազմակողմանի պահանջներից և հսկողության կարոտ էր։

Այժմ անդրադառնանք դրանց կենցաղային կողմին։

Մենամարտերի կենցաղային բնույթ ասելով պետք է հասկանալ այն առիթները, որոնց շնորհիվ երիտասարդները մենամարտեր էին կազմակերպում։ Դրանք ամենից առաջ ժողովրդական մասսայական տոներն էին՝ Բարեկենդանի, Համբարձման, Վարդավառի և այլ խրախճանքները։ Դրանք հնում հիմնականում նվիրվում էին բնության զարթոնքին, պտղաբերության ու բերքի տոներին և այլն, այսինքն սովորույթները սերտ աղերսված էին բուն կյանքի համար ծավալվող պայքարի հետ, որ մղվում էր բնության դեմ։ Դեռևս նախնադարյան համայնական հասարակարգում և հետագայում ևս մենամարտերը, իբրև դրանց՝ զինված և հեծյալ մենամարտերը, իրական պայքար էին որսի կենդանիների և հակառակորդ տոհմերի դեմ՝ հանուն սննդի հայթայթման։ Հնագույն ժամանակներում մենամար-

տերը իրական կովածներ էին հանուն առևանգմամբ ամուսնության կազմակերպման։

Որսորդությամբ անուղղ հայթայթելու և առևանգմամբ ամուսնության վերաբերող խաղանյութերը հիմնականում ավանդված են ժողովրդական բանահյուսության և վաղ միջնադարյան գրական հուշարձանների միջոցով։ Կան նաև ազգագրական մասնակի տեղեկություններ, որ պահպանվում էին մինչև XX դ. սկզբները։ Որսորդական կյանքից եկած երևույթներն էին, որ ավելի ուշ ներաճեցին շատ ժողովուրդների կրկեսային խաղացանկերի մեջ։

Մովսես Խորենացին վերապատմելով Փարմենիանոսի միտքը, գրում էր, թե հայոց Տրդատ թագավորը մանկությունից սկսելով մարմնամարզումները, հետագայում դարձել էր կորովի ձիավոր, հաջող էր դինավարժության մեջ, գիտեր պատերազմական արվեստը։ Նա պելոպոնեսցի Հիփիտեի հրամանով կրկեսի մեջ ցույց է տվել գերազանց ուժ. երկու վայրենի ցուլերի եղջյուրներ պոկել և վզները ոլորելով ջախջախել է[13]։ Սեբեոսի հաղորդման համաձայն, երբ Սմբատ Բագրատունուն քաղաքական նկատառումներով մերկացնում և գցում են կրկես, որպեսզի գաղաններին կեր դառնա, նա հաղթում և սպանում է արջին ու առյուծին, իսկ ցուլի եղջյուրները ջարդում է ու պոկում մի ոտքի կճղակը[14]։ Ղևոնդ Մեծի հաղորդմամբ Լևոնի որդի Կոստանդինը առյուծին դյուրությամբ հաղթում էր[15]։ Իսկ մեզ ծանոթ վարագղատ Արշակունին համեմատվում էր Տրդատի հետ։ Միաժամանակ մի քանի մարդու գետնող վարագղատը առյուծներ էր կոտորում[16]։

Ամենաուժեղ կենդանիների հետ մենամարտելու արվեստը գեղեցիկ արտացոլում է դտել «Սասնա ծռերում»։ Մեծ Մհերը հայրենասիրական մղումներով դիմագրավում և բերանը ճեղքելով սպանում է առյուծին։ Իսկ Դավիթն արդեն բոլոր գազաններին սանձող հերոս է։ Այս երևույթները գալիս են մասնավորապես Սասունի նման մի երկրից, որտեղ անտառային վայրի կենդանիների որսը, ինչպես նաև կորեկի ցանքերը ոչնչացնող արջերի դեմ մղվող պայքարը շարունակվում էր մինչև ժողովրդի արտագաղթը (1915)։ Դեռ ավելին։ Այստեղ գազանների դեմ պայքարելու փորձ ձեռք բերելու և համառնալու համար կար «Կելկռիվ» անունով մի վտանգավոր խաղ-մենամարտ՝ կատաղի շան հետ (№ 154)։

Փոխադարձ պայմանավորվածությամբ գայլխեղդ շունը բերվում էր այն ծառի մոտ, որտեղ պատանին մենամարտելու էր նրա հետ։ Խնայողություն չէր կարող լինել. տղայի տուժանքները կամ շան սպանվելն անհետևանք էր մնում։ Տղան կռվում էր քարերով, որոնք պետք է այդտեղ առատ լինեին։ Հասարակության աչքի առջև այդ կռիվը վերջանում էր շան և կամ պատանու պարտությամբ. պարտվող տղան ծառն էր բարձրանում։

Այս ծանր մենամարտությունը տարածված էր նաև մյուս նահանգներում, բայց ավելի մեղմ ձևով՝ կողմնակիների միջամտությամբ կամ շունը շղթայով բռնելով։

Սասունում կար նաև մանկական մի խաղ՝ «Արջախաղ», որտեղ պայքարը հովվի և արջի դերակատարների միջև էր տեղի ունենում (№ 155)։

Կյանքում և կրկեսներում, բանահյուսության մեջ և խաղերում այդ բոլորը նախնադարյան և միջնադարյան որսորդությունից մնացած սովորույթների, գազաններից և վտանգավոր կենդանիներից պաշտպանվելու ձևերի ուսուցման, անվտանգության և դյուղատնտեսության պաշտպանության համար ձեռք առնվող միջոցների հետքերն էին։ Ուստի և կենդանիների հետ մենամարտի ամեն մի ձև, որ ձեռք էր բերվում խաղային սպորտի և որսորդական սպորտի միջոցով, նույնքան կարևոր, գործնական նշանակություն ուներ, որքան ռազմական ամեն կարդի մենամարտի ձև։

Մինչև XX դ. առաջին կեսը գրեթե ամենուրեք ուխտագնացությունների ժամանակ շարունակվում էին ըմբշամարտերը։ Այս սովորությունների մեջ կար դիտակցվող երկու հիմնական նկատառում. ֆիզիկական դաստիարակությունը և երկրորդը՝

---

13 Մովսիսի Խորենացւոյ Պատմութիւն Հայոց, էջ 217—218։

Համմ. Ստեփանոսի Տարօնեցւոյ Ասողկան Պատմութիւն տիեզերական, էջ 53։

14 Սեբէոսի Եպիսկոպոսի Պատմութիւն, էջ 57։

Համմ. Սամուէլի Քահանայի Անեցւոյ Հաւաքմունք ի դրոց պատմագրաց յաղագս դիւտի ժամանակաց անցելոց մինչև ի ներկայիս. ծայրաքաղ արարեալ, Վաղարշապատ, 1893, էջ 76։

15 Պատմութիւն Ղևոնդեայ Մեծի Վարդապետի Հայոց, Ս. Պետերբուրգ, 1887, էջ 143։

16 Տե՛ս Ներսեսի Շնորհալւոյ Հայոց կաթողիկոսի Բանք չափաւ, էջ 532։

երիտասարդների ուժի ցուցադրման մասին հասարակական կարծիք ստեղծելը, որը հենց ամուսնության գործի կազմակերպման նախնական շրջանն էր։ Քանի որ հին հասարակության մեջ այդ հարցերին լուրջ նշանակություն էին տալիս, պատահական չէ, որ բանահյուսության մեջ քաջերի ամուսնությանը գրեթե միշտ հաջորդում է որևէ հերոսական գործողություն։ Այդպես են «Սասնա Ծռերի» առաջին երեք ճյուղերի գլխավոր հերոսները։

Եթե երիտասարդն իր ֆիզիկական ուժի մասին հասարակության մեջ լավ համբավ է ստեղծել, նա համարձակ կարող է խնդրել սիրած աղջկա ձեռքը։ Դա նշանակում է, որ տղան ամենից առաջ պիտանի աշխատավոր է։

Մենամարտերը, ըստ բանահյուսության, ներկայացնում են ամուսնության ամբողջ ցիկլը՝ պատգամախոսությունը, հարսնառի և հարսանիքի ծեսերն ու մենամուսնական ընտանիքի պատվի պաշտպանությունը։ Ընդ որում բանահյուսությունը պահել է դրանց հնագույն ձևերը։ Ամենանախնականն այն է, երբ փեսացու որոնողն ու ընտրողն աղջիկն է։ Պայմանն այն է, որ հավանած տղան ուժով նրան հաղթի, մեջքը գետնով տա։ Մեր հոգմամբ այս ֆիզիկական ուժերի բախումը միաժամանակ խորհրդանշում է մայրիրավական և հայրիրավական տոհմերի բախումը։ Մենք ստույգ չգիտենք, բայց կարող ենք կռահել, որ մայրական տոհմի անկման շրջանում ծագելու էին այդպիսի ծիսակռիվներ։

Այս իմաստները գտնում ենք Աշտարակի «Ամիր-Շամիրի հեքիաթի» մեջ, ուր Նազիկ թագավորի Ալմաստ անունով աղջիկը զենք ու զրահով և տղամարդու հագուստով դաշտ դուրս գալով կորիճ էր որոնում, որպեսզի վերջինս իրեն հաղթեր մենամարտության մեջ։ Բոլոր հանդիպած հերոսները հաղթվել են և մեռել իր ձեռքով։ Ի դեպ է ասել, որ բոլոր դեպքերում, հաղթողը կին լիներ թե՝ տղամարդ, նույնիսկ մարդ թե գազան, նրան իրավունք էր վերապահված գլխատել հաղթվածին։ Բացարձակ է մեռնող և ծնվող տոհմերի կատաղի պայքարը, կնոջ «համաշխարհային պարտությունը» և տղամարդու համաշխարհային հաղթանակը։ Երբ կինն է հաղթում, անխնա է տղամարդու հանդեպ. նա պետք է գլխատի, որովհետև վրեժխնդիր է։ Բայց բանահյուսության մեջ այսպիսիք խիստ սակավ են։ Բնորոշը տղամարդու հաղթանակն է, որովհետև ժամանակը նրա օգտին է գործում։ Այդ պատճառով հաղթող տղան աղջիկ ըմբիշին իսկույն նետում է և օգնում, որ բարձրանա և ապրի։ Հենց այսպիսին է Ալմաստի ախոյան Ամիր-Շամիրի մենամարտի արդյունքը։ Ըստ հեքիաթի, Ալմաստը «Մի սամթ ուներ, ուսերից բռնած վախտը ինքը մեկնվըմ էր, տղին քցում»։ Ուժի և աշալըջության շնորհիվ Ամիր-Շամիրը Ալմաստի մեկնման վայրկյանին ծունկը դնում է կրծքին և հաղթում։ Բայց նա դրանով էլ չի կարողանում արդեն անձնատուր եղած աղջկանը տիրել, որովհետև աղջկա հայրը ևս իր հանձնարարությունն ուներ։ Ամիր-Շամիրը կարում է դևի գլուխը, ազատում գերված տղային և ապա ամուսնանում Ալմաստի հետ[17]։

Ալմաստի վարքագիծը հատուկ է նաև էպոսի Դևդեուն Խաթունին. սա ծպտված դիմավորում է Սաղնաստարին, մենամարտի մեջ փորձում ուժը և առաջարկում իր ձեռքը։ Այստեղ էլ տղան նրա մեջքը գետնով է տալիս և հաղթում[18]։ Այսպես ծպտված է հանդես գալիս նաև Խանդութը և նույն հնարքով հաղթվելով՝ անձնատուր լինում[19]։

Պատմականորեն նոր առում է, երբ տղան ինքն է ներկայանում աղջկան՝ իբրև ուզնկան և մենամարտում նրա հետ։ Այս երևույթն սկըզբնավորում է մենամուսնությունը և պատրիլոկալ բնակվածությունը։ Երևան է գալիս խանդը. ուզընկանը հարկադրված է պայքարել աղջկա բոլոր երկրպագուների դեմ և մենամարտում հաղթելով «ձեռք բերել» ակնկալված աղջկան, դարձնել հարս։ Ընդ որում հարսի համար ուզնկան տղայից բացի երևան են գալիս նաև ուղեկից պատգամախոսներ։

Այսպես, Խանդութի առաջարկով Դավիթը մենամարտում է նրա երկրպագուների հետ և գլխատում նրանց։ Ապա ծանր մենակռվի է բռնվում նաև ծպտված Խանդութի հետ, տիրում նրան[20]։

«Քաջ Նուբար» հեքիաթում Բաթման Ղլիճ

---

17 Ն. Լալայան, *Մարգարիտներ հայ բանահյուսության*, հատ. Գ, Թիֆլիս, էջմիածին, 1914—1915, էջ 91—92.

18 «Սասնա ծռեր», Բ, հ., II մաս, էջ 245—246։

19 «Սասնա ծռեր», Բ հ., I մաս, էջ 333—334։

20 «Սասնա ծռեր», Բ հ., II մաս, էջ 516—518։

ըմբիշը թագավորի աղջկանն ուզելիս մենամարտում է Քաջ Նուբար ըմբիշի հետ, բայց հաղթվում է. «Քաջ Նուբար մտավ Բաթման Ղլիճ Փահլըվանի ընկի տակ, զարկեց, շրջեց, թուրը քաշեց, գլուխը կտրեց»[21]։

Բաղդասարը Պղնձե քաղաքի թագավորի Քառասուն Ճող-Ծամ աղջկանն ուզելու գնալիս իր հետ վերցնում է ըմբիշ եղբորը՝ Սաղնասարին[22]։ Մի այլ տարբերակի համաձայն Բաղդասարը Բրչամի կրծքից բռնում, գետնում և տիրում է նրան[23]։ Երրորդ փոփոխակում Բաղդասարը Քառասուն Ճող-Ծամին տիրելու համար հանձին հյուրընկալ պառավի՝ պատգամախոս ունի, որին թագավորն առաջարկում է, որ երկրպագուն հաղթի իր փահլևաններին և ալսան-ղափլաններին։ Հերոսը հաղթանակը շահում և հասնում է իր նպատակին[24]։

Բանահյուսության այս չափազանցված նյութերը մեզ հայտնի էին մինչև XX դ. առաջին կեսը։ Դրանց մնացուկներին ականատես ենք նաև այժմ։ Ոչ մի հարսնառ և հարսանեկան հանդես առանց մենամարտի չէր կարող անցնել։ Դա մի ընդհանրացած սովորություն էր ողջ Արևելքում, այդ թվում Առաջավոր Ասիայում։

Այդ հարցերի մասին մենք խոսել ենք[25]։ Լրացման կարգով նշենք, թե ի՞նչ բնույթ և գործելակերպ ունեին հարսնառի և հարսանեկան ծեսերի գոտեմարտերը։

1. Այն մենամարտերը, որ տեղի էին ունենում պատանիների միջև, պահպանում էին ծիսական կատակը. կտրիճն իր ընկերոջ հետ կատակով մենամարտում էր, բայց նրա թիկունքը գետնով չէր տալիս։ Թվում է, թե մենք այստեղ գործ ունենք պատանիների միևնույն դասակարգման հետ, ուր «ամբոխի առջև իգիթն իր օրում գետին չի զարկել ընկեր իգիթին»[26]։

2. Հարսնառի և հարսնառն ընդունող գյուղի կտրիճների միջև տեղի ունեցող մենամարտերը թեև նույնպես ունեն կատակի տարրեր, բայց մեծ մասամբ տեղի էին ունենում առանց միմյանց ղիջելու։ Այստեղ մինչև իսկ կարող էին բարդություններ առաջանալ, եթե ավագները հատուկ խնդրանքներով ու մանավանդ խմիչքներով և կարկանդակներով այն չէին կանխում։ Այդ բարդությունների հետևանքով գյուղի ողջ երիտասարդությունը, բացառությամբ աղջկա ազգականների, կանգնեցնում էր հարսնառը և սկսում իսկական մենամարտը։

Ինչպես ցայտուն կերպով երևում է, իրար դեմ խոյացողները երբեմնի տոհմերն են, ֆրատրիաները, ցեղերը և այդ ավանդները պահող համայնքներն ու գյուղերը։

3. Հարսանեկան հանդեսների ժամանակվա ըմբշամարտերի զգալի մասը պաշտոնականություն ունի։ Դրանք տեղի են ունենում պրոֆեսիոնալ ըմբիշների միջև, որ պատիվ են բերում հանդեսին։ Պրոֆեսիոնալ ըմբիշի հետ մենամարտում են նաև հարսնեւոր կտրիճները։

4. Մենամարտեր էին տեղի ունենում նաև մենամուսնության սկզբունքները պաշտպանելու համար՝ խանդի առկայությամբ։ Ամբողջ Եվրոպայում հանուն կնոջ մենամարտերը պահպանվում էին մինչև XIX դ.։ Հայ կյանքում, ինչպես հատուկ էր Արևելքին, այդ մենամարտերը կենցաղում շատ թույլ էին արտահայտվում, որոնք գտնում ենք միայն բանահյուսության մեջ։ Կրկին հիշենք, օրինակ՝ Սանասարի և Բաղդասարի մենամարտը՝ հանուն Քառասուն Ճող-Ծամի[27], Ջենով Հովանի և Դավթի մենամարտը՝ հանուն Խանդութի, Դավթի և իր որդի Մհերի մենամարտը՝ հանուն մի կնոջ[28] և այլն։ Այս սովորույթները կապված են բազմակնության պահպանման, բազմակնության վերացման և մենամուսնության հաստատման հետ։ Ասել է, թե որոշ առումով մենամարտերը խորհրդանշում են նաև իրենց դարաշրջանների ամուսնության մի ձևի պահպանման և մյուս ձևի ստեղծման համար մղվող պայքարը։

Ռազմական նպատակով պետությունը խրախուսում էր կենցաղում մենամարտերի ժողովրդական սիստեմի սկզբունքները։ Կրոնական բոլոր հաստատություններում և ուխտավայրերում տա-

---

21 Ե. Լալայան, *Մարգարիտներ*, հ. Գ, էջ 214—215։

22 «Սասնա ծռեր», Բ հ., II մաս, էջ 245—246։

23 «Սասնա ծռեր», Բ հ., II մաս, էջ 560։

24 «Սասնա ծռեր», Բ հ., II մաս, էջ 243—244։

25 «Հայ ժողովրդական խաղեր», I, աշխատասիրությամբ Վ. Բդոյանի, 1963, էջ 231—232, 243—245։

26 Հովհ. Թումանյան, *Երկերի ժողովածու*, հ. II, Երևան, 1940, էջ 58։

27 «Սասնա ծռեր», հ. Ա, էջ 318—319։

28 Նույն տեղում, էջ 646—647։

րեկան մի քանի անգամ կազմակերպվող մասսայական հավաքույթներում ժողովրդական տոներին համապատասխան ծեսեր կատարելիս հոգևոր և աշխարհիկ ավատական կազմակերպությունները մեծապես նպաստում էին մենամարտերի և ամեն կարգի խաղ-մրցումների սովորությունների կիրառմանը։ Դա ֆեոդալական Հայաստանի պաշտպանական միջոցառումներից մեկն էր։ Ոսոի և պատահական չէ, որ բոլոր նախարարությունների և արքունիքում մենամարտողներ էին պահվում։ Այդ մենամարտերը զինավարժությունների մի մասն էին կազմում։ Անհատի ուժը կարևոր գործոն էր ճակատային մենամարտերի, ճոկանակռիվների, սրամարտերի, նիզակակռիվների և տեգամարտերի մեջ։

Մենք թեև մատենագրական ուղղակի փաստեր գրեթե չունենք, բայց համոզված ենք, որ հայկական նախարարություններն իրենց նեղ շրջանակներում մենամարտերի կազմակերպված մրցություններ անցկացնելու սովորույթներ ունեցել են։ Դրանց շնորհիվ մարտունակությունը բարձրացրած մենամարտիկներին հավաքում էին մայրաքաղաքում՝ միջազգային հանդիպումներում հաջողության հասնելու համար։ Այդպիսի ուժերի հայտնաբերումը հաճախ կատարվում էր տարեբային կարգով։ Ըստ ասիական հին և միջնադարյան սովորությունների, ըմբիշները հանդիպումներ էին ունենում իրենց ծննդավայրերից դուրս՝ հարևան գյուղերում ու գավառներում։ XIX դ. վերջի և XX դ. սկզբի աղբյուրների տվյալներով ըմբիշը մենակ կամ ընկերների ուղեկցությամբ շրջում էր այդ վայրերում։ Սովորույթի համաձայն, նա իջևանած գյուղից կամ քաղաքից իր հետ մենամարտող էր պահանջում։ Երբ այդպիսին չէր գտնվում կամ գտնված ըմբիշը տանուլ էր տալիս, երկու դեպքում էլ հյուրընկալված ըմբիշը գյուղական համայնքին կամ քաղաքապետարանին ստիպում էր վարձատրել (պարգևատրել)։ Վարձատրությունն արտահայտվում էր մեծ մասամբ անասուններով, հացամթերքներով, հագուստով և մասամբ՝ դրամով։ Բայց երբ հյուրն էր պարտվում, հաղթողին չէր հատուցում. նա գյուղից կամ գավառից ամոթահար հեռանում էր այնպես, ինչպես հյուրընկալված ու պարտված գուսանը կամ աշուղը։ Այս սովորություններն ունեին նաև օտար՝ պարսիկ, թուրք և այլ ըմբիշները։

Ազգային ճնշումների հետևանքով հայ ըմբիշներն օտար երկրներում ավելի մակաղ էին լինում, քան օտարները՝ Հայաստանում։ Նշանավորներից էին սեբաստացի Սիմոն Փեհլիվանը (ինչպես նրան անվանում էին) և Ախալքալաքի Վաչյան գյուղացի Յատիկը. առաջինն իր գործունեությունը ծավալել է Թուրքիայում ու Հունաստանում, երկրորդը՝ Վրաստանում։

Միջնադարյան և ուշ շրջանի այդօրինակ ըմբշական փոխայցելությունները Կ. Աբոյանը իրավամբ համարում է միջազգային հանդիպումների եղանակ[29]։ Անկասկած, այդպիսիք հայկական պետականության պայմաններում ավելի կազմակերպված ձևով էին դրսևորվելու։ Տարերքն այնտեղ երկրորդական էր։ Միջազգային հանդիպմանը հսկում էին պետական ղեկավարները կամ իշխանները։

Այսպես, Հայոց Վարազդատ թագավորի քաջությունները թվելիս Մ. Խորենացին ակնարկում է, թե նա Օլիմպիադայի օլիմպիադայում ըմբշամարտի գծով փառքի ու հարգանքի է արժանացել[30]։ Մաղաքիա Աբեղայի հաղորդման համաձայն Մանկու խանի կողմից Անդրկովկաս է բերվում մի անվանի ըմբիշ։ Այստեղ հաստատված Հուլավու խանը այդ ըմբիշի հետ մենամարտող է պահանջում (№ 100)։ Հուլավու խանին հայոց և վրաց իշխանները մատնացույց են անում Արծրունյաց ցեղի մի հայ ըմբիշի՝ Սադունի անունը, որին հրամայում են մարտի վայրը տեղափոխել սայլով և ոչ թե ձիով։ Այս երկու ըմբիշներին Հուլավու խանը 9 օր պահում, օրական մի ոչխարով և մի տիկ գինով հյուրասիրում է։ Եվ երբ լրանում է 9 օրը, Հուլավուն ժողովրդի հանդիսատեսությամբ հրամայում է ըմբիշներին՝ մենամարտել։ Սադունը երկար մենամարտելուց հետո գետնում է հակառակորդին[31]։

Այսպիսի մի տեղեկություն ունի նաև Աբրահամ Կրետացին[32]։

---

29 Կ. Պ. Աբոյան, *Ռազմա-սպորտային մենամարտերը Հայաստանում*, Երևան, 1965, էջ 182—210։

30 *Մովսիսի Խորենացւոյ Պատմութիւն Հայոց*, էջ 307—398։

31 Մաղաքիայ Աբեղայի *Պատմութիւն վասն ազգին Նեստորաց*, Ս. Պետերբուրգ, 1870, էջ 33—35։

32 Աբրահամ կաթողիկոսի Կրետացւոյն *Պատմագրութիւն անցիցն իւրոյ և Նատր-Շահին պարսից*, Վաղարշապատ, 1870, էջ 45։

Միջազգային հանդիպման օրինակներ են պահպանված միջնադարյան ավանդությունների մեջ։ Մատենադարանի ձեռագրերից մեկում կիլիկեցի Լիպարիտի քրոջ մասին պատմվում է այսպիսի ավանդություն։ Այդ կինը 50 տարեկան էր, երբ իսմայելացի մի ըմբիշ ներկայանում է Սիս քաղաքի պարոնին և պահանջում մենամարտող կամ 100 դահեկան ոսկի։ Լիպարիտի քույրը ներկայանում է Սսի պարոնին և առաջարկում իր ծառայությունը։ Տեղի է ունենում հրապարակային մրցությունը։ Կինն առաջ գալով իր կանացի տարազով, բռնում է ըմբիշի երկու թևերից, բարձրացնում վեր, դնում Լշխանի առաջ երեսն ի վայր ու պոկելով մի ականջը, դեն է նետում[33] (№ 101)։

Ըստ մի այլ ձեռագրի Կիլիկյան մի թագավորի են ներկայանում Մսրա սուլթանի 40 ըմբիշներ և հայտնում, թե իրենք ցանկանում են մենամարտել հայ քաջերի հետ։ Սովորույթի համաձայն, հրավերն ընդունող թագավորը նախապես ռազմաճակատներում կորցրած լինելով իր ընտիր քաջերին, երկար որոնումներից հետո աղջիկ ըմբիշ է ներկայացնում։ Վերջինս յոթ եղբոր միակ քույրն է եղել։ Ըստ երևույթին մենամարտը տեղի է ունենում առանց թագավորի ներկայության։ Այստեղ աղջիկը հարձակվում է արաբ ըմբշապետի վրա, մեկ ձեռքով բարձրացնում վեր և երկար ժամանակ օդում պահելուց հետո գետնով տալիս, սպանում է։ Մյուս փահլևանները չեն համարձակվում մենամարտել և ամոթահար վերադառնում, պատմում են սուլթանին[34] (№ 102)։

Միջազգային հանդիպման գեղեցիկ օրինակ է միջնադարյան «Պատմություն Ֆարման Մանկանն» պոեմի հերոսի գործունեությունը։ Ֆարմանի Ասմանը քաջավարժ էր զինավարժության մեջ և անհաղթելի ըմբիշ։ Խորասանում և այլուր ունեցած հանդիպումներում նա գետնել է ժամանակի անվանի ըմբիշների և փառքով պսակել իր անունը[35]։

Ջանգեզուրի ավանդության մեջ ասվում է, թե պարսից շահ Սուլեյման զորավարը վրաստանի վրա արշավելիս վրան է խփում Գորիսի հանդում և տեղի մելիքից հայ մենամարտող է պահանջում իր անպարտելի ըմբիշի հետ ուժը փորձելու համար։ Ընդ որում մելիքը պարտավոր էր այդպիսին չգտնելու դեպքում մեծ քանակությամբ ապրանք տալ, իսկ տեղացի ըմբիշի հաղթվելու դեպքում՝ դրա կեսը։ Հրապարակ են բերում Մխիթարի դուստր և Մաշուրի հարս Խանփարունն, «որը գոմշի ձագի պոչից բռնել և իրենց ամարաթի դարբասի վրայով շպրտել էր փողոց»։ Բանահատեղում մենամարտն սկսվելուն պես փահլևանն օդում ճոճվում է։ Մելիքի խորհրդով հարսը նրան գետնով չի տալիս, այլ դնում է վայր և հեռանում (№ 95)։ Մի այլ տարբերակի համաձայն գորիսեցի հարսը նման քաջություն է գործում Լենկթեմուրի արշավանքի ժամանակ (№ 96)։

Մենամարտերի գծով միջազգային հանդիպումները մեծ ազդակ էին երիտասարդության մարտունակությունը բարձրացնելու համար։ Դա միջոց էր նաև ռազմական նպատակներով հարևան պետությունների մենամարտիկների կարողությունները շոշափելու, հայտնաբերելու և ըստ այդմ ուժային հավասարակշռություն պահպանելու համար։ Այս մասին է վկայում վերը հիշված ձեռագրերից մեկը, ուր ասված է, թե Մսրա սուլթանը վերահասու լինելով, որ Կիլիկիան քաջերի կորուստներ է տվել, հայ թագավորի մոտ ուղարկած իր 40 ըմբիշների վրա պարտականություն է դնում՝ իմանալ, թե «արդյոք Սիս քաղաքում կա՞ն ուրիշ քաջեր ևս, որովհետև իր մտքում մտածում էր, թե կգա Սսի վրա»[36]։ Այս երևույթն ընդհանուր էր Արևելքի երկրներում, ուստի մենամարտող մարտիկներ պատրաստելն անհրաժեշտ էր։ Ուշագրավ է Թ. Արծրունու այն ակնարկը, թե ըմբշամարտերում երիտասարդները «պատերազմունք» էին խաղում[37]։

Հայ բանահյուսությունը պահպանել է մի այսպիսի ավանդություն. իրար դեմ ելած բանակները մասսայական կոտորածներից փրկելու համար առաջարկում են պատերազմն ավարտել առաջնորդների մենամարտով։ Հիշենք, օրինակ, արաբ

---

33 Ջ. № 3569, էջ 28ա—28բ։

34 Ջ. № 515, էջ 27բ—28բ։

35 «Պատմութիւն Ֆարման մանկանն», հրատարակության պատրաստեց Շուշանիկ Նազարյանը, Երևան, 1957, էջ 87—96 և այլն։

36 Ջ. № 515, էջ 27 բ։

37 Թովմայի վարդապետի Արծրունւոյ Պատմութիւն տանն Արծրունեաց, Թիֆլիս, 1917, էջ 482։

ծերունու առաջարկով Սասնա Դավթի և Մսրա Մելիքի մենամարտերը։

Ըստ երևույթին հնում արևելյան ժողովուրդների մեջ այդ սկզբունքը կիրառվել է պատերազմը որևէ փուլի հասցնելիս կամ հիմնական ուժերն սպառվելիս։ Գուցե հենց այստեղ էլ որոշվում էր՝ հաղթվածին քաջի ձեռքով գլխատելու սովորությունը, որ այնքան հիշատակվում է էպոսներում և բանահյուսության մյուս ժանրերում։

Պետք է ենթադրել, որ եղել են դուտ ըմբիշներից կազմված ռազմաջոկատներ, որոնք պատերազմի որևէ փուլում, իբրև վերջին խոսք, պետք է անցնեն խոյանալին իրար դեմ՝ այս անգամ արդեն գործի դնելով ըմբշամարտի ձևերը՝ մենամարտ, բռնցքամարտ (պանկրատիոն) և այլն։

Մենամարտերն ինչ ադիթով էլ կազմակերպվեին, հետապնդում էին մի նպատակ՝ տեղերում ընդունված կարգի համաձայն, հակառակորդին գետին տապալել։ Նայած պայմաններին, գործելակերպերը կիրառվում էին կանգնած և ծնկած վիճակում։ Համառոտակի թվարկենք այդ ձևերը։

1. **Բազկակռիվ.** *կանգնում են ուղիղ և իրարից հեռու։ Տապալման համար գործում են միայն բազուկները։ Ցնցում, ուժգին տատանում են հաճախաչաջ, աջ ու ձախ և տապալում։ Երբեմն հաջողվում է փաթաթվելով կապել հակառակորդի թևերը և շրջել կողքի վրա։ Տապալում են նաև զույգ բազուկներից բռնած հաճ-հաճ տանել—հրելով։*

2. **Կռնակոխ.** *կանգնում են ուղիղ և իրարից հեռու։ Բռնում են միայն թևերից և օձիքից։ Տատանելով բոլոր կողմերի վրա, տապալում են։ Երբեմն երկու ուսերից բռնելով ուժգին ցնցում են, բերանքսիվայր գցում գետին և ապա շրջում մեջքի վրա։*

Կռնակոխի նույնպիսի վիճակի և բռնվածքի վրա ավելացվում են նոր հնարներ։ Դրանք են՝ ա. ոտ գցելը, այսինքն՝ ոտքերի ներսից ու դրսից կեռ տալը և հավասարակշռությունը կորցնելով տապալելը։ բ. օձիքից բռնելով առաջ քաշելը, թիկունքի վրա առնելով՝ ուսով գետնին խփելը (**համանդ բերել**)։

3. **Խրտուակրի.** *ուղիղ կանգնում, իրար պինդ գրկում և ուժով տապալում են։ Խրտել—գրկելու այս ձևը միջնադարում հայտնի էր* **գիրկընդխառն կոիվ անունով**[38]։

4. **Բարձրից բերել.** *ուղիղ կանգնում են, ընդունում միջին հեռավորություն, ապա հանկարծ թևը խլելով և ուսին դնելով նրան բարձրացնում են գավակին և օդում կիսաշրջան անելով գետին տապալում* (**ուջա բերել**)։

5. **Կլտիպուզ.** *երկու ձեռքով բռնում հակառակորդի թևերից և վեր բարձրացնելով՝ գլխի վրայով ետ են շպրտում*[39]։

6. **Պառկած ձեռել.** *ընդունում են միջին բարձրություն և միջին հեռավորություն. ուսերից բռնած՝ հակառակորդի ուշադրությունը շեղելով զանազան խաբուսիկ շարժումների վրա, հանկարծ պառկում են մեջքին ու հակառակորդին քաշելով կրծքին՝ ծնկների և թևերի ուժով ետ են շպրտում։*

Այս հնարքը հարմար է հատկապես թեք հարթություններին վրա, երբ ճարպիկը ներքևումն է գտնվում։

7. **Կանգնած ձեռել.** *կիսակռացած դիրքից հանկարծակի մի ոտքից բռնելով ու բարձրացնելով ձեռելը կամ գետնելը։*

8. **Ծնկած ձեռել.** *ընդունում են կիսակռացած դիրք և իրարից միջին հեռավորություն. բռնում են օձիքից, մի ոտքով ծնկում և հակառակորդին գլխի վրայով շպրտում։*

9. **Ջոխամարտ** (ծնկաճուշտի, չոխագուլաշ). *ծնկում են իրարից շուրջ կես մետր հեռու և փաթաթվում, իրանի սահմաններում ցանկացած տեղից բռնում և ուժով տապալում։*

10. **Գուխը գրկելով.** *միջին բարձրության կանգնվածքի ժամանակ հակառակորդի գլուխը երկու ձեռքով գրկելով՝ դեպի ցած ճնշում են գործ դնում, ապա տապալում բերանքսիվայր կամ կողքի վրա։ Գլուխը հակառակորդի ձեռքը մատնողի լավագույն պաշտպանությունը դիմացինի ոտքը ծնկածայից վեր բարձրացնելն է, գետնից կտրելը և այդ եղանակով գետնելը.*

11. **Շեքը մտնելով.** *հրապարակում պատյտ գործելիս ճարպիկ հարձակմամբ գլուխը մտցնում են հակառակորդի շեքը, բռնում ոտքերից ու գետ-*

---

38 Եսայիոսի Պամփիլեայ Կեսարացւոյ *Ժամանակակիցք երկմասնեայ. հատ. Ա, Վենետիկ, 1818, էջ 288, 291։*

39 *Գբ, էջ 575։*

նից կտրելով տապալում են մեջքի վրա։ Բայց դիմացինը կռահելով հարձակվողի մտադրությունը, թույլ է տալիս, որ նա գլուխը մտցնի շեքը և ինքը ամբողջ ուժով ու ծանրությամբ հանգչում է նրա մեջքին, սեղմում գետնին, ապա շրջում։

12. Հրել. երբ մենամարտի հետ խառն է կրոփամարտը, հակառակորդներն իրար վրա հանկարծակի հարձակվում, իրանի սահմաններում ուղած տեղից բռնում և ուժգին հրում-տապալում են։ Այդպես է վարվել Սիս քաղաքի այն ըմբիշ կինը, որ արաբ փահլևանի հետ հանդիպում է ունեցել միջնադարում։

13. Վիզը ոլորել. երբ մենամարտը մասամբ կամ ամբողջապես թշնամական բնույթ է կրում, ուժեղը կարողանում է հակառակորդի գլուխը երկու ձեռքով բռնել, վիզը ոլորել և ուժգին գետնել։ Այս երևույթը շատ հին է և արտացոլված է բանահյուսության մեջ։

14. Կրծքից բռնել. երկար բազուկներ ունեցողները կարողանում են աջ ձեռքով կրծքի շորերը բռնելով հակառակորդին իրենից հեռու պահել և ձախով դիմադրել։ Հարմար դիրք ընդունելով, բռնված կրծքից հրելով կամ ուժգին առաջ քաշելով ու միաժամանակ լինկ տալով տապալում են։ Բանահյուսության մեջ այս ձևը կիրառվում էր հատկապես կանանց նկատմամբ։

15. Քիթը բռնել. հեքիաթներից մեկում պահպանված է այս առահավությունը. «Ձեռ թալի, քիթ բըռնեցի, զըրկի գետին» (№ 105)։ Հավանորեն պանկրատիոնի դեպքում կիրառվող կոպիտ ձև է եղել, որը և համապատասխանում է ռազմաճակատներում տիրող հին սովորություններին։

16. Ձեռը սեղմել. մենամարտից առաջ ձեռք թոթվելու ժամանակ վերջինս սեղմելով ջարդելու եղանակ, որով, ըստ ավանդությունների, ավարտվել է նոր սկսված մենամարտը։

17. Ծափկոփ. շատ տեղերում տարածված մենամարտի ձևերից էր, երբ երիտասարդները մի-մի ձեռքով իրար հետ ծափ տալով կատակռիվ էին տալիս։ Իսկ Սասունում և այլուր ծափկռիվը (յարխուշտա) տեղի էր ունենում հարսանեկան հանդեսներում, ուխտագնացություններին ժամանակ և այլն։ Այն կատարվում էր նվագի տակտի տակ։ Խաղ-մրցության բորբոքման ժամանակ երբեմն ոմանց ափը պատռվում էր։

18. Գլխամարտ. պատանիները չորքոտանի քայլքով գալիս, գլուխներով բախվում են պայմանավորված ուժով։ Այս ձևը հայտնի էր գոմշակռիվ և ֆալբանդ անուններով։ Ըստ էության սա բուն ռազմական հանդիպում է եղել, որով և բացատրվում է Մսրա Մելիքի առաջարկը Սասունցի Դավթին՝ այդ ձևով մենամարտելու համար (№ 92—93)։

19. Ոռնամարտ. պատանիները մեջքի վրա ոտ ու գլուխ պառկում են և աջ ոտքերը կես գցելով՝ իրար գլխիվայր շրջում։

Պատանիների և երիտասարդների մենամարտերում կիրառվում էին որոշ սովորություններ։ Իսկ պաշտոնական հանդիպումներում դրանք պարտավորություններ էին հիշեցնում։

Ամենից առաջ նշենք, որ պաշտոնական կամ միջազգային հանդիպումների ժամանակ ըմբիշները սովորություն ունեին հագնել հատուկ զգեստ և մարմինն օծել զանազան յուղերով։ Ամբողջապես մերկանալով, ըմբիշները հագնում էին միայն ազդրերը ծածկող կարճ շալվար։ Սա պատրաստվում էր կոպիտ շալից կամ կաշվից։ Մարմնի օծման նպատակն էր՝ հակառակորդին հնարավորություն չտալ ազատ բռնել, ցավ պատճառել և հաղթել։ Համենայն դեպս, նրանք ձեռքերը փոշոտում էին։

Միջնադարում ըմբիշների մարմինն օծելու մասին կան հետևյալ վկայությունները։ «Զտեսանի՞ցե՞ս զայնոսիկ որ ի կռիւսն և յըմբշամարտսն մրցիցին. մի՛թե զճեմելո՞յ ինչ փոյթ առնիցին, և զկերպարանաց և զպաճուճանաց. և ոչ երբէք. այլ զամենայն ինչ թողեալ, հանդերձ բնդ իւղ և բնդ փոշի եկեալ զգենուն. և միումն ևեթ ուշ ունին, կամ յաղթելոյ կամ պարտութիւն մատնելոյ»[40]։ Այնուհետև՝ «Ձիք ոք, որ մերկանայցէ և օծանիցէ եթէ հանգիստ խնդրիցէ. քանզի յըմբշամարտ ի կռիւսն մերկանան օծանին, ապա ի մրցել և հոդորել մատչին»[41]։ Եղիշեն գրում է. «Մերկեաց

40 Յովճաննու Ոսկեբերանի կոստանդիանուպոլսի եպիսկոպոսապետի Մեկնութիւն թղթոցն Պաւղոսի, հատ. Ա, վենետիկ, 1862, էջ 70։

41 Անդ, էջ 249։

իբր զրմբշամարտիկ, օծ իւղովն Քրիստոսի, զի մի կռուեսցին ի քեզ ձեռք ախոյանին»[42]։ Գրիգոր Մագիստրոսը նշում է ըմբիշի մերկությունը[43]։

XX դարի սկզբներին մարմինն օծելու և հատուկ տարազ հագնելու սովորությունները Հայաստանում գրեթե վերացել էին։ Մենամարտերը մեծ մասամբ տեղի էին ունենում սովորական հագուստով։

Քիչ թե շատ լուրջ բնույթ կրող մենամարտերը տեղի էին ունենում բացառապես զուռնա-նաղարայի նվագակցությամբ։ Գոյություն ուներ հատուկ եղանակ, որ կոխի անունն էր կրում։ Իսկ պատանիները ոգորում էին նաև երգով։

Մենամարտը ոգորող տարերային կամ պաշտոնական գուպարադիրները ճիպոտով կամ մըտրակով ժողովրդին հեռացնում և հրապարակ էին բացում։ Ժողովուրդը խմբերի բաժանված ոգևորում էր իր ըմբիշին։ Հանդիսատեսները բարձրանում էին կտուրներին կամ պատերին. ավագներն ուշադրությամբ հետևում էին մենամարտի ընթացքին։

Պաշտոնական հանդիպում ունեցող ըմբիշները մրցման հրապարակ մտնելիս գլխահակ ողջունում էին հասարակությանը։ Նայած տեղին, նրանք հրապարակում միմյանց ձեռք էին թոթվում, թեև մեծ մասամբ դա չէր կիրառվում, իսկ որոշ հակառակության առկայության դեպքում դրա վրա ուշադրություն էլ չէին դարձնում։ Երբեմն ըմբիշները համբուրվում էին սկսելուց առաջ և հետո։ Էպոսում պահպանված է միմյանց գրուխը համբուրելու ձևը, որը մենամարտելուց հետո հաշտություն կնքելու սովորություն է եղել։

Ձեռք թոթվելուց հետո ըմբիշները հրապարակում շրջանաձև պտտվում էին. պտույտը երբեմն կատարվում էր հանդարտ ու լայն քայլերով, երբեմն՝ կիսավազքով և տրտինգ տալու ձևով, որ համապատասխանում էր նվագի տակտին։ Պտտվելիս երբեմն շրջանի տրամագծի վրա հանկարծակի հարձակում էին գործում և թեթևակի բռնվում, թողնվում ու շարունակում պտտվել, որով գտնում էին հակառակորդի թույլ կողմը կամ որոնում այն վայրկյանը, երբ հնարավոր էր գործի դնել իրենց սիրած հնարքը։ Այնուհետև միայն տեղի էր ունենում մարտը։

Երբ ըմբշամարտը կազմակերպվում էր տարերայնորեն կամ պաշտոնականորեն, մենամարտիկները միմյանց պետք է գետնեին։ Նայած սովորությանը, ըմբիշը հաղթող համարվում էր այն դեպքում, երբ հակառակորդին գցում էր մեջքին, կողքին կամ բերանքսիվայր։ Բայց հիմնականը, որը Հայաստանում առավել տարածվածն էր, մեջքը գետնին տալն էր։

Ընդունված կարգերից մեկն էլ այն էր, որ հարսանեկան հանդեսների մեջ ընկերներն իրար գետնով չէին տալիս։ Կատակամարտի ժամանակ մեկը մյուսին գրկում, բարձրացնում կամ ընկերոջ հետ միասին կողքի էր ընկնում՝ խոզապաուկի էր տալիս և այլն։

Ըմբշամարտի գործելակերպերն ու սովորությունները սերնդից սերունդ էին անցնում շնորհիվ տարերային կամ պաշտոնական ուսուցողների։ Ավագ սերունդն իր փորձը փոխանցում էր կրտսերին։ Մանկական աշխարհում հրահրողներն ու «դատավորները» նրանց ծնողներն էին։ Այստեղ ամեն ինչ հանպատրաստից էր։ Բայց պատանի մենամարտողներն աստիճանաբար հրապարակ էին ստեղծում. հոտաղ-գառնարածների համար հանպատրաստից հրապարակները հանդն ու դաշտերն էին, մարգագետիններն ու դետափերը։ Այդ բոլորը նպաստում էր, որ մենամարտելիս վնասվածքներ չլինեին։ Այդ պատանիների համար ևս բնորոշ է տարերային կարգով մենամարտի բռնվելը։ 16—20 տարեկաններին գյուղամիջյան կանաչ հրապարակներում օրվա որոշ պահերին նստոտած հասարակությունն էր ոգորողն ու հրահրողը։ Հենց այստեղ էլ հանդես էին գալիս տարերային հանդիսադիրները։

Գյուղ կամ քաղաք մտած հարևան գավառացի ըմբիշի մենամարտի ժամանակ հրապարակ էին գալիս այդ բնակավայրի պաշտոնական անձինք և իրենք էլ դատավարում էին։ Որքան էլ շահագրգռված լինեին, որ համագյուղացի կամ համաքաղաքացի ըմբիշը հաղթանակ շահեր, այնուամենայնիվ ընդունված կարգ էր՝ թույլ չտալ, որ հասարակությունը որևէ ձևով խանգարեր օտար ըմբիշին։ Նա օրենքի մարդ էր ճանաչվում։ Կարգ ու կանոնը պահպանելիս հանդիսադիրը նույնպես լսում էր նրան։

---

42 Եղիշե, *Մատենագրութիւնք*, Վենետիկ, 1889, էջ 164։

43 Գրիգոր Մագիստրոսի *Թղթերը*, Ալեքսանդրապոլ, 1910, էջ 230։

Արքունիքի կամ նախարարության սահմաններում ըմբշամարտի հանդեսները նույնպես հանդիսադիրները կամ գուպարադիրներն էին կազմակերպում։ Բայց այստեղ գլխավոր դատավորը բարձր անձն էր՝ թագավորը կամ նախարարը։ Այդպես էին ընթանում ինչպես երկրի ներքին ուժերի ստուգատեսները, այնպես էլ օտար պետություններից հղված ըմբիշ հյուրերի միջազգային հանդիպումները։

Հնուց ի վեր խաղային մրցությունները խրախուսվել են բարոյական և նյութական վարձատրությամբ։ Ըստ երևույթին տոհմացեղային շրջանում դա առավելապես բարոյական նորմա էր, որով հռչակի էր արժանանում հաղթանակ շահողը։ Հետագայում, դասակարգային հասարակության մեջ առաջ են գալիս առավելապես առարկայական-նյութական պարգևատրության ձևեր։ Պարգևատրության հնագույն ձևերից մեկը լոռիում արտահայտվում էր խնձորով[44], որը կույս աղջկա և սիրո սիմվոլն էր, պտղաբերության խորհրդանշան էր թաշկինակը, որպիսի պարգևը պահպանում էին համշենցի հայերը[45]։ Մի առիթով արդեն ասել ենք, որ սիմվոլիկ նշանակություն ուներ «հանուն գոմշի գլխի» մղվող մենամարտի հրապարակում գոմեշի գլուխ դնելու սովորությունը[46], որ պահպանում էին Նոր Նախիջևանի անեցի հայերը[47]։ Մի ժամանակ իբրև վարձ-պարգև հաղթողին գոմեշ էր տրվում։

Շրջիկ ըմբիշները XIX դարում իրենց այսպես կոչված «արհեստը» ապրուստի միջոց ծառայեցնելու պատճառով աղավաղել էին հին սովորությունները։ Հասարակության մեջ ըմբշական հանդես ստեղծելու համար նրանք նախապես սակարկում էին։ Պարգևատրությունն արտահայտվում էր մանր և խոշոր եղջերավոր անասուններով, բնամթերքներով և մասամբ՝ դրամով։ Սակայն համայնքը կարող էր վարձատրությունից ազատվել, եթե հյուր եկած ըմբիշը պարտվում էր։

Միջազգային հանդիպումների ժամանակ գոյություն ունեցող մրցանակաբաշխության ձևերը բավական լավ են պահպանված Ֆարման Մանկան պատմության մեջ. հանդիսատես և դատավոր թագավորը Ֆարմանի հաղթանակը պսակում է ոսկեկար թանկագին զգեստներով և նրա համար սեղան է բացում[48]։ Մանկու խանը շրջիկ փահլևանին հանձնելով պարգևի համար հատկացված կապան, ուղարկում է Անդրկովկաս։ Ինչպես գիտենք, այդ կապան բաշխվում է հյուրընկալած ըմբիշին գետնող հայ մենամարտիկ Սադունին[49]։

Իսմայելացի փահլևաններին հաղթող ասպետ Լիպարիտի քույրը Սսի պարոնի կողմից պարգևատրվում է մի շալակ բամբակով, որը կարող էր կրել հաղթողը[50]։ Մսրա սուլթանի ըմբիշին հաղթող հայ կինը Կիլիկյան թագավորի և իշխաններ կողմից պարգևատրվում է մեծամեծ նվերներով[51]։

Մրցանակաբաշխություններում կարևոր տեղ ուներ պսակը, որի վերաբերյալ ուղղակի տեղեկություններ չունենք։ Այն պատրաստվում էր դափնուց, արմավենուց, ձիթենուց, ծաղիկներից և այլն։

Մի քանի հին բառեր վկայում են, որ մրցությունների հանդեսները ղեկավարողը երբեմն միաժամանակ մրցանակները բաշխողն է եղել։ Այդպիսին է թափիչ բառը, որ նշանակում է մրցության դատավոր և պարգևաբաշխ (համմտ. դուպարադիր, հանդիսադիր)։

Լախտախաղեր.—Լախտ-լախտի բառը Արևելյան Հայաստանում փոխառված է պարսկերեն laxt բառից. այն նշանակում է ծայրը գնդաձև մահակ կամ ծեծի փոկ-մտրակ։ Հայոց լախտախաղի մեջ լախտ է համարվել կեմե հատուկ պարանը, փոկե գոտին և շալե գոտին, որ խաղալիս ոլորում էին։ Լախտի բառից են ծագում ճղլախտիջղլախտի, ջղլաստի և ճիճալախտի բառերը՝ գծալախտի նշանակությամբ։

Արևմտահայ բարբառներում գործածվում էր թուրա բառը, որ պարսկերեն տյուրե բառից է. սա թուրքերենում արտահայտվել է թուրա ձևով,

---

44 Հավհաննես Թումանյան, երկերի ժողովածու, հ., II, էջ 329։

45 Հ. Մուրադյանց, Համշենցի հայեր, ԱՀ, IV, 140։

46 Վ. Բդոյան, Հայ ժողովրդական խաղեր, I, 44։

47 Եր. Շահազիզ, Նոր Նախիջևանը և նորնախիջևանցիք, ԱՀ, IX, 35—37։

48 «Պատմութիւն Ֆարման Մանկանն», էջ 95։

49 Մաղաքիայ Աբեղայի Պատմութիւն վասն ազգին նեւտողաց, 33—35։

50 Ձ №-3569, էջ 28բ։

51 Ձ №-515, էջ 28բ։

որից և փոխ են առել արևմտահայերը։ Թուրա բառի նշանակությունն է՝ ոլորված խարազան, որը համապատասխանում է կեմ-պարանին (նկ. 22)։

Լախտախաղի հայերեն անունը չէր գործածվում։ Գ. Սրվանձտյանցը խիստ համառոտ նկարագրելով վանա կենտ լախտու խաղաձևը, դիտել է, թե «Կարծեմ կրակտարոց կամ չվանոցիկ կըսեն սա խաղին» (№ 171)։ Կրակտարոցն, իհարկե, այլ խաղ է և լախտու հետ առնչություն չունի։ Մնում է հաստատել Գ. Սրվանձտյանցի երկրորդ ենթադրությունը՝ չվանոցիկ լինելը։ Ըստ երևույթին այդ բառը լախտախաղի հայերեն հնագույն անունն է, որը պարսկաթուրքական տիրապետությունների շրջանում զիջել է իր տեղը օտար տերմիններին։ Ազգային տերմինի կորուստը, սակայն, խաղի էությունը չի փոխել։

Լախտախաղերը գուցե կարելի է համարել ամենադաժան մրցախաղերից մեկը, որ կոչված էին ուժգին հարձակումների, կոպտորեն ծեծելու և ճարպիկ շարժ ու ձևերի միջոցով կոփել երիտասարդությանը։ Սրանց հատուկ էին ռազմադաշտային կյանքի մի քանի երևույթներ՝ հետախուզում, գաղտնի և ակնհայտ հարձակում, շրջապատում-պաշարում, զինվորների առևանգում, գերեվարում և այլն։ Մեր դարի սկզբին լախտախաղի այդ հատկությունները պահպանվում էին երիտասարդության շրջաններում։ Մանուկների շրջանում դրանք մեղմորեն էին դրսևորվում։

Լախտախաղն ուներ երկու հիմնական տարատեսակ։ Մի դեպքում խումբը խաղում էր մի հոգու հետ և մյուս դեպքում՝ հավասար խմբերն իրար հետ։ Հավասար հակառակորդները կարող էին կազմվել մեկական և ավելի խաղացողներից։ Կողմերի թիվը երբեմն հասնում էր տասական հոգու։ Խաղին կարող էին մասնակցել միայն տղաները կամ տղամարդիկ, որը շեշտում էր նրա ռազմի բնույթը։

Արդ, համառոտակի անդրադառնանք լախտախաղերի ներքին էության հարցերին։

Այս խաղերում ամենանախնականը, որ մենք կռահում ենք, ծիսական շերտն է։ Մեզ թվում է, որ դրանք նախապես խաղ չեն եղել, այլ միստիկական գործողություններ, որ գոյանալու էին ոգեպաշտական հողի վրա։ Կենտ լախտախաղի ժամանակ մի հոգին պաշտպանում է այնքան լախտ, որքան դրսի հարձակվողների թիվն է։ Շրջագիծը մենք պատկերացնում ենք այն տնակը, որի մեջ խիստ կարգապահությամբ պահվում էին տոհմին կամ ընտանիքի անդամներին ներկայացնող չուրինգները։ Հսկիչ-պահապանի դերն ունեցող լախտի պահողը թվում է, թե պարզապես մաքառում է մի ողջ բանակի դեմ, որը հարձակվել է տոհմի պահեստի վրա և ուզում է ավարառել։ Հավասար թվով հակառակորդներով լախտախաղի մեջ յուրաքանչյուր խաղացող կարծեք թե պաշտպանում է մի չուրինգ։ Հափշտակված լախտ—չուրինգի տերը շարքից դուրս է գալիս և «մեռնում»։ Կարծեք թե նրա հոգին կրող առարկայի անկումից հետո տեղի է ունենում իր մահը և այլն։ Ահա այս հարձակողական և պաշտպանական բնույթից էլ ծագում է խաղի ռազմի հատկանիշը։

Խաղի հին անցյալի մասին է վկայում նաև հատակային դասակարգումը։

Գարնանամուտը Հայաստանում նշանավորվում էր մասսայական լախտախաղերով։ Յուրաքանչյուր հատակային խումբ առանձին էր խաղում։ Բոլոր պարագաներում խաղացողներից ավելի մեծերը նրանց դատավորներն ու խորհրդատուներն էին դառնում և խաղը բորբոքում։

Բնության զարթոնքի հետ որոշ կապ ունեցող լախտախաղը սիրելի խաղերից մեկն էր հայկական մի տեսակ օլիմպիական օրերին՝ բարեկենդանյան տոներին։ Պ. Պռոշյանի նկարագրությամբ այդ տոնի օրերին բարձր խավի ներկայացուցիչները ևս իրար հետ լախտախաղ էին կազմակերպում, որին մասնակցող քահանայի նկատմամբ անգամ առանձին զիջում չէր արվում (№ 169)։

Այս երևույթները վկայում են, որ լախտախաղը կրոնական ծագում է ունեցել։ Կրոնական-ծիսական արարողություններն այնուհետև երեխաների միջոցով խաղերի են վերածվել։

Լախտախաղերի մեջ մարմինը կոփելու գաղափարը կարևոր նշանակություն ուներ։ Այն օժտված էր բազմաթիվ շարժուձևերով, որոնք նպաստում էին ուշադրության զարգացմանը։ Հարձակվողներից պաշտպանվելու անընդհատ լարվածությունը, ինքնահսկումն ու ընկերներին վերահսկողության տակ առնելը, անակնկալների կանխումները և այլն, ամենից առաջ պահանջում էին արագաշարժություն և սրատեսություն։ Թույլ տեսողության և դանդաղաշարժության դեպքում խաղացողը խաղը տանուլ էր տալիս։

Ճկունությունն ու ճարպկությունը լախտի խաղացողների կարևոր հատկանիշն էր։ Արագ խույս տալու ընդունակությունը, երկարության և բարձրության թռիչքները, արագաշարժությունը և այլն նպաստում էին, որ հարձակվողները պաշտպանվեին հակառակորդներից։

Լախտախաղը մեծապես կոփում էր ոտքերը. լախտի հաճախակի հարվածները դիմացկուն էին դարձնում առանձնապես սրունքները։ Լախտը տանելու համար պաշտպանողին լինգահար անելը նույնպես նպաստում էր սրունքների կոփմանը։ Ընդհանրապես լախտին դիտվում է իբրև անխնա ծեծին վարժեցնելու խաղ, որը փորձություններով հանդերձ մարդուն դիմացկուն էր դարձնում։

Խաղի կոպտությունն արդարացվում է նրա ռազմական բնույթով։ Իսկ վերջինիս հատուկ տարրերը բավական ակնհայտ են։ Հենց գիծը, որի մեջ դրսևորվում են բոլոր գործողությունները, խորհրդանշում էր երբեմնի տոհմացեղային կազմակերպության ընդհանուր տունը, տարածքը և հետագայում՝ ժողովրդի երկրային սահմանները։ Այս հանգամանքը հաստատվում է այն որոշակի օրինակով, որ պահպանված է բանահյուսության մեջ։ Գ. Սրվանձտյանցի գրի առած «Իմաստուն ջուլհակն» հեքիաթում ասված է, թե օտար թագավորի պատգամավորը գալիս, առանց խոսելու այս երկրի թագավորի աթոռի շուրջը շրջագիծ է գծում։ Այս երևույթը մեկնաբանելու համար հրավիրված իմաստուն ջուլհակը գրպանից երկու վեգ հանում, նետում է պատգամավորի առջև։ Պատգամավորը ծոցից կորեկ է հանում և ցրում գետնի վրա։ Ջուլհակը փեշի տակից հանում և արձակում է վառեկը, որն անմիջապես հավաքում է կորեկը։ Պատգամավորը հասկանում է ջուլհակին և երկրից հեռանում։ Ապա ջուլհակը բացատրում է, թե աթոռի շուրջը գծելը նշանակում է պատերազմ հայտարարել, որին վեգ նետելով ինքը հասկացրել է, թե նրանք մեր հանդեպ երեխաներ են, ուստի լավ կլիներ վեգախաղով զբաղվել։ Կորեկը թշնամու զորքն է ներկայացնում, իսկ վառեկը՝ այս թագավորի ամեն մի քաջ զինվորը[52]։

Այս շրջագիծ-երկրի սահմանների մեջ լախտախաղի հարձակվող խումբն ունի հետախուզման ձևեր, անակնկալ գրոհի զանազան գործելակերպեր։ Կռվի թեժ պահին լախտախաղը դժվար չէ պատկերացնել իբրև պատերազմական գործողությունների մի դաշտ, որտեղ տարերքը՝ երբեմն ավանդականից դուրս գալով, խեղումների պատճառ է դառնում։ Ներքին ուժերից յուրաքանչյուրը կարծես երկու պարտականություն է կատարում՝ չգիտակցվող ծեսերի պահպանումը և զենքի, գույքի ու երկրի պաշտպանությունը։ Կենտ լախտախաղի մեջ պարզապես երևում է նաև զինապահեստը պաշտպանելու միտումը, որ պատմական նոր շերտ է։

Լախտը տանուլ տվողը շարքից դուրս էր գալիս, ինչպես սպանված զինվորը։ Անակնկալ հարձակմամբ և ձեռք տալով գծից դուրս հանված զինվորը բռնությամբ գերի էր պահվում։ Բայց նրան իրավունք էր վերապահվում ուժ գործադրելով դուրս պրծնել առևանգողի ձեռքից, վերադառնալ գծամեջ, օգնել լախտերը պաշտպանող ընկերներին։

Մրցման ժամանակ գծամիջիններից ամեն մեկի կորուստը պարտության էր տանում։ Ուստի նրանք ունեին միայն մի միջոց՝ որևէ հնարքով ոտնահարել հակառակորդներից մեկի ոտքը՝ սրունքների սահմաններում։ Այդ դեպքում տեղի կունենար դերերի փոխում։ Ոտնահարման ժամանակ մի ոտքը պետք է գծամիջին լիներ։ Կար նաև ձեռք տալու միջոցով դրսինին ներս քաշելու և ոտնահարելու պայման։ Վանա կենտ լախտու տարբերակում բոլոր շրջապատողներն իրենց լախտերով ծեծում էին միակ պաշտպան-խաղացողին։ Իսկ վերջինիս հետ դերափոխ կարող էր լինել այն դրսեցին, որին պաշտպանվողը կարողանում էր հարվածել իր լախտով։

Լախտախաղի ընթացքը լի էր գործելակերպի զանազան ձևերով։ Աղմուկը և հանկարծակի հարձակումը նման էր հոգեբանական գրոհի։ Կեցողներին անխնայորեն լինգահարելը, քացով խփելը, գլխարկներով «աչքը առնելը» (շշմեցնելը), նույնիսկ փափախով աչքերին փոշի լցնելը, լախտերով մարմինը դաղելը ևն, հարձակվողների իրավունքն էր։ Այդ իրավունքը, սակայն, երբեմն չարաշահվում էր հօգուտ վրիժառական զգացմունքների։

Բերդախաղեր.— խաղի հիմնական անունը

---

52 Գ. Սրվանձտյանց, *Համով-հոտով*, Թիֆլիս, 1904, էջ 212—214։

ծագում է բերդ բառից։ Բացի բերդ, բերդ խաղ և բերդախաղ անուններից, այն ուներ նաև կտրոց, օբա, նամ-նամ բուդիկ, չուռ, չուռ առա, չըռ խաղալ, բըռ և խապախ անունները։ Կտրոց բառը ծագում է խաղի այն պահի գործողությունից, երբ հարձակվողը թշնամու բանակը ճեղքելով անցնելիս կտրում, դուրս մնացածներին շարքից հանում էր։ Օբան թուրքերեն վրան բառն է և երևում է, որ թուրքերը ավելի հարմար էին գտնում բերդը վրանով փոխարինել։ Այդ աղավաղումն էլ հետո մտել է հայկական բարբառների մեջ։ Չուռ և չըռ բառերը հավանորեն ծագում են «հափշտակել» և «փախչել» ձևերից։ իսկ խապախը, որ թուրքերեն կատակ իմաստն ունի, թվում է, թե կապ չունի խաղի հետ։

Բերդախաղը բացի բերդից ուրիշ գույք չունի։ Այդ միակ առարկան, որ հավանորեն խորհրդանշում է նախնադարյան տոհմական ընդհանուր տունը, իսկ միջնադարյան Հայաստանում՝ ամրոցը, տարբեր նյութերից էր ընտրվում։ Վանում դա մի ցից էր, որ տնկում էին հրապարակում և գլխին քող գցելով ճողք անունն էին տալիս։ Այստեղ ցցի փոխարեն երբեմն ընտրում էին նույն անունը կրող լաթի կտորը։ Սասունում, ձմռանը, գոմում խաղալիս բերդ էին դարձնում գոմի սյունը։ Բարձր Հայքում, Ծոփքում և այլ նահանգներում բերդը ներկայացնում էր 30—40 սմ մեծության քարը, Կարսում՝ հողակույտը, Չարսանճագում՝ կտուրի վրա գոմաշենյակի ծխնելույզը։ Արարատյան հովտում, Տուրուբերանում և այլ վայրերում բերդը շրջագիծն էր, իսկ երբեմն էլ՝ շրջագծի մեջ գետեղված քարը։

Երկու հավասար ուժերից կազմված խմբերից մեկը դառնում էր բերդի պաշտպանը, իսկ մյուսը՝ գրավել ցանկացողը։ Պաշտպանողներից ամենաճարպիկը մի ոտքը դնում էր բերդին կամ մի ձեռքով բռնում տնկված ցիցը և սյունը։ Հակառակորդը բերդը կարող էր գրավել դրան ձեռք տալով կամ ոտքը վրան դնելով ու գրավման մասին բարձրաձայն հայտարարություն անելով (քողքն առի՛, չուռն առա՛, չո՛ւռ ո; չը՛ռ ո)։

Ահա այն հաստատուն տվյալները, որոնց հիման վրա կարելի է բերդ մրցակցական խաղը ևս դասել ռազմամրցակցական խաղերի շարքը։

Բերդախաղի ռազմի բնույթը երևում է նաև մի շարք այլ տվյալներից։ Նախ խաղին մասնակցում էին միայն տղաները և տղամարդիկ։ Տևականցի վկայությամբ XIX դարի 80-ական թվականներին երեխաներից ու պատանիներից բացի, խաղում էին նաև մեծերը։ Բայց խաղին աշխուժություն հաղորդելու նպատակով վանեցի մեծերը ներքաշում էին իրենցից փոքրերին։ Դա մեծերի կողմից խաղի ասպարեզը թողնելու նշաններից մեկն էր։ Իրոք, բոլոր բանահավաքների վկայությամբ XIX դարի վերջերին և XX դարի առաջին կեսին բերդախաղին մասնակցում էին միայն երեխաներն ու պատանիները, որոնց թիվը հասնում էր 10—40 հոգու։

Մրցության ընթացքում կողմերը հանդես էին բերում զինված հարձակմանն ու պաշտպանությանը հատուկ ձևեր ու եռանդ։ Բանակը ճեղքելու միջոցով կտրվածները գերիներ էին համարվում. կողմերի առաջնորդների համաձայնությամբ տեղի էր ունենում հավասար թվով կտրվածների իրավունքների վերականգնում, որ գերիների փոխանակումն էր հիշեցնում։

Շրջագիծը այս խաղում ևս դիտում ենք իբրև երկրի (գավառի, նահանգի) սահման։ Այդ բանն ակնհայտ է հատկապես այնտեղ, ուր բերդը զետեղվում է շրջագծի մեջ։ Դա էր հիմնական պատճառը, որ միջնադարյան սովորության համաձայն խաղն ավարտված էր համարվում միայն բերդը գրավելուց հետո։

Բերդախաղը լախտախաղի նման զարգացնում էր երեխաների ուշադրությունը, ճարպկությունը և առանձնապես ոտքերը, որովհետև վազքը խաղի գլխավոր շարժումն էր։

Գնդակախաղեր.—Գնդակախաղերը Հայաստանում լայն տարածում ունեին։ Դրանց զգալի մասը տեղ է գտել հնագույն գրական հուշարձաններում և միջնադարյան մանրանկարչության մեջ։ Ժողովուրդը գնդակախաղերի տարատեսակներն ավանդաբար պահպանել, զարգացրել և մինչև մեր օրերն է հասցրել։

Շատ այլ խաղերի նման գնդակախաղերը նախնադարում երկու բնույթի են եղել։ Դրանց մի մասը կյանքի երևույթների անմիջական վերարտադրությունն է խաղի ձևով, իսկ մյուսները հասարակական մի շարք գաղափարների հիման վրա առաջացած ծիսական արարողություններն էին, որոնք նախնադարից հետո վեր են ածվել խաղերի։ Այդ է պատճառը, որ գնդակախաղերի շար-

ժամանակների և խաղային սովորույթների մեջ այժմ զգալի չափով առեղծվածներ կան։ Բոլոր պարագաներում գնդակախաղերը նախնադարից սկսած երիտասարդության ֆիզիկական դաստիարակության գործում ունեցել են և ունեն կարևոր նշանակություն։

Խաղի գլխավոր առարկան գնդակն է եղել։ Այն շարժման մեջ են դրել ձեռքերով, ոտքերով, ձեռնատախտակներով և գավազաններով։ Գունդը հնագույն ժամանակներում պատրաստում էին փայտից, ոսկրից, բրդից, քարից ու մազից, իսկ ներկայումս՝ գլխավորապես կաշվից ու ռետինից։ Իբրև խաղագնդակ օգտագործվել են նաև մի շարք պտուղներ՝ ընկույզն ու կաղինը՝ խփելով գլորելու, խակ խնձորը և նմանները՝ օդում իրար տալու ձևով։ Գնդակի դեր են կատարել նաև տղաների գլխարկները և այլ պարագաներ, որոնք, ինչպես կտեսնենք, առավելապես ծիսական խաղերի առարկաներն էին։

Ժողովրդական բանահյուսության մեջ խորհրդանշորեն գնդի դեր են կատարել, այսպես կոչված, ոսկե խնձորները և մետաղյա հոլ-գնդակները։

Երեխաների շրջանում որպես օդագնդակ ծառայում էր անասունի միզապարկը, որի մեջ արդի փուչիկների նման օդ էին լցնում։ Գնդակախաղերի տարածված և սիրված լինելու պատճառը մարմինը բազմակողմանի շարժման մեջ դնելն էր։ Ձեռքերի ու ոտքերի դյուրաշարժության և վազքի վարժության, մեջքի ճկունության, ընդհանուր ճարպկության և ուշադրության զարգացում, հարձակման ու նահանջի արվեստի ունակությունների ձեռքբերում, հարվածելու և դիմադրելու ընդունակությունների վարժեցում, ինքնապաշտպանության վարժեցում ևն,—ահա գնդակախաղերի նշանակությունը։

Հայկական հնագույն գնդակախաղերի մեջ մենք գտնում ենք շատ կանոններ ու հնարքներ, որոնք առկա են միջազգային բնույթի խաղերի մեջ։ Հիշենք դրանցից մեկը՝ Շապին-Գարահիսարի «Մազագնդակ» խաղը (№ 233)։ Այս խաղը տեղի էր ունենում երկու կողմերի սահմանների միջև. գնդակը շարժման մեջ էր դրվում ոտքով և անցկացվում էր սեփական սահմանից դուրս։ Ինչպես երևում է, այս խաղը արդի ֆուտբոլի մի փոփոխակն է եղել Հայաստանում։ Այսպիսի խաղերի մասնագիտական քննությունը հետաքրքրական էջեր կբանար ֆուտբոլի պատմության մեջ։

Հայկական գնդակախաղերն ըստ հատկանիշների բաժանվում են մի քանի տեսակների։ ա. գծագնդակներ. շրջան, որի մեջ տեղի է ունենում գնդակախաղը, բ. ձեռքով և ձեռնատախտակի (գավազանի) օգնությամբ գնդակը շարժման մեջ դնելու խաղեր, գ. գնդակը կողմերի սահմաններից իրար տալու խաղեր, դ. գնդակը ոտքով սեփական սահմանն անցկացնելու խաղեր, ե. գընդակը գետնին խփելու և առանցքի շուրջը պտույտ գործելու խաղեր, զ. կանգնած և շոշած՝ գնդակը գետնին պարբերաբար խփելու խաղեր, է. պատի գնդակախաղեր՝ գնդակը պատին պարբերաբար խփել-բռնելու խաղեր, ը. գնդերը (ընկույզ, կաղին, fար) լափով շարժման մեջ դնելու խաղեր, թ. գնդակախաղեր, ուր գնդակի փոխարեն շարշարանքի մեջ է դրվում տուժած խաղակցի գդակը ևն (նկ. 30)։

Գնդակախաղերի ծագման հարցերը մինչև վերջերս առեղծվածային էին։ Դրանց ուսումնասիրման լուրջ փորձ է արել Աս. Մնացականյանը 1950-ական թվականներին։ Նա առաջին հետազոտողն էր, որը փորձեց գնդակը և գնդի գաղափարը կապել կյանքի հետ։ Նա արտահայտեց այն միտքը, թե գնդակը ծլող հատիկի և խնձոր-պտուղի խորհրդանիշն է կյանքում։ Խնձոր-պտուղն այս հարցում, իրոք, կենտրոնական տեղ է գրավում։ Խնձորը հեղինակն իրավացիորեն համարում է սիրո և պտղաբերության խորհրդանիշը, ինչպես որ այն արտացոլվել է ժողովրդական բանահյուսության մի շարք ժանրերի մեջ։ Այն երևում է նաև ճարտարապետական հուշարձանների վրա, ծեսերի մեջ և այլուր, որոնց վրա էլ հենվում է հեղինակը։

Սիրո և պտղաբերության խորհրդանշան խնձորը բանահյուսության մեջ հայտնի է «ոսկի խնձոր» ձևով։ Սրանք դիտվում էին իբրև խորհրդանշան։ Այստեղից էլ՝ մետաղյա գունդը վիճարկման առարկա-կռվախնձոր դառնալու հանգամանքը։ Այդ երկվությամբ է, որ գունդը բացատրվում է որպես խաղալու առարկա, որպես մրցության պարագա և պարգև։ Աս. Մնացականյանը խաղագնդակներն իրավացիորեն իշխանական խորհրդանշաններ և գնդակախաղերը՝ նաև պետական մրցման ձևեր է համարում։ Նա միջնադարից բերել է մի շարք

փաստեր, որոնք հաստատում են իր ենթադրությունները։ Իբրև իշխանության խորհրդանշան, ոսկի խնձորի համար տեղի են ունեցել հերոսամարտեր, ինչպես վկայում են դիցաբանական տվյալները։

Աս. Մնացականյանի այս հայտնագործությունները լուրջ ներդրում են ազգային սպորտի պատմության մեջ[53]։ Նրա հետազոտությունն այստեղ չկրկնելու համար դրանց վրա կանգ չենք առնի։ Մենք մի շարք խաղերի բովանդակությունից և վերոհիշյալ սկզբունքներից ելնելով կաշխատենք գտնել նոր շերտեր, որ ժողովուրդը պահել է գնդակախաղերի մեջ մինչև մեր օրերը։

Ամենից առաջ հիշենք, որ ամեն մի խաղ, որը ենթադրում է հակադիր խմբերի կամ անհատների պայքարի ձևեր, իրենից ներկայացնում է տոհմային պայքարի տարրեր։ Այդպես՝ մայրական տոհմի և հայրական տոհմի հակասությունները, ֆրատրիալ երկվությունները, ցեղամիջյան պատերազմական գործողությունները են։ Այս երևույթները խաղերի մեջ հետագա զարգացում են ապրել. ներառվել են պետական կարգերին հատուկ և պետությունների միջև տեղի ունեցող ներհակությունները։

Ֆ. Էնգելսը իրոկեզների տոհմային կարգերում ցույց է տվել գնդակախաղ, որը դրսևորվել է ֆրատրիալ հակասություններից ելնելով։ Նա գրում է. «Ֆրատրիայի ֆունկցիաները իրոկեզների մեջ մասամբ հասարակական բնույթ ունեն, մասամբ կրոնական։ Ֆրատրիաները գնդակախաղը խաղում են միմյանց դեմ. յուրաքանչյուրն առաջ է մղում իր լավագույն խաղացողներին, մյուսները դիտում են խաղը՝ յուրաքանչյուր ֆրատրիա առանձին խումբ կազմած, և իրար հետ գրազ են գալիս իրենց մրցորդների հաղթության վերաբերմամբ»[54]։

Իրոկեզների այս սովորությունը, անշուշտ, հատուկ է եղել նաև հայկական տոհմացեղային կազմակերպություններին։ Այդ են վկայում բազմաթիվ խաղանյութերը և հարակից տվյալները։

Ելնելով հայկական նյութերից, կարծում ենք, որ տոհմացեղային շրջանում ֆրատրիալ և այլ հակասություններով օժտված խաղերը առավելապես տեղի են ունեցել շրջագծերի և այլ ձևի փակ գծերի մեջ, որովհետև դրանք նախնական շրջանում կախարդական նշանակություն են ունեցել։ Ինչպես նշել ենք, գծերը խորհրդանշելու էին տոհմային կամ ցեղային կազմակերպություններն իրենց տարածքային ամբողջականության առումով։ Ուստի գծամիջին և ամբողջապես նրա շրջապատում տեղի ունեցող խաղային գործողությունները երկու հիմնական առում ունեն։ Մեկը բուն ռազմական կյանքի արտացոլումն է մանկապատանեկան խաղերում և մյուսը՝ մեծերի կողմից այն կախարդական գործողությունները, որոնք ուշ ժամանակներում չգիտակցվելով՝ խաղեր են դարձել։ Իսկ կախարդանք ասելով պետք է ընդունել կռվի դուրս գալուց առաջ երկու խմբերի բաժանվելով պայքարի խորհրդանշական ձևերի կատարումը և հաղթանակ շահելու համար՝ գծամիջի մոգական գործողությունները։ Ռազմի տեսակետից կրկին հիշենք վերոհիշյալ «Իմաստուն ջուվհակն» հեքիաթի բովանդակությունը, որը ցույց է տալիս, որ, ըստ երևույթին, տոհմացեղային շրջանում պատերազմ հայտարարելու այդպիսի սովորություն է եղել։ Հետագայում արդեն սիմվոլիկ գործողությանը խաղերում փոխարինել են մարդիկ և խաղ-կռիվներ են ծավալել։

Պաղաբերության տեսակետից կարևոր կախարդանքներ են պարունակում մի շարք գծագնդակախաղեր։ Շուլավերի «Հալի-հալի» խաղի մեջ գնդակ խաղացողներն իրար շալակում, «եռանկյունաձև կամ քառանկյունաձև կանգնում են և գնդակը միմյանց գցում» (№ 224)։ Ն. Բայազետի «Ջղեզ» խաղի շրջանաձև խաղագծից դուրս գտնվողները գնդակն իրենց ընկերներին տալով մի լրիվ հորիզոնական շրջան էլ օդում էին գծում, ապա նոր անցնում հարձակման (№ 207)։ Այդ նույն վայրի «Ճրզըր-վրզըր» կոչված խաղի հեծյալներն իրենց «ձիերին» ստիպում էին շրջագծի շուրջը մի անգամ պտույտ գործել, իսկ իրենք նվագելու ձևեր էին կատարում (№ 217)։ Ակնում «Ջու-չու» խաղի հեծյալները ևս գնդակը շրջանաձև իրար էին տալիս և մի շրջանն ավարտելիս վարպետը, ձևացնելով, թե ինքը կանգնած տեղին չի հավանում, գրաստով տեղափոխվում է հաջորդ ընկերոջ տեղը, վերջինս՝ իր հաջորդի տեղը ևն,

---

53 Աս. Շ. Մնացականյան, *Հայկական զարդարվեստ*, Երևան, 1955, էջ 497—506։

54 Ֆ. Էնգելս, *Ընտանիքի, մասնավոր սեփականության և պետության ծագումը*, Երևան, 1948, էջ 118։

մինչև որ բոլորը տեղաշարժ էին կատարում ու նորից խաղը կրկնում (№ 218)։ Այդ նույնը պահպանված էր նաև Ղարադաղի «Հիլ-հաֆլի» խաղի մեջ (№ 221)։

Որոշ գծագնդակախաղերի մեջ դրսի խաղացողները գնդակը բարձր առաստաղով գցում էին գծամիջինների գլխավերևով և օդում գծում ծիածանաձև կիսաաղեղ։ Ախալքալաքի «Գծագնդակ» կամ «Ջըղթոփ» խաղի մեջ դրսի խմբի տղաները գընդակը իրենցից մեկի ծոցում, քղանցքի տակին կամ կռնատակին թաքցնում և բոլորն էլ իրենց թաքցնող ձևացնելով հարձակվում էին գծամիջինների վրա։ Գնդակի հանկարծակի արձակումից երկյուղ կրելով՝ ներսիննները իբրև թե ծանր ապրումներ էին ունենում կամ սոսկում, դիմագծերով ու պաշտպանական շարժումներով խիստ անհանգըստություն արտահայտում (№ 202. համմտ. նաև «Ախպերս հյուսն՝ վրան է շինում» № 203, «Շըրջան» № 204, «Եռով գունդ» № 205)։

«Դառնալեն» (№ 239) խաղի էությունն այն էր, որ գնդակը խփելուց հետո, մինչև վերջինիս ցած ընկնելը, իր առանցքի շուրջը մի պտույտ գործեր։

Ինչպես երևում է այս թվարկված և նման այլ խաղերի մեջ կախարդական գործողություններ էին կատարվում։ Դրանք, սկզբնական շրջանում, մեծ մասամբ հասարակական գաղափարների ազդեցությամբ մշակված կրոնական միջոցառումներ են եղել, որոնց նպատակը որևէ իրական բաղձանքի հասնելն է եղել։ Այդ բաղձանքները մեծ մասամբ աղերսվում էին սիրո, ամուսնության, պըտղաբերության, տնտեսական և ռազմական խնդիրների հետ։ Այդպես, օրինակ, շրջանի շուրջը տեղի ունեցող գործողությունները, որ մեծ մասամբ կիրառվում էին աջից ձախ շարժմամբ, խորհրդանշում էին կյանքի հարափոխությունը։ Հայկական պարերի աջից-ձախ շարժման այդպիսի բնույթը Ս. Լիսիցյանն իրավացիորեն կապում է հաջողության գաղափարի հետ[55]։

Շրջագծի վրա աջից-ձախ ուղղությամբ միմյանց գնդակ փոխանցելու գաղափարը սերտ առընչություն ունի սիրո և ամուսնության հետ, որովհետև դրանք են կյանքի հարափոխության արմատները։ Իսկ ռազմական տեսակետից դրանք երբեմնի ռազմավարատեխնիկական ու տակտիկական վարժությունների հետքերն են՝ մասամբ կրոնական բնույթով։

Վերևում ասացինք, որ Աս. Մնացականյանի ճիշտ մեկնաբանությամբ գունդը կամ ոսկե խնձորը խորհրդանշում է աղջկանը, հանուն որի դիցաբանական պայքար է ծավալվում։ Շրջագծային խաղերի մեջ հանուն գնդակի տիրապետման պայքարը նույն խորհրդանիշն ունի։ Այս պարագայի մեջ շրջանը նույնանում է գնդի սիմվոլի հետ։ Գունդ խաղացողները մրցում են հանուն այն աղջկա, որի ուզնկանների դերի մեջ են իրենք։ Որ դա ճիշտ է, կարելի է հաստատել դիցաբանական մի վկայությամբ, որ գտնում ենք հեքիաթների մեջ։ Այսպես, Բաղեշի «Ջուալ աստղ» հեքիաթում ոսկի խնձոր-գնդակը իրար են փոխանցում կաթսայի շուրջը բոլորած քառասուն խավշիկները. «էն կու թալե էնոր, կասա՝ Ջուալ աստղի (հեքիաթի հերոսուհու) էշխին, էն կու թալե էնոր, կասա՝ Ջուալ աստղի էշխին» (№ 250)։ Համեմատել Բաղեշի «Դարչին և Իրեք Ջարեք» հեքիաթի դևերի ոսկե խնձոր նետելն իրար՝ հանուն չինաց թագավորի դուստր Իրեք Ջարեքի սիրո (№ 251)։

Բանահյուսության մեջ հայտնի է, որ աղջիկը տղա ընտրելիս և տղան աղջիկ ընտրելիս ոսկե խնձոր են առաջարկում։ Պարզ է, որ այս սովորությունը մայրական տոհմից էր անցնելու հայրական տոհմի մեջ։ Աղջիկը խնձոր առաջարկելով տղային՝ նկատի ուներ իրեն զավակ հարուցելը։ Այդ սիմվոլն ուներ նաև մոգական առում՝ նմանով նմանն առաջացնելու հայտնի միտքը։ Հայրիրավական շրջանում այդ միտքը նույնությամբ պահպանվեց և Հայաստանում ավանդաբար հասավ մինչև XX դարի սկիզբը։ Որոշ սովորություններ պահպանվում են նաև մեր օրերում։ Աղջիկ ընտրողը հասարակական բնույթի խրախճանքների ժամանակ աղջկա ձեռքը խնձոր էր տալիս, որը ընդունվելու դեպքում երիտասարդը նշանադրված էր համարվում։ Այս երևույթի մեջ նշանադրություն հասկացությունն ինքնին փոխարինել է պատուղ հարուցող-պատուղ հարուցել, ինչպես նաև պտղել, պատուղ աճեցնել ըմբռնումներին։ Որոշ հեքիաթներում անզավակ կնոջը աստվածությունը խնձոր է առաջարկում։ Այն ուտող կինը նույնիսկ խոր

---

5 *Сбуци Лисициан*, Старинные пляски и театральные представления армянского народа, т. I, Ереван, 1958, стр. 130—131.

ծերության մեջ զավակ է ունենում։ XIX—XX դդ. հայ պսակադրվող տղան իր հարսնացուի հետ եկեղեցի գնալիս խնձոր էր հոտոտում, որն ըստ էության նշանակում էր զավակ հարուցելու ընդունակ լինել։ Փեսան ուրցից պոկած խնձորով «խփում» էր իր հարսնացուին, որ նմանապես նշանակում էր պտղաբերելու ընդունակ լինել։ Հսկե խնձորին հմտորեն նշան բռնող տղան ըստ դիցաբանության կարող էր ամուսնանալ վիճարկվող աղջկա հետ (նկ. 40)։

Այս բոլոր սիմվոլիկ նշանները և գնդի հետ կատարվող իմաստավորված շարժումները խաղ լինելուց առաջ մարդու կենցաղում գործնական նշանակություն ունեցող հարցերին լուծում տվող նախնական ծիսական արարողություններ են եղել։

Մեզ թվում է, թե նախնական շրջանում գծամիջին և գծից դուրս այդ ծեսերին մասնակցել են տարբեր սեռերի հասակակիցները։ Սահմանված կանոնների համաձայն գնդակով իրար խփելու գործողությունները կարող էին և, թվում է, թե պետք է նշանակեին պտղաբերական ծես կատարելը, բոլորին հմայելը, որով մի կողմը ընդունակ լիներ պտուղ հարուցել և մյուսը՝ պտղել։ Այս տեսակետից կարևոր նշանակություն ունի եռանկյունաձև գծի վրա դրսևորվող խաղը, որովհետև եռանկյունին կնոջ սիմվոլն է հանդիսանում։

Շրջագծում կախարդական արարողությունները հայտնի էին նաև այլ ժողովուրդների, այդ թվում՝ քրդերին։ Բնապաշտ եզդիների կրոնական պատկերացումների համաձայն շրջագծի մեջ առնված մարդը դուրս գալ չի կարող, մինչև որ գծողը կամ մեկ ուրիշը գիծը չոչնչացնի, կախարդանքից չազատի։

Բացի շրջագծայինն խաղերից, գնդակախաղերը տեղի են ունենում նաև իրարից որոշ հեռավորության վրա գտնվող սահմանների միջև, որոնք սերտ կապ ունեն ռազմական վարժությունների հետ։ Թշնամական բանակների նման այսպիսի խաղերում կան ցեղային կամ պետական սահմաններ և ինչ որ «չեզոք գոտի», որտեղ տեղի է ունենում գնդակախաղը, ինչպես նաև մի առանձին անկյուն, որտեղ տեղավորվում են շարքից դուրս եկածները («մեռածները»)։ Սա մի տեսակ «հոսպիտալ» է, որտեղ «մեռածները» խաղի լրացուցիչ կանոնների կատարման դեպքում կարող են վերականգնել իրենց իրավունքները և վերադառնալ ընկերների շարքերը։ Դժվար չէ նկատել, որ այս բոլորն իրենց ամբողջության մեջ իրական պատերազմների վերարտադրություններն են, որտեղ «մեռածները» (վիրավորները) մի տեսակ բուժում են ստանում կամ հարություն առնում։ Այս խաղերի բնույթի մեջ առկա են՝ թե՛ ֆրատրիալ պայքարի ձևերը և թե՛ իրար նկատմամբ օտար ցեղերի ու պետությունների հակամարտությունները։

Գնդակախաղերի մի տեսակը նույնպես կապ ունի տոհմատիրական հասարակական հարաբերությունների հետ և, ըստ էության, խաղի հնագույն շերտերից մեկն է։ Այդ գնդակախաղերը արտահայտվում են այսպես կոչված «տերերի» և «գրաստների» բաժանվելով. հեծյալները գնդակը օդում իրար գցելով են խաղում։ Այս ձևը ելնում է ոչ միայն հեծյալ բանակի ռազմական խնդիրներից։ Հեծյալները հաճախ բագավոր պատվանունն են կրում, որը լավ վկայություն է այն գաղափարի, թե մարդկանց մի սոցիալական խումբը ճնշում է գործադրում մի այլ խմբի վրա։ Այս գաղափարը խաղի մեջ տեղ է գտել թե անդասակարգ հասարակության և թե դասակարգային հասարակության մեջ։ Ընդ որում ծիսական բնույթը գալիս է նախնադարից, իսկ դասակարգային շերտավորում մատնանշող մասը՝ պետության հասած հասարակություններից։

Նախ նշենք, որ խաղի մեջ հեծյալը և նրա գործողություններն ունեն գործնական-ռազմատնտեսական նշանակություն։ Դրանց գաղափարական նշանակությունը, սակայն, աղերսվում է կրոնական և հասարակական պատկերացումների հետ։ Այս տեսակետից հիշենք Արևելքի ժողովուրդների տոտեմական պաշտամունքի հետ կապված այն արարողությունը, երբ կենդանի նախնուն ներկայացնելու համար տոհմի անդամները իրար միանալով ձևացնում էին տոտեմը։ Հայաստանում այդ նույնը ներկայացնող շատ նյութեր կան խաղերի, պարաձևերի և մանրանկարչության մեջ։ Մենք այստեղ կբերենք միայն գնդակախաղերի հետ առնչվողները։ Այսպես. այն դեպքում, երբ հեծյալը ոտքերը կախելով գրաստի կրծքից ցած և ամուր կպչելով նրան, դառնում է մի մարմին, թվում է, թե ներկայացնում է կամ մայրական տոհմը իրեն ենթակա տղամարդկանցով և կամ

հայրիրավական տոհմը՝ իրեն ենթակա կանանցով։ Առաջին դեպքում հեծյալը խորհրդանշում է կանանց իշխանությունը և երկրորդ դեպքում՝ տղամարդկանց իշխանությունը։

Այսպես, ուրեմն, հայկական գնդակախաղերը նախնադարից սկսած, ունեցել են մարմինը կըրթելու գործնական նշանակություն։ Այդ խաղերը ծագել են տոհմային հասարակության ներսում իբրև կյանքի երևույթների վերարտադրություններ և, մյուս կողմից, ծիսական արարողությունները, որ պտղաբերական և այլ առումներ են ունեցել, հետագայում իմաստազրկվելով՝ դարձել են զվարճալի խաղեր։ Ինչպիսի ծագում էլ ունենային, այդ խաղերը միջնադարում և ավելի ուշ շրջաններում կրել են որոշ փոփոխություններ, հարմարվել դաստիարակության նոր պահանջներին։

Նշանառության խաղեր.— Ռազմասպորտային բնույթի խաղերի մեջ նշանակալից թիվ են կազմում այն խաղերը, որոնք, անկախ իրենց ծագումից ու արտաքին հանգամանքներից, ծառայել են նշանառության արվեստի տիրապետմանը։ Մենք այդ կարգի խաղերից ենք համարում նետաղեղով նշանառությունները, ընկուզախաղերը, հոլախաղերը, վեգախաղերի մեծ մասը, լափախաղերը, ձվախաղերի մի մասը են։ Կան այլ խաղեր ևս, որոնց մեջ գերիշխող ձևը այլ բնույթի լինելու պատճառով ժողովածուում չենք զետեղել։

Նշանառության խաղերում իբրև թիրախ են ծառայել գետնի մեջ վարսված ճիպոտը, գավազանը, երկաթե ձողը, քարերը, գնդաքարը, անասունի ոլոգը, գանգը, խեցիները, ընկուզը, ձուն, խնձորը, շարժվող հոլը են։ Իսկ նշան խփելու պարագաներն էին՝ գավազանը, ճիպոտը, սկավառակաձև լափը, գնդաքարը, բրդե գնդակը, վեգը, ընկուզը, հոլը, կորիզները են։ Իբրև նշանառության զենքեր են ծառայել մանկական հրացանները, նետ ու աղեղը, իսկ երիտասարդության համար՝ նաև հրացենը։

Նշանառությունը կատարվել է բազմաթիվ ձևերով՝ 1. Հորիզոնական ուղղությամբ՝ եթե նշանի բարձրությունը համապատասխանել է նշանառուների հասակին. 2. շեղակի՝ եթե նշանը տնկվել է գետնի վրա. 3. գլորելով՝ եթե նշանակետը փոսն է եղել կամ փոքրիկ առարկան. 4. ուղղահայաց կամ կիսաուղղահայաց-շեղակի հարվածով՝ եթե թիրախը շարժական է եղել (հոլ)։

Այս խաղերը մի մասն են այն ամենի, որ հնուց անդի հարմարեցված էին երեխաների դաստին։ Երեխաների խաղերին երբեմն մասնակցում էին նաև իրենցից մեծերը, որոնց հասցեին ծաղրական խոսքն ասում էր. «պոչդ խուզել, քուռակներին ես խառնվել»։ Այնպես որ, մինչև 14—15 տարեկան երեխաները նշանառության խաղերի մեծ մասը յուրացնում էին բազմաթիվ այլ խաղերին զուգընթաց։

Մանուկների նշանառության խաղերը յուրահատուկ էին երկու սեռի երեխաներին։ Բայց ակընհայտ է, որ աղջիկներն ավելի վաղ էին հեռանում այդ ասպարեզից, քան տղաները։ Տղաներն իբրև որսորդության, անասնապահության և զինվորական ծառայության պահեստային ուժեր, ավանդական կարգով նշանառության խաղերով զբաղվում էին ընդհուպ մինչև պատանեկան և երիտասարդական տարիները։ Աղջիկների հեռանալը խաղերից կապված էր սոցիալական հարցերի՝ տնային տնտեսությամբ զբաղվելու և ամուսնության հետ։ Սակայն վերջիններիս՝ նշանառության խաղերից հրաժարվելը մասամբ պայմանական էր, քանզի մի շարք ծեսերի «թույլտվությամբ» հարսներն ու աղջիկները այդ խաղերի մի մասը կարողանում էին կազմակերպել տանը, տղամարդկանցից գաղտնի։ Այդպես՝ ձու գլորելու մոլախաղերը զատկին, ընկույզ ու կաղին գլորելու խաղերը ժողովրդական տոներին և ամուսնության հետ կապված ծեսերին են։ Ծեսերի շնորհիվ պահպանելով նշանառության նման խաղերը, կինը դառնում էր իր երեխաների առաջին ուսուցիչը։

Մանկական դասերի մեջ նշանառության խաղերը դրսևորվում են երկու ձևով. մեկ՝ երբ երեխան իբրև անհատ մրցում է կոլեկտիվի բոլոր անհատների հետ։ Մյուս դեպքում՝ կոլեկտիվը բաժանվելով երկու խմբի՝ մրցում է ծավալում հանուն կոլեկտիվի արդյունքի։

Անհատական մրցումը երեխային հոգեբանական մղում է տալիս, որով նա լիցքավորված՝ հաղթանակ է ակնկալում։

Մանուկների վարժությունը մասնավորապես նշանառության մեջ մեծ է այն իմաստով, որ ի վերջո, երբ և որտեղ էլ լինի, նշանառուն գործելու

է անհատապես։ Ուստի և կարևոր է նրա դերը ոչ միայն մանկական ու պատանեկան խաղերի ասպարեզում, որտեղ նշանավոր անհատը հայտնա-գործվում է, այլև ռազմաճակատներում։ Այս հանգամանքը շատ կարևոր էր առանձնապես նախնադարում, երբ առաջնորդ էր դառնում նա, ով մանկությունից զենքի ու զինվորական արվեստի մեջ հմտացել էր, որսորդության ու կռիվների մեջ խիզախություն ցուցաբերել։

Մանուկների նշանառության ձևերի գերազանց յուրացումները մանկանը, պատանուն և երիտասարդին ռազմական նպատակների համար պիտանի քաղաքացի պատրաստելու նախապայմաններից էին։ Ուստի պատահական չէր, որ անվրեպ նշանառություն սովորեցնելու համար ավագները, միջնադարում և ավելի ուշ ժամանակներում, երեխաներին հետները որսի էին տանում։ Ինչպես վկայում են պատմիչները, հայ նախարարներն իրենց երեխաներին որսի մեջ հետևողականորեն վարժեցնում էին հանուն վաղվա ռազմական նպատակների։

Անհատը, երեխան, ուրեմն, նշանառության գանազան ձևերը յուրացնում էր ընտանիքի և հասարակական միջավայրի համագործակցությամբ։ Ընտանիքի դաստիարակի գործը շարունակում էին հասարակության մեջ հեղինակություն վայելող ավագները։ Այնպես որ, անհատը մեկուսացված չէր։ Մտնելով երեխաների ինքնուրույն խաղաշխարհի մեջ, նա դառնում էր կոլեկտիվի ակտիվ անդամը։ Կոլեկտիվ մրցություններն անհատականից ավելի բարդ են և ավելի նպատակային։ Այդ է պատճառը, որ փոքրերը դժվարանում են այդ խաղերին մասնակցել։ Բայց կան այսպիսի բացառություններ. համեմատաբար մեծ երեխաներն իրենց երկու մրցող խմբերի մեջ երբեմն ընդունում են մեկ-երկու փոքրերի։ Սրանք երբեմն խաղի մեջ մի տեսակ անձեռնմխելի են մնում։ Մրցող մեծերը նրանց թողնում են, որ վարժվեն, իսկ հակառակորդ հասակակիցների նկատմամբ անխնա են։ Այս ձևով էլ փոքրերը յուրացնում են մեծերի խմբական բնույթի բարդ խաղերը։ Այդ նշանակում է, որ փոքրահասակ երեխաների համար բնորոշը անհատական մրցությունն է և կոլեկտիվ մրցումը՝ երկրորդական, իսկ պատանիների համար բնորոշը կոլեկտիվ խաղն է և երկրորդականը՝ անհատականը։

Այս խաղերի մեջ կան կանոնների կիրառություններ, որոնք առեղծվածային շատ բաներ ունեն և չեն գիտակցվում. 1. Կանոններ, որ կատարվում են շրջագծերի մեջ և դրանց շուրջը։ 2. Կանոններ, որ կատարվում են փոսիկների մեջ և դրանց շուրջը։ 3. Կանոններ, որոնց համաձայն նշանառության առարկաները պետք է լինեին կենդանիների ոսկորները։

Շրջանների մեջ և դրանց շուրջը տեղի ունեցող խաղային վարժությունները նման են լափիկախաղերի շրջաններին։ Այստեղ ևս կախարդանքը ծառայում է ռազմական նպատակներին։ Այսպես, օրինակ՝ թելով հոլ խաղացողները երբեմն գծում են 5—6 մ տրամագծով շրջան և սրա կենտրոնում՝ համամեջ փոքրիկ շրջան։ Պայմանի համաձայն մեկը իր ունեցած բոլոր հոլերը դնում է փոքր շրջանի մեջ։ Ապա բոլորը, մեծ շրջագծի վրա ըստ հասակի շարվելուց հետո, բարձր հասակ ունեցողից սկսելով թելով լարված հոլերով նշան են բռնում ցած դրվածին։ Պայմանն է՝ խփող և թիրախ հոլերը փոքր շրջանից դուրս թռցնել։ Դուրս թռածները դառնում են նշանառուների սեփականությունը, իսկ մնացածները՝ «գետնի գերի» կամ «գետնի ստրուկ», որոնք դառնում են ընդհանուրի սեփականությունը։ Կանոնը երբեմն պահանջում է, որ խաղը շարունակվի, մինչև որ բոլոր հոլերը դառնան մեկի սեփականությունը, վերապահությամբ, որ եթե այդ «սեփականատերը» վերջին անգամ շրջանների մեջ դրված հոլերին մի հոլով խփելիս ոչ մի հոլ դուրս բերել չհաջողեցնի, նա սեփականազրկվում է և յուրաքանչյուրն իր հոլի տերն է դառնում։ Դժվար չէ կռահել, որ այս գործողությունն ունի ռազմական բնույթ։ Դա մի տեսակ ծիսային վարժություն էր, որը գործնական ու կախարդական տեսակետից թշնամու դեմ հաղթանակ շահելուն էր ծառայում։

Շրջագծերի, ինչպես նաև խաղալիս շրջաններ ձևացնելու ուշագրավ երևույթների հետ են կապված լափիկախաղերը և նմանները։ Սկավառակը, որ սալաքարից էր պատրաստվում, լափուկախաղի ժամանակ ծառայում էր իբրև թիրախին հարվածելու առարկա։ Վիճակահանությունը շրջանների մեջ սկավառակները նետելով էր կատարվում, որը մի տեսակ կախարդական գործողության հետքեր է պահպանել։ Այս տեսակետից հե-

տաքրքրության արժանի է Շուլավերի «Ծղոծղոի կամ չոփչոփանուկի» խաղը (№ 268)։ Երեխաներն իրարից հեռու դարսած ճիպոտների շուրջը սահմանված կարգով ակնատուկ ու մունջ՝ շրջան են կատարում, որ պիտի կրկնեն երեք անգամ։ Նույնը, նրանք կրկնում են ճիպոտների միջև։ Այսպես ասած մնջախաղը «խանգարելու» համար մյուսները ծաղրում, ծաղրերգեր են երգում, ծափ տալիս ու ծամածռություններ են անում։ «Խանգարելու» հանգամանքը խաղը ձեռք է բերել շատ ուշ շրջանում։ Իրականում ծամածռություններն ու երգերը պահպանում են նախապատմական շրջանի կրոնական ծիսակատարությունները՝ կապված զենք-գործիքի հետ։ Թերևս դա զենք-գործիքի հմայումն է կամ կախարդումը, որից նախնական մարդը զանազան ակնկալություններ ուներ։ Արդյո՞ք դրանք նաև որսին ու պատերազմական գործողություններին նախորդող ծիսակատարություններ չէին։

Հնագույն սովորույթների հետքեր են պահպանել «Սատանի փոս» և նման անուններ կրող խաղերը։ Այստեղ գրեթե նույն ձևը կրող խաղերի բովանդակությունները խստորեն տարբեր են, որովհետև ծագում են տարբեր ակունքներից։ Այսպես, օրինակ՝ Ջավախքի «Սատանի հոր» (№ 323) և Կոտայքի «Սատանի օբա» խաղերը։

Մենք այն կարծիքին ենք, որ **կրակ** փոսը ընդհանուրի սեփականությունը հանդիսացող կրակատան օջախն է՝ կրակով հանդերձ, որի վրա իրականում թշնամական հարձակման փորձեր են եղել։ Հանուն կրակի պայքարի մեջ կերպարանափոխություն դիմակավորման ինչ-որ եղանակ է ենթադրում, գուցե կրակ գողացողների քողարկման մի ձև։

Այս ձևերը ներկայացնող որոշ խաղերի մեջ ևս խաղակիցների սեփական փոսերից բացի ընդհանուրին պատկանող փոսիկը երբեմն կրում է սատանայի անունը։ Երբեմն խաղի վճռական գործողությունների որոշիչը այդ փոսերն են իրենց մեջ ընկած գնդերով։ Օրինակ՝ Ակնի ու Վանի «Սատանի փոս» (№ 324) և Կոտայքի «Սատանի օբա» (№ 326) խաղերում սատանայի փոսն ընկած գնդակի հարվածն ստացողը դերափոխ է լինում կամ մայր է դառնում։ Եվ այն դեպքերում, երբ բոլոր փոսերը **սատանի փոս** անունն են կրում, նախորդների փոփոխակներն են։ Այսպես. Արաբկիր արվարձանի «Փոսի թոփ» խաղի (№ 327) փոսատերերը **աֆյոր** անունն են կրում. սրանց մեջ ընկած գնդի հարվածն ստացողը սեռափոխվում, հավ է դառնում։ Հոկտեմբերյանի շրջանի «Խլպտե» խաղի մեջ խաղափոսերում գնդեր (քարե գնդեր, որ «ձու» են պատկերացվում) չլինելիս տերերն **աֆյոր** են կոչվում, իսկ քար ընկածների տերերը՝ հավ։

Այս խաղերի ակունքները նույնպես նախապատմական շրջանների հետ են կապված և, ըստ երևույթին, ամուսնության ծեսերի արարողությունների մի մասն են կազմել։ Մի այլ խաղ կա, որը «Կտեխս-կտեխս» անունն է կրում։ Այստեղ խաղացողների թվից մեկով պակաս փոսիկներ են պատրաստվում, որոնք հենց **կտեխս** են կոչվում։ Վիճակահանությամբ կտեխները բաժանվում են խաղակիցներին. տերերը կրունկները խրում են դրանց մեջ, տիրանում-պահպանում։ Խաղակիցներից մեկը, որ մնում է առանց կտեխի, կանգնում է խաղացողների եռևը և լարված հետևում, որ պահապաններից որևէ մեկը խաղով տարված ժամանակ, երբ կրունկը կտեխից դուրս հանի, ինքը կրունկը դնի նրա մեջ։ Այդպիսով առաջինը կտեխից գրկվում և կրկնում է նույնը։

Տարոնի «Կտեխս հոլ» խաղն ունի մի ընդհանուր փոս, որտեղ գնդակն էր ուղղվում և երկու կտեխներ, որոնց մեջ մեկական խաղացողների կրունկներն էին մտնում։ Անուշադրությունից կրունկը դուրս հանվելիս, երբ մյուս խաղակիցներից մեկը կոպալի ծայրը դնում էր **կտեխի** մեջը, հարձակվողները դերերը փոխում էին (№ 478)։

Ինչպես պարզ տեսնում ենք, այստեղ խաղը բացահայտ պայքար է հանուն կնոջ ձեռքբերման։ Սատանայի փոսերը նույնն են, բայց խաղի եղանակն է տարբեր։ Այսպես. **սատանի փոսերի** մեջ բոլորը գնդեր են գլորում կամ նետում։ Սա խորհրդանշում է հանուն կնոջ պայքարի ինչ-որ ձև, որտեղ մեկի փոսիկը գրավում է նա, ում գունդն է ընկել, ընդհակառակը, երբ որևէ փոսի մեջ գունդ չի ընկնում, նա տիրոջ սեփականությունն է մնում։

Այստեղ փոսիկը որպես կնոջ խորհրդանիշ զուգադիպում է գնդին, որը նույնպես կնոջ կամ աճող հատիկի խորհրդանիշն է։ Այս զուգադիպությունը ծիսական արարողության փոփոխության հետևանքն է։ Մայրական տոհմի շրջանում ա-

մուսին ընտրողն աղջիկն էր, ուստի գունդը նա հղում էր նրան, ում կամենում էր։ Հիշենք, օրինակ, խանդութի ձեռքով խնձորը Դավթին նվիրելը և բազմաթիվ հեքիաթներում խնձորները աղջիկների ձեռքով տղաների կողմը գլորելով նշանած ընտրելու ձևը։ Հավանորեն խաղի երկրորդ պարագան՝ փոսը որպես կնոջ խորհրդանիշ, երեվան է եկել հայրական տոհմի շրջանում։ Գունդն այդ դեպքում ավանդաբար մնում է իբրև ընտրության պարագա, բայց կինը ներկայացնող նոր խորհրդանիշի՝ փոսի հետ միասին։ Ահա այդ ծեսն էլ երբ չի գիտակցվում, խաղի է վերածվում։

Որ այս խաղերը ամուսնական սովորույթների հետ կապ են ունեցել, հաստատվում է նաև Լոռու «Կնկտոցի» (№ 334) խաղով։ Այստեղ գնդակը ում փոսը ընկնում է, նա դրանով հալածում է բոլորին և հարվածում նրանցից մեկին։ Այդպես պարբերաբար խփվողի փոսի մեջ այնքան քար են գցում, որքան գնդի հարված է ստանում։ Եթե «մեկի փոսում հավաքվում է 5 քար, որ կնիկ են անվանում, ապա այդ 5 կնիկ ունեցողի աչքերը շորով կապում են և գնդակը տանում ու որևէ տեղ պահում»։ Ապա 5 կնոջ ամուսնուն թեթևակի ծեծելով առաջարկում են գնդակը գտնել։ Այս բացահայտ բազմակնությո՞ւն է, որ կարող էր հեթանոս Հայաստանում արտապատկերվել խաղի մեջ, թե՞ ավելի հին երևույթ է, կապված ամուսնության այլ ձևերի հետ։ Համենայն դեպս «Կնկտոցի» խաղը նոր ժամանակներին չի պատկանում։

«Սատանի փոս» խաղատեսակների զգալի մասը, որ կատարվում էր ընկույզներով, կաղիններով, կորիզներով, ձվերով ու վեգերով, պահպանել են նշանառության փոսը, բայց կորցրել շատ մանրամասներ, որոնք տեսանք նախորդների մեջ։ Սրանց մեծ մասը հետագայում վեր է ածվել մոլախաղերի։ Զոր պտուղներով խաղերը, ինչպես և ձվախաղերը երևան էին գալիս առիթից առիթ։ Բերքահավաքի տոնածիսական օրերը, ժողովրդական և եկեղեցական որոշ տոները, մանավանդ հարսնտեսները այս խաղերի հիմնական շարժառիթներն էին։ Խաղերին մասնակցում էին երկու սեռի երեխաները, պատանիներն ու երիտասարդները։ Ձվախաղերով ու ընկուզախաղերով զբաղվում էին անգամ երիտասարդ հարսները, որոնց այլ պարագաներում հասարակությանն իրավունք էր վերապահվում պարսավել։ Ակնհայտ է, որ այս խաղերը որպես պտղաբերության ծեսերի մնացուկներ, առաջին հերթին հարսներին էին վերաբերում։ Յուրացվում էին նշանառության բազմազան ձևեր։ Ինչպես ընկույզն ու ձուն թեք հարթությունների վրա, նմանապես սարալանջերից երեխաներն ու պատանիները քարեր գլորելով նշան էին բռնում։ Երկու դեպքում էլ մարդը մանկությունից վարժվում էր քարով քարին, ձվով ձվին, ընկույզով ընկույզին են նշան բռնել ոչ միայն գեղագիտական հաճույքը բավարարելու, այլև հենց կռիվների ժամանակ թեքությունների վրա քարերով թշնամիներին անվրեպ հարվածելու համար։ Ստորոտներում գտնվող թշնամին չէր կարող սպասել, որ վերևից գլորվող քարը նրան ոչնչացներ։ Նա ճարպիկ շարժմամբ միայն կարող էր խուսափել վտանգից։ Իսկ այսպիսի պարագաներում մարդիկ սովորում էին աչքաչափով որոշել շարժվողի և գլորվող քարի հանդիպման կետը, որ տարիների ընթացքում էին յուրացնում։

Նշանառության խաղերում կարևոր էին վեգախաղերը, որոնք Հայաստանում հարատևեցին մինչև 1920-ական թվականների վերջերը։

Հնագույն սովորույթունների և ավանդույթների շնորհիվ տղաները փոքր հասակից մինչև 15—16 տարեկանը, իսկ երբեմն էլ մինչև ամուսնությունը, եռանդով զբաղվում էին վեգի մոլեխաղերով։ Գրեթե բոլոր տղաները վեգերի հավաքածու էին ունենում, որը փարչով պահում, երբեմն էլ թաղում էին, որ ուրիշները չյուրացնեին։

Վեգախաղերը մոլեխաղերի կամ բախտախաղերի թվին էին պատկանում։ Դրանք հայտնի էին բոլոր ժողովուրդներին, որ հաստատվում է անտիկ հաղորդումներով և առավելապես՝ պեղածո վեգերով։ Հայաստանում ևս պեղածո վեգեր շատ են հայտնաբերված։ Դրանք գտնվել են Սևանա լճի ավազանի՝ տոհմային շրջանի դամբարաններում, ինչպես նաև Դվինում ու միջնադարյան այլ քաղաքների պեղումներում (նկ. 38)։

Վեգը և սրա մոլեխաղը հայտնի են մեր էպոսում ու հեքիաթներում։

Վեգախաղերը տեղի էին ունենում գարնանը, աշնանը և հատկապես ձմռանը, հարթ գետնի, կտուրի և սառույցների վրա։

Վեգախաղերի մեջ, բացի վեգից, մտնում էին

նաև ընկույզը, կաղինը, ձուն ևն, որոնք խաղերին մոլեգնություն էին հաղորդում։ Երբեմն նույնիսկ թիրախը միայն այդ չոր մրգերն էին դառնում։

Վեգերը խաղերում երեք կարգի էին՝ թիրախ ծառայող, նշանառու և սորելու վեգեր։ Հասարակ թիրախ-վեգերը ճաճ, կռիկ, վեգ և այլ անուններ ունեին։ Նշանառության (հարվածող) վեգերը կոչվում էին աջ, դախկ, դաղկ-տաղկ, խոյի, աճա-ճա-ճաճաճա, ջիլլա, աբճճոտաճ, փիսատ[56] և այլն։ Իսկ սորելու վեգերը կոչվում էին լազ վեգ[57], զիլա ևն։ Վեգերի թիրախները մեծ մասամբ անանուն էին, իսկ երբ դրանք իրար վրա դրվում էին բուրգի ձևով, ամբրոց անունն էին ստանում[58]։

Վեգաշարք-թիրախները դասավորվում էին ուղիղ գծի վրա. այս շարքին զուգահեռ գծվում էր հարվածողների սահմանագիծը։ Երբեմն վեգաշարը կամ ամբրոցը դետեղվում էր շրջագծի մեջ։ Նշանառուների հերթականությունը որոշվում էր շրջագծի մեջ նետվող աջերով։

Երբեմն վեգաշարքի կենտրոնում տնկում էին վեգերից մեկը։ Անշուշտ քաղաքական ծաղրի նկատառումով դրան սուլթան անունն էին տալիս և առաջին հարվածն ուղղում նրան։ Այս սուլթան-թագավորը պահանջված չափով տեղահան անողը յուրացնում էր ամբողջ վեգաշարքը։ Իսկ հասարակ վեգերին հարվածելիս դրանք յուրացվում էին այն դեպքում, եթե բոլորն էլ առանձին-առանձին կամ միանգամից հարմար հարվածով ցրիվ էին տրվում ու տեղաշարժվում պահանջված չափով։

Դժվար չէ տեսնել, որ մենք այստեղ գործ ունենք ռազմական վարժախաղերի հետ, որտեղ սուլթանը շարքից հանվելու դեպքում «գերում» են բոլոր «զինվորներին»։

Սուլթան բառը ուշ շրջանի է պատկանում. այն գործածվում էր Բարձր Հայքի հայոց մեջ։

Դրան հավանորեն նախորդել է ամբրոց բառը, բերդ-ամրոց նշանակությամբ։ Եվ, միջնադարյան ռազմական սովորությունների համաձայն, միայն բերդը գրավելուց հետո էր, որ ամբողջ երկիրը գրավված էր համարվում։

Վեգախաղն էլ այստեղ արտացոլել է այդ սովորությունը։

Ռազմական փոփոխակի հաջողությունները հատուկ էին նաև վեգախաղերին. ստեղծված էին այնպիսի կանոններ, որոնց համաձայն «սպանված» սուլթանը, ավերված բերդը և «գերեվարված զինվորները» վերագտնում էին իրենց նախկին դերն ու պաշտոնը։

Վեգախաղերը մեծ մասամբ տեղի էին ունենում անհատական նախաձեռնության-նշանառության և յուրացման կարգով։ Բայց դրանց հատուկ էր նաև երկու հակադիր խմբերով մոլեխաղը, երբ օգուտն ու վնասը հավասարապես բաժանվում էին խմբի անդամների վրա։ Այս աննշան ու հասարակ թվացող նշանառության խաղերը հնագույն ռազմական կյանքում նշանակալից դեր ունեին։ Դրանք վաղվա անասնապահին ու զինվորին հարկավոր էին գազանների, գիշատիչների և թշնամիների դեմ պարսատիկային ու նետ-աղեղային անվրեպ պայքար մղելու համար։

Վեգի մեծարանքը և վեգախաղն, անկասկած, հնագույն ժամանակներում կապվում էր տոտեմիզմի հետ։ Անասնապահության առաջացման շրջանում դրա հետ կապված ծիսական արարողություններն ավելի բազմակողմանի էին դառնալու։ Ջենք տարակուսում, որ նշանառությունն ի բնե պետք է լիներ սրա տարրերից մեկը, որովհետև հենց տոտեմը կամ որսի կենդանին ձեռք բերելուց առաջ այդպիսի ծիսային վարժություններ էին կատարվելու նրա մասի հետ (մասի շուրջը)։ Ամենայն հավանականությամբ այդ նույնը պետք է ասել նաև անասունների դանդի ու ոլոքի մասին, որոնք ամենուրեք թիրախ էին դառնում։ Դրանով պետք է բացատրել, որ եզան կամ կովի վիզը, կոկորդ անունով, մինչև XX դ. առաջին կեսը Ախալքալաքում և այլուր մեծարանքի առարկա էր համարվում։ Այն երբեմն պահում էին առիքներում ու պատերի խոռոչներում, իսկ երբեմն էլ դրա փոշին դեղամիջոց էր համարվում։ Հնագույն մարդու հետ վեգեր թաղելն, ուրեմն, աղերսվում էր նախ տոտեմի հետ և ապա՝ վեգե-

---

56 Աջի կենտրոնը ծակում, մեջը արճիճ էին լցնում, որից ծագում է արճճոտան անունը։ Դվինում հայտնաբերված վեգերի ժողովածուի մեջ աջը երկաթով է ծանրացված (նկ. 38)։ Այդ ծանրությունը աջին թափ հաղորդելու համար էր։ (Պատրաստման եղանակը տե՛ս № 356 խաղում)։

57 Լազ վեգ բառը լազել-հղկել-տափակացնել իմաստն է արտահայտում։ Սորելու համար մեկ կամ երկու վեգ ալչու և թոխայի կողմերից քարերին քսելով հղկում էին, որով վեգերը հեշտությամբ ու ավելի հաճախակի թռխա էին կանգնում։

58 Ամբրոց է կոչվում աթարի ու տարթի բուրգը, որից էլ երևի վերցված է վեգերի թիրախի անունը։

րով ճակատագրական գործողություններ կատարող կախարդի պաշտոնի հետ։ Բացառված չէ, որ վեգեր թաղեին դրա խաղերով կամ անասնանպատակությամբ զբաղվող երիտասարդների հետ։

Վեգը մինչև մեր դարի առաջին քառորդը բախտը որոշող առարկա էր համարվում. նրանով գուշակում էին հաջողությունն ու անհաջողությունը։ Սոցիալական բնույթի որոշ խաղերի մեջ («Բեկ ու գզիր» են) վեգի «կատեգորիաներով» վիճակահանություն կատարող երեխաները սոցիալական խմբերի էին բաժանվում. նրանք դառնում էին տեր ու ծառա, դատավոր, գող ու գզիր և ըստ այդմ խաղային գործողություններ էին ծավալում։ Այդ նույն ձևով աջերը շրջանների մեջ նետելով՝ նշանառուները որոշում էին իրենց հերթերը։ Իսկ որոշ վայրերում պահպանված էին վեգի աղոթք-երգեր, որոնցից մեկն ասում է. «Ո՛, ա՛յ տղաք, եկեք ի վեգ, գլտոր մըլտոր բաղդ նայեցեք, պե՞ղ եք, մո՞նթ եք, խապար տվեք» (№ 378—3)։

Նշանառության խաղերը, ինչպես տեսնում ենք, մեծ մասամբ գալիս են նախնադարից, երբ սնունդ հայթայթելու համար որսի դուրս գալու, գազաններից ու վայրի անասուններից պաշտպանվելու, պատերազմներում պիտանի լինելու համար հնագույն մարդուն օդի ու ջրի չափ անհրաժեշտ էին այդ վարժությունները։ Վերջիններս ծագել են ինչպես կյանքի ռեալ հանգամանքներից, նույնպես էլ կյանքի բարելավմանը նպաստող գաղափարներից ու ծեսերից։ Մի դեպքում հիմքը աշխատանքն էր, մյուս դեպքում՝ գաղափարները։ Ընդ որում աշխատանքն արտացոլվել է խաղերի մեջ անմիջականորեն, իբրև վերարտադրություն, իսկ գաղափարակիր խաղերը մեծ մասամբ խորհրդանշաններով են արտահայտվել։

Մականախաղեր.— Մականախաղերը փաստորեն գնդակախաղեր են։ Դրանք, սակայն, ձեռքի գնդակախաղերից անջատել ենք գիտակցաբար, որովհետև այստեղ գունդը շարժման մեջ է դրվում մականով և խաղին առավելապես հաղորդում է ռազմի բնույթ։ Իրենց կատարման ձևերով ու ընթացքով մականախաղերը սերտորեն աղերսվում են նշանառության խաղերին, ավելի ստույգ՝ վերջիններիս զարգացումն են։ Շատ կանոններ (օրենքներ) նշանառության խաղերից անցել են մականախաղերի մեջ։ Խաղ-աշխատանքի բնույթը փոխվել է մահակի շնորհիվ։

Մականախաղերը զուտ ռազմատակտիկական խաղեր են։ Դրանք կատարվում են թե՛ հետիոտն և թե՛ ձիավորված։ Ռազմի բնույթի պատճառով մականախաղերին մասնակցում էին միայն արական սեռի ներկայացուցիչները։ Փոքրերը խաղում էին միայն հետիոտն մականախաղերի մատչելի ձևերը, իսկ մեծերը՝ ավելի բարդ և ձիերով իրացվող խաղերը։ Ձիավորների մականախաղերը կրկնում էին հետիոտների այն խաղաձևերը, որոնց հակադիր խմբերի նպատակն էր գնդակը կեռաձայր մականով անցկացնել հակառակորդի սահմանից այն կողմը։

Մականախաղերի առարկաները երկուսն էին՝ գնդակը և մականը։ Հետիոտն խաղալու դեպքում նպատակակետերը հիմնականում փոսիկներն էին, որոնց մեջ պետք է գցվեին կամ դուրս բերվեին խաղագնդերը։ Վերջինս պատրաստվում էր քարից, փայտից, բրդից (թաղիքի նման լմվածք) և բրդալից թելահյուսվածքից։ Բայց դա հարաբերական էր. գնդի փոխարեն հաճախ գործ էին ածվում խոշոր եղջերավոր անասունների վեգերը կամ դրա նման ոսկրակտորները, անմշակ գնդաձև քարերը և այլ առարկաներ։ «Սասնա ծռեր» վեպի մեջ հիշյալ գնդերից բացի հիշատակված են գուրզը (մետաղե մասը), երկաթը, արույրը, արճճալից հոլը և օսկի հոլը։ Հեքիաթներում հիշատակվում են կես փթանոց փայտե ճախարակաքաշ հոլեր։

Հարվածող մահակը մեծ մասամբ վերջանում էր կես գնդով։ Ծայրի կեռը գնդակ խլելու և գունդը՝ խաղագնդակին թափ հաղորդելու համար էր։ Գունդը ծանրացնելու և դիմացկուն դարձնելու նպատակով գնդակածայրին երբեմն գամեր էին խփում։ Վեպի մեջ հիշատակված են նաև գուրզը, օսկե կոպայր և հոլը (երևի հոլ-գնդակը եղել է նաև հարվածող միջոց)։ Որոշ խաղերի մեջ մականի դերը զուգընթաց կատարում էր ոտքը, որով գունդը կարելի էր տեղաշարժ անել կամ տաբուլացնել։

Այն փոսիկները, որոնց մեջ պետք էր գցել գնդերը, կոչվում էին տուն, հոլտուն, կուրտուն, կրեճ, չոլ և մեծ մասամբ՝ փոս-փոս։ Վեպը պահպանել է հոլտուն, հոլա՛տեղ, ձոր և փոս-փուս ձևերը։

Մականային ռազմախաղերը զարգացնում էին

ուշիմությունն ու շարժունակությունը, նպատակն իրագործելու ընդունակությունները, սովորեցնում՝ խաղն իրադրության մեջ տարբերել յուրայինն ու հակառակորդը։ Այս խաղերն իրենց մեջ ունեին ժամանակակից հոկեյի, ֆուտբոլի և ձեռնագնդակախաղերի տարրերը, որոնցով երիտասարդությունը բազմակողմանի ֆիզիկական դաստիարակություն էր ստանում։

Մականախաղերն ունեին երեք կարգ. ամենատարածվածը, որը հիմնականում մանկապատանեկան դասերին էր զբաղեցնում, այն էր, երբ հանուն գնդի պայքարը ծավալվում էր անհատական կարգով։ Յուրաքանչյուր խաղացող ձգտում էր իր մականով գունդը տեղ հասցնել՝ գցել հոլտունը և հաղթել։ Երկրորդ կարգի խաղերում խաղի մեկ կամ երկու մասնակիցները պաշտպաններ էին դառնում, իսկ ամբողջ խումբը ձգտում էր գունդը գցել հոլտունը կամ, ընդհակառակը՝ հանել հոլտունից։ Դժվար չէ տեսնել, որ մեկ կամ երկու պաշտպանները կատարում են դինվորական ուղեկալ-հերթապահի դերը, իսկ հարձակվող խումբը ինքնին հակառակորդի զորագունդն է խորհրդանշում։

Անշուշտ, խաղն իր ծագմամբ ուրիշ հիմքեր էլ ունի, բայց բոլոր դեպքերում գերակշռողը ժողովրդի ինքնապաշտպանության գաղափարն է։

Երրորդ կարգը՝ ակնհայտ դինվորական բնույթ ունի. խաղակիցները բաժանվելով երկու խմբի, ձգտում են գունդը կամ ոսկորն անցկացնել հակառակորդի սահմանը։ Իսկ դա ըստ էության խորհրդանշում է հակառակորդի տարածքի գրավումը կամ ընդհակառակը՝ հակառակորդին վտարելը։

Այս խաղը հատուկ էր ինչպես հետիոտն, այնպես էլ՝ ձիերով խաղացողներին։

Ինչպես երևում է «Սասնա ծռեր» վեպից ու պատմագրության հաղորդումներից, մականախաղերը միջնադարում շատ հարգի են եղել։ Հավասարապես կիրառվել են թե՛ հետիոտն և թե՛ ձիով մականախաղերը։

XIX դ. առանձնապես պահպանված էին հետիոտն մականախաղերը, որոնցով զբաղվում էին մանուկներն ու պատանիները։ Իսկ ձիերով մականախաղերը ուշ միջնադարի և մանավանդ XIX դ. քաղաքական ծանր պայմանների հետևանքով գրեթե ամբողջապես ասպարեզից հանված ու արգելված էին։ Կարելի է ասել, որ նույնիսկ վաղ միջնադարում, երբ Հայաստանը տառապում էր պարսկաբյուզանդական լծի տակ, ձիագնդակախաղերն արգելված էին, որովհետև այստեղ գունդը իշխանության խորհրդանիշն էր։

Ղազար Փարպեցին հաղորդում է, թե ոսկե գունդը թագավորության (իշխանության) նշանն է[59]։

Մ. Խորենացին հաղորդում է, թե երբ մի անգամ Հայաստանի թագավոր նշանակված պարսիկ Շապուհի հետ մականախաղ խաղալիս Շավասպ Արծրունին նրանից խլում է խաղագնդակը, թագավորը հանդիմանելով ասում է. «Ինքդ քեզ ճանաչիր»։ Շավասպը, իհարկե, քաջություն է ունենում պատասխանելու. «Այո՛, ճանաչում եմ, որ ես էլ արքայորդի եմ, Սանասարի սերունդ», բայց փաստը մնում է փաստ, որ նա թագավորի հանդեպ գնդակախաղի մեջ հաղթանակ տանելու իրավունք չուներ (№ 488)։

Աս. Մնացականյանը վկայակոչելով Խորենացու այս տվյալը, գրում է, թե ծիսական գնդակախաղն այս պարագայում «այլևս ազատ մրցություն լինել չէր կարող, որովհետև գնդի վրա իշխելու հարցը արդեն որոշված էր պարսկական սրի միջոցով։ Բայց պիտի, ըստ հին սովորության, այդպիսի խաղեր լինեին և ավարտվեին Շապուհի ձեվական հաղթանակով»[60]։

Ահա այս էր պատճառը, որ միջնադարում ձիագնդակով և առհասարակ ձիարշավներով զբաղվելու մասին տեղեկությունները շատ սակավ են։

Միջնադարյան մականախաղերի, ինչպես նաև բոլոր ռազմախաղերի մասին ակնարկներ են պահպանվել Ֆարման Մանկանը նվիրված պոեմում։ Այստեղ հիշատակված են «ձիով ճեմելը», նետ-աղեղով խաղերը, ոտքով, ձեռքով ու ձիով գնդակ խաղալը, որսորդությանը մասնակցելը, մենամարտելը, ասպարախաղերը են, որոնցով զբաղվել է Ֆարման Մանուկը[61]։

---

59 Ղազարայ Փարպեցւոյ Պատմութիւն Հայոց և թուղթ առ Վահան Մամիկոնեան, Տփղիս, 1904, էջ 34։

60 Աս. Շ. Մնացականյան, Հայկական զարդարվեստ, էջ 504։

61 Ամբողջական պատկերը տե՛ս «Պատմութիւն Ֆարման Մանկանն»։

Վերը ներկայացված գնդակախաղերի ու նշանառության վարժությունների նման մականախաղերը ևս հին ծագում ունեն և հիմնականում պահպանել են տոհմային կենցաղի երևույթները։

Ձիախաղեր.— Հայաստանը ձին ընտելացնող և ձիաբուծությամբ զբաղվող հնագույն երկրներից մեկն է եղել։ Այդ զբաղմունքը հաստատված է պեղածո նյութերի միջոցով։ Ուստի բնական է, որ Հայաստանը հնագույն ժամանակներից ի վեր ձին պիտի օգտագործեր մի շարք նպատակներով։ Ընտանիքում, բանակում, հեթանոսական ու քրիստոնեական հոգևոր կենտրոններում, առևտրական կազմակերպությունների և անասնապահների մոտ ձին ամենից առաջ ծառայել է իբրև հեծնելու և բեռներ փոխադրելու գրաստ։ Գրավոր հաղորդումներից երևում է, որ հայ արքունիքում և նախարարություններում հեծնելու համար պահում էին արագավազ ընտիր նժույգներ, որոնք զարդարվում էին ասեղնագործած նուրբ թամբաշորերով, զարդերով ու սանձերով։ Այսպիսի ձիերը իշխանական տներն օգտագործում էին քաղաքացիական ու ռազմական տոնահանդեսներում, ձիավարժությունների, մրցությունների և ճանապարհորդությունների ժամանակ։ Ձիապանները հատուկ ուշադրություն էին դարձնում այդպիսի նժույգների խնամքին ու վարժություններին։

Ձիախաղերը նկարագրող բանահյուսությունը, երբեմն չափազանցության հասցնելով, մեծ սիրով է խոսում ընտիր նժույգների մասին։ Դա, անկասկած, ձիու և ձիասպորտի նկատմամբ հայ ժողովրդի ունեցած մեծ սիրո արտահայտությունն էր։

Դատելով ազգագրական տվյալներից, պետք է ասել, որ ձիախաղերի ավանդները ժողովուրդը պահպանում էր մինչև XX դ. սկզբները։ Սակայն այստեղ ևս հայ մարդիկները հանդիպում էին պարսկաթուրքական բռնություններին։ Հայ երիտասարդը, իշխանավորը և այլ խավերի մարդիկ իրավունք չունեին պահել այնպիսի ձիեր, որոնք սովեր կգցեին տիրակալների նժույգների վրա։ Ինչպես հաղորդում է Տևկանցը (1880 թ.), Վասպուրականում «Հայոց ներելի չէր ձիով... ձիարշավի մեջ մտնալ, զի այն ժամանակի բարբարոսություն կատարյալ էր։ Հայք ոչ լավ ձի կարող էին պահել և ոչ համարձակ հեծանել, այլ միայն առաջնորդն և մի քանի իշխանք քաղաք երթալո գալո համար հրամանով փաշային հեծանեին ի հասարակ ձի և հասանել առաջի Թարվիզու դուռն, իջանեին ի ձիուն և հետի երթային ի առաջնորդական կամ ի շուկայն։ Զի եթե Թամուր-Օղլիք կամ այլ օճախլիք հայոց մոտ լավ ձի և զենք տեսնային, բռնի առնեին և եթե տեսնային տաճիկք հայք ձիով Թարվիզու դռնեն մուտ պիտի գործեն, իսկույն անարգաբար ձիեն վար առնեին։ Իսկ միջին դռնեն անհնար էր առաջնորդի կամ իշխանի ձիով երթալ ու գալ, այլ ոտքով պիտի ելնեին և մտանեին այդ դռնեն»[62] (№ 496)։ Նույն հեղինակը պատմում է, որ եթե հայը Թուրք երիտասարդների մականախաղերին մասնակցելիս 1870-ական թթ. փորձեր առաջնություն շահելու համար մականահար անել և շարքից հանել իսլամի որդիներին, մահապարտ էր համարվում[63]։

Այսքան դաժան պայմաններ ստեղծվելու պատճառն այն էր, որ մականախաղը զուտ ռազմախաղ լինելով հայը նրանով վարժվելու և ռազմիկ դառնալու իրավունքներ չուներ, որովհետև նա պարսկաթուրքական տիրապետությունների պայմաններում պոտենցիալ թշնամի էր համարվում։

Հայ երիտասարդությունը, այնուամենայնիվ, ձիախաղերի համար օտար տիրապետողների աչքից հեռու տեղերում հատուկ նժույգներ էր պահում և օգտագործում։ Մարզումներին հատկացված նժույգները XIX դ. առաջին կեսից սկսած մինչև դարավերջը ավելի էին շատացել Արևելահայաստանում պարսկական լուծը թոթափելու հետևանքով։ Այդ նպատակով պահվող նժույգները սովորական երթ ու դարձի համար քիչ էին օգտագործվում։ Լավ խնամքից բացի, հավատալիքների համաձայն նժույգը, չար աչքերից պաշտպանելու համար, հմայիլների մի ամբողջ շարք էր ունենում, որը միաժամանակ զարդարում էր նրան։

Բոլոր ձիախաղերի հիմնական մասնակիցն ու զարգացնողը երիտասարդությունն էր։ Բայց փոքր չէր նաև 18—20 տարեկան պատանիների և նույնիսկ քառասունն անց տղամարդկանց թիվը։

Ձիախաղերի մասնակիցները գրեթե բացառապես հարուստ խավի ներկայացուցիչներն էին լինում։ Բացառություններ լինում էին, երբ շնորհալի, բայց ձիազուրկ պատանիներին ու երիտա-

---

62 Մատենադարանի ձեռ. № 4184, էջ 123ա—123բ։

63 Գանձակեցի Հովհաննես վարդապետի արկածը տե՛ս № 496։

սարդներին խաղընկերները ձի էին տրամադրում և մասնակից դարձնում ընդհանուր խաղերին։ Այդ կարևոր էր մանավանդ միջգյուղային կամ գավառային մրցութիւնների ժամանակ, որ տեղի էին ունենում դերիներին ևն։

Ձիախաղերին երբեմն մասնակցում էին նաև հոգևոր դասի ներկայացուցիչները, որոնք հմտացած էին լինում ձիախաղերի մեջ։ Այսպիսիները հնուց ի վեր բանադրանքի էին արժանանում (Ներսես Շնորհալու հանդիմանութիւնը տե՛ս № 506)։

XIX դ. հոգևորականներից ոմանք ձիավարժութիւնամբ զբաղվում էին առանց ենթարկվելու իրենց պետերին։ Այս երևույթը նկատելի էր մասնավորապես Արևմտյան Հայաստանում և Կիլիկիայում այն պատճառով, որ հոգևոր կենտրոնները հաճախակի ավարառութեան ենթարկվելու պատճառով ինքնապաշտպանութեան կարիք էր զգացվում։ Իսկ ձիավարժները միաժամանակ մականախաղերի մեջ էին վարժվում։ Ձիապահ վանքերում լինում էին անհնազանդներ, որոնք մասնակցելով աշխարհիկ երիտասարդութեան զինախաղերին, վարժվում և երբեմն հանդես էին գալիս իբրև համբավավոր մենամարտիկներ։ Թուրքերն այդպիսիներին դելի ճեշիշ-խենք ճաճանա էին անվանում։

Ձիերով մականախաղերի մասնակիցների թիվը առնվազն 10—10-ից հասնում էր մինչև 200—200-ի։ Ըստ բանահյուսութեան տվյալների, այս թիվը հասնում էր 500—500-ի։ Կարծում ենք, որ այսպիսի մեծ կազմով կողմերի մրցումները Հայաստանի բանակների մարտունակութեան քննութիւն էին ներկայացնում։ Ուստի պատահական չէր, որ հայ թագավորները բանահյուսութեան վկայութեամբ ձիախաղերի հանդեսների դատավորներն էին հանդիսանում։ Հենց այդ հանգամանքը ցույց է տալիս, թե հայ ժողովուրդը որքան համառորեն պահպանել է թե՛ իր և թե՛ ազգային պետական սովորութիւնները՝ կապված մականախաղերի և սպորտի մյուս ձևերի հետ, երբ դեռևս սեփական պետութիւն գոյութիւն չուներ։

Մականախաղը գյուղերում ընդհատվում էր միայն դաշտային աշխատանքների շրջանում։ Բայց մանուկները ու դեռահաս պատանիները այդ շրջանում էլ չէին դադարում մականախաղեր խաղալ։

Ձիախաղերը տեղի էին ունենում վարդանանց տոնին, ժողովրդական ու եկեղեցական կարևոր տոներին, ուխտավայրերում, ամուսնութեան և հարսանիքի ծիսակատարութիւնների օրերին ևն։

Մականախաղերի ու ձիարշավների օրերին երիտասարդութիւնն օգտագործում էր տոնական հագուստը և անպայման կապում շալե գոտին, որը կորիճութեան ավանդական նշանն էր համարվում։ Իսկ ըստ հեքիաթների, մականախաղի կըտրիճը գորշ և սպիտակ ձի նստելիս պետք է հագներ սպիտակ հագուստ և վերցներ սպիտակ գուրզ, կարմիր ձի նստելիս՝ կարմիր հագուստ ու կարմիր գուրզ, սև ձի նստելիս՝ սև հագուստ ու սև գուրզ (№ 493)։ Այս երևույթը վկայված է նաև էպոսում։

Բանահյուսութիւնն, անշուշտ, արտացոլել է կյանքում գոյութիւն ունեցող նման սովորութիւններ, որոնք գուցե բանակի ավանդներն են եղել։ Բացառված չէ, սակայն, որ հագուստի գույները կապված լինեին նաև կրոնական պատկերացումների հետ։

Ձիով մականախաղի միակ զենքը ուղիղ ու կարճ մահակն էր։ Երբեմն զուգակցում էր նաև ճոկանը, որն իր կեռով ընկած մականը գետնից վերցնելուն էր ծառայում։ Սրա կեռին երբեմն փոխարինում էր օղակը։ Ճոկանն անցյալում ամենուրեք հայտնի է եղել թե՛ խաղերի և թե՛ պատերազմների ժամանակ։ Պատերազմական գործողութիւնների ժամանակ ճոկանով հակառակորդին ձիուց վայր էին գցում։

Հովհ. Մալխասյանը հավաստում է, թե Ախալքալաքում մական խաղացողը, 1890-ական թթ., ունենում էր երկու մական և մի ճոկան (№ 496)։

Խաղերը տեղի էին ունենում հարթ ու կանաչապատ ընդարձակ տարածութիւնների վրա։ Սրանց զգալի մասը ավանդներով հասել էր մինչև XX դ. սկիզբը։ Խաղահրապարակներն առավելապես մշտական էին ուխտավայրերում։ Այդ տեղերը հավանորեն նախապես ընտրվում էին դեռևս հեթանոս հայերի կողմից, որովհետև սրբավայրն ու սուրբը ենթադրում էին ամենից առաջ մասսայականութիւն և անհամար խաղեր ու պարեր։

Մականախաղերը որոշ տեղեր սկսվում էին զուռնա-նաղարայի նվագի ադդարարութեամբ։ Կային հատուկ եղանակներ, որոնք կատարվում էին ամբողջ ժամանակ՝ խաղերին տակտ ու ոգևորութիւն հաղորդելու նպատակով։

Մականախաղի կանոնները պարզ, բայց դըժվար կիրառելի և դժվար տանելի էին։ Հակառակորդ ջոկատները ձիերով կանգնում էին նշանակված սահմանագլուխներին։ Խաղի սկիզբն ազդարարող հրահանգը կամ նվագի եղանակը լսելուն պես, խմբերից մեկի մի խաղակիցն արշավում էր դեպի մյուսը և, պայմանի կամ սովորության համաձայն, մոտենալիս մականը առաջ կարկառելով նշան տալուց և կամ մականը հակառակորդներից մեկի վրա արձակելուց անմիջապես հետո արագ նահանջում էր։ Մականի հարվածն ընդունող խըմբից մեկն անմիջապես հետապնդում էր նահանջողին՝ մականահարելու համար։ Երբ սա էլ մերձենում էր առաջին խմբին, վերջինից մեկ ուրիշն էր հետապնդում սրան ու մականահարում։ Ջիախաղն այս ձևով ընթանալով, խմբերից մեկն ու մեկը հակառակորդի խաղացողներին ու ձիերին ուժասպառ անելով, հաղթանակի էր հասնում։ Պատահում էր, որ խմբերից մեկի անդամները շարքից դուրս գալուց հետո մնում էր միայն մի հոգի. սա շարունակում էր պայքարել մինչև իր պարտությունը, իսկ երբեմն էլ նա հմուտ խաղով պարտության էր մատնում հակառակորդներին և դառնում օրվա հերոսը։

Մականախաղի ժամանակ մականն արձակում էին այնպիսի հորիզոնական դիրքով, որ ծայրով հարված հասցներ հակառակորդին։ Իսկ դա պատերազմում թշնամուն նիզակահար անելու ձևն էր։ Խաղի կանոնները պահանջում էին, որ հարվածը դիմացինի գլխամասերին վնաս չհասցներ. բայց երբեմն այդ կանոնը կիրառելն անկարելի էր դառնում։ Ընդհանուր կանոնների համաձայն, խաղային հրապարակում եկած փորձանքների համար հարվածողները պատասխանատու չէին։ Բայց միջնադարյան քաղաքացիական օրենքներից երևում է, որ դատարանը դժբախտ դեպքերի համար խաղակից հանցավորին պատժի էր ենթարկում (Հավելված II)։

Մականախաղերում սովորություն կար՝ փոկով կապել մեծ ուժի տեր խաղակցի աջ թևը, որով կանխվում էր մահացու հարվածը։

Մականախաղերին սիրով ու ցնծությամբ հանդիսատես էին դառնում երկու սեռի բոլոր հասակները։ Հասարակությունը, ինչպես այժմ ֆուտբոլային խաղերի ժամանակ, ուրախության, ցնծության, գովքի ու դժգոհության խոսքեր էր ուղղում մարտիկների հասցեին. նա ծափահարում էր, ծիծաղում, ուրախանում և տխրում, աղմկում։

Միջնադարում նշանավոր հանդեսներին ներկա էին լինում երկրի թագավորներն ու իշխանները՝ ընտանիքներով հանդերձ։ Պետական գործիչները խաղերի փաստական կազմակերպիչները, հրահրողները և դատավորներն էին լինում։ Գյուղական վայրերում դատավորի դերը մեծ մասամբ փորձառու ավագներն էին կատարում և երբեմն էլ գյուղավագները, որոնց դիտողություններն ընդունվում էին իբրև վճիռներ։

Սակայն կարիճների համար կար մի անողոք ու լուռ դատավոր, որից երկյուղում էին բոլորը։ Դա իգական սեռի հասարակությունն էր։ Բոլոր պարագաներում երիտասարդները բարոյական տեսակետից աղջիկների ու կանանց հանդեպ ինչ-որ պատասխանատվության զգացմունք ունեին։ Ամուսնական ընտրության հարցում կարիճների տարած հաղթանակները կարևոր նշանակություն ունեին։ Պարտվածները այս բարոյական ճնշման հետևանքները կրում էին երկար ժամանակ։ Այնպես, որ իգական սեռը կարևոր դեր էր խաղում ինչպես այլ խաղերի, այնպես էլ ձիով մականախաղերի մասնակիցների ռազմական ու բարոյական դաստիարակության գործում։ Իգական սեռի դրական գնահատականը կարիճների ամենափայփայելի պարգևն էր։ Ուստի պատահական չէր, որ հաղթողի գլխարկը զարդարում էին աղջիկների հյուսած վարդապսակները։ Պսակներից բացի ժողովուրդն ու իշխանությունները կարիճներին նյութական պարգևների էին արժանացնում։ Այդ պարգևները հնում տրվում էին թագավորների, նախարարների, իշխանների ու գյուղական ավագների կողմից։ Իսկ բուն ժողովրդի մեջ մրցանակաբաշխությունը պետականազրկության պայմաններում այլևայլ ձևեր էր ընդունել։ Թաղը թաղի, գյուղը գյուղի և մեծ ուխտավայրերում նահանգը նահանգի հետ մրցելիս հաղթողի կողմնակիցները տեղն ու տեղը նրան պարգևատրում էին սառը զենքերով, հագուստներով, անասուններ խոստանալով ևն։ Կային կողմերի գրազի ձևեր, երբ այդ նույն պարգևներից բացի, գրազ եկողը նույնիսկ իր ձին էր պարգևում օրվա հերոսին։ Բարոյական ու նյութական պարգևները այն ազդակներն էին, որոնց շնորհիվ ժողովուրդը դարերի միջով անցկացնում էր ֆիզիկական դաս-

տիարակության առաջավոր ձևերի գեղեցիկ ավանդները։

Ձիարշավները նույնպես տարածված խաղեր էին, որոնցով զբաղվում էին թե՛ պատանիները և թե՛ նրանցից մեծերը։ Երիտասարդությունը ձիարշավների դուրս գալիս սովորում էր հաղթահարել բնական արգելքները։ Այս խաղերն առանձին նշանակություն ունեին անտառներով, թփաստաններով, սրընթաց գետերով, ձորերով ու քարքարուտներով հարուստ Սասունում, Սյունիքում, Արցախում ևն։

Ձիարշավներն ընդունված էին առանձնապես հարսնառներին, երբ սովորության համաձայն հարսին այլ գյուղից բերելու ժամանակ առաջին լրաբերին պարգևատրում էին արժեքավոր շորեղենով կամ գոտիով, որը նախապես կապում էին ձիու պարանոցին։

Հարմար տեղերում ձիարշավի ժամանակ կըտրիճները ձիու վրա ուշագրավ վարժություններ էին կատարում։ Դրանցից էին՝ ընթացքի ժամանակ արագ-արագ իջնելն ու բարձրանալը, գլխիվայր կախվելով գետնից իրեր վերցնելը, կամ ձեռքի իրը առաջ նետելն ու բարձրացնելը, թամբի վրա կանգնելը, ձիու պարանոցի և փորի տակով պըտույտ գործելն ու բարձրանալը և փորի տակին բավական ժամանակ հորիզոնական դիրք ընդունելով ընթանալն ու թամբին բարձրանալը։ Այս վարժությունները կարևոր էին մականախաղերի համար. վնասաբեր մականի հարվածից խուսափելու համար ձիախաղացը դիմում էր այդ հնարքներից որևէ մեկին։ Դրանք ինքնապաշտպանության ձևեր էին նաև պատերազմների ժամանակ։

Ձիախաղերից էին կառարշավները, որոնք շատ հին խաղեր էին։ Դրանք կազմակերպվել են հատկապես կրկեսային խաղերի ժամանակ։

Այս խաղերը վաղ միջնադարից հետո չեն հիշատակված։ Միայն մանկական խաղերն էին, որ պահել էին դրանց ձևերն իրենց երևակայական կառքերով ու 2—4 ձիերով։

Ռազմական այլ խաղեր.— Կան ռազմական մի շարք մանր խաղեր, ինչպիսիք են՝ պահմտուկախաղերի որոշ տեսակները, որ **եղնիկախաղեր** են կոչվում, թաղակռիվները ևն։

Եղնիկախաղերը պահմտուկների տեսակներին են պատկանում, բայց զգալիորեն տարբերվում են դրանցից նրանով, որ իրենց մեջ ունեն պատերազմական գործողությունների խուլ հետքեր։ Խաղացողները գարնան ու աշնան երեկոյան մթընշաղներին կամ լուսնյակ գիշերների առաջին պահերին բաժանվում էին երկու հավասար խմբերի։ Վիճակահանությամբ մի խումբը թաքնվում էր, իսկ մյուսը աչքերը փակել-բացելուց հետո՝ փնտրում (հետամտում)։ Թաքնվողների առաջնորդը (մեր, մեռուն, մայր, բեկ) մնում էր փընտրողների խմբում և շարժվում նրանց հետ։ Նա նախապես տեղյակ էր լինում, թե իր զինվորները գյուղի ո՛ր թաղի, ո՛ր փողոցումն էին թաքնվելու։ Եվ դատելով հակառակորդի շարժումներից, վտանգը ներկայանալիս բարձր ձայնով մատնում էր թշնամու գտնված տեղը և շարժման ուղղությունը։ Այդ դեպքում թաքնվածները պատշաճ դիրքավորումով հաղթանակ էին շահում կամ անհաջողության դեպքում՝ պարտություն կրում (№ 530—532)։ Թաքնվողների մեռուը, որ խաղի դրսևորման համար ակամայից կցորդվում էր հակառակորդի խմբին, պարզապես կուվող բանակներից մեկի հետախույզն էր ներկայացնում։

Պատերազմական գործողությունների կատարյալ ձևեր ունեին թաղակռիվները, որոնք իբրև մասնայական բնույթ ունեցող խաղեր, հարատևեցին մինչև XIX դ. վերջերը։ Տեղ-տեղ դրանք պահպանվել էին մինչև XX դ. սկզբները։ Կատակի ու զվարճանքի անվան տակ թաղակռիվները տարեկան մի քանի անգամ, տարբեր առիթներով կըրկրկնվող պատերազմներ էին՝ հասարակ զենքերով։

Անցյալում թաղակռիվները տեղի էին ունենում գլխավորապես ձմռանը, առանձնապես բարեկենդանյան երկարատև տոնական օրերին։ Բարեկենդանից առաջ և հետո ձնագնդի խաղերը հաճախ և ամենուրեք խմբավորված բնույթ էին ընդունում։ Տևականը հավաստում է, թե վանում թաղակռիվները մեծ մասամբ գարնան-ամառային խաղեր էին։

Պետք է կարծել, որ սրանք պատանեկության ու երիտասարդության շրջաններում ընդմիջվել կարող էին միայն դաշտային աշխատանքների շրջանում և աննպաստ եղանակներին։

Թաղակռիվների շարժառիթները տարբեր էին։ 15—16 տարեկան երեխաների թաղակռիվների շարժառիթները ներկայանում էին բազմաթիվ անգամ։ Տարբեր մրցություններ (մենամարտեր ևն) ժամանակ առաջացող տարերային խմբավո-

րումները երբեմն այդ իսկ մրցութիյունների շարունակութիյուն էին կազմում նախ կռիւամարտերի, ապա՝ թաղակռիվների վերածվելով։

Ազգակցական խաղակռիվներին երբեմն մասնակցում էին խնամիացած ազգերի երեխաները։

Միևնույն թաղում ապրող հարևանների միջև թաղակռիվները համեմատաբար թեթև էին անցնում։ Բայց թաղը թաղի դեմ դուրս գալիս խաղակռվին տալիս էր լուրջ բնույթ։ Այս խաղերը մինչև XIX դ. երկրորդ կեսը պահպանում էին հնագույն ավանդներ. խաղի այս բնույթը երկար ժամանակ հարատևեց Թիֆլիսում, որը առաջինը նկարագրել է Մորից Ֆոն Կոցեբուն՝ 1800-ական թթ. (№ 537)։ 1860—62 թթ. այն նկարագրել են Գ. Սրվանձտյանցը (№ 535) և Գ. Տ. Ա-ն [Գեորգ Տեր-Աղեքսանդրյան]։

Կոցեբուն գրում է, թե հազարավոր մարդիկ ընդգրկող թիֆլիսյան այս խաղերին շատ անգամ մասնակցում էին նաև քաղաքի ազնվականները։ Եվ որովհետև խաղը վտանգավոր էր, գեներալ Երմոլովը հատուկ կարգադրությամբ արգելեց այն (№ 537)։

Կազմակերպված թաղակռիվներին երբեմն ուղեկցում էին նվագախմբերը և պարգևաբաշխման սովորությունները, որոնք, սակայն, XIX դ. խաղերի մեծամասնության համար բնորոշ չէին։

Թաղակռիվները հին խաղերի վերապրուկներ էին։ Դրանց պորտը հասնում է մինչև տոհմային կարգերը։ Կասկածից վեր է, որ ազգակցական հարաբերություններում պահպանված հակամարտությունների մեջ վերապրում էին տոհմական սովորությունները։ Մասնավոր սեփականության պայմաններում բարդված նոր սոցիալական հարաբերությունները բնավ չեն խանգարում, որպեսզի մենք ազգակցական խաղակռիվների մեջ տեսնենք տոհմերի, ինչպես նաև հետագա համայնքների, համատեղ գործողությունները։

Ոչ ազգակցական, բայց երկու բանակների բաժանված խմբերի խաղակռիվները իրենց մեջ պահպանում էին թե՛ ֆրատրիալ խաղ-կատակը, թե՛ միջտոհմային հակասությունները, և թե՛, մանավանդ, հայկական նախարարական կազմակերպությունների հակամարտությունները։ Սրանք նմանողական խաղեր էին՝ ընդօրինակված նաև տարբեր պետությունների թշնամական բանակների կռվաձևերից։

Պատերազմական գործողությունների նշանները պահպանված էին նմանապես մի քանի խաղերում, որոնք հայտնի են ագագա-ագագամի, կրակտաւոցիկ, գերիտաւոցիկ և այլ անուններով։ Այստեղ գործողությունները շատ են հղկված, որով և հակառակորդ բանակների միջև հարձակումը, հարվածումը, ճակատի ճեղքումը, գերեվարումը, գերիներին ազատելը են կատարվում են խորհրդանշական կարգով։ Ծագմամբ, իհարկե, սրանք ևս հին խաղեր էին, կապված այնպիսի ծեսերի հետ, որոնք կատարվում էին ռազմի նպատակներով։

Այսպիսով, քանի դեռ Հայաստանն ուներ սեփական ազգային պետություն, հանձին ժողովրդի ստեղծած ռազմական խաղերի՝ նա ուներ երկիրը պաշտպանող ռազմի կազմակերպություններ՝ իրենց մարմնամարզական կարգուկանոններով։ Երբ Հայաստանը կորցրեց ազգային պետականությունը և բռնատիրությունները ազգային ռազմի կազմակերպությունները ցրեցին, հայ ժողովուրդը չանքեր չէր խնայում դրանք պահպանելու պատանեկության ու երիտասարդության խաղերի ու մարզական վարժությունների մեջ։ Ժողովուրդը դրանց ռազմական պոտենցիալի արժեքն այնքան բարձր էր գնահատում, որ առօրյա խաղերից բացի, բանահյուսությունը հագեցնում էր մարտեր մղելու արվեստով։ Նա ֆիզիկապես ուժեղ երիտասարդություն ասելով պատկերացնում էր աշխատունակ մարդուն, ամուսնական կենցաղում՝ կորիճին, ազգակցական կռիվներում՝ մահակավորին, միջգավառային մրցություններում՝ հաղթանակ սպասող մարզասերին, իսկ ազատագրական շարժումների մեջ՝ վաղվա ռազմիկին ու հերոսին։ Այս էր ռազմամարզական խաղերի կարեվոր նշանակությունը միջնադարում և դրանից հետո էլ, մինչև որ կկազմակերպվեր ազգային նոր, սոցիալիստական պետությունն՝ իր սպորտային բազում կազմակերպություններով։

Բ Ն Ա Գ Ր Ե Ր

ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՄՐՑԱԿՑԱԿԱՆ ԽԱՂԵՐ

Ա. ՈՒԺԱՅԻՆ ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Այս բաժինը հարուստ տեղեկություններ է պարունակում ուժային վարժությունների վերաբերյալ, որոնք ընդհատումներով ներկայացնում են հնագույն ժամանակներից մինչև XX դ. սկզբները։ Այդ տեղեկությունները վերաբերում են ծանրություններ բարձրացնելուն, նետելուն, շալակելով տեղափոխելուն, քաշելուն ու ձգելուն, շրջելուն, սեղմելուն են։ Վերջիններս ցույց են տալիս, որ հին Հայաստանում մարմինը բազմակողմանիորեն կոփելու վրա լուրջ ուշադրություն են դարձրել։ Նկատելի է, որ որքան տեղեկությունները հին են, այնքան դրանք վերաբերում են երիտասարդ սերնդին։ Եվ, ընդհակառակը, նոր նյութերը փաստորեն ներկայացնում են մանուկների ու պատանիների մարմնակրթությունը։

Մանկապատանեկան մարմնակրթության վերաբերյալ նյութերը պատմագրությունը գրի չի առել։ Պատմագրությանն առանձնապես հետաքրքրել են այն երևույթները, որոնք մեծահասակների շրջանում ունեցել են առավել գործնական նշանակություն։ Այդպես են, օրինակ, ծանրություններ հաղթահարելու, քաղաքացիական ու ռազմական կյանքի վերաբերյալ տեղեկությունները, որոնք մասնակի կամ խիստ չափազանցումով ներկայացնում են բանահյուսությունն ու պատմագրությունը։ Ռազմահայրենասիրական նկատումներով գրված կամ բանահյուսության մեջ արտացոլված տեղեկությունները հին սերունդների դաստիարակության կարևոր միջոցներից են եղել։ Մամուլի բացակայության պայմաններում մանկավարժական ու ռազմական դաստիարակության փորձի փոխանակում կատարելու, երկրում այդ բոլորն ընդհանուր դարձնելու տեսակետից բանահյուսությունն անգնահատելի դեր է խաղացել։ Այդ տեսակետից գեղարվեստական գրականությունը միջնադարում լրացրել է բանահյուսության պակասը։

Գիտակցելով, որ ուժի գործադրումն այն պայմանն է, որով խաղային գործողությունը ներկայանում է իբրև յուրօրինակ աշխատանք, հայերը մշտապես երեխաներին մղել են դեպի խաղերն ու ֆիզիկական վարժությունները։ Եվ եթե բանահյուսությունն ու գրականությունը ուժային վարժություններով զբաղվող հերոսներին օժտել են գերբնական ուժերով, նպատակը եղել է նոր սերունդներին քաջալերելն ու ազնիվ գործերին ծառայեցնելը։

Ուժային վարժությունների վերաբերյալ նյութերը քաղել ենք պատմագրությունից, գրականությունից ու մամուլից, իսկ նոր տվյալները մեծ մասամբ գրի են առնվել 1940—50-ական թվականներին։

1. [ՔԱՐ ՎԵՐՑՆԵԼ]

...Էդ գիտ իրիք անգամ զէնք քաղաք, ավիրից։
[Պզտիկ] Մհեր էկավ էնդեղ,
Մեկ միծ, ահագին քար իպի,
Կցից քաղաքի քամակ, գիտու մեչ.
Գիտ էլավ էրկու ճաղ.
Մեկ ճաղ էն յանեն կ'իյա, մեկ՝ էն,
Էլ քաղաք չի ավիրի։ (ՍՄ. ա. 239)։

2. [ՇԵՄԿԱԼ ԲԱՐՁՐԱՑՆԵԼ]

Շիրին շախ... էկավ շեմի վրեն կայնավ..., ձեռ տվեց, շեմ ու շեմկալ վերցրեց, [ձին տնից] առավ, էլավ դուս։ (ԷԱժ, II, 99 (Սրմ.)։

3. [ՍՅՈՒՆ ԲԱՐՁՐԱՑՆԵԼ]

Շիրին շախ Քաջ-Վարդանին վերցրեց, զանեց գետին, ձեռը էցգեց սունը, բանձրացեց ու Քաջ-Վարդանի քանքյուլը (գիսակ-խոպոպ) դրեց սան տակը։ (ԷԱժ, II, 98 (Սրմ.)։

4. [ՊՂԻՆՁ ՎԵՐՑՆԵԼ]

[Դևերը ուզնկան Հյուսանի որդուն] ըսեցին.— [Մեր քույրը քո եղբորը տալու պայմաններից] մեկն էս ղազանն ա. պետք ա լիքը լըլնանք միս ու ջուր, իրեք անգամ վերցուս դնիս կրակի վրեն, դնես գետին [որը յոթ դևերը հազիվ էին դնում կրակին]։

Բերեցին ղազան լիքը լըցեցին միս ու ջուր։

Խանչեց.—Հացն ու գինին, տեր կենդանին, ձեռ թալեց ղազնի կանթըններ, վերցուց իրեք հատ դրեց կրակի վրեն, դրեց գետին։ (Մրգ. III, 64 (Ապ.)

5. [«ՋՐԱՂԱՑԱՔԱՐՈՎ ԽԱՂ»]

...Տենում են երկու սար իրեք օրավար մին մինուց հեռու։ Սարերի գլխին կապած ա մի ճոպան, մեջը մի վենձ ջաղացաքար անցկացրած։ Մի սարի գլխին մի մարդ ա կանգնած, մեկելի գլխին՝ մինը։ Սա մի ճկթով ջաղացաքարին տալիս ա, գնում ա նրա կուշտը։ Նա ճկթով ջաղացաքարին տալիս ա, գալիս ա սրա կուշտը։ (ՀԺՀ, V, 56 (Լռ.)։

6. [ՌՈՒԲԵՆԸ ՋՐԱՎԱԶԱՆ Է ԲԱՐՁՐԱՑՆՈՒՄ]

...Դրա մեջ Ռուբենը արիանում և հրաշալի գործ է կատարում։ Քանի որ արքային սպասավորել և նրան մեծարել է կամենում, մի ավազան ջրով լցնում է և նորից խիստ ամուր փակում է։ Ավազանը քաջի նման վերցնում և բերում դնում է կայսեր առջև։ Այդ բանի վրա տեսնողները շատ զարմանում և նրան մի նոր Սամսոն են կոչում։ (Վ.ՎՎ, 112—113. տե՛ս նաև ՍՍ. S, 199)[64]*։*

64 *Սույն քաղվածքի և ներկա գրքի տարբեր բաժիններում զետեղված միջնադարյան բոլոր հատվածների աշխարհհարար քարգմանությունը կատարված է լեզվաբան Վ. Առաքելյանի կողմից։*

7. [ՍՄԲԱՏ ԲԱԳՐԱՏՈՒՆԻՆ ՈՏՔԵՐՈՎ ՁԻ Է ԲԱՐՁՐԱՑՆՈՒՄ]

...Եւ սա [Սմբատ Բագրատունին] մարմնով մի հսկա մարդ էր, տեսքով գեղեցիկ, հասակով բարձր և լայնշի, ուժեղ և ցամաք կազմվածքով. սա հսկա երիվարը նստած անցնելով անտառախիտ մայրիների և հաստաբուն ծառերի տակով, այդ ընթացքում հարձակվում էր ճյուղերով ծառերի վրա և բռնում ճյուղերը. ապա և ազդրերով գրկում էր ձիու մեջքը և ազդրերով ձին գետնից բարձրացնում։ (Սե. Պ, 56. հմմտ. Ջ. 13)։

8. [ՍՄԲԱՏ ԲԱԳՐԱՏՈՒՆԻՆ ՈՏՔԵՐՈՎ ՁԻ Է ԲԱՐՁՐԱՑՆՈՒՄ]

...Նա [Սմբատ Բագրատունին] հասակով բարձր էր ու լայնշի և տեսքով գեղեցիկ. երբ անցնում էր անտառների միջով, երկու ձեռքով բռնում էր ծառերի ճյուղերը, ապա ոտքերը կցում իրար և վեր էր բարձրացնում ձիուն և ձիով կախվում էր ծառից։ (ՍԱն. Հ, 76)։

9. [ՏՈՐՔ ԱՆԳԵՂԸ ՔԱՐ Է ՆԵՏՈՒՄ]

Պոնտոս ծովի ափին պատահել է թշնամիների նավերի [Պասքումյան Տորքը] և վրա է հարձակվել. նրանք հեռացել են խոր ծովը մոտ ութ ասպարեզ։ Չկարողանալով նրանց հասնել, ասում են, վերցնում է բլրաձև ժայռեր և շպրտում է նրանց հետևից։ Ջրերի ալեկոծվելուց ոչ սակավ նավեր ընկղմվում են, և ջրերի պատառումից առաջացած ալիքները մնացած նավերը շատ մղոններ առաջ են քշում։ (ՄԽ. ՊՀ, 115)։

10. [ՏՈՐՔ ԱՆԳԵՂԸ ՔԱՐ Է ՆԵՏՈՒՄ]

...Սրա մասին [Տորք Անգեղ] երգում են, որ հարյուր քսան փղի ուժ ուներ. բռնում էր որձաքար վեմերից՝ կամաց ճեղքում էր և վրան եղունգով նկարում էր արծիվներ և զանազան բաներ։ Սա Սև ծովի եզերքին հանդիպում է թշնամական նավերի. բլրաձև քարեր է նետում ծովը նավերի հետևից և ջրերի պատռվածքի հետևանքով բազմաթիվ նավեր խորասուզվեցին, իսկ մյուս մասն էլ շատ մղոններ քշվեցին ալիքներից։ (ՍՏ. ՊՏ, 36. ՎԲ, 45—46)։

11. [ՏՈՐՔ ԱՆԳԵՂԸ ՔԱՐ Է ՆԵՏՈՒՄ]

Մանուկ մի կայր ի Հայք գովան,
Քան զՍամփսոն այլ յաղթական.



Նկ. 1. Սմբատ Բագրատունին ոտքերով ձի է բարձրացնում (բնագիր № 7,8)

Նկ. Ռ. Մնացականյանի

Վէմ մի վերոյց մեծ տրամական,
Ի ծովն ընկէց կանգնեաց արձան։ (ՆՇ. ԲՂ, 583)։

12. [ՏՐԴԱՏԸ ՄԱՆՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ Է ՆԵՏՈՒՄ]

...Ապա մեծազոր Տրդատին հագցրին կայսերական հագուստներ։ Հետո Լիկիանոսի կողմից զորքի ամբողջ բազմության առաջ պատմվեց Տրդատ կայսեր բոլոր բաջագործությունները. նախ ասվեց փակ դռների բացման և զորքերի հաղթանակի մասին, և նա զարմանում էր երիվարներ, որոնց խո՛մբ խումբ նետում էր պարսպից այն կողմ. դրանց հետ նետում էր էշերին և ուրիշներին։ Ուրիշ այլ գործեր էլ էր կատարում նա, որ վերաբերում է ըմբշամարտության և ձիարշավին։ (Ուե. ՊՀ, 82)։

13. [ՏՐԴԱՏԸ ԳՐԱՍՏՆԵՐ Է ՆԵՏՈՒՄ]

Եվ որովհետև չկարողացան երիվարներին կեբակրելու համար կեր գտնել, նայեցին վեր և տեսան այնտեղ խոտ կա դիզված։ Այստեղ Տրդատը զորեղանալով՝ բարձրանում է բարձր տեղի վրա և դեզ առ դեզ խոտը հոսեցնում է ներքև, իսկ էշերին զորքի հետևից է նետում։ (ՆՇ. ԲՂ, 515—517)։

14. [ԴԱՎԹԻ ՊՂԻՆՁ ՇԱԼԱԿԵԼԸ]

[Դավիթը գևերի քարայրում]
...Դարձավ, իշեց, որ քառսուն կանթեղն պղինձ մի
Դրուկ էր օջախի վրեն,
Քառսուն հորթիկ լե մեջ։
Ջկոպալ կը մտու կանթներ ու կը վերցու.
Ջուր կը գարտկե ու հորթերու ոտքեր լե կը լըլա մեջ. Կը շալկե ու կ'երթա։ (ՍՍ. բ. I, էջ 23, (Տրն)։ Համմտ. էջ 371—372 (Ալշ.)։

15. [ԴՈՄԵՇԸ ՓԱՅՏՈՎ ՈՒՍՆԻ]

Հիրկուն տեսավ, որ Քաջ-Վարդան մեկ շեկ կըռտընի (կռտված գոմեշ) չորս ոտք կապեր, թաղեր ա մե փետի գլոխ, դրեր թևի վրեն ու կռկռալով, կոտշներ պատեր ու դռներ սրբելով՝ էկավ. որ գոմշին տփեց գետին, փորը ճղվավ, պլոճիկներ թռավ, գնաց ընկավ դռան հետև։ (ԷԱժ, II, 98 (Սրմ.)։

16. [ՏՐԴԱՏԸ ՔԱՐ Է ՇԱԼԱԿՈՒՄ]

[Տրդատ] թագավորը եկավ հրաժեշտ տվեց սուրբ Գրիգորին՝ յոթ օրվա ճանապարհ ընկնելու դեպի Մասիս բարձր լեռը։ Այնտեղից՝ լեռան գագաթից մի ամուր, անտաշ, մեծ, հսկայական, երկայն, հաստ, և շատ մեծ քար բերեց, որ հավաքված բազմությունից ոչ մի մարդ չկարողացավ շարժել։ Այդ անելով ութ հատ քարարձան՝ հսկան հայկաբար դրեց իր թիկունքի վրա և անձամբ բերեց տաճարների վկայարանը։

Զորս արձան կանգնեցրեց իբրև շեմք՝ փոխարեն այն անմիտ մարդու, որ սրբի հետ կռվել էր յուր սենյակում, ուր ամենքին պահող շնորհներից հաղթվելով, նույնչափ հրաշքներ գործեց։ (Ա. ՊՀ, 390)։

17. [ՔԱՆԱՔԵՌՑԻ ՄՈՎՍԵՍԸ ԳՈՄԵՇ Է ՇԱԼԱԿՈՒՄ]


...Հետո [Մովսեսը]ինքը գնում է, գոմեշը շալակում և բերում է գյուղը [Քանաքեռ]։ Այնտեղ նրան հանդիպում են վրաց դեսպանները, որոնք Պարսկաստան էին գնում. տեսնելով նրան՝ ոտից գլուխ զգեստավորում են և գնալով՝ ամենուրեք պատմում են։ Աղուհացի օրերում շալակում է ավելի քան քսան մարդու և պուտուկով կեբակուր և տանում յուր տիրոջ այգեփորներին այն ձորը, որ այժմ կոչվում է Ամիր-Դատենց ձոր. սա գտնվում է Հրազդան գետի ափին...։ (ՋՍ. III, 43—44)։

18. [ԴԱՎԹԻ ԴՈՒԹԱՆ ՔԱՇԵԼԸ]

...Դավիթ էգավ, յիճավ ցած.
Տեսավ՝ օղորթ օր, յոթ-ութ գրմեշ լծած՝ վար կ'ենին։
Բարև տվեց մանճկըլին, ըսեց.
— Բարև՛ քըզի, մա՛նճկալ։
Մանճկալ բարև առավ, ըսեց.
— Ասծու բարին, բարո՛վ էգար, Դա՛վիթ ջան։
Ըսեց.—Մա՛նճկալ, դու չկը՞ռնաք գութան քաշիք,
Օր իդա հայվընիներ շոքուն-կրակին լծեր իք.
Լիզու ուրանց թալած են դուս։
Ա՛խր, մե՛խկ ին, խե՛ղճ ին։
Ըսեց.—Իմկնի՛ Սասնա ծուռ,
Իդոնք ծուռ ին ըմեն,
Մարթ լը գութան քաշա՞...

Օր ըսեց՝ Դավիթ ըսեց., Մանճկա՛լ,
Յարձակա էդ կոտոշով բոլոջներ,
Փշու մ՚մի թըխ բոհնաթին։
Գուբնի բնատեն վերուց,
Թալեց ուր փիճին ու քաշեց։
Քաշեց, քաշե՛ց էրգու փաթ.
Փաթ մ՚էլ գնաց, էգավ, ըսեց.
—Մանճկա՛լ, էլ խորունթ կը կըդրա՞ գուբան։

Մանճկալ օղեր թողեց՝ խոր յընգնի։
Փաթ մ՚էլ գնաց, էգավ.
էգավ, հասավ յարտի գլուխ։
Դավիթ բռնեց բնատի ճոթ,
Հըմլա մարմնդեց ու թալեց գեդ գուբան։
Գուբնի ըմեն մի կտոր աշխարք մի յելավ։
(ՍՄ. բ. I, 285—286 (Ալշ.)։



Նկ. 2. Քանաքեռցի Մովսեսը գոմշի հետ սայլին լծված (բնագիր № 19)
Նկ. Ռ. Մնացականյանի

19. [ՔԱՆԱՔԵՌՑԻ ՄՈՎՍԵՍԸ ԳՈՄՇԻ ՀԵՏ ՍԱՅԼԻՆ Է ԼԾՎԵԼ]

...Այս Մովսեսը լինում է քաջ, ճարպիկ և ուժեղ. սրա ուժի մասին պատմվում է հետևյալը. Մի անգամ գյուղի տանուտերը սրան հրամայում է՝ երկու գոմեշ լծել սայլը և գնալ Ավանափոս կոչված դաշտը՝ որան բերելու։ Նա այսպես էլ անում է։ Սայլը բարձած գալիս է, (ճանապարհին) չարի դրդումով մի գոմեշի ոտքը կոտրվում է։ Մովսեսը ոտնակոտոր գոմեշը արձակում է, ինքը լծվում է մյուս գոմեշի հետ և որանը բերում թափում է կալը։ (ՋՍ, III, 43)։

20. [ՊՈՂՊԱՏԵ ՍՅՈՒՆ ԿՏՐԵԼ]

Մսրամելիքի մարտահրավերը լսելիս Սասունցի Դավիթը Հայրենիքի անկախության պաշտպանությունն ապահովելու նպատակով զինավառվում ու մեկնում է դիմագրավման։ Մարտից առաջ Ձիով Հովանի խրատով Դավիթը փորձում է իր ևիր թրի զորությունը՝ կտրելով այն պողպատե սյունը, որը նրա նախորդների համար էլ ինչպես առասպելաբանվում է, իբրև փորձաքար է ծառայել։

...Խրոխպեր էսաց.— Ա՛յ որտի,
Որ տ'էրթաս, քի մեկ շիրաթ կ'էնիմ,
Ականջ կը դնես իմ շիրաթին.
...Որ կ'ըլնիս, կ'էրթաս, դաշտի մեչ Պողվըտե
սուն ըմ կա.
Քյա խեր, որ կոխվ էրթեր,
Կը զարկեր Պողվըտե սուն,
Որ կտրեր՝ էնու բան հաչող էր, կ'էրթեր.
Որ չկտրեր, կը դառներ, կը գըներ տուն։
Տյա էլ, որ էրթաս, Պողվըտե սուն կը խիս,
Թուր զարկիս Պողվըտե սուն.
Որ կտրից, էթալ, քյա բան հաչող ի,
Կանչը՛ աստված, կինա դյախ քյա կոխվ.
Որ չկտրից՝ դառնաս, կյաս քյա տուն։
Էլավ քշից ձին, կինաց։
...Պողվըտե սան վերա կանգնավ, էսաց.
«Հիշյա իմ խացն ու գինին,
Տեր կենդանին,
Մարութա Բանձր Աստվարածին,
Խաչ Պատրազին
Վյար Դավթի աչ թիվին»։
Թուր քեշից, էզար Պողվըտե սան.
Սուն կտրից, կալամ վյար կալըմին կանգնավ։
Չիմացավ, որ կտրիր էր, էսաց.
«Ձեռնի՛կ, տյա կուտուր կիներ,
Ա՛խ, հալա տյա կուտուր կիներ,
Տյա զՊողվըտե սուն անկտրիլ չթողներ,
Ա՛խ, հալա սուն անկտրիլ չթողներ։
Ձեռ կուտրավ. տժարացավ Դավիթ, էլաց։
Միտք էրավ, տը տառներ դյախ տուն.
Որ տը տառներ դյախ տուն,
Դարձավ, փշից դյախ սուն,
Կտուր թռավ, կինաց։
Դավիթ ուրախացավ, դարձավ էսաց.
«Ձեռնի՛կ, տյա կանաչ կիներ,
Ձեռնի՛կ, տյա կանաչ կիներ,
Տյա զՊողվըտե սուն կտրիցիր, թալիցիր.
Տյա զՊողվըտե սուն կտրիցիր, թալիցիր,
Միզի սիվտակ իրիս դարձըցիր,
Միզի սիվ իրիս չէրիր»։
Ասածու հրամանքիվ ձեռ ժրավ, սաղացավ.
Մեկն էրկու դարձավ կվաթ։ (ՍՄ. ա, 194—196։
Համմ. նույն ձևով ծառ կտրելը. ՍՄ, Բ. II, էջ 383—384)։

21. [ԹԱՂԻՔ ԿՏՐԵԼ]

[Դևերը ոսղնկան Հյուսանի որդուն] ըսեցին.— ...Էս քեչեն յոթ ծալ կը ծալինք, մեկ անգամ քու թուր քցելուն կտրա, մեր քուր կիտանք քու ախպորը։

...Քեչեն յոթ ծալ ծալեցին, [Հյուսանի որդին] ըսեց.—Էտ չեղավ, թողեք ես ծալեմ յոթը ծալ։ Ըսեցին.—Ծալա, բան չկա, յոթ ծալ ծալա, դու ծալա։ Ծալելու վախտ մազերը դրեց քեչի մեջ, քաշեց ուր թուրը, խանչեց.—Հացն ու գինին, Տեր կենդանին, ու թալեց, մեկ կազ էլ գետին կտրեց քեչի հետ։ (Մրգ. III, 64 (Ապ.)։

22. [ԹՐԵՐ ՈՒՈՐԵԼ]

Նոքար էկավ, ձին բռնեց, Դավիթ էլավ վիրև. Քառասուն փայլևան են էկե։ Էն ասըմ ա՝ ե՛ս առնեմ խանդութ խաթուն, էն ասըմ ա՝ ե՛ս։ Թրեր քաշին, դրին սուրֆի տակ... [Դավթի] ոտը նագաստան կպավ սուրֆին. Սուրֆեն ոտի դեմից գնաց դեն. Տեհավ՝ քառասուն տկլոզ թուր սուրֆի տակն ա։ Թրեր ժողվեց, փաթութեց, Արավ բիլազուկ, նոքարին կանչեց. —Արի՛, էս էրկաթ վերցրա, թալ մեր խուրջին։ Ինչ էթամ մեր տուն, աստված հաչողա, կը շիննենք նալ ու մեխ։ Կը շիննենք բիզ, կը տանք էրեխեքին, դաշտ գողիկ կը խանեն։ (ՍՄ. Բ. II, 289—290 (Ար.)։

23. ՓԱՅՏ ՔԱՇՈՑԻԿ

Խաղում էին Սասունում և Տարոնում, պատանիներն ու երիտասարդները, ձմռան և գարնան ամիսներին, օդաներում և դաշտերում։

Խաղացողները մեկին ընտրում էին պապ, իսկ մնացածները հերթականություն պահպանելու հա-

մար համարակալվում էին։ Ունենում էին մի ամուր ձեռնափայտ։

Պապի ազդանշանով երկու հոգի նստում էին դետնին, իրար դիմաց, ներբաններն իրար հենելով, որից հետո պապը ձեռնափայտը տալիս էր նրանց։ Նրանք զույգ ձեռքով բռնում էին ձեռնափայտը, մի ձեռքը ներսից, մեկը՝ դրսից (խաղում էին նաև ձեռքերով, դոտիով, կեմով և պարանով)։

Ազդանշանով նրանք սկսում էին իրար ձգել և միմյանց բարձրացնելով կանգնեցնել, բերել իրենց վրա։ Որին այդ հաջողվում էր, նա էլ տանում և մնում էր նստած, իսկ պարտվողը վեր էր կենում, իր տեղը դիջելով հերթական համարին։ Խաղն այսպես շարունակվում էր, մինչև որ բոլորը խաղում էին։ Վերջին հաղթողը համարվում էր խաղը շահած։ (Մժխ. ձ. Պետ. ձ.)

24. ՓԱՅՏ ԽԼՈՑԻԿ

Խաղում էին հոտաղները, գարնանը և աշնանը, 4—10 հոգով։ Երկու խաղացողներ կանգնում էին իրար դիմաց, մի քայլ հեռավորությամբ և ձեռքերով բռնելով հորիզոնադիր փայտը, աշխատում էին այն խլել իրարից։

Խլելու համար նրանք կարող էին փայտը քաշել, այս ու այն կողմ դարձնել, ոլորել ձեռքերը, մինչև հակառակորդի ձեռքից դուրս բերելը։

Փայտով ձեռքերը ոլորելու ժամանակ խաղացողներին թույլատրվում էր ձեռքերի տեղերը փոխել և նորից բռնել ավելի հարմար ձևով։

Պայքարն այսպես շարունակվում էր, մինչև որ մեկն ու մեկին հաջողվում էր փայտը խլել։ Հաղթող էր ճանաչվում նա, որին հաջողվում էր փայտը նույն ձևով բոլորից խլել։ (Մ. ժխ. ձ.)։

25. ՓԵՏ ՔԱՇՈՑԻԿ ԿԱՄ ԽՐՈՋ

Խաղը վանում նույնն էր։ Պատահում էր, որ հավասար ուժ ունենալու հետևանքով փորձողները որպես անիվ պտտվում էին իրենց առանցքի շուրջը, մինչև որ մեկը տեղի տալով՝ մյուսի վրա էր շրջվում։ (Ախ, II, 308 և նկ. ժխ. № 64, էջ 66 վար. «Փատ քաշուկ» (Բրջ. 156)։



Նկ. 3. Փայտքաշոցիկ (բնագիր № 23)
Լուս. Մ. Քոյանի

26. [ՓԱՅՏ ՇՐՋԵԼ]

Դաստակի ուժը փորձելու համար երիտասարդ և պատանի տղաները գոմասենյակներում, տներում, գյուղի հրապարակում և դաշտերում խաղի մի փոքրիկ հրապարակ էին ընտրում և այնտեղ դնում մի ծայրը հաստ և մյուսը բարակ մի փայտ, որի երկարությունն ու հաստությունը կախված էր խաղացողների տարիքից, ուժից և պայմանավորվելուց։ Վարժությունը կատարվում էր այսպես։ Մասնակիցները ծնկի էին գալիս կամ պպզում էին և ձեռքն ափին ի վայր դնում դետնին այն հաշվով, որ փայտի ծայրը մտներ ճկույթի տակ։ Այդ դեպքում փայտը հենվելով մատներին, հաստ ծայրով ուղղվում էր բութի կողմը։ Ապա ճկույթի և մյուս մատների օժանդակությամբ փայտը շրջում էին։ Այս ձևով բոլորը փորձում էին իրենց ձեռքերի ուժը, առանց վերջինս վեր բարձրացնելու։ Նախկին փայտը բոլորը շրջելու դեպքում նոր և ավելի ծանրերն էին առաջ բերում, և երբեմն էլ թակեր, բրեր էին։ Բերված բոլոր փայտերը շրջողը հաղթանակ էր շահում։ (Մ. ժխ. ձ.)։

27. ՇՐՋՈՑԻԿ

Սենյակում կամ դրսում երկու հոգի, ոտ ու գլուխ, աջ կողքերն իրար դեմ արած և աջ թևերն իրար կանթած, մեջքի վրա պառկում են։ Ապա աջ ոտքերը վեր բարձրացնում, իրար դիմաց են բերում, աշխատելով միմյանց ծնկածալքն անց-

կացնելով իրար շրջել։ Ուժեղին հաջողվում է հաղթել դիմացինին, սրունքով ճնշելով վզի վրայով ոլորելով և շրջելով բերանն ի վայր։ (Տե՛ս ժխ., № 64, էջ 67)։

28. ՇՐՋՈՑԻԿ

Խաղը վանում նույնն էր։ Ախ. II, 204, № 155 1/2-ում «Շրջոցիկը» կոչվում է նաև «Աչմու կռիվ»։ Տե՛ս նաև Ախ. II, 276, № 198-րդ խաղի ծանոթությունը։ (Ախ, II, 276)։

30. [ՇՐՋԵԼ ՊԱՌԿԱԾԻՆ]

Խաղում էին պատանի և երիտասարդ տղաները՝ ձմռանն ու գարնանը ինչպես շենքերում, այնպես և դուրսը։

Նրանցից մեկը պառկում էր գետնին բերանքսիվայր, իսկ մյուսները հերթով աշխատում էին նրան գլորելով շրջել մեջքի վրա. ում հաջողվում էր բոլորին կամ մեծ մասին շրջել, նա էլ հաղթող էր համարվում։ (Մ. ժխ. ձ.)։



Նկ. 4. Բազուկների ուժփորձուկ

Նկ. Ռ. Մնացականյանի

29. [ԻՐԱՐ ՇՐՋԵԼ]

Խաղը Տարոնում և այլուր նույնն է։ Պառկող գույգից հաղթվողին մյուսներն են փոխարինում, մինչև որ մեկն ու մեկին հաջողվում է դառնալ բոլորին հաղթող։ (Մ. ժխ. ձ.)։


31. [ՈՏՔ ԾԱԼԵԼ]

Պատանի և երիտասարդ տղաներից իրեն ուժեղ համարողը պառկում է գետնին՝ փորի վրա և վեր բարձրացնում իր ուժեղ ոտքը։ Մյուսը մի ձեռքով բռնում է նրա սրունքից, մյուս ձեռքով

հենվում ծնկի հոդին, սեղմելով դեպի ցած, ոտքը ծալելու համար։ Այդ նրան հաջողվելու դեպքում դերերը փոխվում են, չհաջողվելու դեպքում փոխարինում է մեկ ուրիշը։ Այսպես շարունակվում է, մինչև որ մեկն ու մեկին հաջողվում է ոտքը ծալել։ (Մ. ժխ. ձ.)։

32. [ԲԱՋԿԻ ՈՒԺԸ ՓՈՐՁԵԼ]

Կանաչուտ տեղերում բերանքսիվայր պառկում, երկուսով աջ ձեռքերն իրար բռնում և ազդանշանից հետո աշխատում են մեկը մյուսի բազուկը գետին տապալել։ Այս նույն ձևը կատարում են նաև սեղանի վրա, նստած կամ կանգնած վիճակում, արմունկները գետնից կամ սեղանից չկորելու պայմանով։ Բայց հակառակորդին ուժասպառ անելու նպատակով կարելի է դաստակը ուժեղ սեղմել։ (Բ. ժխ. ձ.)։



Նկ. 5. Միջնամատների ուժփորձուկ (բնագիր № 33)
Լուս. Մ. Քթոյանի

33. [ՄԱՏՆԵՐԻ ՈՒԺԸ ՓՈՐՁԵԼ]

Երիտասարդները, կանգնած, բերանքսիվայր պառկած կամ սեղանի մոտ նստած՝ փորձում են միջին մատների ուժը։ Աջ կամ ձախ ձեռքերի միջին մատները կանթում են իրար և ազդանշանից հետո սկսում են ուժով շրջել ձեռքերը։ Կանգնած ժամանակ արմունկները կրծքին հենելն ու չհենելը, ուղղահայաց կամ որոշ չափով թեք պահելը, բերանքսիվայր պառկած կամ սեղանի մոտ նստելու միջոցին արմունկների այս կամ այն դիրքը որոշելը կախված է կողմերի պայմանավորվածությունից։ (Բ. ժխ. ձ.)։

34. [ՁԵՌՔ ԾԱԼԵԼ]

Իրեն ամենից ուժեղ համարողը կանգնում է մեջտեղը, ձեռքը բռունցքով պարզում է առաջ՝ ուսի բարձրությամբ։ Իսկ մյուսը, որը վճռել է նրա ձեռքը ծալել, մոտենում է նրան, մի ձեռքով բռնում նրա նախաբազկից, մյուս ձեռքով՝ արմունկահոդից, աշխատելով արմունկահոդից բաշել և բազկից վեր բարձրացնել, այն հաշվով, որ ձեռքը ծալվի։

35. [ՁԵՌՔ ԾԱԼԵԼ]

Զանգեզուրում աջ ձեռքը բռունցք արած՝ դնում են ձեռք ծալողի ուսին։ Ծալողը երկու ձեռքով, վերից վար սեղմում է ուսին դրված ձեռքը կամ նույնիսկ կախվում է նրանից, որ ծալի։ (Հաս.)։

36. [ԱՓԵՐ ԲԱԺԱՆԵԼ]

Փորձում էին օդա նստող պատանիները և երիտասարդները։ Փորձողներից մեկը բաց ափերն իրար միացրած, ձեռքերը տարածում էր առաջ։ Երկրորդը իր պաղունցներով աշխատում էր քաշել առաջինի ձեռքերի կաշին, որով ցավ պատճառում և երբեմն հեշտությամբ ձեռքերն անջատում էր իրարից։ Լինում էին նաև կամքից ուժեղներ, որոնց ձեռքերն անջատելը դժվար էր լինում։ (Մ. ժխ. ձ.)։

37. [ԲՈՒՆՑՔՆԵՐ ԲԱԺԱՆԵԼ]

Վարժությունը կատարում են մեծերը՝ փոքրերին փորձելու համար։ Մեծ մասամբ տղաներին առաջարկում են ձեռքերը բռունցք արած՝ առաջ պարզել։ Առաջարկողը, ի զարմանս փոքրիկի՝ ցուցամատներով թեթևակի վերից ու վարից հարված տալով բռունցքներին, ձեռքերը հեշտությամբ անջատում են իրարից։ (Մ. ժխ. ձ.)։

38. ԿՈՒՏ ԿՈՌԵԼ

Հարսանքատներում հավաքված հանդիսատես պատանիները հարսնեվորներից կուտ (ծիրանի, դեղձի և շլորի չիրի կորիզ) հավաքելով, ուժային վարժություններ էին կատարում։ Երկու կուտ իրար վրա դնելով պաղունցով ճնշում, կոտրում էին։ Պաղունցները ցավելիս կտերը դնում էին սերթուկների փեշերի ծալքերի մեջ և այնպես

ճնշում։ Լինում էին մի կուտը բաց կամ փեշով բռնող կոտրողներ, որոնց անունը հռչակվում էր երկու սեռի պատանիների մեջ։ Այդ օրերին անուն հանելու նպատակով պատանիները, երբեմն նույնիսկ երիտասարդները նախօրոք նման վարժություններ էին անում, որպեսզի «ուղած ախչկների սրտերը ավելի տաքանար»։ Տարածված էր նաև կակալ կոտրելը մեկ կամ երկու ձեռքով։ (Բ. Ժխ. ձ. (Ախ.)։

39. ՋՈՒ ԿՈՒՌԵԼ

Պատանիները, երբեմն և ավելի մեծերը հում կամ խաշած ձուն ծայրերով դնում են ափերին և դաստակներին լիակատար զուգահեռություն տալով, թևերն առաջ են պարզում ու ճնշում։ Շատ շատերի համար ձուն այս ձևով կոտրելն անկարելի է դառնում։ (Բ. Ժխ. ձ.)։

40. ՋՎԱԼ ՎԵՐՑՆԵԼ

Մրցում էին Տարոնում երիտասարդ և մասամբ պատանի տղաները, ձմռան ու գարնան ամիսներին, օդաններում, տներում և դաշտերում։ Նրանցից մեկին ջվալ էին ընտրում, որը կանգնում էր փորձադաշտի կենտրոնում։ Մեկը զույգ ոտքով չոքում էր գետնին, ձեռքերը ծալելով մեջքին։

Ջվալի դերակատարը մոտենում էր չոքածին, ձեռքերով հենվում նրա ուսերին, իսկ ծնկներով՝ մեջքին դրած ձեռքերին։ Դրանցից հետո ջվալը բարձրացնողն աշխատում էր նախ բարձրանալ մի ծնկի վրա, հետո հարմար դիրք ընդունելով վեր կենալ և կանգնել։ Նույնը կատարում էին մյուսները։ Եթե դա բոլորին հաջողվում էր, փոխում էին ջվալի դերակատարին, նշանակելով ավելի ծանրին։ (Մ. Ժխ. ձ.)։

41. ԹԵՌ ԲԱՐՁՐԱՑՆԵԼ

Մրցում էին Տարոնի երիտասարդ և մասամբ պատանի տղաները, ձմռան և գարնան ամիսներին, տանը, օդաններում, կալերում և դաշտերում։

Նրանցից երկուսին նշանակում կամ ընտրում էին թեռ (խուրջինաձև պարկ), որոնցից ամեն մեկը դառնում էր թեռի աչքը։ Մնացածները դառնում էին բեռ վերցնողներ։

Թեռ բարձրացնողների առաջին համարը պառկում էր գետնին՝ փորի վրա։ Իսկ թեռ ներկայացնող երկու տղաները նստում էին նրա աջ ու ձախ կողմերը, իրար դիմաց, ոտքերը դնում պառկածի մեջքին, ապա բռնում էին միմյանց ոտքերի թաթերը և իրենք նույնպես պառկում գետնին, մեջքի վրա։

Դրանից հետո թեռը բարձրացնողը նախ հենվում էր ձեռքերի, հետո ծնկների վրա, ապա վեր կենում կանգնում՝ եռևից բռնելով իր մեջքի վրա նստածներին, որպեսզի վայր չընկնեին։ (Մ. Ժխ. ձ.)։

42. ԽՈՐՈՄ ՎԵՐՑՆԵԼ

Գարնանամուտին, երբ կաուրներն արդեն չորանում ու տաքանում էին, Ախալքալաքի գյուղական երիտասարդ տղաները փոքրահասակ պատանիներին հետևյալ ձևով խորոմ էին վերցնում։ Վերցվողը նստում, ծնկաճալերն առնում էր թևերի մեջ և մատներն իրար հյուսելով ընկնում մեջքին։ Վերցնող երիտասարդը ուղիղ նրա կողքին,



Նկ. 6. Խորոմ վերցնել (բնագիր № 42)
Լուս. Մ. Քոյանի



Նկ. 7. Թեռ բարձրացնել (թնագիր № 41)

Նկ. Ռ. Մեսրոպյանի

մեջքի վրա պառկում և թևը մտցնելով երեխայի ձախ թևի տակով, բռնում էր աջ բազուկից։ Նա նախ իր մեջքին պառկած ժամանակ երեխային բարձրացնում էր վեր, ապա նստում, այնուհետև չոքում ու կանգնում, ծանրությունը շարունակ բարձր պահած. երկրորդ ձեռքի օգնությանը երբեք չէր դիմում։ 1—2 րոպե խոհրմն այսպես պահելուց հետո վերցնողն այնուհետև երեխային իջեցնում էր ցած, դարձյալ առանց մյուս ձեռքի օգնությանը դիմելու։

Այդ օրերին կուրներին, տներում և դաշտերում նման փորձեր էին կատարում նաև պատանիները՝ իրենցից փոքրերի հետ։ (Բ. ժխ. ձ.)։

43. [ՄԱՐԴ ԲԱՐՁՐԱՑՆԵԼ]

Սասունում վարժությունը նույնն էր, բայց վերցվողի ձեռքերն ու ոտքերը կապկպում էին։ (Պետ. ձ.)։

44. ԳԱՐԵ ԽՈՒՐՁ

վանա մեծերը երեխաների հագուստները փորի ու կրծքի կողմից (կամ գոտուց) բռնելով՝ վեր էին բարձրացնում և ճոճելով ասում։

— Գա՛րե խո՛ւրձ... գա՛րե խո՛ւրձ.—որ նշանակում էր, թե երբ երեխան գարու մի խուրձ էր, որին կարող էին գրկով և ուսով բարձրացնել կամ թևից բռնելով ճոճել, տատանել։ (Ախ. I, 32—33)։

45. ՔԱՐ ՎԵՐՑՆԵԼ

Մրցումը կատարվում էր մեծ մասամբ ձմռանը, պատանիների կամ երիտասարդ տղամարդկանց ձեռքով։ Խմբերը տարերայնորեն կազմվում էին ըստ հասակային դասակարգման, ելնելով քարի ծանրությունից կամ մեծությունից։ Ընտրված քարը սովորաբար ողորկ էր լինում։

Քարը դրվում էր հրապարակի մեջտեղը։ Վարժություն կատարողները հերթականությամբ մոտենում և մի ձեռքով, ըստ պայմանի, բարձրացնում էին այն վերևից բռնելով։ (Մ. ժխ. ձ.)։

46. ՔԱՐ ՎԵՐՑՆԵԼ

Ախալքալաքում վարժախաղը նույնն էր։ Այստեղ, բացի ողորկ քարը մի ձեռքով վերևից բռնելով բարձրացնելուց, կային նաև հետևյալ ձևերը։ ա. Երբ մի ձեռքով քարը բռնում էին կողքից, բռնելու համար քիչ թե շատ հարմար տեղից, և բարձրացնում էին թևը պարզած վիճակում, մինչև ուսերի հավասարությանը հասցնելու պայմանով։ բ. Նույն ձևով՝ գլխից վերև բարձրացնելու պայմանով։ գ. Նույն ձևով՝ որևէ չափով բարձրացնելու և նույնությամբ գետին դնելու պայմանով։

Քար վերցնելն այստեղ ամենից շատ կիրառվում էր զույգ ձեռքերով։ Ըստ հասակների ընտրված քարերը շատ երկար տարիների ընթացքում մնում էին նույն տեղերում և ամեն տարի համապատասխան սերունդները նույնությամբ կրկնում էին իրենց նախորդների փորձերը։ (Բ. ժխ. ձ.)։

47. ՓԵՍԻ ՔԱՐ

Տարոնում տղայի ամուսնությանը նախորդում էին մի շարք ուժային վարժություններ, որ կատարվում էին գյուղամիջում, պատանիների և ավելի տարիքավորների ներկայությամբ։ Աշնանային աշխատանքներն ավարտվելուց հետո հրապարակում մի ծանր, կլոր ու ողորկ քար էին դնում։ Հավաքված պատանիներին և երիտասարդներին փորձելու համար հասակավորներից մեկը մոտենում էր քարին և նրանց մեկ-մեկ հրավիրում վերցնելու։ Ով որ կարողանում էր վերցնել, հսկողը կատակով ասում էր. «Պսակվելու ժամանակն է»։ Վա՜յ նրան, ով որ չէր կարողանում վերցնել. նրան պախարակում էին՝ ասելով.

—Գնա՛ մամուդ գոգը նստի։

Վարժությունը վարող ծերունին նման դեպքերում ճկույթը պարզում էր առաջ, որ նշանակում էր, թե նա դեռ շատ փոքր է, ծիծ ուտելու ժամանակն է և այլն։ Այս վիրավորող հանգամանքները դրդում էին, որ պատանիներն ու երիտասարդները մինչև այդ հրապարակային սուտգատեսի օրերը, նախապես վարժվեին։

Հրապարակորեն կատարվող ուժային վարժություններին հաճախ ներկա էին լինում պատանիների հայրերը, որոնք լռությամբ հաշվի էին առնում հասարակական կարծիքը և ըստ այդմ էլ որոշում տղաների ամուսնությունը։

Տղայի նշանը տեղի ունենալիս փեսացուն այցելում էր աներաձոջ տուն։ Առաջին այցելության ժամանակ տղայի անները մի ծանր և ողորկ քար էր դնում դռան առջև, որի մասին տեղյակ էին լինում նաև հարևանները։ Դա կոչվում էր «փեսի քար»։ Փեսան իմանալով սովորությունը, այդ քարը վերցնում, դնում էր հետու, որով ապացուցում էր իր հասունությունն ու ուժեղությունը։ (Ե. ժխ. ձ.)։

48. [ԲԵՌ ՎԵՐՑՆԵԼ ԲՌՈՒՆՑՔՆԵՐՈՎ]

Երիտասարդ տղաներն ու պատանիները, ձմռան և գարնան ամիսներին, օդաներում, տներում և դաշտերում իրենցից ամենաթեթևին կամ որևէ երեխայի նշանակում էին իբրև բեռ։ Մյուսները հերթով մոտենում էին բեռին և կքանստում նրա առաջ ու ձեռքերը բռունցք արած դնում գետնին։ Բեռը կանգնում էր բռունցքների վրա և բռնում բարձրացնողի ականջներից։ Երբ կանգնում էր և հավասարակշռություն պահպանում, վերցնողն աշխատում էր բարձրացնել նրան վեր և կանգնել։ Վարժությունը նույնությամբ շարունակում էին նաև մյուսները։ (Մ. ժխ. ձ.)։

49. [ՄԱՀԱԿ ՎԵՐՑՆԵԼ]

Ախալքալաքում հովիվները, գառնարածները, հոտաղները, անասնապահները և այլն, իրենց աշ-



Նկ. 8. Բութ մատով մահակ վերցնել (բնագիր № 49)
Լուս. Մ. Քոյաքի

խատանքի վայրերում բազուկի ուժը փորձելու նպատակով հետևյալ ձևերով մահակ կամ թի ու բահ են վերցնում: Վերցնողը առարկայի ծանր ծայրը դնում էր գետնին և մյուս ծայրը, նայած իր ուժին, բութ մատի ծայրով կամ նույն մատի երկրորդ հոդի ուժով բարձրացնում էր վեր և նույնությամբ իջեցնում գետին: Բարձրացնելիս ամբողջ թևը պետք է ուղիղ պարզեր առաջ, առանց արմունկը ծալելու և վերցնելիք առարկան էլ ոտի ուղղությանը հավասարեցնելով նրա հետ՝ շարժեր դեպի վեր և իջեցներ ցած:

Ավելի ուժեղ երիտասարդները կամ պատանիները մահակի ծայրին քար էին կապում և միայն բթածայրով վերցնում: (Բ. ԺԽ. ձ.):

50. [ՄԱՏՆԵՐՈՎ ԲԱՐԶՐԱՑՆԵԼ]

10—16 տարեկան տղաները վարժություն-խաղը կատարում էին Տարոնի գոմասենյակներում, դաշտերում, կալերում ևն: Սովորաբար խաղին անտեղյակին համոզում էին պառկել մեջքի վրա, աչքերը փակել և հավատալ, որ խաղակիցները առանց ուժ գործադրելու, աղոթք ասելով, իրեն կբարձրացնեն օդի մեջ: Ապա կախարդվածի աջ ու ձախ կողմերում երկուական հոգի ման գալով փնթփնթում և իբրև թե կախարդում էին, ապա նստում, վեր էին կենում, շուրջը պտտվում: Այնուհետև այդ չորս հոգին ցուցամատները պառկածի տակը մտցնելով՝ սուլում ու բարձրացնում էին վեր:

Կանոնների համաձայն պառկողը ձգվելու էր ուղիղ կերպով, առանց հոդերը ձալելու (Մ. ԺԽ. ձ.)

51. [ԾԱՆՐՈՒԹՅՈՒՆ ԲԱՐԶՐԱՑՆԵԼ]

Պատանիներից, մասամբ և երիտասարդներից մեկը պառկում էր մեջքին, ձեռքերը ամուր հպելով կողքերին: Մնացածները հերթականությամբ մոտենում էին նրան, ձեռքերը անց էին կացնում պառկողի վզի տակ, մատները հյուսում իրար այն հաշվով, որ պառկողին բարձրացնելիս իրարից չբաժանվեին և աշխատում էին նրան բարձրացնելով կանգնեցնել: Բարձրացնելու ժամանակ պառկածը ձգվում, փայտանում էր ամբողջ մարմնով, որպեսզի նրան վեր բարձրացնելիս ծնկները և իրանը չծալվեին: (Մ. ԺԽ. ձ.):

52. ԶԻԹԱՄԸՋՈՒԿԻ

Այս խաղով շահումավանցիները փորձում էին ուժը, վարժեցնում լսողությունը և միաժամանակ տաքանում: Ձմռանը տղաները կանգնում էին տան կամ եկեղեցու պատի տակ, իրար կողքի, ոտքերը պատից քիչ հեռու էին պահում, առանց ձեռքերը շարժելու: Երկու ծայրերի տղաներն ուսերով ու թիկունքներով սկսում էին սեղմել միջիններին ու հետն էլ կանչում էին.

— Մըզի՛, ձե՛թ արա՛:

Մզոցին դիմանալ չկարողացողը շարքից դուրս էր պրծնում, որը համարվում էր կտրված: Իրա աչքերը ծածկում՝ կալում էին ու կանգնեցնում իրենց կազմած շրջանի կենտրոնում: Այժմ փորձելու էին աչքեր կալածի լսողությունը: Շրջապատողներից մեկը երկար ձայնով զու էր կանչում, հենց որ աչքերը կալածը մատը մեկնում էր դեպի ձայնը, զու կանչողը լռում էր: Սուր լսողություն էր հարկավոր զու անողի ուղղությունը ճիշտ որոշելու և մատը նրա վրա դնելու համար:

Եթե աչք կալածին չէր հաջողվում առաջին զու անողին գտնել, նորից կանգնեցնում էին կենտրոնում: Այս անգամ ուրիշն էր զու կանչում ու լռում: Խաղը այսպես շարունակվում էր, մինչև որ աչք կալածը ճիշտ կարողանում էր մատը դնել զու անողի վրա:

Լավ վարժվածներին փորձելու համար աչքերը կալած կանգնեցնում էին կենտրոնում ու երեք տեղից զու կանչում. նա պետք է իմանար՝ ո՞ւմ ձայնը լսեց, որ մատը դներ զու անողներից մեկի վրա: (ԳԲ, III, № 18):

53. ՃԽՈՑԻԿ

Վանում խաղին վարժված տղաներից մեկը մեջքը պատին դեմ արած կանգնում էր. մյուսները նրան հարակից և նույն ձևով հաջորդաբար շարվելով սկսում էին ընդհանուր ճնշումը դեպի վարպետը: Վերջինս որոշ ժամանակ դիմադրելուց հետո հանկարծ տեղի էր տալիս և իրար հրողներին գետին տապալում: (Ախ. I, 51):

54. ԼԸՆԿԻ

Զարսանճագում երկու պատանի կամ երիտասարդ իրար դիմաց կանգնում էին, ետևի կողմից մեկական ձեռքով բարձր բռնում մի ոտքը: Ապա

ակնատուիկ իրար վրա հարձակվելով՝ ուսերով հարվածում, որ ոտի զարնել էր կոչվում։ Խաղի միջոցին ում ձեռքը ոտքից քանդվեր, նա մեռած էր համարվում և տանուլ տալիս։ (Երև. 593)։



Նկ. 9. Լընկի (ակնատուիկ) (բնագիր № 54)
Լուս. Մ. Քթոյանի

55. ԳՈՄՇԱԿՈՒՎ

Տարոնում խաղին մասնակցում էին 8—12 տարեկան 4 և ավելի տղաներ։ Խաղում էին մարգագետիններում, գետափերին, կալերում և այլն։

Խաղացողներից երկուսը պապ էին կանգնում և մյուսները զույգ-զույգ պապերին ներկայանալով՝ իրենց մոքում պահած առարկաների համաձայն դառնում էին մեկ կամ մյուս խմբի անդամ։

Երբ խաղացողները բաժանվում էին երկու խմբի, դաշտի կենտրոնում գծում էին մի շրջան, մեկից երկու մետր շառավղով։ Խաղն սկսվում էր հետևյալ կերպ. ամեն կողմից մեկ խաղացող իր պապի կարգադրությամբ մտնում էր շրջագծի մեջ և ծունկի էր գալիս։ Չոքածները ձեռքերով իրար բռնած հենվում էին գետնին և գլուխներն անցկացնում միմյանց ուսատակին։

Պապերից մեկի ազդանշանով նրանք աշխատում էին իրար հրելով շրջագծից դուրս բերել առանց ձեռքերը գետնից կտրելու և վեր կենալու։ Ում այդ հաջողվում էր, նրա կողմը շահում էր մեկ միավոր. այսպես հերթականությամբ խաղում էին բոլոր խաղացողները. որ կողմը որ շատ միավոր էր հավաքում, նա էլ շահում էր խաղը։ (Մ. Ժո. Ա.)։

56. ԿՌՆԱԲՌՆՈՒԿ

Մի խումբ երեխաներ հավաքվում են մի արձակ տեղ, օրինակ կալում, բռնում են մեկ-մեկի ձեռքից և երկար ճոպանի նման ձգվում։ Կռնաբըռնուկ արած երեխաների երկու ծայրերից բըռնում են խաղացողներից ամենից ուժեղները, որոնք պարագլուխ են կոչվում։ Պարագլուխները նշան են անում և սկսում խմբովին երգել.

Ճոպա՜ն, ճոպա՜ն,
Կաշվի ճոպա՜ն,
Իշի ճոպան,
Գոմշի ճոպան,
Ձիգ տու, քաշի,
Էլ մի աշի,
Որտեղ մաշի
Էն տեղ՝
Ճը՜րթ։

Այս ասելով ձիգ են տալիս պարանի երկու ծայրից պարագլուխները իրենց ընկերներով։ Եթե խաղացողները ուժեղ ու դիմացկուն երեխաներ են լինում՝ ոչ մի հնար չի լինում իրարից կտրվելու և խաղերգը կրկնվում է մի քանի անգամ, իսկ եթե որևէ կողմը ավելի ուժեղ է լինում մյուսից, ձիգ է տալիս ճոպանը, որտեղ թողնվում է՝ այնտեղ ճը՜րթ՝ կտրվում է։ Կտրող կողմում լինում են թվով ավելի շատ երեխաներ։ Կտրելուց հետո՝ հաղթողները շրջան են կազմում և մնացածներին շրջանի մեջ անելով՝ երգում են ու ծափ տալիս.—

Եզան տեր եք՝
Եզը բերեք,
Գոմշի տեր եք՝
Գոմեշ բերեք։
Բերեք մորթենք
Կաշին քերթենք,
Կաշին քերթենք,
Ջող-ձողատենք,
Ջող-ձողատենք,
Ճըղ-ճղատենք,
Մի հատ թագա
Ճոպան անենք։

Երգի այս մասն ասելիս՝ շրջանի մեջ մտած երեխաները պարտավոր են մեկ-մեկից լավ պարգալ։ Ում պարը դուր չգա պարագլուխներին, նըրանք բռնում են նրա աջ ու ձախ ականջներից և ձիգ տալիս, որպես թե՝ «եզան ու գոմշի տեր ես, բայց չբերեցիր, որ մորթեինք և նոր ճոպան անեինք»։ Այդ ժամանակ ականջները քաշվող երեխան պարտավոր է երգել։


Բախշի, բախշի,
Ա՛յ պարբաշի,
Եզ է, էշ է,
Թե գոմեշ է,
Քեզ փեշքեշ է։
Վա՜յ ես մեղա՜,
Հազար մեղա՜։

Երբ պատժվողը ներողություն է խնդրում, պարագլուխները ներում են և ականջները թողնում։ (Հ. Աղ. Հ. 1912, էջ 31)։

57. ՔՅԱԼՆ ԸՆԿԱՎ ՀՈՐԸ

Խաղում են պատանի և երիտասարդ տղաները 8 և ավելի հոգով գարնանը, բաստաների վրա։ Համեմատաբար երկու տարիքավորներին պապ են ընտրում, ապա իրար կողքի շարվում, ձեռք-ձեռքի են տալիս կամ գոտիներից պինդ բռնում են։ Պապերը կանգնում են շարքի ծայրերին։ Այնուհետև սրանք փոխն ի փոխ որևէ առաջարկ են անում, որին խումբը համապատասխան պատասխան է տալիս և հրամանը կատարում։

Պապը.— Աղան ասում է՝ սանդ ծեծե՛ք։
Խումբը.— Հը՛, հը՛, հը՛,
Հը՛, հը՛, հը՛,
ասում և վեր-վեր թռչելով բաստա են տրորում։
Պապը.— Աղան ասում է՝ լաց էլե՛ք։
Խումբը.— Ո՜ւ, ո՜ւ, ո՜ւ,
Ո՜ւ, ո՜ւ, ո՜ւ,
ասում և աչքերն են տրորում։
Պապը.— Աղան ասում է՝ ծիծաղեցե՛ք։
Խումբը.— Հի՛, հի՛, հի՛,
Հի՛, հի՛, հի՛։
Պապը.— Աղան ասում է՝ մեղր կերե՛ք։
Խումբը.— Բերաններն ճպճպացնում, շուրթերն են լիզում։
Պապը.— Աղան ասում է՝ թեշի մանե՛ք։
Խումբը.— Ձեռքերով իլիկ մանելու ձևեր են կատարում։
Պապը՝— Աղան ասում է՝ պարան օլորե՛ք։
Խումբը.— Պարան ոլորելու ձևեր են կատարում։
Պապը.— Աղան ասում է՝ թևներդ յուղե՛ք։
Խումբը.— Թևերը քշտում, բազուկները յուղելու ձևեր են կատարում։



Նկ. 10. Քյալն ընկավ հորը (տնագիր № 57)

Նկ. Հովհ. Քացակյանի

Պապը.— Աղան ասում է՝ գոտիկներդ պի՛նդ կապե՛ք։
Խումբը.— Սկսում են շալվարների փողերը և գոտիները կարգի բերել-պնդացնել։
Պապը.— Աղան ասում է՝ քյալն (գոմեշը) ընկավ հորը։
Ճոպաններն ը պնդացրե՛ք, որ քյալը հորից հանե՛նք։

Այս ասելիս խումբն իսկույն պնդացնում է իր շղթան։

Պապը այնուհետև հայտարարում է, որ քյալը հորից հանելիս կարող է ոտք կոտրվել, ձեռք փշրվել, գլուխ ջարդվել, թավը չէ՛։ Ապա՝ խումբը պատրաստվելուց հետո նա համրում է 1,2,3։ Հենց որ արտասանում է 3, երկու հակառակորդ խմբերը ձգում են իրար դեպի հակառակ կողմերը։ Ձգումը երբեմն այնքան է երկարում, որ հոգնածությունից հաճախ մի խումբը քաշվում, տարվում է երկար տարածություն և ապա՝ ուժ հավաքելով, նորից ինքն է ձգում հակառակորդ խմբին բավական երկար տարածություն։ Քաշքշուկն այսպես շարունակվում է այնքան ժամանակ, մինչև որ որևէ տեղից շղթան կտրվում է։

Քաշքշուկի ժամանակ պապերը հարայ են տալիս, ոգևորում, սրտապնդում և փնորում իրենց խմբերի անդամներին։

Կտրվելու դեպքում իբրև պատիժ, մեջտեղ են բերում կտրվածներին և երկուսին էլ մեջքի վրա պառկեցնում են։ Այնուհետև յուրաքանչյուրին երկու հոգով, մեկական ոտքից և մեկական ձեռքից բռնելով գետնից վեր են բարձրացնում և հետույքները իրար դիմաց բերելով ճոճում ու երեք անգամ իրար են խփում։

Այս խիստ պատժի երկյուղից խաղացողները քաշքշուկի ժամանակ լարում են իրենց վերջին ուժերը։ (Բ. ժխ. ձ. (Կտ.)։

58. ՁԱՔԻՆ ԵՎ ՁԱՆՁՆ

Խաղը նույնն է։ 8—20 հոգով մի մայր էին ընտրում։ Մայրը շարքով իրար հետևից բռնածներին կարգադրություններ անելիս, խոսում էր թագավորի անունից։ Այսպես, օրինակ,—թագավորի հրամանն ա՝ մի ձեթ հանեք,—հրամայում էր նա։ Խաղացողներն իրար սեղմում էին մեծ ուժով, իբրև թե ձեթ էին հանում։

—Թագավորի հրամանն ա՝ դինգ ծեծե՛ք։

—Թագավորը հրամայում ա՝ շան միս կերե՛ք։

—Թագավորի հրամանն ա՝ վանանց ուղտը ընկել ա ֆորը՝ չաքին ու զանձն։

Այս վերջինն ասելիս երեխաները իրար ձգում էին։

Ովքեր պոկվում էին, նրանց ոտքերից ու ձեռքերից բռնելով տարուբերում և երեք անգամ քամակ-քամակին էին խփում։ (ԲՄԽ. 56—57)։

59. ԹԱԹԻԿ-ԼԱԹԻԿ

Սասունում թաթիկ-լաթիկ խաղացող պատանիները կամ միջին տարիքի մարդիկ բաժանվում էին երկու խմբի։ Խաղը կատարվում էր ընդարձակ և հարթ վայրում, գարնանը և աշնանը, կտուրներին կամ կալերում։ Ընդարձակ խաղավայրի կեսից անցնում էր մի սահմանագիծ, որի երկու կողմերում իրարից որոշ հեռավորության վրա, կանգնած էին մրցողները։ Սահմանի մի կողմից մի մարտիկ էր դուրս գալիս և առանց սահմանագիծը խախտելու, գծի երկարությամբ իր խմբի կողմում վազում և, աշխատում մյուս կողմի մարտիկներից մեկի շորերին՝ լաթիկին (շոր) իր ձեռքով (թաթիկ) կպչել։ Հարձակվողը ջնջամու լաթիկին ձեռք տալով նրան շարքից հանում էր, մեռցնում։

Մրցակից կողմի մարտիկները նույնպես առանց սահմանային խախտում անելու, փորձում էին բռնել հարձակվողի թաթիկից և քաշել իրենց կողմը, որով սա ևս մեռնում էր։ Այդ դեպքում սրա խմբից մի ուրիշն էր դուրս գալիս և շարունակում մարտը, մինչև որ կողմերից մեկը պարտվեր։ Երբ ամեն մի կողմից մի հոգի էր մնում, այդ երկու ախոյանները գալիս էին մարտադաշտի կենտրոնը և իրար զուգահեռ երեք գիծ էին քաշում։ Մեջտեղի գիծն ազատ էր մնում. ախոյաններն իրենց ոտնածայրերը եզերքի երկու զուգահեռներին հասցնում, ապա աջ թաթիկներն իրար տալով սկսում էին միմյանց քաշել։ Ով կարողանում էր դիմացինին իր սահմանի մեջ քաշել, խմբով հաղթանակը շահում էր. եթե հաղթողը խաղն սկսողն էր՝ դիրքերը չէին փոխվում, իսկ եթե դիմացինն էր՝ փոխվում էին։

Խաղը այն խումբն էր շահում, որը առաջինը լրացնում էր պայմանավորված թիվը։ (Պետ. ձ.)։

60. ԱՐԴԱՐ-ՄԵՂԱՎՈՐ[65]

Վանեցի խաղացողներից մեկը հրեշտակների և մյուսը՝ սատանաների պետ էր ընտրվում։ Երրորդը դառնում էր աճուն դրող, որը մյուս բոլոր խաղակիցներին անուններ էր կնքում՝ Ոսկի ուրուրց, Ոսկի քաղաք, Ոսկի զամբեղ, Ոսկի խնձոր, Առջը-

---

65 Ահ. I, 93 բուն վերնագիրն է «Արդար-մեղավոր կամ Հրեշտակ սատանա կամ Ջխշըխկ»։

թե թաս, Ոսկի լյուսնակ, Ոսկի տանձ, Առծըթե սանդր, Ոսկի վարդ, Պղնձե քյաղաք, Հրեղեն ձի, Պղնձե մատնիկ են։ Այս անունները կնքելուց հետո աեուն դրողը գնում, նստում էր հրեշտակների ու սատանաների պետերի միջտեղը, որոնք հերթով նրա դուռը ծեծելով հետևյալ երկխոսությունն էին սկսում։

—Ջը՛խշը՛խկ։
—Վո՛վ է։
—Խրիշտայն եմ։
—Ի՞նչ կուզես։
—Կուզե՛ե՛մ... Ոսկի լյուսնակ։

Տրված անվան տերն անմիջապես գալիս, նըստում էր հրեշտակապետի եաևը։ Ապա սատանայապետն էր դուռը ծեծում և հարցնում։

—Ջը՛խշը՛խկ։
—Վո՛վ է։
—Սատանան եմ։
—Ի՞նչ կուզես։
—Կուզե՛ե՛մ... Ոսկի իբրեղ։
— Ջկա՛։
—Կուզե՛ե՛մ... Պղնձե՛ քյաղաք։

Կանչվածը գալիս, նստում էր սատանայապետի եաևը։ Եվ այսպես՝ պետերը երկխոսությունը կրկնում էին մինչև վերջին անվանատերը իրենց մեջ բաժանելը, որից հետո կողմերի անդամներն իրար մեջը բռնած՝ շղթա էին կազմում, իսկ սատանան ու հրեշտակն էլ անուն դրողի թևերից թևակցած՝ սկսում էին խմբերով իրար քաշել։ Ո՛ր խումբը որ հաջողեցնում էր դիմացինի շղթան կտրել և նրա անդամներին իր կողմը քաշել, նա հաղթող էր ճանաչվում։ (Ա֊Խ. I, 93—94)։

61. Ի՞ՆՉ ԿՈՒԶԵՍ

Խաղը Կ. Պոլսում նույնն էր։ Մի խումբ աղջիկներ վիճակով իրենցից մեկին հրեշտակ էին ընտրում, երկրորդին՝ սատանա և երրորդին՝ անուն դնող։ Ընտրությունից հետո հրեշտակն ու սատանան խմբից հեռանում էին, անուն դնողը աղջիկներից յուրաքանչյուրին իբրև անուն՝ որևէ գույն էր նշանակում, օրինակ՝ կարմիր, կապույտ և այլն։ Դրանից հետո նախ գալիս էր հրեշտակը, որի և անուն դնողի միջև հետևյալ երկխոսությունն էր տեղի ունենում.

—Ջա՛թ, չաթ...։
—Ճնկատակը՛շտ... ան վո՞վ է։
—Հրեշտակն է։
—Ի՞նչ կուզե։
—Քոտեկա։
—Ի՞նչ ըռենկ։
—(Մի գույնի անուն)։

Եթե աղջիկների մեջ հրեշտակի հայտնած գույնից կար, այդ աղջիկն ու հրեշտակը միասին, հակառակ պարագայում՝ հրեշտակն առանձին հեռանում էր։ Այնուհետև գալիս էր սատանան, և նույն խոսակցությունը տեղի ունենալուց հետո նա ևս մի աղջիկ առնելով կամ առանց նրա հեռանում էր իր տեղը։ Այս ձևով խաղը շարունակվում էր, մինչև որ բոլոր աղջիկները գնում էին։ Ապա՝ հրեշտակի կողմիններն սրա եաևից և սատանայի կողմիններն էլ սրա եաևից ձեռքերով մեջք-մեջքի կապված՝ երկու հակադիր շարք-շղթա կազմում։ Անուն դնողը այս երկուսի միջև մի ուղիղ գիծ էր քաշում, որից հետո տեղի էր ունենում խմբերի ձգումը։ (Ա. Ա2, IX, 172)։

62. ԳԻՆԻՆԱ, ԳԻՆԻՆԸ.

Խաղում են դրսում, հարմար եղանակներին։ Մասնակցում են 10-ից ավելի պատանի տղաներ, որոնցից երկու հասակավորներն իրենց թևերով օղակ են կազմում և բոլորից թաքուն իրենց համար ընտրում են, օրինակ՝ «արծաթ ու ոսկի» կամ «ձմերուկ ու դդում» պայմանական անունները։ Մյուսներն իրար պոչից բռնած պտույտ են գործում մեծավորների շուրջը, միասին արտասանելով հետևյալը.

Գինինա, գինինա,
Վանականուշ գինինա,
Սինինա, սինինա,
Մեչը լիքը
Գինինա։

Այնուհետև գալիս, կռանում և երգը կրկնելով անցնում են մեծավորների օղակած թևերի տակով։ Մեծավորները վերջինին առնում են օղակի մեջ և ականջին փսփսում. «օսկի՞ն կուզես, թը՞ արծաթը»։ Օղակվողն ընտրում է դրանցից մեկն ու մե-

կը, որով դառնում է ոսկու կամ արծաթի տիրոջ ընկերը։ Այսպես շարունակվում է մինչև վերջին մարդը, որին արդեն բարձրաձայն հարցնում են. «ոսկի՞ն կուզես, թը՞ արծաթը» որով և կազմվում է երկու հավասարաթիվ խումբ։ Այնուհետև գծում են մի ուղիղ գիծ, որի հակառակ կողմերի վրա ոտքով հենվում են մեծվորները և բռնում իրար ձեռքից։ Մյուսները մեծվորների և միմյանց միջքին փաթաթվելով շղթա են կազմում ու քաշում։ Մեծվորներից որի ոտքը որ անցավ գծից այն կողմ, պարտվում է և դառնալով հակառակորդ խմբի անդամ, բռնում է վերջինի միջքից։ Պարտված մեծվորի շղթայի առաջին անձը դառնում է մեծվոր և խաղը նույնությամբ շարունակում։ Պարտված է համարվում այն խումբը, որի անդամներն աստիճանաբար անցնում են հակառակորդի կողմը։ Այդ ժամանակ հաղթողները պարտվողներին ասում են.

—Ձեր ճոպանը փթած է։ (Բ. ժԽ. ձ. (Աք.)։

63. ՀՐԵՇՏԱԿ ԵՎ ՍԱՏԱՆԱ

Խաղը նույնն էր։ Հրեշտակի և սատանայի խմբերի միջև խաղը դրսևորողը մայր էր կոչվում։ Մայրը ամենքին տալիս էր մի-մի ոսկեղենի, լուսատուի, քաղաքի, գյուղի և այլ կեղծ անուններ։ Հրեշտակն առաջինը ոտքը գետնին խփելով ասում էր.

—Ջը՛խկ-ջը՛խկ,— իբրև թե դուռն էր ծեծում։

—Ո՞վ է,— պատասխանում էր մայրը։

—Հրեշտակն է։

—Ի՞նչ ես ուզում։

Հրեշտակը որևէ անուն էր տալիս, եթե այդ անունը խաղացողներից որևէ մեկի վրա դրված էր լինում, Հրեշտակն առնում տանում էր նրան։ Նույնն էր անում նաև Սատանան, մինչև որ երկու խմբի էին բաժանվում։ Ապա գծի երկու կողմերում կանգնած Հրեշտակն ու Սատանան ձեռք-ձեռքի տալով սկսում էին ձգումը։ Հաղթողները պարտվածներին ծեծում էին։ (Լ. ԺՄԽ. 16—17)։

64. ՍԱՏԱՆԱՆ ԵՎ ՀՐԵՇՏԱԿԸ

Լոռիում այս նույն խաղի մեջ Սատանան և Հրեշտակը վիճակահանությամբ նախ մեկը, ապա և մյուսը ակնատուիկ և «տինգ-տինգ» արտասանությամբ մերձենում էր երեխաներին և անուններ տալով ընտրում խաղընկերներ։ Երկխոսությունը տեղի էր ունենում նրանց և մոր միջև։ Ապա սկսվում էր ձգումը, ըստ որում՝ հաղթող էր ճանաչվում այն խումբը, որը մյուսին անց էր կացնում գիծը կամ քաշում էր որոշակի տարածության վրա։ (Ղխ. ձ.)։

65. ՔԵՌՈՒ ՁՎԱՆ

Խաղը նույնն է։ Տղաներն առանձին և աղջիկներն առանձին են խաղում։ Խմբերը կազմվում են անուն դնելով։ Ղեկավարները պապ են կոչվում։ Հաղթող է ճանաչվում դիմացի խմբին կտրողը կամ գիծն անցկացնողը։ (Մ. ժխ։ ձ.)։

66. ԽՈՒՄԲ ԽՄԲԻ ԴԵՄ

Խաղին մասնակցողների թիվը հասնում է մինչև 30-ի։ Ըստ կանոնների՝ միմյանց շորերից քաշելն արգելվում է։ (ՊՇԽ, 84—85)։

67. ԲԱՄԲԱԿԻ ԳՆԱԼ

Սասունում ձմռանը բամբակի գնալ խաղը կատարողը պատանի թև երիտասարդ, մի հոգի էր լինում։ Նա կանգնում էր 0,5—1 մ երկարության մի ձողի վրա, որի երկու ծայրերից ամուր կապված պարանի ծայրերը հասնում էին առաստաղի գերանին, անցնում վերջինիս հակառակ կողմը և իջնում, հասնում կատարողի ձեռքերին։ Կատարողը պարանի ծայրերը քաշում միավորում էր և ինքն իրեն բարձրացնում օդի մեջ։ Որքան բարձրանում էր, այնքան վտանգավոր դրություն էր ստեղծվում։ Երբ նա կարողանում էր հասնել մինչև առաստաղը, բամբակի գնալու գործողությունը կատարված էր համարվում, իսկ եթե վերելքն անզգուշությամբ էր կատարում կամ ուժերն սպառվում էին, նա գահավեժ ընկնում էր գետին, որով պարտված էր ճանաչվում։ Նրանից հետո ուրիշն էր սկսում։ (Պետ. ձ.)։

68. ՓԱՅՏ ՆԵՏՈՑԻԿ

Խաղում էին փոքր տղաները գարնան ամիսներին, կալերում և դաշտերում։ Մասնակցում էին երկու հոգի, որոնք նշանակված սահմանի վրա կանգնում, մեջքով դեպի դաշտն էին դառնում, երկու ձեռքով բռնում էին փայտի վերին ծայրից, ստորին ծայրը անց էին կացնում ոտքերի արան-

քից, մի քանի անգամ ետ ու առաջ տանելով թափով նետում էին դեպի ետ։ Հետու նետողը նստում էր մյուսի շալակը և տեղափոխվում սահմանից մինչև հետու ընկած փայտի մոտ։ (Մ. ժխ. ձ.)։

երկու ձեռքով կամ մի ձեռքով էին նետում։ Կար երեք ձև. 1. «Քարը երկու ձեռքով բռնած կը քոթըլեին, նշանակված գծեն ցատքելով հանդերձ»։ 2. Քարը մի ձեռքով թաթի վրա բռնած՝ վերցնում էին մինչև գլխին հավասար, և նետում էին, թափ



Նկ. 11. Փայտաձողեր նետելու ձևեր (բնագիր № 68)

Նկ. Հովհ. Քացակյանի

Խաղը կազմակերպվում էր նաև 4—10 հոգով. այդ դեպքում մրցողները դարձյալ երկուական հոգով էին խաղում ու իրար շալակում, թեև այդ զույգերը խաղի պրոցեսում կարող էին փոփոխվել։ Նույնը կատարվում էր նաև փայտի մի ծայրը բռնելով, մյուսը ոտքի թաթին դնելով, ետ ու առաջ տանելուց հետո նետելով։ (Մ. ժխ. ձ.)։

առնելու համար մի մեծ քայլ անելով։ 3. «Քարը կը քոթըլեին» առաջիններուի պես, բայց խաղագծի վրայից առանց շարժվելու։

Այս խաղի մեջ նշանավոր էին Հերքո Կիրակոսը, Կույր Ակոբը, Պետրոսը, Կելեն Արութը և Քիլաճոնց Խաչոն։ (Բրջ. 156. վար. ՆՍ, 1958, № 38, էջ 13 (Սեբ.)։

69. [ՔԱՐ ՆԵՏԵԼ]

Խաղացողները Շապին-Գարահիսարում նախ հավաքում էին խնձորից մեծ՝ հավասարաչափ քարեր։ Այնուհետև ընդարձակ մի տեղում, գետնի վրա, գծում էին մի սահմանագիծ։ Այդտեղից իրենց քարերը հերթով նետում էին տարածության մեջ, ըստ որում միշտ առաջինը նետում էր մինչ այդ վարպետ ճանաչվածը։

Երբ բոլորը նետում էին իրենց քարերը, ստուգում էին, թե ով էր կարողացել իր քարը հասցնել առաջինի քարի ընկած տեղին և ով էր նրանից առաջ նետել։

Հաղթանակը տանողը, այսինքն վարպետի քարից անցկացնողը, արժանանում էր ծափահարության։ (Հս. Խ. ձ.)։

70. ՔԱՐ ՆԵՏՈՒԿ

Մրցախաղը Բարջանճում կազմակերպում էին երիտասարդները։ Ընտրում էին մի խոշոր քար և

71. ՔԱՐ ԹԱԼՈՑԻԿ

Բազուկների ուժը փորձելու նպատակով միևնույն տեղից միևնույն մեծության քարեր նետում են մեկ կամ երկու ձեռքով։ Վերջին դեպքում լայն քայլ են անում ոտքերը և քարը ոտքերի միջև ճոճելով արձակում։ Ամենից հետու գցողը ամենից ուժեղն է համարվում։ Երբեմն որոշ կետ նշանակելով՝ նետողները մրցանակ են սահմանում։ (Տե՛ս ժխ. № 64, էջ 65)։

72. ՔԱՐ ԹԱԼՈՑԻԿ

Տարոնում խաղը նույնն էր։ Նետում էին նաև դլխի վրայով դեպի ետ։ (Մ. ժխ. ձ.)։

73. ՔԱՐ ԹԱԼՈՑԻԿ

Վանա քարոտ արտերում գրավով կամ առանց դրան, մեծերը հաղթահարելի քարերը մի-մի ձեռքով բռնում, և բացված ոտքերի արանքը կամ

կողքանց տարուբերելով թափ հաղորդում և նետում էին առաջ։

Հերթով և միևնույն քարով ուժը փորձողներից մեկը հռչակ էր վայելում և գրավ դնելու դեպքում դրան տիրանում։ (Ահ. II, 310)։



Նկ. 12. Քար թալիկ
Նկ. Հովհ. Քացակյանի

74. ՔԱՐ ԹԱԼՈՑԻԿ

Խաղում էին 8—12 տ. տղաները կալերում, առուների ափերին և կտուրների վրա։ Նետման կետում մի ուղիղ գիծ էին գծում։ Ըստ հերթականության խաղացողը կանգնում էր նշված տեղում, աջ ձեռքում բռնում էր քարը, ձախ ձեռքը տանում էր աջի տակից և բռնում ականջը։ Այս դեպքում էլ քարը նետում էր որքան կարելի է հեռու։ Ամենից հեռու նետողը հաղթում էր մյուսներին։ (Մ. ժխ. ձ.)։

75. ՔԱՐ ԹԱԼՈՑԻԿ

8—12 տ. տղաները արձակ տեղերում նետման կետից հերթով քար էին նետում բարձրացրած ոտքի տակից։ (Մ. ժխ. ձ.)

76. ՔԱՐ ԹԱԼՈՑԻԿ

Նույն 8—12 տ. տղաները նշանի տեղի վրա կանգնում, ձախ ձեռքը աջի տակից անցկացնում և աջ ականջից բռնում ու բարձրացրած ձախ ոտքի տակից քարը նետում էին հեռուն։ (Մ. ժխ. ձ.)։

77. ԹԵԼՄԱՆՑ ՄԱԿԱՆ

[Վանում]... մեք ստիպված էինք ծառի ճյուղերաց գարնանային ուրախութիւն մեր ուրախութեանց զոհել, զի արտեր բաց տեսնելով պետք էր մինչև երեկո արտորեից մեջ վազել, խամճ ելնել, խամախանես առնել, զի բովանդակ գարուն և ամառ մեզ վազել պետք էր։

Բարակ և ուղիղ ճյուղեր մի գրչի կոթի հաստութեամբ և մի կանգուն երկարութեամբ կտրելով ծառ և այլն, զայն զմելիով կեճեպեինք և հղկեինք։ Հետո մի ասղանի թել 2—3 կանգուն երկարութեամբ առնելով մի ծայր հանգույց արկանեինք և զայն հանգույցով թելի ծայրն նույն մական կոչված ճյուղի մի հարևանցի փաթույթ տալով և թելի մյուս ծայր աջ ձեռաց ցուցամատի վերա փաթաթելով, բուլթ ճյուղի տակի կոթին տալով և ցուցամատով և բութով ճյուղն ուժգին ձգեինք ընդ երկայնութեան կամ ընդ լայնութեանն արտին։ Որո սույն մական առաջ անցաներ, նա լիներ հաղթող։

Սույն թելմանց մական անվանյալ խաղն մեզ համար հույժ զվարճալի էր, զի երբեմն ձգելով մի արտաչափ և ավելի ևս երթայր, երբեմն օդին մեջ բարձրանալով այնպես արագ և հեռու գնայր, զոր բազում ժամս որոնելով շէինք կարեր գտնալ։ Երբեմն սույն մականներ երկնախլունցք հանեինք, այսինքն ուղղակի դեպ ի հերկինս ձգեինք։ Այս մական երբեմն այնչափ բարձրանայր, որ մինչև անգամ մեր մանկական սուր տեսութեանեն անհետութ լիներ։

Այս խաղ ամենեն գերազանց ևս խաղայի։ Օրք ընկեր չունեենայի, մինչև երեկո այս խաղին կըրթութեան անեի։

Սույն թելմանց մական վերջի ծայր կրթություն էր, դի պետք էր, որ գետնի ո՛ր կետի վերա կայնած տեղեն ի վեր ի հօդս ձգված մական նույն կետի վերա ուղղակի իջնայր։ Երբեմն ուղղակի մեր գագաթան վերա իջնայր, եթե կայնած գծեն ոտք չփոխեինք։

Սույն դժվարին կրթության մեջ առաջին հառաջադեմն ես էի, իսկ երկրորդն Շարանենց Պետրոս, իսկ մյուս տղայք բնավ չէին կարեր սույն մասին մեջ հաջողել երբեք։ (Ջ № 4184, էջ 160ա—160 բ)։

78. ՄԱԿԱՆ

[Ամռանը] մական երկու հոգով խաղայինք։ Նախ, 1—2 արտաշափ տեղ ու սահման չափելով, մեջ տեղեն սկսինք մական ձգել։ Եթե ես ընկերս միշտ հետ ձգելով սահմանի գլուխ հասա, սահմանին տեր եղա, ընկերս տուժեց, իսկ եթե նա հաջողեցավ միշտ հիսնե հետի ձգել, նա շահեցավ, իսկ ես տուժեցա։ (Ջ. № 4184, էջ 180 բ (վ)։

79. ԱՍՏՂԱՊՈՋ

Դաշտում մի փոքր քարի մեջտեղից թևաշափ թելով կապում և ըստ կարողության թափահարելուց հետո այս աստղապոչը նետում էին օդն ի վեր։ Աստղապոչը հաղորդված թափի և տրված ուղղության համաձայն ուղղաձիգ կամ շեղ ու խոտոր բարձրանալով ընկնում էր վայր։ Հաճախ այնպես էին նետում, որ աստղապոչը միևնույն ուղիղ գծով բարձրանալիս օձապտույտ գալարումներ էր գործում։ (Ախ. I, էջ 92 (վ.)։

80. ԹԻԼՏԻ

Խաղում են աղջիկ ու տղա խառը։ Փետուրի ծայրին թել են կապում, թելի ծայրին էլ մի քար ամրացնում։ Այդ ամբողջը ծիլտի է կոչվում։ Փետուրից բռնելով ծիլտին ծուլ են անում օդի մեջ, այսինքն գցում են վերև, որը չափազանց արագ ու բարձր է թռչում։ Ծիլտին ներքև ընկնելիս ամեն մեկը ճգնում է, որ ինքը ձեռ գցի և ծուլ անի։ Խաղի նպատակն է շարժվել, վազվզել, տաքանալ, որը տեղի է ունենում գարնանն ու աշնանը։ (ԳԹ. III, № 18 (Շմ.)։

81. ԿԱՐՄՐԱԳԻ

Կարմիր թելով մի փոքրիկ քար էին կապում և պատանի տղաները հերթով այն թափահարելով դեպի վեր էին նետում։ Խաղի մեջ պատշաճ տեղ էր գրավում նա, ում նետածն օդի մեջ անհետանում և դարձյալ իրենց կանգնած տեղն էր ընկնում։ (Բ. ժխ. ձ. (Ջնգ.)։

82. ԾԻԼԻ

Խաղը Սիսիանում նույնն է. խաղում են թելով կամ առանց դրա։ (Բ. ժխ. ձ.)։

83. ԵՐԿԻՆՔ ՔԱՐԵԼ

Սասունում երեխաները դեպի երկինք քար նետելիս աշխատում էին, որ նետվածն ընկներ ելման կետում։ Մրցանակը շահում էր այդպես ուղիղ և ամենից բարձր նետողը։ (Պետ. ձ.)։

84. ԲԱՐՁՐԱԲՈՒԼԻԿ

Փոքր քար, որ երեխաները վեր են նետում՝ իրենց ուժը ցույց տալու համար։ (ՄԲ, I, 347)։

85. ԱԿԱՏԻՋ

Ոսկեվազ գյուղում մի ժամանակ երեխաները անձրևից հետո, երբ գետինը փափկում էր, բարձրանում էին կտուրները և խաղողի մատերի մեջ ամրացնում հավի մեծ փետուրը և նետում վեր։ Փայտիկն իր սուր ծայրով ցած էր գալիս և խրվում փափկացած կտուրների հողի կամ բաստանների մեջ։ Վերև նետելիս ասում էին.

Տի՛զ, տի՛զ,
Ակլատի՛զ։ (Բ. ժխ. ձ.)։

86. ԹԱԹՈՒՐ-ԹԱԹՈՒՐ ԽԱՉԵՐԿԱԹ

Երկու երեխա իրենց աջ ձեռքով բռնում են միմյանց ձախ արմունկը, և ապա ձախ ձեռքով միմյանց աջ արմունկը։ Այսպիսով գոյանում է մի տափակ տեղ, ուր նստեցնելով մի երեխա, վեր ու վար շարժելով՝ման են ածում ու երգում.

Թաթուր-թաթուր խաչերկաթ,
Սնդուկն դնեմ,
Տաշտը դնեմ փրփրիս,

Հանեմ մանեմ քրքրիս.—
Երթըցեն գըյնի՞ս, թե՞ դոննեն։

Եթե նստողը պատասխանում է՝ «դոննեն», նրան ուղղակի վայր կիջեցնեն, իսկ եթե խիզախի ասելու՝ «երթիքենն», գլխի վրա գլուխկոնծի տալով վայր են դցում։ (Եվ. ժխ. № 64, էջ 1)։

87. ՃՆՃՂԿԻ

Բաղեշում այդ նույնը կատարելիս երրորդին թևերի վրա կրողներն օրորում ու ասում էին.

Ճնճղկի,
Վզի-վզի,—

և հանկարծ ձեռքերը բաց էին թողնում։ Օրորվողն աշխատում էր վայր ընկնել այնպես, որ որևէ վնաս չստանար։ (Թկ. 1899, № 45, էջ 713)։

88. ՊՈՒՏ (ԿԱԿԱՉ)

Խաղին մասնակցում էին երեք աղջիկներ։ Թաց ու չոր–ի միջոցով նրանցից մեկը դառնում էր կանգնող-երգող, երկուսը՝ կրող։ Կրողները մեջքի էին տալիս և բռնում միմյանց ձեռքերը։ Կանգնող աղջիկը կանգնում էր նրանց ձեռքերի վրա և ծափ տալով երգում էր.

Պուտ ձեր էքին, էքի ջրեմ,
Պուտ մեր էքին, էքի քաղեմ,
Պուտ ձեր էքին, Կալկուճ կարեմ,
Պուտ մեր էքին, Օրոճ շարեմ։

Կրողները երգողին ձեռքերի վրա ման էին ածում, որը երգելիս երբ սխալվում էր, ցած իջեցնելով խաղը նորից էին սկսում։ Այս անգամ նախկին կրողները միմյանց հետ թաց ու չոր էին անում, որով մեկը նախկին կանգնող-երգողի հետ դառնում էր կրող, մյուսը՝ կանգնող-երգող։ (Քաջ. ԱՀ, IX, 102 (Շար.)։

89. ՁԵՌՔԵՐԻ ՎՐԱ

Խաղում են ձմռանը, կտուրների վրա. մասնակցում են մինչև 30 պատանիներ, որոնք երկու մասի բաժանվելով՝ կանգնում են իրար դիմաց, միմյանց ձեռքերից բռնելով։ Խաղացողներից մեկը, որը զույգ չի ունենում, պահում է շարքի մի ծայրի առաջին զույգի թևերի վրա՝ մարմնով ձգված և ձեռքերն առաջ պարզած վիճակում։ Երբանից հետո նրան կրող զույգը ուժեղ ցնցումով նետում է հաջորդ զույգի ձեռքերի վրա, սա էլ իր հերթին մյուսին և այդպիսով պահկողը շարքի մի ծայրից մյուսն է տեղափոխվում, որից հետո նա կանգնում է, մի ուրիշն է այդ ձևով փոխադրվում, և այլն, մինչև որ խաղը վերջանում է։ (Մ. ժխ. ձ.)։

90. ԲՈՆԴԱ

Բաղեշում երկու տղա կանգնում էին կողք-կողքի և յուրաքանչյուրն իր ձեռքերն իր մեջքի վրա իրար կապում։ Երրորդը մի ոտքը դնում էր նրանցից մեկի և մյուսը՝ երկրորդի ձեռքերին, բռնում էր նրանց գլուխներն ու այսպես առաջ էր վարում։ (Թկ. 1899, № 44, էջ 698)։

91. ԿՐԻՐՈՒ ԿՈՒԻՎ

Խաղը Սասունում կատարվում էր երկու մարդով։ Մրցակից պատանիների կամ հասակն առած մարդկանց թևերն իրենց ծնկների տակից անցնող ձողի տակովն անցկացնելով, բերում էին արունքների առաջամասը և իրար կապում։ Ապա մրցողների ձեռքերի մեջ մտցնում էին մի-մի գդալ։ Այդ ձևով կապված մրցողները նստատեղով ու ոտքերով սողալով հարձակվում էին իրար վրա, ոտքերի մատներով միմյանց գլորում, կողքին պառկեցնում։ Գլորվողն այլևս նախկին դիրքն ընդունել չէր կարողանում, ուստի հաղթողը սողալով մոտենում էր նրան և գդալի հարվածներ հասցնում գլխին, մինչև որ ընկնողն ընդուներ իր պարտությունը։ (Պետ. ձ.)։

Բ. ՄԵՆԱՄԱՐՏԵՐ

Այստեղ ներկայացված մենամարտերը տեղի էին ունենում բազմաթիվ շարժառիթներով։ Դրանցից էին՝ գյուղամիջյան սովորական վիճաբանությունները, գրավը, ամուսնական ծիսակատարությունները և ժողովրդական տոները, ուխտագնացությունները, պատերազմները, միջազգային հանդիպումները և։

Մենամարտերը հատուկ են արական սեռի

տարբեր հասակներին։ Բայց բանահյուսությունը պահպանել է նաև աղջիկների մասնակցության վերաբերյալ տեղեկություններ, որոնք կապված են մի կողմից ամուսնության հարցերի և մյուս կողմից՝ միջազգային հանդիպումների ու հայրենասիրական զգացմունքների հետ։

Միջնադարում մենամարտերին կարևոր նշանակություն էին տալիս, որովհետև այն ժամանակներում դրանք սերտ կապ ունեին ռազմական դաստիարակության հետ։ Այստեղից էլ՝ մի շարք պատմիչների հաղորդումները հայ քաջորդիների տարած հաղթական ըմբշամարտերի մասին։ Իսկ XIX դ. երկրորդ կեսից մինչև XX դ. առաջին քառորդը մենամարտերի նկարագիրներն արվել են ոչ այնքան ռազմական կյանքը նկատի ունենալով, որքան ազգագրական ու բանագիտական հետաքրքրությունները։

Մենամարտերի գրառումները հնում և նոր ժամանակներում կատարվել են կանոնների զգալի մասի անտեսումով։ Ուստի այստեղ բերված ըմբշամարտերն ըստ տեսակների ավելի բազմազան են, քան ըստ գործելակերպի։

92. [ԳՈՄՇԱԿՈՒԻ ԴԱՎԻԹ ԵՎ ՄՍՐԱՄԵԼԻՔԻ ՄԻՋԵՎ]

...Մելիք կ'ըլնի, կա՛սի.—Դա՛վիթ։
Կասի.—Ի՞նչ ի։
Կասի.—Ո՞նց կռվինք։
— Ոնց քո՛ քեֆ կ'ուզի.
Կ'ուզիս՝ գըոմշի նման քա՛լլով զարկինք մե մեկի[66],
Չես ուզի՝ ձիով կը կռվինք։
Մելիքն էսաց.—Ա՛խպեր, նորաթով կռվինք։
Էսաց.—Կռվի՛նք։... (ՍՄ. ա, 280 (Մկս.)։

93. ՔԱԼԲԱՆԴ

...Մըսրամելիք ասաց.— Տա՛վիթ արե՛, քալբանդ խաղանք։ Տավիթ ասաց.—Մըսրամելիք, ես կռմիզ չեմ՝ քալբանդ խաղամ, գյուրզով կը զանենք։ (ՍՄ. բ. II, 549 (Վ.)։

94. [ՄԵՆԱՄԱՐՏ ԴԱՎԻԹԻ ԵՎ ՄՍՐԱՄԵԼԻՔԻ ՄԻՋԵՎ]

Սասնա կտրիճները՝ Մեծ Մհերը, Դավիթը և Պզտիկ Մհերը հայրենիքը օտարերկրյա զավթիչների անպատակություններից զերծ պահելու նպատակով նախ մենամարտում, ապա միայն ձիամարտի են ելնում նրանց դեմ։ Սովորաբար, ըստ վեպի, այդ մենամարտը հարատևում է երեք օր ու երեք գիշեր։

...Դավիթ էլավ, խեժավ ձինը, կանչեց.
Մե՛լիք, դե՛, ե՛լ կռվենք.
Աստված յա ընձի կը տա, յա քեզի։
Ասավ.— Ես իմ ուրը կտրեր եմ,
Չեմ կարա ձի խեժնի. իչի, գուլաշ կպինք.
Ուզեց ձիանից իջնի Դավիթ, ձին չէր թողում։
Խորոխպրտանք էկան, ձին բռնին, Դավիթ իջավ.
Դավիթ Մըսրա Մելիքի խետ գուլաշ կպավ.
Որը տա գետին, էն ընդրան սպանի։
Էն վախտ որ Դավիթ Մըսրա Մելիքին
Չեռ էր տալըմ, ճխտըմ էր,
Մըսրա Մելիք չէր կարըմ դեմ տալ
Դրա զուվաթի զարբից[67]։
Գութանի պես դրա ոտերի տեղը
Խողը ճղըմ, էթըմ էր։
Էն տեղեն Մըսրա Մելիք դառնըմ էր Դավթի վրեն.
Հար երդա ձեռով զարկըմ էր, ոտով զարկըմ էր։ (ՍՄ. բ. II, էջ 280—281)։

66 Գոմշակուվի այս ձևը Տարոնի հոտաղ պատանիների մեջ պահպանված էր մինչև XX դարի սկիզբը։ Սովորաբար խաղը կազմակերպում էին փորձված հոտաղները անփորձների միջոցով։ Երկու մասի բաժանված կրտսեր պատանիները հերթով, 1—2 քայլ հեռավորության վրա, դեմ առ դիմաց չոքում էին։ Ավագ հոտաղի ազդանշանով կռվողները չորեքթաթ մոտենում էին և գլխով հարվածում իրար։ Պարտվողին փոխարինում էր նրա ընկերներից մեկը։ (Մ. ժ⁄ո. ձ.)

67 ՍՄ. բ. II, 477 մի այլ վար. ասված է. «Էն ժամանակ, որ Դավիթ ձեռ կը թալեր Ջանփոլադինը, ինոր ձեռներ կը մտներ Ջանփոլադի մարմնու մեջ, կիտես թե՝ խմոր էլներ միսն ու մարմինը»։

Այստեղ մենամարտի ձևը «քուշտի» է կոչվում։

95. [ՆԱՆՓԱՐՈՒԻ ԵՎ ՇԱՀ ՍՈՒԼԵՅՄԱՆԻ ՓԱՀԼԵՎԱՆԻ ՄԵՆԱՄԱՐՏԸ]

Շահ Սուլեյմանի զորավարը Վրաստան արշավելու ժամանակ գալիս, վրան է խփում Գորիսի հանդում, «Բաբախանի կալ» կոչված տեղում։ Նրա բանակում լինում է անպարտելի ըմբիշ։ Տեսնելով բնակիչների բոյ-բուսաթը, նա տեղի պարոնից (մելիքից) պահանջում է մի ըմբիշ, մրցման համար. չգտնելու դեպքում պետք է այսքան-այսքան ապրանք տաս, պարտվելու դեպքում՝ դրա կեսը, ասում է խանը։



Նկ. 13. Սասունցի Դավթի և Մսրամելիքի գոմշակռիվը (բնագիր № 92)
Նկ. Ռ. Մնացականյանի



Նկ. 14. Պատանիների գոմշակռիվ մենամարտը (ընագիր № 92-ի 66 ծան.)
Նկ. Ռ. Մնացականյանի

Պարոնը շվարած գալիս է գյուղամեջ, մտածում, թե ո՞վ կհամաձայնվի այդ աժդահա փահլևանի դեմ դուրս գալ։ Ոչ մի տղամարդ չի համարձակվում. բոլորն իրար են նայում և մտածում Մխիթարի աղջիկ Խանփարու մասին, որը գոմշի ձագի պոչից բռնել և իրենց ամարաթի դարբասի վրայով դուրս էր շպրտել փողոց։

Խանփարին արդեն Մաշուրի հարսն էր։ Կանչում են նրա պատրոնին, խնդրում, որ գյուղը փրկի։ Մաշին տարակուսանքով տուն է գնում և հարսին հարցնում։ Վերջինս իր փոքր երեխայի միջոցով (ինքը չխոսկան էր) ասում է, թե էդ ով կարող է լինել, որ ծնկի տակը չդնի։ Հարսին երբ տանում են բանակատեղ, զարմանք է պատում զլբաշի զորքին։ Փահլևանի ոտքերը գետնից կտրվում են, երբ տեսնում է Մաշու հարսի ձեռքը... Հանկարծ տափովը գա, այն էլ կնկա ձեռքով։ Բռնվելուն պես պարսիկ փահլևանը ճոճվում է օդի մեջ, հարսը գլխով է անում՝ հարցնում Մելիքին, թե գետնով խփի՞։ Մելիքը ձեռքով հասկացնում է, թե հանգիստ վայր դիր։

Պարսից սարդարը թեև խայտառակվում է, բայց իր խոսքի տերն է մնում և բոլորը գովում են հերոս հայ կնոջը։ Դրանից հետո Մխիթարի դստեր (Մաշու հարսի) հռչակը տարածվում է Ջանգեզուրում և Ղարաբաղում։

Հին Գորիսի գերեզմանատանը դեռ մնում է մի անհայտ տապանաքար, որի՛ վրա գրված է. «Այս է հանգիստ Խանփարուն թվ. ՌՃԾԵ (1706)» (Մորուս Հասր.)։



Նկ. 15. Մասունցի Դավթի և Մսրամելիքի մենամարտը (բնագիր № 94)
Նկ. Ռ. Մնացականյանի

96. [ԼԵՆԳԲԵՄՈՒՐԻ ԸՄԲԻՇԻ ԵՎ ԳՈՐԻՍԵՑԻ ՀԱՅ ԿՆՈՋ ՄԵՆԱՄԱՐՏԸ]

Շահ Սուլեյմանի ըմբիշի հետ խանփարուի ունեցած մենամարտը գորիսեցիների մեջ հետագայում վերագրված է Լենգթեմուրի ըմբիշին և գորիսեցի մի անհայտ կնոջ։ Այդ ավանդության համաձայն Լենգթեմուրը պահանջում է մրցող ըմբիշ, այլապես գյուղը կայրի, մոխիր կշինի։ Իշխանի հարսը երեխայի միջոցով համաձայնություն է հայտնում՝ ըմբշամարտել փահլևանի հետ։ Պատրոնի համաձայնությունից հետո տեղի ունեցած մենամարտում հարսը հաղթում է փահլևանին։ Լենգթեմուրը լնգին տալով հեռանում է Գորիսից։ (Բ. ժխ. ձ.)։

97. [ՎԱՐԱԶԴԱՏԻ ԸՄԲՇԱՄԱՐՏԵՐԸ]

Բայց բարեգործ Թեոդոս Ավգոստոսը, մեծ կոչվածը, իր (թագավորության) քսաներորդ տարում Հայոց վրա Պապի փոխարեն թագավորեցրեց մի ոմն Վարազդատի նույն Արշակունյաց տոհմից։ Այս Վարազդատը երիտասարդ էր տարիքով, սրտոտ, հաղթահասակ, ուժեղ, լի արիության բոլոր գործերով և շատ հզոր նետաձգության մեջ։ Շապուհից փախչելով նա գնացել էր կայսեր դուռը և այնտեղ քաջ հանդիսացել։ Նախ Պիսայում բռնցքամարտերում հաղթելով, հետո ելլադացիների Արեգ քաղաքում կես օրում մի քանի առյուծ կոտորեց, որի համար Ոլիմպիական հանդեսի ըմբշամարտերի խաղերում փառք վաստակեց և հարգանք։ Իսկ այն քաջ և արիական գործերը, որ նա կատարեց Ղանկվարտների ազգի դեմ, համարձակվում եմ ասել, թե հավասար էին սուրբ Տրդատի (գործերին), որովհետև թշնամիների կողմից հինգ ախոյան հարձակվեցին նրա վրա և նա մեկը մյուսի հետևից բոլորին սրով կոտորեց. և մի բերդի վրա դիմելով, բերդի պատվարի վրա տասնևյոթ մարդ նետով զարնելով իրար վրա ներքև գլորեց, ինչպես շուտ հասունացած թզերը թափվում են սաստիկ մրրկից։ (Մխ. Պշ, 307—308. Վար. Ա. Պշ, 31, ե. եև, 98. Ղվ, 41, 115)։

98. [ԸՄԲՇԱՄԱՐՏ]

...Նրա հետ գուսանների խումբը և աղջիկների խաղերը զարմանալու արժանի էին։ Այնտեղ էին նաև սուսերավորների և ըմբիշների խմբերը, այնտեղ էին խումբ-խումբ առյուծները և այլ գազանները, տեսակ-տեսակ պաճուճանքներով զարդարված թռչունների երամները։ (ԹԱ, ՊՏԱ, 482)։

99. [ԸՄԲՇԱՄԱՐՏ՝ ՄԱՐՄԻՆՆ ՕԾԵԼՈՎ]

...Զրկվելով ամեն բանից և բարեպաշտ ըմբիշները օծվելով հոգու շնորհիվ՝ ոչ թե ջուր են ծեծում և ձեռքերը մեկնում են անգոյությանը, այլ ազգու հարվածով խիստ կերպով վիրավորում են հակառակորդներին։ (ԴՍկ. ԳԱ, էջ ճԽե)։

100. [ԸՄԲՇԱՄԱՐՏ ՍԱԴՈՒՆԻ ԵՎ ԲՈՔԱՅԻ ՄԻՋԵՎ]

...Այս օրերում Մանկու ղանից մի մարդ եկավ՝ մուրալու համար. սա մի չափազանց հսկա էր տեսնողների աչքին. հասակը երկայն էր, թիկնեղ, վիզը նմանվում էր գոմեշի վզի, ձեռները անճոռնի էին, ինչպես արջի թաթեր. օրեկան ուտում էր մի ոչխար և Մանկու ղանից իր հետ մի թուղթ և մի թանկագին կապա ուներ։ Թղթի մեջ գրված էր հետևյալը. «Այս Բոքա անունով մարդը գալիս է իմ եղբայր Հուլաուի մոտ։ Նա, ով դրան գետին գցից, այդ վրայի կապան նրան հագցրու. իսկ եթե իմ Բոքան քո մարտիկին խփի գետին, այն ժամանակ կապան հագցրու դրան և մեծ պատգամավորներով ուղարկիր ինձ մոտ»։ Այդ ժամանակ Հուլաու ղանը կանչեց յուր զորքի բոլոր գլխավորներին և ասաց, թե՝ արդյոք գիտե՞ք թաթար, հայ կամ վրացի մի այնպիսի մարդ, որ դրան գետին գցի։ Որոնեցին, սակայն թաթար չգտան, քանի որ ով տեսնում էր այդ մարդուն, բոլորը վախենում էին նրա հսկա հասակից և տեսքից։ Իսկ հայոց և վրաց իշխանները ասացին, թե՝ մենք ճանաչում ենք մի մարդու, որից հնարավոր է, որ մի բան դուրս գա։ Եվ ղանը շուտափույթ հրամայեց բերել։ Ասացին՝ այստեղ չէ, այլ յուր տանն է։ Եվ հրամայեց բոլոր պատգամավորներին՝ շտապ հասցնել, բայց ոչ թե ձիով, այլ սայլով։

Այն մարդը, որի մասին հայտնեցին հայոց և վրաց իշխանները, բարձր Արծրունիներից էր՝ և թոռն էր Ամիր քրդի՝ Սադուն անունով։ Բարձրահասակ և վայելուչ էր՝ խիստ ուժեղ մանկությունից, փորձված և այդ գործի մեջ հմտացած, բայց ղանի առջև ոչ մի մարդու հետ կռիվ չէր բռնել։ Երբ

պատգամավորները գնացին, և ղանի հրամանը ասացին, սա շատ տխրեց, մեկ այն, որ ղանի առջև որևէ մարդու հետ չէր բռնել և մյուսն էլ, որ իր հակառակորդի մասին լսեց, թե շատ ուժեղ է։ Իսկ երբ Հուլաու ղանը տեսավ Սադունին, նրա ճկուն ու երկայն հասակը, շատ ուրախացավ և հրամայեց՝ որ ինն օր երկու բոքան միասին մնան. և ամեն օր նրանց ուտեցնում էր մի ոչխար և խմեցնում էր մի տիկ գինի։ Եվ երբ որ այս ինն օրը լրացավ, հրամայեց, որ զորքի բոլոր գլխավորները գան իր առաջ և բերեն երկու բոքային. հրամայեց բռնել միմյանց. և երբ միմյանց բռնեցին, ժամի երեքն էր, և օրվա երեքից մինչև ժամի վեցը իրար բռնած էին, բայց միմյանց չկարողացան հաղթել. հետո Սադունը աստծու անունով ուժեղացավ և հանկարծակի ուժգին բախումով Մանկու ղանի բոքային խփեց գետին՝ Հուլաու ղանի առջև. Սադունը մեծարվեց ղանի մոտ և ամբողջ երկրում չգտնվեց մեկը, որ թաթարների ժամանակ նրան նմանվեր հարգանքով, մեծությամբ և ուժով։ (ՄԱՊ, 33—35)։

101. [ԸՄԲՇԱՄԱՐՏ ԼԻՊԱՐԻՏԻ ՔՐՈՋ ԵՎ ԻՍՄԱՅԵԼԱՑԻ ԸՄԲԻՇԻ ՄԻՋԵՎ]

...Լիպարիտը [Կիլիկիայի քաջերից մեկը] ուներ մի քույր Սա փախել էր մի գյուղ և դարձել էր ամուսնացած հիսունամյա կին։ Այդ ժամանակ իսմայելացի մի ըմբիշ (փահլևան) հանդես գալով՝ ասում է Սսի պարոնին (իշխանին), թե քո գավառից կամ քո զորքերից բեր ինձ նման մեկին, որպեսզի գոտեմարտենք, այլապես պետք է ինձ տաս քո երկրից հարյուր դահեկան կարմիր։ Նա (Սսի պարոնը) մարդ չգտավ, որ կարողանար արաբի հետ գոտեմարտել։ Լիպարիտի քաջ քույրը եկավ և ասաց,— ի՞նչ կտաք, եթե ես ըմբիշին գետին գցեմ։ Պարոնն ասում է,—ինչ որ պահանջես, կտամ, եթե գետին գցես նրան։

Կինը ասում է,—ինչքան բամբակ շալակեմ, թող այդքանը ինձ լինի։ Իշխանը հանձն է առնում (համաձայնում է)։

Երբ փահլևանը գալիս և տեսնում է հսկայածև կնոջը, սարսափում է. բայց որովհետև (դիմացինը) կին էր, արհամարհեց նրան ու մերկացավ փահլևանը, հետո հագավ յուր զգեստը, սկսեց խաղալ՝ ցույց տալով իբր, թե անարգում է ու տղամարդ է պահանջում, որպեսզի նրա հետ մարտնչի։

Կինը առաջ գալով իր կանացի զգեստներով՝ բռնեց փահլևանի երկու թևերից իր երկու ձեռքով և բարձրացնելով տարավ նրան իշխանի առաջ և երեսի վրա դրեց գետին փահլևանին ու մեկ ականջը պոկելով դեն նետեց։ Ամենքը սարսափած հարցնում էին, թե սա որտեղի՞ց է և որ ազգից է։

Թագավորը հրամայեց նրան տալ այնքան բամբակ, որ չկարողանա շալակել։ Կնոջը բարձեցին մոտ հարյուր լիտր, ու նա առած ուրախությամբ գնաց իր տունը։ (Ջ, № 3569, էջ 28ա)։

102. [ՄԵՆԱՄԱՐՏ ԿՆՈՋ ԵՎ ՏՂԱՄԱՐԴՈՒ ՄԻՋԵՎ]

...Եվ երբ որ Մսրա սուլթանը վերահասու եղավ դեպքին և լսեց բոլոր քաջերի մահվան լուրը, թագավորի մոտ ուղարկեց քառասուն ըմբիշներ, որպեսզի փորձեն՝ իմանալու համար, թե արդյոք Սիս քաղաքում կա՞ն ուրիշ քաջեր ևս, որովհետև իր մտքում մտածում էր, թե կգա Սսի վրա։

Ըմբիշները գալով թագավորի մոտ՝ ասում են։—Եգիպտոսի Սուլթանը մեզ ուղարկեց քեզ մոտ, որպեսզի գոտեմարտենք քո քաջերի հետ։

Թագավորը պատասխանում է.— Թող այդպես լինի։

Եվ կոչ արեց իր ամբողջ երկրի բնակիչներին, բայց քաջեր չգտնվեցին, որովհետև չկային։

Բայց իր մտքում հիշեց, որ կան յոթ եղբայրներ, որոնք ունեն մի քույր։ Քանի որ նա մենակ մնաց, դևի սարսափից փախավ գնաց մտավ մի քարայր ու մի առ ժամանակ մնաց այնտեղ։ Մի օր վերկացավ գնաց ջրաղացը...

Ջրաղացպանը ջրաղացում չէր. լցրեց, որպեսզի աղացվի։ Այդ ժամանակ եկավ մի երիտասարդ, տեսավ աղջկան ու ցանկացավ նրան։ Աղջիկը բռնեց տղայի հագուստի փեշից, մեկ ձեռքով բարձրացրեց տան ծածկը և տղայի հագուստի փեշը դրեց նրա տակը և ցած թողեց։ Տղան գլուխը դեպի վար կախվեց շորերից, մինչև որ այնքան ալյուրը աղացվեց։ Իսկ նա իրեն մեղավոր էր համարում, գոռում, աղաղակում էր։ Աղջիկը բաց թողեց և պատվիրեց. թե այս թող քեզ խրատ լինի։ Եվ այն ժամանակ, երբ քաջեր էին որոնում ամենուրեք և հրապարակներում կոչ էին անում,

թե որքան վարձատրություն կտրվի նրան, ով որ քաջ գտնի։

Ահա գտան աղջկան և բերին։ Եկան քառասուն ըմբիշները և աղջիկը նրանց հետ գոտեմարտեց։ Նախքան գոտեմարտելը՝ աղջիկը ամենամեծ ըմբիշին (ըմբշապետին) ասում է.— Ես կին եմ, իսկ դու տղամարդ ես. պատշաճ չի մեզ միմյանց հետ գոտեմարտել։ Երեք անգամ ուժով դու եկ ինձ վրա, երեք անգամ ես կգամ քեզ վրա։ Ասաց աղջիկը, չէ՞ որ դու տղամարդ ես։ Եվ մեծ ըմբիշը երեք անգամ եկավ աղջկա վրա և չկարողացավ հաղթել։ Դրանից հետո աղջիկը հարձակվեց մեծ ըմբշապետի վրա, բարձրացրեց մեկ ձեռքով և հաղթեց։ Մարդ ուղարկեց թագավորի մոտ, թե՝ սպանե՞մ արդյոք, թե գցեմ գետին։ Թագավորը պատասխանեց, թե կանանցի է, թող հոգին հանի։

Այս ամբողջ ժամանակ, մինչ հարցումը գնաց և պատասխանը ետ եկավ, ըմբիշը գտնվում էր աղջկա բարձր պահած բազկի վրա։ Թագավորի պատասխանը լսելով , զարկեց գետին և սպանեց նրան։

Բոլորը զարմացան, իսկ մյուս երեսունինը ըմբիշները այլևս չեկան, որովհետև վախեցան և ամոթով ետ դարձան Սուլթանի մոտ ու պատմեցին եղելությունը։ Թագավորը և իշխանները աղջկան մեծամեծ պարգևներ տվեցին։ Մի ժամանակ այսպիսի քաջեր էին գտնվում Սիս քաղաքում և Կիլիկիայում, իսկ հիմա զրկված ենք թե թագավորներից և թե իշխաններից։

Այս եղավ 1387 թվականին։ (Ջ. № 515, էջ 27բ—28 բ։ Ըմբիշների և ըմբշամարտերի մասին ակնարկներ տե՛ս Ա՝. Պ, 45. ԴԱԳՍ, էջ ի. վԲ, 58. ԳՏՆ, 240)։

103. ՍԱՆԱՍԱՐԻ ԵՎ ԲԱՂԴԱՍԱՐԻ ՄԵՆԱՄԱՐՏԸ

Մնացին Հաճխթամար, ուրենց քեռխոր տան մեչ։
Ավուր մեկին որ էտա քաղերու մեչ կը խաղան,
Կը խաոնեն խըտ իրար, խեմ՝ զրխմ ո՛ր մեկն ա։
Որ ծեռ թաղին հիրարի փողպատ,
Ջուր հիրիկուն զիրար չբխշըփեցին.
Նա՛ էն կանա վըր էնոր,
Նա՛ էն կանա վըր էնոր։
Հիրիկուն թողին, էկան տուն։
Էլան, ընցկոն մաղաթ ինկավ մըչ էնոնց սրտին.
Ճամբաթ իրարի կ'ասեն.
—Վաղ է՛լ մ' գանք, խաոնե՛նք հիրար.
Եսեմ՝ ո՛ր ըզվոր տը տանա գետին։
Խըլիսուն շոտ էլ մ' էլ կ'ելնեն, կ'երթան.
Քիչ ըմ պղինձ կը քաղեն, կ'ուտեն,
Էլ մ' էլ կըխաոնեն խըտ իրար։
Գոլաշ կը պռնեն. չուտ կեսօրին չըն ի՛գա։
Մեր կ'ասա. «ի՞նչ էլավ, էտոնք չեկան»։
Որ տանեն էլավ, էտոնց ծեն ինկե քաղեր,
Գետին տանդ կ'առնի։
Կ'երթա, կը տեսնա էնոնց հաղ,
Մնկներ կը տփա, կանգամ կը կոտրի,
Կը նստի, թամաշա կ'ենա։
Ջուն հիրիկուն կը կռվեն,
Նա է՛ն զեն կը հաղթա,
Նա է՛ն զեն կը տանա գետին։
Հիրիկուն կը թողնեն, կը գան տուն.
Ինչ որ կ'ասեն, մեր կը լսի։
Էրկու ախպեր հիրարի կ'ասեն.
—Վաղ մեր էրկսից ո՛ր ըզվոր տանա գետին,
զվիզ կտրա՛։
Էնկանդար ինչ նեղացած, զիրար տրորած,
Մեկ մեկելի աչքեն էլած,
Կուզեն, մեկ ըզմեկ սպանեն։
Էկան տուն, քնան չուր խըլըսուն։
Էլան, խաց կերան, գացին։
Գացին էլ ըմ ուրենց տեղ,
Ծեռ թալին խըտ իրար, առին կռիվ։
Մեր գընաց խետքեր.
Նստավ էնտեղ, չուր կեսօրին թամաշա էրաց։
Տեսավ, որ Բաղդասար նվազավ,
Ոժ պակսավ, առեց հաղթվել։
Մեր էլաց, բռռաց ուր ծենով, կանչեց.
«Օ՛ սարեր, օ՛ քարեր, օ՛ թփեր,
Ջա՛յր տարեք քեռուն,
Թրխ գա՛, խաոնի ուր փալևանքտերուն»։
Մեկ սըհաթ էլ թամաշա էրաց.
Տեսավ, որ Բաղդասար գախ ա՝ ինի։
Էլաց ու կանչեց.
«Օ՛ ծովեր, օ՛ տընդըղներ,
Ջա՛յր տարեք քեռուն։
Թրխ գա՛, խաոնի ուր խորզեքտերուն»։
Քիչ մ' էլ մնաց, տեսավ՝
Սանասար զԲաղդասար եթալ գետին.
Ծեռ պարզեց խըտ թուր, որ առներ, վիզ կտրեր,
Մեր ծծեր էխան տուս, վազեց, զինք էթալ վերեն։

Ասաց.—Մա՛րե, տվի քո՛ւ ծծերուն խաթըր, չըմ սպանե՛։

Էլա՛ն, էնոնց մոր խաթրին
Իրարու գըլո՛խ պաքեցին։
Էլա՛ն հա՛ռա՛ջվան ախպեր, էկան տուն։ (ՍՍ. ա. 882—884 (Գվշ.)։

104. [ՄԵՆԱՄԱՐՏ]

[Ղասաբ—օղլին] եդ գալիս [անմահական ջրի ու խնձորի պահապան] աղջիկը «աղաքը կտրեց, թողուց ոչ որ անմահական ջուրն ու խընձորը տանի, ասավ.—Արի կոխ ունենք, թե ե՛ս քի վեգձեմ՝ խու քու ջանը իմն ա, թե դո՛ւ վեգձես հա՝ էդ ջուրն ու խնձորը քի հալալ ըլի։

Սրանք իրար կալան. իգիթ Ղասաբ-օղլին իրեք հետ հե՛ գեղնի ճրկատովը տվուց, որ ամեն վեգձելով իրեք թիզ գեղնմը թաղվեց էդ աղջիկը»։ (ՀԺՀ, X, էջ 69 (Լո.)։

105. [ՄԵՆԱՄԱՐՏ]

...Լուսուն էլանք, ես ու փայլևան հասանք հիրար. ձեռ թալի, քիթ բըռնեցի, գըրկի գետին։ (ԷԱԺ, IV, էջ 157 (Ալշ.)։

106. [ՄԵՆԱՄԱՐՏ]

...էրկուսը [Նաշար-օղլին և օխտը թիզ միրուքավորը մի թիզ բոյավորը] առան իրար։ Նաշար-օղլին շլինքը օլորեց, տակը դրեց, քաշեց շլինքը կտրեց։ (Մրգ. II, 48 (Աշտ.)։

107. ՈՒՋԱ ՔԱՇԵԼ

Լոռիում գոտեմարտելիս, երբ ըմբիշը հակառակորդին փորով իր կոնքի վրա քաշելով և կռանալով ուժեղ թափով գետին էր տապալում, ուջա բաշել էին կոչում։ Այս ձևի ժամանակ տապալվողն ընկնելու էր մեջքին և տապալողը պետք է չոքեր նրա վրա։ (Դվ. ձ.)։

108. ՔՅՈՒՇՏԻԿ

Խուռն բազմության մեջ մոտավորապես հավասար ուժատուր ըմբիշների միջև տեղի ունեցող հատուկ մենամարտի մի տեսակը Վանում Քյուշտիկ էր կոչվում։ Այս դեպքում մենամարտողները մինչև գոտկատեղը մերկանում, ոտքերը բոբկանում և մի-մի պնդավարտիք կամ շալվար էին հագնում, որոնք դեպի վեր մինչև ծնկները ծալում էին։ Այսպիսի վիճակում ըմբիշները մտնում էին հրապարակ, ողջունում իրար և հասարակության։ Հրապարակում, որը շրջապատվում էր խուռն հասարակությամբ, ըմբիշներն այնուհետև աջ ու ձախ, շրջելով «ոտք էին բաց անում» և մի փոքր շունչ առնելով իրար չափչփում։ Ապա հանկարծ դեմ դեմի կանգնելով իրար ակնահար նայում և խոյանում էին իրար վրա, ձեռք-ձեռքի տված իրար գրկում, փաթաթվում, ոտք էին գցում, ոտք փախցնում և նորից բաժանվում։ Ապա հրապարակում բոլորապատ չափելով՝ իրար դեմ էին գալիս, սրտապնդվում, ջլապնդվում, ու դարձյալ իրար վազում, այս անգամ արդեն ավելի լուրջ ու բուռն ճիգերով։ Մաստիկ ճիգերով փաթաթվելով իրար, նրանք թև ու սրունքի խաղեր էին անում, մեկը մյուսին գետին տապալելու միջոցներ գործ դնում, և այն րոպեին, երբ հանդիսականներին այնպես էր թվում, թե իբր երկուսն էլ անպարտելի են, նրանցից մեկին հաջողվում էր ձեռք գցել մյուսի սրունքը, ուժով գետին տապալել հակառակորդին, հանդիսատես հասարակության մի մասի մեջ ծափ ու ծիծաղ և մյուսի մեջ տրտունջի ալիք բարձրացնելով։

* * *

Ընկերական շրջանում կիրառվող Քյուշտիկն էլ այս նույն օրենքներն ուներ այն տարբերությամբ, որ մենամարտողները ոչ թե մրցության ինչ-որ հանդես են բացում, այլ սովորական, շատ անգամ առանց դիտողների մի մրցում։ Այստեղ մենամարտողները չէին մերկանում, չէին բոբկանում կամ շալվարները վերև ծալում։ Բավական էր, որ մեկը վազեր դեպի մյուսը և նրանից անմիջապես ընդուներ մարտահրավերը, որպեսզի իսկույն ևեթ սկսվեր Քյուշտիկ թալելը, Քյուշտիկ կպնելը, այսինքն թևերով իրար գրկմրկելը, փաթաթվելը, իրար սրունքի ոտք գցելը, մեջքը գրկելը, կզվելն ու վեր կենալը, իրար տապալելով մեկը մյուսին տակն առնելը։ Եվ այսպես, տապալվողն ամոթահար էր լինում, իսկ հաղթողը հրճվում։

—Ես ու դուն Քյուշտիկ մը բա՛նենք, կըսեն՝ որչափ նո՛ր մարտասերներ, այնքան ավելի՝ հեքիաթներու միշտ կենդանի հերոսները...։ (Ախ. II, 315—317)։

109. ԳՈՒԼԱԾ ԲՌՆԵԼ

Սասնա կտրիճների մենամարտի ժամանակ հնարքները գրեթե բացակայում էին. մարտիկներն իրար գրկում էին և ձգտում ուժով հաղթել. մեկի աջ ձեռքը մյուսի ձախ ուսի վրայով և ձախը՝ մյուսի աջ թևի տակով ամուր գրկախառնված՝ մարտիկներն աշխատում էին իրար տապալել։ Հաղթանակը նրանն էր, ով հակառակորդին մեջքի վրա պառկեցնում և աջ ծունկը դնում էր կրծքին։ Ընդունված էր հաղթած համարել նաև կողքը գետնին հասցնելով։ (Պետ. ձ.)։

110. [ԸՄԲՇԱՄԱՐՏ]

Մարտիկը նույնիսկ փորին էլ ընկած լիներ, պարտված չէր համարվում. նրան պետք էր մեջքին պառկեցնել և պարտված ճանաչել։ Միմյանց խփելու և վնասներ հասցնելու իրավունք չէր տրված։ (Նաթ. 1941, № 1, էջ 30)։

111. [ԸՄԲՇԱՄԱՐՏ]

Ինչպես հնում, այնպես էլ 1825—1875 թթ. Մարաշում ևս հայերի ու թուրքերի մեջ տարածված էր ըմբշամարտելու սովորությունը։ Ըմբիշներն ընդարձակ դաշտի կամ պարտեզի մեջ հետաքրքիր բազմության ներկայությամբ, մերկացած, հոխորտ կեցվածքով ու շարժուձևերով ասպարեզ էին ելնում։ Եվ երբ մի ախոյան էր ներկայանում՝ ըմբշամարտում էին մինչև մեկի պարտությունը։ Հայ թե թուրք, յուրաքանչյուր թաղ ունեցել է իր ըմբիշը։

1870-ական թթ., օրինակ, հայոց անվանի ըմբիշներն էին՝ Հաճի Սարգիս Թոփուզյանը Չիչեքլի թաղից ու Մահտեսի Պողոս և Հաճի Գրիգոր Յաղուպյան եղբայրները՝ Քյոմպեթ թաղից։

«Սակայն, Մարաշի մեջ այս ըմբշամարտությունները այնչափ ալ ազատ չէին»։ (ԳՄ, 347)։

112. [ՄԵՆԱՄԱՐՏ]

Սեբաստիայում մենամարտիկները միմյանց հետ մրցում էին նույնիսկ ցուրտ ձմռանը։ Նրանք մենամարտի ժամանակ մինչև գոտկատեղը մերկանում էին։ Հասարակական վայրերում մենամարտը տեղի էր ունենում դավուլ-զուռնայի նվագի ուղեկցությամբ։ (ՆՍ, 1958, № 38, էջ 12)։

113. ԳՈՏԵՄԱՐՏ

Ախալքալաքում, երբ գոտեմարտությունը կատարվում էր, սովորաբար, միևնույն գյուղի երիտասարդների միջև ուժերը չափելու նպատակով՝ մարմնամարզություն էր, բայց հայտնի փահլեվաննները երբեմն գնում էին հարևան գյուղերը՝ այնտեղի անուն վաստակած ըմբիշների հետ մրցելու, նախօրոք գրազ գալով՝ մեկ ոչխարով, մոզիկով, երբեմն էլ դրամով։ Այստեղ արդեն մարմնամարզության սահմանները խախտվում էին և վերածվում եկամտի աղբյուրի։



Նկ. 16. Մենամարտի պահերից մեկը (բնագիր № 113)
Լուս. Մ. Քթոյանի

Մրցումը կատարվում էր գյուղից դուրս՝ կալերում և կանաչ գետնի վրա, երբեմն մինչև իսկ մերկ իրանով։ Հավաքվում էր մեծ բազմություն և մեկ կամ մի քանի հոգի կարգ էին պահպանում։

Մրցողները բռնում էին ամեն տեղից, շատ անգամ և շալվարի փողքերից։ Ժամանակը չէր սահմանափակվում, մինչև մեկն ու մեկը ուժասպառ եղածի թիկունքը գետնով տար։ Նրանց աչքերը լցվում էին արյունով, շնչառությունը ծանրանում էր. հետզհետե դիմում էին հնարքներիսա՛մթի, որը նրանց փորձի ու տեխնիկայի արտահայտությունն էր։ Այս անհամեմատ ազատ կոխն ուներ և իր կանոնները, բացառությամբ ամենակարևորի՝ որ նրանց կշիռը՝ ծանրությունը հաշվի չէին առնվում։ Մեկ էլ ահա, մեկը աջ ոտքը գցում էր մյուսի աջ ոտքին, և տապալում գետին կամ՝ բարձրացնում օդի մեջ և տալիս գետ-

նով՝ շրջապատի աղաղակի ու բացականչությունների տակ։

Հաղթողը հպարտ կանգնում էր հրապարակում և եթե շատ հոգնած չէր, նոր հակառակորդ էր հրավիրում։

Հազվագյուտ դեպքերում դրսից մրցման էին գալիս նաև կանայք։ Մշտական մրցման մեջ էին նաև անչափահասները, որոնք մարզվում, պատրաստվում էին ապագա գոտեմարտության կամ նույնիսկ գոտեմարտիկներ դառնալու համար։

Կոխի ժամանակ շատ անգամ նվագում էր դուռնան համապատասխան հատուկ եղանակ։ (ՀՄ. ՀԳԱ, IV, ձ., 237—239)։

114. [ԸՄԲԻՇ ԲԱՂԴԱՍԱՐԸ]

Տե՛ս № 571։

115. [ՄԵՆԱՄԱՐՏ ԴԱՎԹԻ ԵՎ ԽԱՆԴՈՒԹԻ ՈՒԶՆԿԱՆՆԵՐԻ ՄԻՋԵՎ]

Բազմաթիվ ուզնկանների հետ խանդութ խանումին ուղևորություն է ներկայանում նաև դյուցազն Դավիթը, բայց աղջիկը նրան պայմաններ է առաջարկում՝ ոչնչացնել ժոդահա ուզնկաններին, որպեսզի սրանք հայրենի տնից վրեժ չլուծեն։ Այս պայմանը, սովորության համաձայն, երբեմն ներկայացնում է նաև խանդութի հայրը՝ պալատական պաշտոնյաների հետ խորհրդի նստելուց հետո։

Դավիթը կատարելով այդ պայմանը և նրանց ներկայացնելով ուզնկանների (երբեմն և գևերի) գլուխները, նոր միայն ձեռք է բերում խանդութի հետ ամուսնանալու իրավունքը։

Ուզնկանների հետ Դավթի կռիվը դրսևորվում է ինչպես սրամարտի, այնպես էլ ըմբշամարտի միջոցով։

Դավիթ ըսեց.—Հիմի դու ինձի պըտի առնե՞ս։
Խանդութ խանըմ ըսեց.
—Լոռվա Համզի, Շապի Խորասանցո՛ւ գլուխ բերի՛ր,
Ես քեզի կնիկ, դու ինձի էրիկ։
...Դավիթ գնաց էտ մարդըկոց մոտ։
Ընտոնք ըսին, թե..Ինչի՞ հըմար էս էկե։
—...էկեր իմ, ձեր գլուխ տանիմ։
Շապի Խորասանցին ըսեց.
—Ծուռ Սրգոյի փոկերից ա, ե՛լ գլուխ կտրե։
...Ու առան իրար գիւլաշ։
Լոռվա Համզեն ու Դավիթ։
Էրկու սըհաթ գիւլաշ կպան,
Դավիթ վերուց, տվեց գետնով, գլուխ կտրեց։
Մեկել ափսեր էլավ,
Հըմա Դավիթ շուռ կողմից երես խաչ հանեց,
Առան իրար գիւլաշ։
Էրկու սըհաթ գիւլաշ կպան,
Էտոր էլ տվեց գետնով, գլուխ կտրեց։
...Դավիթ էրկսի գլուխ կապեց բռչամներով,
Էլավ ձին հեծավ, քշեցին, գացին։
[Խանդութը ծպտված դիմավորեց Դավթին,
Փորձեց նրա ուժը և]
...Գացին, հարսանիք բռնեցին։ (ՍՍ. բ. II, 516—518 (Ապ.)։

116. [ՄԵՆԱՄԱՐՏ ՍԱՆԱՍԱՐԻ ՈՒ ԲԱՂԴԱՍԱՐԻ ՄԻՋԵՎ]

Քառասուն Ճյուղ-Սամը քամու միջոցով բաղդասարին նամակ է հղում, որպեսզի սա գնա և նրան բերի Սանասարի համար։ Բաղդասարը սակայն, նամակն ստանալիս մոռադրվելով եղբոր հարսնացուին տիրանալ, աշխատում է սպանել նրան։ Այդ խոովքի մեջ եղած միջոցին բանից անտեղյակ Սանասարը նրան ուրախացնելու նպատակով ձիաթոխս խաղի է տանում. դրանից հետո ծագում է երկսի ըմբշամարտը։

[Սանասար]... Իլավ, առըց հիւր աղբեր, գինաց.
Զիանք խիծան, ձիաթոխս խաղացըն գիւրգով։
Էն ինչ Սանասարն ի, հանաք կանը,
Էն ինչ Բաղդասարն ի, սրտով կը զանի.
Գուրզ ձեռն ի, Բաղդասա՛րը էրկու աչքը՛ կը զանի,
Ան ինչ Սանասարը՛ գիւրզ բանձր կ՛ընցը։
Զուր կես օրին խաղցըն.
Զկերցըն մեկմեկը վերա.
Կես օրեն իջան, առըն քոդրը՛։
Սանասար վրցուց զԲաղդասար, էդիր գետըն.
Բաղդասարը՛ հաշ գնաց։ (ՍՍ. ա, 318—319 (Մկս.)։

117. [ՄԵՆԱՄԱՐՏ ՁԵՆՈՎ ՀՈՎԱՆԻ ԵՎ ԴԱՎԹԻ ՄԻՋԵՎ]

Ձենով Հովանն ու Դավիթը հանուն խանդութի մղվող կռվից հետո աննշան բանով վեճի են բռնվում և
...խոսք մ՛ էնու մոտեն, մեկ էնու մոտեն, կը խասին հիրար։

Ինչ Զենով Հովնան ա,
Սրտով կը զնանա, որ ըզխանդութ առնի.
Ինչ Դաւվիթն ա, թունա կ'անի խետ։
Դաւվիթ կ'ասա. «Չէ՛, նա ըզի տը սպանա.
Մեկ զեն թալիմ գետին, խենք»։
Ըզզենով Հովնան կը թալնա գետին։
Զենով Հովնան կ'ասա.
—Դաւվի՛թ, չէլնի՞ ձի տը սպանես։
Հնատե կ'էլնին վե,
Իրարի գլուխ կը պագին, կ'էլնին, կը գնան (ՍՄ. ա, 926 (Գվշ.)։

118. [ՄԵՆԱՄԱՐՏ ԴԱՎԹԻ ՈՒ ԻՐ ՈՐԴԻ ՄՀԵՐԻ ՄԻՋԵՎ]

Մհերը ծնվելու նախօրեին կամ ծնվելուց հետո,—նայած պատումներին, Դավիթը զանազան առիթներով երկար ժամանակ բացակայում է տնից։ Վեպի որոշ պատումների համաձայն նա վերադարձին իր համար մի երիտասարդ կին է բերում։ Արդեն մեծացած Մհերը պատահմամբ հանդիպում է հորը և այդ կնոջը տիրելու նպատակով մենամարտի է բռնվում նրա հետ։

Տաւվիթ շատ ճանապախ էկավ։
Մհեր տիսավ մանչ տաշտին՝
Գա խալխվար մարթ ըմ կը գա,
Մե խորոտ կնիկ ըմ գա հետն ա։
Կ'ասը.—է՛, խալուվո՛ւր,
Էտա խորոտ կնիկ դո՞ւր կը տանիս։
Կասը.—Կը տանիմ, զի՛մ խամար կը տանիմ։
Մհեր էսաց.—Չէ՛, ատ կնիկ տը տաս ձիկ։
Էսաց.—Տղա՛ տաւ տալ ճիժ իս, կնիկ ի՞շ տ'անիս։
Էսաց.—Չէ՛, աւը տա՛ս։
Տաւվիթ, Մհեր հանտեխ կը կռվին։
Մհեր կը վիրուցի զՏաւվիթ, կը զարկի գետին։
Որ կը զարկի գետին, կուղաշարք ըմ Տաւվիթին կը կուտրի։
Կ'ասը.—Վա՛յ, տղա՛, տու վի՞ր ժառանգն իս,
Զի գետին տվիր, զիմ կուղաշարք կուտրըցիր։
Կ'ասը—. Ցիս Սասնա Տաւվիթ՛ տղեն իմ։
Որ ըսաց՝ Տաւվիթ տղեն իմ,
Տաւվիթ թռավ, պըռնից ըծեռ Մհերին, ըսաց.
—Վա՛յ, Մհե՛ր, տաւ մահ չտիսնիս, ժառանգ չտիսնիս։
(ՍՄ. ա., էջ 646 (Մկս.). Համմտ. էջ 223 (Մկս.), ՍՄ, բ. I, էջ 193—194 ևն)։

119. [ՄԵՆԱՄԱՐՏ]

—...Էկել ես կնկանս փախցրե հերիք չի՛, դեռ հլա դո՞ւ ես մենծ մենծ խոսում։

...Հասան իրար։ Տղի վրա պրծնիլն ու Քոսին աղտիլը մի՛ն էլավ։

—Էս թա՛վուր չի, ասեց Քոսեն, արի ձիանոնցից վե գանք, կոխ պրծնենք. ո՛վ ում գեննովը տվեց, նրա արինը նրան հալալ ըլնի։ Ղա՞բուլ էս։

—Ղա՛բուլ եմ, ասեց, արի հմի էլ կոխ պրծնենք։


Կոխ պրծան։ Ջա՞նըմ-սան տղեն Քոսին որ չը վե կալավ բոյովը մին գեննովը տվեց՝ բըղկոնը բերնովը դուս էկավ։ (ՀԺՀ. IV, 61—62 (Ար.)

120. [ՄԵՆԱՄԱՐՏ ԲԱՂԴԱՍԱՐԻ ԵՎ ՊՂՆՁԵ ՔԱՂԱՔԻ ԹԱԳԱՎՈՐԻ ԿՏՐՀՃՆԵՐԻ ՈՒ ԱՌՅՈՒԾՆԵՐԻ ՄԻՋԵՎ]

[Բաղդասարը իր հյուրընկալ պառավին]
...Ասավ.—Գնա՛, [Պղնձե քաղաքի] թագավորին ասա՛՝

Իմ տուն մեկ ղոնաղ էկե,
Մըկա ուզում ա քու [Քառասուն Ճեղ Ծամ] աղջիկ ուզի։

Պառավ էլավ գնաց...
...Թագավորն ասավ.—Պառա՛վ, ի՞նչ կա, ասա՛։
—Իմ տուն մեկ ղոնաղ ա էկե, քու աղջիկն ուզում ա։
Թագավորն ասավ.—Պառա՛վ, գիտո՞ւմ ես, ինչ կա.
Ընձի փայլեվան ունեմ,
Թո գա՛, խետ գուլաշ կպնի.
Թե տվեց գետին իմ փայլեվանին,
Իմ աղջիկ կը տամ ընդրան։
Թե իմ փայլեվան տվեց գետին,
Ընդրան վիզ կը զարկիմ։
Դե՛, գնա՛, ջուղաբ տուր ընդրան։
Պառավ էկավ, ջուղաբ բերեց Բաղդասարին...
...էն առավոտ [Բաղդասարը] գնաց, գուլաշ կպավ։
Էրկու փայլեվան կար թագավորին,
Էրկուսն էլ տվեց գետնով,
Գլոխ իջացրեց թագավորին,
Թողեց, էկավ պառավի տուն։
Մեկ բուռ ոսկի տվեց պառավին, ասավ.
—Պառա՛վ, փայլեվաններին տվեր եմ գետնով։



Նկ. 17. Սասունցի Բաղդասարը մենամարտում հաղթում է Թագավորի փահլևանին
(բնագիր № 120)

Նկ. Ռ. Մնացականյանի

Դե՛, ղոչաղ էլ [եղիր], գնա՛. էս խետին ուզի թագավորի աղջիկ։
Պառավ ոսկիքն առավ, ուրախ ուրախ գնաց։
Թագավորը պերցրեց.—Պառա՛վ, հընչի՞ ես էկե։
—Թագավո՛ր, ասիր՝ իմ փայլեվաններին տա գետնով.
Հըմի տվեր ա գետին. էլ ի՞նչ ես ասըմ։
—Պառա՛վ,—ասավ թագավորը,—
Ունիմ մեկ ասլան, մեկ ղափլան.
Թէ էկավ, ասլանին, ղափլանին
Տվեց գետնով, կը տամ իմ աղջիկ.
Թև չը տվեց, դաթի կը ցրվին հիրաւուց, բոադ կանենն։
Պառավ դարձավ, էկավ,
Թև.— Որդի՝, էսպեսդ ա հրամայում թագավորը...
Բաղդասար էլավ, գնաց գուլաշ կպավ.
Ոտ դրեց, ասլանին էլ, ղափլանին էլ ճղեց, թալեց դեն.
Էկավ Թև.—Պառա՛վ, տվեր, ճղեր եմ, գնա էս խետին,
Գնա՛, թագավորին տե՛ս՝ ի՞նչ ա ասըմ։
Գնաց.—Թագավո՛ր, էս խետին ի՞նչ ես ասըմ.
Թև.—Իմ խոսքը խոսք ա, տվե՛ր եմ տվե՛ր ե՛մ։
(ՍՀ. բ. II, էջ 243—244 (Ար.)։

121. [ՄՀԵՐԻ ՄԵՆԱՄԱՐՏԸ ՔՈՒԼԸՆԿԻ ԴԵՎԻ ՀԵՏ]

[Քուլընկի դևի]... Բերած ավերից կերակուր էփին, խաց քաշին, կերան։
[Քուլընկի դևն] ասավ.—Անբախտութուն չեմ անի. էլի՛, գուլաշ կպինք.
Թև ե՛ս տվի գետին, կը սպանեմ.
Թև դու տվիր, իմ քուրը կը տամ քեզի։
...էրկսով հասան իրարի։
Մհեր վերցրեց դևին, տվեց գետին։
Ասավ.—Որ ուխտ եմ արե,
Իմ քուրը պտի տամ քեզի.
Ես էլ քեզի ախպեր ըլլիմ...։ (ՍՀ. բ. II, 308—309 (Ար.)։

122. [ՄԵՆԱՄԱՐՏ]

...Մի առ ժամանակ որ մնաց, Բաթման Ղլիճ փահլըվան էկավ էս թագավորի վրա կռիվ։
Ասաց.—Ձա ընձի զանիմ (ընկեր) բեր կռիվ էննենք, յա Թև չէ՝ քու աղչիկ առ ընձի։
...Գիր գրեցին Բաթման Ղլիճին, թե մեզի մի ամիս ժամանակ տուր, քեզի զանիմ տանք՝ կռվիք։
Բաթման Ղլիճ փահլըվան ասաց.—Մեկ մարդու չուխտմ՝ գոմեշ ունենա, մեկ լավ պախա, մեկ վատ, գարուն հելնի, թորկա հիրար, ո՞ր որի պըտի լարա։ Հալբաթ պըտի լավը վատին լարա. տար ընձի էլ էնոր հետ մե օթախի մեջ պախա, նոր թող կռվինք։
Թագավորը տարավ բաթման Ղլիճ փահլըվանին Քաջ Նուբարի հետ մե օթախի մեջ պախեց։
...Մեկ օր... Քաջ Նուբար, Բաթման Ղլիճ փահլըվան առան հիրար, որ գետին շուռ կիկեր էտոնց ոտի տակ։ Քաջ Նուբար մտավ Բաթման Ղլիճ փահլըվանի ընկի տակ, ղարկեց, շրջեց, թուրը քաշեց գլոխը կտրեց։ (Մրգ. III, 215—215 (Ապ.)։

123. [ՄԵՆԱՄԱՐՏ ԱՌՅՈՒՏԻ ՀԵՏ]


...Թաքավորի մասլահաթը էս էր, որ առավոտը փահլըվան ուզենք [աղջկա ուզնկաններից], կոխ պրծնենն։ Ուներ թաքավորին մի հատ ջառյուծ, կապած, խամ, որի վրին բաց թողա՝ կը ճղի։
...Առավոտը լիսացավ, թաքավորը [ուզնկաններին] կանչեց.—Պըտի փահլըվան բերեք, իմ փահլըվանի հետ կոխ բռնի, թե չէ գլխներդ կը կըտրեմ։
[Ուզնկաններից] ծառ քոքահան անողը գնաց նի մտավ մեյդան, ղոչաղ տղեն ձեռը քցեց ևառյուծին, քաշեց մեջ տեղից ճղեց, մի ոտը մի դին քցեց, մի ոտը մի դին։
Թաքավորն ասեց.—Հա՛յ, հա՛յ տարան իմ ախչիկը։ (Մրգ. I, 261—262 (Աշտ.)։

124. [ՄԵՆԱՄԱՐ]

Թագավորը [իր աղջկա ուզնկաններից] մի փահլևան ա ուզում, որ իր փահլևանի հետ կոխ բռնե։ Թոռչու տղի փահլևանը թագավորի փահլևանի ձեռը բռնում ա, որ հուպ ա տալիս, ձեռը ճռճռում փշրվում ա։ (ՀԺՀ, V, էջ 58 (Լո.)։

125. [ՄԵՆԱՄԱՐՏ ԴԵՎԵՐԻ ՀԵՏ]

...Դևը ասաց.—Աբի, կյուլաշ կպինենք։
Էկան՝ կյուլաշ կպան. Աղբեր տղեն դևին վերցրեց, դրեց գետինը, թուրը քաշեց, հանեց որ դևի վիզը կռեր։



Նկ. 18. Քաջ Նուբարը հաղթում է Բաթման Ղլիճին (բնագիր № 122)
Նկ. Ռ. Մնացականյանի

Դևը ասաց.—Իմ փայ քուրը պաղչեցի թագավորի տղին. էլ իմ վիզը մի՛ կտրի։
Խանեց, կայնացրեց, բերեց տունը։
[Թագավորի տղայի Իղբայրացու Աղբեր Տղեն] առավոտը դևի միջնեկ աղբորն էլ հաղթեց։
[Երրորդ օրը փոքրին] էլ որ հաղթեց, տվեցին իրենց քույրը, [որ տար թագավորի տղային]։ (ԷԱԺ, II, էջ 294 (Կտ.)։

126. [ՄԵՆԱՄԱՐՏ ՍԱՂՆԱՍԱՐԻ ԵՎ ԴԵՂԶՈՒՆԻ ՄԻՋԵՎ]

Էրկու ախպերով [Սաղնասարն ու Բաղդասարը] խեժան ձիանը.
Թագավորի աղջիկն էլ խեժըցըրին,
Քաղաքից ընկան դուս։
Ջուր կես օր ձիանք քշին,
Մեկ դուզ ճամբախ ընկավ դեմները.
Տեսան՝ մեկ սև ձիավոր
Էն տեխեն էկավ դպա դրանք.
Վերցրեց թե.—Դու քառասուն ճող-Ծամ ո՞ւր-եք տանում.
Իմ կռիվն ա, ձեր, ըստե պտի կռվենք։
Ցա՛ աստված ձեզի կը տա, յա՛ ընձի։
Բաղդասար հառաջացավ, որ էն ձիավորի խետ կռվեր,
Սաղնասար վերցեց.—Ախպե՛ր, դու շա՛տ էս կռվեր.
Դու քաշվե ղրաղ. ես դինջ եմ. ես գամ, կռվիմ խետ։
Սաղնասար էկավ, մեկ դրրբ զարկեց էդ ձիավորին։
Ձիավոր դարձավ Սաղնասարի վրեն.
Ջուր կես օրին կռվան, չը հաղթին իրարի.
Մեկ դրրբ զարկեց Սաղնասարին էն ձիավոր.
Սաղնասար՝ իր մոր ծծած կաթ պնչներից էկավ, կաթաց։
Սաղնասար վերցեց.—Ես ի՞նչ օրվա խաթեր եմ ապրըմ։
Հասավ էդ ձիավորին,
Ձիան վրից վերցեց, դրեց գետին.
Ջոք զարկեց սրտին, խանչալ քաշեց որ զարկի,
Տեսավ՝ էնի պառկած տեղը ձեռ գցեց յախեն.
Կոճակները որ արձկեց, ծծվերը թռավ դուս։
Ըդրա որ դոշը բացվավ, Սաղնասար ասավ.
—Ի՞նչպես դու օղուլ-ուշաղ իր, ես չիմացա։
Ասավ.—Ե՛ս էլ թագավորի աղջիկ եմ.
Ես օրթում իմ կիրե՝
Ինչ մարդ իմ քամակ տար գետին,
Ես ընդրան առնեի.
Դու ընձի մարդ, ես էլ քեզի կնիկ։
Սաղնասար թողեց, էլավ վեր, ասավ.—Քու անուն ի՞նչ ա։
Ասավ.—Դեղձուն խաթո՛ւն ա.
Էլան, էրկու ախպերով խեժան իրանց ձիանք...,
Առան, բերին Սասուն...։ (ՍՄ. բ. II, 245—246 (Ար.)։

127. [ՄԵՆԱՄԱՐՏ ԲԱՂԴԱՍԱՐԻ ԵՎ ԲՐՉԱՄԻ ՄԻՋԵՎ]

[Սաղնասարն ու Բաղդասարը] գնացին Բրչամ Թագավորու տուն։
Բաղդասար [Նրա Բրչամ աղջկան] ասաց.—Սաչի փուշուխ օտոսպի, տիե՛ ինչի՞ նամակ ես գրե՝ «Շատ բարև Սաղնասարին, Բաղդասարին, իլլաքի Բաղդասարին, Բաղդասարին»։
Ասաց.—Լավ իմ արև, տիսնաս, որ էս գըլխուց բերդ եմ շինե, ջանդկից՝ բադան։ Դե՛ էլի գիւլաշ Թալինք. Թե օր ես քե կոխեցի, քէ կը սպանեմ. Թե օր տիե՛ զիս կոխեցիր, ես քե կառնեմ։
Գիւլաշ Թալեցին չորս խինդ ժամ, էնպես օր աստծու խրամանքով՝ Բաղդասար ծեռ իթալ՝ ծիծ բռնեց և տփեց գետին։ Էտտեղից առեց, վերուցին ուրենց հարըստութեն, էկան ուրենց տուն։ (ՍՄ. բ. II, 560 (Վ.)

128. [ՄԵՆԱՄԱՐՏ ԴԱՎԹԻ ԵՎ ԽԱՆԴՈՒԹԻ ՄԻՋԵՎ]

Դավթի ու խանդութի ամուսնությունը,— որ տեղի է ունենում աղջկա հայրենի տանը՝ բացառապես տղայի միջնորդությամբ,— գրեթե միշտ նախորդում է այդ երկսի մենամարտը։ Այն մըղվում է խանդութի թշնամի զորքերի ու Դավթի կռվից անմիջապես հետո։ «Մարդանակ» շորեր հագնված-ծպտված ու զինավառված խանդութը ձևանալով օտար մի մարդ, կռվի վախճանից քիչ առաջ նա մեկնում է ռազմի դաշտ։ Նայած պատումների հաղորդումներին, խանդութը ռազմի դաշտ է մեկնում մի քանի առիթներով։
ա. Կռվից առաջ Դավիթը խնդրում է, որպեսզի խանդութը առաջինի սպանվելը լսելիս մեկնի կռվի վայրը և դիակը տեղափոխի, թաղի։ բ. Կռիվը երկար տևելիս խանդութի մեջ Դավթին օգնության ձեռք մեկնելու ցանկություն է առաջանում։

գ. Կռվել-մենամարտի բռնվել Դավթի հետ, վերջինիս ուժը փորձելու համար ևն։

Հերոսների միջև նախ տեղի է ունենում ձիամարտ, ապա՝ ըմբշամարտ։

Բռռաց խանդուտ խանում [Տղա Դավթին].
—Թայպիր տես, կռիվներս կռիվ ա.
...Գյուրզ թալին իրար։

Ասաց.—Արի, էլ գյուրզ չենք թալի իրարու, գյուլաշ կպնինք։ Գյուլաշ կպան[68]։
Էն ինչ խանդուտ խանում կը ճխտեր՝
Ջունի չոքեր Տղա Դավիթ կը խթվեր մեջ խողին.
Էն ինչ Տղա Դավիթ կը ճխտեր՝
Ջունի ճաներ խանդութ խանում կը խթվեր։
«Ջա՜նըմ, ասաց [Դավիթը], էսի ինձի նեղացրեց»։
Աղոթքն արեց, մի լյանկ տվեց,
Բերեց, տփեց գետին[69],

---

68 ՍՄ. ա. 216.—...Ձիանցտարուց էջան տակ, խասան քոշտարի. Դեն տարան, դեն բիրին... (Մկս.)։

ՍՄ. ա. 458—...խանդութ էն գաֆ կը վախեննա, կը բռռա. է՛, ձիավո՛ւր, մարդութեն սկուն չի՛, վուր ձիով կռվըն. էդա մարիֆատ ձիո՛ւն ի, քոն չի՛։

Որ գյուլ կտրըճ մարդ իս,
Իջնինք տակ, ձիանք թուղնընք,
Իս, գյուլ, գյուլաշ կպնընք։
Կ'ըսի.—Շա՛տ աղեկ։—Կ'եջնեն տակ։
Էրկուս քյոշտըրա կը բռնին, չոլը մութ կը տա.
Մե-մենկու կը տանին, բիրին։ (Մկս.)։

ՍՄ. բ. I, 191.—...էրգուք գաբրգըցին գիրար, գաբրգըցին, Դարան, պերին գիրար,—չե՛ղավ։ (Սան.)։

ՍՄ. բ. II, 609.—...Իջան ձիաններուց, մոտեցան չոխագուլաշ։ (Տրն)։

ՍՄ. ա. 751.—...Պայա էլան, գյուլաշ կպան, քյոշտրիկ արին...։

69 ՍՄ. ա. 39.—...Դավիթ զխանդութ խաթուն էզար գետին.

Չոքեր էզար վար սրտին։ (Մկս.)։

ՍՄ. ա. 217.—...Զխանդուխ խաթունն իտի գետը՛ն... (Մկս.)։

ՍՄ. ա. 458.—[Դավիթ]....զէն մարդ կը վիրցի,
Ջամկը վերա կը դնի գետին։ (Մկս.)։

ՍՄ. ա. 926.—Դավիթ ձեռ էզար փողպատ,
Ուժով մ'էզար գետին։ (Գվշ.)։

ՍՄ. բ. II, 157.—[Դավիթ]... ձեռ զանեց [խանդուդի] դոշի մեջը, վեկալեց խանդուդ խանըմին տփեց գետին... (Նբզտ)։

ՍՄ. բ. II, 349.—[Դավիթ]...վերցուց [խանդութին], տնկեց գետին...։

Ձեռ տվեց, որ թուրը քաշե[70]։
Խանդուտ խանում ձեռ թալեց,
Յախեն կտրտեց, ծծեր թռավ դուրս։
—Ա՜յ,— ասաց—լաքաթա՛ղանջըղ,
Գենա ինձի ինչըխ ես չարչրել։
(ՍՄ. բ. II, էջ 384—386)։

129. [ՄՆՆԱՄԱՐՏ ՓՈՔՐ ՄՀԵՐԻ ԵՎ ԳՈՀԱՐԻ ՄԻՋԵՎ]

Փոքր Մհերը մեկնում է Բաղդատ, խալիֆայի աղջկա՝ Գոհարի ձեռքը խնդրելու։ Խալիֆան իր և Մսրամելիքի զորքով նրա դեմ կռվի է ելնում։ Մհերը դիմագրավում և կոտորում է այդ զորքերին։ Գոհարը դյուցազնի ուժը անձամբ փորձելու նպատակով կռիվների ընդմիջումների ժամանակ երեք անգամ ծպտվում ներկայանում է Մհերին և իրեն ձևացնելով Գոհարի եղբայրը, վերջինիս կնության տալու համար երեք պայման է առաջարկում.—

ա. Իրար հետ գուրզով կռվել (ՍՄ. բ. I, 332).
բ. մենամարտել (ՍՄ. բ. I, 333) և գ. Մհերի մատանին նշան դնելով՝ նետը նրա միջովն անցկացնել (ՍՄ. բ. I 335)։

Ծպտված Գոհարն առաջին անգամ ներկայանում է կարմիր, երկրորդ անգամ՝ ճերմակ և երրորդ անգամ՝ սև շորերով (ՍՄ. բ. I, 332—334)։

...Գոհար լը...
...էգավ, զՄհերի չադրի դուռ կտրեց։
—Հա՛, ըսեց, Դավթի տղա Մհեր դո՞ւն իս։
Մհեր ըսեց.—Հա՛, ե՛ս իմ։
—Իմ քուր Գոհար օր էգեր իս տանիս, դո՞ւն իս։
Մհեր ըսեց.—Հա՛, ե՛ս իմ։
Ըսեց.—Դ'էլի, հեդ ընձի գուլաշ կըպինք։
Թա՛ ընձի գյուրգիր գետին,
Լուսուն իմ քուր Գոհար կ'իդամ քըզի, տանիս.
Ջգյուրգիր ընձի գետին,
Քու գլուխ, քու գյուրգով կը կտրիմ։
Յելան Գոհար ու Մհեր՝
Ինչ օր էրգու գըմշու ատան իրար։

---

70 ՍՄ. ա. 217.—...Զխանդուխ խաթունն իտի գետը՛ն,
Ջծիծ բռնից, քամից.
Ինչ քամից, իրեք պուտ արուն...
Էնու ծծեն թափավ գետը՛ն... (Մկս.)։

ՍՄ. բ. I, 191.—...Մեգ լը Տավիթ գանի գաբրգից կեգին, թուր հանից, որ փըրցըներ ըզկլուխ... (Սան.)։

Իրեք սըհաթ տարան, բերան.
Նա՜ էնի ընդոր զա՜րգեց գետին,
Նա՜՝ էնի ընդոր զա՜րգեց գետին։
(ՍՀ. բ. I, 333—334 (Ալշ.)։

130. [ՄՆՆԱՄԱՐՏ]

...է՜, այ տղա, ասեց ախչիկը [Ալմաստը], դու ինձ ախտեցի՛ր, վե գալ պտենք [ձիերից], ըստեղ կոխ պրծընենք (բռնենք). թե ըստեղ էլ ախտեցիր, զաթի ես քունը, դու իմը։

...Վրա պրծան հիրար. ախչկանը մի սամթ ուներ՝ հուսերից բռնած վախտը հինքը մեկնվըմ էր, տղին քցում։ Պըտրտվեց, պըտրտվեց, բռնեց տղի հուսերքիցը. տղեն տեհավ, որ մաննները մտել ա մսի մեջը, արինը տվուց գլուխը, հաշկերիցը կրակ թափեց։ Ա՜խ, ասաց, մի դնեմ ծնկանըս տակը...

Ախչիկը որ մեկնվեց, տղեն ծունկը դրուց սըրտին՝ թուրը քաշեց...։ (Մրգ., I, 91—92 (Աշտ.)։

131. [ՄՆՆԱՄԱՐՏ ՀԱՐՍՆԱՌԻՆ]

*Հասանքյանդ գյուղից հարսնառը գնում էր խաչիկ՝ հարս բերելու։ Ուլակերի աղբյուրի առուն դեռ չանցած, ուռի ծառի տակ, կալերի մոտ, մեր ճանապարհի վրա սպասում էր մեզ առույգ երիտասարդների մի խումբ։ Նրանցից մեկը չուխան հանած, թևերը վեր քաշած, գլուխը բաց, երեսը վառ, աչքերը փայլուն, այնպիսի դիրք էր բռնել, որ կարծես առյուծի նման պետք է հարձակվի իր որսի վրա։ Նրա ընկերները առանձին խնամքով նրան բռնած՝ ծանրաքայլ կերպով առաջ էին մղում։ —Տո, լա, ձիս բռնեք, ձիս բռնեք, մե ըշկացեք դար մեջքը քյանի տեղից կկոռեմ,—ասաց և ձիուց վայր նետվեց մեր խմբից մի առույգ, ուժեղ երիտասարդ։ Փոքր էր մնացել, որ երկու ախոյանները միմյանց կպչեին, բայց մեր խումբը բռնեց մեր երիտասարդին և ապա հանելով խուրջինից եփած միս, գաթա, հաց և գինի, հանձնեցին խաչիկի խմբին։ Սրանով վերջացավ մհնամարտության պատրաստությունը (Քաջ. Փ. 1881, № 4, էջ 81 (Դրլ.)։ Կարսի գյուղերի սովորույթի համաձայն, երբ հարսնառը այլ գյուղից հարսին դուրս էր հանում, ձմռան պայմաններում մի կտրիճ տղա կանգնում էր հարսնառի առջևը և ձյունով թևերը շփելով՝ առաջարկում էր կամ գոտեմարտող, կամ նվեր տալ (ԲՀ. ՀՄ. ձ. 228—229)։ Կարնոհայերի մեջ նման դեպքերում կըտրիճին խմիչքներով հարգելով և նրա ճակատը համբուրելով մաղարն անարգել առաջ էր ընթանում (Բ. ԺԽ. ձ.)։

132. [ՀԱՐՍԱՆԵԿԱՆ ԳՈՏԵՄԱՐՏԵՐ]

Բորչալուի գավառում պսակի երթին մասնակցում էր գրեթե ամբողջ գյուղը։ Բոլորին առաջնորդում էր դավուլ-զուռնան, ապա գնում էին մակարները, պարողները, գոտեմարտիկները, հետո՝ թագավորն ու թագուհին՝ կողք-կողքի, թաշկինակի ծայրերից բռնած։ Չանազան կտրիճներ ընթացքի ժամանակ գոտեմարտելու ցանկություն էին հայտնում. այդ դեպքերում պսակվողները պետք է սպասեին, մինչև մեկը մյուսին վայր գլորեր և խաչեղբայրը բաժաներ նրանց՝ երկուսին էլ համբուրելով ու մի քանի կոպեկ նվիրելով։ Ուրիշ անվանի մի ըմբիշ գալիս էր և ճանապարհի մեջտեղը, խաչեղբոր առջև չոքում, որով կամենում էր ասել, թե կամ իրեն հետ գոտեմարտելու խիզախություն ունեցող ըմբիշ դուրս բերեք, կամ նվեր տվեք։ Խաչեղբայրը նրան էլ էր գոհացնում, վեր բարձրացնում, հետը համբուրվում։ Նույնն էր անում նաև թագավորը։

Դսեղում մինչ եկեղեցում խորհուրդն էին կատարում, դրսում փոքր-ինչ հեռու, դավուլ-զուռնի առաջնորդությամբ մակարները միմյանց հետ գոտեմարտում էին։ Պսակից հետո նույնն էր տեղի ունենում՝ այս անգամ արդեն փոխած ճանապարհին, մինչև որ հասնում էին նորահարսի տունը (տե՛ս Ա.Հ., IX, 234—235)։

Վայոց ձորում պսակից վերադառնալու միջոցին գոտեմարտերն ու հրացանաձգությունը ավելի սաստիկ բնույթ էին կրում։ Շատ անգամ գոտեմարտել առաջարկող կտրիճների հետ ստիպված էին ըմբշամարտել մակարները, որի պատճառով ընթացքը դադարում էր. հարսնևորները շրջան էին կազմում ու գոտեմարտիկները փորձում էին իրենց ուժը. եթե հրավիրող գոտեմարտիկն էր հաղթում, քավորը նրան իբրև տուգանք նվեր էր տալիս, իսկ եթե մակարը՝ մի բաժակ գինի էին տալիս, և գովաբանելով նրան, անցնում էին առաջ (տե՛ս Ա.Հ, XIII, 159, 161)։ Նույնը տեղի էր ունենում նաև Նոր Բայազետում (տե՛ս Ա.Հ, XVI,

26), Սիսիանում (ել. Ս. Ա. III, 223), Ախալքալաքում (ել. Ա, I, 259), Կաբսում (ԲՀ, ՀՇ, ֊. 130) ևն։

133. ԱՎՇՈՒՐՄԱ ԵՎ ԿՇՏՈՒԿԻ

Էջմիածնի շրջանի Հայթաղ գյուղում (ուրմեցիներ) պսակի արարողությունից հետո հարս ու փեսայի առջև կտրիճներից մեկը եկեղեցու դուռը բռնում և գոտեմարտող կամ նվեր էր պահանջում։ Հարսնեաերը մենամարտող տալու դեպքում նվագախումբը գոտեմարտի եղանակ էր նվագում։ Գոտեմարտիկները աքլորակռվի ձևով վրա էին պրծնում, փաթաթվում, քանդվում և նորից բռնում։

Բռնում էին ավշուրմա և կշտուկի։

Երբ հաղթողը դուռ բռնողն էր լինում, փեսայի հայրը դրամական նվեր տալով՝ պսակվողներին դուրս բերելու իրավունք էր ստանում։ (ՀԱվ. № 106, էջ 210—211)։

134. [«ԳՈՏԵՄԱՐՏ» ԱՄՈՒՍԻՆՆԵՐԻ ՄԻՋԵՎ]

Նորապսակները փեսայի տան բակը հասնելուն պես սովորույթի համաձայն տղայի ծնողների միջև, պսակվածների առաջ տեղի էր ունենում կեղծ գոտեմարտ։ Գոտեմարտի նպատակն այն էր, որ կինը ամուսնուն անպայման տապալելով՝ չոքեր նրա կրծքին և խեղդոտելով հպատակություն պահանջեր։ Ամուսինը պարտավոր էր հնազանդվել։

Հարսնեորները, մանավանդ մակարները միշտ միջամտում և ամուսնուն բռնելով, ոտը քաշելով, նրան ուժազրկելով ապահովում էին կնոջ հաղթանակը, որը հանդիսատես ամբողջ հասարակությանը մեծ հաճույք էր պատճառում։

Գոտեմարտին զուգակցում էր կոխի եղանակը, որ կատարում էր նվագախումբը։

Այս սովորույթը անցյալում տարածված է եղել Հայաստանի գրեթե բոլոր վայրերում, իսկ մինչև 1940-ական թթ. ամենից շատ հարատևում էր ամբողջ Արարատյան դաշտում, Աշտարակի, Կոտայքի և մի քանի այլ շրջաններում։

Գոտեմարտի մեղմացված ձևը որոշ վայրերում ամուսնու կողմից կնոջը շալակելն ու պարելն էր կամ նրան համբուրելը։ (Բ. Ժխ. ձ.)։

135. [ԿՈՒՆ ՀԱՐՍԱՆԵԿԱՆ]

...Ընչանք հորսի հավերը հավաքվելն ազապ տղերքը թագավորի ազիզ խաթեր համար իրանց ղոչաղությունը շհանց տվին, ուժերը փորձեցին։

Երկու երկու դուս էին գալի մեյդան ու կոխ պրծնում (ըմբշամարտում)։ Հառաջ փահլևանի (ըմբիշ) պես մի քանի հետ պտիտ պտիտ էին անում, քաղցր ծիծաղն երեսներին ծլունդ-ծլունդ էին ըլնում, մոտ գալի, աղպոր պես ձեռներն իրար դոշի տալի, յա թե չէ՝ մին մըրնի ուսը բուռն անում ու բաց թողում, իրար ուժ շհանց տալի, հետո քիչ քիչ մոտ գալի իրար բռնում, թափէ թափ տալի, ոնց որ երկու ղոչ բերես մեջտեղ կռվացնես. մին մըրնի լինգ էին քցում ու իրար քաշքշում։

Ազապ աղջկեքանց թամաշեն հո, որ էս վախտին կիտուկ դուս են գալի և հարսի օթախիցը, քունջ ու պուճախից թաքուն թաքուն մտիկ տալի, մեր ղոչաղների էշխը բերում, տաքացնում, ուժ էր տալի։

Վեր ընկնողի անումը խեցատի պես կոտրվում ա։ Թե մի աղջիկ էլ մտքումն էն տղին սիրում ըլնի, սիրտը կոտրում ա, իր խորհուրդն անկատար ա թողում, համա մեր սիրով ջահելներն ե՞րբ կը թողան իրանց ազիզ հընկերի անունը կոտրիլ։ հենց որ մինը վեր ա ընկնում ասում են՝ ոտը սոտ պրծավ (սայթաքեց) յա թե չէ մեջքը գետնով չի դիպավ ու էն հաղթվողի սիրտն ուրախացնում։

...Սոսի թշնամիքը՝ վարդիթերին ուզողները քշեր ցերեկ աշխատանքի միջի են, բալքի էս թավուր տղի անումը կես փող շինեն։

...Գիտեն, որ Փարպի մի թուրք կա փահլևան, դեռ նրա թիկունքը գետին չի տեսել, գնացել են մի բոլուկ (բավականին) փող մասրաֆ արել (ծախսել), առել էկել, որ նրա հետ մեյդան մտցնեն։ Գեղումն ինչքան թայդաշներ (հասակակից) կան, քոմմա հավաքել են թամաշի համար, որ [Սոսին] լավ խայտառակեն։ Էլ չեն համարձակվում, որ աշկարա ասեն, թուրքին մեջ տեղը կաննացրել են ու ասում.—Տղա կասենք նրան, որ սրա հետ կոխ պրծնի, ի՞նչ բան ա անզոռների միջին պարծենալն ու էս թավուր տեղումը հեռու փախչիլը։ Ասում ա. «Փա՛րչ, քեզ ասեմ, կուլա՛, դու լսի՛ր»։

Սոսն առանց էն էլ գիտեր, որ դրանց միտքն իրա վրա ա։ Տեսնում ա, որ թուրքը խորոզլամիշ

ա էլել (գոռոզացել), կռները քցելով դես ու դեն հպարտ հպարտ ման ա գալի ու մարդ կանչում, որ հետը կոխ պրծնի, սիրտը վեր չի կալավ մեր Սոսի, արինը կռներումը տաքացավ, ջանը կրակ ընկավ։

—...Մեյդան բաց արե՛ք, գոռաց [Սոսը] ու իոթորիկի նման մեջ տեղ ընկավ շորահան էլած...։

...[Հակառակորդը] թե ամանչեր ո՛չ, վեր կընկներ համա ի՞նչ, փող էր առել, հո կարալ չէր հետ դառնալ. մին էլ, որ մի անումի տեր էր, պտի ցեխը կոխե՞ր։

...Թուրքը հենց ուզեցավ մոտ գալ, յա՛ Ալի՛, Մահմատ փեյղամբա՛ր, Հասա՛ն, Հուսեի՛ն ասեց ու վրա քշեց, մեր կտրիճ Սոսը ծունկը տվուց գետինն ու ձեռը քցեց թուրքի ուսը, հենց շըպըրտեց գլխովը, որ էրկու գազ հեռու գետնի հետ հավասարվեց։

Հենց ուզեցավ Սոսը չոքը գետնիցը կտրիլ, թուրքը մին էլ վրա էկավ։ [Այս անգամ Սոսը] բանձրացրուց դրան մին էլ, հենց քցեց, որ գլուխը մի քանի տեղից պատռեց։

...Գարեգինն էն սհաթը վազեց, պաչեց իր սիրելի ախպոր [ընկերոջ] ճակատը... [հարսանիքի] թագավորն էլ եկավ պռոշտի արուց ու իր ձեռովը մի թաս գինի թավազա արուց։ Դարդիմանդ տղեքն էլ էկան պռոշտի արին ու Գարեգինին աչքալիս խոսացին։

...Սոսը գնաց, [հակառակորդին] վեր կացրուց..., գոտիկը հետ արուց, կապեց գլուխն ու ճամփու քցեց...։

Կոխ պրծնիլը որ վերջացավ, յալլին սարքեցին ու ազապ տղեքն իրանց սրտի ուզած մի յալլի խաղացին։ (ՊՍՎ. 414—419)։

136. [ՀԱՐՍԱՆԵԿԱՆ ԳՈՏԵՄԱՐՏ]

Համշենի հայերի մեջ հարսանեկան գոտեմարտը տեղի էր ունենում մերկ, առանց շապկի, միայն վարտիկը կամ շալվարը հագին։ Նախ մի քանի րոպե իրար բարևներ ու «թեմենաներ» էին տալիս, պտույտներ ու փորձեր անում իրարից բռնելու, մինչև որ երկար ժամանակ միմյանց քաշքշելուց հետո մեկին հաջողվում էր հակառակորդին գցել մեջքի վրա. դա համարվում էր հաղթության պայմանը։ Գցելուց հետո հաղթողը իսկույն վեր էր բարձրացնում ախոյանին և համբուրվում նրա հետ։ Ապա երկուսը միասին, ձեռքերը իրար ուսերին դրած, գալիս էին ու մի ոտքով ծունկ չոքում «աղաների» ու «իշխանների» առաջ և «բաշխիշ» պահանջում։ Ստացած փողը կիսում էին իրար մեջ, իսկ հաղթողը բացի դրանից, ստանում էր նաև մրցանակ դրված «յաղլուխը»։

Այս գոտեմարտից հետո հարսնաւը շարժվում էր դեպի հարսի հոր տունը, որտեղ ևս նման գոտեմարտեր էին կազմակերպվում։ (Մ. Ա՛Հ. IV, 140)։

137. [ՀԱՐՍԱՆԵԿԱՆ ԸՄԲՇԱՄԱՐՏ]

«Զեյթունի Պոզպայիր թաղին քահանաներեն Շամը Քեշիշյան Տ. [եր] Մարգար՝ 1840-ին յարփուզ գացած էր, ուր կը հրավիրվի թուրք հաճաղաններու հարսնիքի մը։ Շուկայի հրապարակին վրա ըմբշամարտության խաղեր կը կատարվեին ի պատիվ հարսնիքին. Տ. [եր] Մարգար ևս կը փափաքի մասնակցել։ Կը մերժե հագնիլ ըմբիշներու հատուկ յուղով օծված կաշիե զգեստը և չուզեր հանել իր վերարկուն անգամ։ Հոս կը գտնվի համբավավոր փեհլիվան (ըմբիշ) Զոփալին օղլու Մեհեմմեթ, որ յուղոտած կաշիե զգեստը վրան՝ ծափ զարնելով կը մոտենա հայ քահանային և կըսե. «Տոլան պագալըմ, fեշիշ էֆենթի»։ Տ. [եր] Մարգար կը պատասխանե, «տոլան, տոլան տա յանըմա կել»։ Թուրք ըմբիշը մոտենալուն պես քահանան «յա՛ սուրբ փրկիչը» ասելով, անոր ոտքեն բռնելն ու քովի կրպակներուն տանիքը նետելը մեկ կընե, իբր թե ըմբիշը տղոց խաղալիկ գնդակ մը ըլլար։ Չորս կողմեն. «յաշա՛, չո՛գ յաշա, Զեյթունլու քեշիշ պապա», կաղաղակեն և հարսանիքին տերը 20 ոսկի արժող ձի մը և ձեռք մը զգեստ կը նվիրե իկիթ քեշիշին։ ...Այս կտրիճ քահանան 111 տարեկան հասակի մեջ կը վախճանի»։ (ԳՄ, 346—347 (Մրշ.)։

138. ՄԱՐՏԱԽԱՂ—ՅԱՐԽՈՒՇՏԱ

Յարխուշտան սասունցիների ամենասիրած խաղերից էր, որ կատարվում էր բազմաթիվ հանդիսատեսների ներկայությամբ։ Խաղին մասնակցում էին պատանիներն ու հասակավորները, նույնիսկ ծերունիներն՝ անզուսպ հետաքրքրությամբ։

Յարխուշտա խաղացողները բաժանվում էին երկու բանակների, յուրաքանչյուրը 10—20 և նույնիսկ ավելի մարտիկներով, որոնք ճակատ-ճակատի կանգնած երգում, պարում էին և երեք անգամ ծափ տալուց հետո, հարձակում գործում իրար վրա, ուղիղ գծաշարով, համաչափ և ռիթմիկ, երեք անգամ բաց ձեռքերն իրար ուժգին խփում, անմիջապես ետ քաշվում, դարձյալ երգ ու պարով կրկնում նույնը։ Խաղը տաքանում, եռում էր, մինչև մի կողմն իրեն պարտված էր զգում։

Յարխուշտա խաղացողները իշխանական ռազմական տարազ էին հագնում, զինված դաշույնով, որ կապվում էր մեջքին՝ աջ կողմի առաջամասում։ Խաղը կատարվում էր ուխտագնացության ժամանակ՝ Անդոկի, Մարութա սուրբ, Ծովասարի և Մշո ս. Կարապետ վանքի տոներին, ինչպես նաև հարսանիքների և քեֆերի ժամանակ։ (Պետ. ձ.)։

139. ԸՂՏԱԽԱՂ ԵՎ ԳՈՏԵՄԱՐՏ

Հարսանիքում, հարսը փեսայի տունը բերելուց հետո, երկու տղա մի սանդուխքի երկու ծայրերից բռնում էին, որի վրա նախապես խոտով ու թրիքով մի ուղտ էր շինվում։ Մի քանի այլ տղաներ անճոռնի հագուստներով և խոտի խորոմները (կապոց) գլուխներին փաթաթած՝ ուղտը պահողների հետ գյուղից դուրս էին գնում։ Տղաներից մեկը ցատկում և ուղտի վրա նստում էր, իսկ մի ուրիշը իսկույն ցատկում ու նրան գլորում էր։

Ըղտախաղն այս ձևով շարունակվում էր, մինչև որ «կուգան գոմեշներ, որոնց ոգորման ի տես՝ ըմբիշք կը գրգռվին և կոխին գոտեմարտության»։ Այդ պահին գուսանները երգում էին. պատանիները դեմ առ դեմ շարված՝ մերթ իրար մոտենալով և մերթ իրարից հեռանալով Ծափ-ն էին խաղում և կամ թևերն իրար ուսի վրա դնելով կայթիկ-ն էին խաղում։ Իսկ կանայք և աղջիկները «կարմիր վալա հագած և լաչակ ի վեր ձգած, արծաթյա գագաթ ի գլուխ, բոլորաձև դառնալով դուրան պարը կը խաղան», իսկ տղաները՝ կռճիկ՝ վեգախաղի մի տեսակը։ (ԱԴ. I, էջ ձ-ձա)։

140. [ԳՈՏԵՄԱՐՏ ՇԱՆ ՀԵՏ]

Բորչալուի գյուղերում «կանչը» տված օրվա գիշերը թագավորի և իր մակարների քեֆը շարունակվում էր մինչև լույս։ Հատուկ այս օրերի համար վարժեցնում էին գամփռ շներին գոտեմարտել և մի քանի ձևեր անել և այդ ժամանակ շահ ձևացող դերակատարը գոտեմարտում էր այդպիսի գամփռների հետ ու բազմությանը ծիծաղեցնում։ (Տե՛ս ԱՀ. IX, 243)։

141. Կ Ո Խ

Մեզ մոտ՝ Շուլավերում կոխ անել-կոխ կենալ-կոխ կպչել միևնույնն է՝ ըմբշամարտել։ Այստեղ կա կոխի երկու տեսակը։

1. Կրոնակոխ է կոչվում այն, երբ կոխ կըպչողները բռնում են իրար օձիքից, թևերից և հեռու պահում ոտքերն ու մարմինը։ Այս կերպ կոխ անողները անպայման ունենալու են չուխա պինդ կտորից, պետք է ճարպիկ շարժվածք ունենան և հմուտ լինեն երկու ֆանդի մեջ՝ սարմա տալու[71] և քամանդ բերելու[72] մեջ։

2. Երկրորդ տեսակը կոչվում է խըտտակրի։ Սա այն կերպն է, որ կպչողներն իրար խտտում են, բոլորովին իրար կպած սեղմում։ Այս կերպ կոխն ավելի ուժի, քան ճարպկության գործ է։

Շատ կպչողներ թևը հակառակորդի թևի տակ են գցում, նպատակ ունենալով հակառակորդին բարձրից բերել, այդ հնարքով վայր գցել։ Բարձրից բերողը հակառակորդին բարձրացնում է իր գավակը և գլխի վրա բերելով տապալում է գետին։

Կոխը մեծ մասամբ տեղի է ունենում Բարեկենդանի և Զատկի օրերին։ (ԳԲ. III, № 18 (Շմ.)։

142. [ԸՄԲՇԱՄԱՐՏ]

Ըմբշամարտը Բարջանճում նույնքան հետաքրքիր էր անցնում, որքան գոմշակռիվը։ Տոն

---

71 Սարմա տալ, ոտ գցել՝ ոտքով հակառակորդի ոտքերի ներսից կամ դրսից կեռ տալ, հակառակորդին կողքի վրա վայր գցել։

72 Քամանդ բերել՝ հակառակորդի չուխայի օձիքից բռնելով տոփել պառչը և նրան թիկունքի վրա առնելով, բերել ուսովը, գետնին խփել։

օրերին հավաքվում էին կալատեղերը։ Կանայք, տղամարդիկ, մանավանդ մեծահասակ աղջիկները հանդիսատես էին իրենց կարիճներին (կրիճ)։ Կարիճներն իրենց վայելչակազմ ու թիկնեղ մարմնով հրապարակ էին գալիս լանջաբաց, կաշմբուռն բազուկներով ու բաց սրունքներով։

Հին սերնդի մեջ իբրև վիպականացած ըմբիշներ էին հիշվում Միսաքենց Տոնապետը, Խոճիկ Մղ. Մարսուպը, Միսաքենց Պետո-Տնկողը և հուրո Մղ. Խաչոն։ (Բրջ. 158)։

իրենց համագյուղացիների ու հարևան գյուղերի, և թե՛ իրենց հարսնացուների միջավայրում։ Հանդիսատես ուխտավորներից, գլխավորապես գյուղացիներից մի ընդարձակ կրկեսի ձևով շրջան էր կազմվում, որի մեջտեղը դրվում էր գոմշի գլուխ։ Ասպարեզ էին դուրս գալիս գուռաշ եկողները և պտույտ գալով գլխի չորս կողմը, աշխատում էին հարմարության համար մեկը մյուսին բռնել և գոտեմարտելով վայր գլորել ու չոքել հակառակորդի կրծքին, որ հաղթության նշանն էր։ Հաղթողն



Նկ. 19. Գուռաշ (գոտեմարտ հանուն գոմշի գլխի) (բնագիր № 143)
Նկ. Ռ. Մնացականյանի

143. Գ Ո Ի Ռ Ա Շ

Ուխտագնացություններին Նոր Նախիջևանի գյուղացիների գլխավոր զվարճություններից մեկն էր գոտեմարտը, որ «գուռաշ» էր կոչվում։ Գուռաշը կատարում էին գյուղացի կարիճները և դրանով քաջության համբավ էին ձեռք բերում թե՛

ստանում էր շրջապատողների խրախուսանքն ու գովասանքը և իբրև հաղթության նշան՝ տեր էր դառնում գոմշի գլխին, որը ուժի ու քաջության էմբլեմն էր։ Հին ժամանակներում, երբ այդ օրերին սովորություն է եղել գոմեշ մորթել, ասպարեզ է հանվել նաև գոմշի թարմ գլուխը. հաղթողն այն

եփել և վայելել է համագյուղացիների, կամ, լավ է ասել, իր թաղակիցների հետ ու զվարճացել, ուրախություն արել։ Իսկ XX դարի սկզբներին, երբ արդեն գոմեշ չէր մորթվում, ասպարեզի մեջտեղում սովորաբար դրվում էր գոմշի գանգը. հաղթողը քեֆ էր անում իր թաղի կորիճների հետ, որոնք մեծ պարծանք էին համարում, որ իրենց թաղն էր հաղթող դուրս եկել։

...Հաղթանակը տանող և անհաղթ մնացող «գուռաշ» եկողների անունները երկար ժամանակ մնում էին ժողովրդի բերանում և խոսք ու զրույցի առարկա դառնում։ Հին ժամանակներից, օրինակ պահվել է մի «Կարճուկ Մառթին» անունով կորիճի անուն, որ միշտ հաղթող է եղել և որի մեջքը, ինչպես պատմում են, երբեք գետնին չի կպել։ Այդ Մառթինի մասին մինչև անգամ երգ է հորինվել, որի մեջ «Կարճուկին» շռայլած գովասանքների հետ միասին կա և «գուռաշի» նկարագրությունը։ (ՆՇ. ԱՀ, IX, 35—37)

144. [ՏՐԴԱՏԻ ՄԵՆԱՄԱՐՏԸ ՅՈՒԼԻ ՀԴՏ]

(Փարմելիանոսը) պատմում է Տրդատի քաջագործությունների մասին. մանկության հասակում սիրում էր ձի հեծնել, կորովի ձիավարում էր, աջողակ էր զինաշարժության մեջ, սովորել էր պատերազմական արվեստը։ Հետո Պեղոպոնեսացոց Հիփիտեի հրամանի համաձայն՝ կրկեսի մրցության մեջ գերազանցեց Հռոդացի Կղիտոստրատոսից, որ միայն վզից բռնելով հաղթում էր, նաև արգիացի Պերասոսից, որովհետև սա եզան կճղակը պոկեց, իսկ (Տրդատը) երկու վայրենի ցուլերի եղջյուրը մի ձեռքով բռնելով պոկեց և վիզը ոլորելով ջախջախեց։ (Մխ. ՊՀ, 217—218)։

145. [ՍՄԲԱՏ ԲԱԳՐԱՏՈՒՆՈՒ ՄԵՆԱՄԱՐՏԸ ՅՈՒԼԻ ՀԴՏ]

...Եւ ահա նրան [Սմբատ Բագրատունուն] մերկացրին, հագցրին անդրավարտիք և գցեցին կրկես, որպեսզի գազաններին կեր դառնա։ ...Երկրորդ անգամ նրա վրա բաց թողին ցուլ. նա բռնեց ցուլի եղջյուրներից... Եվ սոսկալի գոռաց... Եվ ցուլը մենամարտի մեջ ուժեղ ցավ զգաց. իսկ նա ոլորում է պարանոցը և գլխի վրա կոտրում է երկու եղջյուրն էլ։ Ցուլը թողնում է և ետ-ետ գնալով՝ դառնում է, որ փախչի։ Իսկ նա հետևից վազելով՝ բռնում է պոչը, հանում է մի ոտի կճղակները, որոնք մնում են նրա ձեռքում։ Եվ ցուլը նրանից մի ոտքով բորիկ փախչելով հեռանում է։ (Սե. Պ, 57. վար. Ուե. ՊՀ, 112)։

146. [ՏՐԴԱՏԻ ՄԵՆԱՄԱՐՏԸ ՅՈՒԼԵՐԻ ՀԴՏ]

...Իսկ Տրդատը ապրելով Հռոմում՝ բազմաթիվ քաջագործություններ ցույց տվեց. նա երկու վայրի ցուլերի եղջյուրներից... բռնելով՝ հանեց՝ վիզները ոլորելով և ջարդելով հանդերձ։ (ՍՏ. ՊՏ, 53)։

147. [ՏՐԴԱՏԻ ՄԵՆԱՄԱՐՏԸ ՅՈՒԼԵՐԻ ՀԴՏ]

...Մինչդեռ Տրդատը զորեղացավ և այնտեղ նոր Հերակլես անվանվեց. որովհետև մի երկու ցուլերի եղջյուրները մի ձեռքով բռնեց և հանեց և հոդոգացուց ավելի մեծ ձրևաց, որը միայն վզից բռնեց. և Կրասոսից ավելի արիացավ, որը եզան կճղակը պոկեց։ (ՆՇ. ԲՀ, 515)։

148. [ՍՄԲԱՏ ԲԱԳՐԱՏՈՒՆՈՒ ՄԵՆԱՄԱՐՏԸ ԱՌՅՈՒԾԻ ՀԴՏ]

...Եվ ահա՝ մերկացնելով նրան [Սմբատ Բագրատունուն]՝ հագցնում են անդրավարտիք և գցում են կրկես, որպեսզի գազաններին կեր դառնա։

...Դարձյալ երրորդ անգամ նրա վրա բաց են թողնում մի առյուծ։ Եվ երբ առյուծը հարձակվում էր նրա վրա, աստծու շնորհիվ այնպես հաջողվեց, որ նա բռնեց առյուծի ականջը և հեծավ նրա վրա։ Եվ անմիջապես բռնելով խուչափողից՝ խեղդում է առյուծին և սպանում։ (Սե. Պ. 57)։


149. [ՍՄԲԱՏ ԲԱԳՐԱՏՈՒՆՈՒ ՄԵՆԱՄԱՐՏԸ ԱՐՋԻ ՀԴՏ]

...Եվ ահա՝ մերկացնելով նրան [Սմբատ Բագրատունուն]՝ հագցնում են անդրավարտիք և գցում են կրկես, որպեսզի գազաններին կեր դառնա։

Նրա վրա բաց են թողնում արջ։ Եվ երբ արջը գալիս էր նրա վրա, նա բարձրաձայն գոռաց, մղվեց դեպի արջը և յուր բռունցքով զարկեց արջի ճակատին։ Եվ հենց այնտեղ տեղնուտեղը սատկեցնում է արջին։ (Սե. Պ, 57)։

150. [ԿՈՍՏԱՆԴԻՆԻ ՄԵՆԱՄԱՐՏԸ ԱՌՅՈՒԾԻ ՀԴՏ]

...Լևոնի որդի Կոստանդինը, որ մի օրում սարսափելի գազանների դեմ մենամարտեց, առյուծին սպանեց այնպես, ինչպես այծերի ուլեր։ (ՂՎ, 143)։



Նկ. 20. Սմբատ սպարապետ Բագրատունու մեհնամարտը ցուլի հետ (բնագիր № 145)
Նկ. Ռ. Մնացականյանի



Նկ. 21. Կոստանդինի մեհնամարտը աղյուծի հետ (բնագիր № 150)

Նկ. Ռ. Մնացականյանի

...Սրա [Լևոնի որդի Կոստանդինի] մասին ասում էին, թե մի օրում յոթ առյուծ սպանեց։ (ՎՔ, 121)։

151. [ՍՄԲԱՏԻ ՄԵՆԱՄԱՐՏԸ ԿԵՆԴԱՆԻՆԵՐԻ ՀԵՏ]

Սմբատի մասին չարախոսեցին Շապուհ-Խոսրովի մոտ, որը նրա վրա գազաններ բաց թողեց. նա հարվածեց և արջին սպանեց. բռնեց առյուծի ականջներից և հեծավ նրա վրա։ Այս բոլոր հաղթությունները տարավ մի օրվա մեջ, իսկ ինքը կրկին մեծարվեց պարսից թագավորի կողմից։ (ՍԱՆ. Հ. 76)։

152. [ՎԱՐԱԶԴԱՏԻ ՄԵՆԱՄԱՐՏԸ ԱՌՅՈՒԾԻ ՀԵՏ]

Վարազդատայ փոխանակեալ,
Ցարշակունի զարմէ ցեղեալ.
Ի քաջութիւն գովաբանեալ,
Մինչ Տըրդատայ համանըմանեալ։
Զի մինչ մանուկ յՅելլադա լեալ,
Առեւծս յոքունըս կոտորեալ.
Այլ և ըզհինգ այր քաջացեալ
Ի յիրերաց վերայ սպանեալ։ (ՆՇ. ԲՀ, 532)։

153. [ՄԵՆԱՄԱՐՏ ՂՈՎՏԻ ՀԵՏ]

Թագավորի ցեղ, ասում ա Ղովտը, էս չելավ, ո՛նչ ես եմ քեզ աղաում, ո՛նչ դու՝ ինձ։ Արի, էս հետ էլ կոխ պրծնենք. դու քու թուրը դեն գցա, ես էլ իմ զըրխը։ Ով գեննովը տվեց, նա աղտել ա։

—Լա՛վ, ասում ա, արի։

Կոխ են պրծնում։ Ղովտը որ չի վրա պրծնում, տղեն վեր ունում գեննովը տալի, ընչանք գոտիկը խրվում ա գետին։ Հասնում ա, որ շլինքը թողնի՝ ջանըմ-սան տղեն ինչքամ ջանումը ջան կա, որ իրան չի թափ տալի՝ էլ եղ դուս ա գալի գեննիցը, վրա հասնում Ղովտին, որ չի վեր ունում նրա բոյովը մին տալի գեննովը, ընչանք ծծերը գեննի միջին մնկվում ա։ Վազում ա, թուրը բերում, որ գլուխը թողնի... Նոր տենում ա ի՛նչ Ղովտ, սիրո՞ւն ջահել ջիվան աղջիկ, [որ Ղովտի կերպարանք էր ընդունել]։ (ՀԺՀ, VII, 66—69 (Ար.)։

154. ԿԵԼԿՈՒՎ

Սասունում պահպանված էր կելկուվ (գայլակըռիվ) խաղը, որ տեղի էր ունենում գայլխեղդ շան և քաջ պատանու միջև։ Այն տեղի էր ունենում գարնանը, մի քարառատ տեղում, ուր անպայման ծառ էր լինելու։ Քանի որ պատանու և շան տիրոջ միջև այս պայմանավորվածությունը տեղի էր ունենում 1—2 օր առաջ, գյուղի հասարակությունն իսկույն հավաքվում էր խաղավայրը։ Պատանին զինվում էր քարերով. շան տերը էրս-էրս տալով շանը բաց էր թողնում նրա վրա. սկսվում էր կատաղի մենամարտը։ Խնայողություն չէր կարող լինել. պատանին կարող էր քարահար անելով շանն սպանել կամ ուժասպառ անել։ Պատանին օգտվելով այն հանգամանքից, որ շունը երբեմն իրեն նետված քարերի ետևից ընկնում և բռնելով խածում էր,— նորից ու նորից էր քարահարում։ Կատաղած ու վիրավոր կելը, նոր ուժով հարձակվում էր նրա վրա։ Երբ տղան էր հաղթում, շունն ուժասպառ վայր էր ընկնում, իսկ երբ կելին հաջողվում էր նրան գզել, պատանին անօգնական մնալով ծառն էր բարձրանում և պարտված ճանաչում։ (Պետ. Ա.)։

155. ԱՐՋԱԽԱՂ

Սասնա այս մանկական խաղը պատկերում էր արջի և հովվի կռիվը։ Մեկը ձևանում էր հովիվ և հագնում հովվական հագուստ, երկրորդը դառնում էր արջ՝ վրան մորթի գցելով, մյուսները՝ ոչխարներ։ Տեղի էր ունենում արջի և հովվի կռիվը, երբ արջը դաշույնահար ընկնում էր, ոչխարները ուրախության ճիչեր էին արձակում։ (Պետ. Ա.)։

156. [ՄԵՆԱՄԱՐՏ]

[Օխտը գլխանի դևը և Առչի տղեն] թուրները քաշին, վրա պրծան իրար։ Թրով իրար ընդար տվին, ճար չելավ։ Առչի տղեն ասեց.—Արի, կոխ կալնենք։

Կոխ կալան, Առչի տղեն ըտրան վեկալավ, տվեց գեննովը։ (Մրգ., II, 229 (Աշտ.)։

157. [ԳՈՄԵՇ ԳԼՈՐԻԼ]

...Մե օրմ՝ է աղըլին մեչը էտ հարսը մատակ կթած վախտը գոմշին մեկը քուքա, խաղա կը կթվող մատկին հետ, չի թողնե, օր խեղճ հարսը կթե։ Շատ օր զայլեն կը տանի, հարսին հերսը կհանե, կելլի էսիկ քուղան էնթուն կը թնե, ու կըսե։— Ծո՛ թերմաշ գոմեշ, հերիք ու մեկ չեղա՞վ, օր քթե կը փերես։

Բռնե կը կոտոշներեն, ճիտը կոլըրե, հա՛յդա բալամ, թապլե կը թա՛խ պատին էնթռուն...։ Կերասարն օր կը տեսնի, մատը կը խածե ու կըսե.— Ա՛յ, թե ինչի մեր քարղընին էման թեզ-թեզ կը կոտռեին։ (Բ. Ժխ. ձ. (Ախ.)։

158. ՄՈՒՇՏԵԿՌԻՎ

Մուշտեկռիվը այն ցպատմական խաղերից մեկն է, երբ զենքերը տակավին կատարելագործված չէին, և մարդը ստիպված էր իր զորավոր բազուկները կրթելու, որ հարկավորած ժամանակում գործ դներ իր թշնամու դեմ։

Երեխաները երկու խումբերի բաժանված, հարձակվում են միմյանց դեմ, և մուշտիների (բռունցքների) հարվածներով աշխատում են հետ մղել հակառակորդին, և երբ մի խումբը նահանջում էր իր բռնած դիրքից, մյուսները հաղթությունը տարած էին համարում։ (Ր. Հկ. 104)։

159. [ԹՈՆՑՔԱՄԱՐՏ]

Սասունում բռնցքամարտում էին պատանիները և երիտասարդները։ Զեռնոց չէին հագնում։ Մարտը տեղի էր ունենում երկուսի միջև. այն տևում էր այնքան, մինչև որ մեկը ուժասպառ՝ անձնատուր էր լինում։ (Պետ. ձ.)։

160. ԿՈՓԱՄԱՐՏ

Այս կարճատև բռնցքախաղին մասնակցում են տղաները անհատական կարգով, կամ զույգերի և խմբերի բաժանվելով, մեծ մասամբ ձմեռվա ամիսներին, կտուրների վրա, իսկ գարնանն ու աշնանը՝ դաշտերում՝ տաքանալու նպատակով։

Կանոններ.—*1.* Կռփամարտի ժամանակ խփել թույլատրվում է գոտկատեղից մինչև ուսերը։ *2.* Մրցակցել կարելի է միայն շրջանի մեջ. դրանից դուրս գալը փախչելու նշան է, երբ կանոնը խախտողը պարտված է համարվում։ *3.* Յուրաքանչյուր կռվից հետո կռփամարտիկները փոխվում են։

(Մ. Ժխ. ձ.)

Գ. ԼԱԽՏԱԽԱՂԵՐ

Լախտախաղերի անունների տարբերակները ծագում էին տվյալ աղգագրական շրջանում ընդունված այն բառերից, որոնք բնորոշում էին խաղի շրջագիծը և լախտը։ Այսպես, օրինակ, **Զվանոցիկ** և **Գոտու խաղ** անունները ծագում են խաղամիջոցների անուններից, **Գծալախտի** և **Տեղ խլուկ** ձևերը՝ շրջագծի անունից են։

Հակառակորդ երկու խմբերի ուժերի հավասարեցման պայմանն այն էր, որ երկու առաջնորդներին զույգ-զույգ վիճակահանության ներկայացողները տարիքով և ֆիզիկական ուժով հավասար լինեին։ Ստեղծված խմբերից երկու հոգի դառնում էին կենդանի «կարկին». մեկը բռնում էր պարանի մի ծայրից ու կանգնում հրապարակի կենտրոնում, իսկ երկրորդը բռնում էր պարանի մյուս ծայրին կապված գծիչ ձողիկը և ձգելով գծում շրջագիծը։ Կանոնավոր շրջագիծ ստանալու համար առաջինը պետք է գծողի շարժմանը համապատասխան պտույտ գործեր իր առանցքի շուրջը։

Երբ խաղացողները երիտասարդներ էին լինում, խաղը մեղմ կամ դաժան վարելու հարցի շուրջը պայմանավորվելուց հետո, վիճակ գցում և սկսում էին աղմկոտ խաղը։


Այսպիսի խաղը գյուղում մեծ հետաքրքրություն առաջացնելով՝ տղամարդկանց և պատանիների մեծ մասը հավաքվում էր խաղահրապարակը, որտեղ խաղի կանոնների խախտումները կանխելու և իրենց փորձը հաղորդելու համար ալևորները դատավարների դեր էին կատարում։

Ունենալով շարժման բազմակողմանի հնարավորություններ, լախտախաղը կոփում էր երիտասարդությանը։

161. ԼԱԽՏԱԽԱՂ

Տեղի էր ունենում գլխավորապես գարնանամուտին և հազվադեպ պարագայում՝ աշնանը, Ախալքալաքի Փ. Խանչալլի գյուղում։ Խաղում էին պատանի, երիտասարդ և երբեմն էլ միջին տարիքի տղամարդիկ, 2—20 հոգով։ Խաղախումբը բաժակ ու ալեյի միջոցով բաժանվում էր երկու մասի։ Ուժերի անհավասարության դեպքում առաջնորդները որոշ անձանց փոխանակում էին կա-

տարում։ Այնուհետև գծում էին խաղացողների թվի համեմատ մի շրջագիծ։ Թաց ու չորի միջոցով մի խումբը դառնում էր ներսի, մյուսը՝ դրսի։ Ներսիննները գծի մեջ հավասար հեռավորության վրա դասավորում էին հատուկ պատրաստած կեմե լախտերը (նկ. 22)։ Նայած կողմերի պայմանավորվածությանը, ներսիննները լախտերը կարող էին պաշտպանել առանց ոտքը վրան դնելու կամ երկու ոտքով վրան կանգնելու պայմանով։ Խաղն սկսվում էր «Թո՛չն է» խոսքով, որն ասվում էր դրսեցի ղեկավարի կողմից։ Դրսեցիները արհեստականորեն աղմուկ բարձրացնելով շրջում էին գծի շուրջը՝ ձախից աջ ուղղությամբ։



Նկ. 22. Կեմե լախտ (բնագիր № 161)

Նկ. Ռ. Մնացականյանի

Ներսիններից պաշտպանվելու նպատակով նրանք հեռու էին կանգնում և կիսակռանում էին և ձեռքերի շարժումներով ու փափախների թափահարումներով ձգտում խուճապահար անել կանգնողներին։ Լախտը տանելու և գծամիջիններին ծեծելու համար գոյություն ուներ երկու ձև։

Առաջին՝ երբ մեկ լախտն էր տարվում և երկրորդ՝ երբ բոլոր լախտերն էին տարվում։ Այս վերջին դեպքում գործի էին դրվում նաև տարված լախտերը, որոնցով մի կողմից հարվածում էին պաշտպանվողների սրունքներին և մյուս կողմից լախտերին՝ դուրս կորզելու նպատակով։ Պաշտպանվողը դուրս տարվող լախտը ներս տանելու իրավունք չուներ։ Դրսեցիները սովորաբար պաշարում էին ամենաթույլերին։ Լախտը փախցրնելու փորձերի ժամանակ ներսիննները ձգտում էին ոտքով խփել-հպվել դրսեցիների ոտքերին, պայմանով, որ խփողի մյուս ոտքը լրիվ շափով գտնվեր գծամիջին։ Այդ դեպքում դերերը փոխվում էին։ Իսկ եթե տանուլ տային, դրսեցիները նրանց գծի մեջ լախտերով անխնա կծեծեին այնքան ժամանակ, մինչև որ ծեծվողներին հաջողվեր ոտքով խփել նրանցից մեկի ոտքին, սրունքների սահմաններում։

Կանոններ. Լախտը տանելու համար գոյություն ունեին հետևյալ կանոնները։ 1. Փափախներով շոշափում էին կանգնողների աչքերը կամ փափախները գետնին քսում ու փոշոտված վիճակում խփում էին աչքերին, որը «աչք առնել» կամ «խափ տալ» էր կոչվում։ 2. Երբ որ մեկ-երկու հոգով պաշտպանվողի «աչքն առնում» էին, երրորդը լինգով նրա կողքին կամ գլխից ներքև որևէ տեղին ուժգին հարված էր հասցնում ու տապալում կամ լախտից հեռացնում։ 3. Ձոթմայով շեղակի հարվածում էին պաշտպանվողի սրունքներին և նրան գետին էին գլորում։ 4. Գծամիջից կամ դրսից հանկարծակի հարձակմամբ մեկն ու մեկին դուրս էին փախցնում՝ գերի էին վերցնում, որի լախտը պաշտպանում էին նրա մյուս ընկերները, մերթ այս, մերթ այն կողմը սլանալով։ Գերվածի լախտը տանելուց հետո գերին այլևս ներս գնալու իրավունք չէր ունենում, եթե ըստ պայմանավորվածության խաղը տանուլ էր տրվում մի լախտը տանելով. հակառակ դեպքում նա գերի էր պահվում մինչև բոլոր լախտերը տանելը։ 5. Փափախով «աչքն առնում» և ձեռքով հրում էին, լախտից հեռացնում։ 6. Մեկն ու մեկը ներսիններից մեկի հետ ձեռք էր տալիս, երբ դուրս քաշվողը գերվում էր, իսկ ներս քաշվողը՝ խփվում։ 7. Մեկը (կամ մի քանիսը) բերնքսող ձեռքերով հարձակում էր կատարում



Նկ. 23. Լախտախաղ կեմե լախտերով (բնագիր № 161)
Նկ. Ռ. Մնացականյանի

լախտի վրա, որը օգտվելով այն հանգամանքից, որ պաշտպանվողն իրավունք չուներ խփելու իր երեսին, իսկ ձեռքերին խփելը խաղի մեջ նշանակություն չուներ. ա. փախցնում էր լախտը կամ բ. պաշտպանողի ոտքից բռնում, քաշում էր դուրս և գերում էր նրան։ 8. Տարած լախտերով, ըստ հայեցողության, թույլ կամ ուժգին հարվածներ էին հասցնում պաշտպանվողների սրունքներին, որի պատճառով խաղացողները նախապես շալվարի տակից սրունքներին կամ միայն լախտը պաշտպանող սրունքին փաթաթան էին փաթաթում։

Հարձակման միջոցին գծամիջինները գործ էին դնում հետևյալ միջոցները։

1. Բռնել լինգը, վեր բարձրացնելով նրան գետին տապալել ու հարվածել ոտքերին։ 2. Պաշտպանել այն ընկերոջը և նրա լախտը, որին պաշարելը խաղը տանուլ տալու վտանգ էր խոստանում։ 3. Այն լախտը, որով ծեծում էին իրենց՝ մյուս լախտերը փախցնելու նպատակով, խլել և «գերել» այդ դեպքում «գերված» լախտը գցում էին գծի կենտրոնը և պաշտպանում։ 4. Ոտանց գծից դուրս գալու դրսեցուն բռնել, ներս քաշել և ոտքով խփելով խաղը շահել։ 5. Ձեռք տալու ժամանակ գերվելիս ուժով ետ գալ և գերողին ներս բերելով խփել նրան, որով և խաղը շահել։ 6. Ծեծվողները լախտերի հարվածներից պաշտպանվելու համար թևերի վրա հանդիսականներից վերցրած հաստ ու երկար շորեր էին առնում, առջևից գոգնոցաձև հագնում ու առաջ էին պարզում։ 7. Հարվածողները երբեմն ծեծում էին իրենց կողմից ապօրինաբար կամ ըստ պայմանավորվածության՝ երկարացրած և ծայրը թացացրած լախտերով։ Ապօրինության դեպքում վե-

ճեր էին առաջանում։ 8. Հարվածել կարելի էր պարանոցից ցած, մարմնի բոլոր մասերին։ 9. Մեծվողներն իրավունք ունեին բռնել և գերել լախտերը։ Դրսեցիները կարող էին գերված լախտը դուրս բերել մյուս լախտերի հարվածներով։ 10. Խաղի ընթացքում պատահմամբ աչքին կամ երեսին հասցրած հարվածը ներելի էր, իսկ դիտավորությունը, որը հնում հաճախ տեղի էր ունենում վրիժառության հողի վրա, առաջացնում էր սուր բանավեճեր և կռիվներ։

Դատավարություն.— Երիտասարդների և հատկապես մեծերի լախտախաղի ժամանակ մեծ հանդիսատես էր հավաքվում։ Դիտողները հաճախակի հորդորներով ու միջամտություններով խաղը բորբոքում էին։ Խաղին հմուտ տարիքավոր մարդիկ միջամտում էին խաղի ժամանակ ծագած վեճերին և, որպես տարերային դատավորներ, արդար վճիռ էին արձակում, որոնց և լսում էին խաղացողները։ (Բ. ժխ. ձ. համմ. Փ. Մշ., 1890, № 94)։

162. ՋՂԼԱԽՏԻ

Կոտայքում խաղում են գլխավորապես մեծահասակ տղաները գարնանը կալերում, բասմաների վրա կամ ընդարձակ վայրերում։

Երկու հոգի մայր են կանգնում, իսկ մնացածները հալա-հալա գալով բաժանվում են երկու հավասար խմբի։ Թե ո՛ր խումբը պետք է մտնի շրջագծի (ջղիզ) մեջ՝ որոշում են կամ չոփ պահելով, կամ այս խաղին հատուկ լախտիի միջոցով։ Դրա համար մայրերը բռնում են մի լախտի հակառակ ծայրերից և ձգում յուրաքանչյուրը դեպի իր կողմը, աշխատելով լախտին խլել մյուսի ձեռքից։ Եթե այնպես է պատահում, որ մայրերը հավասար ուժեր են և չեն կարողանում իրար հաղթել, օգնության են գալիս իրենց խմբի թվով հավասար անդամները։ Լախտին խլող խումբը համարվում է հաղթող և մնում է շրջագծից դուրս, իսկ մյուս խումբը մտնում է ներս։

Գետնին գծում են խաղացողների թվի համեմատ մի շրջագիծ (ջղիզ). սովորաբար կանոնավոր շրջագիծ գծելու համար լախտերը կապում են իրար, մի հոգի պահում է մի ծայրը գետնի վրա ձևացնելով կենտրոն, իսկ մի ուրիշը բռնած լախտի մյուս ծայրից մի սուր փայտի հետ գետնին հպած պտտվում է կենտրոնի շուրջը, ակոսելով գետնի վրա կանոնավոր շրջագիծ, ինչպես կարկինը։

Ներսի խմբի անդամները դասավորվում են շրջագծի վրա, երեսներով դեպի դուրս, իրարից 1,5—2 մ հեռավորության վրա, մի ոտքով կանգնում է գծի վրա, մյուս ոտքը՝ գծից դուրս և ոտքերի արանքում շառավիղաձև փռում են յուրաքանչյուրը իրենց լախտիները, ծայրերը (ճարմանդի կողմը) գծից մի ոտնաչափ դուրս դրած։ Դրսիննները դասավորվում են ներսիններին հանդիման և յուրաքանչյուրը աշխատում է իր հանդեպ կանգնած ներսինի լախտին փախցնել։

Դրա համար գոյություն ունեն հետևյալ կանոնները։

1. Դրսիննները իրավունք ունեն կամ ճարպկությամբ լախտին փախցնելու կամ նախապես համաձայնվելուց հետո իրենց հանդիման կանգնած ներսիննների ձեռքից բռնելու և գծից դուրս քաշելու, որով և լախտին հեշտությամբ վերցնելու։ 2. Ներսինը իրավունք ունի դրսինի ոտքը տրորել միայն այն դեպքում, եթե իր մի ոտքը գտնվում է շրջագծի ներսում։ 3. Եթե ներսիններից որևէ մեկին հաջողվում է ոտքով խփել դրսինի ոտքին, խաղացողները փոխում են տեղերը։ Իսկ եթե դրսինին հաջողվում է փախցնել ներսինի լախտին, սկսում է կա՛մ փախցրած լախտիով խփել մյուսինի մարմնի՝ նախօրոք պայմանավորված մասերին, կա՛մ երկու կողմն էլ գնում են իրենց ընկերներին օգնության։ 4. Լախտին տանողը իրավունք ունի իր լախտիով գետնին դրած մյուս լախտիին խփելով դուրս քաշել և հեշտացնել դրա փախցնելը։ 5. Երբ բոլոր լախտերը փախցնում են, սկսում են դրանցով խփել ներսիններին։ Այս գործողությունը այնքան է տևում, մինչև ներսիններից մեկին հաջողվում է խփել դրսիններից մեկի ոտքին, որով և փոխվում են խմբերի տեղերը։ (Բ. ժխ. ձ.)։

163. ՃՂԼԱԽՏԻ

Կոտայքում խաղի այս տարբերակը նույնն էր։ Մասնակցում էին 17—50 տ. տղամարդիկ։ Կաշվե գոտու ճարմանդը ներսի, իսկ ծայրը՝ գծի վրա էր լինում։ Վերջինս գծից մի քիչ դուրս էր գալիս։

խաղը դրսիններն էին սկսում։ Ներսինները դրսիններին կարող էին խփել գոտկատեղից ցած։ Դրսիններից ներսիններն կարող էին խլել գոտին ինչպես խաղի ընթացքում, այնպես էլ ծեծի ժամանակ և դնել այն շրջանագծի մեջ։ Երբ բոլոր գոտիները տանում էին և շրջագծում մնում էր միայն ետ խլված գոտին, ներսիններից մեկը դա վերցնում և ծեծում էր դրսիններին, առանց գծից դուրս գալու։ (ՂՂ. Ձ.)։

164. ՁՂԼԱԽՏԻ

Խաղում են 4—20 հոգով։ Խաղացողներից երկուսը մայր են ընտրվում և հալայ-հալայ գալով բաժանվում երկու բանակի։ Երբ դրսիններն ներսիններից մեկին քաշքշելով դուրս են բերում, այդ դեպքում նրան պահապան են նշանակում իրենցից մեկին և չեն թողնում մտնել շրջանի մեջ, մինչև որ նրա լախտը փախցնում են. այս դեպքում միայն արձակում են։ Երբ ներսիններից մեկը լախտը դրսիններից ետ է խլում, այն ժամանակ նա պահում է այդ լախտը, իսկ եթե բոլոր լախտերը փախցրած ժամանակ ներսիններից մեկը մի որևիցե լախտ ետ է խլում, այն ժամանակ այդ լախտը դնում են կրկին շրջանի գծի վրա՝ ինչպես առաջ։ (Բ. Մխ. 110—111)։

165. ՋՂԼԱՍՏԻ

Ղեկավարները մար են կոչվում։ Լախտի փոխարեն գոտիներն են դնում։ Փախցրած լախտով ծեծում են մյուսներին, մինչև որ բոլոր լախտերը փախցնում են։ (Բ. ԺԽ. Ձ.)։

166. ԼԱԽՏԻ ԿԱՄ ՁԻՁԱՎԱԽՏԻ

Վրաստանի Շահումավանում խաղում են միայն տղամարդիկ, որոնք հալա գալով բաժանվում են երկու խմբի, ամեն մի կողմը 3—4 ընկերով և մեկական մայրերով թուք ու ցամաք անելով խմբերից մեկը ներս է մտնում և մի-մի լախտ տակները դնում։ Խաղացողները չուխաների փեշերը վեր են քաշում կամ գոտկի տակ խրում։ Լախտը կամ գոտիկը ոտների տակից հանելու համար կամ թոլ են լինում՝ լախտը ոտների արանքից փախցնելով, կամ փռինչ են տալիս, տակից վերցնում։ Երբ մեկի ոտի տակից լախտը դուրս են տանում, կամ մայրն է ոտը դեմ անում, որ խփեն, կամ ինքը՝ տանել տվողը։

Հասակավորները լախտին անցյալում ավելի շատ խաղում էին Բարեկենդանի օրերին, մեծ պասին և գարնանը, որոնք իրար անխնա թակում էին կաշվե լախտերով։ (Գթ. III, № 18)։

167. ԳՈՏՈՒ ԽԱՂ

Ախուրյանում խաղը նույնն է։ Ներսիններն ու դրսինները ձեռք են տալիս, ներս քաշողը խփում է դրսինին գոտկատեղից ցած, բոլոր տեղերին։ Դուրս քաշվածը պահվում է, որպես գերի։ Ծեծն սկսվում է բոլոր լախտինները փախցնելուց հետո։ (Ախզ. Ձ.)։

168. ԳՄԱԼԱԽՏԻ

Խաղը նույնն է։ Մասնակցում են նաև աղջիկները։ Խաղացողների թիվը կարող է հասնել մինչև 20-ի։ Երբ ձեռք տալու ժամանակ ներսինին հաջողվում է դրսինին ներս բերել, բայց խփել չի հաջողվում, դրսինը խաղից դուրս է գալիս, բայց եթե ներսում նաև խփում է գոտկատեղից ցած, խմբերի տեղերը փոխվում են։ Երբ ներսիններից մեկին հաջողվում է խփել դրսիններից մեկին, բղավում է. «Ձղեց դո՛ւրս» ու բոլորը միասին դուրս են գալիս։ Լախտով խփում են պաշտպանների ոտքներին՝ պաշտպանվող լախտը դուրս բերելու նպատակով։ (Ախզ. Ձ.)։

169. ԼԱԽՏԻ

[Աշտարակում, Բարեկենդանի վերջին շաբաթին] բոլորը միասին ջահելացել, կայտառացել էին։ Պապիս պես պատվելի իշխանները կալերումը լախտի էին խաղում ու հաստ կտավե գոտկից ոլորած լախտն էնպես էին ֆռռացնում, իրար մեջքի կպցնում, որ մեջքի զոլն վեր էր կենում։ Տերտերն էլ վերարկուն ծալած մի կողմը դրած՝ կապի ծլրփան (լայնությունից շարժվել ու ձայն հանել) փեշերը կոկիկ հավաքած, գոտիկը խրած, էնպես է ծուլ ծուլ լինում ճժի բոլորքովը, որ կասես թե սա իրան կյանքում միշտ ըմբշամարտ է եղել, միմիայն լախտը, որ միջքախառն ուսագըլխին հասնում էր, զգում էր, որ էսպես բան իր օրումը չի տեսել։

— Դե օրհնած, մի քիչ էլ կարգիս խնայեցե՛ք, կամաց տվեք է՛, ասում էր մեր տեր հայրն ու էլ հետ թուչկոտում ճժի չորս կողմը, աշխատելով լախտը բռնողի ձեռքիցը խլելու։

—Ոչինչ տերտեր ջա՛ն, էսօր մուրախաս ա, բարեկենդան օրեր ա, խելքներս կորել ա, պատասխանում էին մեր իշխաններն ու իրանց խաղի հետ ընկնում։ (ՊՀԽ. էջ 76)։

170. ԿԱՐՊԵՏ ԼԱԽՏԻ

Տղաները 6—20 հոգով երկու խմբի բաժանվում և թաց ու չորով որոշում էին նստող ու ծեծող կողմերը։ Նստող խումբը նստում էր մի կապերտի վրա և վրան էլ առնում էր մի ուրիշ կապերտ։ Մյուս խմբի յուրաքանչյուր անդամ ուննեալով մի մի լախտ, սկսում էր հարվածել նըստողներին, իսկ վերջիններս աշխատում էին ծպտված կերպով հակառակորդներից մեկն ու մեկի ոտքին խփել։ Հաջողեցնելիս խմբերի դերերը փոխվում էին։ (Թ. Մխ. էջ 110—111)։

171. ՁՎԱՆՈՑԻԿ

[Մանկտիներն] անդիններն ալ «տուշ փետ», «թուփ» կը խաղան։ Ասոնք նայեն, որ մեծ եռ (գիծ) մը կլորաձև գծեր են, և մեկը ներս, մեկալոնք դուրս։ Ամենի ձեռքն ալ բուրա կա, կը զարնեն ներս կեցողին, իսկ նա եռի կեդրոնը կը դառնա և որին որ իր բուրան զարնե, ինքն կազատի, զարնվողն ներս կը մտնե. կարծեմ «կրակտարոց» կամ «չվանոցիկ» կըսեն սա խաղին։ (ԳՍ. Մն., էջ 61—62 (վ.)։

172. ԿՆՏ ԼԱԽՏԻ

Ախալքալաքում խաղին մասնակցում են 5—10 հոգի. խաղում են պատանի և երիտասարդ տղաները։ Նրանք գծում են մի շրջան, ապա թաց ու չոր անելով իրենցից մեկը մնում է գծի մեջ, թվով ընդամենը մեկ թուրայի վրա։ Մյուս բոլոր խաղացողները շրջապատում են գիծը և շփոթության մատնում կանգնողին, որպեսզի թուրան փախցնեն։ Թուրան փախցնողը բոլորին «քշում» է գծի մեջ ու սկսում է ծեծել նրանց։ Նա գծամիջիններին ծեծում է այնքան ժամանակ, մինչև ներսից մեկն ու մեկին հաջողվում է ոտքով խփել նրա ոտքին (խփողի մեկ ոտքը պետք է լինի գծամիջին)։ Այդ ժամանակ ծեծողը դառնում է թուրան պաշտպանող։

Դրսեցիներին, նայած պայմանավորվածությանը, իրավունք է վերապահվում խփել թուրան պաշտպանողին լինգերով, փափախներով և այլն, ապա կարելի է և հրելով խլել թուրան։

Կենտ լախտին խաղում են գարնանամուտին, ցանքսից առաջ։ (Բ. ժխ. ձ.)։

173. ՄՆՆԱՄԻՋԻ ԿԱՄ ԳՏԻ ՄԻՋՆՎ

Շահումավանում, բակում փոքր շրջագիծ են քաշում։ Մի տղա կանգնում է գծամեջը և լախտը կամ կաշվե գոտին դնում է ոտների արանքը։ Մյուսները միաբերան չարթո են բղավում ու աշխատում են ձեռքի շարժումներով կամ շրջանում կանգնողի թևերից ձգելով նրա ուշադրությունը այլ կողմը դարձնել, շփոթեցնել, լախտը ոտների արանքից հանել։ Ով լախտը հանում է, նա մյուսներին շրջանի մեջ է առնում և սրան-նրան թեթև խփում, մինչև որ իրեն ոտքով դիպչում են շրջանի միջից և խաղը նորից են սկսում։

Պատահում է, որ շրջանից որևէ մեկը լախտը խլում է և ինքը խփում մյուսներին։ Այսպիսով լախտը փոխն ի փոխ անցնում է կտրողներին, այսինքն ոտով խփողների ձեռներին, որպիսի կերպը ճով-ճովի է կոչվում։ (ԳԹ. III, № 18)։

174. ՁՂԼԱԽՏԻ

Խաղում են 3—7 հոգով։ Ներսինն ընտրելու համար քար են պահում։ Վերջին մնացողը մըտնում է ներս։ Դրսիններն նրան մեկական գոտի են տալիս։ Դրսիններից խփվողը փոխարինում է ներսինին, բայց փախցնողները լախտերով ծեծում են ներսինին (վառում են)։ (ՂՂ. ձ. Կտ.)։

175. [ՇՐՋԱՆԱՁԵՎ ԼԱԽՏԻ]

Ջանգեզուրում խաղը նույնն է։ Գորիսում ուներ Ջղլախտի և Սիսիանում՝ Թոխկա կամ Թխկի անունը։ Ներսիններն գոտիները կոլոլած դնում են շրջանի կենտրոնում։ Դրսիններն լախտերը տանելու նպատակով օգտագործում են գլխարկները՝ շշմեցնելու համար։ Կատարում են հանկարծակի հարձակում։ Փախցրած լախտերով ծեծում են ներսինին այնքան, մինչև որ սա մեկին խփում,



Նկ. 24. Կենտ լախտի (բնագիր № 172)

Նկ. Ռ. Մնացականյանի

դերափոխ է լինում։ Ապա խաղը նույնությամբ կրկնում են։ (Գխ. ձ.)։

176. ԿՈՒԺ ԿՈՏՐՈՒԿ

Խաղում էին Նոր Բայազետում։ Մեկը վիճակով մտնում էր թոկից գոյացրած շրջանի մեջ, որից բռնում էին մյուս խաղացողները և աշխատում դրանով հարվածել պարանի մեջ մտնողին։ Վերջինս աշխատում էր բռնել այս խփողներից մեկին, որով ստիպում էր նրան իր տեղն անցնել։ Պատահում էր, որ երբ շրջանի միջինը մոտենում էր սրան-նրան, որ բռնի, սրանք թողնում էին թոկը և փախչում, և երբ բոլորը բաց էին թողնում և թոկը գետին էր ընկնում, սա վերցնում էր, փոքր ինչ հավաքում և գցում փախչողների ետևից, ում որ դիպչում էր՝ նա էր գալիս պարանի մեջ մրտնում։ (Տե. ժխ. № 71, էջ 33)։

177. ՔՐԹԿՈՎԻ

Խաղացողները Ղարադաղում քար են պահում. վերջինս ում ձեռքը որ մնում է, նրա գլխարկը դնում են 5մ տրամագիծ ունեցող շրջանի մեջ, իսկ գլխարկատերը դրան պահակ է դառնում, կանգնելով գլխարկից 1մ հեռու։ Մյուսներն աշխատում են քացի տալով գլխարկը շրջանից դուրս բերել, իսկ տերն աշխատում է մեկն ու մեկին fn տալ։ Նա ում fn է տալիս, նրա գլխարկն է մեջտեղ դրվում և նույն ձևով շարունակվում։ (Եգ. 648)։

178. ՔՐԹՈՒԼ ՓՈՍԻ

Խաղի մասնակիցները քար են պահում. վերջինս ում որ մնում է, մտնում է 1մ տրամագիծ ունեցող շրջանի մեջ։ Մյուսներն սկսում են նրան ծեծել շրջագծի դրսից՝ ինչով որ կարող են։ Ծեծ-

վողն աշխատում է նրանց fn տալ. նա fn ստացողի հետ փոխում է իր դերը։ (Եգ. 647—648 (Ղրդ.)։

179. ՏԵՂ ԽԱՂԻԿ

Խաղը նույնն էր։ Մնացողը մտնում էր եռանկյունաձև գծված տարածության մեջ։ Դրսիններից նա պաշտպանվում էր ոտքի հարվածով, որը և խփվողին ստիպում էր դերը փոխել նրա հետ (Բ. Մխ, 85)։

180. ՄԱՄՈՒ ՇՈՐ

Վանում մի խումբ տղաներ մի մեծ շորի կտոր դնում էին հրապարակի վրա և պուճ գցելով վերջինին դարձնում նրա պահապանը։ Մյուսները հարձակվում էին պահապանի վրա, ձեռքով ծեծում և աշխատում էին շորը ոտքով փախցնել։ Հսկիչն աշխատում էր քիչ ծեծվել, շորը պահպանել և իր ոտքով հարձակվողներից մեկի ոտքին խփելով նրա հետ դերը փոխել։ (Խ. Վժխ. ձ., 20—21)։

181. ԴԱՎԱՋ ԲՈՐԱ

Լոռիում երեխաները մի փոքրիկ փոս են փորում. մի խաղացող մի ոտքը դնում է այդ փոսի մեջ և մյուսով աշխատում է խփել մյուս երեխաներին, որոնք ճարպկությամբ խփում են դրան ու փախչում։ Երբ մեկին խփում է, սա է համարվում կտրված, ուստի և կտրվածն է ոտքը դնում փոսի մեջ և խաղը նույնությամբ շարունակում։ (Եվ. ժխ. № 71, էջ 42)։

Դ. ԲԵՐԴԱԽԱՂԵՐ ԿԱՄ ԿՏՐՈՑՆԵՐ

Հայկական բերդախաղերը գրի են առնվել XIX դ. վերջերից մինչև XX դ. կեսերն ընկած ժամանակամիջոցում։ Դրանց մասին միջնադարյան վկայություններ չունենք, մինչդեռ բերդախաղերը այն ժամանակներում պետք է որ հասած լինեին զարգացման առավել բարձր աստիճանի։ Հավաքած խաղերը միջնադարյան կտրոցների մնացուկներն են. դրանք կարևոր են թե՛ ձևերի կիրառման և թե՛ բովանդակության առումով։ Կասկածից վեր է, որ XIX—XX դարերում գրի առնվելու պատճառով կտրոցները տակտիկական ու ստրատեգիական տեսակետից կորուստներ կրել են։ Բայց հին հայկական ռազմական կյանքի և ռազմասպորտային կուլտուրայի պատմաբանները նրանցից օգտակար շատ բաներ կարող են քաղել։ Հենվելով միջնադարյան պատերազմների պատմության բնութագրական կողմերի վրա, նրանք կարող են վերականգնել բերդախաղերի կրած կորուստները։ Այդ կորուստները վերականգնելու մի եղանակն էլ պետք է լինի այժմ գրառված խաղերից համահավաք բնագրեր կազմելը։

182. Կ Տ Ր Ո Ց

Կտրոցի խաղն... է, որ [Վանում] երբեմն... մեծ մարդիկ ևս խաղան, բայց տղայոց պատանյաց խաղալո չափ համ չի տար, ուստի, երբ երիտասարդք և մեծ մարդիկ ուզեն այս խաղ խաղալ, անշուշտ մանուկներ և պատանիք խաղի մեջ խառնեն, որ ավելի համ տա[72]։

...Այս [գարնանային] խաղ 10—20—30 անձինք կարեն խաղալ։ Երկու պապ հառաջ գալով ձայնով կամ մատնաքվեով որոշեն զրնկերս, թաց-չորիվ ներս կենալն և դուրս կենալն որոշեն։ Խաղալո տեղն որչափ ընդարձակ լինի, այնչափ գեղեցիկ հորինի խաղն։ Մեք մեր թաղի

---

72 *...Երբ տեսանես, թե ծիծեռնակ թռչունք օդի մեջ սուրալով խաղան, երթևեկեն, ձայն ձայնի տալով օդն թնդացուցանեն, և երբ մանկունք և պատանիք ընդարձակ արտորթից և գերեզմանատանց մեջ խաղան, մանկական ձայներով օդն թնդացուցանեն։ Ինձ շատ հավանական թվի, թե սույն կտրոց խաղ մեր նախնիք ծիծռանց օդի միջի խաղալո նմանութենեն առած են, զի մեք մանկության ժամանակ երբ գա-*

րուն ծիծեռանց օդի մեջ զանազան ուղղությամբ սրանալն տեսնայինք, ասեինք.—Հա՛, տեսեք,—ծիծեռնիկներն էլ կտրոց խաղան։ Եվ շատ անգամ կանգ առած դիտեինք զնոցա խաղն, թե արդյոք ի նոցանե լավ խաղայր, բնավ չիմանալով, թե նոքա այդպիսյավ օդի մեջ որսորդության պարապեն։ (Զ. 4184, էջ 171բ)։

հտևի և առաջի ընդարձակ արտորե[ի]ց մեջ խաղայինք։

Արտի կենտրոն կանգուն ու կես երկարութ֊յամբ փայտ մի ցցելով և վրան մի քող անցուցանելով անվանեն զայն ֆողֆ։ Ներս մնացող խումբն մի ընկեր որոշև և հանձնեն նմա զֆողֆն պահել։ Այս անձն ձեռք ֆողֆի վերա դնելով հսկե ֆողֆին՝ չը լինի թե դրսի խումբեն գան և հափըշտակեն զֆողֆն և խաղի բովանդակ հաղթանակն ինքյանց սեփականեն։

Արդ, երբ ներսի խումբ յուր ընկերաց պաշտոն բաժանե և հայտարարե, թե խաղն սկսված է, ներսի խումբ սկսի դրսի խումբ հեռացուցանել, հալածելով և հարկանելով զնա։ Եթե ներսի խումբեն մեկն դրսի խումբեն [մեկի] մեչքն հասանելով զարկավ, հարյալն խաղեն դուրս ելնելով պիտի նստի իբրև չեզոքացյալ։ Իսկ եթե ներսի խումբեն մին, որ հալածեր զարտաքին ի վազելն անդր, դրսի խումբեն այլ ոք գա հերուստ նորա անցանելով կարե զնա, սա խաղեն ելյալ նստի ի բաց։ Եթե դրսի խումբն ճարտար է և ճապուկ, հետզհետե զներքինս հեռացուցանելով ի ֆողույն, կարե զամենեսյան և նստուցանե զնոսա ի բաց և կամ զանազան պատյտավոր վազիվք շփոթելով զներսին խումբ, գա հասանե և ձեռն դիպեցուցյալ ի քողն, աղաղակե.—Քողքն առի՛, քողքն առի՛։ Ապա ներսի խումբ իբրև հաղթահարյալ և իբրև քողույն անկարող պահապան, ելանե արտաքս (ի միտ առ աստեն, շատ խաղուց դուրս մնալն է պատվավոր, իսկ այս կտրոցին և այլ քանի խաղուցն ներս մնալն է պատվավոր) և սկսանի վազելով հնարս հնարել, գալ, առնուլ զքողն վերըսոխին։ Բայց ներսի խումբն անդադար հալածե զարտաքինս և չթողու մերձենալ ի քողքն։ Ահա երկու կողմանց ընդդեմ միմյանց հակառակելն, վազելն, հարկանել կամ կտրելն այնպիսի զանազան ելևէջ ձայներ հանել տա որ նմանի ծիծեռանց ձայնին։ Ներսի խումբն աղաղակե,—եղբա՛րք, հասե՛ք, զարկե՛ք, այս ինչ անձն շատ մոտեցավ քողին։

Դրսինն ասե.— Հասե՛ք, կտրեցե՛ք այս ինչն, որ քողեն հեռացավ։

Եվ այսպես, խաղն կարե տևել 2—3 ժամ կամ ավելի ևս...։ (Ջ. 4184, էջ 171ա—172բ)։

183. Բ Ե Ր Դ

Էջմիածնում բերդ է համարվում դաշտում գըծված շրջանը։ Ղեկավարները մայր են կոչվում, որոնց մոտ հալա-հալա գալով և սովորական բուռ ու շուռ անելուց հետո խաղն սկսում են։ Այս վիճակով մնացողը մտնում է շրջանի մեջ։ Խաղն սկսելու հրահանգը տալիս է ներսի մայրը՝ մե՛կ, երկո՛ւ, երե՛ք ասելով։ Շրջանից դուրս չգալով՝ ներսիններն արագ վազում են իրենց շրջապատողներին խփելու նպատակով։ Դրսիններն աշխատում են ներսիններին կարել՝ շրջանի միջով անցնելով։ Հաղթվող խումբը բերդի մեջ է մտնում։ (ԳԱ. ՀԺՀ, VI, 123)։

184. Կ Տ Ր Ո Ց

Երիտասարդ տղաները վանում բաժանվում էին երկու խմբի և պուճով որոշում ներսի ու դրսի կողմերը։ Ներսիննները հրապարակ էին դնում լաթի մի կտոր, որին ֆողֆ էին անվանում և որը պաշտպանում էին դրսեցիների ոտնակոխից կամ հափշտակելուց։ Երբ դրսեցիներից մեկին հաջողվում էր առանց ներսիններից խփվելու մոտենալ և ոտքը ֆողֆին դնել, բոլոր պաշտպանները կտրվում և նորից իրենց դերի մեջ էին մնում, որը մեծ անպատվություն էր համարվում։

Հարձակումների ժամանակ, երբ ներսիններին հաջողվում էր ձեռքով կպչել դրսեցիներին, վերջիններս կտրվում էին և խաղից դուրս գալիս։ Կտրվում էին նաև ներսիննները, երբ դրսեցիները հաջողեցնում էին հարմարավուն ձևով և արագությամբ անցնել նրանցից մեկի ու իր խմբի անդամների արանքից։ (Խ. Վ֊Խ. ձ., 12—13)։

185. Անցքը կտրել

Խաղացողները 10 և ավելի հոգով օրա անուն֊նով մի հողակույտ են պատրաստում և բաժանվում են երկու խմբի։ Հալա-հալայով խմբերից մեկն իր մորով մտնում է օբան, իսկ մյուս մայրն իր խմբով պաշարելով նրանց, աշխատում է գրավել օբան։ Դրսիննների պարտավորությունն է՝ ներսիննների գլուխը կտրելու միջոցով դրանց աստիճանաբար չեզոքացնել, որ կատարվում է այսպես։ Երբ ներսիններից մեկը օբայից մի փոքր հեռացած հետապնդում է դրսիններից մեկին՝ նրան ձեռք տալով կտրելու համար, դրսեցի մի

ուրիշը արագորեն անց է կենում նրա և օբայի արանքից։ Իսկ ներսիննների պարատականությունն է՝ դրսեցիներին օբայից հեռու պահել և նրանց, ձեռքով խփելով, չեզոքացնել։

Օբայի առումը կատարվում է այսպես։ Դրսիններից նա, որ առանց խփվելու արագությամբ ներխուժում է ու հասնելով օբային, թքում է նրա վրա, օբան առնված է համարվում։ Այդ դեպքում դրսեցիները ունենում են մի խաղ (միավոր), որ լաչակ են անվանում։ Եվ այն խումբը, որը երեք անգամ լաչակ է ունենում, մյուս խմբի անդամները նրանց օբայի մոտից շալակում և տեղափոխում են մինչև նախապես որոշված կետը։

Խաղի մեջ լավ կողմը դրսիններինն է համարվում։ Եվ քանի որ դրսիննների հարմարություններն առավել են, սրանք հաճախ հաղթող են լինում։ Բայց երբեմն էլ հակառակն է լինում. պատահում է, որ սրանք ճարպիկ չեն լինում կամ օբան գրավել չեն կարողանում, ու աստիճանաբար կտրվելով դրանցից միայն մի հոգի է մնում։ Այս դեպքում խաղի կանոնների համաձայն «ալի-աղի» են անում, որը հետևյալն է ներկայացնում և խիստ նպաստում է դրսիններին։ Ներսիննները հավաքվում են օբայի մոտ։ Դրսի կենտ մնացողը գալիս, կանգնում է նրանց դիմաց։ Ներսիններից մեկը աջ ոտքը առաջ է դնում և աջ ձեռքը մեկնում դեպի կանգնած հակառակորդը։ Վերջինս իր աջ ոտքը դնում է նրա աջ ոտքի վրա և աջ ձեռքով նրա մեկնած ձեռքին խփելով ասում է.—

Ալի աղի,
Շուր տուր
Փ ա խ ի։

Վերջին բառն արտասանելուն պես արագ պոկ է գալիս տեղից և փախչում դեպի այն կետը, դեպի ուր շալակողները տանելու են իրենց բեռները։ Ներսիններն ամբողջ խմբով հետապնդում են նրան, որոնցից մեկն ու մեկի ձեռքով խփվելու դեպքում ներսիննները մի լաչակ են ունենում։ Բայց, եթե նա կարողացավ առանց խփվելու տեղ հասնել, այն ժամանակ նույն գործողությունը նա կրկնելու է ներսիններից բոլոր մնացածների հետ. այս բոլորի հետ փորձը, երբ իր օգտին է վերջանում, կենտ մնացածի խումբը մի լաչակ է ունենում։

Եվ այսպես, խաղը նորոգելու համար այս անգամ մյուս խումբն է ներս մտնում, առանց տանող կամ տարվող լինելու հանգամանքը նկատի ունենալու (Բ. Մխ., 66—67)։

186. Օ Բ Ա

Խաղը Կարսում նույնն էր։ Խմբերը միմյանցից քիչ հեռու, դեմ առ դեմ, ոտքերը զույգ դրած, կանգնում էին։ Նրանցից մեկը մի ոտքը առաջ փոխելով ասում էր.

—Հո՛պպե, հո՛պպե։

—Ղարա թո՛պպե,— պատասխանում էր դիմացինը, նույնպես մի ոտքը առաջ փոխելով։


—Խաղըդը՛մ,—կրկնում էր առաջինը՝ մյուս ոտքը առաջ փոխելով և այդ ձևով հիշյալ բառերը կրկնելով մոտենում էին միմյանց. որի ոտքը որ տակն էր մնում, նա իր ընկերներով ներս էր մրտնում և պահպանում օբան.

Միայն մեջ–դուրս ու ներս գնալը հերթով էր և ոչ տանելով։

(ԱՔ. Հ. ԺՀ, VI, 128—129)

187. ԲԵՐԴ ԽԱՂ

Բարչանճում խաղում էին երկու խմբով։ Մի տափակ քար բերդ էին նշանակում։ Խմբերից մեկը բերդապահ և մյուսը հարձակվող էր կարգվում։ Բերդապահների պարտականությունն էր՝ դրսեցիներին թըս հաճել՝ հարձակմամբ նրանց զարնել և բերդի ու իրենց միջև բաց տարածություն չթողնել, բերդը թափուր չթողնել, որպեսզի հակառակորդները քարին չդիպչեին։ Հարձակվողները բերդապահներին զարնելով թըս անել չէին կարող։ Սրանք ձգտում էին բերդապահ հարձակվողներին ճըռ անել և բերդը առնել։ Դրսի խումբը բերդի վրա, չորս կողմից, հարձակվում էր զույգերով։ Արագավազ մի ճկող՝ իր ընկերոջ հետ մոտենում էր բերդին՝ բերդապահներին դուրս քաշելու, բերդից հեռացնելու, որպեսզի մի բաց գտնելով բերդապահի ու բերդի արանքից անցնեին և առանց զարնվելու նրանց ճըռ անեին և թըս հաններին։ Փորձառու խմբավարը բերդապահներին «կը մժղցներ», մինչև որ իր խմբից մի վարպետ խաղացող բերդաքարը անպաշտպան տեսնելով, կայծակի արագությամբ սուրում, ոտքով կամ ձեռքով քարին էր դիպչում, թեև սպասում էր բերդապահների կողմից կոխոտվելու վտանգը։



Նկ. 25բ. Բերդ խաղը Ախալքալաքում (բնագիր № 188)
Նկ. Ռ. Մնացականյանի

Բերդը գրավելիս գոչում էր.—Խապա՛խ: Այս դեպքում դերերը չէին փոխվում:

Երբ բոլոր դրսիննները զարնվում էին, բերդապահները խաղը շահում էին և այդ դեպքում միայն խմբերը դերերը փոխում էին: (Բրջ. 156—157):

188. Զ Ո Ւ Ռ

Ախալքալաքում խաղը նույնն է: Մասնակցում են 10—20 տղաներ: Խմբերի բաժանվելը տեղի է ունենում բա՛կ ու ալեյի միջոցով, ապա թաց ու չորով մի խումբը դառնում է չուռը պաշտպանող (ներսի խումբ) և մյուսը (դրսի խումբ)՝ հարձակվող: Չուռի վրա կանգնում է ամենաճարպիկը: Մյուս պաշտպանները կանգնում են նրանից 3—5 մ հեռու՝ շրջանաձև դիրքով: Դրսեցիներին շարքից դուրս հանելը կատարվում է ձեռքով խփելու միջոցով: Շարքից դուրս եկածը մեռած է համարվում: Ներսիններին մեռցնում են արանքից անցնելու միջոցով: Երբ գրոհող կողմից մեկը ոտքը դնում է չուռի վրա և չուռը պաշտպանողներից ոչ մեկը մինչ այդ նրան խփել չի կարողանում, ապա նա բարձրաձայն հայտարարում է չուռի գրավումը չըո՛ռ՛ ասելով, որ նշանակում է, թե «ես չուռը գրավեցի»: Այս դեպքում գրոհողները մի խաղ (միավոր) են ունենում և դերերը փոխում են: Խաղը վերջանում է խմբերից մեկն ու մեկի կողմից պայմանավորված 5—10 խաղը լրացնելու դեպքում: (Բ. Ժխ. Ձ.):

189. Զ Ո Ւ Ռ

Բուլանըխում խաղը նույնն էր: Ներսիննները կանգնում էին նախապես գծված շրջանի մեջ:

Դրսեցիներն աշխատում էին գրոհել շրջանի վրա՝ արանքը կտրելով ոմանց չեզոքացնելու։ Ներսիններն այդ գրոհի ժամանակ աշխատում էին ձեռքով խփել։ Խփվածը խաղից դուրս էր գալիս։ Դրսեցիներին հետապնդողի հետքը խաչաձևողը նրան ևս կտրում էր։ Այդպիսով խաղացողների թիվը նվազում էր։ Դրսեցի լինելու իրավունքը մնում էր այն խմբին, որի չկտրված անդամների թիվը գերազանցում էր (Բ. Ա՛Հ, V, 139)։

190. ՁՈՒՈ ԱՌԱ

Խաղը նույնն է։ Փայտով կամ ոսկրով գծված շրջանի տրամագիծը հասնում է 10—14 մ։ Ներսինները կանգնում են շրջանի մոտ և աշխատում են թույլ չտալ մյուս խմբի անդամներին՝ մտնելու շրջանի մեջ։ Նրանք այդ նպատակով ձեռքով խըփում և մեռցնում են դրսեցիներին։ Երբ գրոհողներից մեկին հաջողվում է առանց խփվելու մըտնել շրջանը և ասելու՝ «չուռն առա», այն ժամանակ սա այդ մտնողի խմբի համար մի խաղ է համարվում։ Խմբերի դերերը փոխվում են, երբ չուռն է առնվում կամ մի խմբի անդամները մեռնում են։ (Եվ. ժխ. № 65, էջ 28—30. Լ. ԺՄԽ, 13—14)։

191. Բ Ը Ռ

Խաղը Կոտայքում նույնն է։ Բրո է կոչվում այն 20—30 սմ կլոր քարը, որը դնում են խաղավայրի կենտրոնում և պաշտպանում են։ Ղեկավարները մայր են կոչվում, որոնց մոտ մյուսները հալա-հալա գալով բաժանվում են խմբերի։ Խաղն սկսելու համար մայրերը չոփ են պահում կամ ղուշ ու գիր գցում և կամ վեգով ճիֆ ու բոֆ բերում։ Ներսիննների դասավորուՑյունը բրոը պաշտպանողի շուրջը՝ շրջանաձև է, 6—7 քայլ շառավիղով։ Դրսիննները նույն ձևով դասավորվում են այդ շրջանաձև դասավորվածների շուրջը։ Սկսելու ազդանշանը տալիս է մայրերից մեկը։ Բրոը գրավվում է ոտքը վրան դնելով, եթե առանց խփվելու է կատարվում։ Ներսիննները կտրվում են՝ երբ դրսեցիները արանքներով անցնում են, իսկ դրսեցիները կտրվում են խփվելով։ Երբ երկու խմբից էլ մնում են մեկական հոգի, ապա դրսինին իրավունք է վերապահվում ուժով հրել մի կողմ միակ ներսինին և ոտքը դնել բրոի վրա, եթե ներսինը չի կամենում հալածել նրան բոից հետու. եթե նախապես պայմանավորվում են խաղալ ընկեր ողջացնելով, ապա հենց որ խմբերում կտրըվածներ են ունենում, կարող են հավասար թվով ողջացնել կտրվածներին։ Դրսեցիներից երբ միայն մեկ հոգի է մնում, իսկ ներսիննների մեծ մասը, ներսիննները պարտավոր են մի հոգի թողնել բրոի մոտ, իսկ մյուսները հալածում են այդ մեկին։ Վերջինս ճարպիկ գտնվելու դեպքում կարող է անցնել այդ բոլորի ու բրոի արանքից և բոլորին կտրել։ Դերերը փոխվում են բրոը գրավելու և այն դեպքում, երբ ներսիններին հաջողվում է կտրել բոլոր դրսիններին և ընդհակառակը՝ երբ դրսիննները կտրում են ներսիններին։ (Ռ. ժխ. ձ.)։

192. Բ Ը Ռ

Սասունում խաղը նույնն էր։ Մասնակցում էին պատանիները կամ երիտասարդները։ Տեղի էր ունենում գարնանը և աշնանը։ Մասնակիցների թիվը հասնում էր 20—40-ական հոգու։ Բրո էր կոչվում այն մեծ քարը, որը բերդի դեր էր կատարում։ Այն դրվում էր հարթ կամ թեք դաշտում։ Պաշտպանվող խմբից մեկ հոգին բերդապահ էր նշանակվում։ Մյուսները հետապնդում էին հարձակվողներին։ Խաղն սկսվում էր բոլոր կողմերից՝ հարձակվողների ղեկավարի բարձրաձայն ազդանշանով։ Պաշտպանվողները, որ մեծ շրջանակով, իրարից 5—10 մ հեռու կանգնած աչալուրջ հսկում էին, իրավունք ունեին թշնամուն ձեռք տալով մեռցնել՝ շարքից հանել։ Հարձակվողին հաջողվում էր անցնել պաշտպանվողների թիկունքը և անվնաս խույս տալ, բրոի պաշտպանը շարքից դուրս էր գալիս։ Դրսեցիները խաղը շահում և խմբերի դերերը փոխում էին բրոին ոտք դնելու դեպքում։ Պայքարը շարունակվում էր մինչև վերջին մեկական մարտիկներից մեկի պարտությունը։ (Պետ. ձ.)։

193. Բ Ը Ռ

Նոր Բայազետում խաղը նույնն է։ Մասնակցում են 12—18 տղաներ։ Բրո է կոչվում կիտված հողը։ Ղեկավարները մայր են անվանվում։ Պաշտպանող խմբի մայրը կանգնում է բրոի վրա, իբրև պաշտպան։ Մյուս պաշտպանները շրջափակում են մի քանի քայլ շառավիղի վրա, որը որ-

պես սահմանագիծ է դիտվում։ Երբ գրոհողներից մեկը առանց խփվելու անցնում է պաշտպանողների թիկունքով, այսինքն՝ բրոի մոտ կանգնած մոր և սահմանապահների միջով, ներսիննները պարտվում և խմբերի դերերը փոխվում են։ Դեբափոխում լինում է նաև, երբ ներսիննները խփելով դրսիններին մեռցնում են կամ երբ մի խիզախը առանց խփվելու կարողանում է քանդել բրոը։ (Եվ. ժխ. № 65, էջ 28—30)։

194. Բ Ե Բ Դ

Խաղը նույնն է։ Մասնակցում են 10 և ավելի տղաներ։ Գծում են մի մեծ շրջան, որին բերդ են անվանում։ Խմբերի են բաժանվում հալա-հալայով։ Ղեկավարները մայր են կոչվում։ Պաշտպանողների մոր հրահանգով՝ 1—3 հաշվով սկսում են խաղալ։ Պարտվող խումբը մտնում է շրջանի մեջ։ (Բ. Մխ, 61—62)։

195. ՄԵՋՏԵՂԻՑ ԿՏՐԵԼ

Լոռիում խաղը նույնն է։ Վիճակահանությամբ մի խումբը մտնում է շրջագծի մեջ, իսկ մյուսը շրջանի մեջ ներխուժելով և արանքներից առանց խփվելու անցնելով մի միավոր է շահում։ Շրջանը պաշտպանողները պայմանավորվածության համաձայն կարող են նաև ձեռք-ձեռքի տալ և շղթա կազմած պաշտպանել շրջագիծը։ Շրջագիծը գրավված է համարվում, եթե դրսիններից թեկուզ մեկը առանց խփվելու անցնում է շրջագծի միջից։ (Ղխ. ձ.)։

196. ԳԵՐԵՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Մարաշում խաղացողներու ներքին խումբը, որ կեդրոնի մը շուրջ կը դառնա, պետք չէր ոչ կեդրոնը տար հակառակորդ խումբին, և ոչ ալ թույլ տար, որ իր ընկերներուն ու կեդրոնին միջեն անցներ հակառակորդը. քանի հոգիի մեջտեղեն որ անցներ, անոնք գերի ինկած կը համարվեին ու չէին կրնար խաղին մեջ մնալ։ (ԳՄ, 348)։

197. ՆԱՄ-ՆԱՄ ԲՈՒԴԻԿ

Սասունում սա նշանակում էր սյունաբերդ։ Սովորական բերդախաղերից էր, որ խաղացվում էր տանը, գոմում, ձմեռ ժամանակ։ Բայց նամ բուդիկը խմբերով չէին խաղում. մի հոգի վիճակով դառնում էր սյուն-բերդի պաշտպան, իսկ մյուս 7—10 հոգին հարձակվում էին նրա վրա՝ բերդը գրավելու։ Պաշտպանողի մի ձեռքը սյունից չպետք է անջատվեր։ Հարձակվողներն աշխատում էին բերդապահին ապտակոցի տալ և խուսափել։ Պաշտպանվողը ում որ ձեռքի կամ ոտքի թաթով շփվեր, նրան մեռցնում, շարքից հանում էր. այդպիսով նա կարող էր բոլորին սպանել և հաղթանակ շահել։ Իսկ եթե նրան այդ չհաջողվեր, հարձակվողներն անընդմեջ կռվում առաջինին ուժասպառ էին անում և դրանով հաղթանակը տանում, իրեն էլ գերում։

Հարձակվողներն իրավունք ունեին անակնկալորեն թռչել բերդապահի շալակը և ոտքերը բարձր պահած կպչել նրան։ Բերդապահն անընդհատ նրան կրում էր և վազվզում սյան շուրջը։ Երբ շալակինն անզգուշորեն ոտքերը կախեր ցած, բերդապահը դրանց ոտնահարված տալով կմեռցներ և կաղատվեր, այլապես ճակատագիրն էր քարշ տալ։ Նրան իրավունք չէր վերապահված շալակը բարձրացածին ձեռքով չեզոքացնել։ (Պետ. ձ.)։

198. ՆԱՄ-ՆԱՄ ԲՈՒԴԻԿ

Սասնա այս խաղը նույնն էր, բայց տարբերությամբ, որ բերդապահը ում ձեռք տար, նա իրեն փոխարիներ։ (Պետ. ձ.)։

199. Բ Ե Ր Դ Ա Խ Ա Ղ

Խաղակենտրոնում դրված բարը Զարսանճագում բերդ էր կոչվում։ Պաշտպանները հարձակվողներին շարքից դուրս հանելու նպատակով հետապնդում և ձեռքով դիպչում էին նրանց։ Բայց այն պաշտպանը, որ հետապնդելիս հարձակվողների կողմից առնվում էր շրջանակի մեջ, նույնպես չեզոքացվում էր։ Բոլորակի մեջ առնելով այդ չեզոքացումը կրկրել էր կոչվում։ (Երև. 593—594)։

200. ՁԸՌ ԽԱՂԱԼ

Զարսանճագում սա նման էր բերդախաղին։ Ընդարձակ տանիքի վրա բուխերիկը նշանակետ էին ընտրում և կռչում Ֆոզ։ Քոզը գրավելու համար հարձակվողը պետք է պաշարման շղթան կտրեր և ձեռքը դներ վրան։ Ամեն մի ձեռք դնե-

լը մեկ խըլլո (միավոր) էր համարվում։ (Երև., 593)։

201. ԲԵՐԴԱՎՈՐ ԳՆԴԱԿ

Տղաները գետնի վրա գծում էին մի փոքրիկ շրջագիծ կամ քառակուսի շրջանակ և նրա կենտրոնում տեղավորում մի մեծ քար, որին անվանում էին Բերդ։ Խաղին մասնակցողները բաժանվում էին երկու հավասար խմբերի և ընտրում իրենց համար հրամանատարներ, որոնք վիճակի միջոցով որոշում էին խմբերի դերերը։ Բերդը պաշտպանողների խումբը անկանոն ձևով տարածվում էր բերդից բավական հեռու, իսկ գրավողները կանգնում էին բերդին մոտիկ։ Վերջիններիս հրամանատարը իր ձեռքի գնդակը գցում էր վերև, իսկ պաշտպանողներն աշխատում էին օդում բռնել և գետնին խփել, կամ վայր ընկնելու դեպքում վերցնել գետնից ու անմիջապես խփել բերդին։ Եթե չէր հաջողվում բռնել կամ գետնից վերցնելով կպցնել բերդին, խաղը շարունակում էին միևնույն ձևով։ Իսկ եթե հաջողվում էր, երկու դեպքում էլ գրավողների հրամանատարը համարվում էր ելած և խաղից դուրս էր գալիս։ Նրան փոխարինում էր միևնույն խմբից մեկ ուրիշը, որը դարձյալ գնդակը գցում էր վերև. պաշտպանողները բռնում էին. եթե խփում էին բերդին, այս հրամանատարը ևս դուրս էր գալիս, որին դարձյալ փոխարինում էր ուրիշը և այսպես շարունակ։ Երբ գրավողների խմբի բոլոր անդամները դուրս էին գալիս, խաղախմբերը փոխում էին իրենց տեղերը։ (ԲՄ. 1886, էջ 255)։

Ե. ԳՆԴԱԿԱԽԱՂԵՐ

Այստեղ դետեղված գծագնդակները, ձեռքով ու ձեռնատախտակով կատարվող գնդակախաղերը, սահմաններից իրար փոխանցվող գնդակների խաղերը, գնդակը ոտքով սահմանն անցկացնելու, գնդակը գետնին խփելով առանցքի շուրջը պտտվելու և խաղերը, որ գրի են առնվել վերջին հարյուրամյակում, առանձնացրել ենք որպես հետիոտն խաղեր։ Իսկ ձիագնդակները, որ խաղացվում էին մականուններով, զետեղել ենք բուն ռազմական խաղերի մեջ։

Ձեռնագնդակախաղերի մեծ մասը պահպանվում էր մինչև 1930-ական թվականների վերջերը, իսկ որոշ մնացուկներ՝ մինչև 1940-ական թվականների վերջերը։ Մինչև կաշեպատ և ռետինե գնդակները խաղային կենցաղի մեջ մտնելը, հայ գյուղերում ու քաղաքներում օգտագործում էին ինքնաշեն մագե գնդակները և մեջը բրդով լցված ու երեսն ասեղնագործված խնձորաչափ գնդակները։ 1930-ական թվականներից սկսած փոքր չափերի ռետինե գնդակները լիովին փոխարինեցին նախորդներին և դրանք այժմ օգտագործվում են հազիվ պահպանված մի բանի խաղերում։

Ուրիշ խաղերի հետ համեմատած գնդակախաղերն իրենց բազմազանությամբ հետ բերել են նաև խաղային հարուստ կանոններ։ Այդ հանգամանքը որոշ չափով բացատրվում է նրանով, որ ձեռքի գնդակախաղերը սերտ կապ ունեին մականով կատարվող ռազմական գնդակախաղերի հետ։ Իսկ վերջիններս միջնադարում և հետագայում խրախուսվում էին ամենուրեք և ազդում ձեռքի գնդակախաղերի պահպանման վրա։

Գնդակախաղերը գրեթե բացառապես պատանի տղաների խաղեր էին։ Աղջիկների մասնակցությունը բացառիկ էր։


Մեր օրերում ֆուտբոլը շարքից հանելով գրնդակախաղերի տեղական ձևերը, մեծապես վնասել է բազմակողմանի ու հարուստ շարժումներ ունեցող այդ վարժությունների պահպանման գործին։

Ձեռքի ազգային գնդակախաղերը նոր դասագրքերի մեջ մտցնելը մեծապես պիտի նպաստեր մարմինը բազմակողմանիորեն կրթելու հետ նաև ֆուտբոլային խաղերի առաջադիմության գործին։

202. ԳՈՒԳՆԴԱԿ

Պատանիներն ու երիտասարդներն Ախալքալաքում գարնանն ու ամռանը քաշ ու ալեյի միջոցով կազմում էին երկու խումբ և քաց ու շորով դառնում նեսի ու դսի խաղացողներ, 3-ականից մինչև 10-ական հոգի կողմերով։ Գծում էին մի շրջան։ Նեսի խումբը մտնում էր շրջանի մեջ, իսկ դսի խումբն առնում էր գնդակը և հեռանում, հավաքվում մի տեղ. այստեղ գնդակը գաղտնի կեր-

պով դնում էին իրենցից մեկի ծոցը կամ փեշի տակ։ Եվ որպեսզի գնդակը ում մոտ լինելը ներսի խաղացողներին հայտնի չլիներ, դրսեցիներից յուրաքանչյուրն իր ձեռքը դնում էր ծոցը կամ փեշի տակ։ Սրանք շրջապատում էին գծամիջիններին և խորհրդավոր լուռթյամբ ու ազդեցիկ հայացքներով պտտվում նրանց շուրջը։ Դրսեցիներից նա, ում մոտ գտնվում էր գնդակը, հան-



Նկ. 26. Գծագնդակ (բնագիր № 202)
Լուս. Մ. Քոյանի

կարծ խփում էր հակառակորդներից մեկին ու արագորեն խույս տալիս։ Երբ դրսեցին խփում էր գծամիջիններից մեկին, վերջինս համարվում էր մեռած և շարքից դուրս էր հանվում։ Եթե այդ մեռնողին հաջողվեր ընկած գնդակը գետնից վերցնել ու խփել իրեն հարվածողին, նա նույնպես կմեռներ և իր խմբի շարքից դուրս կգար։

Դրսեցիներն այնպես էին անում, որպեսզի գնդակը ներսեցիները ձեռքով կամ գոգ արած փեշով չբռնեին, ապա թե ոչ խաղը տանուլ կտային և խմբերի դերերը կփոխվեին։

Երբ առաջին խփողից հետո գնդակը կամ ինքնիրեն և կամ ներսիններից մեկի նետելով գծից դուրս էր գալիս, դրսեցիներից առաջին պատահողը վերցնում ու առանց ձեռքում երկար պահելու նետում էր մյուս ընկերոջ ձեռքը, որպեսզի նա էլ սրան կամ մեկ այլ ընկերոջը տալով խաբս տար գծամիջիններին, միամտացներ ու նոր հարված հասցներ՝ ակնհայտ կերպով։ Գնդակն այս ձևով ձեռքից-ձեռք տալը **տաֆ-տաֆ** օյին էր կոչվում, այլապես ձեռքում երկար պահելիս ասում էին «պաղավ» և խփելը օրինական չէին համարում։

Տաֆ-տաֆ օյինի ժամանակ դրսեցիք երբեմն գնդակը բարձր առաստաղով գցում էին գծի վրայից իրենց մյուս ընկերների ձեռքը, որպեսզի նրանք խուճապահար գծամիջիններին խփեին ու վիրավորեին։ Եթե գծամիջիններին հաջողվեր այդ ժամանակ գնդակը բռնել, խմբերի դերերը փոխվում էին։

Եթե այնպես պատահեր, որ դրսից խփողը չկարողանար խփել ներսի խմբից որևէ մեկին, այն ժամանակ խփելիս վրիպողը շարքից դուրս էր գալիս։

Խաղը շահում էին նախապես սահմանված միավորները շուտ լրացնողները։ (Բ. ժխ. ձ.։ Նույնը տե՛ս ՍՔ. ՀԺՀ, VI, 134—135. Բ. Մխ, 37)։

203. [ԱԽՊԵՐՍ ՀՅՈՒՍՆ, ՎՐԱՆ Է ՇԻՆՈՒՄ]

Խաղը նույնն է։ Ներսիննների շուրջը պտտվելիս դրսեցիներից յուրաքանչյուրը ձևացնելով, թե գնդակն իր մոտ է, ասում էր.

Ախպերս հյուսն,
Վրան է շինում,

Գնդակը խփելուց հետո շրջանից մեկը, սովորաբար զարկվածը, վերցնում է գնդակը (եթե միայն գնդակը շրջանի մեջ է մնացել) և գցում դրսեցիներից մեկի ետևից։ Դիպչելու դեպքում խփվածն է մեռնում, չդիպչելիս՝ խփողը։ (Լ. ԺՄխ, 37—39)։

204. Շ Ր Ջ. Ա Ն

Խաղը նույնն է։ Ներսիններին անվանում են շրջանի, իսկ դրսեցիներին դաշտի բանակ։ Առաջին անգամ գնդակ խփողը վրիպելիս դառնում է շրջանի բանակի անդամ, իսկ խփելու դեպքում՝ խփվածն է դառնում դաշտի բանակի անդամ։ Սակայն, երբ ներսի խփվածը կարողանում է գնդակն իսկույն վերցնել և իրեն հարվածողին խփել, այն ժամանակ փոփոխություն չի լինում։ Խաղն այս ձևով շարունակվում է այնքան, մինչև որ բանակներից մեկի անդամներն սպառվում են։ (Բ. Մխ, 33—34)։

205. ՆՈՒՅ ԳՈՒՆԴ[73]

[Գարնանը] 12—16—18—20 հոգով կարելի է խաղալ։ Երկու կողման պապլ հավասար թվով ընկերք որոշելեն զկնի, մի ընդարձակ վայրի մեջ խաղացողաց թվոցն համեմատ, կալի մեջ շրջելո չափ բոլորակ գիծ քաշեն։ Թացիվ չորիվ ներսի և դրսի խմբեր որոշելեն հետո ներսի խումբ մտնա բոլորակ գծին մեջ, իսկ դուրս մնացյալ խումբն քարընկեց մի հեռի գնալով ընկերաց հետ գունդն պահեն։ Գունդն այնպիսի մեկին հանձնեն և գան գծին մերձ, որպեսզի միջի խումբ բնավ չկարե գուշակել, թե որ անձի քովն է գունդն։ Իսկ միջի խումբ անդադար շարժի և դիտե։ Արտաքին խումբեն մին ի ծածուկ զգունդն ի ծոցույն հանելով հարկանէ զայնոսիկ, որք ի մեջ գծոցն են։ Եթե դիպեցույց և գունդն և մնաց ի մեջ գծույն և գծի միջի մեկն գունդն առնելով եհար զարտաքս կացյալսն, որո որ գունդ դիպավ, այն անձն փչացավ, այսինքն չեզոքացավ, իսկ եթե չդիպեցավ ումեք, միջի անձն չեզոքանա։ Եթե արտաքին զմիջին մարդիկ այսպես հետզհետե չեզոքացուցանեն, մնան ի դուրս, իսկ եթե ներսի մարդիկ դրսի մարդիկ մի զկնի մյուս փչացուցեն, ելանեն ի գծեն դուրս և դրսի մարդիկ գան ի ներս և այսպես խաղն ընդ մի և ընդ երկու ժամս տևե...։ (Ջ. № 4184, էջ 170բ—171ա (Վ.)։

206. ՀՈՒ ԳՆԴԱԿՈՎ

Մարտունիում խաղը նույնն էր։ Խաղում էին տավարի մազից պատրաստված գնդակով (Մ. Խղ. Ձ.)։

207. Ջ Ղ Ե Ջ

Նոր Բայազետում սովորաբար խաղում են 8—12 հոգի, բաժանվելով երկու խմբի։ Գետնին գծում են մոտավորապես 2—3 սաժեն տրամագիծ ունեցող մի շրջան, վիճակով մի խումբը մտնում է շրջանի մեջ, իրար մոտ կամ ցրիվ կանգնում, իսկ մյուս խումբը շրջանից դուրս միմյանց հանդեպ։ Պապը տալիս է խաղն սկսելու նշանը, ասելով.

— *Թանձր փլավ է։*

Շրջանի ներսիննները պատասխանում են.

— *Յախնի չլա է[74]։*

Պապը ձեռի գնդակը դցում է իր հանդեպ կանգնող ընկերոջը, սա էլ՝ իր կողքի ընկերոջը, վերջինս՝ իր հանդեպ կանգնող ընկերոջը. երբ այսպես գնդակը մի շրջան է անում, անցնելով դրսի խմբի բոլոր անդամների ձեռքով, խաղացողներն ազատ են ընդմիջված ձևով գնդակը գցելու իրենց ընկերներից որին որ կամենան։

Խաղը վերանորոգվում է, երբ մի խմբի բոլոր անդամները մեռնում են։ (Տե՛ս ժխ. № 71, էջ 55—57)։

208. [ԱՖՊԵՐՍ ՀՅՈՒՍՆ, ՎՐԱՆ Է ՇԻՆՈՒՄ]

Խաղը № 203-ի տարբերակն է։ (Տե՛ս ԺՄԽ, 38—39)։

209. Խ Փ Ո Ց Ի

Տաք եղանակներին (երեկոյան) կազմակերպվող այս խաղին Արաբկիրում մասնակցում են չորս և ավելի աղջիկներ ու տղաներ։ Նրանցից երկու լավագույն խաղացողներ պապ են կանգնում, իսկ մյուսները հալա-հալա գալով երկու խմբի են բաժանվում։ Հալա—հալա եկողները մտքերում մեկական առարկայի անուն պահած նախ մեկ, ապա մյուս պապին են դիմում հետևյալ ոտանավոր խոսքով.

Հալա հալա,
Քու դուռն եմ էկե.
Քեզ եմ ասում,
Տա՞նձն ես, թե խնձորը։

Պապերի ընտրությամբ եկողներն անցնում են այս կամ այն կողմը։ Այնուհետև գծում են քառանկյունի մի գիծ, 4×7 մ մեծությամբ, որի երկար կողմերը փողոցներում անպայման պատերին զուգահեռ են լինում։ Դրանից հետո թաց ու չոր կամ քարպահոցի անելով որոշում են տեղերը։ Ներսիննները կանգնում են գծի մեջ, իսկ դրսիննները՝ հավասար թվով, ձախ ոտքերը գծի վրա, կանգնում են քառանկյան ծայրերին։ Սրանցից մեկը փոքր խաղագնդակը երեք անգամ օդն է

---

73 *№ 4184 ձեռագրի 171ա էջում բանահավաքը այս խաղը անվանում է նաև «Գծավոր գնդակախաղություն»։— Կազմող.*

74 *Այս դարձվածքը գործ են ածում ամեն մի խաղ սկսելիս։ Ծան. բան.*

նետում և բարձրաձայն հաշվում. մեկ, երկու երեք։ Վերջինն արտասանելիս անմիջապես օդանց (օդի միջով) կամ գետնանց (գետնի վրայով գլորելով կամ գետնին մոտիկ նետելով) գնդակով հարվածում է ներսիններից մեկն ու մեկին։ Ում որ կպչում է, նա գծից (շարքից) դուրս է գալիս։ Երբ գնդակը միաժամանակ կպչում է մեկից ավելի խաղացողների, բոլորն էլ գծից դուրս են ելնում։

Պատահում է, որ ներսիններն գնդակն օդում բռնում են. այդ ժամանակ յուրաքանչյուր անգամ բռնելիս շարքից դուրս եկած մի անդամը վերադառնում է գծի մեջ։ Իսկ եթե ոչ ոք չի վիրավորված, և գնդակը բռնվում է, յուրաքանչյուր անգամ բռնելը մի զապաս է համարվում, որպիսիների թվի համեմատ հետադայում վիրավորվածներին ներսն են պահում։

Երբ գծամիջում մի մարդ է մնում, դրսեցիները պետք է 10 հնարավոր հարված-միավորից մեկ անգամ խփեն, բայց եթե 10-ն էլ վրիպեն, այն ժամանակ բոլոր վիրավորվածները վերականգնում են գծամեջ գալու իրավունքը։

Դրսեցիների նպատակն է՝ բոլոր ներսիններին շարքից հանելը, որով միայն փոխվում են խմբերի տեղերը։ (Բ. Ժխ. ձ.)։

210. ՀՆՁՆՈՑԻԿ

Խաղում էին վանի պատանիները 2—10 հոգով։ Խաղավայրի մի կողմում մի քար էին դնում, որ ձերս էր կոչվում։ Վիճակով ներսինը, կամ ներսիններից մեկը մեջքը դեպի դրսեցիները դարձըրած՝ մազագնդակը նախ մի քիչ վեր էր նետում և ափովը խփելով դրան, գլխի վրայով կամարաձև նետում էր դեպի հետ։ Երբ դրսեցիները գնդակը բռնել չէին կարողանում, այդ նույնը երկու անգամ ևս կրկնվում էր։

Ապա ձախ կողքը դարձնելով դեպի դրսիններըը, գնդակը վեր նետած պահին ձեռքը խփում էր ադդրին և անմիջապես ափով, գրեթե հորիզոնական դիրքով, խփում էր գնդակը դեպի դուրս, որպիսի ձևը ևս կրկնում էր երեք անգամ։ Երբ այս ձևը կատարելիս նույնպես դրսեցիները չէին կարողանում գնդակը բռնել, ներսիններն այս անգամ աղվեսի ծակ ձևն էին կատարում, այսինքն՝ մեկը գնդակն աջ ազդրի տակից դեպի վեր նետելով՝ ձեռքը արագ ետ էր քաշում և իջնող գնդակը խփում դեպի դուրս։ Այս ձևի հաջող կատարումից հետո խաղացողը գնդակն աջ ոտներեսի վրա երեք անգամ վեր-վեր նետելով՝ ոտքով էր թռցնում դեպի դուրս։ Եվ, երբ դրսիններըը սրան այս անգամ ևս չէին կարողանում շարքից հանել, ներսինը գնդակը ոտքով կարողացածին չափ նետում էր հետուն, որի ընկած տեղից շալակելով՝ դրսեցիներըը ներսիններին բերում հասցնում էին մինչև սահմանաքարը, կամ, հնձնելու փոխարեն շահող կողմը մյուսի վրա փալաս էր դնում։

Խաղի չորս ձևերի կատարման ընթացքում եթե դրսիններըը գնդակը բռնելով հաջողեցնում էին խփել քարին, այստեղ խաղացողը շարքից դուրս էր գալիս, որին փոխարինում էր ընկերը և կիսատը լրացնում էր, բայց երբ գնդակը քարին չէր դիպչում, խաղացողը շարունակում էր կատարել հիշված ձևերը։ (Ա.Խ. II. 250—251)։

211. ՓՈՓԻ

Ղարադաղում խաղացողներն ընտրում են երկու **մարուն** (մայր), ապա դույգ-դույգ հալի գալով բաժանվում երկու խմբի։ Ապա **մարուններից** մեկը քար է պահում. քարը ում որ ընկնում է, նրա խումբը դառնում է գնդակ վերցնող։

Այնուհետև մի մեծ քար թիրախ են դնում, որից մեկ մետր հեռու գիծ են քաշում, որը երկու խմբերի սահմանն է հանդիսանում։ Սահմանի և թիրախի միջև ընկած տարածությունը **մայա** է կոչվում։ Գնդակ ունեցող խումբը մնում է մայայի մեջ, իսկ մյուսը՝ դուրսը։ **Մայայի** մեջ գտնվողները հերթով մոտենում են սահմանագծին, ձախ ձեռքով գնդակը նետում են դեպի օդը և ապա աջ ձեռքով հարվածում դեպի մյուս խումբը։ Եթե մյուս խումբը կարողանում է գնդակը օդում բռնել, կամ գնդակը գետին ընկնելուց հետո ընկած տեղից նետել ու հարվածել թիրախին, նետողը սատկում է, մի կողմ քաշվում. հաջորդն է գալիս նույն բանը կրկնելու. այսպես մինչև բոլորը սատկում են ու դրսի խումբը անցնում է ներսի խմբի տեղը։ Իսկ եթե չեն կարողանում հարվածել թիրախին կամ օդում բռնել, գնդակ նետողը հինգ անգամ նետում է և ընկեր է ստեղծում իր խմբի համար, որը կոչվում է սաղ. եթե ընկերներից մեկն ու մեկը սատկում է,

ապա այդ սաղը փոխարինում է և սատկողը նորից կենդանանում է։

Սահմանագծից դեպի դուրս գնդակ նետելու գործողությունը կոչվում է ածիլ («հինգ հետ ըմ ածալ»—հինգ անգամ եմ գնդակը նետել)։ (Եգ. էջ 631—633)։

212. ԿԸՌԱՆ ԹՈՓԻ

Տաս կամ ավելի տղաներ Ա և Բ խմբերի են բաժանվում։ Ա խումբը Բ-ի համաձայնությամբ վերևի կողմն է անցնում, որտեղ ամրացնում են մի տափակ քար, ճակատը դեպի ցած արած. սրան անվանում են ճեռբան։ Բ խմբի տղաները ցրվում են ընդարձակ տարածության վրա, աշխատելով բռնել կամ արգելել այն գնդակի ընթացքը, որ Ա խմբի տղաներից մեկը քանոնաձև տախտակով դեպի ներքև է նետում։ Եթե Բ խմբից մեկը գնդակը գետնի երեսով սլացնելով դիպցնում է քարին, այն ժամանակ գնդակ խփողը կորվում է. սրա նման էլ պետք է մյուս ընկերներին կորեն, որ հետո իրենք անցնեն Ա-ի տեղը և իրենց տեղը տան վերևի խաղացողներին։ Նույնպես ամենայն իրավամբ Բ խումբը կարող է վերև անցնել, եթե իրենցից մեկը չանթում է (բռնում է) խփած գընդակը առանց վայր գցելու։

Բայց եթե Բ խումբը վերոհիշյալներից ոչ մեկը չի կարողանում կատարել և մինչև խաղի վերջը ներքև է մնում ու չարչարվում է՝ Ա խումբը հաղթող է հանդիսանում։ (Ազգ. 1883, № 10, էջ 364)։

213. ԿԸՌԱՆ-ԹՈՓԻ

Խաղը Շուլավերում նույնն էր։ Մասնակցում էին տղաները։ Խաղի պարագաներն էին՝ մազագնդակը և տախտակե դաստան։ Խաղավայր էին ընտրում կալերը կամ հրապարակները։ Վերին կոչված մասում կանգնեցրած քարի մոտ կանգնում էր շահ կամ զառեղ կոչվող խումբը։ Թույլ համարվող կողմի ընկերները հերթով իրար ետևից տախտակով խփելով գնդակին, գցում էին օդի մեջ։ Հակառակ կողմի տղաները ցրիվ կանգնած՝ աշխատում էին չանթել՝ գնդակը բռնել։ Երբ չէին բռնում, աշխատում էին գնդակը նետելով նշանաքարին դիպցնել։ Որ կողմը որ 20 կամ 30 անգամ գնդակը չանթում էր կամ քարին խփում, նա իրավունք ուներ մյուս կողմի անդամներին զու կանչել տալ որոշյալ տեղից մինչև նշանաքարի մոտը, որը որպես հաղթվող կողմի պատիժ՝ ճաթ ուտացնել էր կոչվում։ (ԳԹ. III, № 18)։

214. ԹՈՓ ՉԱԼՈՒԿԻՆ

Ակնում կանգնեցված նշանաքարի մոտ տեղավորում էին բրդե գնդակը։ Խաղացողներից մեկը գնդակը ձեռքով քարի մոտից մի քիչ վեր էր գցում և ապա օդի մեջ ուժգին զարկով նետում դեպի խաղակիցները։ Երբ վերջիններիս հաջողվում էր՝ ա. գնդակը օդում բռնել կամ բ. գետնին ընկնելիս վերցնել և քարին խփել, գնդակ խփողը կպարտվեր, իսկ եթե ոչ՝ խփողը շահում էր 1 միավոր և նորից էր խփում, մինչև որ նախապես որոշված թիվը լրանում էր։ Որոշված թիվը լրացնողին բոլոր պարտվողները շալակում էին և տեղափոխում մի սահմանից մինչև մյուսը, որից հետո խաղը կրկնվում էր։ (ՃՀԱ, 179)։

215. ՔԱՐԵ ԳՆԴԱԿ

Կարսում խաղացողները ղույգերի էին բաժանվում, որոնք մի հարթ, մեծ քար կանգնեցնում էին մի բարձր տեղ. երկու ընկեր՝ մի փայտ և մի գընդակ ձեռքին, կանգնում էին այդ քարի մոտ, իսկ մյուսներն անցնում էին ցածի կողմը, մի քանի քայլ հեռու։ Այս առաջին ղույգը գնդակը դեպի ցածիններն էր խփում, իսկ սրանք աշխատում էին բռնել օդում։ Բռնողն իր ընկերոջ հետ անցնում էր քարի մոտ և պարտված ղույգը իջնում էր ցածի կողմը, իսկ երբ բռնել չէր հաջողվում, ցածիններից գնդակը գետնից առաջին վերցնողն իսկույն խփում էր քարին, այս հաջողեցնելիս ևս դերափոխություն էր լինում։ (ՍՔ. ՀԺՀ, VI, 136. Բ. Մխ, 38—39)։

216. ՔԱՐ ԹՈՓԻ

Խաղը նույնն էր։ Տնկված քարը ապա էր կոչվում։ Թիակը 3/4 մետրաչափ էր, որի մի ծայրը տափակ և լայն էր, իսկ մյուսը՝ բարակ և կլոր։ Խաղացողներից մեկը կանգնում էր բռնում, իսկ մյուսները, որոնց թիվը չէր սահմանափակվում, բնից մի քանի մետր հեռու։ Բռնում կանգնողը ձախ ձեռքով գնդակը վեր էր գցում և աջ ձեռքի թիակով խփում դեպի խաղակիցները։ Գնդակը օդում բռնողը կամ գետնից վերցնելով՝ քարին խփողը դերը խփողի հետ փոխում էր։ (Լ. ԺՄխ, 35—36)։

217. ՃԸՋԸՐ—ՎԸՋԸՐ

Խաղում են նոր Բայազետում, 6—10—12 հոգով, երկու խմբի բաժանվելով։ Գետնին գծում են 3—4 սաժեն տրամագծով մի շրջան և վիճակահանությամբ պարտված խմբի անդամները սրա շուրջը հավասար հեռավորությամբ կանգնում են։ Հաղթող խմբի անդամները հեծնում են պարտված խմբի անդամներին։ Հեծնողների մայրը գցում է գնդակն իր աջ կողմի ընկերոջը, որը պահելով իր հեծած դիրքը, երկու ձեռքով բռնում է գնդակը, մի շրջան է անում, պարտված խումբը ստիպված է հաղթող խմբի անդամներին շալակած մի անգամ պտտվել շրջանի շուրջը։ Այս միջոցին հաղթող խումբը ձևացնում է, թե ձիեր հեծած ուրախություն է անում, և «ճրզըր վրզըր», «ճրզըր վրզըր» ասելով սաղ է ածում։ Երբ մի շրջան անում են, կրկին սկսում են գնդակը նույն կերպ գցել։ Բայց, հենց որ մեկը չի կարողանում գնդակը բռնել, իսկույն բոլոր հեծնողները ցած են գալիս և փախչում, իսկ հեծվածներից մեկը վերցնում է գնդակը և գցում նրանց հետից։ Եթե ոչ ոքի չի դիպչում, նրանք վերադառնում են և կրկին հեծնում, իսկ եթե դիպչում է, ասում են.

Էշը էլավ,
Տիրոջ խեծավ.

և դերերը փոխում են։ (Եվ ժխ. № 64, էջ 73—75)։

218. ՁՈՒ, ՁՈՒ

Մի խումբ երեխաներ վիճակով երկու հավասար խմբի էին բաժանվում. մի այլ վիճակով սրանցից մեկը հեծնող, մյուսը շալակող էր դառնում։ Հեծնելուց հետո ձիերը շրջանաձև և որոշ հեռավորության վրա կանգնում էին։ Հեծնող վարպետը վերցնում էր բրդե գնդակը և նետում էր հաջորդ հեծյալին. վերջինս նետում էր երրորդին և այս ձևով գնդակը նորից դալիս, հասնում էր վարպետին։ Երբ այս մի կարգը լրանում էր, վարպետն ասում էր.

—Ձո՛ւ, չո՛ւ, ես էս տեղին հավան չեմ։

Այս ասելուն պես վարպետն իր ձիով տեղափոխվում էր հաջորդի տեղը և հաջորդը՝ երրորդի տեղը և այլն։ Տեղափոխությունը լրանալիս գնդականետումը նորից էին սկսում և այս ձևով խաղը շարունակում այնքան ժամանակ, մինչև որ գնդակը գետին էր ընկնում և խմբերի դերերը փոխվում։ (ՃՀԱ, 171—172)։

219. ՀԵՏՆԵԼՈՎ ԳՆԴԱԿ

Խաղը նույնն է Արթիկի շրջանում։ Խաղում են դարնանը և աշնանը, բակերում ու կալերում։ Դրբսեցիներից մեկի ազդանշանով սրանք թռչում նրստում են կանգնածների մեջքերին։ Ներսիննների կողմից փախչողներին ուղղված գնդակը վրիպելու դեպքում փախչող խումբը մինչև գնդակով երկրորդ անգամ հարված ստանալը արագորեն մտնում է շրջանի մեջ, որով նա հաղթանակ է շահում։ Բայց եթե գնդակը վրիպելիս մինչև փախչողների շրջան մտնելը շալակողներին հաջողվում է խփել նրանցից մեկին, խփողները շահում են և խմբերի դերերը փոխում։ (Վև, ձ.)։

220. ԻՇԱԳՆԴԱԿ

Լոռիում խաղը նույնն էր։ Էշերը կռանում էին։ (Շխ. ձ.)։

221. ՀԻԼ-ՀԱԼԻ

Խաղը Ղարադաղում նույնն է։ Խաղապետերը մարուց են կոչվում։ Հեծյալները գնդակը իրար են տալիս դեպի աջ ուղղությամբ։ Գնդակը ընկնելիս խմբերի դերերը փոխվում են։ (Եգ. 641)։

222. ՍԱԳԻ ՈՏՔՈՎ ԳՆԴԱԿ

Խաղը նույնն է։ Սովորական վիճակահանումից հետո, որի ոտքը որ տակն է մնում, նրա ընկերները կանգնում, իսկ մյուսները գալիս, նստում են սրանց ուսերին՝ ոտքերը կախելով կրծքերի վրայից։ Խմբերի դերերը փոխվում են գնդակը վրիպելու դեպքում։ (ՍՔ. ՀԺՀ, VI, 135, Բ. Մխ, 38)։

223. ԳՆԴԱԿԱԽԱՂ

[Գարնանը]... երեքական, չորսական, հնգական տղայք երկու կողմ բաժանվելով, երկու կողման երկու պապեր ընտրեինք, որ խաղին խաղապետ լինեն և խաղն կառավարեն։ Հետո սույն պապեր 10 քայլ կամ այլ ավելի իրարմե հեռի մնալով մին մի պապ յուր զո[ր]եղ ընկերի վերա հեծնալով, հեծած տեղեն գունդ ձգեին իրարու։ Եթե արևելքի կողմի հեծյալ պապն արև-

մուտքի կողմի պապի գունդ բռներ հեծած տեղեն, արևմուտքի տղայք բոլոր ի մասին երթային, արևվելյան խումբ շալկելով արևմտյան կողմ յուրյանց տեղ տանեին և ինքյանք արևելյաց տեղն բռնեին։ Իսկ եթե արևմտյան պապ արևելյան կողմի պապի ձգած գունդ բռներ, արևելյան խումբն գայր, արևմտյան խումբ շալկելով յուր տեղն տաներ։ Այս մի քառորդի չափ հաշիվ տևեր, զի շատ դժվարակիր էր։ (Ջ. 4184, էջ 159բ—160ա (Վ.)։


224. Հ Ա Լ Ի-Հ Ա Լ Ի

Խաղում են տղաները աշնան ամիսներին 6—8 հոգով։ Հալա գալով նրանք բաժանվում են երկու խմբի, ապա շարքով կանգնում իրար դեմ։ Մի կողմը գնդակը հալում է[75], մյուս կողմը՝ բռնում։ Բռնողը նորից գցում է հակառակ կողմը, որ նրբանք բռնեն։ Գնդակը երեք անգամ բռնող կողմի անդամներից մեկը հեծնում է իրեն հետ հալա եկողին։ Նա մի ոտը դնում է տակինի երկու կիցերի մեջ, մյուսը՝ ոտին։ Տակինի ընկերներից մեկը կանգնում է նրա առաջ, որ գցած գնդակը հեծածի ձեռից խլի։ Մի ուրիշն էլ նրա հետն է կանգնում, որ հեծածի ձեռից վրիպած գնդակն ինքը բռնի։ Հեծածի ընկերը քիչ հեռու կանգնում, զգուշությամբ գնդակը գցում է դեպի նա։ Երբ գնդակը նրա առջևը կամ հետը կանգնողներն են բռնում, այդ միջոցին տակինը հեծնում է վերևինին, որին էշը փալաև կանի են ասում։ Իսկ եթե գնդակը հեծածն է բռնում, դա էլ կոչվում է ֆաշկա, որը եթե կրկնվում է երեք անգամ, հաղթողները հեծնում են իրենց հետ հալա եկողներին, հոանկյունաձև կամ քառանկյունաձև կանգնում են գնդակը միմյանց գցում։

Երբ գնդակը առանց վայր գցելու կարողանում են այն երեք անգամ փոխանակել, էշերի կանգնած տեղերը փոխում են, իսկ երբ գնդակը ձեռքից վայր են գցում, կտրվում են, որով և խաղը նորոգվում է, (ԳԹ, III, № 18/Շմ.)։

225. ԹՈՓՈՎ ՊԱՂՆԻՍ-ԷՇ

4-ից մինչև 20 պատանիներ երկու խմբի էին բաժանվում և 10—20 քայլ տարածության վրա հանդիպակաց պատերի տակ կամ սահմանագծերի վրա կանգնում։ Նախապես ընտրված պապերից մեկը թաց ու չորով մազագնդակը նետում էր դեպի դիմացի խումբը այն հաշվով, որ վերջին-



Նկ. 27ա. Թոփով պաղնիս էշ (առաջին պահերից մեկը)
Լուս. Մ. Քթոյանի

ներս կարողանային բռնել այն։ Գնդակը բռնել կարողացողը գնում, հեծնում էր նետող խմբի անդամներից մեկին։ Այս անդամ գնդակը մյուս խումբն էր նետում, որը բռնողը նույնպես գնում, հեծնում էր նրանցից մեկին։



27բ. Թոփով պաղնիս էշ (երկրորդ պահը) (բնագիր № 225)
Լուս. Մ. Քթոյանի

Եվ այսպես, երբ փոխադարձաբար բոլորը, բացի պապերից, իրար հեծնում էին, այն ժամանակ հեծնողներն իրենց էշերին քշում էին դեպի

---

75 Բրդե թելից պատրաստված գնդակն օդում բարձր գցելը «հալել» է կոչվում։—Ծան. բան.

առաջ, հարձակվում իրար վրա՝ միմյանց ոտքերով ձգելով վայր գցելու նպատակով։ Ավելի ընդարձակ սահմանի մեջ խաղալիս նրանք սահմանից սահման էին տեղափոխվում։ (Ախ, II, 281—282 (Վ.)։

226. ԹՈՓՈՎ ՏՈՒՇՓԵՏ

Վանում խաղին մասնակցում էին 2—10 պատանի տղաներ, որոնք ընդհանուրի համար ունենում էին մի մազե գնդակ և մի թաթաձև տախտակ, որ ձեռքի թաթի ձև էր ունենում։ Ընդարձակ խաղավայրում երկու հավասարաթիվ խմբերից մեկը թաց ու չորով ներսի, իսկ մյուսը դրսի խաղացող էր որոշվում։ Դրսիններից ամենաճարպիկը գնդակը ձեռքն առած մտնում էր ներսիննե֊րի մեջ և նրանցից յուրաքանչյուրին հերթով գնդակ էր տալիս, այսինքն՝ տուշփետը ձեռքն ունեցողի առջև



Նկ. 28. Հեծած գնդակախաղ (բնագիր № 218)
Լուս. Մ. Քոյանի

գնդակը վերև էր գցում։ Գնդակն ընդունողը տուշփետով այն խփում էր դեպի դուրս և ինքը գնում կանգնում նախապես որոշված, մի քիչ այն կողմ գտնվող փոքր սահմանի վրա, որտեղից պահանջի համաձայն վազում էր դեպի սահմանաձայրը, իսկ այստեղից էլ՝ դարձյալ նոր պահանջով ետ էր դառնում դեպի իր ընկերը՝ նորից գնդակ խփելու իրավունքով։

Դրսիննե֊րը մի կողմից աշխատում էին դեպի իրենց սահմանը նետված գնդակը գետին չընկած՝ բռնել և մյուս կողմից՝ ընկած գնդակն առնելով ներսիններից մեկին կամ մյուսին խփել, երբ սրբանք ներսից դուրս և դրսից ներս շարժման մեջ էին լինում։ Երբ հաջողեցնում էին մեկին գնդահար անել, հաղթած լինելով իրենք֊ներս էին գնում և խաղը նույնությամբ կրկնում։

Ներսի խմբի մեջ մտած գնդակ տվողը ներսիններից մեկին խփելու իրավունք ուներ այն դեպքում, երբ նրանցից այդ մեկը դրսից ներս կամ հակառակը՝ վազքի մեջ էր լինում։ Բայց պատահում էր, որ խաղի արտաչափ տարածության վրա հարկ էր լինում մի ծայրից մյուս ծայրը գնդակ խփել. այդ դեպքում դրսիննե֊րը գնդակը ձեռքից ձեռք էին փոխանցում և հաստատ պայման ստեղծում ներսիններից մեկն ու մեկին գնդահար անելով հաղթանակ շահել։

Հաճախ էր պատահում, որ խաղի ընթացքում տուշփետով իրար հետից գնդակ զարնողները դեպի փոքր սահմանը փախչելիս պատեհ առիթ էին գտնում վերստին ներս փախչել, որովհետև իրենց գնդակ տվողը, երբ գործին վարպետ էր լինում, գնդակ տալու ժամանակ այնպես էր անում, որ նրանք տուշփետով չկարողանային խփել։ Այդ ձևով փուճ եղածները փոքր սահմանի վրայից ետ գալ չէին կարող, եթե հետևյալ կանոնը չլիներ. գնդակ տվողն այն ժամանակ փակվածների պահանջի համաձայն գնդակը մեկ կամ մի քանի անգամ (բարձր կամ ցածր), վերև էր նետում և բռնում։ Այդ փորձերի ժամանակ փակվածներից մեկը, երբ կարողանում էր փոքր սահմանից վազել մեծ սահմանը և վերադառնալ, նա իր և իր բոլոր ընկերներին ազատում էր փճուից ու վերականգնում նրանց գնդակ խփելու իրավունքը։

Փոքր սահմանի վրա փակվածները այդտեղից դեպի ներս փախչելու փորձի ժամանակ գնդակ տվողի կողմից գնդահար էին լինում։ Բայց կանոնի համաձայն փախչողն աշխատում էր գնդակով խփողին խաբս տալ՝ փախչելու փորձ անելիս այնպես անել, որ գնդակը վրիպեր։ Այդ դեպքում խաբս տվողը ոդջանում էր և առանց սահմանագիծը երթ ու դարձ անելու իր գնդակ զարնող ընկերների շարքն էր անցնում։ (Ախ. II, 239—242)։

227. Ս Ե Թ Ա Կ

Խաղում են Նոր Բայազետում, 6—16 երեխաներ, բաժանվելով երկու խմբի։ Նախ միմյանց հանդեպ, մոտավորապես 10—15 սաժեն հեռավորության֊ով դնում են մի-մի քար, որոնք կոչվում

են վերին և ներքին գլուխ (սահման)։ Վերին գլխից դեպի ձախ, մոտ երկու արշին ներքև գնում են մի ուրիշ քար, որ կոչվում է մեռնել։ Վիճակով մի խումբը կանգնում է վերին, մյուսը ներքին գլխում։ Վերջինիս խմբից մեկը գալիս է վերին գլուխը և թոփ տալիս, այսինքն գնդակն օդի մեջ վերև գցում, որ մյուս խմբի անդամները հերթով մի փայտով խփեն։ Խփված գնդակը կրկին գցում են թոփ ավողին, որ նորից տա։

Խաղի էությունը հետևյալն է. վերին գլխի կանգնած խմբի բոլոր անդամները հերթով մի-մի անգամ խփում են գնդակին և անկախ այն հանգամանքից, հաջողեցնում են խփելը, թե ոչ, մեռնում են, այսինքն զրկվում են կրկին խփելու իրավունքից. նրանք պետք է գնան կանգնեն մեռնել կոչված քարի մոտ։ Նրանք կողջանան, կրկին խփելու իրավունք կստանան ընկերներից մեկի գնդակին խփած միջոցին, վազել ներքին գլուխը և վերադառնալ, սակայն եթե ներքին գլխի անդամները կարողանան վայր ընկած գնդակը վերցնել և խփել դրանցից մեկին, այն ժամանակ խմբերն առիթված կլինեն տեղերը, հետևապես և՝ դերերը փոխել։ Եթե մեռածը միանգամից չի հաջողեցնում թե գնալ ներքին գլուխը և թե վերադառնալ, ազատվում է այնտեղ՝ ներքին գլխում, մինչև նորից կխփեն գնդակին։

Պատահում է, որ լավ խաղացողը հենց որ խփում է գնդակին, ինքն էլ վազում է ներքին գլուխը և վերադառնում։ Լինում են դեպքեր, որ վատ խփողների պատճառով շատ ընկերներ մեռած մնում են և չեն կարողանում վազել և վերադառնալ։ Այսպիսի դեպքերում ամենավերջին խփողին արտոնություն են տալիս երեք անգամ խփելու, և եթե անհաջող է լինում, դերերը փոխում են։

Բախտավորություն է համարվում, երբ խփված գնդակը ներքին գլխի անդամները օդի մեջ բռնում են. այդ դեպքում փոխում են տեղերն ու դերերը։

Նոր Բայազետում այս խաղը խաղալիս որոշ բացականչություններ են անում. այսպես, օրինակ, գնդակին խփողը բացականչում է.

—Սեթա՜կ։

Ներքին գլխի անդամները պատասխանում են.

—Փեթա՜կ։

Եթե վերջին խփողի երեք հարվածն էլ անհաջող է անցնում, ներքին գլխի խումբը բղավում է.

—Երե՛ց, երե՛ց, երե՛ց, (այրվեց) և գրավում են վերին գլուխը։ (Եվ. Ժո., № 71, էջ 93—96)։

228. ԴԱՍՏԱԿՈՎ ԳՆԴԱԿԱԽԱՂ

Ախալքալաք քաղաքում ամռանը «Ճգնավորին ղային դուրանը» կոչվող հարթակում կիրակի օրերին կազմակերպվող այն խաղին մասնակցում էին 17—18 տ. տղաները, 16 և ավելի հոգով, որ վիճակով երկու խմբի էին բաժանվում[76]։ Խմբապետները գաստակ բռնելով վիճակ էին գցում. վերջինը մնացող ձեռքի տիրոջ խումբը դառնում էր ներսի, մյուսը՝ դրսի խումբ։ Դրանից հետո ընտրում էին երկու սահման, իրարից 100 մ հեռավորության վրա։ Վերին սահմանի մոտ կանգնում էին ներսիննները, իսկ դրսիննները ցրվում էին երկու սահմանների միջև ընկած տարածության վրա։ Ներսիններից մեկը վերցնում էր դաստակը[77], կանգնում վերին սահմանի մոտ, ձախ թևը դեպի ցածի սահմանը դարձնելով։ Դրսիններից մի հոգի գալիս, կանգնում էր վերին սահմանի մյուս կողմը, դաստակավորի դիմաց։ Սա վերցնելով բրդե նախշազարդ գնդակը, նետում էր դեպի դաստակավորը, իսկ վերջինս դաստակով գնդակին ուժեղ հարվածով ուղղում էր դեպի ցածի սահմանը, նպատակ ունենալով գնդակը հնարավորին չափ հեռու գցել և դրա հետից ուժեղ վազելով հասնել ցածի սահմանը։ Այստեղ անվտանգ հասնելու դեպքում նա համարվում էր սատկած (առհասարակ դաստակով գնդակ խփողները սատկած էին համարվում)։ Դրսիններն աշխատում էին գնդակը օդում բռնելով կամ գետնից վերցնելով արագ հետապնդել փախչողին և խփել նրան, որով խըմ-

---

76 Երբեմն խաղին մասնակցում էին տարբեր թաղերի բանվոր (արհեստավորների աշակերտ) պատանիներն ու երիտասարդները՝ առանց վիճակահանման։ Դրանք առանձին խմբեր էին, որոնց մեջ հազվադեպ պարագաներում միայն մտնում էին հատ ու կենտ հարուստների տղաներ։ Կիրակնօրյա այս խաղին ներկա էին լինում քաղաքի շատ աշխատավորներ և ուրիշներ։

Տղաների զգեստներն էին՝ չուխա, որ հանում, դնում էին ցած, ճաքավոր չուստեր կամ ոտնամաններ, լայն շալվար, որ դրվում էր չուստերի ճաքերի մեջ, վերնաշապիկ, որ կապավառոտկա ձև էր ունենում, գլանաձև տափակ փափախ, «շլապկա» կազակական բարձրագագաթ փափախ։

77 Դաստակը կես մետրանոց սախտակ էր, որ թաթ և բռնակ էր ունենում։



Նկ. 29. Դաստակով գնդակախաղ (բնագիր № 228—231)

Նկ. Ռ. Մնացականյանի

բերի դերերը փոխվում էին։ Իսկ երբ դրսեցիներին խփել չէր հաջողվում, գնդակը ետ էին ուղարկում, նկարագրած գործողությունը կրկնելու համար։ Այս երկրորդ զարկի ժամանակ դաստակավորը դարձյալ վազում էր դեպի ցածի սահմանը, իսկ ցածի սահմանում սատկած իր ընկերը՝ դեպի վերին սահմանը՝ ողջանալու և ընկերներին խաղը նվելու նպատակով։ Գործողությունն այս ձևով կրկնվում էր մինչև վերջին մարդը դաստակավոր դառնալն ու փախչելը, ըստ որում հերթը այդ վերջինին հասնելիս սրան իրավունք էին վերապահում՝ գնդակը խփել երեք անգամ։ Եվ որովհետև ամեն անգամ չէր հաջողվում, որ խփողները անվրտանգ ցածի սահմանը հասնեին և հասնելիս էլ հաջող վերադառնալով ողջանային, ուստի սրանց զգալի մասը սատկած էր մնում։ Այս դեպքում վերջին խփողի գնդակի առաջին իսկ հարվածի ժամանակ սատկածները փախչում էին դեպի ցածի սահմանը, և երկրորդ ու երրորդ հարվածների ժամանակ վերստին ետ փախչելու միջոցով կենդանություն ստանում։ Հենց որ որոշ խաղացողներ կենդանություն ստանալով նորից գնդակ խփելու իրավունք էին ստանում, խաղը աշխուժանում էր հօգուտ այդ կենդանացածների և ծանր հոգնություն էր պատճառում դրսեցիներին։

Կանոններ.—*1.* Գնդակ խփողները, նայած թե գնդակը ո՛ր ուղղությամբ էր սլանում, հարվածից խուսափելու համար ոչ թե ուղիղ, այլ կոր գծով և խոտորումներով էին վազում դեպի ցածի սահմանը։ *2.* Ուղղակի իրենց ուղղված հարվածից խուսափողները բերանբերիվայր գետին էին փռվում, որպեսզի գնդակը վրիպեր։ *3.* Գնդակ տվողը ա-

ռանձնապես վերջին խփողին գնդակ տալու ժամանակ խաբս էր տալիս, որպեսզի նա օդում գընդակին հարվածել չկարողանար։ Այդ պատճառով խփողը հաճախ հրաժարվում էր գնդակն առնելուց, որով և վեճեր էին ծագում։ 4. Խմբերի դերերը փոխվում էին այն դեպքում, երբ ներսի խմբի վազողները դրսեցիներից գնդակի հարված էին ստանում և երկրորդ՝ երբ վերջին գնդակ խփողի երեք հարվածներից ոչ մեկը նպատակին չէր հասնում և սատկածները չէին ողջանում։ 5. Անհաջող խփված գնդակի դեպքում ներսիննները դեպի ցածի սահմանը չէին վազում։ (Բ. ժխ. ձ.։ Համմտ. ՍՔ. ՀԺՀ, VI, էջ 133—134 և Բ. Մխ., 35—37)։

229. Թ Ո Փ

Թոփ խաղալը Սասունում նույնն էր. այն հատուկ էր պատանի և չափահաս տղամարդկանց։ Խաղի գործիքներն էին՝ կոփալը (մահակ) և գընդակը։ Կոփալը մի հատ ձեռնափայտ էր, հարվածող ծայրն ավելի հատ և քիչ տափակ, որով խփում էին գնդակը։ Գնդակը մազից լմված խնձորաչափ գունդ էր։

Հակառակորդները պետք է եկող գնդակը բռնեին օդում, որով խմբերի դերերը փոխվում էին, այլապես այդ գործողությունը երկար ժամանակ կրկնվում էր։

Հարվածողը եթե չկարողանար խփել գնդակին, ինքը մեռնում, շարքից դուրս էր գալիս և նրան հաջորդում էր իր ընկերներից մի ուրիշը։ Ամեն մի հարվածող մի անգամ միայն հարվածելու իրավունք ուներ։ (Պետ. ձ.)։

230. Թ Ո Փ Ա Դ Ա Ն

Կոտայքում մասնակցում են 6—10 պատանի կամ երիտասարդ տղաներ, գարնան և աշնան ամիսներին։ Վիճակով բաժանվում են երկու խմբի, որոնք ունենում են մեկական պապ։ Իրարից 50—100 մ հեռավորության վրա երկու գիծ են գծում, որոնք հակառակորդ խմբերի համար սահմանների դեր են կատարում և ճոշկ են կոչվում։ Սրանցից մեկը վերին և մյուսը ներքին է համարվում։

Պապերը քար բռնելով որոշում են իրենց խմբերի դիրքը, որով մեկը դառնում է վերին ճոշկի և մյուսը՝ ներքին ճոշկի պաշտպան։ Խաղն սկսելու իրավունքը վերապահվում է վերին ճոշկի խմբին։

Վերին ճոշկի մոտ կանգնում են սրա և ներքին ճոշկի պապերը, իսկ ներքին ճոշկի մոտ՝ սրա պաշտպանները՝ առանց պապի։ Նրանք իրենց ուժերը դասավորում են երկու ճոշկերի արանքում ու իրենց ճոշկի շուրջը՝ ցրված վիճակով։

Վերին ճոշկի խումբն ունենում է բամբակից ու բրդի թելից պատրաստված՝ խնձորից մեծ մի գընդակ և 50 սմ երկարությամբ թիականման տախտակ-դաստա։

Վերին ճոշկի մոտ կանգնած ներքին ճոշկի խմբի պապը ձեռքով գնդակը օդը նետելով տալիս է հակառակորդ խմբի այն անդամին, որի ձեռքում դաստան է գտնվում։ Դաստակիրը գնդակը դաստայով ուժգին նետում է դեպի ներքին խումբը։ Վերջիններս ձգտում են գնդակը բռնել, որով խմբերի դերերը փոխվում են, իսկ չբռնելու դեպքում դաստակիրը դաստան իսկույն վայր է գցում և վազում դեպի ներքին ճոշկը, սրա վրա ոտք դնելու և վերստին, արագորեն իրենց ճոշկը վերադառնալու համար։ Իսկ հակառակորդ խմբի անդամները վազում են դեպի գնդակը, այն վերցնելով՝ դաստակրին խփելու և նրան կտրելու նպատակով, ըստ որում նրան խփել կարելի է երկու դեպքում՝ մինչև ներքին ճոշկը հասնելը և այստեղից խույս տալուց հետո։ Երբ դաստակիրի ոտքը գտնվում է ներքին ճոշկի վրա, նրան կտրելու իրավունք չկա։ Այս դեպքում ներքին խմբի անդամները չեն սպասում, որպեսզի դաստակիրը վերադառնա, այլ գնդակը նետում, հանձնում են իրենց պապին, որը նորից տալիս է մի այլ դաստակիրի, խաղը նույն ձևով կրկնելու համար, իսկ ներքին ճոշկի վրա կանգնած նախկին դաստակիրը հարմար պահ գտնելով խույս է տալիս և վերադառնում իրենց ճոշկը։

Խաղն այս ձևով կրկնվում է այնքան ժամանակ, քանի դեռ վերիննները որևէ ձևով չեն կտրվում։

Կանոններ.—1. Գնդակը վերին ճոշկում հերթով են խփում։ 2. Այն դեպքում, երբ դաստակիրը գնդակը նետելուց հետո դեպի ներքին ճոշկը վազելիս կիսաճանապարհին գնդակը վերցնողի կողմից հարձակման է ենթարկվում և ճկունությամբ պաշտպանվելով գնդակը վրիպել է տալիս, իրա-

վունք ունի հակառակորդի ճոշկը չհասած վերադառնալ իրենց հոշկը։ 3. Երբ գնդակը ներքին ճոշկի խմբի անդամները նետելով տալիս են իրենց պապին, վերջինս նույնպես իրավունք ունի խփելու դեպի ներքին ճոշկը վազող կամ այստեղից վերադարձող դաստակիրին։ 4. Երբ գնդակը ներքին ճոշկի խմբի պապին նետելիս այդ պապը չի կարողանում բռնել, դաստակիրը ժամանակ շահելով շտապում է կամ ներքին ճոշկից և կամ կիսաճանապարհից վերադառնալ, հասնել իրենց ճոշկը։ 5. Ներքևինների պապը երբեմն գնդակը տալու պահին խաբս է տալիս, որպեսզի հակառակորդի անդամները սխալմամբ առաջ ընթանալիս գնդակով կտրի և խմբերի դերերը փոխի։ (Ի. ժԽ. ձ.)։

231. ԹՈՓ ՉՈՐՆՅԻ

Ասպարանում խաղին մասնակցում են նաև աղջիկները։ Իներից մեկը ճոչ և մյուսը՝ առաջ է կոչվում։ Հակառակորդ խմբի ավագի կողմից խփելու համար գնդակ տալը հաց տալ է կոչվում։ Գնդակ ստացողը խփում է թիակով։ Հակառակորդները ձգտում են գնդակը օդում բռնել և ետ՝ դեպի ճոչը նետել։ Հոչ կոչված քնից գնդակը խփվում է հերթականությամբ։ Խփողները գնդակի հետ վազում են դեպի առաջ կոչված բույնը և վազքով վերադառնում ճոչ՝ կրկին խփելու իրավունք ձեռք բերելու համար։ Եթե խփողները վազքի միջոցին գնդակահար են լինում և բոլորը վիրավորվում են, ապա վերջին խփողը երեք անգամ խփելու իրավունք է ձեռք բերում։ (ՄԱխ. ձ.)։

232. ԹԱԳԱՎՈՐԻ ԳՆԴԱԿ

Խաղացող պատանի տղաները բաժանվում են երկու խմբի և 10—15 մ հեռավորությամբ ուղիղ գծով կանգնում միմյանց հանդեպ։ Սրանք կոչվում են էշեր։ Առաջին խմբից մեկը գնդակը գցում է դեպի երկրորդ խումբը։ Եթե երկրորդ խմբից մեկը կարողացավ դնդակը բռնել, բռնողը գնում կանգնում է առաջին խմբի հետևը և կոչվում է թագավոր։ Հետո երկրորդ խմբից են գնդակը գցում դեպի առաջին խումբը, և եթե մեկը բռնում է, բռնողը գալիս, երկրորդ խմբի հետևը կանգնում և կոչվում է թագավոր։ Այսպես հաջորդաբար գցելով, թագավորները շատանում, էշերը քչանում են։ Երբ մի կողմի ոչ էշերից, այլ թագավորներից մեկն է բռնում գնդակը, այն ժամանակ երկու խմբի թագավորներն էլ նստում են էշերի վրա և գնում հակառակ կողմերի բները։ (Լ. ԺՄԽ, 36)։

233. ՄԱՋԱՏՈՒԿ

Շապին-Գարահիսարում խաղում էին պատանի և երիտասարդ տղաները, ընդարձակ և հարթ տեղերում, 8 և ավելի հոգով։ Անուն պահելով խաղացողները բաժանվում էին երկու հավասար խմբի, իսկ գնդակը առաջին անգամ նետող ընտրելու համար վիճակ էին գցում։

Խմբերը կանգնում էին ընդարձակ խաղադաշտի երկու կողմերում, իսկ գնդակ նետողը՝ նրանց կենտրոնում։ Վերջինս գնդակը ձեռքով նետում էր դեպի վեր, ուղղահայաց ձևով։ Գետին ընկնելիս գնդակը ո՛ր կողմի վրա որ թեքվում էր, այդ կողմի սահմանագծի մոտ կանգնած խմբի անդամներն այն անմիջապես ոտքով իրար գլորելով, ձգտում էին անցկացնել իրենց սահմանագծից դուրս։ Հանդիպակաց սահմանագծին մոտ կանգնած խումբը նույնպես աշխատում էր գնդակը նրանց ձեռքից ոտքով խլել և անցկացնել իրենց սահմանից դուրս։ Սահմանից անցկացնող խումբը շահում էր մեկ խաղ։

Երբ որևէ մեկը գնդակը ձեռքով էր բռնում, որպես տուգանք հակառակորդ խումբը շահում էր մեկ խաղ։

Խաղը համարվում էր ավարտված, երբ խմբերից մեկը լրացնում էր 10—12 պայմանավորված թիվը։ (Հս. Խ. ձ., 7—8)։

234. ՄԱՋԱԳՆԴԱԿ

Խաղին մասնակցում էին 5—20 և ավելի տղաներ, որոնցից մեկը շուխ էր պահում։ Զոփը գտնողը ճովիվ էր դառնում։

Հովիվը գնդակը նետում էր դաշտի մեջ, որից հետո խումբը ոտքով տալիս էր իրար։ Հովիվն աշխատում էր գնդակը բռնել և նրանով խփել խաղացողներին։ Ո՛ւմ որ խփում էր, նա հովիվ էր դառնում ու խաղը նույնությամբ կրկնում։ (Հս. Խ. ձ., 7—8 (ՇԳ.)։

235. Ա Վ Ե Լ Ո Ց Ի Կ

Եթե ավելոցիկ կուզես խաղալ, կուշտ տփոց ուտելու պատրաստ եղիր։ Այս խաղը ամեն հասակի անձինք կարող են խաղալ [գարնանը], մինչև կանայք և կուսանք ևս, վասնզի հեշտ է և դյուրին։ Պետք է նախ մի կճատ ավել գտնալ, այսինքն կրճատյալ և մաշյալ ավել, հետո բերել ձգել զայն խաղացող պատրաստ բազմության մեջ։ Մեկն բազմության մեջեն ավելն առնելով ձգե մեկի վերա և ասե.—Մեր վերիդ։ Այս մարդ, կամա ակամա, կճատ ավելին տեր լինելով, ոտք կդնե ավելի վերա, որ ուրիշ մարդ աքացի զարնելով ավել չհեռացուցցե։ Զայս տեսյալ՝ բազմությունն ուրախ սրտիվ գան շնորհավորեն զմեռն ընդունողն, բավական կլորիկ ծեծ մի տալով նմա։

—Է՜հ, խալալեցավ, ասելով փախչեն հեռանան։ Ավելի տերն ոտքով ավելին զարնելով աշխատի ավել մեկի ոտքին դիպցունել։ Եթե դիպավ, ինքն ազատեցավ։ Ավել յուր նոր մայր գտավ։ Ամենք գան, զայն շնորհավորեն, ապա եթե չկարաց, չորս կողմանեն կուտեն, ավելի մոր վերա անխնա ծեծեն մինչև երթա, յուր ավել մանուկ գտնա և սկսի ոտքով այլոց վերա ձգել և զավելն մինչև հաջողի մեկին վերա ձգել ազատիլ։

Արագաշարժ և աչքաբաց անձինք շուտով զավելն այլոց վերա ձգեն և ազատին, իսկ համրաշարժ և բթամիտ անձինք անկարան, ուստի սաստիկ և երկար ծեծ ուտեն։

...Մեր տղայության ժամանակ Բարեկենդանին կանանց սեռ այս խաղ խաղային, իսկ գարնան՝ այգյաց մեջ, երբ առանձին լինեին։ (Ջ. № 4184, էջ 167 բ(Վ.)

236. Ք Ս Ա Ն Ը Մ Ե Կ

Խաղում են Արաբկիրի պատանի տղաներն ու աղջիկները մերթ առանձին-առանձին և մերթ միասին։ Խաղը տեղի է ունենում տարվա բոլոր տաք եղանակներին փողոցներում և բակերում։ Խաղալիքն է ռետինե գնդակը։ Մի հոգին թեև այս խաղով ինքն իրեն զբաղեցնում է, բայց բուն խաղը կազմակերպվում է երկու և ավելի հոգով։ Երկու հոգին երկու հակառակորդներ են դառնում, երեք հոգին առանձին-առանձին միավորներ են կազմում, չորս հոգին երկու խումբ են կազմում, հինգ հոգին՝ երկու խումբ և մի աֆլոր, վեցը՝ երկու խումբ, յոթը՝ երկու խումբ և մի աֆլոր և այլն։ Երեքից ավելի խաղակիցներ լինելու դեպքում խմբերի բաժանվելը կատարվում է ոտ էցելու[78] միջոցով։

Առաջինը խաղն սկսելու համար խմբերը թաց ու չոր կամ էար պահոցի են անում։ Վիճակը հանած խմբի անդամները հերթով գնդակը ոտքի թաթի երեսով վեր-վեր են գցում։ Նախապես պայմանավորվում են, որ յուրաքանչյուր խումբը հակառակորդին «չարչարելու» համար պետք է լրացնի 21, կամ 51 և կամ 101 թիվը։ Աֆլոր ունենալու դեպքում վերջինս նախ խաղն սկսող, ապա և մյուս խմբի օգտին է խաղում, 21, 51 կամ 101 թվերն իրենց ամբողջության մեջ մեկական փալան են կոչվում։ Փալանի վերջին մեկ թիվը լրացնելու ժամանակ հակառակորդ խմբի բոլոր անդամները, բացառությամբ աֆլորի, ձգտում են ոտքով վեր նետվող գնդակն օդում բռնել, որով ամբողջ թվերը վառվում են։

Այս պարագայում խաղացող խումբը խաղը նորից է սկսում, ըստ որում սրանց յուրաքանչյուր անդամին իրավունք է վերապահվում խաղալ ևս երեքական անգամ։ Այս երեքական անգամին եթե նորից վառվեն, դարձյալ սկսում են սկզբից, նույն պայմանով, մինչև որ վերջապես գնդակները վայր ընկնելու դեպքում խաղը հանձնվում է հակառակորդներին կամ թե փալանի հասնելու դեպքում պատժում են նրանց։

Պատիժ տալու կամ չարչարելու համար հետևյալ կարգն է սահմանված։ Տանող խմբի յուրաքանչյուր ոք ոտքի երեսով գնդակը օդն է նետում, որոնց թվի համեմատ էլ պատժում է հակառակորդներին։ Պատժիչ թիվը որոշելուց հետո

---

78 «Ոտ քցելը» կատարվում է այսպես։ Խաղակիցներից երկուսը միմյանցից 1—2 մ հեռավորության վրա մեկական ոտքերը նախ գնում են իրար հանդեպ և իրար հասնելու համար մեկական ոտք առաջ են գնում։ Երբ ոտքերը մերձենում են, վերջին անգամ ոտքը գնողը նախ իրեն համար ընկեր է ընտրում հետևյալ պարագաներում։ ա. Երբ ոտքերն ընդհուպ մերձենում, կպչում են իրար։ բ. Երբ վերջին ոտքի մի չնչին մասը, գոնե կրունկը, տեղավորվում է բաց տարածության մեջ։ Վերջին ոտք գնողը լավագույն խաղացողին ընտրելուց հետո ընտրելու իրավունքը վերապահում է հակառակորդին։ «Ոտ քցելիս» ընտրելու իրավունք չի վերապահվում այն պարագայում, որ ոտք գցողների թաթերի արանքում մնում է կրունկ չտեղավորվող տարածություն. այս դեպքում նորից են «ոտ քցում»։

փալան լրացնող խմբերից մեկը ոտքը դնում է գետնին և սպասում, որ պարտված խմբի անդամներից մեկը գնդակը նետի կանգնածի ոտքի երեսի վրա։ Վերջինս գնդակն ընդունելիս ոտքով նետում է օդի մեջ այս ու այն կողմ այնպես, որպեսզի պարտվածներն այն օդում բռնել չկարողանան և միաժամանակ գնդակի հետևից դես ու դեն վազելով պատիժը կրեն։ Քանի անգամ որ պատժելու են, պատժվողները խմբովին պարտավոր են գնդակն այդքան անգամ բռնել, որից հետո միայն խաղն սկսում են պատժվածները։ (Բ. ժխ. ձ.)։

237. ՄԱՅՐ

Ախալքալաքում խաղում էին 4—7 տղաներ։ Խաղալիքը անատունի կճղակ էր, որին մայրը (մայր) էին անվանում։ Վիճակով մեկը դառնում էր մայրը կճղակի պաշտպան։ Մյուսները հարձակվում էին մորը շլելու համար։ Շլում էին միայն ոտքով։ Մայրը գնդակի նման այնքան էր շլվում, մինչև որ պաշտպանին հաջողվում էր ոտքով հետ խլել և միաժամանակ խփել մեկ ուրիշի ոտքին։ Այս դեպքում խփվածն էր մոր պաշտպան դառնում և խաղը նույն ձևով շարունակվում էր։

Պատահում էր, որ մոր պաշտպան տղան, խաղի տարերքի մեջ, կճղակն իրոք իր մայրը համարելով լաց էր լինում, երբ չէր կարողանում ձողներից հետ խլել։ (Բ. ժխ. ձ.).

238. ՔՈՓ

Վանում որևէ տան երկրորդ կամ երրորդ հարկը և կամ ծառի որևէ ճյուղը նշան դարձնելով, մազագնդակը նետում էին դեպի վեր և յուրաքանչյուր վայրէջքին ափով նորից ու նորից խփելով՝ հաշվում դրանց թիվը։ Գնդակը վայր ընկնելիս խաղն անցնում էր հաջորդին. այս ձևով նախապես որոշված թվին շուտ հասնողը փալան էր դնում մյուսներին։ (Ախ. I, 110)։

239. ԴԱՌՆԱԼԵՆ

Ախալքալաքում խաղում են մեծ մասամբ ձմռան տաք օրերին և գարնանամուտին՝ կտուրների վրա։ Անցյալում խաղում էին միայն պատանիները, իսկ այժմ՝ նաև աղջիկները։ Մի քանի հոգով խաղալիս բրդե (այժմ ռետինե) գնդակը խրփում են այնքան ուժեղ, որ այն բարձրանում է 2,5—3 մ։ Մինչև գնդակը նորից գետնին հասնելը խփողն արագությամբ շրջվում է կրունկի վրա և շտապում կրկին խփել այնպես, որ նույնությամբ կրկնվի։ Դառնալիս խաղացողը կարող է գնդակը մի քանի անգամ հարվածել գետնին՝ կարգավորելու և հանգստանալու նպատակով։ Վարժ խաղացողները, սակայն, դրան չեն դիմում։ Խաղը մեկից կամ մի խմբից մյուսին անցնում է գնդակը վայր ընկնելիս։ Ընկերովի խաղալիս մեկի վատակածը գումարվում է մյուսինի վրա։

Խաղը շահում է այն դառցողը, որը ամենից շուտ է լրացնում նախապես պայմանավորված 100—200 միավորը։ (ԲԺխ. ձ. համմ. լ. ժխ, 34—35՝ «Զարխ» խաղը և Եվ. ժխ. № 71, էջ 41՝ «Զարխի դալում» խաղը)։


240. ԳՆԴԱԿԱԽԱՂ

Շապին-Գարահիսարում խաղում էին տղաներն ու աղջիկները միասին կամ առանձին-առանձին երկու հոգով, բրդի թելից պինդ պատրաստված խնձորի մեծության գնդակով։ Խաղին մասնակցողները ձեռքներին ունենում էին մեկական պոչով պնակաձև տախտակե իր, որով գնդակը գետնին հարվածում՝ և հաշվում էին դրանց թիվը։ Յուրաքանչյուր տասնյակ լրանալիս համեմատաբար շեշտակի հարվածում էին տալիս, իսկ հարյուրերորդը լրանալիս այնքան ուժեղ էին հարվածում, որ բարձրացած գնդակը մինչև գետին հասնելը խփողը կանգնած տեղում մի լրիվ պտույտ էր գործում իր առանցքի շուրջը՝ տալիա ասելով։ Ապա նորից առանց գնդակը գետին գցելու կամ բռնելու նա շարունակում էր հաշվել։ Սովորաբար 500—1000 հաշիվը կազմում էր մի խաղ։ Երբ գնդակին հարվածողը վրիպում էր, խաղացողը համարվում էր բնկած և խաղն անցնում էր մյուսին։ Մինչև նշանակված հաշվին հասնելը գնդակն այսպես ձեռքից ձեռք էր անցնում։

Ձմռանը խաղում էին կտուրների վրա։ (Հս. խ. ձ., 9—10)։

241. ԳՆԴԱԿԱԽԱՂ

Շապին-Գարահիսարում խաղում էին երկու հոգով՝ բրդի թելից պինդ պատրաստված խնձորի մեծության գնդակով։ Գնդակին հարվածելու հա-



25ա. Բերդ խաղը Տարոնում և Վասպուրականում

մար խաղացողները ձեռքներին ունենում էին մեկական պոչավոր, պնակաձև տախտակե իր, որով երկու խաղացողները մեկընդմեջ հարվածում էին դեռևս գետին չհասած գնդակին ու իրենք պտտվում իրենց առանցքի շուրջը։

Ո՛ւմ հարվածը որ վրիպում էր կամ ո՛ւմ հարվածի ժամանակ որ գնդակը հետու էր ընկնում, նրա հաշիվը մեկով պակասեցնում էին և ավելացնում մյուսի հաշվի վրա։

Հաղթող էր հանդիսանում նախօրոք պայմանավորված թիվը շուտ լրացնողը։ (Հս. Խ. ձ. 9—10)։

242. ԴԱՌՆԱԼՆ

Ակնում խաղը նույնն էր։ Խաղացողը պտտվում էր ձախ կողմի վրա։ Գնդակը շեղ ընկնելիս խաղացողին իրավունք էր վերապահվում մի քանի անգամ գետնին խփելով կարգավորել այն։ Յուրաքանչյուր դառնալը մի միավոր էր համարվում։ (ՃՀԱ, 180)։

243. ՋԱՐՆՆՔ ԴԱՌՆԱՆՔ

Երկու պատանի հաջորդաբար խփում են գնդակին ու իրենց առանցքի շուրջը պտտվում. վրիպողը տարվում է։ (Լ. ԺՄԽ, 35).

244. ՋԱՐՆՆՔ ԴԱՌՆԱՆՔ

Խաղը Նոր Բայազետում (՞) նույնն էր։ Երբ ազատություն էր տրվում խաղացողներին՝ խփել գնդակին և պտույտ գալ, խաղն այդ պահին կրիճա էր կոչվում։ Այդ ժամանակ խփելն ու պտույտ գալը կատարվում էր ըստ ցանկության։ (Եվ. ԺԽ. № 64, էջ 92)։

245. ՍԱՅԻ

Երկու պատանի կամ երիտասարդ տղա, կամ մի քանիսը տարվա բոլոր եղանակներին, մանավանդ ձմռանն ու գարնանը, կտուրների վրա երկու խմբի բաժանված՝ շրջանաձև չոքում են։ Նախ որոշում են, թե քանիսը պիտի գնան (բրդե գնդակին խփեն), որ խաղը տանեն։ Սովորաբար որոշում են 500—1000 և հաղիվ ավելի։ Ապա որոշում են, թե «50-ին կամ հարյուրին բռնել կա՞»։ այսինքն՝ հիսուներորդ կամ հարյուրերորդ անգամ գնդակին խփելուց հետո՝ բռնեն գնդակը հանգըստանան և նորից խաղան, թե՞ ուղղակի շարունակեն։

Խաղը սկսելուց առաջ «գնդակը ծախում են», այսինքն՝ առաջին խաղացողը համաձայնում է հաշվել, թե մյուսը արդեն 30—60 գնացել է։ Խաղացողը գնդակն առնում է բուռը, կամաց խփում է գետնին, բոլորը միասին երկարացնելով հաշվում են՝ մեկ, գնդակը վեր է թռչում, սա առանց բռնելու նորից է խփում և հաշվում երկու։ Այսպես 3, 4 և այլն, մինչև որ գնդակն ընկնի վայր։ Հետո միևնույն կերպ խաղում է մյուսը։ Խմբի բաժանված միջոցին նախ խաղում է մի խումբը և հետո մյուսը՝ ընկերոջ համրածը շարունակելով։ (Լ. Ժ. ՄԽ, 34)։

246. ԳՆԴԱԿ ԽԱՂԱԼ

Ախալքալաքում խաղը նույնն է։ Յուրաքանչյուր խաղացող միայն խաղի պահերին է չոքում, իսկ մյուսները դիտում-հսկում են։ (Բ. ԺԽ. ձ.)։

247. ԳՆԴԱԽԱՂ՝ ԿԱՆԳՆԱՍ

Խաղին մասնակցում էին 2—5 և ավելի պատանիներ կամ երիտասարդ տղաներ։ Թաց ու չորով նրանցից մեկը կանգնած դիրքում բրդե գնդակը խփում էր գետնին և հարվածները կրկնում այնքան ժամանակ, մինչև որ գնդակը ձեռքից թռչում էր։ Այնուհետև հարվածում էին մյուսները։ Խաղը շահում էր նա, ով ամենից շուտ լրացնում էր պայմանավորված թիվը (200—1000)։

Խաղի սեզոններն էին՝ գարունը, աշունը և մասամբ նաև ձմեռը, գլխավորապես լերկ կտուրների վրա։ (Բ. ԺԽ. ձ.)։

248. ՀԱՄՐԱՆՔ

Ակնում խաղը նույնն էր։ Խաղում էին տանը՝ տախտակի, իսկ դրսում՝ գետնի վրա։ Մասնակցում էին միայն տղաները՝ 2—6 հոգով։ Խաղաւիքն էր բրդե գնդակը։ (ՃՀԱ, 180)։

249. ԽՈՂԲԳ

Ալեքսանդրապոլում աղջիկները սույն գնդակախաղի ժամանակ արտասանում էին.

Մեկ, երկուս, տասնըվեց,
Ես էլ քսի տասնըվեց,
Դուն էլ ըսիր տասնըվեց;

Չես հավատա՝ համբրե տե՛ս։ (Քաջ. ԱՀ, IX, 94)։

250. ՕՍԿԻ ԽՆՁՈՐ

...Գնաց իշկեց օր քառսուն խատ խավշիկ նըստած ա. քառսուն կանթե պղինձ դրած ա կրակի վերեն, քառսուն եզ էլ է մորթած, լցած ա պղնձի մեջ . օսկի խնձոր առած ա ձեռ, սրով կու թալեն իրուր. էն կու թալե էնոր, կասա՝ Ջուալ աստղի [հեքիաթի հերոսուհու] էշխին, էն կու թալե էնոր, կասա՝ Ջուալ աստղի էշխին։ (ԷԱԺ. II, 326 (Բղշ.)։

251. ՕՍԿԻ ԽՆՁՈՐ

Խաղային «վարժություն» նույնն է դևերի մի այլ աշխարհում, որտեղ հերոսները իրար ոսկե խընձոր գնդակ են նետում հանուն չինուհի Իրեք-Ջարեքի, որին պետք է հափշտակեն։ (ԷԱԺ, II, 335 (Բղշ.)։

252. [ՋԳԱՑՍ]

Արաբկիրում երկու սեռի երեխաները միասին կամ առանձին-առանձին խաղում են տարվա բոլոր տաք եղանակներին, բակերում ու փողոցներում, երկու և ավելի հոգով։ Խաղալիքն է ռետինե փոքր գնդակը։ Երեխաներից մեկը գնդակը նետում է օդի մեջ և տալիս է խաղակիցներից մեկի անունը։ Հիշված անվան տերը պարտավոր է գրնդակն իսկույն օդում բռնել։ Այդ հաջողվելու դեպքում բռնողը նույն գործողությունն ինքն է կրկնում։ Իսկ երբ բռնողը չի կարողանում բռնել, գնդակը գետին ընկնելու վայրկյանին բոլորը, բացի բռնել ցանկացողից, փախչում են զանազան կողմեր։ Բռնել ցանկացողն այդ ժամանակ արագորեն վազում է դեպի գնդակը՝ վերցնելու։ Գնդակին ձեռք տալիս իսկույն ասում է.

—Ջգա՛ստ։

Այս խոսքը լսելիս բոլորը անմիջապես կանգնում են նույն դիրքի մեջ, որպիսին ունեին այդ իսկ վայրկյանին։ Գնդակի տերն այդ ժամանակ գնդակով նշան է բռնում ամենամոտ կանգնածին։ Խփելը հաջողեցնելիս խփվողը մի ձու է ածում, այսինքն նրա վրա մի բացասական թիվ է ստացվում, իսկ խփելը չհաջողեցնելու դեպքում խփողն է մի ձու ածում։ Այդ ժամանակ նորից հավաքվում են խաղատեղը։ Այս անգամ գնդակը վերցնող մեկը կրկնում է նույնը և այդպես շարունակ, մինչև որ խփվողներից կամ խփել չկարողացողներից մեկն ու մեկը 11 ձու է ածում։ Այդ ժամանակ 11 ձու ածողը դլխահակ կանգնում է, իսկ ընկերներից յուրաքանչյուրը խաղագնդակով նրա մեջքին խփում է հինգ անգամ, որից հետո խաղը նորից է սկսվում (Բ. ԺԽ. ձ.)։

253. ՕՐՓԵՎԱՐԻ

Նպաստավոր օրերին երիտասարդ տղաներն ու աղջիկները երկու և ավելի հոգով իրար դիմաց կանգնում կամ շրջան են կազմում, և ռետինե գընդակը զույգ ափերի թեթև հարվածներով իրար են տալիս։ Գնդակը հակահարվածով ուրիշին ուղղել կամ բռնել չկարողացողը պարտված է համարվում, որին օրփևարի (այրի) անունն են տալիս։

Օրփևարին հնում խաղում էին միայն երիտասարդ տղաները, բրդե գնդակով, իսկ այժմ՝ ինչպես պատանի, այնպես և երիտասարդ տղաներն ու աղջիկները՝ առանձին-առանձին կամ միասին, ռետինե գնդակով։ (Բ. ԺԽ. ձ. (Ախ.)։

254. ԽԱՉԵ ԹՈՓ

Նարինջի մեծությամբ, բամբակով լցված կաշվե գնդակով խաղում էին երկու խմբեր։ Ընդարձակ տարածություններում «Հաղթական կը հռչակվի այն խումբը, որ մյուսեն ավելի անգամներ հակառակորդին գնդակը օդին մեջեն բռնած կըլլա»։ (Երև., 593 (Ջար.)։

255. ՊԱՏԻ ԳՆԴԱԿ

Ընտրում են լայն, բարձր և հարթ մակերես ունեցող պատ և նրա երկարությամբ գետնից հաշված 1—1,5 մ վերև գծում են հորիզոնական գիծ։ Եթե պատը շատ երկար է, գնդակի սահմանները որոշում են գետնի վրա պատին ուղղահայաց գծերով։ Խաղացողները դասավորվում են թե՛ պատից, թե՛ իրարից մոտավորապես 1,5—2 մ հեռավորության վրա։

Խաղը սկսողը, որի համար նախօրոք վիճակ են գցում, գնդակը այնպես է խփում պատին, որ հետ թռչելիս ընկնի մյուս խաղացողի մոտ։ Վերջինս անմիջապես պատից եկած գնդակը ձեռքի

թաթով խփելով վերադարձնում է առաջին խփողին և այսպես շարունակ։

Խաղը մի լրիվ շրջան է կատարում, երբ խաղացողներից մեկը շահում է 60 հաշիվը։ (ԲՄ, 1886, 224)։

256. ՊԱՏԻ ԳՆԴԱԿ

[Մարտ ամսին]... մեզ խաղալո գործիք և տեղիք պատրաստեինք։ Մեր եղինք փարախի մեջ պարարտանալով այս միջոցին բուրդեր թողնուինն։ Մեր եղանց ողեր և կողեր քերելով և ճանկելով բուրդեր հավաքեինք, հետո ջրի մեջ թրջելով լըմկեինք, ձեռաց մեջ գլորեինք, մինչև պնդանայր և դառնայր խաղալո գունդ, զոր նախ մեք մեզեն պատին։ խփեինք պինդ, հորմե անդրադարձած միջոցին բռնելով դարձյալ պատին խփեինք և դարձյալ բռնեինք։

Սույն խաղեն ձանձրանալով երկու ընկեր 10 բայլ իրարմե հետու կայնելով գունդ իրարու ձգեինք և բռնեինք։ (Զ. № 4184, էջ 159 բ(վ.)։

257. ՀԱՄՐԱՆՔ

Ակնում խաղը նույնն էր։ (ՃՀԱ, 180)։

258. ԳՆԴԱԿԱՀԱՐ

Մաղագնդակով խաղալիս գետմանցիկ էր կոչվում այն ձևը, երբ երեխաներն այն երեք անգամ խփում էին գետնին և բռնում. թալեյ-բռնելմանցիկ էր կոչվում՝ երբ այն երեք անգամ վերև էին նետում և բռնում. պատին էր կոչվում, երբ դարձյալ երեք անգամ պատին խփում ու բռնում էին, բոլոր դեպքերում չթողնելով, որ գնդակը գետին ընկներ։ Իբրև խաղի վերջաբան, մի անգամ էլ խփում էին պատին և գլխին տալիս այնպիսի դիրք, որ գնդակն ուղիղ գագաթին առներ, ասելով.

Կոկոթան (գագաթին),

Վեր պպոթան։

Այս չորս ձևերը հաջողությամբ կատարողը խաղը նորից էր սկսում, մինչև որ վրիպում էր և խաղը հանձնում հաջորդին։ Սահմանված թիվը լրացնողը անհաջող խաղացողի մեջքին (խոսքով) փալան էր դնում։ (Ախ. I, 108—109(վ.)։

259. ԳՆԴԱԿ ԽԱՂԱԼ-ԿՈԿՈԹԱՆ

Վանի մի այլ փուխրախակում խաղը գրեթե նույնն էր։ Առաջին համարը գնդակը նախ երեք անգամ գետնին խփում ու բռնում, ապա վեր էր նետում և բռնում, այնուհետև պատին խփում, դուխր դեմ էր անում վերադարձող գնդակին։ Չորս պայմաններից մեկը վոխպելիս խաղացողը կռացող էր դառնում, որին հերթականությամբ հեծնում էին մյուսները և հեծած վիճակում երեքական անգամ խփում պատին, ապա բռնում ու իջնում էին։ Այս վերջին ձևը կատարել չկարողացողները կռացողի հետ փոխում էին իրենց դերերը։ (Խ. վ֊խ. ձ., 25—26)։

260. ԽՈՐՈՒԲԱԼ

Խմբված երեխաներն իրենց առաջինները վերվեր էին նետում և դեռ գետին չընկած՝ բռնում։ Աշխույժ շարժման ժամանակ գլխարկը միշտ բրոնող ճարպիկ էր համարվում։ (ԹԿ, 1899, № 45, 713 (Բղշ.)։

261. ԳԴԱԿ ՏԱՐՈՑ

...երբ գետի[ն] լավ չորանայր, խոտք և ծաղիկ բուսանեին ի հերկրի մեր, մանկական ախորժակն ստիպեր զմեզ գղակ տարոց խաղալ։ Այս խաղին ոչ պապ կա, ոչ թաց ու չոր կա և ոչ ներս և դուրս կա։ 4—5—6—7—8—10 հոգվով կարեն խաղացվել այս։ Մեկի գլխի գդակ, արախչին կամ ֆես առնելով ձգեն ի գետին, ուսամբ հարկանեն զգդակն և թռուցանեն աստ անդ։ Գդակի տերն վազելով հասնե հարկանողի ետևն, եթե հասավ, գդակն առավ և ձեռք դիպուց գդակ հարկանողին, յուր գդակն ազատեց, դրավ ի գլուխ յուր և մյուսի գդակն առավ, ձգեց ոտքի առաջ։ Իսկ եթե չհասավ հարկանողին, գդակն մնա ի գետին, ամենքյան ազատ են՝ շատ կամի ուսամբ հարկանել և թռուցանել։ Չորավորք և ճարտարք շուտով գյուրյանց գդակն ազատեն, իսկ տկարք և բթամիտք չկարեն բնդ միւյթ ազատել զգդակն յուրյանց...։ (Զ. № 4184, էջ 173 բ (վ.)։

262. ԲՈՒՂԻ ՎԻՋ

Խաղը Ալաշկերտում նույնն է։ Գլխարկը հրապարակի մեջ է դնում վիճակով վերջին մնացածը։ Գլխարկը պաշտպանում է փայտի ծայրը վրան դնելով և հարմար առիթի ժամանակ դրանով էլ նետում, խփում է ուրիշներին։ Խփվածը սրա հետ դերը փոխում է։ Եթե խփել չի հաջողվում և գդակն

ընկնում է գետնին, սկսվում է չլոցը, մինչև որ տիրոջը հաջողվում է իր փայտի ծայրը վրան դնելով պաշտպանել ուխարկը։ (ՄԱխ. ձ.)։

263. Չ Լ Ի Կ

Նոր Բայազետում խաղը նույնն էր։ Տղաները կանգնում էին բնում և ձողերը հերթով նետում դեպի գիծը, որ 3—5 քայլ հեռու էր լինում։ Գծի վրա չընկած ձողի տերը գլխարկը դնում էր գծին և բնից խփում։ Չհաջողեցնելիս գլխարկը չլում էին։ (Եվ. ժխ., № 69, էջ 9։ Ախուրյանում խաղը նույնն էր՝ «Ցորոր» անունով։ Ագ. ձ.)։

264. ՓԱՓԱԽ ՉԼՈՑԻ

Խաղում են 12—16 տ. տղաները կալերում և դաշտերում գարնան ու աշնան ամիսներին։ Դաշտի մի մասում քաշվում է 1—2 մ երկարությամբ մի գիծ, որից 12—15 մ հեռավորության վրա փորվում է մի փոս, 10×15 սմ մեծությամբ և 5 սմ խորությամբ։

Խաղացողները հերթականությամբ մոտենում են գծին և կանգնում նրա եզրին, ապա ձեռնափայտերը մեկ-մեկ նետում են դեպի փոսը, աշխատելով որքան կարելի է դրանք գցել փոսին մոտիկ։ Երբ բոլոր խաղացողները փայտերը գցում են, մոտենում են փոսին և ոտքով կամ ձեռնափայտով չափում փայտերի ու փոսի միջև ընկած տարածությունը։ Ամենից հեռու ընկած փայտի տիրոջ գլխարկը դնում են հենց այնտեղ, որտեղ ընկած է լինում նրա գավազանը։

Խաղացողներից մեկը, որի փայտը ամենից մոտ է ընկած լինում փոսին, կանգնում է վերջինիս վրա և այնտեղից աշխատում է խփել գլխարկին, իսկ վերջինիս տերն ու մնացած խաղացողները կանգնում են գլխարկից մի քանի քայլ հեռավորության վրա։ (Ագ. ձ.)։

265. ԱՐԱԽՋԻ ՏԱՐՈՑԻԿ

Վանում տղաները, որոնց թիվը չէր սահմանափակվում, բաժանվում էին երկու հավասար խմբի, ապա երկու սահմանների միջև ցցված գավազանի գլխին հագցնում էին մի արախչին։ Նշան տալիս յուրաքանչյուր խմբից երկուական հոգի վազում էին դեպի արախչինը՝ վերջինս գրավելու։ Գրավող կողմի խաղացողները գերեվարում էին տարվող զույգին։ Այնուհետև արախչինը նորից հագցնում էին ցցին և խաղը նույնությամբ կրկնում այնքան ժամանակ, մինչև որ կողմերից մեկը գերեվարելով մյուսի անդամներին, հաղթանակ էր շահում։ (Ախ. II, 204—205) (Վ.)։



Նկ. 30. Գդակ տարող (բնագիր № 261)
Նկ. Ռ. Մնացականյանի

266. ԳԴԱԿ ԹՌՑՆԵԼ

Սատունում պատանի կամ երիտասարդ տղաները 8—10-ական հոգուց երկու խումբ կազմում և ամրանում էին 50 մ իրարից հեռու սահմանների վրա։ Խաղն սկսող խմբից մի հոգի գալիս էր մյուսի մոտ, մեկի գդակը հանկարծ թռցնում ու փախչում էր։ Գդակատերը պետք է հասներ և նրան ձեռքով դիպչեր, որով գդակն ազատում էր և խաղը շահելով՝ խմբերի դերերը փոխվում էին։ Իսկ եթե

դակատերը փախցնողին մինչև սահմանը հասնելը չկարողանար ձեռք տալ, ինքը գերվում էր։ Այդ դեպքում խաղը նույնությամբ շարունակվում էր մինչև խմբերի դերերը փոխվելը։ Գդակ թողնող խումբը հաջող խաղի դեպքում գերում էր մյուս խմբի բոլոր անդամներին, որով խաղն սկսելու իրավունքը պահում էր իր ձեռքը։ (Պետ. ձ.։ Հմմտ. «Փափախ-փափախի» խաղը ՀԱղ, Հ. 1915, № 1)։

267. [ՓԱՓԱՂ ՇԸՆԱՎՈՐԵԼ]

Ախալքալաքի գյուղերում այդ նույն դեպքում հանկարծ խլում էին խույս տվողի գլխարկը, «շընավոր ըլլի» ասելով բերանն ի վայր խփում էին գետնին, և ձեռքից ձեռք անցկացնելով ու խփելով՝ դրմբդմբոցի ձայների համար ուրախանում էին։ (Բ. Ժխ. ձ.)։

268. ԾԸՂԾԸՂԻ ԿԱՄ ՁՈՓՁՈՓԱՆՈՒԿԻ

Շուլավերում տղա և աղջիկ խառն էին խաղում։ Ամեն մեկը մի ճիպոտ դնում էր հարթ գետնին, որոնք դարսվում էին իրարից մի քանի քայլ հեռու։ Ում ճիպոտն առաջինն էր, նա սկսում էր կըխկըլի տալ։ Նախ երեք անգամ պտտվում էր դարսած ճիպոտների շուրջը և վերադառնում հոբը, քիչ հանգստանում ու սկսում երեք անգամ անց կենալ ճիպոտների արանքներով առանց ծալած ոտը գետնին դիպցնելու կամ բերանը բանալու։ Խաղի միջոցին, երբ մեկը կըխկըլի էր տալիս, մյուս ընկերները լուռ ու հանգիստ չէին մնում. ո՛րը ծափ էր տալիս, ո՛րը երգում էր, որպեսզի կըխկըլի տվողին ծիծաղեցնելով բերանը բանալ կամ ոտը գետնին դնել տայինն։
Նրանք երգում էին.

Տնգլի տնգլի կաղ ոտը,
Կատուն տարավ սաղ ոտը,
Տարավ դրեց կրակումը,
Էրեց խորվեց չաղ ոտը։
Թող դումանում շաղախեց,
Բռնոթի շինեց աղաղեց,
Տնգլի կուզան քաշացրուց,
Խակի (*) արան խաղացրուց.
Տնգլի կուզի պուպուզ, պո՛ւզ,
Հրե ոտը փետին կպցրո՛ւց։

Ով որ ճիպոտների վրայով երեք անգամ թռչելով անց էր կենում, նա վերցնում էր իր ճիպոտը։ Այսպես բոլորը կարգով կըխկըլի էին տալիս. ով ոտը դիպցնում էր ճիպոտին կամ գետնին էր դնում, նա կտրվում և կոչվում էր գյոդ. նա իր ճիպոտը դնում էր ամենից վերջը։ Երբ բոլորը կըխկըլի տալը վերջացնում էին, գյոդն իր ճիպոտը քիչ հեռու տեղ ցցում էր գետնին։ Մի գծի վրա հոբեր էին շինում, ամեն մեկը իր հերթով ձեռքի ճիպոտը ջիդրի պես գցում էր, որ ցցած ճիպոտին դիպցնի։ Ով գցել էր ու փուստ էր եկել, նրան իրավունք չէր վերապահվում գնալ և իր ճիպոտը վերցնել, թե չէ նրան կարող էր փափախով կամ թաշկինակով խփելով կտրել գյոդը, որը կանգնած էր դնում իր ցցած ճիպոտի մոտ. ճիպոտներ ժողովելու պարտականությունը վերապահվում էր նրան։ Ով ջիդրով խփում էր ցցած ճիպոտին, նա բերանը փակած կըխկըլի տալով էր կատարում այդ գործողությունը։ Գյոդը զանազան ծամածռություններ էր անում, կամ բռնոթի էր քաշել տալիս, կամ նրա առաջը գլորվում, թավլի էր տալիս, կամ աչքերը չռում էր, ջանալով ծիծաղեցնելով բերանը բանալ կամ ոտը գետնին դնել տալ։ Երբ ջիդրով խփողը անխոս ու անծիծաղ հավաքում էր շաղ տված ճիպոտները, մոտենում էր ցցած ճիպոտին, թքում էր ու ասում գյոդին.

—Թու, դե՛, հիմի տե՛ս կեռբընիս։

Այդ ասելով նախ իր հոբի տեղը առաջ էր բերում իր ճիպոտի չափ և ևս՝ երեք ու կես ոտնաչափ. Երբ ջիդրի նման իր ճիպոտը գցելով կրկին դիպցընում էր գյոդի ցցած ճիպոտին, նորից իր հոբը մոտեցնում էր ցցած փայտին առաջվա չափով։ Երբ գրեթե մոտեցել էր, այն ժամանակ իր ճիպոտը գետնին էր գցում ու գյոդին հարցնում.

—Մի՞ծինքըն ես, թա պիթինքը (ճկույթն ես, թե՞ բութ մատը)։ Եթե ծիծինքըն էր ասում, նա իր ճիպոտը ճկույթով էր հրում դեպի ցցած ճիպոտը, իսկ եթե պիթինքն էր ասում, բութ մատով էր հրում։ Եթե մի անգամ հրելով կարողանում էր իր ճիպոտը ցցած ճիպոտից անցկացնել, ինքն ազատվում էր. մնում էր, որ մյուս ընկերներն էլ այդ կերպով վերջացնեն, իսկ եթե չէր կարողանում անցկացնել, ինքը պետք է ճիպոտը ցից աներ, գյոդ դառնար։

Եթե բոլորն էլ հաջող վերջացնում էին, այն ժամանակ գյուղի աջ ձեռքը և ձախ ոտքը իրար հետ կապում էին և փափախով խփում։ Այդ վիճակում գյուղը ո՛ւմ որ կարողանում էր իր փափախով խփել, նա պետք է ցցեր իր ճիպոտը։

Գյուղի հետ այսպես էլ էին վարվում.—ցցած ճիպոտից հեռացնում էին բավական տեղ, աչքերը թաշկինակով կապում, երեք անգամ պտտեցնում էին, որ ցցած ճիպոտի տեղն ու ուղղությունը կորցներ։ Հետո հարցնում էին.

—Ո՞ւր ա ճիպոտըս։

Նա մատը մեկնում էր զանազան կողմեր։

Երբ սխալ կողմի վրա էր մեկնում, ընկերները գոչում էին. ցե՛խ, ցե՛խ, իսկ եթե ճիշտ էր ցույց տալիս, գոչում էին. մե՛ղր, մե՛ղր։ Ապա տալիս էին նրան երկու ճիպոտ։ Նա կապած աչքերով ճիպոտները շարժելով գնում էր, որ գտնի ցցած ճիպոտը։ Ընկերները պարապ չէին կանգնում, նրան շշկլացնելու համար փափախով էին խփում, որպեսզի նա ուղղությունից շեղվեր, շուտ չգտներ։

Խաղը վերջանում էր, երբ աչքերը կապած տղան ցցած ճիպոտը գտնում էր։ (ԳԹ, № 18)։

Ջ. ՆՇԱՆԱՌՈՒԹՅԱՆ ԽԱՂԵՐ

Նշանառության խաղերը չափազանց բազմազան են ինչպես կատարման եղանակներով, այնպես էլ՝ թեմաներով։ Դրանք ընդհանուր առմամբ կարելի է ներկայացնել այսպես. վարպետ առարկային նշան բռնելու, թիրախն անպայման տապալելու, շրջագծերի ու փոսերի մեջ գնդեր գլորելու և շրջաններից գնդերը դուրս մղելու, գլորելով, նետելով ու սորելով նշան բռնելու խաղեր։

Քարից ու փայտից, մազից ու բրդից պատրաստված գնդակներ, հոլեր, ընկույզ ու կաղին, խնձոր ու ձու, անմշակ ոսկոր, վեգ, խեցի, ճիպոտ ու գավազան, նետ ու աղեղ և հրացան, ահա նշանառության ժամանակ գործածվող թիրախներն ու զենքերը, որ հնագույն ժամանակներից ի վեր ծառայել են մանուկներին, պատանիներին ու երիտասարդներին։

Բացի նշանառության սովորական խաղերից, այստեղ զետեղել ենք նաև վեգախաղերը։ Դրանք հնագույն ժամանակներում ծիսական գործողություններ են եղել, բայց տոհմային կարգերի վախճանով վերջիններս աստիճանաբար խաղի են վերածվել։

Նշանառությունը որպես զինվորի պարտականություն՝ տղաների խաղ է։ Ուստի թիրախ ունեցող խաղերի ժամանակ աղջիկների մասնակցությունը նոր երևույթ էր։ Սակայն կային նշանառության այնպիսի խաղեր, որոնք կապված էին ծեսերի հետ և որոնք գլխավորապես կանացի էին։ Այդպիսիներից են գլորելով ձվի, ընկույզի և կաղինի ու կորիզների նշանառությունները, որ կատարվում էին ժողովրդական ու կրոնական տոներին։ Նշանառության հանգամանքների նկատառումով էլ մենք այդպիսի խաղերը տեղավորել ենք այս հատվածում։


Նշանառության վերաբերյալ նյութերը քաղված են ազգագրական գրականությունից և մեր օրերի բանահավաքների ձեռագիր ժողովածուներից։

269. ԱՋԱՏԱՐԱՆ ՋՈՐԹՈՒ


Խաղում էին Շապին-Գարահիսարում, երկու սեռի պատանիները, գարնանը, հարթ տեղում, 3 և ավելի հոգով։ Գետնին մի ուղիղ գիծ էին գծում և նրա կենտրոնում, տափակ սալ քարի վրա, տեղավորում էին մի մեծ վեգ կամ կենդանու ոսկորի մի կտոր.

Վիճակահանությամբ ընտրված հովիվը կանգնում էր այդ տնկվածի մոտ, իսկ մնացածները շարվում էին նշանից 5—6 քայլ հեռավորությամբ գծված սահմանի վրա։ Յուրաքանչյուրը ձեռքին ունենում էր մեկական տափակ քար, որով սահմանագծի վրայից հարվածում էին նշանին՝ նրան շրջելու կամ տեղից թոցնելու նպատակով, և հետո գալիս էին իրենց քարերը տանելու։ Հովիվն իր հերթին ձգտում էր վերջիններիցս մեկն ու մեկին խփել և նրա հետ փոխել իր դերը։

Կանոններ.—1. Հովիվը քարերը տանելու եկածներին խփելու իրավունք չուներ, եթե՝ ա. վերջիններս զգուշորեն մոտենալով մի ոտքով կանգնել էին իրենց քարի վրա կամ այն վերցնելով փախել էին մինչև սահմանագիծը։ բ. Եթե նշանը տեղում շրջված էր կամ՝ թոցրած հեռու։ 2. Խփվածը դառնում էր հովիվ, իսկ նախկին հովիվը՝ հարվածող։ 3. Եթե նշանը շրջված էր կամ իր տեղից թոցրած



Նկ. 31. Նշանառության թիրախներ
Նկ. Հովհ. Քացակյանի



Նկ. 32. Նշանառության զենքեր և միջոցներ
Նկ. Ռ. Մնացականյանի

հետու, հովիվը պարտավոր էր անմիջապես դնել տեղը և հետո միայն շարունակել հետապնդել քարերը տանողներին։ (Հս. խ. ձ.)։

270. ՀՈԳ

Սեբաստիայում խաղում էին երկու խմբի բաժանված տղաները։ Բոլորն ունենում էին մեկական գավազան. որպես նշան ծառայում էր 5 սմ հաստության և 10 սմ երկարության փայտե գլանակը, որ ճոդ էր կոչվում։ Վիճակով մի խումբը մնում էր ճոդին պահապան, իսկ մյուսը տեղավորվում էր 20—30 մ հետու նշանակված տեղը։ Այս խմբի անդամները հերթով գալիս ճոդից 3—4 մ հեռավորության վրա կանգնում և գավազանն արձակում էին դեպի նշանը։ Ճոդը տեղահարժ լինելիս պահակող խմբի անդամներն անմիջապես նշանը տնկում էին և հետապնդում խփողին, որպեսզի մինչև տեղ հասնելը գավազանի ծայրով դիպչեին նրան։ Երբ դիպչելը հաջողվում էր, խմբերի դերերը փոխվում էին։ Լավագույն խաղացողները հոդին նշան էին բռնում ոչ թե 3—4 մ վրայից, այլ ուղղակի սահմանից։ Երկու դեպքում էլ, եթե նշանառուներին չէր հաջողվում ճոդը տեղահան անել կամ դրան կպչել, պարտված համարվելով նրանք պահապանների հետ դերերը փոխում էին։ (ՆՍ. 1958, № 30, էջ 13)։

271. ՍՈՒԼԹԱՆ


Խաղացողները 4—20 հոգով երկու մետրանոց մի տախտակ էին ընտրում և մի փայտ, որի վրա դրվում էր տախտակը այնպես, որ մի ծայրը վերև էր բարձրանում և մյուսը՝ կպչում գետնին։ Տախտակի վերին ծայրի վրա դնում էին 6—8 սմ երկարությամբ և 4—6 սմ լայնությամբ փայտի մի կտոր, որին սուլթան անունն էին տալիս։ Սուլթանից մի քանի մետր հետու փորում էին մի փոքրիկ փոս, որի մոտ կանգնում էին խաղացողները փայտերով և հերթով խփում սուլթանին։ Նրանցից մեկը վիճակով ընտրվում էր պահապան, որը կանգնում էր սուլթանի մոտ, որպեսզի վերջինս վայր գցելիս կրկին իր տեղը դներ։ Փայտերը նետելուց հետո խաղացողները պահապանին նշան տալով վազում էին դրանք բերելու, իսկ պահապանն էլ՝ իր խփված սուլթանը։ Երբ փայտով խփելիս սուլթանին հետու էին թռցնում, փայտատերերն իրենց փայտերով, իսկ պահապանն իր սուլթանով սկսում էին տախտակին խփել, ըստ որում, երբ խաղացողներից մեկը պահապանից շուտ էր խփում, այն ժամանակ խաղը նույնությամբ կրկնվում էր առանց դերերի փոփոխման, իսկ երբ պահապանն էր շուտ խփում, այն ժամանակ խաղացողները վազում, կանգնում էին այն տեղերում, ուր ընկած էին իրենց փայտերը և դրանցով նշան էին բռնում սուլթանին։ Այստեղ արդեն դերափոխման համար կային հետևյալ պայմանները։ 1. Երբ երեք հոգու հաջողվում էր սուլթանին խփել, այն ժամանակ խաղը հին պահապանով կրկնվում էր։ 2. Երբ խաղացողներից մեկի փայտը վրիպում էր, նա պահապան էր դառնում։ 3. Երբ վրիպում էին մի քանիսի փայտերը. սրանց տերերից մեկը վիճակով դառնում էր պահապան։ (Բ. Մխ, 108—109)։

272. ԹՈՒԹ

Պատանի, մեծ մասամբ գառնարած տղաներն ընտրած բնից բավական հետու մի փոս էին փորում և նրա մեջ կանգնեցնում կովի կամ եզան ոլոգի կտոր, որ թութ էր կոչվում։ Մայրը կանգնում էր նրա մոտ և պաշտպանում։ Մյուսները բնից փայտերը նետում և աշխատում էին թութը պատկեցնել, իսկ մայրն աշխատում էր ոսկորը նորից տեղը կանգնեցնել։ Փայտը գցելուց հետո պետք էր այն աղատել, նորից նետելու համար։ Ում հաջողվում էր առանց մորից փայտով խփելու ազատել, նա կանգնում էր բնում և սպասում իր հերթին։ Պատահում էր, որ մայրը փոխանակ թութը պաշտպանելու, ընկնում էր մյուսների ետևից, որ փայտին չհասած՝ խփի նրանց. այդ միջոցին մյուսները պատկեցնում էին թութը և խփելով հեռացնում։ Մայրը պետք է թութը խլեր նրանց մահակների տակից, բերեր կանգնեցներ փոսի մեջ, աշխատելով միաժամանակ իր փայտը դիպցնել մյուսներին, որ ինքն աղատվեր։ Ում որ խփում էր, նա դառնում էր մայր։ (Լ. ԺՄխ., 43)։

273. ԹՈՒԹ

Խաղը Վրաստանի Շահումյանի շրջանում գրեթե նույնն էր։ Մասնակցում էին միայն տղաները, որոնք խմբեր էին կազմում ըստ հասակների։ Նայելով իրենց հասակին, հետու կամ մոտիկ,



56. Մականախաղ-հոլախաղ ձիերով



Նկ. 33. Նշանառություն

Նկ. Ռ. Մնացականյանի

Ախուրյանում խաղին մասնակցում են 6—12 հոգի, որոնք բաժանվում են երկու հավասար խմբի։ Յուրաքանչյուր խումբ իր խաղացողների թվին հավասար քարեր կամ մոտավորապես քառակուսի, ձեռնաչափ տախտակներ է ունենում, որոնք կանգնեցնում են գետնին, մեկ խումբը մյուսից 10—15 մ հեռավորության վրա, իրար դիմաց, իրենք էլ դրանց մոտ կանգնելով։

Յուրաքանչյուր խաղացող այնուհետև վերցնում է 3 կլոր, ձվի մեծության քար։ Վիճակահանությամբ խմբերից մեկն սկսում է խաղը։ Սրանցից մեկն իր ձեռքի երեք քարերով խփում է հակառակորդի կանգնեցրած քարերին և երբ նա իր քարերով տապալում է դրանցից մեկը, խփում է նույն խմբի մյուս անդամը։ Երբ սա էլ տապալում է դրանցից մեկը, խփում է 3-րդը և այլն։ Եվ երբ վերջին խփողներն էլ տապալում են մնացած բոլոր տախտակները, հաղթողներն սկսում են փախչել դեպի ետ, իսկ հաղթվողները վազում և բռնում են փախչողներին (յուրաքանչյուրն իր դիմացի կանգնածին է բռնում) և բռնած տեղից հաղթողներին շալակում, բերում են իրենց տեղերն ու խաղը նորից կրկնում, խփելու իրավունքը դարձյալ հաղթողներին վերապահելով։

Կանոններ.— *1. Խմբերի դերերը փոխվում են, երբ խփողներն իրենց բոլոր քարերով չեն կարողանում հակառակորդի բոլոր քարերը կամ տախտակները տապալել։ 2. Քարը կամ տախտակը տապալված է համարվում այն դեպքում, երբ բոլորվին շուռ է գալիս։ 3. Երբ տապալված քարին է դիպչում հաջորդ խփողի քարը, տապալվածը, որ մեռած էր համարվում, կենդանանում է, որը նրից են կանգնեցնում։ 4. Հաղթողները փախչելու պահին շուռ չեն գալիս, այլ ետ-ետ են գնում։ (ՎՇ. ձ.)։*

274. [ՆՇԱՆ ԱՌՆԵԼ]

Խաղը Շապին-Գարահիսարում և ամենուրեք նույնն էր։ Հարթ տեղի վրա իբրև նշան դնում էին կոտրած բղուկ կամ մի հին դույլ և այլն, և նրանից 20—30 քայլ հեռավորության վրա գծում սահմանագիծ։

Խաղացողները սահմանագծի վրայից հերթով քարերով խփում էին նշանին։ Խաղը նա էր տանում, ով բոլորից առաջ նախօրոք պայմանավորված թվով անվրեպ նշան էր բռնում։ (Շն. Ա. ձ.)։

276. ՁԵԼԵ-ՄԵԼԵ

Արթիկում և Ապարանում մասնակցում են 6—10 պատանի և երիտասարդ տղաներ։ Խաղում են տարվա տաք եղանակների հով ժամերին։ **Մեր** *կանգնելով և անուն դնելով բաժանվում են երկու խմբի։ Այնուհետև* **քաց** *ու շորով որոշում են խաղն սկսող խումբը։ Սկսող խմբի* **իրաճում իրար** *ետևից, մեկական քայլ հեռու, երեք սալաքար են տնկում։*



Նկ. 34. «Մահել» նշանառության խաղը Գյումրիում (բնագիր № 275)
Նկ. Ռ. Մնացականյանի

Մյուս խմբի համար նույնն են կատարում, այս իրանից 25—30 քայլ հեռավորության վրա, մի նոր իրանում։

Խաղն սկսող խմբի անդամները նշանակված սահմանից հերթով մեկական փոքրիկ քար են նետում մյուսների իրանը՝ տնկված քարերը շրջելու նպատակով։ Ում որ հաջողվում է մի զարկով շրջել մի թիրախը, նա հաջորդ անգամ խփելու համար երկու քարով խփելու իրավունք է ձեռք բերում, երկուսը շրջելիս՝ երեք քարով և երեքը շրջելիս խաղի այդ պահը հօգուտ այդ խմբի վերջանում է։ Այս դեպքում պարտված խմբի անդամները շալակում են տանող խմբի անդամներին և երկու անգամ տանում են իրանից իրան։ Դրանից հետո խաղը նորից է սկսվում։

Կանոններ.—1. Երբ խփվում է, բայց թիրախը չի ընկնում, խփված չի համարվում։ 2. Երկու կամ երեք քարով խփելու իրավունք ձեռք բերողները «երկու քարանի» կամ «երեք քարանի» անունն են կրում։ 3. Պարտվող խմբի անդամները պարտավոր են «իրենց ոտքով» գալ հաղթող խմբի իրանը և շալակելով տանել ման ածել։ 4. Շալակվողները շալակողներին էշ համարելով «չուշ» կամ «հոշ» են ասում և իրար մոտից անցնելիս ոտքերը կանթ են գցում, որպեսզի էշերը չարշարվեն։ Երբեմն առջևից գնացող իշու հետածի փեշից բռնում է ետևից եկող էշը, նրա ուժով, առաջ ընթանալու դիտավորությամբ։ (Բ. Ժխ. Ձ.)։

277. ԳՈՒՐԶ

Սասունում տվորական նշանառության ձևը երբեմն կիրառում էին գուրզով՝ 1մ երկարության և 7—9 սմ տրամագծով գավազանով։ Սրա ծայրը գնդաձև էր, որի վրա քափ-քափներ՝ դարբնի շինած մեծագլուխ մեխեր էին գամում։ Գամում էին

նաև երկաթե կոնաձև ցցակներ[79]։ Երիտասարդական խաղ էր։ (Պետ. ձ.)։

278. ՔԱՐԳԼՈՐ

Սասունում խաղում էին պատանիները։ Երկու խմբից յուրաքանչյուրն ունենում էր 2—3 հոգի։ Խաղավայրի մի կողմում մի խումբը, մյուսում՝ մյուս խումբը կանգնում էր այնքան հեռավորության վրա, որ հնարավոր լիներ ձեռնաքար հասցնել։ Յուրաքանչյուր կողմում իրարից 1 մ հեռու իրրև նշան երեքական քար էին կանգնեցնում։ Ապա հերթով ձեռնաքարով խփում դրանք շրջելու համար։ Նախ վիճակով հարվածում էր խմբի առաջին խաղացողը. եթե նշանի մի քարին խփում էր, մի անգամ էլ էր հարվածում, եթե ոչ՝ խփում էր նույն խմբից երկրորդ ընկերը։ Եթե այդ խմբի խաղացողներին հաջողվեր խփել և գլորել հակառակորդի երեք քարերը՝ հաղթող կհամարվեին, եթե ոչ՝ մյուս խումբն էր սկսում հարվածել այդ խմբի կանգնեցրած նշաններին։

Քարգլոր խաղացողներից այն խումբն էր հաղթող համարվում, որին հաջողվում էր դիմացինի երեք քարերը տապալել։ Ապա խաղացողները փոխում էին իրենց տեղերը և խաղը շարունակում մինչև պայմանավորված թիվը լրացնելը։

Քարգլոր խաղացողներից լավագույնները նշանդարի՝ լավ նշան խփողների անուն էին վաստակում։ (Պետ. ձ.)։

279. ՔԱՐՆԼՎԱ

Ախուրյանում խաղում են 8—10 տարեկան աղջիկներն ու տղաները ձմռան և գարնան ամիսներին, 10—12 հոգով։ Երեք քարը ձեռնաքարով միանգամից տապալելու դեպքում գծում են մի գիծ, որի վրա կանգնում են հաղթող կողմի խաղացողները։ Հաղթողները կանգնում են գծից 5 մ հեռու, մյուսների դիմաց և իրենցից մեկի հրահանգով ետ-ետ փախչում։ Այդ վայրկյանին հաղթվածները հետապնդում և բռնում են փախչողներին. բռնած տեղից նրանց շալակում և բերում են մինչև իրենց (պարտվածների) սահմանը, որից հետո խաղը նորից է կրկնվում։ (Ագ. ձ.)։

280. ԿԵԼԵ—ՄԵԼԵ

Խաղը նույնն է։ Ըստ խորութքյան դասավորվում է երեք տափակ քար։ Խաղացողները ձեռքերում ունենում են երեքական փոքր խփելու քար։ Երբ նշան առնող խմբին հաջողվում է 3-ական քարերը նետելով գետին տապալել բոլոր 3 նշանները, հաղթող ճանաչվելով շալակվում են պարտվածների կողմից։ Բայց, երբ 3 նշաններն էլ չեն տապալվում, խմբերի դերերը փոխվում են։ (Ժխ. ձ.)։

281. [ՈՎ ԿՀԵՏՆԻ]

Վարդենիսում խաղը նույնն է։ Մասնակցում են 12—18 տարեկան տղաներ և երբեմն՝ աղջիկներ։ Ղեկավարները մայր են կոչվում, որոնք իրենց անդամներին ըստ ուժի բաժանում են երկուական հոգու և կանգնեցնում իրենց ետևը։ Սահմանագծի մոտից դեպի ետ, ըստ խորութքյան տնկվող տափակավուն քարերի թիվը համապատասխանում է խաղացողների թվին։ Վիճակով առաջինը նշան առնող խմբի անդամները կանգնում են հակառակորդի գծի վրա և խփում են իրենց քարերին՝ մեկական փոքր քարերով։ Այնուհետև մյուս խումբն է խփում և խմբերից նա, որը ավելի շատ քար է տապալել, մոր միջոցով մյուսին հարցնում է։

—Ո՞վ է հեծնողը։

—Դուք,—պատասխանում են պարտվածներն ու շալակում հաղթողներին և անցնում պայմանավորված տարածությունը։ (Կխ. ձ.)։

282. ԿՏԵՒՍ ՃՂԻ

Կոտայքում խաղում էին գառնարածները, 5—7 հոգով, որոնք մի-մի կոպալ էին ունենում։ Վերջիններս շարում էին իրար կողքի, միմյանցից ավելի քան մի ոտնաչափ հեռու։ Վիճակով ստացված հերթականությամբ յուրաքանչյուր խաղացող մի ոտքի վրա նախ և առաջ պտտվում էր փայտերի շուրջը և առանց հանգստանալու կոպալների առաջին ծայրից շարունակում ցատկել՝ թաթը վերջիններիս արանքը դնելով, առանց դրանց դիպչելու։

---

79 Գուրզի փոքր և թեթև տեսակը սասունցիները գործածում էին վայրի գազանների դեմ կռվելիս։ Սրա կոթածայրին կապվում էր մի ամուր պարան։ Պարանի ծայրը բռնում էին, գուրզը նետում գազանի (երբեմն և թշնամու) վրա և ետ էին քաշում։ (Պետ. ձ.)։

Ֆ. Խանչալլիում խաղում էին գառնարած տղաները 4—12 հոգով։ Բուճի պահելով մնացողը տընկում էր իր կոպալը մի տեղ, փափախն անցկացնում էր դրա ծայրին և դառնում դրա պահապանը։ Տնկված կոպալի մոտից 20—25 քայլ հեռու ընտրում էին սահմանագիծ, որի վրա կանգնում էին մյուս խաղացողները՝ կոպալները կամ ճիպոտները ձեռքներին։ Սրանցից մեկը ղի-ղի անելով (մի ոտքով) գալիս էր դեպի պահապանը և ասում..

—Բարի լուս, Ալե՛ք քեռի։

—Աստու բարի՛ն, բարով էկար։

—Ալուրս աղցի՞լ ես։

—Աղցել եմ։

—Մա՞նդո ես աղցել, ի՞նչ խոշոր։

—Խոշոր եմ աղցե (կամ՝ մանդո եմ աղցե)։

—Ալբրես ի՞նչ ես էփե։

—Թաթաբրբերաակի։



Նկ. 35 Ալեք քեռի (բնագիր № 283)
Լուս. Մ. Քոյանի

—Ահան քեզ կարմիր կիրակի,—ասում էր եկողը և իր կոպալով հարվածում էր գլխարկին ու թոցնում հեռու, իսկ ինքը դարձյալ ղի-ղի-ով խույս էր տալիս դեպի սահմանը։ (Թաթաբրբերաակի կերակրից բացի, ղի-ղի եկողները այլ կերակուրների թվում տալիս էին նաև ջրխաշ, որի պատասխանը լինում էր «ահան քեզի օղխաշ»)։

Պահակն իսկույն վազում էր դեպի գլխարկը, վերցնում էր այն, արագ-արագ հետապնդում փախչողին, նետում էր նրա ետևից՝ խփելու նպատակով։ Փափախով խփելիս պահակը փախչողին

Ֆիպչելու դեպքում խաղացողը կրտված համարվելով, խաղը հանձնում էր հետևյալին։ Երբ հասնում էին կոպալների վերջին ծայրը, դարձյալ առանց հանգստանալու ցատկելով ետ էին գալիս, բայց այս անգամ կոպալներին ոտք դնելով, ըստ որում առաջինին ոտք դնելիս թուչողներն արտասանում էին՝ հացի, 2-րդինի՝ լոռի, 3-րդին՝ բոխի և այլն, մինչև որ հասնում էին վերջինին։ Այս ցատկումին խաղացողները ոտք էին դնում միայն այն կոպալին, որի անունը տալիս էին և երբ ոտքը դնելուց հետո ուշացած էին անվանում, դարձյալ կրտված էին համարվում։ Բայց, երբ խաղացողներն օրինազանց չէին լինում, այդ փայտկոխիկ ցատկումն ավարտելիս առանց հանգստանալու և առանց մյուս ոտքը գետնին դնելու մի անգամ ևս պտտվում էին կոպալների շուրջը։ Նայած հասակներին, պտույտների թիվը կրճատում կամ ավելացնում էին նախքան խաղն սկսելը։

Նկարագրվածը կատարում էին բոլոր խաղացողները, և նա, ով բոլորից դանդաղ էր կատարում և կամ օրինազանց լինելով չէր կարող կատարել, մայր էր ընտրվում, որից հետո միայն սկսվում էր բուն խաղը։

15—18 քայլի վրա տնկում էին ամուր և ճկուն մի կոպալ և խաղը բոլորովին կատարել չկարողացողի գլխարկը հագցնում դրա ծայրին։ Գլխարկատերը գնում և ծնկաչոք նստում էր մոր մոտ։ Վերջինս սահմանում չոքած դրությամբ երեք փայտով և կանգնած՝ երկու փայտով աշխատում էր. գլխարկը վայր գցել, որը չհաջողվելու դեպքում իր գլխարկն էր դնում փայտին՝ մի ուրիշին մայր նշանակելով, որը շարունակում էր խաղը, իսկ հաջողվելու դեպքում գլխարկին արդեն մոտիկ կանգնածներն ըսկըսում էին ոտքով խփելով հեռացնել, առանց ետ դառնալու իրավունքի։ Մայրն այդ ժամանակ անընդհատ ասում էր. կտեի՛ս ճղի, կտեի՛ս ճղի, բայց որոշ ժամանակից հետո մայրը հրամանը փոխում և ասում էր. լավի, լավի, լավի, որով խփողները ետ էին դառնում ու փախչում դեպի մայրը։ Մինչև մոր մոտ հասնելը, եթե գլխարկատերը որևէ մեկին կարողանում էր խփել, այն անգամ խփողի գլխարկն էր դրվում փայտին և նույն գործողությունը կրկնվում էր, հակառակ դեպքում մնում էր նույնը։ (Քխ. ձ.)։

վիրավորում էր, որով նրանց դերերը փոխվում էին։ Բայց եթե ղի-ղի-ով փախչողը մինչև փափախի հարվածն ստանալը հասնում էր սահմանը, պահակին վիճակվում էր նորից մնալ իր դերի մեջ։ Խաղը այս ձևով շարունակվում էր՝ պահպանելով հերթական կարգ՝ ընդ որում շահած էր համարվում նա, որի գլխարկը չէր թակվում։ Ղի-ղի-ով գնալ-գալու ժամանակ բարձրացրած ոտքը գետնին դնողը պահակի հետ դերը փոխում էր։ (Բ.ժխ. ձ.)։

284. ՊԱՊԵ—ՊԱՊԵ

Խաղը Տարոնում խաղացվում էր մեծ մասամբ գարնան ամիսներին հոտաղների, գառնարածների և հորթարածների կողմից, կանաչ դաշտերում և մարգագետինների վրա։ Խաղում էին 10—16 տարեկան տղաները, 4 և ավելի հոգով։

Խաղի պարագաներն էին՝ ձեռնափայտեր (կոպալներ), գլխարկներ (արախչիններ, որ ծածկում էին Մշո դաշտի գյուղացի տղաները, և որոնք հյուսվում էին բրդե գույնզգույն թելերից)։

Նախքան խաղն սկսելը խաղացողները կանգնում էին մի գծի վրա և երկու ձեռքերով բռնելով իրենց փայտերի մի-մի ծայրերից, աշխատում էին գցել որքան կարելի է հեռու։ Որի փայտը որ ամենից մոտիկ էր ընկնում, նա դառնում էր պապե, իսկ մնացածներն ըստ իրենց փայտերի հեռավորության, հերթի էին կանգնում, ըստ որում ամենից առաջ կանգնում էր նա, որի փայտը նետման գծից ամենից հեռու էր ընկնում։

Պապեն գծից սկսած չափում էր 7—10 քայլ, իր փայտն ամրացնում էր գետնին, նրա վրա հագցնելով իր գլխարկը և կանգնում մոտը։ Կանգնածներից առաջին համարը մի ոտքով մոտենում էր տնկված փայտին և ասում էր.

— Պապե, պապե,
Բարի լուս քըզի։
—Երկու հուշած ձուկ քըզի,—

պատասխանում էր պապեն։

Դրանից հետո մոտեցողը հարվածում էր պապեի փայտին, շրջում հրապարակում և որոնում նշանը, իսկ մյուսները դեսից-դենից խփում էին նրան իրենց գլխարկներով կամ այլ փափուկ առարկաներով։ Նշանի հայտնաբերումով խաղը վերջանում էր, իսկ մինչև այդ կալվածին իրավունք էր վերապահվում ճիպոտահար անել իրեն խփողներին, եթե միայն նրան հաջողվում էր։ (Հժխ. ձ.)։

285. ԲՈՅ ՓՆՏ

Խաղը գրեթե նույնն է։ Երբ մեկին հաջողվում է նշանափայտը տապալել գետին, մինչև այդ փայտ նետողներն անմիջապես վազում են իրենցը վերցնելու և գիծը հասնելու համար, իսկ նշանի տերը ձգտում է այն կանգնեցնել և որևէ մեկին խփելով՝ դերը նրա հետ փոխել։ (Հժխ. ձ.)։

286. ԿՈԿՈՋ—ԿԱԿԱՋ

Վանում խաղի անունը ծագում էր ոչխարի կամ կովի սրունքի ոսկրից, որի մի կտորի հարթ ծայրը գետնին դնելով՝ 2—10 երեխաներ լափով խաղում էին այսպես։ Նախապես կոկոջից 6—7 քայլ հեռու մի նշան էին որոշում, ապա կոկոջի մոտից խաղացողները լափերը գցում էին դեպի այդ նշանը։ Լափերի դիրքին համեմատ որոշում էին առաջին (ա՛լա), երկրորդ և երրորդ ու այլ խաղացողների հերթականությունը։ Նախ առաջինը, ապա և մյուսները, նշանատեղից խփում էր կոկոջին, սրան տեղից թռցնելու նպատակով և ոտնչափով չափում իր տեղից մինչև անկման կետը, ապա լափով սրա ընկած տեղից խփում էր ընկերներից մեկի լափին, այստեղից դարձյալ կոկոջին, մինչև որ վրիպում էր ունենում և խաղը հանձնում հետևյալին։

Ով որ նախապես որոշած ոտնաչափերի թիվը (30 և այլն) լրացնում էր, նա մի խաղ էր շահում, կամ, ավելի ճիշտ, ազատվում էր հեծնվելուց։

Բոլորից վատ խաղացողը կոկոջը դնում էր իր՝ կողմ բացած ոտքերի արանքը՝ գետնի վրա և ինքը մեջքը ծռելով, թողնում էր, որ շահողներից առաջինը հեծներ իրեն. այն ժամանակ ինքն էր լափիկով խփում իր կոկոջին դեպի ետև, որին պարտավոր էր խփել իր քարով հեծնողը՝ հեծած վիճակում։ Այս վերջինս խփել կարողանալիս հեծնվողի փորը մի լուտիկ (լակոտ) էր դնում, և ինքը նորից հեծնող մնում։ Եվ այսպես, քանի անգամ որ իր քարով հաջողեցնում էր խփել հեծնվողի թռցրած կոկոջին, հեծնողն այնքան լուտիկ էր դնում նրա փորը։ Իսկ երբ վրիպում էր, ուրիշներն

էին փոխարինում իրենց հերթականությամբ, նույնը կատարելով։

Խաղը վերջանում էր, երբ բոլորը լուտիկ դնելով հոգնում էին կամ բոլորն էլ հեծնելիս անհաջողության էին մատնվում և իրար չէին կարողանում սաղացուցել (ողջացնել) և կամ հեծնվողի «ա՛յս խաղի մորուքը բուսե՞ց, ա՛յս խաղի մորուքը բուսե՞ց» խոսքին ձայնակցում էին նաև մյուսները, որ նշանակում էր, թե՝ խաղը հնացել, թարմությունը կորցրել է։

Կանոններ.—1. Խաղն սկսելիս, ով որ ամենից առաջ փութար ասել տակը, նա ամբողջ խաղի ընթացքում իրավունք կունենար իր լափը խփելու կոկոջի ճիշտ մոտից։ 2. Խփված կոկոջի ու լափի միջև մեկ ոտնաչափից պակաս տարածություն լինելիս ոչինչ-փուճ էր համարվում։ 3. Համրանքը և մի քարից դեպի կոկոջը կամ մի քարից դեպի մի ուրիշ քարը խփելու կարգը մոռանալիս ամբողջ շահածները ոչնչանում—փուճ էին դառնում։ (Ա.Խ. I, 134—136։ Համմտ. Ջ. № 4184, էջ 778ա—778բ և Խ. վԺԽ. ձ., 74—75)։

287. Շ Ա Կ

Երևանի Արաբկիր արվարձանում խաղում են գարնան և ամռան ամիսներին. մասնակից 2—8 տղաներն ունենում են մեկական հոլ։ Խաղատեղի գետինը մաքրելուց հետո մեկը հոլերը հավաքում, սուր ծայրերը դեպի ցած դարձրած պահում ու բեթևակի և ուղղահայաց վայր է գցում։ Շակ կանգնած, այսինքն բութ ծայրի վրա ընկած հոլաոտերերը դուրս են գալիս, իսկ կողքի ընկածները, նույն գցողը կամ մի ուրիշը, նորից նույն ձևով գցում է գետին, և այս գործողությունը կողքի ընկածների համար կրկնում է այնքան ժամանակ, մինչև որ հոլերից միայն մեկը մնում է, այսինքն կողքի է ընկնում։ Այդ դեպքում մնացողի հոլը դառնում է նշանառման ենթակա։

Դրանից հետո խաղն ընթանում է այսպես։

1. Մնացած հոլին խաղացողներից մեկը թելով լարված հոլով նշան է բռնում։ Նպատակն է՝ ընկած հոլի մեխը դուրս թռցնել կամ խալաթ կոխել, այսինքն նշան, հետք թողնել։ Խփողն աշխատում է, որ իր հոլը գետնի վրա շարունակի պտտվել, այլապես, եթե ընկած հոլին չկպչի և կանգ առնի, ինքը ընկածին կփոխարինի։

2. Երբ նշան բռնողի հոլը ընկածին չի կպչում, նա իր պտտվող հոլը գետնից առնում է ափի մեջ, և ափի մեջ պտտվող այդ հոլը խփում է մնացածին այն պայմանով, որ ձեռքը ընկածին չդիպչի։ Իսկ եթե հոլը մինչև խփելը պտտվելուց դադարում է, խփողը համարվում է մնացած, իսկ մնացածը՝ ազատվելով խփելուց, մյուս ընկերների հետ նրա հոլին է նշան բռնում։

3. Երբ որ նշանը բռնում են, խփողի հոլը գետնի վրա պտտվելը շարունակի թե ոչ, միևնույն է, խփվողը վերցնում է իր հոլը, և որևէ ձևով՝ ձեռքի վրայից կամ ոտքի ծայրին դնելով՝ շակ է գցում։ Եթե սա շակ չի բերում, խփողը ազատվում է, իսկ մյուսներն սկսում են այդ ձևով մնացողի հոլին խփել։ Բայց եթե մնացողը շակ է բերում, խփողը նույնպես շակ է գցում։ Երբ երկուսն էլ այս անգամ



Նկ. 36 Դվինում պեղված հոլի կավե գնդեր
Գրչանկար Ա. Պատրիկի

շակ են բերում, գործողությունը կրկնում են, մինչև որ մեկն ու մեկը մնում է, իսկ մյուսը դուրս է գալիս։

4. Այս անգամ մյուսները մեկ-մեկ և նույն ձևով սկսում են մնացողի հոլին խփել։

Կանոններ.— 1. Խաղի ընթացքում հերթականություն չի սահմանվում։ 2. Ափի մեջ պտտվելը

դադարած կամ բռնած հոլով մնացածին խփելն անթույլատրելի է։ 3. Խփելու հետևանքով մեխը հանված հոլի տերը խաղը շարունակելու իրավունքից զրկվում է։ 4. Հոլի սուր ծայրից բռնելով շակ բերելը օրինական չի համարվում։ 5. Բոլորովին նոր հոլին խփելիս ասում են—թազա հոլին մեկ խալաթ։ (Բ. Ժխ. ձ.)։

288. ԿՐՌ—ԿՐՌ

Խաղում են միայն բռաչափ երեք քարով։ Հերթով մեկը առնում է երկու քար ձախ ձեռքը, իսկ երրորդը՝ աջ։ Երրորդով խփում է երկու քարին և վայր գցում։ Եթե քարերը միմյանցից մի ոտնաչափ հեռու ընկան, այն ժամանակ վերցնում է մեկը, դրանով խփում մյուսին և ապա սրանով՝ երրորդին։ Խաղն այսպես շարունակվում է, մինչև որ մեկը վրիպի՝ քարերը միմյանց չդիպչեն կամ վայր գցած միջոցին միմյանցից մի-մի ոտնաչափ հեռու չլինեն։ Այն ժամանակ այս վրիպողը դառնում է էշ, և եթե երկրորդ խաղացողը հաջող խաղաց, ելնում է իշու շալակն ու սպասում, մինչև որ երրորդը խաղա, վերջացնի։ Եթե սա էլ հաջող խաղաց, ինքը հեծնում է իշու շալակը, իսկ երկրորդը խաղում է։ Այսպես շարունակվում է, մինչև որ մեկը վրիպում է, այն ժամանակ նախկին էշը ելնում է այս նոր իշու շալակը, իսկ մյուսը՝ խաղում է։ Եթե խաղի սկզբին երկուսը միմյանց հետևից վրիպում են, այն ժամանակ առաջին վրիպողը ելնում է երկրորդ վրիպողի շալակը։ (Լ. ԺՄԽ, 45։ Համմտ. Ախ. 1, 182 «Քարոցիկ» խաղը)։

289. ԳԼՈՐՈՑԻԿ

[Վանում] ...Աշուն ընկույզ գալուն պես քանիմ՝ փարա ճարելով, ընկույզ առնելով սկսեինք ընկույզ խաղալ։ Քաղաքի միջին դռնեն ընկեր գտնալով, երեկոյան դեպ ի տուն գալո միջոցին գլորոցիկ խաղայինք. 2—3—4 և 5 հոգվով կարելի էր խաղալ։ Առաջին մի ընկույզ ճանապարհի երկարության կձգեր 4—5—6 և մինչև 10 քայլ հեռավորությամբ։ Երկրորդն նշան դնելով ջանայր ձեռքի ընկույզով ձգված ընկույզին զարնել ու առնել, եթե չկրցավ, երկրորդն նույնպես առնելով եթե չհաջողվեր, մինչև հինգերորդին հասներ կարգն։ Հետո առաջին[ն] գար առնույր զընկույզն յուր և նշան դնելով հարկաներ զանցյալ զընկույզս։ Եթե անցյալքն մոռ մնացյալ էին, առաջին զքանիսն շահեր, իսկ եթե հեռի էին, երկրորդն առնույր զյուր ընկույզն ի գետնույն և հարկաներ զմյուսն և այսպես առնելով գայինք հասանեինք ի մեր թաղն։ (Զ. № 4184, էջ 141 բ (Վ)։

290. [ԸՆԿՈՒՅԶԻ ԽԱՂ]

Շապին-Գարահիսարում խաղում էին կտուրներում, կալերում, բակերում և ձմռան ամիսներին՝ սենյակում, երկու և ավելի հոգով։

Խաղն սկսողը մի ընկույզ գլորում էր գետին, որին նույնպես մի ընկույզով նշան էր առնում հակառակորդը։ Հաջողության դեպքում վերջինս շահում էր հակառակորդի գլորած ընկույզը, ապա իրենը դարձյալ նետում էր գետնին՝ որպես նշանակետ հաջորդ խաղացողի համար։

Հաճախ խաղացողներից մի քանիսին չէր հաջողվում իրենց հերթին դիպցնել գետնի ընկույզներին, ուստի իրենց գլորածն էլ մնում էր գետնի վրա և բոլորը միասին դառնում փորձված նշանառուի բաժին։

Խաղի ընթացքում տանուլ տվողների ընկույզները կենտրոնանում էին երկու համեմատաբար լավ խաղացողների ձեռքը, որից հետո վերջիններիս միջև մրցում էր տեղի ունենում։ Ճիշտ նշանառուն շահում էր գետնի ընկույզները, ըստ որում այս անգամ ոչ թե մեկական, այլ մեկից ավելի ընկույզ դնելով խաղի հրապարակը։ (Հս. խ. ձ. 36—37։ Համմտ. ԲՄ, 1886, էջ 287)։

291. Կ Լ Տ Ի

Խաղը Գորիսում նույնն է։ Խաղալիքը կլոր քար է։ Երբ խփողին հաջողվում է նշան բռնել, ընկած քարի տերը պարտավոր է նրան շալակել և տանել մինչև թռած քարի մոտ։ Խփելը չհաջողվելիս, նշանառության հերթն անցնում է հաջորդին։ (Գխ. ձ.)։

292. ԳԼՈՒԽ ԳԼԽԻ

Խաղում են Երևանում, 2—4 տղաներ, գարնանն ու ամռանը։ Մեկը իր հոլը կամավոր կերպով նետում է գետնին։ Մյուսները մեկ—մեկ, թելով լարված հոլով աշխատում են խփել գցված հոլին, խալաթ կոխելու, այսինքն նշան առնելու՝ դրա

վրա հետք թողնելու կամ ծայրի մեխը դուրս թոցնելու նպատակով։ Մրցումը զոռացի անունն է կրում։ (Բ. Ժխ. ձ.)։

293. Ե Տ—Ե Տ

Կոտայքում խաղացող տղաներն ընդարձակ դաշտի մի կողմում դնում են 20—30 սմ տրամագծով մի քար, որ կոչվում է բուն, իսկ իրենք փուշ ու տուղի միջոցով բաժանվում են երկու խմբի։

Խաղն սկսելու իրավունք ստացած խմբի յուրաքանչյուր անդամ վերցնում է երեքական փոքրիկ քար, և բոլորը միասին կանգնում են բնից 10—15 քայլ հեռավորության վրա։ Մյուս խումբը շարվում է բնի երկու կողմերում այնպես, որ բնին ուղղված քարերն իրենց չկպչեն։ Բնից հեռու կանգնած խումբը հերթով ձեռքի քարերով բնին նշան է բռնում։ Հենց որ որևէ մեկի քարը կպչում է բնին, խփող ամբողջ խումբը ետ-ետ է փախչում, իսկ բնի մոտ շարվածներն անմիջապես վազում են փախչողների ետևից ու աշխատում են բռնել նրանց։ Ով որին որտեղ որ բռնում է, հենց այնտեղից նըրան շալակած բերում և իջեցնում է բնի մոտ։ Այդ պատճառով էլ ետ—ետ փախչողներն աշխատում են՝ որքան կարելի է հեռու փախչել և ուշ բռնվել, որպեսզի ավելի երկար տարածություն հեծնեն իրենց բռնողին, իսկ բռնողները՝ ընդհակառակը, շահագրգռված են շուտ բռնել՝ ավելի քիչ տեղ շալակելու համար։ Երբ բոլոր փախչողները բռնվում բերվում են բնի մոտ, խաղը կրկնվում է միևնույն կարգով։ Խաղացող խմբերը տեղերը փոխում են այն դեպքում միայն, երբ խփող խմբի ոչ մի քարը չի կպչում բնին (Թ. Ժխ, ձ.)։

294. ԹՈՒՌՆԱ

Կոտայքում խաղում են 12—18 տարեկան տղաները, 8—20 հոգով, որոնք անուն դնելով բաժանվում են երկու հավասար մասի, և որոշում խաղն սկսող կողմը։ Սկսող կողմից մեկը մի սահմանից դեպի մյուսն է խփում 15 սմ երկարություն ունեցող այն փայտիկը, որը թուռնա է կոչվում։ Փայտիկն ընկած տեղից նույն գործողությունը կատարում է խփողի երկրորդ ընկերը, վերջինիս խփած տեղից՝ երրորդը և այլն։ Մինչև որ այդ խմբի բոլոր անդամները նույնը կատարում են, դրանից հետո նույն գործողությունը կատարում է մյուս խումբը՝ հակառակ ուղղությամբ։ Եվ երբ նրանք կարողանում են թուռնան հասցնել մյուս սահմանը, խաղը վերջանում է ոչ ոքի, հակառակ դեպքում շալակում են հակառակորդ խմբի անդամներին և անց են կացնում սահմանների միջև ընկած ամբողջ տարածությունը։

Երկրորդ խումբը կարող է նույն գործողությունը կատարել։ Այդ դեպքում խաղացողներից մեկը թուռնան ընկած տեղից «չի չի» ասելով վազում է դեպի խաղն սկսելու գիծը, աշխատելով առանց շունչ առնելու հասնել գծին։ Նրա շունչը կտրվելիս «չի չի» ասելը շարունակում է հաջորդ ընկերը, բայց առանց ընդհատելու։ Եթե դա նրանց հաջողվում է, ազատվում են շալակելուց, եթե ոչ՝ շալակում են։ (Ջխ. ձ.)։

295. ՅՈՐՂԱՆ ԴՈՇԱԿԻ

Խաղում են միայն տղաները, որոնք հալա գալով բաժանվում են երկու խմբի և թուք ու ցամաքով որոշում խաղն սկսողը։

Մի ճիպոտ դնում են գետնին։ Սկսող խմբի անդամներից մեկը բոլորի ճիպոտները ժողովում է իր գիրկը և շոքած տեղից մեկ—մեկ գցում՝ ջիդրի նման գետնի վրայի ճիպոտին դիպցնելու։ Ամեն մի դիպցնելիս գետնի վրա դրած ճիպոտը տանում են, դնում գցած ճիպոտի ծայրին։ Երբ մնում է նրա մոտ մի ճիպոտ, այն ժամանակ վեր է կենում շոքած տեղից ու այդ վերջինով խփում կանգնած։ Խփել չկարողանալու դեպքում նրա մյուս ընկերն է վերցնում ճիպոտները և շարունակում դիպցնել ճիպոտին։ Խմբի անդամները մեկ—մեկ խփում են, մինչև վերջինը։ Գետնին դրած ճիպոտը որտեղ որ հասցնում են, այնտեղից էլ հեծնում են մյուս խմբի անդամներին ու գալիս մինչև հոբը։ (Գթ. III, № 18 (ՇՄ.)։

296. Գ Ր Վ Ա Ն Ք Ա

Նոր Բայազետում երկու խաղացողներից յուրաքանչյուրն ունենում է ձեռքի գնդակի մեծության մի-մի կլոր քար, որոնք գրվանքա են կոչվում։ Ընդրանցից մեկն իր գրվանքան գլորում է առաջ, մոտավորապես մինչև 10 մետր։ Երկրորդն իր գրվանքայով խփում է առաջինի գրվանքային։ Կպցնելու դեպքում առաջին քար գցողը երկրորդին շալակում է մինչև իր գրվանքայի մոտ, իսկ եթե

չի կպչում, առաջինը գնում է առաջ, իր գրվանքայով խփում է երկրորդի գրվանքային, և եթե հաջողվում է, երկրորդը առաջինին է շալակում և խաղն այդպես շարունակվում է մինչև խաղացողների հոգնելը։ (Բզ. ձ.)։

297. Տ Ո Ւ Շ

Խաղում էին գարնանը 10—20 տղաներ, որոնք վիճակահանությամբ բաժանվում էին երկու խմբի։ Խաղացողներն ունենում էին իրենց ձեռքին մի-մի երկար փայտ և ընդհանուրի համար մի կարճ փայտ, որ տուշ անունն էր կրում։ Խմբերից մեկն այդ երկար փայտերով խփում էր տուշին, հասցրնում, ասենք, մինչև մեկ քառորդ կմ տարածության վրա։ Մյուս խումբը նույն ձևով խփելով՝ տուշը վերադարձնում էր նախկին սահմանը։ Երբ վերադարձնող խումբը տուշը չէր կարողանում հասցնել նշված կետը, ապա որքան տարածություն որ նրանց պարտք էին մնում, պարտատերերին շալակում և իրենց վրա կրած քարեղեն ու այլ ծանր իրեղեն բեռներով հանդերձ՝ տեղափոխում էին պայմանավորված տեղը։ (Մ. Խղ. ձ. (Մրտ.)։

298. Չ ե լ Ի կ

Մեբաստիայում չելիկի խմբերը կազմվում էին 3—5 հոգուց։ Չելիկ խաղալիքը թզաչափ երկարության և մատի հաստության փայտիկ էր։ Խմբերի սահմանները իրարից հեռու էին լինում 20—50 մ։ Խփելու իրավունք ստացած խմբից մեկը իր ձեռքի ճիպոտի ծայրով վեր էր թռցնում ծայրերով երկու քարերին դրված չելիկը և նույն ճիպոտով օդում խփում դեպի հակառակորդները։ Հակառակորդները պարտավոր էին չելիկը օդում բռնել, որով խմբերի դերերը փոխվում էին։ Թռած չելիկը չբռնելու դեպքում այն տեղը դնելու պարտականությունն ընկնում էր չբռնողների վրա։ (ՆՍ, 1958, № 38, էջ 13—14)։

299. Շ Ո Ր—Խ Ա Ն Ե լ Ո Ւ Կ

Երկու հոգի դեմ առ դիմաց կանգնում, մեկական քար՝ կէլ են տնկում և աշխատում են հաջորդաբար քար նետելով գլորել միմյանց կէլերը։ Ամեն մի գլորելուն կէլի տերը տնկում է այն և իրենից մի շոր հանում։

Հաղթող նրան են ճանաչում, ով որ այդ ձևով հանել է տալիս դիմացինի բոլոր շորերը, թողնելով միայն վարտիքը։ (Թկ. 1899, № 45, էջ 713 (Բղղ.)։

300. Դ Ա Կ Ի

Խաղում էին խոնավ տեղում, 3 և ավելի հոգով, որոնք ունենում էին 70 սմ երկարությամբ մի-մի փայտ։ Խաղացողներից մեկն իր փայտը ծայրնիվայր խփելով գետնին, խրում էր մեջը, մյուսները նույնպես հերթով ցցում էին իրենց փայտերը նրա փայտի կողքին, աշխատելով վերջինս տապալել գետին՝ իրենցը կանգուն թողնելու պայմանով։ Ում որ հաջողվում էր, նա տապալածը իրեն էր վերցնում։ Իսկ եթե ոչ մեկը առաջինի փայտը վայր գցել չէր կարողանում, ինչպես նաև իրենը գետնի մեջ ցցել չէր կարողանում, առաջինն իր փայտը վերցնում էր, մյուսները հերթով սկսում էին խփել ընկերոջ վայր ընկած փայտին։ Սրան խփելիս, երբ խփողինը կանգուն էր մնում և խփվածը տեղաշարժվում էր, նա ընկած փայտը վերցնում էր, իսկ եթե իրենն էլ էր վայր ընկնում, առաջինը վերցնում էր իր փայտը և մյուսները հերթով սկսում էին վերջինիս փայտին խփել։ (Բ. Մխ, 104։ 1950-ական ԹԹ. փայտաձողերին փոխարինել էին երկաթե շղթերը)։

301. Զ Ր Կ Ո Կ

Ամառնում խաղը նույնն էր։ Զրկել կամ չրկցրնել նշանակում էր խրել։ Խաղին մասնակցում էր երկու հոգի։ Խաղալիքները փայտից կամ երկաթից էին շինում։ Խաղում էին գարնանն ու աշնանը։ Հաղթանակը միավորներով էին հաշվում։ Առաջին վիճակահանությունից հետո խաղը հետո շարունակվում էր հերթով։ (Պետ. ձ.)։

302. Ս Ա Լ Բ Ա Ն Դ

Մի խումբ տղաներ ընդհանուրի համար երեք հատ տափակ և փոքրիկ քարեր (կոզա) են ունենում և յուրաքանչյուրն իր համար՝ մի-մի լափիկ։ Կոզաներն իրար վրա դարսում են բնից 5—10 քայլ հեռու, խաղադաշտի կենտրոնում։ Կոզաների մոտից ամեն մեկն իր լափիկը գցում է դեպի բու-

նը. ումը որ ամենից կարճ՝ կոզային ամենից մոտ է ընկնում, նա դառնում է վերջինիս պահապանը, իսկ մյուսները ըստ իրենց լափիկների հեռավորության՝ բնի մոտից կոզային նշան են բռնում, աշխատելով լափիկի հարվածով ցրել նրա քարերը։ Երբ հաջողեցնում են, վազելով գնում և իրենց լափերը բերում են։ Իսկ երբ չեն հաջողեցնում, պարտավորվում են գնալ իրենց լափիկների մոտ, մի ոտքի օգնությամբ դրանք բարձրացնում են մյուսի երեսին, սրանով վերև են նետում և բռնելու դեպքում գալիս կանգնում են իրենց տեղերը։ Այս փորձը կատարելիս, երբ լափիկը բռնել չի հաջողվում և գետին է ընկնում, փորձողներն իսկույն փախչում են դեպի բունը, ապա թե ոչ կոզայի պահապանը նրանցից որին որ խփում է, նրա հետ փոխում է իր դերը։

Լափիկներով կոզաները ցրելուն պես պահապանը դրանք արագորեն հավաքում իրար վրա է դարսում և անմիջապես հետապնդում է խփող և իրենց լափերն առնող փախչողներին։ Եվ, որքան որ կոզաները հեռու և մոտիկ ցրված լինեն և պահապանը ժամանակին դրանք իրար վրա շարելու արագաշարժություն չունենա, նա փախչողներին հետապնդելու և խփելու իրավունք չի ունենում։

Պատահում է, որ լափիկ զարնողներից մեկը վերջինիս կոզայի սահմանից այն կողմ անցկացնել չի կարողանում, կամ ձեռնաքարը կանգ է առնում կոզայի մոտ, այն ժամանակ խփողը փախուստի է դիմում, որին հետապնդում է կոզայի պահապանը՝ նրան խփելու համար, կամ պահապանը նրա լափիկն առնում է իր ոտքի տակ, մինչև որ մյուս խաղացողները կոզան ցրում են և պահապանն ուրիշին հետապնդելիս լափիկի տերը կարողանում է ազատել իր քարը։ (Ախ. I, 172—174։ Համատ. խ. վժխ., ձ. 13—15)։

303. ԲԱՆԿԱ ՊԼԱՎ

Կոտայքում խաղացողներն իրար հետ յափուռդա են գալիս և վերջին մնացողին կանգնեցնում են ջուլայում։ Ջուլան այս խաղի մեջ իրենից ներկայացնում է մի թիթեղյա բանկա, դրված հողի վրա և շուրջը գծած իր տրամագծից մի փոքր մեծ շրջանագիծ, որից 10 մ հեռավորության վրա գծում են մի ուղիղ գիծ (ջղիզ)։ Խումբը հավաքվում է գծի վրա և այնտեղից յուրաքանչյուրն իր լեփուկով (տափակ, ձեռքի մեծության քար) հերթով նշան է բռնում բանկային։ Անկախ այն հանգամանքից, թե նետած լեփուկները դիպչում են բանկային թե ոչ, նետողներն աշխատում են իրենց լեփուկները ետ տանել, նորից խփելու համար։ Նետած լեփուկները ետ են տանում կամ անմիջապես գետնից ձեռքով փախցնելով, կամ նախ զգուշությամբ մոտենում և կանգնում են լեփուկի վրա, հետո մի ոտքի օգնությամբ լեփուկը դնում են մյուս ոտքի երեսին ու վեր գցելով՝ ձեռքերով լեփուկը օդում բռնում։ Առաջին դեպքում ջուլայում կանգնողը իրավունք ունի լեփուկը փախցնողին խփելու և կոտելու նպատակով հետապնդել նրան մինչև գիծը, և եթե միայն այդ ժամանակամիջոցում բանկան խփելով նորից չեն շրջել, իսկ երկրորդ դեպքում լեփուկը ձեռքերով բռնելուց հետո բռնողն իրավունք ունի գնալ դեպի գիծը, առանց խփվելու վտանգի։ Երբ որևէ մեկի լեփուկի հարվածից բանկան շրջվում կամ գլորվում է մի կողմ, գծում կանգնողը բանկան անմիջապես դնում է իր տեղը և գետին ընկած լեփուկներին պաշտպանում նրանց տերերից։ Եթե հաջողվում է լեփուկ տանողներից որևէ մեկին խփելով կոտել, խփողը նրա հետ փոխում է իր դերը։ (Թ. ժխ. ձ.։ Մի այլ վարիանտը լոփո է կոչվում)։

304. ՓԼԱՎ

Քանաքեռի այս վարիանտում խաղը նույնն է։ Խաղին մասնակցում են 8—15 տարեկան տղաներն ու աղջիկները։ Քարակույտը փլավ է կոչվում։

305. ՅՈԹ ՔԱՐ

Խաղում են 10—16 տարեկան տղաներն ու աղջիկները տարվա բոլոր տաք եղանակներին, բակերում, կալերում և դաշտերում։

Եթե խաղի ընթացքում փախչող խմբի անդամներից մեկը կամ մի քանիսը չեն խփվում, այլ խույս տալով գնդակից, շրջանցում են և հաջողեցնում ցրված յոթ քարը շարել միմյանց վրա և հաշվել 1—7 թիվը, ապա այս դեպքում փախչողները շահում են մեկ փալաս։

Երբ հակառակորդին հետապնդելիս նետած գնդակը նրանցից որևիցե մեկը բռնում է օդի մեջ

առանց գնդակը գետնին կամ իր մարմնին դիպչելու, ապա այս դեպքում գնդակը բռնող խումբը շահում է մեկ փալաս: (Վա. ձ. (Արթ.), ժխ. ձ.):

306. ՅՈՒ ՔԱՐ

Խաղը նույնն է: Խաղին մասնակցում են 15—20 տղաներ և աղջիկներ: Հրապարակի երկարությունը հասնում է 30—40 մ: Քարերը շրջագծից դուրս բերելիս խմբերի դերերը փոխվում են: (Հ. ժխ. ձ.):

307. ՅՈՒ ՔԱՐ

Երևանում աղջիկ և տղա խաղացողները հալածհալած գալով բաժանվում են երկու խմբի, որոնց պապերը թաց ու չորի միջոցով ստանում են խաղն սկսելու իրավունքը:

Ցրված քարերը դասավորողի խմբի անդամներն աշխատում են իրենց մարմնով ծածկել դասավորողին, գնդակի հարվածն ընդունել իրենց վրա և հնարավորություն տալ դասավորելու: (Թ. ժխ. ձ.):

308. ԲՈԼՈՐԱԿ

Տղաները հարթ գետնի վրա գծում էին մի շրջանագիծ և նրանից 3—4 մ տարածության վրա՝ ուղիղ սահմանագիծ:

Յուրաքանչյուրը 1—3-ական գնդիկ դասավորում էր շրջանագծի տրամագծի վրա, սահմանագծին զուգահեռ, իրար կողքի և վերև նշված հերթականությամբ սահմանագծի վրայից մեկական գնդիկներով հարվածում շրջանագծի մեջ դասավորված գնդիկներին, նրանց դուրս մղելու նպատակով:

Խաղացողը նախ շահում էր իր դուրս մղած գնդիկները, երկրորդ՝ մեկ անգամ շահողը այնքան անգամ էր հաջորդաբար խաղում, մինչև որ այլևս չէր շահում:

Մեկ անգամ սահմանագծի վրայից խաղալուց հետո, խաղում էին գնդիկն ընկած տեղից (շրջանագծից դուրս) մինչև առաջին խաղի ավարտվելը, այսինքն՝ մինչև շրջանագծի միջի բոլոր գնդիկները դուրս հանվելը:

Եթե խաղացողները շրջագծից դուրս ընկած գնդիկներին էին հարվածում, ապա կորցնում էին մի գնդիկ և հետևյալ հերթին խաղում էին սահմանագծից:

Երկրորդ խաղին անցնելու համար դարձյալ որոշում էին խաղալու հերթականությունը:

Եթե հարվածողի գնդիկը մնում էր շրջագծի մեջ, անկախ այն բանից, թե այնտեղի գնդիկը մղել էր դուրս թե ոչ, խաղացողը ոչինչ չէր շահում և հետևյալն իր հերթին խաղում էր սահմանագծից (ԲՄ. 1886, էջ 303):

309. ԱՐՋՐՈՒՄԻ ԹՈՒԹ

Հինգ և ավելի հոգով խաղացող տղաները գետնին մի շրջան են գծում, ապա դրա կենտրոնում դնում մի կլոր քար և գծից հինգ քայլի վրա սահմանագիծ են քաշում: Խաղացողները, բացի մեկից, ունենալով մեկական սալաքար, կանգնում են գծի մոտ, իսկ չունեցողը մնում է շրջանի մոտ՝ պահապանի պաշտոնով: Վիճակով խաղացողներից մեկն իր քարը նետում է դեպի շրջանի կենտրոնի քարը, այնպես, որ վերջինս շրջագծից դուրս չթռչի: Պահապանն իսկույն վազում է շրջագծի քարի ետևից՝ դրան իր տեղը վերադարձնելու, իսկ այդ կարճ ժամանակամիջոցում խփողն շտապում է սալաքարը վերցնել և իր տեղը կանգնել: Վերջինիս հապաղման դեպքում պահապանը քարը շրջանի կենտրոնում դնելուց հետո աշխատում է ձեռքով խփել նրան, որով սրանց դերերը փոխվում են: Երբ սալաքարով իր տեղը փոխողը նկատում է, որ իրեն կտրելու է, քարը իսկույն դնում է գետնին և ոտքը դնելով վրան՝ ասում է «փասո»: Սրանով նույնպես նա ազատվում է:

Այնուհետև խփում են հաջորդը, մյուսները և խաղը առավել հետաքրքրական է դառնում այն ժամանակ, երբ պահապանները հաճախակի են փոխվում: (Բ. Մխ, 118—119):

310. ՋՂԻՋ

Արաբկիր արվարձանում խաղում են տղաները գարնան և ամռան ընթացքում, 2—10 հոգով: Նախ գծում են 5—6 մ տրամագիծ ունեցող մի շրջան և սրա կենտրոնում՝ 40 սմ տրամագծով մի այլ շրջան: Խաղակիցներն ունենում են 2—8 հոլ: Պայմանավորվածության համաձայն ամեն մեկը 1—3 հոլ է դնում փոքր շրջանի մեջ և այդուհետև մեծ շրջանից դուրս շարք կանգնելով որոշում են խփելու հերթականությունը: Հերթականությունը սահմանվում է ըստ

հասակի. առաջինը խփում է ամենաբարձր հասակ ունեցողը։

Խփողը թելով լարում է իր հոլը և մեծ շրջագծից դուրս կանգնելով նշան է բռնում հոլին, նպատակ ունենալով և՛ իր, և՛ խփվող հոլը շրջաններից դուրս բերել։ Դուրս բերվածները խփողը յուրացնում է, իսկ ներսում մնացածները դառնում են գետնի գերի, որ ընդհանուրին են պատկանում։

Խաղը այս ձևով շարունակվում է, մինչև որ հոլերը վերջանում են։ Այնուհետև խաղացողները ցանկացած, բայց հավասար քանակությամբ նոր հոլեր են դնում ու խաղը նույնությամբ շարունակում։

Հոլերն ամբողջապես կրվողները խաղից դուրս են գալիս, թեև նրանց իրավունք է վերապահվում շատ հոլ ունեցողներից փոխ առնել և խաղը շարունակել։

Երբ վերջիվերջո ամբողջ հոլերը դառնում են մեկի սեփականությունը, խաղը համարվում է վերջացած, բայց կրվողները խաղին չմասնակցող այլ երեխաներից այդ միջոցին փոխադարձաբար հոլ ձեռք բերելիս կարող են ստիպել խաղը շարունակել։

Այն դեպքում, երբ վերջին անգամ միակ հոլ ունեցողը սկսում է խփել շրջանների հոլերին և ոչ մի հոլ դուրս չի կարողանում բերել, այն ժամանակ հոլատերերին իրավունք է վերապահվում ետ առնել իրենց հոլերը։

Կանոններ.—*1. Եթե խփողի հոլը գետնի վրա պտտվելը չի շարունակում, դա և դուրս թողրածը ընդհանուրի սեփականություն դառնալով՝ դրվում են փոքր շրջագծի մեջ։ 2. Առանց թելի հոլով խփել չի թույլատրվում։ (Բ. ժխ. ձ.)։*

311. ԸՆԿՈՒՅԶ ԽԱՂԱԼ

Խաղացողները Ղարաբաղում մի մեծ տրամագծով մի շրջան էին գծում և մեջտեղը ուղիղ գծով ընկույզներ շարում. ապա 3—4 մ հեռավորությունից գցում էին մեգերը՝ ձգտելով խփել ընկույզներին և գոնե մեկը դուրս հանել շրջանից, որով և շահում էին շարված բոլոր ընկույզները։ (Տե՛ս ժխ. № 71, էջ 24—25)։

312. ՋԻԼԵՐ

Բարջանճում խաղում էին պատանիները երկուսով կամ երկու խմբով։ Գործածում էին ընկույզ, խողա, վեգ։ Քաշում էին մի գիծ և 15 մատնաչափ տրամագծով մի շրջագիծ։ Սրա մեջ, գծի վրա, խաղացողները երկուական ընկույզ էին շարում իրար մոտ և գծի մոտից վեգերը հերթով առաջ էին նետում։ Եթե նետված վեգերից մեկը զիլ գար, գծի վրայի վեգերը զիլ վեգի տերը յուրացնում էր։ Երբ մեկից ավելի զիլ վեգեր էին լինում, ընկույզները յուրացնում էր կենտրոնին ամենից մոտիկի տերը։ Իսկ հավասարապես հեռու գտնվող զիլ վեգեր ունեցողները դրանք բաժանում էին իրար մեջ։ Բոլոր դեպքերում թամ կանգնած վեգի տերը ընկույզների շարքի վրա պետք է ավելացներ երկու ընկույզ, միաժամանակ նետելու իր հերթականությունն էլ կորցնելով։ Երբ առաջին նետած վեգերը զիլ չէին գալիս, կենտրոնին ամենից մոտիկ ընկած վեգատերը հաջորդ անգամ առաջինն էր խփում։ Երբ հավասար էին լինում, վեգատերերը վիճակ էին գցում։ Ամենից հեռու գտնվող վեգի տերը ամենից վերջն էր գցում։ Խաղի բուն էությունն էր՝ վեգերով ընկույզներին խրտփել, ցրել և շրջանակից դուրս բերել։ Շրջանից դուրս բերվածները դառնում են հարվածողի սեփականությունը։ Նետողը շարունակում էր խփել ընկույզներին, քանի դեռ նրա վեգը զիլ էր գալիս կամ ինքը անվրեպ նշան էր բռնում։ Հակառակ դեպքում նետված վեգը մնում էր իր տեղում, մինչև որ դրա տիրոջ հերթը հասնում էր։ Խաղն այդ ձևով շարունակվում էր, մինչև որ շարքի ընկույզներն սպառվում էին։ (Բրջ., 154)։

313. ԼԵՓՈՒԿ

Խաղում են Նոր Բայազետում և Լենինականում, 2—5 երեխաներ։ Ցուրաքանչյուրն ունենում է մի պայտաչափ տափակ քար. որ շատ անգամ հղկում են մեծ սալերի վրա քսելով։ Այսպիսի քարերը կոչվում են լեփուկ, և սրա անունով էլ՝ խաղը։

Խաղի սկզբում գետնին գծում են մի կարճ գիծ և նրա մոտ դնում են ընկույզի մեծության գնդաձև քար, որ կոչվում է ոզա։ Սրանից մոտ երկու մետր հեռավորության վրա գծում են մի շրջան։ Կանգնելով ներքևի գծի մոտ՝ բոլորը գցում են իրենց լեփուկները շրջանի մեջ։ Լեփուկների դասավորությունը ցույց է տալիս խաղացողների հերթը. ամենից բարձրի տերը խաղում է առաջինը,

ամենացածրինը կամ շրջանից դուրս ընկածինը՝ ամենավերջը։ Յուրաքանչյուրն իր լեփուկի ընկած տեղից գցում է լեփուկը, աշխատելով խփել ղոզանին, և երբ հաջողեցնում է, հաշվում է գծից մինչև ղոզանի ընկած տեղի տարածությունը ոտնաչափով, ապա կանգնելով իր լեփուկի նոր ընկած տեղը, լեփուկը գցում է խփելու մյուս խաղացողի կամ խաղացողների լեփուկներին հերթով, և երբ հաջողվում է, գցում է դեպի ղոզան, և հաշվում նրա առաջխաղացած տարածությունը։ Խաղի հերթը անցնում է մյուսին, երբ վրիպում է հարվածը, որ ուղղում են ղոզանին և կամ մյուսների լեփուկներին։ Նա, ով առաջինը հեռացնում է ղոզանը, նախապես որոշված ոտնաչափերի թվի համեմատ, որ սովորաբար 100 է լինում, տարած է հաշմարվում և դադարում է խաղալուց։ Երբ երկուսից ավելի են խաղացողները, մյուսները շարունակում են նույն կերպ խաղալ, մինչև որ մնում է մեկը։ Այն ժամանակ այս պարտվածը ղոզանը դնում է գծի վրա իր երկու ոտների միջև, և կռանում, շալակում խաղը առաջինը վերջացնողին ու առանց լեփուկը ձեռքից բաց թողնելու խփում ղոզային։ Ղոզան առաջ է թռչում, պարտվածը ազատվելով իր մեջքի բեռից, գցում է լեփուկը դեպի ղոզանը և երբ կարողանում է դիպցնել, ազատվում է, եթե ոչ՝ կրկին շալակում տանողին և նույնը կրկնում։

Երբ խաղացողները երկուսից ավելի են լինում, պարտվածը հերթով շալակում է բոլոր տանողներին և նույն կերպ ազատվում ամեն մեկից։ (Տե. ժԽ, № 71, էջ 77—80)։

314. Լ Ը Փ

Խաղը Ախալքալաքում նույնն է։ Յուրաքանչյուրն ունենում է մի սալաքար, որ լափ է կոչվում և ընդհանուրը՝ մի քարե, խնձորաչափ կոտնած գնդակ, որ կրոճ կամ գրոճ է կոչվում։ Իրարից 25—30 մ հեռավորության վրա գծում են երկու շրջագիծ, երկուական քայլաչափ տրամագծով։

Յուրաքանչյուր դեպքում լափը գոճից միշտ մեկ ոտնաչափ և մեկ ասպանդակաչափ հեռու է ընկնելու։ Գոճին հարվածներ են տրվում մինչև հանդիպակաց շրջագիծը հասնելը, պայմանով, որ գրոճը գծի վրա չկանգնի, որով պարտված են համարվում, այլ ընկնի շրջագծի մեջ, որով խփող կողմը մի միավոր է շահում։ Խփողը դառնալով այդ գծի տերը, այստեղից շարունակում է խաղը, մյուս գիծը հակառակորդինը ճանաչելով։ (Վ. ժԽ. Ա.)։

315. Լ Ե Փ


Խաղը Կալինինոյի շրջանի Ղարաքիլիսա գյուղում նույնն է։ Քարագնդակը կշա և խփող սալաքարը՝ լեփ է կոչվում։ Լեփից էլ ծագում է խաղի անունը։ (Ղխ. Ա.)։

316. Լ Ն Պ

Խաղում են պատանի տղաները, մեծ մասամբ գարնանն ու ամռանը։ Խաղացողները բաժանվում են երկու խմբի, գետնին գծում են մոտ 7 մ մեծությամբ մի շրջան, շրջագծի վրա դնում մի կլոր քար, որ կոճիկ է կոչվում և յուրաքանչյուրը մի-մի տափակ քար՝ լեպիկ, առած ելնում է՝ կլոճիկի մոտ կանգնած՝ գցում լեպիկի շրջանից դուրս։ Հետո հերթով խփում են կոճիկին։ Ում լեպիկը բարձր է, նա գցում է առաջինը։ Առաջին խփողը շարունակում է խփել միշտ իր լեպիկի ընկած տեղից, մինչև որ փրստ է գալիս՝ չի դիպչում կամ կրո է լինում՝ լեպիկի և կոճիկի մեջ մի ոտնաչափից պակաս տարածություն է մնում, և այդ ժամանակ մեռնում է, դադարում խփելուց։ Հետո մյուս ընկերներն են խփում կոճիկին, բայց առաջին անգամ ոչ թե իրենց ելած տեղից, այլ լեպիկի մոտից։ Այսպես մի խումբը քշում, հեռացնում է կոճիկը շրջանից։ Երբ մի խմբի բոլոր անդամները մեռնում են, մյուս խումբն է խփում, և քշում կոճիկը դեպի շրջանը։ Թե հասցրին կոճիկը շրջանին, ազատվում են պատժից, և խաղը նորից է սկսվում, իսկ եթե ոչ՝ առաջին խմբի անդամները ելնում են սրանց շալակները և կոճիկի կեցած տեղից գնում մինչև շրջանը։ (Լ. ԺՄԽ, 45—46)։

317. Ա Ո Ջ Ո Ւ Կ

Խաղը Կոտայքում նույնն է։ Քարագնդակը խոզուկ և խփելու սալաքարը՝ լոփուկ է կոչվում։ Խաղը նա է սկսում, ում լոփուկը խոզուկի մոտից որևէ նշանակված տեղ նետելիս ամենից հեռուն է ընկնում։ Պարտվողը հավաքում է բոլորի լեփուկները, դարսում իրար վրա, և ոտքերը լայն բացած, կանգնում դրա վերևը։ Խաղակիցներից մեկը հեռվի կողմից գալիս, քացով ցրում է լոփուկները



Նկ. 37. Լաստիկ խաղալ (բնագիր № 314—317)
Նկ. Ռ. Մնացականյանի

և հա-հա փախչում, իսկ պարտվողը արագ-արագ իրար վրա է դարսում ցրված լոփուկները և վազում դեպի փախչողը. որտեղ որ բռնում է, այնտեղից էլ նրան շալակում և բերում է լոփուկների մոտ: Այս գործողությունը կրկնվում է բոլոր հաղթողների համար: (ՂՂ. ձ.):

318. ԼՈՓՈՒԿ

Խաղում են զույգերով. ամեն մի խաղացող ընտրում է իր համար մի լոփուկ: Մեկը լոփուկը գցում է որոշ հեռավորության վրա, մյուսն աշխատում է կանգնած տեղից խփել նրա լոփուկին: Կպչելու դեպքում խփվածի տերը շալակում է խփողին և տեղափոխում խփած տեղից մինչև լոփուկը: Խաղը փոխադարձաբար մեկից մյուսն անցնելով այդ ձևով շարունակվում է. (ՂԼ. ձ. (Կտ.):

319. Լ Ե Պ

Լոռիում խաղը նույնն է: Քարագնդակը կշե և խփելու սալաքարը՝ լեպ է կոչվում: Խաղը շահում է նախապես սահմանված ոտնաչափերի թիվը լրացնողը և շալակում է կշեի ընկած տեղից մինչև նշան արված տեղը: (Շ. Խ. ձ.):

320. ՀԵՋՆԵԼԱՆՑ ԿՈՃՈՒՒ

Գանձակում խաղում են տղաները գարնանը և մասամբ՝ ամռանը, 2—5 հոգով: Նրանք կոճուղը (քարե գնդակը) դնում են գետնի մակերեսից 3—4 սմ բարձր քարի վրա և նրա մոտ կանգնելով ձեռքի լափերը սուրում են որևէ ուղղությամբ:

Առաջինը կոճուղին խփելու իրավունքը պատկանում է լափը ավելի հեռու սուրողին: Այս վիճա-

կահանության միջոցով մյուսների հերթականությունը որոշվում է նմանապես լափերի հեռավորությամբ։ Այդուհետև կոճուտից մի քանի քայլ հեռու սահման են նշանակում։

Ասենք թե խաղում են երկու հոգով։ Այս պարագայում առաջինը եթե հաջողեցնում է սահմանից կոճուտին խփել և տեղահան անել, գնում է, կոճուռը վերցնում, գնում ոտնաթաթի երեսին, սեղմում ոլոգի արանքը և թափ հաղորդելով կոճուռը նետում դեպի այն կողմը, ուր վիճակահանման ժամանակ սորել էին իրենց լափերը։ Ուրկից որ կոճուռը նետվել է, այնտեղ մյուս ընկերը տրնկում է նետող ընկերոջ լափը և ինքը գնում վերցնում է կոճուռը՝ այդ տնկած լափին նշան բռնելու համար։ Եթե հաջողվում է, ապա նա ազատվում է ընկերոջը շալակելուց, իսկ եթե չկարողացավ խփել, նա խաղընկերոջը շալակում է այդտեղից մինչև կոճուռի նոր ընկած տեղը։ Այստեղ ընկերոջն իջեցնում է, նորից վերցնում կոճուռը, նշան է բռնում ընկերոջ լափին. հաջողվելիս շալակելուց պրծնում է, իսկ եթե չի հաջողվում՝ նորից շալակում է և հասցնում կոճուռի նոր ընկած տեղը։ Եվ այսպես, նա շալակելուց և երկար ժամանակ ման ածելուց ազատվում է այն դեպքում միայն, եթե նշան առնելը և տնկված լափը շրջելը հաջողվի։ Իսկ այն դեպքում, երբ առաջին նշանառուն ոտքի թաթով կոճուռը նետելիս վերջինս վայր է գցում, դիմացինը շալակելուց ազատվում է։ Բոլոր դեպքերում շալակելուց ազատվողը ինքն էր կոճուռին հաջորդ նշան առնողը։

Երկու հոգուց ավելի խաղացողների համար գործող կարգը նույնն էր, պայմանով, որ որևէ ընկերոջ լափին նշան խփել չկարողացողը ամեն մի անհաջողության դեպքում շալակեր բոլոր ընկերներին։ Շալակողին էշ անունն են տալիս։ Էշը բոլորին շալակելուց հրաժարվելու դեպքում պատժի է արժանանում. բռնում են, ձեռքերից ու ոտքերից վերցնում, փորին մեկին նստեցնում, վեր ու վար ցնցելով օխտը գիսկա գետին խփում։ (Բ. Ժխ. ձ.)։

321. Կ Ը Ջ

Խաղացողներից մեկը, որ փուչ-տուուղի ժամանակ վերջին չզտնողն է լինում, դառնում է կըչ կոչված քարե խաղագնդակի պաշտպանը։ Հարվածող սալաքարերը կոչվում են լեփուկներ։ Գծվում է քառակուսի մի մակերես, որի կենտրոնում դնում են կըչը։ Սրանից 5—6 մ հեռավորության վրա, որ որոշում է խումբը, գծվում է մի ուղիղ գիծ։ Սրա վրայից խաղացողները հերթով իրենց լեփուկներով հարվածում են կըչին, որի մոտ կանգնած է լինում դրա պահապանը։ Խփելը հաջողվելիս խփողը արագ վազում է դեպի իր լեփուկը, իսկ պաշտպանը ձգտում է շարժված գնդակը տեղը դնել և անմիջապես հասնելով խաղակցին մինչև լեփին հասնելը և տեղը վերադառնալը խփել նրան, որով այդ երկուսի դերերը փոխվում են։ Խփողը պաշտպանի հարվածից ազատվելու նպատակով հասնում, վերցնում է լեփուկը և նորից վազում դեպի իր նախկին տեղը։

Առաջինը լեփին խփողին հաջորդում են մյուսները երկու դեպքերում՝ երբ նրա լեփուկը վրիպում է և երկրորդ՝ երբ նա առանց խփվելու պաշտպանի կողմից հասնում է իր տեղը։ (Ժխ. ձ.)։

322. Փ Ո Խ Ի

Գորիսում խաղում են երկու հոգով, որոնք ունենում են մի տափակ քար, որ փուլ է կոչվում, իսկ երկուսի համար՝ մի գնդաձև քար, որ պուլտ անունն է կրում։

Վիճակահանությամբ որոշում են, թե ով է խաղն սկսողը, որից հետո պուլտը դնում են դաշտի մի մասում նշված տեղում. խաղը սկսողն իր ձեռքի փուլով խփում է պուլտին և հետո ոտքով հաշվում, թե քանի ոտնաչափ է գլորվել, ապա խփում է երկրորդ խաղացողի փուլին. եթե հաջողվում է, նորից է խփում պուլտին և հաշվում։ Եթե չի հաջողվում, խաղն անցնում է երկրորդին։ Խաղն այսպես շարունակվում է, մինչև կողմերից մեկին հաջողվում է հասնել 100 կամ ավելի ոտնաչափի։

Տարվողը շալակում է տանողին և որոշ տարածության վրա փոխադրում, որից հետո խաղը նույնությամբ կրկնում են։ (Գխ. ձ. համմտ. ԲՄԽ, 116—117՝ «Սալքբար» խաղը և 119՝ «Նալի մեխ» խաղը)։

323. ՍԱՏԱՆԻ ՀՈՐ

Պատանի տղաները գլխավորապես գարնանը միմյանց մոտիկ, մոտավորապես 20 սմ տրամագծով ու 10 սմ խորությամբ մեկական փոս են փորում։

Այս փոսերը կոչվում են սատաճի հորեր, որոնցից յուրաքանչյուրը պատկանում է մեկին, իսկ սրանց բոլորի մեջտեղի փոսը կոչվում է կրակ, որը տեր չի ունենում։ Հորերից 1,5—2 մ հեռու գծում են մի գիծ, կամ դնում մի քար, նշանակելով այն բուն։ Հետո հերթով մեկ-մեկ կանգնում են բնում և գնդակը գլորում դեպի հորերը, աշխատելով գցել կրակի մեջ։ Եթե հորերի մեջ ընկնի, առայժմ ոչինչ չեն հաշվի, և գնդակը կգլորի հաջորդը, բայց երբ կրակն ընկնի, իսկույն բոլորը փախչում են զանազան կողմեր. գնդակ գցողն առնում է գնդակը և գցում մեկի ետևից։ Եթե կպավ, խփվողը լինում է էշ, խփողը հեծնող, իսկ եթե ոչ՝ ընդհակառակը։ Էշը կանգնում է բնում, իսկ հեծնողը ելնում սրա շալակը։ Էշը գնդակը գլորում է դեպի հորերը՝ աշխատելով գցել իր փոսը կամ կրակի մեջ։ Եթե իր հորն ընկավ, ինքն է ելնում հեծնողի շալակը, և սա գլորում է գնդակը, իսկ եթե կրակն ընկավ, բոլորը փախչում են, շալակը ելնողը վայր է թռչում և ասում.

—Ես կրակ,—որով ազատվում է խփվելու վտանգից, իսկ էշը առնում է գնդակը և գցում փախչողներից մեկի ետևից։ Եթե դիպավ՝ սա դառնում է էշ, իսկ ինքը՝ հեծնող, իսկ եթե չդիպավ՝ հակառակը։ Եթե գնդակը ընկնի մի ուրիշի հոր, այն ժամանակ այդ հորի տերն է ելնում էշի շալակը։ Եթե գնդակը ընկնի հեծնողի հորը, սա քաշում է էշի ականջը, բայց եթե երեք անգամ միմյանց ետևից կրկնվի այս, այն ժամանակ բոլորը խղդում են հեծնողին՝ խտտացնում և կամթում են։ Գնդակը եթե ոչ մի հոր չընկնի, միևնույն դրությամբ կրկնում են մինչև ընկնելը։ (Լ. ԺՄԽ, 36—37)։

324. ՍԱՏԱՆԻ ՓՈՍ[80]

Առջևն ազատ տարածությամբ մի պատի մոտ պատանի տղաները 4 և ավելի հոգով, իրենց թվի համեմատ, նռան մեծությամբ փոսեր՝ հորեր են փորում և մի այլ փոս ևս, որին սատաճի փոս են կոչում։ Խաղացողներից մեկը, առանց հատուկ ընտրության, ժամանակավորապես դառնում է գնդակ գլորող։ Սա հորերից հեռանում է 4—5 քայլ և այնտեղից գնդակը գլորում է որևէ հորի մեջ, որի տերը դառնում է գլորող՝ մայր։ Այդ ձևով ընտրված մայրը նույն հեռավորությունից գնդակը գլորում է դեպի ցանկացած հորը։ Գնդակը ում հորի մեջ որ ընկնում է, նա մորը շալակում է և ինքը գլորող դառնալով՝ մորը շալակած վիճակում գնդակը ուրիշի հորն է գլորում։ Եթե որևէ հորի մեջ գցել կարողանա, մայրն իր շալակից իջնում և ինքը տվյալ հորի տիրոջ շալակն է բարձրանում։ Խաղն այս ձևով շարունակում է այնքան ժամանակ, մինչև որ գնդակն ընկնում է սատաճի փոսի մեջ։ Այդ ժամանակ մայրը և մյուսները ձեռքերով փակում են իրենց հորերը։ Ապա մայրը սատանի փոսից վերցնում է գնդակը և սկսում է համրել 1—9։ Մոր համրանքի սկզբից ևեթ բոլորը փախչում են զանազան ուղղությամբ։ Մայրը, երբ լրացնում է 9 համրանքը, գնդակը նետում է որևէ մեկի ետևից։ Ում որ կպչում է, նա մայր է դառնում և ազատված (իրեն խփող) մորը շալակում ու խփված տեղից մինչև հորերը տեղափոխում։ Իսկ եթե գնդակը վրիպի, այն ժամանակ նախկին մայրը մնում է իր պաշտոնում, որը խաղը նույնությամբ շարունակում է։ (ՃՀԱ, 179—180 (Ակն)։

325. ՍԱՏԱՆԻ ՓՈՍ

Վանում մի խումբ տղաներ պատի տակին շարքով իրենց համար մեկական փոս էին փորում և մի փոս էլ՝ դրանց առաջին, որին սատանի փոս անունն էին տալիս։ Ուշ գցելով վերջին մնացողը 8—10 քայլ հեռվից գլորում էր գնդակը դեպի փոսերը։ Երբ գնդակն ընկնում էր իր փոսը, նորից էր գլորում, իսկ երբ այն ընկնում էր ուրիշի փոսը, սրա տերը հեծնում էր գլորողին։ Վերջինս նրան շալակած՝ գնդակը նորից էր գլորում. երբ այս անգամ էլ գնդակն ընկնում էր շալակվածի փոսը, փոսատերը բռնում էր գլորողի մի աչքը, մյուս անգամ ևս ընկնելիս՝ նաև երկրորդ աչքը։ Կուրացված գլորողն այս դեպքում աշխատում էր գնդակը գլորել իր փոսի մեջ, որպեսզի մի աչքը բանար. նորից իր փոսը գցելիս բացվում էր նաև երկրորդը։ Այս դեպքում շալակողի և շալակվածի դերերը փոխվում էին՝ վերջինս շալակում էր առաջինին և խաղը նույնությամբ շարունակում։

---

80 Բանահավաքը ներկայացրել է «ճինկիլսոն» խորագրով, որը նրա կարծիքով բարդ բառ է, կազմված ճիճ և գոյուսը բառերից, սատանայի կամ դևի փոս իմաստով։ Մենք վերնագիրը վերականգնեցինք «Սատանի փոս», որովհետև այն Ակն քաղաք է հասել վանից, իսկ վերջինում խաղը այդպես էլ կոչվում էր (տե՛ս հաջորդ խաղը)։ Կազմող։

Աչքերը փակած միջոցին, երբ գնդակը գլորելիս առաջին անգամ ընկնում էր ոչ թե շալակվածի, այլ մյուս խաղընկերներից մեկի փոսը, գլորողին նա էր հեծնում և այսպես շարունակ։

Շալակողն իր դերից շուտով ազատվելու նպատակով ձգտում էր գնդակը գցել սատանի փոսը։ Այդ ժամանակ բոլորը դես ու դեն էին փախչում, որոնցից մեկին գնդակահար անելիս գլորողը նրա հետ դերը փոխում էր։ (Խ. Վժխ. ձ., 28—29)։

326. ՍԱՏԱՆԻ ՕԲԱ

Կոտայքում խաղում էին միայն տղաները, 10—13 հոգով։ Փոսերի խորությունը հասնում էր 6—8 սմ և տրամագիծը՝ 8—10 սմ։ Փոսերից մեկը, որ շարքում առաջինն էր լինում, կոչվում էր սատանի օբա։ Սրանից 10—12 քայլ հեռու գծվում էր սահմանագիծը, որ գլուխ էր կոչվում։ Փուչ տուզի ժամանակ առաջինը դուրս եկողը դառնում էր հեծնող, իսկ վերջին մնացողը՝ կզող։ Վերջինս առաջինին շալակած՝ գլորում էր բրդե գնդակը։ Հեռացող գնդակը շալակողին էին բերում մյուս՝ դեռևս պատիվ խաղակիցները։ Գնդակը, երբ ընկնում էր կզողի օբայի մեջ, դերերը չէին փոխվում։ Սատանի օբան ընկնելիս՝ գնդակը գլորողը վազում էր այն վերցնելու և որևէ մեկին խփելու, որը փոխարինում էր իրեն, բայց խփելիս գնդակը վրիպելու դեպքում սա դառնում էր հեծնող և խաղը նախկինը նորից էր կրկնում։ (ՂՂ. ձ.)։

327. ՓՈՍԻ ԲՈՓ

Արաբկիր արվարձանում խաղում էին տղաները 4—10 հոգով, տաք եղանակներին։ Խաղացողների թվի համեմատ մի ուղիղ գծի վրա գնդակ տեղավորող փոսիկներ էին փորում, որոնց տերերը աֆլորներ էին կոչվում։ Փոսիկների մոտ կանգնում էր վիճակով նշանակված գզիրը, իսկ մի քանի քայլ հեռու՝ աքլորները։ Վերջիններս հերթով գլորում էին դեպի փոսերը։ Գնդակն ընկած փոսի տերը փախչում էր, իսկ գզիրը գլորում, նետում էր նրա ետևից։ Դիպչելիս փոսատեր աքլորը հավ էր դառնում և գալիս կանգնում էր առանձին մի տեղ, իսկ չդիպչելիս՝ մնում էր աքլոր։

Խաղը այս ձևով շարունակվում էր այնքան, մինչև որ մնում էր մի փոս, որի մեջ գնդակ չէր ընկնում. այս փոսատերը մնում էր աքլոր և խաղը շահում էր։ (Բ. ժխ. ձ.)։

328. ԹՈՒՈՒԱՆԴԻ ԿԱՄ ՄԱՋԻ-ՄԱՋԻ

Երեքից 10 հոգով երեխաները գետնին փոքրիկ փոսեր էին փորում, ապա ըստ հերթականության մեկը մյուսի ետևից ընկույզ գլորում այնպես, որ առանց նշանակված գծից շեղվելու ընկույզն ընկներ մի փոսի մեջ։ Հաջողեցնողը բոլոր գլորած ընկույզները յուրացնում էր։ (Բ. Մխ, 82)։

329. Կ Ռ Ճ Ի Կ

Խաղում են երկար ձողերով։ Նախ փորում են մի փոս, մոտը դնում մի բռաչափ քար կամ ոսկոր, որ ֆորտ (հորթ) է կոչվում։ Մեկը ձեռքի ձողով խփում, առաջ է գլորում ֆորտը, «արածելու» և անվանում է մեկին՝ նույնն անելու. սա ևս իր հերթին կանչում է մի ուրիշին և այս այսպես՝ մինչև որ մեկը չկարողանա խփել ֆորտին։ Այդ ժամանակ վրիպողը մայր է դառնում, որը աշխատում է ֆորտին արածելուց ետ դարձնել, գցել փոսը, իսկ մյուսները, որ գայլ են կոչվում, աշխատում են խփել, հեռացնել փոսից։ Մայրը միևնույն ժամանակ աշխատում է ձեռքի ձողով խփել գայլերին և եթե հաջողեցնի, խփվածը մայր է դառնում, իսկ ինքը՝ գայլ։

Խաղը վերջանում է, երբ ֆորտը գցում են փոսը։ (Նկ. ժխ., № 66, էջ 11)։

330. Փ Ո Ս

Արաբկիր արվարձանում խաղում են գարնանը և ամռանը։ Մասնակցում են 2—5 տղաներ, որոնք 2 և ավելի հոլեր են ունենում։ Նախ պատատակին 5 սմ խորությամբ և 10 սմ տրամագծով մի փոս են փորում։ Ապա, ըստ պայմանի, մեկական կամ երկուական հոլ են դնում փոսից կես մետր հեռավորության վրա՝ ցրված վիճակում։ Նախ մեկը, ապա և մյուսները թևով լարված (փաթաթած) հոլով խփում են գետնի հոլերին այն հաշվով, որ վերջիններս ընկնեն փոսի մեջ և յուրացվեն խփողի կողմից։ Խփված հոլը փոսի մեջ չընկնելու դեպքում, եթե հարվածող հոլը գետնի վրա շարունակում է պտույտ գալ, խփողն այն խնամքով առնում է ափի մեջ և թեթևակի հարվածում դրան՝ նույն նպատակով։

խաղը այս ձևով շարունակվում է այնքան ժամանակ, մինչև որ վերջանում են նախապես պայմանավորված քանակի հոլերը։

Կանոններ.—1. Ձեռքի միջի հոլի պտույտը դադարելիս խփել չի թույլատրվում։ 2. Ընկած հոլը դեպի փոսը ձեռքով մղել չի կարելի։ (Ռ. ժխ. ձ.)։

331. ՍԱՏԱՆԻ ՓՈՍ

Խաղում են 8—14 տարեկան տղաները, 4—16 հոգով, գարնան և աշնան ամիսներին։ Դաշտի կենտրոնում մի գծի վրա յուրաքանչյուրի համար մի-մի փոս են փորում։ Մի այլ փոս էլ փորում են, որի մեջ մանր քարեր են լցնում։ Խմբովի ուննենում են բրդյա մի գնդակ։

Խաղացողները կանգնում են փոսերից 5—7 մ հեռու մի գծի վրա և հերթականությամբ գնդակը գլորում դեպի փոսերը այն հաշվով, որ դա ընկնի մեկն-ու մեկի մեջ։ Երբ գնդակը ընկնում է որևէ փոսի մեջ, փոսի տերը վազքով գնում, վերցնում է գնդակը և աշխատում է խաղացողներից մեկն ու մեկին խփել։ Որին որ կպչում է, նրա փոսի մեջ մի քար են գցում, իսկ եթե խփողը վրիպում է, քարը գցում են սրա փոսի մեջ։ Այսպես գնդակը շարունակ գլորում են դեպի փոսերը, խփում են իրար և վրիպում ու խաղում այնքան, որ խաղացողներից մեկի փոսի մեջ հավաքվում է նախօրոք պայմանավորված 7—10 քարը։ Նա, որի փոսի մեջ ոչ մի գնդակ չի ընկել և քար չի գցվել, համարվում է հաղթող և նա, որի փոսում սահմանված քանակով քար է հավաքվել, համարվում է պարտվող։ Պարտվողին կանգնեցնում են երեսով դեպի պատը, իսկ մյուսները կանգնելով նրանից 5—7 մ հեռու նշված գծի վրա, գնդակով հարվածում են այնքան անգամ, որքան քար կա պարտվածի փոսի մեջ։ Խփելիս վրիպողը ինքն է կանգնում պատի տակ. դրանից հետո նրան խփում է պատի տակ նախորդ կանգնողը՝ իր ունեցած քարերի չափով, որից հետո նորից է գնում կանգնում պատի տակ։ Այս խփոցներից ազատ է մնում միայն հաղթողը։ Սակայն սա էլ վրիպելու դեպքում կորցնում է երկու հարվածի իրավունքը։

Երբ բոլորը խփում են, վերջացնում, խաղը վերսկսվում է։

Կանոններ.—Գնդակը փոսերի մեջ նետել չի կարելի, այլ անպայման պետք է գլորել։ Սահմանագիծը կոխել չի թույլատրվում։ Պատի առաջ կանգնած պարտվողներին խփելու ժամանակ դեմքով դեպի խփողները դառնալ և գնդակից խուսափել չի թույլատրվում. նրանք պետք է դեմքով կանգնեն դեպի պատը այնպես, որ չտեսնեն հարվածողին։ (Մ. ժխ. ձ.)։

332. ԽԼՊՏԽ

Խաղը Հոկտեմբերյանի շրջանի որոշ գյուղերում նույնն է։ Խաղացողներից նա, որի բնում քար (ձու) չի հավաքվում, ափաղաղ է կոչվում, իսկ նա, որի բնում ձվեր են հավաքվում, ճավ է կոչվում։ (ՄՕ. ձ.)։

333. [ՇԱՔԱՐԱՄԱՆ]

Էջմիածնում խաղը նույնն է։ Ում փոսում որ 10 քար է կուտակվում, նրա ճակատին բոլորը մեկական կտտոց են տալիս։ (ՄԽՄ. ձ.)։

334. ԿՆԿՏՈՑԻ

Լոռիում խաղում են 10 հոգով։ Քաշում են մի գիծ, որի երկարությամբ յուրաքանչյուր խաղացող իր համար մի փոս է փորում։

Խաղացողներից մեկը կանգնում է փոսերի շարքի մի ծայրին, և մի ուրիշը՝ հակառակ ծայրին։ Կանգնողներից մեկը փոքր գնդակը գլորում է փոսերի շարքի երկարությամբ. երբ գնդակն ընկնում է որևէ փոսի մեջ, սրա տերը վազում և վերցնում է գնդակը, իսկ մնացած խաղացողները փախչում են։ Վերցնողը գնդակը շպրտում է փախչողների ետևից, որը եթե կպչում է նրանցից որևէ մեկին, ապա խփվողի փոսում մի քար են գցում, իսկ եթե վրիպում է, ապա մի քար են գցում իր փոսի մեջ։

Եթե խաղացողներից որևէ մեկի փոսում հավաքվում է 5 քար, որ կճիկ են անվանում, ապա այդ 5 կճիկ ունեցողի աչքերը շորով կապում են և գնդակը տանում որևէ տեղ պահում։

Երբ գնդակը պահված է, 5 կճիկ ունեցողի աչքերը բացում են և խաղացողներից մեկը մոտենում է նրան ու մեջքին խփելով ասում է.—գռռու-գռռու, ձագերդ գտի։ Խաղացողը խփելն ու այդ բառերի կրկնումը շարունակում է այնքան ժամանակ, մինչև որ 5 կճկա տերը գտնում է գնդակը։ Երբ գնդակը գտնվում է, խաղը համարվում է

վերջացած և խաղացողները նույն կարգով խաղն սկսում են նորից։ (Ղխ. ձ.)։

335. ԲՄԱՎՈՐ

Վանում երկու և ավելի ընկերներով պատի տակ մի փոս էին փորում և դրանից մի քանի քայլ հեռու սահման որոշելով խաղակիցներից մեկը աջ ափով 4—8 կաղին, ուլունք, ընկույզ կամ որևէ նման խաղալիք նետում էր փոսի մեջ։ Երբ փոսից դուրս մնացածները զույգ էին լինում կամ բոլոր հատերը փոսի մեջ էին ընկնում, գցողը շահում և հակառակորդից վերցնում էր նույնքան հատիկ։ Իսկ երբ փոսից դուրս մնացածները կենտ էին լինում կամ հատիկները բոլորովին փոսի մեջ չէին ընկնում, հօգուտ խաղակցի՝ գցողն էր տուժում։ Եվ այսպես՝ երկու հոգով խաղալիս մերթ մեկը, մերթ մյուսն էր գցում, իսկ մի քանիսով խաղալիս՝ հերթով մեկից մյուսն էր անցնում։

Երբ խաղացողներից ոմանք տարվում էին, մյուսներից փոխ առնում, նորից էին խաղում, որով կամ պարտքերը ծածկում և կամ դարձյալ սնանկանում էին։ (Ա.խ. I, 116—117)։

336. ՏԱՊՈ

Խաղը Բաղեշում նույնն էր։ Վիճակով երկու խաղացողներից մեկը կանգնում էր փոսի մոտ, իսկ մյուսը՝ փոսից հեռու, սահմանված մի տեղ։ Փոսը տապո էր կոչվում, որից և ծագում է խաղի անունը։ Խաղանյութը ընկույզն էր։ (Թկ. 1899, №45, էջ 715)։

337. [ԸՆԿՈՒՅԶԻ ԽԱՂ]

Շապին-Գարահիսարում խաղը նույնն էր։ Խաղում էին կտուրների վրա և բակերում։ Մասնակցում էին երկու և ավելի տղաներ։ Միշտ հաջորդ անգամ նետելու իրավունքը շահողինն էր լինում, եթե նույնիսկ այդ բանը մի քանի անգամ իրար հետից կրկնվեր։ (Հս. խ. ձ., 37)։

338. ՃՂՈՊՈՐ ԽԱՂԱԼ

Ղարաբաղում խաղը նույնն էր։ (Տե՛ ժխ. № 71, էջ 24)։

339. ՊՆԴԿԻ ՓՈՍ

Վանի մի վարիանտի համաձայն պատի մոտ փորված փոսն էին նետում 10—15 կաղին։ Բոլորը միանգամից փոսն ընկնելու դեպքում նետողն ընկերոջից յուրացնում էր նախապես պայմանավորված քանակի կաղին, իսկ երբ նետածներից մի քանիսը փոսից դուրս էին մնում, նետողն ինքը նույնքան տալիս էր հակառակորդին։ Կրողը դառնում էր առաջին գցողը։ (խ. վժխ. ձ. 52—53)։

340. ԲՈՆ ԶԳՈՒԿ

Բարջանճում պատանի աղաները խաղում էին երկու հոգով, դրսում։ Խաղն սկսողը որոշվում էր վիճակով։ Փորում էին 6 մատնաչափ մի փոս այնպես, որ տեղավորվեր 10 ընկույզ։ Խաղի համար գործածում էին ընկույզ և վեգ, երբեմն և մանր քարեր։ Սկսողը բռնեն 7 քայլ հեռու կանգնած, դրանք բռով նետում էր փոսի մեջ։ Ընկերը կանգնում էր փոսի մոտ։ Երբ բռնի մեջ ընկածները զույգ էին լինում, նետողը շահում էր՝ այդքան շափով ստանում դիմացինից և խաղը վերսկսում։ Իսկ երբ բռնի մեջ ընկածները կենտ էին լինում, այդքանը կանգնողն էր շահում և խաղը ինքն էր վերսկսում։ (Բրջ. 154)։

341. ԿԸԿՈՒՃ

Այսպես էր կոչվում մի փոսիկի մեջ ընկույզ կամ դեղձի կորիզ նետելով մրցախաղը, որ կատարվում էր երդի ուղեկցությամբ։ (Ա.Դ. I, էջ ԼԲ)։

342. [ՁԱՏԿԻ ՁՈՒ ԽԱՂԱԼ]

Կոտայքում խաղում էին պատանի և երիտասարդ տղաները 2 և ավելի հոգով, զատկին, թեք տեղերում։ Խաղացողները հավաքվում էին թեքության գլխին և այնտեղից հերթով գլորում իրենց ձեռքում ունեցած եփած ձվերը։ Առաջին գլորողից հետո հետևյալ խաղացողներն աշխատում էին իրենց գլորած ձուն կպցնել մինչ իրենցը գլորված և թեքության ստորին մասում հավաքված որևէ ձվին։ Ում որ այդ հաջողվում էր, հավաքված բոլոր ձվերը պատկանում էին նրան, որից հետո խաղը նորից էին սկսում։ Իսկ եթե ձեռքներին ունեցած բոլոր ձվերը գլորում էին և ոչ մեկին չէր հաջողվում կպցնել, յուրաքանչյուրը վերցնում էր իր գլորած ձուն և դարձյալ շարունակում խաղը (Թ. ժխ. ձ. Համմտ. Բորչալուի «Թուլանուկի» խաղը տե՛. Ա.Հ, X, 265)։

343. ԳԼՈՐՈՑԻԿ

Զու, ընկույզ և կաղին գլորելով խաղը, որ տարածված էր ամեն տեղ։ Խաղում էին մասնավորապես Նոր տարուն, Բարեկենդանին, Տյառնընդառաջին, Մեծ պասի երկուշաբթի օրը։ (ել. ժխ. № 71, էջ 116։ Համմտ. Սասնա «կարմիր հավկթի կռիվ» խաղը։ Պետ. ձ.)։

344. ԳԼՈՐՈՑԻԿ

[Վանում] այս խաղ քաղաքեն մինչև մեր թաղ և ի մեր թաղեն մինչև ի քաղաք, և մեր թաղի գլխեն մինչև մեր հայկավ[ան]ից եկեղեցին և եկեղեցվո դռնեն մինչև մեր թաղի գլուխ խաղայինք։ Քանի որ ձյուն երկիր չէր բռներ և երբ ձյուն քան զձմեռն առաջ գայր, մի ընդարձակ տանյաց վերա խաղայինք այնպես։ Բայց տանյաց վերա համառոտ գլորցկի ձև մի ևս ունեինք։ Մեկեն մինչև տասն հոգի մին մի 10—20 ընկույզ ծոց լեցուցած և ձեռք բռնած, տանյաց վերա մի պատի ներքև կարգավ կանգնեինք, առաջին յուր ճակտի բարձրության գծով ընկույզ պատին դպցնելով թող տայր տանքի վերա։ Իյնալով 2—3—4 քայլ առաջ գլորվեր։ Հետո երկրորդն ձեռաց ընկույզ պատի նույն գծով թող տալով կակնկալեր, թե երթա դեպի առաջին ընկույզին. եթե դիպեր՝ տարած լիներ, ընկույզ կառնույր, իսկ եթե ոչ՝ մնայր ի գետին։ Այսպես ամենեքյան թող տային ընկույզք։ Եթե առաջին կարգին 10 անձինք չկարողանային դիպեցուցանել և առնել, նորեն առաջին անձեն սկսյալ երկրորդ անգամ ձգեին։ (Զ. № 4184, էջ 142ա)։

345. ԹՈԼՈԼԱՆԻ

Բարեկենդանի վերջին երեկոյան «...Մի ուրախություն էլ նոր սկսավ, մի կողմը վեգ են գցում տղայքը, մյուս կողմը թոլոլանգի (ընկույզ գլորշեքի խաղ) են խաղում հարս ու աղջիկները»։ Բարեկենդանի վերջին օրը՝ բերանփակեքի ուշ երեկոյան Աշտարակում երբ սեղանը հավաքվում էր, պապը կարգադրում էր. —«Ա՛յ կնիկ, դե գնա մի քիչ պոպոքից-մոպոքից բեր, երեխեքանց առաջն ածա՛, մի քիչ էլ վեգ խաղան ու գնան իրանց տները»։ (ՊՀԽ, 126)։

346. ԿԵԼԴՐԱՄԱՇ

Կոտայքում (պարսկահայեր) խաղը նույնն էր։ Գլորելը կլդրել էր կոչվում («կլդրես են»)։

Խաղացողներից որևէ մեկի ընկույզի պաշարը սպառվելու դեպքում նրան իրավունք էր վերապահվում միայն մեկ անգամ ներքևում հավաքված ընկույզներից մի հատ վերցնելու և գլորելու, որի անհաջողության դեպքում խաղին այլևս չէր մասնակցում։ (Թ. ժխ ձ.։ Համմտ. Իգդիրի «Ընկույզ գլորել» խաղը. Կ. ժխ.ձ.)

347. ԳԼՈՒԼԱ (ԳՆԴԱԿ)

Բաղեշում խաղացողները գետնի վրա մեկական ուլունք կամ ընկույզ էին շարում և մի գծի՝ սահմանի վրայից գլուլաները գլորում դրանց վրա։ Գլուլան կպած առարկան համարվում էր կրտված, որը յուրացվում էր գլորողի կողմից։

Վերջին խաղացողը չկրտելու դեպքում հաջորդ խաղն սկսում էր գծի վրայից առաջին անգամ գլուլա գլորողը, այնուհետև՝ մյուսները՝ նույն հերթականությամբ, մինչև որ բոլոր խաղալիքները կորվում էին։ (ԹԿ. 1899, № 44, 45, էջ 699, 712)։

348. ԳԼՈՐՈՑԻԿ

Սենյակում գլորոցիկ խաղացող վանեցի երկու երեխաներից մեկն իր ուլունքը կամ կաղինը գլորում էր առաջ։ Մյուսն իրենը նույն տեղից գլորելով՝ առաջինին նշան էր բռնում։ Երբ երկրորդը վրիպում էր, առաջինն էր նույնը կատարում. մինչև որ նախապես պայմանավորվածության համաձայն մեկն ու մեկը խփելով 20—50 թվին շուտ հասնելով հակառակորդի խաղանյութը յուրացնում (կամ առանց յուրացման) խաղը շահած էր համարվում։ (Ախ. I, 33)։

349. ԳԼԵՐԱՆ

Բաղեշում երեխաները խեցին կլորացնում և տան բարձրությունից դեպի ցած էին գլորում։ Խեցին մեծ լինելու դեպքում այն գլորում էին մեծ զառիվայրերից «գլերան գլեր» ասելով։ (ԹԿ. 1899, № 44, էջ 698)։

350. ԴՐԱՄ ԳԼՈՐԵԼ

Խաղում էին բակերում կամ տանը, զատկից երկու շաբաթ առաջ, մինչև Համբարձում[81]։ Մաս-

---

81 Երզնկայում զատկից մեկ-երկու շաբաթ առաջ 12 երիտասարդ աղջիկներ և հարսներ սկուտեղով մատուցվող նվերներով գնում էին նոր ամուսնացած աղջկան դարձ բերելու

նակցում էին երիտասարդ հարսներն ու աղջիկները, 10—12 հոգով։ Հաճախ երկար էր տևում՝ սկսում էին առավոտյան և ավարտում արևամուտին, միայն որոշ ընդմիջումներով։

Խաղն սկսում էր նա, ով ցանկանում էր։ Վերցնում էին մի քառակուսի կամ 60×50 սմ չափի մի տախտակ, թեքելով մի եզրը հենում էին պատին, մյուսը՝ գետնին։ Խաղացողները կանգնելով տախտակի կողքին, մեկը մյուսի հետից նրա վրայով, վերևից ներքև էին գլորում մեկական արծաթ մեջիտին (չունեցողները՝ ղուրուշ)։

Երբ բոլորը գլորում էին իրենց մեկական դրամը, խաղն սկսողը գետնից ետ վերցնելով իրենը, երկրորդ անգամ էր այն նույն ձևով գլորում, աշխատելով որքան հնարավոր է, իր դրամը մոտ գցել մյուսների դրամներին։ Իր և մյուս դրամների միջև ընկած տարածությունը, եթե հավասարվում էր մի ճաղի երկարության, կամ ավելի մոտ էր լինում, խաղացողը շահում էր այդ դրամները, իսկ եթե մի ճաղից ավելի էր տարածությունը, նա կորցնում էր, և խաղն անցնում էր երկրորդ գլորողին։ Շահելու դեպքում խաղացողն այդ խաղում շահածները հավաքելով իրավունք էր ունենում գլորել իր դրամը, երրորդ, չորրորդ և ավելի անգամներ, մինչև տարածության մեծ լինելը։ Նույն ձևով խաղում էին բոլոր խաղացողները, մինչև առաջին «խաղի» վերջանալը։ Դրանից հետո խաղն սկսում էր առաջին խաղի մեջ շահողը (Կ. Ժխ. Ձ.)։

351. ՍԵՐ-ՄԱՑՈՒՆ

Վանում գարնանը, երբ լճակներ էին գոյանում, սրանց կողքովն անցնող երեխաները տափակ ու փոքր քարեր վերցնելով, իրար հարցնում էին։

—Քեզ սե՞ր, թե մածուն, որ նշանակում էր՝ քարը սահեցնել ջրի երե՞սը, մի քանի անգամ քերի քեր թռցնե՞լ, որը սերն էր ներկայացնում, թե՞ միանգամից խփել և մեխել ջրի մեջ, որը մածունն էր ներկայացնում։ (Ախ. I, 175—176)։

Այս խաղը խաղում էին այնտեղ, հարսի սկեսրանց տանը, ապա գալով, կիրակի և ազատ օրերին խաղում էին հերանց կամ բարեկամների տներում։


352. ԴԱՎԻԹԸ ՃԱՆ Է ԽԱՂՈՒՄ

Ջենով Հովան իսաց.—Դաւվի՛թ,
Գընա՛, մա՛տ ճժիրուն խաղա։
Դաւվիթ գընաց մա՛տ ճժիրուն, խաղաց։
Ճժեր լեպ արին, ճանիր զըմեն մոտեն տարան։
(ՍՍ. ա. 554—555 (Մկս.)։

353. ՇԱՐՋԱ

Շարզա, որ է շարել ու զարնել։ Այս խաղ դուր և տափարակ ճանապարհաց վերա լավ խաղացվի, իսկ խորդ ու բորդ, անհարթ գետնի վերա անհաջող կերպիվ։ Մի քար, կես քարընկից հեռի նշան դնելով, երկուքեն մինչև 10 հոգի, մին մի ընկույզ, կամ երբեմն երկու ընկույզ նշանին հանդեպ շարելով, վեգեր կարգավ նշանին վրա ձգեն։ Երբ բոլորեքյան ձգել վերջացուցանեն, երթան նշանին մոտ, մատով, թզով, ոտքով կամ եթե վեճ պատահի մի որոշյալ ճյուղի կտորով վեգեր նշանեն հեռու և մերձ լինելն չափեն։ Որո վեգն ավելի մերձ ընկած է նշանին, առաջին համարվի և նորա հաշիվ կլինի մոտավորություն և հեռավորություն և կարգ կտրվի նոցա մեջ վեգն շարված ընկույզաց ձգելուն։ Առաջին համարված վեգի հնկույզսն ուղղյալ արձակել։ Եթե մի կամ երկու ընկույզ մի ոտնաչափ շարքեն հեռու հանել հաջողեցավ, մյուս մնացյալ ընկույզսն կոթկելով կառնու գրպան կլեցունե։ Ով եթե վեգ ճուկ կայնեցավ, նույնպես բոլոր շարվածն առնու, իսկ եթե ընկույզն զարնել հանել և ճուկն չհաջողեցավ, նշանի քով երկրորդն ուղ[ղ]ելով արձակե վեգն և եթե սա և ամենեքյան չկարացին ի շարվածույն ընկույզ հանել, առաջին առնու զվեգն կոթկե զընկույ[զ]ան և զմին թողլով ասե «շարզա» և ձգե զվեգն ի գետին, ապա այն մեկ ընկու[յ]զի վերա մնացյալքն աշխատին կարգավ։ Եթե մեկն վեգով զմի ընկույզն հարկանել, մնացյալքն կարգավ անդեն նշան դնելով վեգով յուրյանց հարկանեն զվեգն նորա, եթե դիպեցուցանեն վեգին, առնուն ի ձեռաց նորա զմի ընկույզն, իսկ եթե ոչ՝ մնա նմա։

Ահա այսպես 3—4—5—6 ժամ շարունակ խաղայինք առանց ձանձրանալու։ Նա միայն ձանձրանայր, որ կամ լավ չգիտեր խաղալ, և կամ կտարվեր։ (Զ. №. 4184, էջ 142 ա—142բ (Վ)։



Նկ. 38. Դվինում պեղված վեգեր

Գրչանկար Ա. Պատրիկի

354. ՆՈՎ ՋԱՐԿ

Վանում 4—5—6 կանգուն հավասար երկարությամբ և լայնությամբ մի հարթ գետնի վերա բոլորակ պիծ մի գծվի քարի կամ փայտի սուր անկյունով. ճիշտ գծին կեդրոն կես կանգունի չափ ուղիղ գիծ մի քաշվի։ Բոլորակ գծի շրջանակեն երկու կանգուն հեռու երկու կողմ հանդեպ միմյանց նշան կդրվի, 2—3—4—5—6 հոգի մեկ-մեկ ընկույզ գծի կեդրոնի կես կանգուն ուղի[ղ] գծի վերա ընկույզք շարեն։ Մեծ բոլորակ գծի շրջանակեն երկու կանգուն նշանի վերա երկու կողմեն տղայք կանգնելով վեգեր ուղղեն դեպ ի հընկույզս և թափով հարկանեն։ Եթե հարկանելով կեդրոնի գծի վերա շարած ընկու[յ]զին մեջ մեծ բոլորակ շրջանակեն դուրս հաննեց, կառնե զայն և նորեն վեգի ընկած տեղեն հարկանե ընկույզաց, մինչև ամեն ևս գծերեն դուրս հանել հաջողի։ Իսկ եթե չհաջողեցավ, երկրորդն նույնպես սկսանե և հաջորդաբար։ Բայց եթե մին ընկու[յ]զին հարկանե և մեծ շրջանակեն դուրս չկրնա հանել, նորա տեղի կարգն ունեցողն գա, ոտք մեծ շրջանակի գծի վերա դնելով վեգով հարկանե զայն, խայտյալն արտաքս հանե ի գծեն և առնու։ (Զ. № 4184, էջ 143ա։ Համմտ. Ան. I, 175՝ Վանա «Սարջա կամ սարիզա» խաղը)։

355. ԱՋԻ ԽԱՂ

Արթիկում խաղում էին հատկապես աշնանը, դրսում։ Մասնակցում էին պատանի և երիտասարդ տղաները, 2—7 հոգով, որոնք մեկական աջ էին ունենում։ Խաղի համար մեջտեղ էին դնում մեկական ճան։ Երկու հոգի լինելու դեպքում դրանք կանգնեցրած վիճակում դնում էին կողք-կողքի, ավելի հոգով խաղալիս դրանց վրա, դարձյալ նույն ձևով, կանգնեցնում էին բոլոր ճանները։ Այս՝ իրար

վրա դարսած ճաների խումբը ղալ էր կոչվում։ Ղալից մի 10 քայլ հեռու իբաև էին նշանակում, որտեղից խաղացողները իրենց աջերը գցում էին դեպի ղալը։

Խաղն այդուհետև դրսևորվում էր հետևյալ ձևով։

1. Նախ ընտրում էին ղալի տեր։ Դրա համար բոլորը կանգնած վիճակում սորում էին իրենց աջերը։ Ղալի տեր դառնում էր նա, ում աջը թոխան էր կանգնում։ Երբ այնպես էր պատահում, որ մի քանիսը միաժամանակ թոխան էին բերում, նրանք իրենց աջերը նորից էին սորում այնքան ժամանակ, մինչև որ իրենցից միայն մեկն էր թոխան կանգնեցնում։

2. Ղալի տերը գնում և իր աջը սորում էր ղալի մոտ, պայմանով, որ աջը չկանգներ։

3. Մյուս խաղակիցները հերթով իրենց աջերով նշան էին բռնում ղալին և վերջինիս տիրոջ աջին, ըստ որում ղալին նշան բռնելիս նախապես ասում էին «ղալին եմ», աջին բռնելիս՝ «աջին եմ» և երկուսին միաժամանակ բռնելիս՝ «մեշ ղալատան»։

4. Աջը նետելիս դիպչելու դեպքում աջատերը գնում, իր աջի մոտ կանգնում էր՝ երբ որ կպչում էր ղալատիրոջ աջին, վերջինս խաղից դուրս էր գալիս, որով ղալի տեր էր դառնում նրան պարտության մատնողը. Իսկ երբ աջը ղալին էր կըպչում, վերջինս ցրվում էր. այդ դեպքում, եթե աջը թոխան կամ ալչի էր կանգնում, աջի տիրոջն իրավունք էր վերապահվում խաղը շարունակել, իսկ եթե դոք կամ ճիք էր կանգնում, ղալի ճաներից յուրացնում և դարձյալ խաղը շարունակում էր։ Ղալատիրոջ աջը մոտիկ լինելու դեպքում նա ձգտում էր նախ և առաջ խփել իր աջով և նրան զրկել խաղին մասնակցելու և ղալի տերը լինելու իրավունքից։ Այնուհետև նա սկսում էր իր աջով խփել խմբված ճաներին, սրանց չուռ անելու՝ ցրելու նպատակով։ Չուռ անելիս, եթե աջը ճիք կամ դոք էր ընկնում, յուրացնում էր համապատասխան ընկածների, որից հետո նորից շարունակում էր չուռ անել այնքան ժամանակ, մինչև որ բոլոր ճաները յուրացնում էր։ Սրա խաղն ընդհատվում էր, երբ աջն էր վրիպում կամ ճաները աջին համապատասխան չէին շրջվում։

5. Երբ որ երկրորդ խաղացողը հրապարակի ճաները դեռևս չտարած խաղի հերթը երրորդին էր տալիս, վերջինս իրանից իր աջով նշան էր բռնում արդեն ցրված ճաներին կամ վերջին խաղացողի աջին։ Երբ որ վերջին խաղացողի աջին էր խփում, յուրացնում էր նրա տարած ճաները և նրան խաղից զրկում, իսկ երբ ճաներին էր խփում, իր աջը ալչի կամ թոխան կանգնելու դեպքում շարունակում էր խաղալ. ճիք կամ դոք ընկնելիս յուրացնում էր համապատասխանորեն ընկած ճաները։

6. Հաջորդ բոլոր խաղացողների համար խաղը շարունակվում էր վերոհիշյալ ձևերով։

7. Երբ շարքային խաղացողների աջերը վրիպում էին, հերթը նորից ղալատիրոջն էր հասնում։ Սա, ըստ իր հայեցողության, կարող էր իր աջով շուռ անել, որտեղ յուրացումը կատարվում էր սովորական ձևով, կամ, որ ավելի ձեռնտու էր, դիմում էր հետևյալ ձևին։ Իր աջը և ղալը ձեռքի թաթի մի շարժումով շփում-շպրտում էր դեպի մյուսների աջերի մերձակա տեղերը, որոնցից հետո հեշտ էր դրանց հարվածելու միջոցով զրկել խաղալու իրավունքից։ Շպրտելիս իր աջը ճիկ կամ դոք ընկնելիս յուրացնում էր համապատասխան դիրք ընդունած ճաները, իսկ թոխան կամ ալչի կանգնելիս շարունակում էր խաղալ։ Իսկ եթե այս պայմաններից ոչ մեկը չէր ստացվում, մյուս աջատերերից առաջինն էր սկսում խաղալ։

Մոտենալով աջերին, ղալատերը սկսում էր մեկ-մեկ խփել դրանց և աջատերերին զրկել խաղալուց։ Իսկ եթե աջերից մեկը հեռու էր գտնվում, և խփելը անհուսալի էր լինում, ղալի տերը իր աջը և մնացած ճանը (կամ ճաները) դարձյալ ձեռքի թաթով շպրտում էր դեպի հեռու, որպեսզի մյուս աջատերը անկարող լիներ խփել իր աջին։ Շպրտելուց հետո, երբ իր աջը և ճաները ընկնում էին համապատասխան դիրքով, յուրացնում էր, այլապես խաղն անցնում էր հակառակորդին։

8. Հակառակորդը, երբ հարմար էր գտնում, հեռվից խփում էր ղալատիրոջ աջին, հակառակ պարագայում իր աջը վերցնում, գնում էր ղալատիրոջ աջի մոտ և սորում էր, ասելով,—յա՛ տեր աստված։ Երբ աջը սորելիս ալչի էր կանգնում, իրավունք էր ստանում մոտիկից խփելու հակառակորդի աջին, որով յուրացնում էր ղալատիրոջ տարած բոլոր ճաները, ի թիվս սրանց նաև գետնին մնացածները և դառնում էր ղալի տեր։

Դրանից հետո միայն խաղը նորից էր սկսվում։

Կանոններ.—1. «Ղալին եմ» և «աջին եմ» խոս-

քերն ասվում էին ոչ միայն իրանից խփելիս, այլ նաև տեղում՝ ղալի մոտ խաղալիս։ 2. Ղալը քանդվելուց հետո «ղալին եմ» և «աջին եմ» խոսքերն ասվում էին, բայց «մեշ ղալատան» չէր ասվում։ 3. Երբ որ «ղալին եմ» ասելիս կպչում էր աջին կամ հակառակը, համարվում էր վրիպած։ Այդ դեպքում գետնի աջին կամ ղալին տեղաշարժ անելիս հին դիրքը չէին վերականգնում։ 4. Այն դեպքում, երբ ղալը դեռևս կանգուն էր մնում և աջատերերն իրար ետևից միմյանց աջին խփելով խաղազրկում էին, վերջին խփողը նախավերջինի աջին խփելուց կարող էր հրաժարվել և գնալով մոտը, իր աջը սորելով ալչի կանգնեցնել։ Եթե հաջողվում էր ալչի բերել, նա իսկույն խփում էր նախավերջինի աջին ու յուրացնում էր նրա՝ արդեն տարած ճանները։ (Բ. Ժխ. ձ.)։

356. ՍՈՒԼԹԱՆ

Արթիկում խաղում էին պատանի տղաները և մինչև 30 տարեկան տղամարդիկ, 4—10 հոգով։ Քիչ հոգով խաղալիս դնում էին երկուական, իսկ շատ հոգով խաղալիս՝ մեկական ճան։ Յուրաքանչյուր խաղացող ունենում էր մի աջ[82] խփելու համար։

Խաղի համար գետնի վրա մի ուղիղ գիծ էին գծում, որի վրա շարքով դասավորում էին դրած ճանները։ Ճանների գծից այս և այն կողմ, 10 քայլի վրա մեկական իրան էին ընտրում։ Ճանների շարքի մեջ դրանցից մեկը կենտրոնում գլխի վրա տնկում և սուլթան անունն էին տալիս։ Ապա՝ թաց ու չորով որոշում էին խաղալու հերթականությունը։

Սուլթանը 7 ոտնաչափ տեղափոխելիս խփողը յուրացնում էր բոլոր ճանները։ Շարքային ճանները յուրացվում էին նաև 3 ոտնաչափ տեղաշարժելիս։

Կանոններ.—1. Սուլթանին կպչելիս, երբ նրան 7 ոտնաչափից պակաս էին տեղաշարժ անում, խփողները երկու ճան տուգանք էին դնում, իսկ շարքայիններն երեք ոտնաչափից պակաս շարժելիս՝ մեկ ճան։

2. Երբ աջը սուլթանին և շարքային ճաններին միաժամանակ տեղաշարժ էր անում և սակայն գծից պահանջված չափով չէր կարողանում հեռացնել, յուրաքանչյուրի համար, նույն օրենքներով, տուգանք էր տալիս։ 3. Հասարակ ճանները տեղաշարժելիս, երբ 3 ոտնաչափից պակաս էին հեռանում և ալչի կամ թոխան էին կանգնում, տուգանք չէին վճարում, այլ դա նորից տեղն էին դնում։ 4. Երբ բոլոր ճանները շարքից թռցվում էին և սուլթանը մենակ էր մնում, խաղակիցները խուսափում էին դրան խփելուց, որովհետև 7 ոտնաչափը չլրացնելու դեպքում երկու տուգանքի հեռանկար էր լինում։ Այդ պատճառով կոլեկտիվ կերպով պայմանավորվում էին դրան չխփել, այլ շուրջը նորից շարել և խաղը կրկնել։ Այս դեպքում սուլթանն ընդհանուրին էր պատկանում, ուստի դրա նախկին տերը պահանջ չէր ներկայացնում։ 5. Ճաններին կարելի էր խփել ինչպես ձեռքին զուգահեռական դիրք տալով, այնպես էլ «գլխիվայր» այսինքն՝ վերից վար՝ կորագիծ կազմելով։ 6. Առաջին անգամ խաղն սկսվում էր թաց ու չորի միջոցով, իսկ այնուհետև նոր խաղն սկսում էր նա, ով գտնվում էր հաղթանակը շահած խաղակցից հետո։ (Բ. Ժխ. ձ.)։

357. ՏԱՍՍԻ

Մասնակցում էին քանաքեռցի պատանի տղաները, 2—4 հոգով, խաղում էին գարնանը, աշնանը և ձմռանը։ Երկու հոգով խաղալու դեպքում մեջտեղ էին դնում երկուական կամ երեքական, իսկ ավելի հոգով խաղալու դեպքում՝ ավելի պակաս վեգեր։

Նախապես պատի տակին մի շրջագիծ էին գծում, որի մի կողմը կազմում էր այդ պատը։ Այս շրջագծից 6—10 քայլի վրա մեջտեղ դրած վեգերը կողքերին կանգնեցնելով իրար վրա էին շարում այնպես, որ շրջանաձև բուրգ էր գոյանում. սա կոչվում էր տասսից։ Տասսի չորս կողմը 50 սմ տրամագծով շրջան էին գծում։ Ապա այստեղ խաղացողները մեկ-մեկ իրենց զախկա կոչվող վեգերը գցում էին պատի տակի գծված շրջագծի մեջ։ Ում զախկան որ ընկնում էր շրջանի կենտրոնը, նրան վերապահվում էր առաջինը խաղալու

---

82 Աջը Երբեմն պատրաստում էին արճճից։ Սովորական ճանով խմորի մեջ կաղապար էին պատրաստում, ըստ որում ճանը ճիթի կողմից խրում էին խմորի մեջ մինչև թոխանի և խմորի երեսի հավասարումը։ Ապա զգուշությամբ դուրս էին բերում և հալված արճիճը լցնում այնտեղ, որով ձուլում էին արճիճե ճանը։

Կոտայքի Թեղրարեկ (այժմ Ջորագյուղ) գյուղում խմորի վրա կտոր էին փաթաթում, որի երեսին նախապես ցեխ էին քսում։

իրավունքը։ Մյուսների հերթականությունը որոշվում էր զախկաները շրջանի կենտրոնից հեռու կամ մոտիկ ընկնելու չափով։

Առաջին խփողը զախկան նետում էր դեպի տասսից-ը, այն ցրիվ տալու և գծից դուրս բերելու նպատակով։ Նայած պայմանավորվածությանը՝ 3—5 ոտնաչափ տասսից հեռացնելու դեպքում խփողը յուրացնում էր այդ վեգերը և այնուհետև իր զախկային կանգնած տեղից սկսում էր խփել մյուս վեգերին, նույն պայմաններով։

Երբ այնպես էր պատահում, որ զախկան այս անգամ վրիպում ու ալչու չէր կանգնում, խփողը ժամանակավորապես դադարում էր խաղալուց, իսկ եթե վրիպում ու ալչու էր կանգնում, խաղալու իրավունքը վերականգնվում էր և նույնությամբ շարունակվում։

Սա դադարելուն պես հաջորդն էր խաղում, ըստ որում, եթե տասսիցը փլված չէր, հաջորդի խաղն ընթանում էր նկարագրված ձևով, իսկ եթե ցրված էր, հաջորդ խաղացողը իր զախկան զգուշությամբ նետում էր դեպի տասսիցը այնպես որ, որևէ վեգի կպչեր և ալչու կանգներ, որով նա իրավունք էր ստանում խաղը տեղում շարունակելու, իսկ եթե կպչեր և ալչու չկանգներ, կամ չկպչեր, սա այլևս խաղը չէր կարող շարունակել։

Այս ձևով խաղը շարունակվում էր, մինչև որ տասսից-ի վեգերն սպառվում էին։ Այնուհետև խաղը նորից էր սկսվում։

Կանոններ.—1. Աջլիկ խաղացողի համար ընտրվում էր աջ վեգ, ձախլիկ խաղացողի համար՝ ձախ։ Այս զախկան թափով լինելու համար թոխանի վրա երկարությամբ, կես սմ խորությամբ ակոս էին փորում և վեգի երկու գլուխների փոսերից ու ճիքի փոսից բիզով ծակեր անում, այնպես, որ վերջիններս միանում էին ակոսին։ Այնուհետև հալված արճիճը լցնում էին սրանց մեջ այնպես, որ վեգի թոխանը մոտ 1 սմ հաստությամբ պատվում էր արճճի շերտով։ Սա քարերին քսելով հարթում էին. գցելու ժամանակ դա վեգին ձգում էր ցած (դեպի իրեն) և ապահովում ալչուն։ 2. Զախկայով խփելու համար այն բռնում էին բութ մատով, ցուցամատով և միջին մատով, իսկ ոմանք՝ միայն բութ մատով և ցուցամատով։ 3. Տասսից-ի տեղում խաղալիս ելակետ էր դարձվում խաղացողի զախկայի ընկած տեղը, որին ձախլիկները հենվում էին աջ և աջլիկները՝ ձախ ոտքի թաթի կիսով։ (Բ. Ժխ. ձ.)։

358. ՍՈՒԼԹԱՆ

Կոտայքում խաղին մասնակցում էին 2—6 պատանի տղաներ, որոնք խաղում էին գարնան, աշնան և ձմռան ամիսներին։

Պատի տակ մի ոտնաչափ տրամագծով շրջան էին գծում, որի մի կողմը պատն էր կազմում։ Գծի մեջ, պատին մոտիկ մի փոքրիկ փոս էին փորում, որը դիպ էր կոչվում։ Դիպից 6—10 քայլ հեռու դարձյալ գծում էին մի շրջագիծ, 40 սմ տրամագծով։ Սրա մեջ մեկականից երկուական վեգ էին շարում, որոնցից մեկը շարքի կենտրոնում կանգնեցնում էին գլխի վրա և որին սուլթան անունն էին տալիս։ Այդուհետև վեգերի շարքի մոտից բոլորը, իրենց զախկաները հերթով գցում էին դեպի դիպը։ Ում զախկան որ ընկնում էր դիպի մեջ, նա առաջինը խփելու իրավունք էր ստանում, իսկ մյուսները՝ ըստ դիպից հեռու կամ մոտիկ ընկնելու աստիճանի։

Երբ որ դիպի մեջ ընկնում էին մեկից ավելի զախկաներ կամ դիպից միևնույն հեռավորության վրա էին ընկնում, դրանց տերերը սուլթանի մոտից նորից էին գցում դեպի դիպը։ Հերթականությունը որոշելուց հետո դիպի շրջանի վրա կանգնած, հերթով խփում էին վեգերի շարքին, ձգտելով առաջին հերթին նշան բռնել սուլթանին։ Սուլթանը գծից դուրս բերելու դեպքում խփողը յուրացնում էր բոլոր վեգերը, իսկ հասարակ վեգերը դուրս բերելու դեպքում՝ միայն դուրս բերվածները՝ եթե սրանք բնից հեռանում էին 3 ոտնաչափ տարածություն։

Հասարակ վեգերին չխփելու, խփելու՝ չտանելու և խփելու՝ տանելու դեպքում խփողը կանգնում էր իր զախկայի ընկած տեղը, սպասելով, որ բոլորը մեկական անգամ նույնը կատարեին։ Երբ բոլորը խփում և հավաքվում էին սուլթանի շուրջը, հերթական կարգը պահպանելով նորից սկսում էին խփել զախկաների տեղից, ըստ որում, եթե այնպես էր պատահում, որ մինչև այս հերթի խաղը սուլթանը տեղում կանգուն էր մնում, խփողները դրան գծից դուրս հանելու դեպքում դարձյալ յուրացնում էին բոլոր վեգերը։ Սուլթանը վայր ընկնելիս դառնում էր հասարակ վեգ,

որին ինչպես և մյուսներին, յուրացնում էին 3 ոտնաչափ հեռավորության հասցնելու դեպքում։ Դրանից հետո խաղը նորից էր սկսվում։

Կանոններ.—1. Այն դեպքում, երբ դիպի մոտից զախկայով խփողը սուլթանը գծից դուրս չէր կարողանում հեռացնել, երկու վեգ տուգանք էր վճարում, իսկ երբ հասարակ վեգը չէր կարողանում 3 ոտնաչափ հեռացնել, իբրև տուգանք մի վեգ էր վճարում։ 2. Զախկան դիպից նետում էին «զախտում» ձևով, այսինքն՝ այն երկու մատների արանքը պտույտ չտալով, այլ ուղիղ խփելով։ 3. Սուլթանի շարքի մոտ խաղալիս չոթելն արգելվում էր, որպեսզի, զախկան խփված վեգի հետ հեռու ընթանար։ (Բ. Ժխ. ձ.)։

359. ԱՄԲՐՈՑԱԽԱՂ

Ախուրյանում մի քանի հոգով խաղալիս ճանապարհները գծում էին մի շրջագիծ և սրա կենտրոնում ցանկացած քանակությամբ ճաներ իրար վրա ամբրոցանման դարսում էին։ Սա ամբրոց էլ կոչվում էր։ (Ախղ. ձ.)։

360. ՋԱՆ ԽԱՂԱԼ

Սասունցի երեխաները երկուական հոգով նշանառմամբ վեգ էին խաղում։ Գույնզգույն ներկած ջանները նրանք առանձին-առանձին գծի վրա շարում էին մեկը մյուսից 10 սմ հեռու։ Ընտրած սահմանագծից մեկն իր ձեռքի ջանով խփելիս այն յուրացնում էր, և շարունակում խփել։ Ջանը վրիպելու դեպքում մյուսն էր խփում և փոխնիփոխ նշան առնելով ի վերջո մեկը մյուսի ջանները տանում էր։ (Պետ. ձ.)։

361. ԽԱՂ ՃԱՆԵՐՈՎ

Խաղը նույնն էր, բայց խաղացողները զույգ-զույգ ընկերներ էին դառնում։ Երկու ընկերները իրար ետևից ճաներին հարվածելու իրավունք չունեին։ Ճանն ընկնելու դեպքում մյուս խաղացողն աշխատում էր այն դուրս բերել շրջագծից, բայց եթե պարզ երևում էր դրա աննկատելիությունը, մյուսի գործը նույնպես դժվարացնելու նպատակով ձգտում էր գցել այնպիսի մի տեղ, որ նա նույնպես պարտվեր։ (ՌՄ. ձ.)։

362. ՃԱՆ ԽԱՂԱԼ

Խաղը Ապարանում նույնն էր։ Խաղը տեղի էր ունենում աշնանը և ձմռանը՝ սառույցի վրա, շրջագծով։ Խաղացողները բաժանվում էին հավասար խմբերի։ Հարվածող ճանը դախկ կամ խոյի էր կոչվում։ (ՄԱխ. ձ.)։

363. ՈՒՋ ԱՅԱ

Նույնը տարածված էր նաև էջմիածնի շրջանում։ Խաղին մասնակցում էին 6—8 տղաներ։ (ՄԽՄ. ձ.)։

364. ՃԱՆ ԽԱՂ ԵՂԵԼՈՎ

Տղաները վանում մի քանի հոգով իրենց մեկական կտիկները շարում էին հարթ մի տեղ և դրանցից 6—7 քայլ հեռու սահման էին նշանակում։ Կտիկների մոտից նրանք իրենց տախկերը նետում էին դեպի սահմանը։ Երբ առաջին գցողի տախկը ճուկ էր գալիս, նա գետնի կտիկները յուրացնում էր, իսկ երբ այդ անգամ թավ էր գալիս, շարվածների չափ նա ավելացնում էր, որը և «եղել» էր կոչվում։

Եվ եթե առաջին գցողի տախկը իրար վրա մեկից ավելի անգամ ճուկ կամ թավ էր կանգնում, նա դարձյալ յուրացնում կամ նույնքան ավելացնում էր։ Այս կանոնը վերաբերում էր նաև հաջորդներին, որոնք հերթ էին ստանում իրենց նախորդների տախկերը սոլ կամ կոռ գալու դեպքում։

Երբ բոլորի տախկերը կոռ ու սոլ էին գալիս, առաջին խաղացողն իր տախկով վերջինիս ընկած տեղից խփում էր կտիկներին։ Դիպչելու և առնրվազն մեկ կտիկ մեկ ոտնաչափ տեղաշարժ անելու դեպքում նա յուրացնում էր բոլոր ճանները։ Բայց, երբ խփելիս տախկը կտիկներին չէր դիպչում և ճուկ կամ թավ էր գալիս, տերն այս անգամ ևս յուրացնում կամ ավելացնում էր, իսկ վրիպելու կամ սոլ ու կոռ բերելու դեպքում խաղն անցնում էր հաջորդներին, նույն կանոնների համաձայն։ (Խ. Վժխ. ձ., 36—37։ Համմտ. Վանա «ճան խաղալ զարնելով» խաղր. տ., էջ 33—35)։

365. ՃԱՆԻ ՋՂՁ

Խաղացողների թիվը Ն. Բայազետում լինում էր երկուսից ոչ ավելի։ Գետնին գծում էին մոտ մի

մետր տրամագծով մի շրջան, որի կենտրոնում ուղիղ շարքով կանգնեցնում էին յուրաքանչյուր խաղացողից մի-մի կամ երկուական կամ երեքական վեգ։ Ապա շրջանից մոտ երկու կամ երեք քայլ հեռու մի տեղ էլ գծում էին, անվանելով գլուխ։ Նախքան խաղն սկսելը՝ որոշում էին հերթականությունը, որի համար դիմում էին երկու միջոցի։

Առաջին.— մեկը վերցնում էր բոլոր խաղացողների տաղկերը (անաքա) և բոլորը միասին նետում (խրջում) գետնին, և նայած, թե որի տաղկը որի տաղկից հետո էր ալչու կանգնում, սրա տերը լինում էր նրա հաջորդը։

Երկրորդ.— Բոլորը կանգնում էին գլխին և միաժամանակ իրենց տաղկերը գցում շրջանակի մեջ, վերջիններիս բռնած դիրքից որոշում էին առաջնության կարգը, ամենից բարձրը առաջինը, ամենից ցածրը՝ վերջինը։

Խաղն սկսելիս առաջինը կանգնում էր գլխին և գցում իր տաղկը դեպի շրջանի միջի վեգերը, և եթե դիպցնում էր սրանց ու մի կամ մի քանի վեգ դուրս թռցնում շրջանից, վերցնում էր իբր սեփականություն և ապա կանգնելով իր տաղկի ընկած տեղը, նորից գցում էր դեպի շարքը և նոր վեգեր հանում շրջանից, սեփականացնում։ Եթե տաղկը չէր դիպչում վեգերին և կամ վեգերը շրջանից դուրս չէին թռչում, խփողը զրկվում էր խաղալու իրավունքից։ Այժմ արդեն երկրորդն էր գլխից խփում, և նույն կերպ խաղալով իր տեղը դիջում երրորդին և այլն։ Երբ բոլորը մի-մի անգամ գլխից խփած էին լինում, երկրորդ հերթին այլևս գլխից չէին խփում, այլ շրջագծի եզրից և այն վեգերին, որոնք հարվածներ կրելով հեռացել էին կենտրոնից և մոտեցել եզրին։

Խաղը կրկնվում էր, երբ բոլոր վեգերը հանվում էին շրջանից և դառնում հանողների սեփականություն։ Երբեմն մի ավելորդ անգամ խաղալու իրավունք էին տալիս այն ընկերոջը, որը տարվում (կրվում) էր խաղի մեջ իր ունեցած բոլոր վեգերը և եթե շահում էր (կրում էր), կրկին շարունակում էր խաղը։

Պատահում էր, որ կողմնակի երեխաները մոտենում էին և «չուռ» ասելով խլում շրջանի մեջ շարված վեգերը և սեփականացնում։ Եվ որպեսզի այսպիսի հափշտակություն տեղի չունենար, գողը նրանց մոտենալիս խաղացողներն էին «չուռ» ասում։ Համմա. նույն տեղի «Բարգըվըր» խաղը (եվ. ժխ., № 71, էջ 98—101 էջ 130)։

366. ԱԼՋԻՆԱՋՈՒՄ-ԱԼՋԻՆԱՋՈՒՄ

Կարնո երեխաները խաղում էին մեծ մասամբ երկու հոգով։ Ուղիղ գծով «տնկեին կը» մի-մի կամ երկու-երկու վեգ։ Հետո հերթով «ելնեին կը»՝ ասա-քաները գցում են գետին, շարված վեգերից 4 արշին հեռավորությամբ։ Ելնելիս եթե մեկի ասա-քան ալչու էր գալիս, առնում էր մյուսից մի վեգ և նորից էին ելնում, և այս անգամ առաջինը ելնելու իրավունքը դրան էր պատկանում։ Եթե թավ էր կանգնում, երկուսն էլ մի-մի վեգ տնկում էին և թավ կանգնեցնողը, թեկուզ հերթը իրենն էլ չլիներ, վեգի կանգնած տեղից գցում էր ասա-քան դեպի շարված վեգերը, աշխատելով խփել դրանց։ Եթե դիպչում էր և գոնե մի վեգ մի ոտնաչափից ավելի դուրս էր գալիս, շարքից վերցնում էր բոլոր վեգերը և խաղը կրկնվում էր։ Իսկ եթե չէր դիպչում, մի ոտնաչափից պակաս էր դուրս գալիս, երկրորդն էր խփում իր ասա-քի տեղից։ Խփելիս թե ասա-քան ալչու էր կանգնում, մյուսից մի վեգ էր առնում, իսկ եթե թավ՝ մի-մի վեգ էլ էին շարում և ասա-քի ընկած տեղից նորից խփում էին շարված վեգերին։ Եթե գոնե մի վեգ մի ոտնաչափ ելնում էր, բոլորը վերցնում և նոր վեգեր էին շարում, իսկ եթե ոչ՝ նորից էին ելնում և միևնույն կերպով խաղում։ (եվ. ժխ. № 71, էջ 128ա—128բ)։

367. ԳԼԽԻ ՏԱԼ

Վրաստանի Շահումավանում խաղում էին տղաները, մի քանի հոգով, որոնցից յուրաքանչյուրը երկսից ավելի վեգեր էին շարում։ Շարածից հետու մի տեղ էին որոշում, որ գլուխ էր կոչվում։ Այստեղից արճճոտաններ հերթով գցում էին. ում արճճոտանը որ դիպչում էր շարածին և կակալը կամ կոճին 3 ոտք հետու էր քշում, նա տանում էր, իսկ վերևի կողմից արճճոտանով խփելիս կոճին կամ կակալը 7 ոտք քշված պետք է լիներ, որ տարած համարվեր։

Բոլոր ունեցածը տանուլ տվողը իրավունք ուներ «կենտ» բառն արտասանել և առանց բան շարելու «յա՛ բաղդ» ասել և շարածին մի անգամ խփել։ Պատահում էր, որ այդ տանուլ տվողը կենտ խփելով իր բոլոր կորցրածները ետ էր բերում։

(ԳԹ. III, № 18։ Համմտ. նույն տեղի «Վեգ գալի» և «Ալչուի» խաղերը ն. տ.)։

368. ԳՐՈՂ

Կոտայքում խաղում էին 2—4 պատանի տղաներ, ձմռանը՝ օդաններում և գարնանն ու աշնանը՝ դրսում։ Գծում էին 40 սմ տրամագծով շրջան և նստում նրա շուրջը։ Երկու հոգով խաղալիս հրապարակ էին դնում երկուական և ավելի հոգով խաղալիս՝ մեկական վեգ։

Խաղը առաջինն սկսելու համար յուրաքանչյուրը իր մի վեգը սորում էր. ումը որ ալչու կամ թավ էր կանգնում, նա էլ սկսում էր։ Երբ մեկից ավելի կանգնեցնող էր լինում, սրանք նորից էին գցում, մինչև որ մի կանգնեցնող էր մնում։ Ապա առաջին խաղացողը բոլոր վեգերը ափն էր առնում և գցում շրջանի մեջ։ Երբ վեգերից մեկը ալչու էր կանգնում, խաղը անցնում էր սրան, որը յուրացնում էր բոլոր ճիք ընկած վեգերը կամ երբ թավ էր կանգնում, յուրացնում էր բոք ընկածները։ Այնուհետև նա իր վեգով մեկ-մեկ խփում էր բոլոր վեգերին, շրջագծից դուրս բերելու, ինչպես նաև վեգը բոքից ճիք և ճիքից բոք դարձնելու և յուրացնելու նպատակով։ Երբ որ այս անգամ խփողի վեգը վրիպում էր և վրիպածը գծամիջին էր մնում, խաղի հերթն անցնում էր մյուս վեգատիրոջը, ըստ որում՝ հակառակորդը յուրացնում էր խփել չկարողացողի վրիպած վեգը։ Այն դեպքում, երբ խաղացողներից մեկի կամ երկսի վեգերը յուրացված էին լինում, սրանց տերերը խաղին մասնակցել չէին կարող. այդ պարագայում, երբ խաղատեղում միայն երկու հոգի էին մնում, ու խփողի վեգը և՛ վրիպում, և՛ գծից դուրս էր ընկնում, խաղը նորից էր սկսվում։ Նույնիսկ, եթե երկու հոգի մնալու ժամանակ խփված և խփվող վեգերը շրջանից դուրս էին ընկնում, նույնպես նորից էր սկսվում։

Խաղալու հերթը հաջորդ՝ աջ կողքին նստողին էր անցնում այն դեպքում, երբ նախորդի վեգը վրիպում և շրջանի մեջն էր մնում։

Կանոններ.—1. Խաղացողները նստում էին ծալապատիկ կամ չոքած, որոնք խաղի ընթացքում տեղաշարժվելու իրավունք չունեին։ Բայց նրանք կարող էին ազատություն տալ իրանի և թևերի շարժմանը. ըստ այդմ՝ ցանկացած դիրքն ընդունել, թևը և ձեռքը ուզածի պես շարժել։ 2. Խփողը իր վեգը չէր բռնում, այլ մատների ծայրերով սրբան էր խփում այնպես, որպեսզի սա էլ իր հերթին կպչեր հակառակորդի վեգին։ Խփելու այս ձևը «մատով չոքել» էր կոչվում։ 3. Վեգով վեգին խփելիս գործում էին միջին մատը, ցուցամատը և բութ մատը, որոնք դեպի ետ, դեպի առաջ և դեպի կողքերը գործողություն էին ծավալում իրար հենվելու զանազան ձևեր ընդունելով։ 4. Հակառակորդի վեգերը տանելու համար կար երկու պայման. մեկ՝ երբ գծամիջից դուրս էին հանվում և երկրորդ՝ երբ խփողի վեգը՝ հակառակորդի վեգերը բոքից ճիք և ճիքից բոք էր շրջում։ 5. Երբ որ խփողին չէր հաջողվում հակառակորդի վեգը գծից դուրս բերել կամ գծամիջում հակառակ երեսին շուռ տալ, հակառակորդը յուրացնում էր նրա վեգը։ (Բ. Ժխ. Ձ.)։

369. ՇՐՋՈՑԻԿ

Վանում խաղում էին մի քանի հոգով։ Հերթով ճաներ գցում էին գետին. մեկինը երբ որ միայն ճուկ կամ թաֆ էր կանգնում, իսկ մյուսինը սալ կամ կոռ, զարնելու առաջնությունը ճուկ բերողինն էր լինում։ Երբ ճուկ չէին գալիս, այլ միայն թաֆ՝ զարկում էր թաֆի տերը։ Երբ երկու ճուկ կամ երկու թաֆ, կամ մեկ ճուկ և մեկ թաֆ էին կանգնում, նորից էին սորում, որպեսզի տարբեր կանգնեին։ Սրանցից դարձյալ ճուկ կամ թաֆ բերողն էր խփում իր կողքի ընկերոջ ճանին. եթե ճանը կոռ էր լինում. և շրջվելիս սալ էր ստացվում, սորողը կտաներ. եթե սալ էր լինում և շրջում էր կոռ, նույնպես կտաներ. եթե զարկի ժամանակ չէր շրջվում և զարնողի ճանը ճուկ կամ թաֆ էր կանգնում, նորից կտաներ։ (Խ. Վժխ. Ձ.։ Համմտ. Ն. Բայադետի «Փստուկ» խաղը. Եվ. Ժխ, № 71, էջ 71—72)։

370. ՃԱՆ ԿԱՄ ՃԱՆԽԱՂ

Ճանի սույն նստմանց ձևին մասնակցում էին երկու և ավելի երեխաներ, որոնք բոլորաձև նստում և մեկական ճան էին սորում. ումը որ ճուկ[83] էր

---

83 Աճ. I, 139 (Վ.) ասված է, որ ճանի նեղ կողմերից զոռավորը ճուկ, հառի կողմը՝ թաֆ և յայն երեսներից զոգավորը նոռ ու կորնթարդը՝ սալ է կոչվում։

Ճանի աջն ու ձախը որոշվում էր այսպես. «Երբ ճան մը՝ ճուկ երեսը դեպ վեր ըլլալու պայմանով՝ աջ ձեռքին ցուցա-

գալիս, նա առաջինը խաղալու իրավունքն ստանալով իր ճանով խփում էր մյուսներին՝ շուռ տալու նպատակով. հաջողեցնելիս դրանք յուրացնում էր, և հակառակ դեպքում մյուսներն էին սկսում, իրենց ճաների երեսների (թաֆ, սալ, կոռ)[84] համապատասխան հերթականությամբ։ (Ախ. I, 140 (վ.)։

371 Ջ Ե Տ Ա Ր[85]

Արթիկում խաղում էին պատանի և երիտասարդ տղաները, տարվա տաք եղանակներին, 2—4 հոգով։ Խաղն սկսում էին երկուական ճանով, որոնք հերթով սորում էին խաղատեղը, կանգնած և քիչ կռացած վիճակում։ Չորս հոգով խաղալու դեպքում խաղն ընթանում էր հետևյալ ձևով։

1. Ասենք թե առաջինը բերում էր մի թոխան, մի ճիք, երկրորդը՝ երկու ճիք, երրորդը՝ մի ալչի, մի դոք, չորրորդը՝ մի թոխան և մի ալչի։ Վերջինիս բերած թոխանը չեզոքացնում էր առաջինի բերած թոխանը, այսինքն խաղի այս մոմենտը չեղյալ էր հայտարարվում, որը կոչվում էր «ֆըռ անել»։ Նույն ձևով ֆըռ էր լինում նաև ալչի գալու դեպքում, եթե հրապարակում թոխան կանգնած ճան չկար։ Ֆըռ կարող էին անել բոլոր խաղացողները։

2. Երբ առաջին խաղացողը զույգ թոխան էր բերում, ինքն իրեն ֆըռ էր անում, ուստի նորից էր գցում։ Իսկ հետագա բոլոր խաղացողները զույգ թոխան բերելիս բոլորին էին ֆըռ անում, ուստի խաղի այդ մասը նորից էին կրկնում։

3. Երբ որ առաջինը զույգ ալչի էր բերում, ինքն իրեն ֆըռ էր անում, ուստի նորից էր խաղում, երբ հաջորդներն էին զույգ ալչի բերում, հրապարակում նախապես թոխան լինելու դեպքում ֆըռ չէին համարվում, այլ ընդհակառակը, այդ բոլոր ալչիները յուրացվում էին թոխանի տիրոջ կողմից։ Թոխան չլինելու դեպքում ֆըռ էր համարվում։

4. Թոխանի տերը յուրացնում էր թե՛ ալչիները և թե՛ դոքերը, իսկ ճիքերին չդիպում էր, որով դոք շրջեցնելիս այն յուրացնում էր, իսկ չհաջողեցնելիս՝ խաղը հանձնում էր ճիք ընկած ճանի տիրոջը, ըստ որում չդիպել, նշանակում էր խփող ճանին հաղորդել այնպիսի պտտվող շարժում, որը նրան պահեր տեղում, իսկ հարվածվող ճանին մղեր հեռու և նրան շուռ տար։

Չդիպելուց հետո չդիպած և շուռ եկած ճանի տերը հեռվից իր ճանով հարվածում էր հակառակորդի ճանին, ըստ որում, երբ դրան շուռ էր բերում կամ իր ճանը թոխան էր կանգնեցնում ու խփվածը դոք էր ընկնում և կամ իրենն ալչի էր կանգնում և հակառակորդինը ճիք, այս բոլոր դեպքերում յուրացնում էր նրա ճանը, որի թվում նաև մյուս ճանները՝ համապատասխան դիրք ընդունելու դեպքում։

Կանոններ.—1. Չդիպելու կամ հեռվից հարվածելու ժամանակ խփող և խփվող ճանները, երբ զույգով թոխան կամ ալչի էին կանգնում, ֆըռ էր լինում, որով բոլոր կրողները իրենց կրած ճանները տերերին էին վերադարձնում և խաղը նորից սկսում։ 2. Երբ մեկը չդիպելուց հետո անհաջողության հետևանքով խաղը հակառակորդին էին հանձնում, վերջինս իր ճանի և առաջինի ճանի միջին տարածությունը չափում էր բերանբերի պահելով և ձեռքերը այս ու այն ճանները պարզելով. երբ որ ձեռքերը ճաներին հասնում էին, նա իրավունք էր ստանում իր ճանը վերցնել և գալ հակառակորդի ճանի մոտ, նրան չդիպելով և շուռ տալով, յուրացնելու համար։ Հակառակ դեպքում նա հարկադրված էր հեռվից հարվածել։

3. Հեռվից հարվածողի ճանը վրիպելու դեպքում, երբ ալչի կամ թոխան էր կանգնում, ինքը չդիպելու իրավունք էր ձեռք բերում, իսկ ճիք կամ

մատին ու բթամատին մեջ բռնած ատեն ճուկին կտուցը ցուցամատին նայի՝ ճանը աջ է, իսկ բթամատին նայած ատեն՝ ձախ է»։

84 Ախ. I, 139. Ճանի նախապատիվ երեսը ճուկն էր համարվում, ապա՝ թաֆը, սալը և կոռը։ Այդ պատճառով էլ ճուկ չկանգնող ճաների թաֆի վրա հերունով ծակեր էին առաջացնում և արճիճ լցնելով ծանրացնում։ Արճիճի ծանրությունը ճանին ձգում և ճուկ էր կանգնեցնում։

85 Այս խաղի մի այլ տարբերակն էր «կենտը», որը դրսևորվում էր մեկական ճանով։ Խաղի ընթացքում թոխանն ալչիին չէր ուտում, այլ նրանք իրար ֆըռ էին անում։ Մյուս կարևոր տարբերությունն այն էր, որ «կենտ»-ի մեջ մի անգամ տանողը հակառակորդի ճանը չէր վերցնում, այլ նրան հայտարարում էր «շուռ տված», այսինքն մի անգամ պարտական դարձած։ Հաջորդ մոմենտի ժամանակ, երբ դարձյալ նույն կրողն էր տանում, այս (երկրորդ) անգամին արդեն ճանը վերցնում էր։ Իսկ երբ մի անգամ մեկն էր «շուռ տալիս» և մյուս անգամ մյուսը՝ հավասարվում էին և նորից սկսում։

Պատմում էին, թե այս խաղը հնում խաղում էին չքավոր երեխաները, որոնք ճաներ քիչ էին ունենում։

դոք ընկնելու դեպքում խփելու ենթակա ճանի տեր-ը ձրիաբար վերցնում էր նրա խփած ճանը և շարունակում էր չքոթել մյուս ճանները։

4. Չոքելիս ճանը ճիքից դոք կամ դոքից ճիք շրջելու դիտավորության ժամանակ, երբ իր ճանը թոխան էր կանգնում և հակառակորդինը չէր շրջվում, դարձյալ յուրացնում էր։ Նույնն էր նաև ալչին։ Թոխան կանգնելու դեպքում կոչվում էր «թոխա տակը», ալչի կանգնելու դեպքում՝ «ալչին տակը»։ (Բ. ժխ. ձ.)։

372. ՉԱԼՈՒ

Կոտայքում մասնակցում էին 2—4 պատանի տղաներ։ Խաղում էին նաև ձմռանը՝ սառույցների վրա։ Նայած պայմանավորվածությանը, 4 հոգով խաղալիս կարող էին երկուական հոգով ընկեր դառնալ և արդյունքը բաժանել ու կորուստը միասին կրել։

Յուրաքանչյուր խաղակից ունենում էր իր գցելու երկու ճանները, որոնց ալչուն ու թոխանը քարերին քսելով հղկված էին լինում։ Սրանք գիլա անունն էին կրում։

Առաց վիճակահանության հերթով զիլաները սորում էին կանգնած վիճակում այնպես, որ «ծունկը չկոտրվեր»։ Երբ սրա զիլաները գույգով թոխան կամ ալչու էին կանգնում, ասում էին «հեչ», որից հետո սրանց տերը՝ զիլաները վերցնում էր և հաջորդը իր զիլաներն էր գցում։ Երբ որ սրա զիլաներից մեկը ալչու և մյուսը թոխան էր կանգնում, կոչվում էր չալու։ Եթե հաջորդ բոլոր գցողների, որոնց թվում նաև «հեչ» եղողի ճանները բոլորովին չէին կանգնում, կամ դրանցից միայն մեկը ալչու կամ թոխան էր կանգնում, չալուի տերը հավաքում էր բոլոր ճանները։ Ենթադրենք, թե վերոհիշյալ երկրորդ խաղացողի ճանները չէին կանգնում, այդ դեպքում երրորդ խաղացողը գցելիս, երբ ստանում էր մեկը կանգնած և մյուսը պառկած ճաներ, փաստորեն սկսվում էր բուն խաղը։ Չորրորդն այս անգամ գցում էր իր ճանները, որին հետևում էին նաև նախկին «հեչ» եղածները։

Ասենք թե երրորդից հետո մյուսների ճաններից ոչ մեկը չէր կանգնում։ Այդ դեպքում, եթե երրորդի ճաներից մեկը ալչու էր կանգնած, նրա տերը յուրացնում էր բոլոր ճիք ընկածները, իսկ եթե թոխան էր կանգնած՝ բոքերը։ Եթե տվյալ դեպքում երրորդի ճաներից մեկը ալչու էր կանգնել։ այդ դեպքում հավաքելով ճիք ընկածները, իր կանգնած ճանով շախատամ ձևով խփում էր մնացած ճաներին մեկական անգամ, նրանց բոքից ճիք շրջելու նպատակով, որով նույնպես յուրացնում էր։ Իսկ եթե խփելիս նրան չէր հաջողվում շուռ տալ, այդ դեպքում տվյալ ճանի տերը իր ճանով խփում էր նրա ճանին նույն ձևով և նույն նպատակով։ Այս ձևով վերջի խփողը կարող էր կրել մնացած ճաները, որից հետո խաղը կրկնվում էր։

Երբ այնպես էր պատահում, որ խփողի ճանը վրիպում էր, խփվող վեգի տերը յուրացնում էր վրիպած ճանը և շարունակում էր խաղը։

Կանոններ.—1. Խաղի ընթացքում, երբ որևէ մեկի երկու ճանը. կրված էր լինում, նա խաղից ժամանակավորապես դուրս էր մնում, իսկ մեկը կրվելու և մյուսը դեռևս հրապարակի վրա մնալու պարագայում նա շարունակում էր խաղին մասնակցել։ 2. Երբ երկու հոգի իրար հետևից չալու էին բերում, խաղը նորից էին կրկնում։ 3. Ընկերոմի խաղալիս խաղը դրսևորում էին անհատական կարգով, բայց արդյունքները միասին էին բաժանում։ (Բ. ժխ. ձ.։ Համմտ. Ախուր «ՎԵԳԻ ԽԱՂ»-ը. Ախղ. ձ.)։

373. ՔՐՑՐԼՈՒՎԵՆ—ԳՑԵԼՈՒՄՈՆ

Շահումավանում խաղում էին միայն պատանի տղաները, տարվա բոլոր եղանակներին, դրսում կամ ներսը։ Երկու կամ երեք հոգի կենտ կոճին, կամ ճոխատը գցում էին գետնի վրա։ Երբ մեկի կոճին ալչու էր կանգնում, իսկ մյուսներինը բոլորը ջիք, ալչուի տերը տանում էր մյուսների բոլոր կոճիները։ Եթե ալչուի տեղ թավ էր կանգնում, և մյուսներինը բոլորը թուփ, թավի տերը նույնպես տանում էր մյուսների բոլոր կոճիները։ Եթե երկու հոգու կոճիները միասին հատուկ կամ ճոխատով ալչու կամ թավ էին կանգնում, փոռա (հավասար) էր լինում, այդ դեպքում տանել չէր լինում, իսկ եթե մեկի կոճին ալչու էր կանգնում, իսկ մյուսներինը՝ մի մասը ջիք, մյուս մասը թուփ, ալչուի տերը առանց խփելու ջիք եկածները վերցնում էր, իսկ թուփ եկածներին խփում։ Եթե խփելով շուռ էր տալիս ջիքի վրա, վերցնում էր, եթե դարձյալ թուփ էր մնում, իրա կոճին գետնին էր դնում, որ

այժմ թոփի տերը խփի։ Եթե խփելիս չէր դիպչում, փուստ էր գալիս, նորից էր սկսում կոճինեը գցել։ Եվ այսպես շարունակ։ (ԳԹ. III, № 18։ Համմտ. Վանա «Ճան խաղալ» խաղը. Խ. ժԽ. ձ. 38)։

374. ԽՈՒՄԱՐ ԿԱՄ ՊԱՇ

Խաղում էին երկու կամ շատ անձեր՝ ընկույզ, կաղին, կարմիր ձու, վեգ և դրամ շահելու համար։

Վերցնում էին երկու լազված վեգ։ Մեկն ասում էր՝ այսքան կաղին (վեգ կամ կոպեկ) քցի գա՛։ Մյուսը երկու վեգն էլ աջ ձեռքում բռնած միաժամանակ գցում էր գետին. եթե վեգերից մեկը ալչու, մյուսը չիկ կամ մեկը թավ, մյուսը թիք էին ընկնում, ձգողը տանում էր առաջարկվածը, իսկ եթե ալչու և թիք, կամ թավ և չիկ էին գալիս, նույնքան վճարվում էր, իսկ եթե երկու վեգերն էլ ալչու կամ թավ էին գալիս, կրկինն էին ստանում, իսկ երբ թավ և ալչու էր գալիս, կրկինն էր վճարվում։ (Եվ. ժԽ. № 65, էջ 5)։

375. ՓՈԽԸՆԴՈՑԻԿ

Երկուսից-չորս տղաներ գետնին ճան էին սորում. ճուկ գալու դեպքում ճանի տերը շահում էր երկու միավոր, թաֆինը՝ մեկ, իսկ սալ ու կոռինը՝ ոչինչ։ Այս ձևով հաշվելով՝ ով որ նախապես որոշած 20—30 միավորը շուտ էր լրացնում, նա հաղթում էր մյուսներին։ Հաղթողը ճանի կոռի մեջ փոշի էր լցնում և ձգտում էր լցնել հաղթվողի բերանը, բայց վերջինս ցուցամատը բերանի առջև արագ-արագ տարուբերելով արգելում էր փոշու՝ փոխնդի մուտքը, որից և խաղի անունը։ (Ախ. I, 180 (վ.)։

376. ՍՆՈՑԻԿ

Վանում խաղում էին երկու հոգով, որոնցից յուրաքանչյուրը միանգամից երեք ճան էր գցում, աշխատելով դրանք բերել միևնույն կողմի վրա, այսինքն՝ երեքն էլ ճուկ կամ թաֆ, սալ կամ կոռ։ Ում որ հաջողվում էր այդպես բերել, նա մի խաղ էր շահում։ Եվ նախապես որոշած թվին այդ ձևով շուտ հասնողը մի անգամ ևս էր գցում երեք ճաները, որոնցից օրինակի համար երբ մեկը կոռ էր գալիս, մյուսները՝ ճուկ, ետ մնացողը պարտավոր էր իր երեք ճաներով նույնը բերել. այդ փորձն սկսելուց մինչև պատվերի կատարումը նա հաղթողից ծեծվում էր։ Այս գործողությունն էր, որ ծնեցնել էր կոչվում, որից և խաղն ստացել է ծնոցիկ (ծնեցնելու խաղ) անունը։ (Ախ. I, 129։ Համմտ. նույն տեղի «Ծեր» խաղը ն. տ., էջ 128—129)։

377. ՄԱՏԵՓՈՒՑԻԿ

Խաղում էին միայն երկու հոգով՝ մի վեգով։ Ով թոխան էր բերում, ծալում էր մի մատը, ով ալչու էր բերում՝ երկուսը։ Վեգի մյուս երկու կողմերը (սոֆն ու գողը) հաշվի չէին առնում։ Գցողը անընդհատ գցում էր, քանի դեռ թոխան ու ալչու էր գալիս, բայց հենց որ սոֆի կամ գող էր գալիս, վեգը հանձնում էր ընկերոջը։ Հաշվելիս մինչև հինգը խփում էին ձախ ձեռքի մատները և ապա դարձյալ հաշվելով մինչև հինգ՝ բաց անում միևնույն մատները։ Ով առաջինը կարողանում էր խփել և բանալ հինգ մատը՝ նա քաշում էր մյուսի ականջը՝ հարցնելով.

— Էշը ջուրը տարե՞լ ես։
— Տարել եմ,—պատասխանում էր տարվողը։
— Պա՞ղ ես խմցրել, թե՞ տաք։
— Տա՛ք։
— Պաղեցրա՛։
— Պաղցրի։
— Տաքցրա՛։
— Տաքցրի։ (Եվ. ժԽ., № 71, էջ 74)։

378. [ՎԵԳԱԽԱՂԻ ԵՐԳԵՐ]

1.

Վանում վեգը առաջին անգամ սոթելիս արտասանում էին այս երգը և ապա վեգը գցում.

Ակլե դյուկլե տնազ ա,
Շավեռ մավեռ տուտուզ ա,
Էծիկ մեծիկ մազոտ ա.
Ամբար աղեն պարոն պստիկ,
Մեջ կոլոտիկ։
Տանակ սրեմ,
Ձեր խավերաց վիզը կտրեմ.
Ըզտե կոճակ,
Տերը պողոճակ,
Ճա՛կ, ճո՛ւկ։ (ԳՇ. ՎՍ, I, 20—21)

2.

Նույնը կար նաև Արթիկի շրջանում.

Ակլե, տուկլե
Ջամըռղա,
Ջարուխ չըմրըն
Պուպուղա.
Ոսկե նուքե,
Ալ բաբաթ,
Շըմե վարա,
Մախաե կոճակ.
Տո՛ւր պլոճիկ,
Ճանին ճո՛ւք։ (Բ. ժխ. ձ.)։

3.


Ծո ա՛յ տըղաք, ելեք ի վեգ,
Գլտոր մըլտոր բաղդ նայեցեք.
Պէ՞կ եք, մո՞նթ եք,
Խապար տըվեք։ (Ա.Դ. I, էջ լա)

379. [ՆՇԱՆԱՒՈՒԹՅՈՒՆ]

Մեկ մարդ կերթեր արտը ըռնճպրուքեն կենըր. կընըկ խաց կը տաներ։ Կընըկ ինչ կը խասներ արտ, կկընըկ կը պառկըցըցեր քյամկը վերեն, մատնիք (ակ) ու դներ ճակատը վերեն, նետ անեղ զարներ, մատնըքը օղենի անցըցեր, կըսեր.—կընը՛կ, էլ մարդ աշխարհի վերեն կտրըճ կա՞, թե իս... մնակ։ (ԷԱԺ, IV, 76 (Մկս.)։

380. [ՆՇԱՆԱՒՈՒԹՅՈՒՆ]

...Ուզընկանը ո՞նց ա ուզըմ։
Ասըմ են.—Ախչըկա հառաչին մի սինի կա, սինու մեչ մի խնձոր, էն ուզընկանը թե կարեցավ էն խնձորին նետով տալ, էն վախտը էտ ախչիկը նրանն ա, թե չէ՝ նրանը չի։
...Էս թաքավորի տղեն ասեց.—Ծտեք տեննամ, ես կա՞րամ տալ։



Նկ. 39. Նշանառություն մատանու միջով (բնագիր № 379)
Նկ. Ռ. Մնացականյանի

...Տղեն նիլավ ձին, նետը առավ ձեռը։ Մտիկ արեց ախչկա հառաչի խնձորին, նետով տալու հետ խնձորը թռավ՝ դիպավ ախչկա դոշին։ (Մրգ. I, 265—266 (Աշտ.)։

Է. ՋԻԼԻԿԱԽԱՂԵՐ

Այստեղ ներկայացված են այն ամենատարածված գործիքավոր խաղերից մեկի տարբե-



Նկ. 40. Հակե խնձորին նշան բռնելը (բնապիր № 380)
Նկ. Ռ. Մնացականյանի

381. [ԽՆՁՈՐԻՆ ՆՇԱՆ ԲՌՆԵԼ]

Գանձակի Փիփ, Բանանց և այլ գյուղերում նորապսակներին եկեղեցուց նորից հարսնացուի տունը վերադառնալու ժամանակ հաքսի հերանց բակում մի ձողի ծայրին խնձոր էին ցցում, իսկ ներքևից քաշ տալիս նորահարսի ձեռքով գործած մի զույգ գուլպա, ապա մակարներն սկսում էին հրացան արձակել և աշխատել գնդակով խփել խնձորին ու թռցնել այն ձողի ծայրից. ում որ հաջողվում էր այդ, նա բոլորի կողմից գովաբանվում և իբր մրցանակ՝ ստանում այդ գուլպաները։ (Եվ. Ա.Հ. VI, 258)։

րակները, որոնք հայտնի են **Ջիլիկ, Սիր ու բիր** *և այլ անուններով։ Խաղը ծավալվում է հակընդդեմ խմբերի միջև, ձևով հիշեցնելով ձեռնագնդակներով խաղացվող խաղերը։ Ընդհանուրի չարչարանքին է ենթարկվում ճիպոտի հարվածով հակառակորդների սահմաններն անցկացվող փայտե փոքրիկ ձողիկը, որի տարբեր անուններից էլ ծագում են խաղի տարբերակների անունները։*

Սիրը կամ չիլիկն, ըստ էության, չարչարանքի ։ ենթարկվում իբրև ֆրատրիալ խմբավորումների մրցման առարկա, ինչպիսին եղել է տառապող գնդակը շատ ցեղերի ու ժողովուրդների նման խաղերի մեջ։



Նկ. 41. Հարսնաւոի ժամանակ խնձորին նշան բռնելու սովորությունը Գանձակում
(բնագիր № 381)

Նկ. Ի. Մնացականյանի

Չիլիկախաղերը զարգացնում են երեխաների ուշադրությունը, հարվածելու ճշգրիտ ձևերը, ուղղահայաց և հորիզոնական նետումները տարածության մեջ, գործողություններն արագ կատարելու ունակությունները են։

382. ԿԸՆԴԱՓԵՏԻ (ԿՈՒՆԴԱՓԵՏԻ)

Շուլավերում խաղում էին մինչև 10 հոգով, աշնան ցրտերին։ Խմբերի բաժանվելը կատարվում էր հալա-հալա գալով։ Փոս-բույնը հոբ (ոփ)էր կոչվում։ Փոքր ձողիկը կունդ և մեծը կընդափետ էր կոչվում։ Պնդություն ապահովելու նպատակով սրանք պատրաստում էին հունի կամ ջիլամատրի (գիլամատրի) ճիպոտներից։ Կընդափետի ծայրը խազում էին, որ կունդը վրան կանգներ։ Խաղն սկսող խումբը որոշում էին թուք ու ցամաքով։ Խաղից առաջ երեք անդամ թոխմախ էին տալիս, այսինքն՝ բռնում էին կընդափետի ծայրերից և կունդը դնում վրան, հետո ծուլ-ծուլ անելով խփում կնդին ու կընդափետը դնում հոբի վրա։ Երբ կունդը ընկած տեղից այնպես էին նետում, որ կընդափետին էր դիպչում, հոբի խփողը կարվում էր։ Թոխմախը հաջող ավարտողը կընդափետը երկար բռնում էր, կունդը դնում ծայրի խազին, հետո ծուլ էր անում և ամուր խփում։ Հակառակորդները, երբ կունդը բռնում կամ չանթում էին և կամ կունդը հոբա էին գցում, հոբից խփողը շարքից դուրս էր գալիս։ Դարձյալ հոբի խաղացողի կողմից կընդափետով հակահարված ստացած կնդի նոսից արագ հասնողին էր իրավունք վերապահվում կունդը հոբը գցել։

Խաղն սկսելուց առաջ որոշում էին սալ-երի թիվը։ Նայելով հասակներին, լինում էր 10, 20, 50, 100 սալ։ Իսկ սալ ասածը կազմվում էր այսպես. համրելու համար կընդափետը դնում էին գետնին ու ասում.

Էլ մի կ՚ըրի,
Հալալ պ՚ըրի,
Ավանանուկ,
Կաթնաբրթուկ,
Լանքիս պերթը,
...Մի սալ։

Այսպիսով խաղերգի 7 տողին համապատասխան 7 կընդափետի չափը մի սալ է։ Այսպես համրելով լրացնում էին որոշած սալերի թիվը։ Ո՛ր խումբը որ իր խաղը շուտ էր լրացնում, հակառակ կողմի անդամներին իբրև պատիժ զու էին կանչել տալիս, որը կայանում էր հետևյալում։ Հաղթող կողմից յուրաքանչյուրը կունդը ցցում էր հոբի մոտ, կընդափետերով խփում, թոցնում, իրեն հետ հալա եկող ընկերը հոբից պետք է զու կանչելով գնար, ընկած կունդը վերցներ ու առանց զուն ընդհատելու, ետ գնար հոբը։ Վազելիս զուն ընդհատելու, այսինքն՝ շունչ առնելու դեպքում նա համարվում էր կրտված, ուստի՝ նորից կունդը ցցում էին հողում, նորից խփում, որպեսզի նա նորից կանչելով կունդը բերեր մինչև հոբը։

Մի այլ վարիանտում կունդը բերողները «զու հե՛ծի» կամ «զա՛նգա՛կ, օ՛շո՛, պա՛մբա՛կ, օ՛շո՛» էին ասում։

Այսպիսով, հակառակ կողմի բոլոր անդամները զու կանչելուց հետո տիրանում էին կընդափետին, եռանդով խազում, որ իրենք էլ նրանց զու կանչել տային։ (ԳԲ. III, № 18)։

383. Կ Ե Ն Դ Ե

Խաղը Ղարադաղում կոչվում է կենդե կամ կենդե մրհակ։ Կենդեն թզաչափ և 3 սմ տրամագծով ձողիկ է, որի ծայրերը սրած են լինում, որպեսզի գետնից բարձր կանգնեն։

Մրհակը 80 սմ երկարության ձող է, որը պատրաստվում է նապկե փայտից։

Խաղացողները երկու մերուն են ընտրում և սրանց մոտ հալի գալով բաժանվում երկու հավասար խմբերի։ Մարունները քար են պահում. վերջինս ում մոտ որ մնում է, նրա խումբը նախաձեռնողն է հանդիսանում և վերցնելով կենդե մրհակը, տալիս է իր ամենափոքրին։ Մյուս խմբի անդամները ցրվում են հրապարակում, որպեսզի կարողանան բռնել նետվող կենդեն։ Կենդեն վերցնողը այն դնում է գետին, աջ ձեռքով բռնած մրհակով թեթև հարվածում է կենդեի ծայրին. վերջինս օդն է բարձրանում. խփողն այն բռնում է ձախ ձեռքով և նորից դեպի օդը նետելով մրհակով հարվածում է դեպի մյուս խումբը։ Այդուհետև մրհակը դնում է գետնին։ Եթե մյուս խումբը կարողանում է կենդեն օդում բռնել կամ արդեն գետին ընկած կենդեն նետելով դիպցնել մրհակին, «ածողը»՝ բնից խփողը սատկում է և

նրան փոխարինում է մյուս ընկերը։ Իսկ եթե չի հաջողվում ոչ բռնել և ոչ էլ խփել, ապա նախկին ածողը շարունակում է խաղը։ Ածողը չորս անգամ սովորական ձևով է ածում, իսկ հինգերորդ անգամին «կըրճը կավ» է անում, այսինքն կենդեն բռնում է ձախ ձեռքում, նետում օդն ի վեր և աջ ձեռքով պահած մըհակն անց է կացնում նուի կողմից ոտքերի արանքով ու հարվածում կենդեին, որը սովորաբար քիչ տարածություն է անցնում. եթե այս անգամ էլ նրանք չկարողանան հարվածել կամ բռնել, ածողը մի «սաղ» է անում, «որը մի տեսակ, մի աներևույթ ընկեր է լինում». եթե իր ընկերներից մեկն ու մեկը «սատկում» է, ապա այդ սաղը փոխարինում է նրան։

Խաղը այնքան է շարունակվում, մինչև որ դրսեցիները հաջողեցնում են ներսում գտնվողներին ամբողջովին սատկեցնել ու իրենք անցնել նրանց տեղը։ (Եգ. 636—638)։

384. ՋԻԼԻԿ ԴԱՍՏԱ

Խաղում են Կոտայքում և այլուր գարնանը կալերում կամ բաստանների վրա պատանի և երիտասարդ տղաները, 2—20 հոգով։ Ընդարձակ խաղավայրի մի կողմում փորում են մի փոքրիկ փոս, որը կոչվում է ջիլիկ դաստի փոս կամ օբա։



Նկ. 42. Միր ու բիր խաղը (բնագիր № 384—385)
Նկ. Ռ. Մնացականյանի

Խաղի պարագաներն են՝ դաստա՝ 50—80 սմ երկարությամբ և 2—4 սմ տրամագծով ճյուղ կամ տախտակ, բռնակով. ջիլիկ՝ 10—15 սմ երկարությամբ և 2—3 սմ տրամագծով ճիպոտիկ։

Խաղը սկսելու համար երկու հոգի կանգնում են մայր, իսկ մնացածները հալա-հալա գալով բաժանվում են երկու հավասար խմբերի, ապա վիճակ են գցում իրենց հայտնի ձևերով։ Հատկապես այս խաղին հատուկ է «դմբուզ պահելու» ձևը։ Օբայի վրա կանգնողները կոչվում են «վերիններ», իսկ նրանցից որոշ հեռավորության վրա կանգնողները՝ «վարիններ»։ Այս խաղը բաղկացած է «դմբուզ», «փոքր յոլլաբ» և «մեծ յոլլաբ» մասերից։

Դմբուզ-խաղը սկսող խմբից մեկը, սովորաբար մայրը, կանգնում է օբայի վրա, մի ձեռքով բռնում է դաստայի բռնակից կիսաուղղահայաց դիրքով, նրա վրա տեղավորում է ջիլիկը այնպես, որ դաստայի հետ կազմի խաչաձև և շփվի թե՛ ձեռքին, թե՛ դաստային։ Հետո այդ նույն ձեռքի շարժումով ջիլիկը գցում է դեպի վեր և դաստայի ներքևի մասով անմիջապես հարվածում ջիլիկին։ Վարիններից 10—20 քայլ հեռավորության վրա կանգնում են և աշխատում օբայից թռչող ջիլիկը օդում բռնել։ Երբ հաջողվում է, խմբերը փոխում են իրենց տեղերը, իսկ երբ ջիլիկն ընկնում է գետին, վարիններից մեկն այդ ընկած տեղից ջիլիկը նետում է դեպի օբան, որտեղ խփողը ջիլիկը թռցնելուց հետո դաստան հորիզոնական դիրքով դրած է լինում օբայի վրա։ Եթե ջիլիկը կպչում է դաստային, ապա խփողը համարվում է «կըռտըված»։ Սովորաբար ամբողջ խաղի ընթացքում եթե մեկը կռտվում է, շարքից դուրս է գալիս, իսկ խաղը շարունակում է ընկերներից մեկը, իսկ եթե մյուս ընկերները արդեն կռտված են, խաղացող խմբերը փոխում են իրենց տեղերը։ Ջիլիկը դաստային չկպչելու դեպքում այս գործողությունը կատարում են ևս երկու անգամ։ Եթե երեք անգամն էլ «վարիններին» չի հաջողվում ջիլիկը բռնել, կամ ընկած տեղից նետել դաստայի վրա, ապա խփողը «ընկնում է փոքր յոլլաբ», այսինքն մի ձեռքով ջիլիկը գցում է օդի մեջ, մյուս ձեռքով բռնած դաստայով, ոչ շատ ուժեղ, հարվածում է ջիլիկին, այնպես, որ այս անգամ ջիլիկը կարող է թռչել ավելի հեռու, քան «դմբուզի» ժամանակ, ուստի վարիններն տեղաշարժվում են մի քանի քայլ ավելի ետ։

Սովորաբար ամբողջ խաղի ընթացքում, եթե

վարիններից որևէ մեկին հաջողվում է չիլիկը օդում բռնել, խաղացող խմբերը տեղերը փոխում են, եթե միայն ձեռքերի մատներով կպչում են չիլիկին, խփողը համարվում է կռտված, իսկ եթե ընկնում է գետին, վարվում են նույն ձևով, ինչ որ դմբուղի ժամանակ, միայն այս անգամ խփողը դաստան չի դնում օբայի վրա, այլ ձեռքն է պահում և սպասում, որպեսզի դեպի օբան նետած չիլիկին, դեռ գետին չընկած, հակահարված տալով օբայից հեռու շպրտի։ Եթե չիլիկը ընկնում է օբան, խփողը համարվում է կռտված, իսկ եթե չի ընկնում, հաշվում են, թե չիլիկը քանի դաստաչափ հեռավորության վրա է ընկել օբայից։

Փոքր յոլլաբի գործողությունը ևս 2 անգամ առանց կռտվելու կրկնելուց հետո, եթե 6 դաստաչափ էլ լրացել է, նախ կենդանանում է կռտված ընկերներից մեկը, այսինքն նորից մտնում է խաղի մեջ և երկրորդ խփողն «ընկնում է մեծ յոլլաբ», այսինքն խփողը չիլիկը ձախ ձեռքով գցում է օդի մեջ, իսկ աջով բռնած դաստայով՝ ամբողջ ուժով հարվածում է չիլիկին, որը թռչում է մինչև 30—35 մ։

«Մեծ յոլլաբ» խփելիս չիլիկը այնքան հեռու և այնքան տարբեր ուղղություններով է թռչում, որ դժվարանում է թե՛ նրան բռնելը, թե՛ ձեռքով օբայի վրա նետելը։ Պատահում է, որ մեծ յոլլաբ խփողը կամ հոգնելուց, կամ ընկերներին բավականություն պատճառած լինելու համար խփելու իրավունքը տալիս է իր ընկերներին։

Մեծ յոլլաբի ժամանակ այս յոլլաբը խփողը յուրաքանչյուր անգամ չիլիկին խփելու հետ միասին վարիններին է ուղղում ներքև բերված խոսքերից մեկական նախադասություն։

Հաց եմ քաշում սովածացած կլինեք։
Է՛ս սեղանները։
Է՛ս սուփրեն։
Է՛ս աղաթասերը։
Է՛ս հացը։
Է՛ս շշերը։
Է՛ս տալերկեքը։
Է՛ս բողկը։
Է՛ս քուֆթեն։
Է՛ս տոլմեն։
Է՛ս փլաֆը։
Էս իշխան ձուկը, և այլն։

Երբ արդեն խփելուց հոգնում է, մեծ յոլլաբ խփողը վարիններին է ուղղում վիրավորական նշանակություն ունեցող

Էլ զատ չկա.
Լկի, լկի,
Շորվա լկի

խոսքերը, որով կամ վերջացնում են խաղը, կամ սկսում են կռիվ սարքելով խաղը դադարեցնել։ (Թ. Ժխ. ձ. (Կտ.)

385. ՍԻՐ ՈՒ ԲԻՐ

Ակնում խաղի փոքր պարագան սիր էր կոչվում, իսկ խփող ձողը՝ բիր։ Երկու խումբը մի սիր և մի բիր էր ունենում։ Խաղն սկսողը սիրը դնում էր իրարից մի քիչ հեռու դրված երկու քարի վրա, որով կամուրջ էր ձևացվում, և բիրով խփում էր դեպ հեռուն։ Օդում բռնելը չհաջողեցնելիս ցածիններդ սիրը նետում էին քարերի արանքը դրված բիրին խփելու։ Այս երկուսը չհաջողեցնելու դեպքում բնից խփողը մի խաղ էր շահում և խաղը շարունակում։ Դերերը փոխվում էին, երբ որ ցածիններդ սիրը օդում բռնում էին կամ՝ երբ ներսիններդ բոլորն էլ հերթով սիր էին նետում։ Խաղը շահում էր պայմանավորված թիվը շուտ լրացնողը։ (ՃՀԱ, 179)։

386. ԽԻՔ ՈՒ ՏԼՈՒՆԿ ԿԱՄ ՏԻՔ ՈՒ ՏԼՈՒՆԿ

Սասունում խաղի խփող գործիքը խիք կամ տիք էր կոչվում, իսկ նետվողը՝ տլունկ։ (Պետ. ձ.)։

387. Զ Ա Լ Մ Ա

Շապին-Գարահիսարում խաղի փոքր գործիքը՝ սիրը, չալմա էր կոչվում։ Բույնը ներկայացնում էր մի քար կամ քարերի կույտ, չոբանի քար անունով։ 15—20 քայլ հեռու կանգնողը, որ պետք է չալմային հակահարված տար իր փայտով, չոբան էր կոչվում։ Դերերը փոխվում էին, եթե չոբանը կարողանում էր հակահարված տալ չալմային կամ դեպի չոբանի քարը նետելիս չալմայի ու քարի միջին տարածությունը հասցնել մեկ մահակաչափից պակաս չափի (Հս. Խ. ձ.։ Համմտ. Նոր Բայազետի «Կաշ» խաղը. Բղ. ձ.)։

388. ՋԻԼԻ ԴԱՍՏԱ

Քանաքեռի մի այլ վարիանտում խաղը հետևյալ տարբերություններն ունի: Բեկ կանգնելուց և հալալ-հալալով երկու խմբի բաժանվելուց հետո խաղն սկսելու համար բեկերը դաստա են պահում: Բունը, որտեղից սկսվում է խաղը, ջուլա է կոչվում: Այստեղ էս խաղը երեք մասից է բաղկացած, որոնցից մեկը թոխմախ, երկրորդը շիլլա և երրորդը՝ եղլա է կոչվում:

Եթե վարիննների կողմից ջուլայի վրա դրված դաստային նետած շիլին դրան չի կպչում, խփողը դառնում է շիլլա, այսինքն՝ կատարում է նույն գործողությունը, ինչ որ նախորդ խաղի փոքր յոլլաբի ժամանակ: Այս դեպքում էս, եթե դեմքինները շիլին բռնում են, խփողը այրվում է, իսկ երբ չեն բռնում, գետին ընկած շիլին նետում են դեպի ջուլան: Եթե միանգամից կամ մի քանի խաղի ընթացքում 10 դաստաչափը լրանում է, շիլլան դառնում է եղլա: Եղլա ընկնողը հաճախ խաղը տալիս է իր՝ դեռևս չխաղացած ընկերներին, որպեսզի նախ ինքը հանգստանա, ապա՝ այն ժամանակ խաղա, երբ պետք է կենդանացնել այրված ընկերոջը, որովհետև ընկեր ողջացնելու իրավունքը վերապահվում է միմիայն եղլա խաղացողին:

Եղլան խաղում են միևնույն ձևով, ինչ որ շիլլան, և այրված ընկերոջը կենդանացնում են, երբ շիլին ջուլայից 10 դաստայաչափ մի կողմ է ընկնում:

Եղլա ընկնողը խաղում է ընդմիջումներով, երբ պետք է այրված ընկերներին կենդանացնել կամ երբ իրեն արդեն կենդանացնող, այսինքն եղլա եղած խաղընկեր կա իր խմբում: (Բ. ժխ. ձ.):

389. ՋԻԼԻԿ ԴԱՍՏԱ

Խաղը նույնն է: Մասնակցում են 10—12 տ. տղաները: Խաղն սկսողը որոշվում է դաստայի միջոցով. խաղացողը կանգնում է 60—70 սմ շառավիղով գծված շրջանի մեջ, շիլիկը դնում է բռունցքի վրա, շպրտում է վեր և դաստայով խփում, հետո դաստան դնում է շրջագծի մեջ: Եթե վարիննների կողմից ընկած շիլիկը երեք անգամ դեպի շրջագիծը նետելիս երբեք չի դիպչում դաստային, ապա վերիննների կտրվածը կենդանանում է:

Խաղը բաղկացած է երկու մասից՝ դմբուզից և յոլանից: Դմբուզի ժամանակ կտրվածին կենդանացնելու համար խաղի հաջորդ պահին յոլանի ժամանակ ընկածը դաստան բռնում է աջ ձեռքով, և շիլիկը՝ ձախով. հարվածելով շիլիկին, ինքը շրջագծի մեջ դաստայով ետ է շպրտում վարիննների կողմից դեպի իրեն նետված շիլիկը: Եթե շպրտված շիլիկը շրջագծից 7 դաստաչափ հեռու է ընկնում, կտրված ընկերն ազատվում է, բայց եթե շրջագծից գոնե մեկ դաստաչափ հեռու չի ընկնում, ինքն էլ է այրվում:

Դմբուզ մոմենտը կատարելիս, եթե ցածիննները շիլիկը կարողանում են օդում բռնել, ապա դմբուզը յոլանի դառնալով՝ խմբերի դերերը փոխվում են: (ՂՂ. ձ. (Կտ.): Համմտ. լ. ժՄխ., էջ 43—44՝ «Կտի» խաղը):

390. Տ Լ Ո Ի Լ

Խաղը Տարոնում կազմակերպվում էր գարնանը: Խաղատեղերն էին կալերը, կտուրները, մարգագետինները: Մասնակցում էին պատանի և երիտասարդ տղաները, որոնց թիվը հասնում էր մինչև 26-ի: (Մ. ժխ. ձ.):

391. ՀԱՏԻՈ—ԴԱՏԻՈ

Խաղում էին երկու՝ մեծ և փոքր փայտերով: Գետնին փոքրիկ փոս էին փորում, որ բուն էր կոչվում: Ընտրելով մայրեր, հալա-հալա գալով բաժանվում էին երկու խմբի: (Բ. Մխ., 105—106):

392. ՕԴԱՆ ԳԱՅԼՈ

Ապարանում խփվող ձողիկը լոր է կոչվում, իսկ փոսը՝ հոջ: Ցածից նետված լորը հոջի մեջ ընկնելիս խմբերի դերերը փոխվում են: Պարտվողներից մեկը «օդան գայլո» արտասանելով, առանց շունչ քաշելու վազում է դեպի հոջը. շունչը կտրած տեղից շարունակում է իր ընկերը և այսպես բոլոր պարտվողները: Եթե առանց շունչ քաշելու նրանք չեն հասնում հոջը, շալակում են մյուսներին և շնչակտուր եղած տեղից հասցնում հոջը: (ՄԱխ. ձ.):

393. ԴՈՒՇ ՓԵՏ

Դուշ փետ գիտե՞ս.—Փոքր մանկունք իսկ գիտեն։ Եթե այդպես է, երկար բացատրություն պետք չէ։ [Գարնանային] այս խաղ երկու հոգիով կարելի է խաղալ. մեկ՝ ներս, մեկ՝ դուրս։ Երկուքեն մինչև 20 հոգի կարեն խաղալ, երբ պատանի և երիտասարդ են, բայց 6, 7,8 տարվո տղայք 2—4 հոգվով կարեն խաղալ։ Փոքրեր ավելի շատ անգամ ձեռմանց խաղան, որ շատ դյուրին է, իսկ մեծեր գետմանց խաղան, որ բավական դժվարին է։ Պապով և թաց չորով ներսի և դրսի խումբը որոշեն։ Մի թզաչափ դուշ չորս մատնաչափ խոր փոսի մեջ դնելով, դուշի ծայր 2 մատ փոսի պռուկեն դուրս մնա։ Զարնող գավազանի ծայրով հանդարտիկ խփե դուշի դուրս մնացած ծայրի վերա, դուշն մի կանգուն փոսեն բարձրանա։ Զարնողն գավազանով ուժգին հարկանե զդուշն, որ քարընկեց մի հեռի երթա։ Դրսի խումբ աշխատի զդուշն բռնել և ներս գալ և եթե չհաջողեցան բռնել զդուշն ձեռքով ձգեն առ փոսն, որո վերա կա եդյալ գավազան։ Եթե դուշն դիպի այս գավազանին, դուշ զարնողն նստի և այլ ոք հարկանե զդուշն, եթե չդիպեցավ, առաջին կրկին և կրկին զարնե, մինչև կամ փստա, այսինքն կամ չհաջողի գավազանով հարկանել զդուշն և կամ դրսի խումբ զդուշն դիպեցուցանե ի գետին եդյալ գավազանին։

Սույն խաղի գլխավոր տեղիք են՝ ընդարձակ պողոտայք, արտորայք և գերեզմանատունք։ (Զ. № 4184, էջ 173ա, 173բ. (Վ)։ Համմտ. Ախ. II, 300—303 և Նաթ. 29)։

394. ԳԵՏՄԱՆՑ ՏՈՒՇՓԵՏ

Խաղը նույնն էր։ Փորում էին մի փոքրիկ բուն, կամ երկու քար իրարից քիչ հեռու դնելով՝ բնի կամ սրա վրա մի տուշ էին դնում։ Ապա ձեռաց փետի ծայրը բնի մեջ գտնվող տուշի տակը մտցընելով այն դուրս էին թռցնում, որը դրսեցիների կողմից բռնվում կամ նետվում էր։ (Ախ. II, 303 (Վ.)։

395. ԳԵՏՄԱՆՑ ՏՈՒՇՓԵՏ

Վանա սույն վարիանտի համաձայն, որը ավելի դժվար էր կիրառվում, գետնին շեղաղիր մի փոս էին փորում, որը նույնպես բուն էր կոչվում։ Տուշը կինով չափ դնում էին բնի մեջ և զարնելու փետով թեթևակի դիպչում տուշի դուրս մնացած ծայրին՝ այն օդում ճախրեցնելու նպատակով։ Տուշը ձեռքերի դիմացը գալուն պես ձեռնափայտի ուժգին հարվածով նետում էին դուրս։ Այս ձևով դժվար էր խաղացվում, ուստի բնից դուրս եկած տուշը հաճախ փստում (վրիպում) էր, դրա համար էլ թուր էին քաշում, այսինքն՝ ձեռաց փետը կորաձև շարժելով հարված էին տալիս։ (Ախ., II, 303—304)։ Համմտ. Նոր Բայազետի «Հիլուր» խաղը (նվ. ժխ. № 71, էջ 34—38)։

396. ՀԻԼՈՒՐ

Նոր Բայազետի սույն վարիանտի տարբերությունները հետևյալներն են։— Մասնակցում են 12—16տ. տղաները 2—12 հոգով։ Խմբերն ունենում են խմբավարներ։ Վիճակահանությամբ մի խումբը մնում է բնի մոտ։ Բունը ճոֆիկ է կոչվում։

Հոֆիկի խաղացողի՝ հիլուրը առաջինի մեջ գցելու գործողությունը կաթեցնել է կոչվում։

Խաղը կրկնելու դեպքում տանող խմբից հաջորդ խաղացողն է կատարում հիլուրի հետ կապված գործողությունները։ (Բգ. ձ.)։

397. ԽՈՒՊՈՒԼ

Խաղում են տղաները հարթ տեղերում՝ կալերում կամ բամանների վրա։ Խաղի պարագաներն են՝ խուպուլ՝ ծայրերը հակառակ երեսներից սրած փայտ, 15—20 սմ երկարությամբ և դաստա՝ տափակ տախտակ, 50×5 սմ մեծությամբ։

...Մեկական հերթ խաղալուց հետո ո՛ր խմբի հաշիվը որ ավելի մեծ գումար է կազմում, այդ խմբի բոլոր անդամներին շալակում են մյուս խմբի անդամները։ Շալակով անցնելու տարածությունը որոշում են հետևյալ ձևով. շալակվող խմբի մայրը վերցնում է միևնույն ձեռքը թե՛ խուպուլը և թե՛ դաստան։ Խուպուլը գցում է դեպի վերև և միևնույն ձեռքում բռնած դաստայով օդում խփում նրան։ Խուպուլին խփած տեղից մինչև նրա ընկած տեղը դառնում է շալակելի տարածությունը։ (Ր. ժխ. ձ.)։

398. Բ Ո Յ Ը Դ Կ Ա՛

Խաղը նույնն է։ Խաղն սկսողը չիլիկը հեռու նետում և դիմացինին հարցնում է.

— Բոյըդ կա՞,—այսինքն ուզում է ասել՝ եթե գաս, ոտքդ այս փոսի մեջ դնես, կարո՞ղ ես պառկել և ձեռքդ չիլիկին հասցնել։

Եթե չիլիկը մոտիկ է ընկնում, ասում է.—

—Բոյըս կա՛,—և պառկում, վերցնում է։ Եթե հաջողվում է, ապա դերերը փոխվում են։ Իսկ եթե չի հաջողեցնում, խաղացողն իր դաստան նետում է դեպի չիլիկը՝ դրան կպցնելու։ Եթե կպչում է, գնում է մոտը և դաստայով չիլիկը օդն է բարձրացնում, և «մեկ» ասելով շպրտում է հեռու։ Երկրորդ անգամ նույնը կրկնելիս ասում է՝ «երկո՛ւա», երրորդին՝ «ո՛չ ադամ», չորրորդին՝ «շները քեզ քաշ տան» կամ «չամիչ բաղամ»։ (ՂՂ. ձ. (Կտ.)։

399. Չ Ի Լ Ի Կ

Խաղում են Փ. Խանչալլիում գարնանը և մասամբ՝ աշնանը։ Մասնակցում են պատանի տղաները և աղջիկները, 2—4 հոգով։ Փայտ բռնելով որոշում են խաղն սկսող կողմը։

Խաղն սկսողը ունենում է երկու ճիպոտ, մեկը 25սմ երկարությամբ, որին հարվածում և չիլիկ անունն են տալիս և մյուսը՝ 70—80 սմ երկարությամբ, որով հարվածում են։ Նա կանգնում է նախապես գծված շրջանագծի մեջ, չիլիկը նետում է վերև և ճիպոտով խփելով՝ այն գցում է դեպի հակառակորդները, որոնք կանգնում են շրջագծից այնքան հեռու, որքան կարող է նետվել չիլիկը՝ միջակ հարվածի դեպքում։ Հակառակորդներից մեկը չիլիկն ընկած տեղից ձեռքով նետում է դեպի շրջանագիծը այն պայմանով, որպեսզի այն ընկնի շրջանագծից ոչ այնքան հեռու, որքան խփողի ճիպոտի երկարությունն է։ Երբ չիլիկը մոտենում է շրջանագծին այնպես, որ նրա հեռավորությունը ճիպոտի երկարությունից պակաս է լինում, համարվում է «խեխդ» և խաղն անցնում է նետողի ընկերոջը, իսկ ընկեր չունենալու դեպքում՝ հակառակորդին։ Իսկ երբ «խեխդ» չի ընկնում, այլ հեռու է մնում կամ դեռևս գետին չընկած շրջագծում կանգնողը իր ճիպոտով հարվածում ու դեն է նետում, այն ժամանակ խաղը շարունակողը վերջինս է լինում։ Այս կամ այն պարագայում, ուր որ չիլիկն է ընկնում, սրան է մոտենում գծամիջից խփողը և ճիպոտով հարվածում չիլիկի ծայրին այնպես, որ վերջինս շրջագծից հեռու ընկնի։ Այնուհետև նա չիլիկի ընկած տեղից մինչև շրջագիծն ընկած տարածությունը չափում է ձեռքի ճիպոտով։ Ճիպոտի 20 չափը մի միավոր է, որը կոչվում է մի «եզդի»։ Առաջին անգամ խփելիս, եթե «եզդին» լրացնում է, երկրորդ և երրորդ անգամ ևս է շարունակում խփել, ըստ որում առաջին անգամ խփելիս ասում է.

—Իմնթ՛ակ։

Երկրորդ անգամ—իշըն թ՛ակ։

Երրորդ անգամ—իշտ՛ննալ՛ակ։

Երբեմն խփում են 5 անգամ, ուստի չորրորդ և հինգերորդ անգամներին ասվում է.

—Ախրքալ՛ակ։

—Ջ՛արխ ու ֆ՛ալ՛ակ։

Նախապես պայմանավորված «եզդիների» թիվը լրացնողը կամ լրացնող խումբը հաղթող է ճանաչվում։ Պարտվածը կամ պարտված խմբի յուրաքանչյուր անդամը շալակում է հաղթողին կամ հաղթողներից յուրաքանչյուրին, տեղափոխում պայմանավորված տարածությունը։ (Վ. Ժխ. ձ.)։

400. Լ Ո Տ

Լոռիում խաղը նույնն է։ Գարնանն ու աշնանը սրան մասնակցում են 10—15 տ. տղաները։ Հալածվող փայտիկը լոտ է կոչվում։ Խաղատեղում գծվում է մի շրջան, որտեղից ներսի խումբն սկսում է իր խաղը։ Խաղը սկսողը լոտը գցում է շրջագծի մեջ, ձեռնափայտով բարձրացնում է օդը, ապա այստեղ հարվածում է դեպի դրսիննները։ Այդ նույնը կատարելով երեք անգամ, նա գալիս կանգնում է շրջագծի եզրին, որպեսզի դրսիննների կողմից նետված լոտը շրջանի մեջ չընկնի, և ինքը շարքից դուրս չգա։ Երբ գծապաշտպանի խփելով լոտը շատ մոտիկ է ընկնում շրջանին, դրսիններից մեկը լոտը վերցնում և աշխատում է ցատկելով ընկնել գծի մեջ, որով նույնպես գծապաշտպանը շարքից դուրս է գալիս։ (Շխ. ձ.)։ Համմտ. Բ. Մխ, 106—107)։

401. Տ Շ Ի

Խաղը Բաղեշում նույնն էր։ Տուշը օդն էր բարձրացվում ձեռնափայտով և նույնով խփվում առաջ։ Ցածիննները իրենց փայտերով ետ էին մղում։

վերիններն իրենց մեռած ընկերոջը հարություն տալու համար տուշը այնպես էին նետում, որպեսզի այն անպայման վաքինների մոտ գետին ընկներ։ (Թկ. 1899, № 45, էջ 714)։

402. Ջ Ա Լ Մ Ա

Շապին-Գարահիսարում խաղի փոքր գործիքը չալմա էր կոչվում։ Բունը ներկայացնում էր մի քար կամ քարերի կույտ, չորանի ֆար անունով։ 15—20 քայլ հեռու կանգնողը, որ պետք է չալմային հակահարված տար իր փայտով, չորան էր կոչվում։ Դերերը փոխվում էին, եթե չորանը կարողանում էր հակահարված տալ չալմային կամ դեպի չորանի քարը նետելիս չալմայի ու քարի միջին տարածությունը հասցնել մեկ մահակաչափից պակաս չափի։ (Հս. Խ. Ձ.։ Համմտ. Նոր Բայազետի «Կաշ» խաղը. Բզ. Ձ.)։

403. ՓՈՍԱՆՈՒԿԻ

Նոյեմբերյանում պատանի տղաները մի խումբ կազմում և կանգնում էին մեծ շրջագծի վրա՝ իրարից 2—3 մ հեռու։ Խումբն ունենում էր մի կտի և յուրաքանչյուրը՝ մի-մի մահակ։ Աջից ձախ կամ ձախից աջ մեկը, ապա մյուսները, կտին գցում էր ոտքի հաջորդը։ Վերջինս իր մահակով օդում հարվածում էր կտիին՝ հեռու նետելու համար։ Կտի գցողն անմիջապես վազում էր կտին բերելու։ Մինչև վերադառնալը մյուսներն իրենց մահակներով արագ-արագ փորում էին նրա կանգնած տեղը։ Նկողը կանգնում էր իր փոսի մեջ։ Այս անգամ կտին հաջորդին էր նետում նախկին խփողը և ամեն ինչ կրկնում էր նույնությամբ։

Կտին այս ձևով կատարում էր մի քանի պտույտ, որով բոլոր խաղացողները գծի վրա փոսեր էին ունենում։

Նայած արագավազության աստիճանին, փոսերը խոր կամ ծանծաղ էին լինում։ Այդ պատճառով կտի բերողը վերադառնալուն պես խաղացողները փորելը դադարեցնում և գրավում էին իրենց փոսերը, այլապես եկողին իրավունք էր վերապահվում գրավել այն ծանծաղ փոսը, որի տերը դեռևս չէր հասել դրան։

Կտին պայմանավորված քանակի պտույտ գործելուց հետո խաղը դադարեցնում և ամենախոր փոս ունեցողի ոտքերը դրա մեջ թաղում էին։ Դրանից հետո սկսում էին թաղվածին փափախահար անել այնքան ժամանակ, քանի դեռ նա առանց ձեռքերի օգնության թաղված տեղից դուրս չէր գալիս։ (Բ. Ժխ. Ձ.)։

404. ԹՅՈՒԹՅՈՒՇ

Գետնին տոպաճի նման փայտի կտոր էին դնում, որին մի տղա ճոպով—հաստլիկ փայտի կտորով խփում ու թռցնում էր։ Հեռվում, իր դիմացը կանգնողներից նա, ով կարողանում էր բռնել այդ թռցրածը, նրա հետ դերը փոխում էր։

Խաղն սկսվում էր ինչպես երեխաների սովորական հավաքույթների, այնպես էլ գուսանական նվագահանդեսների ժամանակ, մեծերի հրահրումով, որ արտահայտվում էր հետևյալ երգով։

Ծո դուք լաճեր, Թյություշ խաղցեք,
Ճիպոտն առեք, զայն քշեցեք.
Կամ թե ճապուկ ճոկան առեք,
Իրարու հետ «ճիպոտ» խաղցեք։ (ԱԴ. I, էջ լբ)։

Ը. ԼՈՂԻ ՁԵՎԵՐ

Լողը Հայաստանում մարմնամարզության հնագույն ձևերից մեկն է. այն լայնորեն տարածված է եղել Վանա, Սևանա, Ուրմիո մեծ լճերում, փոքր և խոր լճերում, Եփրատի, Տիգրիսի, Արաքսի, Հրազդանի և բոլոր ջրառատ գետերի ափերին և այլուր։ Հայկական պետականության գոյության հարյուրամյակներում այն պետք է որ տեղ-տեղ պետական վերահսկողության ենթակա լիներ ճիշտ այնպես, ինչպես ցամաքային մարմնամարզության կարևոր ձևերը։ Իսկ անիշխանության շրջաններում լողի բոլոր ձևերը կիրառվել են անհատական կարգով՝ որոշ աշխուժություն ապրելով ամառային մրցումների ժամանակ։ 1930-ական թվականներից սկսած լողի արվեստը Հայաստանում լայն կիրառություն է գտել միութենական համապատասխան կազմակերպությունների ընդհանրացված կանոնների հիման վրա։ Այժմ մարմնամարզության այդ ձևի կադրերի պատրաստման տեսակետից կարևոր դեր են խաղում ֆիզիկական կուլտուրայի պետական ինստիտուտը և այլ համապատասխան հաստատություններ։

...Սկիզբեն ի վեր մեր կողմերը, վ՚անա ծովակին բնական ներկայութիյամբը, ծանոթ է եղած լողը։ Մասնավորապես ծովափնյա Ավանց նավահանգիստ գյուղին բնակիչները լողի մեջ վարպետներ են բնականեն, ղի մանկութիյունն ծովուն ջուրերուն մեջ կհասունցնեն, ամբողջ կյանքներնին ալ ծովուն ու նավերուն վրա կպատցնեն։

Ամառվան տապագին օրերուն, անբաղդատելի հաճույք է թոթվել մարմնուն վրայեն՝ շոգացուցիչ հագուստն ու մերկ մարմնովը թփվիլ մխրճվիլ մեղմածուփ կամ ալետատան ծովակին զվարթ ջուրին ծոցը՝ զվարթ առողջութիյամբ մ՚օծվելու։

Քաջ լողվորներ շատ կան, որոնք կլողան ծովուն ալիքներուն դեմ, անոնց զուգահեռաբար կամ անոնց ծփանքին հետ։ Կլողան կուրծքի վրա՝ բազուկներովն ու ափովը ջուրը աջ-ձախ ճեղքելով. կլողան թև թալելով, պուպուզմանց, կայնըմանց (ուղղորդ դիրքով). կողմանց կամ . կողմանցիկ, որը դարձյալ մեկ ձևն է թև թալելուն...։ Կլողան նաև այնպես հանգա՜րտ ծփալով ուղղորդ, կողմանցիկ, կուրծքի վրա կամ ոտքերը ծալապատիկ դիրքով։ Բայց ամեննեն ավելի հաճելին է համկալողը, որով կռնակի վրա ուղիղ պառկած կծփան, կամ ոտքերով թիավարելով՝ գլխովը ջուրը կճեղքեն կառաջանան։

Ուղիղ լողով ձանձրացողը կփոխե ձևը, թև կնետե կամ կլողա ըստ հաճույս՝ կողմանց, պուպուզմանց կամ կայնըմանց։ Այս ձևերով ալ հոգնելեն վերջ՝ կիյնան համկալող։

Հույժ հաճելի է տեսնել քանի մը քաջ լողվորներ, որոնք միասին ծով նետված, լողով կմրցին իրարու հետ՝ մեկզմեկ գերազանցելու, զիրար ձգելու ջանքով։ Անոնք կհեռանան, կառաջանան, ոտքերնուն ճողփյունն ա՛լ չի լսվեր, գլուխնին հազիվ սև կետի մը պես կնշմարվի, եկած ալիքներուն մարա՛կհովին ալ թրթռալով։ Հաճախ այս կարգի քաջ լողվորներ ընդառաջ կերթան եկող նավի մը, և անոր հասնելով, կամ մեջը կելնեն իբր... ԱԴԱՄԱՄԵՐԿ հյուրեր, և կամ նավին պարաններն իրենց օգնական առած՝ նավին հետ կլողան ու կդառնան ցամաքը։

Քաջ լողվորներ երբեմն սուզակի փորձեր ալ կընեն, նավեն ինկած առարկա մը կամ խեղդվող մարմին մը դուրս կհանեն։ Ասկե զատ, գլուխկոնծի ալ կուտան ծովուն մեջ և այս տեղեն մխրճվելով՝ անդեն դուրս կելնեն ջուրին մեջեն լողալով, կամ կարկին (առուզվիլ) և ափով կամ ոտնամաններով ավազ կհանեն։

Վարժ լողվորները, ծով մտնելու պահուն, ափեն բավական հեռու տեղե մը՝ քալելով կուգան գլուխկոնծի, գլխիվար կնետվին ծով և բավական տեղ ջրին տակեն լողալե վերջ արտաչափ մը հեռվեն կտեսնես որ գլուխնին դուրս կհանեն՝ ցնցկտելով հաճույքո՛վ մը, որ լողացողը միայն կզգա։

Լողն իրապես խաղ մ՚է հոս մեր պատանիներուն համար։ Ամառվան անցուրտ օրերուն մեջ, ցերեկները, ժամերո՛վ մերկ կզբոսնուն հաճախ ընկերներով մեկտեղ։ Կլողանան, կլողանան, կելլեն ավազ, նորեն կնետվին ջուր, այս անգամ նավի մը խարխուլ և լքված սանդուխ մը ձեռք ձգելով՝ վրան կհեծնեն ու կթիավարեն, կամ գերան մը դրկած ու հեծած՝ կլողան, կսահին, կընկլուզին, ջուր կանեն ու նորե՛ն սրկլուր դուրս կհանեն ջրողորկ, փայլիկ գլուխնին։

Գիտե՞ք որ Ավեյաց երկիր ալ կա մեր ծովակին մեջ։ Անշուշտ պիտի զարմանաք այս խոշոր հորջորջումը լսելով, բայց շուտով պիտի հիասթափիք, երբ ըսեմ թե Ավեյաց երկիր կամ ավարես կը կոչվի այն ծովահատակի բարձրացումը, որ հաճախ կտեսնվի մեր ծովակին ափերուն մոտ, եղերքեն 20—30—40 գրկաչափ ներս, ուր հասնող լողվորները քաղցր մխիթարութիյունը կունենան ոտքերնուն տակ պահ մը անդնդացող ջրին տեղ՝ հաստատուն գետին գտնելով։ Փեղեցիկ չե՞ք գտներ Ավեյաց երկիր հորջորջումը ծովաթումբի մը համար, որ հույսի նշույլ մը կը կաթեցնե հաճախ՝ հոգնած լողվորրին սրտին մեջ, այնպիսի ատեն մ՚ երբ ա՛լ ուժ չէ՛ մնացեր վրան՝ ինքզինք ջուրեն երեսը պահելու։

Հոն կուզեն դիմել նաև ոչ-լողվորները, միշտ ըղձանքով դիտելով արդեն իսկ այդ երջանկաբեր գետնին վրա կես մարմնով դուրս կայնող ընկերներուն հաջողութիյունը Ավեյաց երկիր մը գտնված պարագային՝ ծովալողանքը կդառնա ջրամեջ զբոսանք մը՝ տարեկից պատանիներու համար։

Քաջ լողվոր մը, միշտ պատկառանքով կճանչցվի ժողովուրդեն. այնպիսին իր քաջալող

անունին շուրջը առիթ կուտա հյուսելու դյուցազներգական գովքեր, որոնց գեղեցիկ մեկ նմուշն է Լողվորի երգը: Կա՞ մեկը, որ ասած չըլլա այդ ժողովրդական սիրուն բանահյուսությունը...։ (Ախ. II, 242—244 (Վ.)։

406. Լ Ո Ղ

...Եվ, մտածելով, թե մեր անձն ևս զովանալու պետք ունի, ուստի եթե հորդ ջուրեր պատրաստ չգտնայինք, ջուրերու դեմ բարձր թումբ շինելով ջուրն լճացուցյալ 5—10 և ավելի տղայք լճի մեջ մտնալով լողանայինք։ Այս լողանալու նկարագրություն դժվարին է, դի հարյուր տեսակ ինքնահնար խաղեր պարունակեր յուր մեջ։ Իբրև լողորդ ջրի մեջ սկեինք, այսինքն ջրի տակն իջնալով չերևնայինք և ջրի տակեն գորտի պես լողայինք։ Հետո ջրի տակեն ելնելով գլխիվայր գայինք և ջրի մեջ վեր ու վայր վազելով անբավելի ուրախությամբ զվարճանայինք։

Թամուր Օղլի Իսաք Փաշայենց մեծ այգվո արեվելյան կողմն մի մեծ լճակ կայր, զոր Հավուղ անվաննեին, որ տակավին կա մինչև ցայսօր։ Մի լճակ ևս ներսի փոքր այգիի չիմայի առաջ կայր, որ քանդված է։ Ամառան շատ կիրակիք, նաև երբեմն լի օրեր մեր թաղի տղայք փաշի թաղի տղայոց հետ ի միասին սույն երկու մաքուր լճակաց մեջ երթայինք լողանալու։ Իսաք փաշայի տղայք և թոռներ գայինն նատեին լճաց եզերք, մեր զարմանալի լողանալու հանդես տեսնելու։ Երբ 20—30—40 տղայ մի լճակի մեջ լողանան, արդարև տեսնալու բան է, երբ լճեն դուրս ելնելով 4—5 հոգի 10 քայլ հեռավորության գալով՝ թախլա տայինք լճի մեջ, երբ քանի րոպե ջրի մեջ սկելով մնայինք, երբ ջրի մեջ ըմբշամարտություն առնեինք, տեսնալու բան էր։ Մեր ջրի մեջ լողացողաց խումբն այնչափ հանդուգն և կատաղի էր, մինչդի փաշայի թոռունք և տաճկի լամուկներ չէին համարձակեր հետ մեզ լիճ մտնալ և լողանալ, դի երկու երեք անգամ փորձ առնելով մեզմե չարչարվեցան, ափոց կերան և փախան։

Երբ քիչ ևս մեծացանք, առվի և փաշայի լճեր մեզ չէին բավականար, ուստի խումբ կազմելով շատ կիրակի օրեր Ավանց երթայինք ի ծովն լողանալու, հորում դարձյալ թախլա զարնել, ջրի տակ սկել չէինք մոռնար։ Երբ ջրի մեջ մրսեինք, դուրս ելնելով պառկեինք տաք ավազի վերա և ավազով մարմիննիս թաղելով, տաքանայինք, հետո կրկին ջուր մտնելով լվացվեինք։ Ապա, երբ բավական համարելով ջրեն արտաքս ելանեինք, միայն շապիկ հագնելով ավազի երկարության այնչափ վազելով երթևեկեինք, մինչև տաքանալով քրտնեինք։ Այս միջոցին զգեստներս հագնելով երթայինք ի նավահանգիստն, նավեր մի ըստ միոջե դիտելով վերադառնայինք դեպի քաղաքն, ի մեր թաղ զանազան երգեր երգելով։ (Ձ. № 4184, էջ 189բ—190բ (Վ.)

407. ԸՆԿԼՈՒՂՈՒՄ...

Շան լողը (բազուկները զատ-զատ նետելը), գորտի լողը (երկու թևերը և երկու ոտքերը միաժամանակ աշխատեցնելը) և մեջքի լողը կիրառելուց բացի կար նաև ընկլուղում, որ նշանակում է խորասուզումն վանա լճի մեջ՝ ավազ ևն հանելու համար։ (Նար. 31)։

408. Ս Կ Ց Ն Ե Լ

Խաղում են 12—18 տարեկան տղաները ամառան ամիսներին, գետերի և լճացած ջրերի մեջ։

Խաղն առանձին կազմակերպված ձև չունի։

Գետում լողացողներից մեկը չարաճճություն է անում և իրեն կողքի լողացողներից մեկին սկացնում է, այսինքն՝ ձեռքը դնելով նրա գլխին, սեղմում է ցած և ինքը փախչում. սկողը ջրի տակից դուրս է գալիս, հետապնդում նրան՝ հասնելով՝ ինքն էլ է աշխատում սկացնել՝ եթե դիմացինը չի պաշտպանվում։ (Մ. Ժխ. ձ.)։

409. Թ Ռ Վ Լ Ո Ղ

Ջրի մեջ պառկում են փորի վրա, աջ ձեռքը հանում ջրից, առաջ պարզում, մատների ծայրերը ծռում, բուռ կազմում, և ամուր խփելով ջրին, քշում կրծքի տակը. այս միջոցին ձախ ոտքով խփում են ջրին և առաջ գնում, ապա աջ կողմի վրա հենվելով՝ ձախ ձեռքն են հանում ջրից, նույն կերպ մատները միացրած և ծռած խփում ջրին ու ջուրը կրծքի տակ քշած միջոցին աջ ոտքով խփում ջրին և առաջ գնում։ (Տե. Ժխ., № 70, էջ 1ա)։

410. ԹԵՎԱԼՈՂ ՄԵԿ ՁԵՌՔՈՎ

Լողացողը ջրի երեսին պառկում է կողքով. ձեռքերից մեկով ջուրը քաշում է մարմնի տակ, իսկ մյուս ձեռքը դուրս է բերում ջրից ու պարզում առաջ, ապա հաջորդն այդ դեպքում իջեցնում է ջրի մեջ և դրանով ջուրը քաշում մարմնի տակ. ջրում եղած ձեռքը ուղիղ ձգում է առաջ՝ սրան հենելով գլուխը։ Ձեռքերի շարժումներին համընթաց կատարվում են ոտքերի շարժումներ։ Լողացողը ոտքերը կծկում, մոտեցնում է մարմնին և հետո ուժեղ հրելով՝ ջուրը տարածում է ետ ու կողմ։ (Մ. ժխ. ձ.)։

411. ՈՏՆԱԼՈՂ

Լողացողը ուղիղ դիրքով կանգնում է ջրի մեջ և ձեռքերի ափերով թեթև հարվածներ տալով ջրի երեսին, ոտքերով քայլելու շարժում է կատարում։ Լողալու այս եղանակը իրար սկացնելու նպատակով՝ ամենատարածվածն է։ (Մ. ժխ. ձ.)։

412. ԾՆԿԱԾ ԼՈՂ

Քիչ թեք պառկելով ջրի մակերեսին, լողացողը ծնկները մոտեցնում է մարմնին և դրանք բռնում ձեռքերով, ապա ամբողջ մարմնի ակտիվ շարժումով պտտվում է իր առանցքի շուրջը, մի թեթև շարժելով ծալած ոտքերը։ Այս լողաձևը կիրառելի է միայն հոսող ջրի մեջ։ (Մ. ժխ. ձ.)։

413. ՄԵՋՔԻ ԼՈՂ

Լողացողն ուղիղ ձգված՝ պառկում է ջրի երեսին, մեջքի վրա, ափերով կողքերում կատարելով փոքր թիավարում։ Այս ձևը կատարում են հոսող ջրում, ընթացքի ուղղությամբ։ Երբեմն գործի են դնում նաև ոտքերը, որպեսզի արագ ընթանան։ Այդ դեպքում ոտքերը ծալում են ծնկներում և կծկում փորի մոտ, որից հետո ոտքերը տարածում են և ուժեղ հրվում։ Ջրի վրա այդ դեպքում հավասարակշռությունը պահպանում են ձեռքերով։ (Մ. ժխ. ձ.)։

414. ՔԱԴԱԿ

Մարմինն ու ոտքերը ուղիղ բռնած, պառկում են մեջքին՝ ջրի վրա, երեսը, կուրծքը և ոտքերի ծայրերը ջրից դուրս թողնելով։ Ձեռքերը երկարացնում են մարմնի երկու կողմը և դաստակները նավակի թիակների նման հանգիստ շարժում, որով և հանդարտ առաջ են ընթանում։ (Եվ. ժխ, № 70, էջ 1)։

415. ՏԱՇՏԱԿ ԱՆԵԼ

Ղարաբաղում լողալու ժամանակ ջրի երեսին պառկելու ձև ստանալը։ Լողաձևը կոչվում է նաև «դաշնակ»։ (ԳԲ, 1014, ՀԲԲ, 150. ՄԲ, IV, 474 Տե՛ս նաև ԷԱԺ. I, 277 (Շրկ.)։

416. ՏԱՇՏԱԿ ԸՆԿՆԵԼ

Երևանում լողի ձևը նույնն է, որ կոչվում է նաև «դաշնակ»։ (ԳԲ, 1014)։

417. ՏԱՇՏ ՈՒ ՔՅԱԼԱԿ

Լողի նույն ձևը Շիրակում։ (ԷԱԺ, I, 277)։

418. ԳՈՐՏՆԼՈՂ

Գլուխը ջրից դուրս բռնելով՝ մինչև ուսերը ջրի մեջ ընկղմվում են։ Ապա բազուկները կողքերին մոտիկ բռնած՝ մատները միացնում և գդալի ձև են տալիս ու ջուրը երկու ձեռքով կրծքի տակը քաշելով՝ կրունկները իրար կցած՝ ոտքերը պարզում, ուժգին խփում են ջրին։ (Եվ. ժխ. № 70, 1)։

419. ԳՈՐՏԱԼԵՂ

Երևանում գորտակերպ լողալու ձև՝ երբ ձեռքերն ու ոտքերը լայն բաց են անում ու կծկում։ (ԳԲ, 252)։

420. ԿՈՐՏՆ ԼՈՂ...

Զարսանջագում պատանիներին ու երիտասարդներին ծանոթ էին կորտն լողը, թև լողը, ոտն լողը, կռնակի լողը։ Ջափահասների մրցման լողը թև լողն էր։ Հոսող ջրերն անցնում էին թև լողով (Երև. 595)։

421. ԳՈՐՏՆԼՈՂ

Մուշում լողալու այդ նույն ձևը։ (ՀԲԲ, 150. ԳԲ, 252. ՄԲ, 466)։

422. ԳՈՐՏԱԼԵՂ

Արարատյան դաշտում լողալու մի ձև, երբ բազուկներով ջուրը անընդհատ փորի տակ քաշե-

լով եռևից ոտքերը ջրին ծեծելով՝ գորտնլող են տալիս։ (ՀԲԲ, 150)։

423. Բ Ա Դ Ա Լ Ե Ց

Երևանում լողալու ձև, որ երկու ձեռքերը դեպի առաջ երկարելով ու անշարժ պահելով՝ բադի նման ոտքերով են լողում։ (ԳԲ, 162. ՄԲ, I 302)։

424. Շ Ա Ն Լ Ո Ղ

Աջ ձեռքը ձախ ոտքի հետ և ձախ ձեռքը աջ ոտքի հետ փոփոխակի ջրից դուրս են հանում և խփում ջրին։ Ձեռքի դաստակը վայր ծռած՝ ջուրը քաշում են կրծքի տակը, որով մարմինը բարձրանում է և ոտքի հարվածով առաջ մղում։ (Եվ. ժԽ. № 70, էջ 1)։

425. Ջ Ո Ր Ի Կ

Երևանում լողացողները երկու ոտքերը միասին վեր են բարձրացնում և ջրին խփելով առաջ գնում։ (Եվ. ժԽ. № 59—5)։

426. Մ Ք Ո Ւ Ք

Բաղեշում ջրով լիքը փոսի մեջ երկու հոգի հակադիր կողմերից լողալով՝ գալիս և իրար կողքով սլանում էին հենքի միջով անցնող մքուքներ ձևանալով։ (ԹԿ. 1899, № 45, էջ 713)։

427. [Ս Ո Ւ Ջ Վ Ե Լ]

10—18տ. տղաները և ավելի հասակավորները ջրի մեջ սուզման ձևերը սիրում են կատարել մասնավորապես ամռանը։ Խմբերով, երբ սրանք ջուրն են մտնում, հերթականությամբ սուզվում են, աշխատելով որքան կարելի է երկար մնալ նրա տակ։ Սուզվելիս ջրի տակ մնալու ժամանակը որոշվում է համրելով, որ կատարում են նախապես ընտրված մեկի կողմից։ (Մ. ժԽ. ձ.)։

428. Ք Ա Ր Հ Ա Ն Ե Լ

Մրցախաղին մասնակցող 12—18 տ. տղաները գետերի, լճակների և արհեստական փոսորակներում հավաքված ջրերի մեջ հերթականությամբ սուզվում, ամենախոր տեղերից քար ու ցեխ են հանում։ (Մ. ժԽ. ձ.)։

429. Գ Լ Ո Ւ Խ Կ Ո Ն Ե Ր Ի

Լողացողները լողի ժամանակ գլուխները սուզելով ջրի մեջ, մեջքով դառնում են և նորից դուրս գալիս։ (Մ. ժԽ. ձ.)։

430. Գ Լ Ո Ւ Խ Կ Ո Ն Ե Ի [Ց Ա Տ Կ Ո Վ]

Լողախաղային այս վարժությունը սովորաբար կատարվում է բարձր գետափերից՝ օդում գլուխկոնծի տալով ջրի մեջ նետվելու ձևով։ (Մ. ժԽ. ձ.)։

431. [Ց Ա Տ Կ Ո Ւ Մ Ջ Ր Ի Մ Ե Ջ՝ Ո Տ Ք Ե Ր Ի Վ Ր Ա]

Գետի ափին կանգնում և այդտեղից ցատկում են ջրի մեջ, աշխատելով ընկնել ուղիղ ոտքերի վրա։ (Մ. ժԽ. ձ.)։

432. [Ց Ա Տ Կ Ո Ւ Մ Ջ Ր Ի Մ Ե Ջ՝ Գ Լ Ե Ի Վ Ր Ա]

Վարժությունը կատարում են փորձված և հասակավոր տղամարդիկ՝ խորը ջրում։ Բարձր տեղից ցատկում են օդն ի վայր, գլուխը ցած պահած. վարժվածները ձեռքերը բռնում են գլխին մոտիկ, ափերը միացնում են, որ ջրի հետ առաջին շփումը կատարվի ձեռքերի միջոցով։ Թռիչքը կատարելիս վազքով թափ են առնում։ (Մ. ժԽ. ձ.)։։

433. [Ե Տ Ց Ա Տ Կ Ե Լ Ջ Ր Ի Մ Ե Ջ]

Թմբի վրա մեջքով կանգնում են դեպի ջուրը և գետնից ինքնահրումով իրենց ջուրն են գցում, ըստ որում կատարվում է գլխիվայր կամ պտույտ գործելով՝ ոտքերն ի վայր իջեցում։ (Մ. ժԽ. ձ.)։

434. [Ո Ս Տ Յ Ո Ւ Ն Ն Ե Ր Ջ Ր Ո Ւ Մ]

Վարժությունը կատարում են փոքր երեխաները, որոնք դեռևս վատ են լողում։ Կանգնում են ջրի մեջ, ցատկեր են կատարում, ընկնում ջրի մեջ և դուրս են գալիս, կամ անընդհատ ոստյուններ կատարում՝ վեր ու վար թռչկոտում։ Ոստյուններ գործելիս ջրի հետ լավ շփվելու համար թևերը կողմ պարզած հարվածում են։ (Մ. ժԽ. ձ.)։

435. Գ Ո Լ

Ջրով լիքը փոսի մեջ երկու հոգի դեմ առ դիմաց կանգնում, ձեռքերով ջուր էին սրսկում իրար վրա. նա էր հաղթում, ով դիմացինին փախուստի էր մատնում (ԹԿ. 1899, № 44, էջ 698 (Բղշ.)։

436. ԱՐԵՎ, ԱՐԵՎ...

Ամռանը, երբ մանուկները լողանում էին և երբ վրա էր հասնում ամպամածությունը, իբրև աղերս արեգակի հասցեին՝ արտասանում էին.

Արև, արև, ելի դուս,
Թուր ու թվանք թալիմ թևս,
Թաֆտա շապիկ վըր թևերուս,
Օսկի աբրջան հանիմ դուս։

Շատ լողացողները դուրս էին գալիս, երկու քար իրար խփում, գցում ջրի մեջ՝ ընկերներին բարկացնելու համար այս տողերն ասելով.

Կրո կրո ձեն էրա,
Վարդըվորի ձու էրա.
Քեորնկինդ առա։

Լողն ու խաղը երբ վերջանում էր, միմյանցից բաժանվելիս ասում էին.

Ամեկ ուր տուն,
Լազլագ ուր բուն,
Խաչ գավազան
Իմ քեռու տուն,
Մուկն ու կատուն
Ժախմրի տուն։ (Փշ. 76 (Ապ.)։

Ուրիշ տեղերում ոչ միայն լողանալու, այլև ցուրտ և սովորական ամպամած օրերին երեխաները տաքանալու ակնկալությամբ աշխատում էին ոտանավոր արտասանելով դուրս կանչել արեգակին։ Արտասանվող երգերը սովորաբար սկսվում էին արեգակի անունը տալով.

Արև, արև, եկ, եկ,
Ջիզի քարին վեր եկ,
Հորն ընկնեմ, ձորն ընկնեմ,
Քու հեր, քու մեր եկել ա,
Թուր ու թվանք բերել ա,
Գոմշու ոտին տվել ա,
Դռան տակին հորել ա,
Մուկն եկել ա, հանել ա,
Կատուն ետնեն վազել ա։
(Քաջ. Ա.Հ, IX, 83—84 (Դրլ.)։
Վար. Քաջ. Ա.Հ. IX, 84 (Շար.). ԹՄԿ. 27 (Թ.).
ԱԴ, I, էջ լե-լզ (Թ.). Ջ, 35 (ՋՀր.).
ԳՍ. ԱՄլ. 1884, էջ 585. ԳՏ, 101 (Ննխջ.)։

437. ԱՄՊԸ ԳՈՌԱՑ

Առաջին որոտը տալիս բոլոր հասակի և սեռի մարդիկ մեջքերը պատերին կամ քարերին խփելով «մեջքս քեզանից ամուր» ընդհանրացած խոսքն էին արտասանում։ Տեղ-տեղ պատի քարը կրծելով ասում էին. «Իմ ատամները քեզպես պինդ ըլի, քա՛ր» կամ մեջքը պատին երեք անգամ խփելով ասում էին. «Պա՛տ, իմ մեջքի թուլությունը տամ քեզի, քու մեջքի պնդությունը տու ընձի» (Քաջ. Ա.Հ. IX, 92 (Շար.)։ Ալեքսանդրապոլում ամպը որոտալիս երեխաները մեջքերը պատին քսելով արտասանում էին.

Ամպը գոռաց,
Մուկը ճռռաց,
Մայրամ խաթուն
Թախտը նստավ։
(Քաջ. Ա.Հ. IX, 83)։

Այդ նույնն էին նաև հետևյալները.

Ամպը գոռաց,
Մուկ ճռռաց,
Նազ խաթունս
Վարտիքն առավ
Դուս թռավ։
(Բ. ԵՊ. 66 (Ախ.)։

Ամպը գոռաց,
Մուկը ճռռաց,
Հարս խաթունը
Դուռը մնաց։
(Բ. ԵՊ. 67 (Ախց.)։

II

ՌԱԶՄԱԿԱՆ ՄՐՑԱԿՑԱԿԱՆ ԽԱՂԵՐ



Ա. ՋԻՆԱԽԱՂԵՐ

Հայկական զինախաղերի վերաբերյալ տվյալները, որ բերված են այստեղ, աղքատիկ են, որովհետև միջնադարում խաղերը գրի չեն առնվել, իսկ այնուհետև վերջիններս գրեթե մոռացվել են։ Մոռացման պատճառն այն է, որ հայ ժողովուրդը գրեթե ամենուրեք զենք կրելու իրավունք չի ունեցել։ Իսկ ուր որ սառը զենք կրելու որոշ թույլտվություն է եղել, այնտեղ էլ ժամանակին դրանցով կատարվող խաղերը գրի չեն առնվել։

Այստեղ ներկայացված են սակավ տեղեկություններ թրի, դաշույնի, վահանասպարի, նետ ու աղեղի, պարսատիկի և մանկական հրացանների վերաբերյալ։

Պարսատիկը հնագույն զենքերից մեկն է։ Այն միջնադարում գործածված լինելու մասին են վկայում մի շարք հեղինակներ։ Պարսատիկը հայ հովիվների ու գառնարածների անբաժան զենքն ու խաղալիքն էր մինչև 1920-ական թվականները։ Դա որպես այդպիսին ծառայում էր նաև 8—15 տարեկան տղաներին։

Պարսատիկը պատրաստվում էր կաշվից ու թելից կամ ամբողջապես բամբակե թելի հյուսվածքից։

Պարսատիկախաղերը նամանողական խաղերից էին։ Երեխաները պարսատիկներով կազմակերպում էին նշանառություններ, թաղակռիվներ, մրցում էին պարսաքարը դեպի հեռուները նետելու գծով, որտում մանր թռչուններ ևն։ Իսկ հովիվներն ու օգնական երեխաները պարսաքարերով հնազանդեցնում էին թափառասեր այծերին։ Պարսատիկը հարկավոր միջոց էր նամանապես այգիներում ու դաշտերում՝ թռչուններին ու կենդանիներին հեռացնելու համար։

Հասարակ միջոցներով պատրաստված նետ ու աղեղներով նմանողական խաղերը մանուկների շրջանում այսօր էլ մասամբ հարատևում են։ Անցյալում դրանք շինվում էին ամուր փայտից՝ կրակի ու կաղապարների օգնությամբ ձևավորելով։ Լարը սովորաբար տավարի աղիքից էին պատրաստում։

Մանկական խաղերը պահել էին նաև հրացանի ձևերը։ Դրանք պատրաստվում էին սնամեջ հաստ ցողուններից, ծառաճյուղերից աջատված սնամեջ կեղևից, ծուծը հանված ձողից ևն։ Մասնագիտական ուսումնասիրությունը պիտի պարզեր, թե սրանց որոշ տեսակները, որ նետ-աղեղի սկզբունքով էին պատրաստվում, հավանորեն մեզ անհայտ ինչ-որ զենքի տեսակից էին ընդօրինակվում։

Զինախաղերը, որ միջնադարից և ավելի վաղ ժամանակներից էին գալիս, անցյալում խրախուսվում էին, որպեսզի երեխաները զինվորական տարրական գիտելիքներով կյանք մտնեին։

438. ԹՈՒՐ ՈՒ ՄԱՌՏԱԼ

Թուր ու մառտալ (թուր ու վահան) խաղը միայն ռազմիկ հերոսների դործն էր, դրա համար էլ միայն Մարութա սարի և Անդոկի ուխտագնացությունների ժամանակ քաջի անուն վաստակած, կռիվներում ու սրամարտերում կոփված մարդիկ էին խաղում։

Թուր ու մառտալի խաղը նվիրված էր Ս. Մարութա և Անդոկին, որովհետև այդ երկուսն են

միայն իրար հետ մարտնչել՝ որոշելու համար, թե ո՞վ է Սասնա սարերի արքան։ Մարտի ժամանակ Անդոկն իր կայծակի թրով Մարութա սարի գլուխը երկու մասի է բաժանում, որ մինչև այժմ էլ Ճղլա (երկճղի) գլուխը ս. Մարաթուկ է կոչվում, իսկ Մարութա սարն իր ժայռերից հսկա մի ժայռ պոկում, խփում է Անդոկին։ Ժայռը մտնում է Անդոկի կողերի մեջ, որից ս. Մարութա ձեռքի տեղը դրոշմված է մնում նրա վրա։

Այս խաղի ավանդության մեջ հաղթողն Անդոկն է լինում, որով կոչվում է Սասնա սարերի արքա։ Ուստի ուխտագնացության ժամանակ թուր ու մատաղ խաղացող երիտասարդներից մեկն իրեն Անդոկն էր երևակայում, մյուսը՝ Մարութա սարը։

Թուր ու մատաղ խաղացողները հագնվում էին Սասունի իշխանական շորեր, զինված թրերով և կես մետր տրամագիծ ունեցող վահաններով։ Պարտվում էր նա, ով իր վահանով չկարողանալով պաշտպանվել, հակառակորդի թրից, հարված էր ստանում իր մարմնի վրա։ (Պետ. ձ.)։

439. Թ Ր Ա Խ Ա Ղ

Զինամարզություն, սրերով հարձակվելու և պաշտպանվելու մարզանք։ Սովորաբար մարզախաղը կատարվում էր անվտանգ թրերով։ Նույնն է նաև սրախաղ, սրախաղաց, սրախաղություն, այսինքն սրերով խաղ, սրերով մարզություն, զինամարզություն, զինաշարժություն։ (ՄԲ. II, 130, 24, ՄԲ. IV, 273)։

440. Ա Ս Պ Ա Ր Խ Ց Ո Ւ Կ

Ասպարով ու թրով մենամարտելու խաղ, կռվի մարզանքի խաղ, որ խաղում էին խնջույքների ժամանակ։ (ՄԲ, I 237)։

441. Ա Ս Պ Ա Ր Ա Խ Ա Ղ

Ասպարով խաղացող. ասպարով խաղ։ (ՄԲ, I I, 237)։

442. [Պ Ա Ր Ս Ա Ք Ա Ր Ե Լ]


...Խոսքի պատշաճավորությունը ընտրելով և դնելով մեր իմաստությանն պարսատիկի մեջ՝ ուղղություն վերցրինք և խփեցինք նրանց վեհագույնին ու գլխավորին, որ չարապաշտության անդամ է։ (ՁՕ. №, 104)։

443. [Պ Ա Ր Ս Ա Ք Ա Ր Ե Լ]

...Ինչպես այն Դավիթը, որ ընդդեմ էր այլազգիին՝ ունենալով հինգ կարծր քարեր իր հովվական մախաղի մեջ, դրեց պարսատիկը և կործանեց այն չարին։ (ԱՇ. №, 244)։

444. [Պ Ա Ր Ս Ա Ք Ա Ր Ե Լ]

...Որովհետև այն հերոս և քաջ կռվողը, որ պարսաքարով ուղիղ խփեց հսկայի ճակատին, պարսատիկի ճայթյունը և նրա գետին տապալելու թնդյունը մեկ արեց և նույն Գողիաթի զենքով գոհեց նրան...։ (ԳՄԲ, 11)։



Նկ. 43. Պարսատիկներ կաշվից (պարսեր) և գործվածքից (քարման) (բնագիր № 447—450)
Նկ. Ռ. Մնացականյանի

445. [Պ Ա Ր Ս Ա Ք Ա Ր Ե Լ]

Որովհետև հովվական պարսատիկով և հեղեղատի փոքրիկ քարով չարդեցիր Գողիաթի ճակատը... (ՆՇ. ԲՁ, 40)։

446. [Պ Ա Ր Ս Ա Ք Ա Ր Ե Լ]

...Շապուհ անունով մի քահանա և Զորի գյուղացիներից մեկը՝ լրացնելով կռվողների թիվը, հասան սրանց օգնության, և մի հովիվ սրանց

հետ պարսատիկով թշնամու վրա քարեր էին տեղում։ (ԹԱ. ՊՏԱ, 214)։

Պարսատիկով, նետով և նիզակով զինավարժությունների մասին մասնակի ակնարկներ տե՛ս ՂՓ, ՊՀ, 116—17։ ՅՄ. ՊՏ, 236։ Սե. Պ, 4։ ԳՆ. Ո, 510։ ՆՇ. ԲՋ, 505։ ՆՇ. ԸԲ, 168, ԳՏՆ, 26, 290։ ՋՍ, II 84։

447. ՊԱՐՍԱՏԻԿ

Պարսատիկը Կարնո հայերը պատրաստում էին մշակված, փափուկ կաշվից և դիմացկուն թելից։ Վերցնում էին 10—15 սմ երկարությամբ և 4—5 սմ լայնությամբ կաշին, ծայրերի աջ ու ձախ կողմերը դանակով նեղացնում էին ու ծակում։ Ծակերից մեկական՝ 60—70 սանտիմետրանոց թել էին կապում, որոնցից մեկը 10 սմ-ով երկար էր լինում մյուսից։

Սովորական պարսատիկները պատրաստվում էին հասարակ կաշվից ու սպիտակ թելից, իսկ գեղեցիկը՝ ներկած նուրբ կաշուց և գույնզգույն բարակ թելերից՝ ոլորած կամ հյուսած ձևով։


Պարսատիկով քար նետելու համար տղաները նրա երկար թելի ծայրը փաթաթում էին աջ ձեռքի ցուցամատին, ընկուզաչափ քարը դնում էին կաշվի վրա ու ծալում էին. ձախ ձեռքով կաշվից դեպի վեր թելերը հավասարեցնում էին և կարճ թելի ծայրը դնում աջի ցուցամատի ու բութ մատի արանքը։ Այսպես բռնելուց հետո պարսատիկը օդում շրջանաձև պտտում էին և երբ թափ էր առնում, կարճ թելը բաց էին թողնում ու քարը նետում դեպի նպատակակետը։

Պարսատիկը գործ էին ածում պատանի տղաները, զանազան նպատակներով։ 1. Խմբովին մի հեռավոր թիրախ էին ընտրում և զբաղվում նշանառությամբ։ 2. Մրցում էին հեռավորության գծով՝ հարթ տեղերում և բլուրների ու լեռների վրայից քար նետելով դեպի հեռու, դեպի ձորերը, դեպի դիմացի սարը և այլն։ 3. Գառնարածները և հովիվների օգնականները պարսաքարով հնազանդեցնում և դեպի ուզած ուղղության վրա էին դարձնում թափառասեր այծերին և ուլերին։ 4. Պարսատիկով իրար հետ կռիվ էին անում տարբեր ազգակցական խմբերի կամ թաղակիցների երեխաները, որոնց հրահրողները երբեմն մեծերն էին լինում։ 5. Իրարից հեռու «դիրքերում» գտնվելու դեպքում պատանիների, իսկ երբեմն և երիտասարդների թաղակռիվները դրսևորվում էին պարսատիկներով։ (Բ. ժԽ. ձ.)։

448. ՊԱՐՍԵՆՏ

Պարսենտը Տարոնում գործում էին աղջիկները և նվիրում տղաներին։ Նյութ էին ծառայում բրդյա գույնզգույն թելերը։ Լիցքի մասը, որի վրա քար ու կոշտ էին դնում, երբեմն էլ պատրաստում էին կաշվից, թեև դա բնորոշ չէր։ Թելերից մեկի ծայրը օղակ էր ունենում, որ անց էր կացվում միջամատին։ Ամենից շատ գործածում էին հորթարածները, գառնարածները և հոտաղները, որոնք աշխատանքի գնալիս գոտիներից կախ էին տալիս։

Կենցաղում պարսենտը պետք էր գալիս կորեկի ու գլգլի արտերը թռչուններից պաշտպանելու համար, որոնց քշում էին պարսենտով կոշտեր դնելով։



Նկ. 44. Պարսատիկ գործվածքից (Արծվանիկ)
Նկ. Հովհ. Քացակյանի

Հոտաղներն ու գառնարածներն իրենց նախաձեռնությամբ կամ հովիվների ու մաճկալների դրդմամբ վարժակռիվ էին սարքում, որը հաճախ վեր էր ածվում լուրջ կռվի, ըստ որում՝ երբ հակառակորդներն իրարից հեռու էին լինում, կռիվը վերջանում էր պարսենտով, իսկ մոտիկ լինելու դեպքում՝ կոպալակռվի էր վերածվում։ Տեղի էին ունենում նաև քար նետելու մրցումներ և այլ խաղեր։ (Մ. ժԽ. ձ.)։

449. ՊԱՐՍԱՏԻԿ

[Ամռանն] մեկ անձ կարե միշտ մեջ քար դնել և ուղղելով ի նպատակն, հարկանել, կամ 2—3—4—5 հոգի պարսավորք կարեն [պարսատիկով] նպատակն ուղղել, կամ հեռաձգություն փորձելով զվարճանալ։ Սույն երկու տեսակն ևս խաղայինք մեք մեր թաղի տղայոց հետ։ Մեր թաղեցվոց համար հարկավոր էր այս պարսատիկ։ Առաջին, մինն զի երբեմն մեկ ուրիշ թաղի վերա հարձակումն առնելով պարսաքարին կռվեինք և կամ ուրիշ թաղեցիք մեզ վերա գալո միջոցին այսու պարսաքարիվ պատերազմելով վանեինք։ Երկրորդն, զի մեր թաղեցիք մի մասամբ պարտեզպան լինելով թռչունք և չորք ոտանիք վանելո մասին հարկավոր էր (Զ. № 4180, էջ 180 բ (Վ.)։

450. ՊԱՐՍԱՏԻԿ

Խաղալիքն ու խաղը նույնն էր։ Պատրաստվում էր կաշուց և կես մետրաչափ թելերից։ (Տե՛ս ԺԽ. № 64, էջ 18)։

451. ՊԱՐՇԹՈՎ ՆՇԱՆ ԽՓԵԼ

Սասունում պարսատիկը պարշթա էր կոչվում։ Այն պատրաստվում էր խաղախորդած կաշվից, որ ձվաձև մակերես էր ունենում։ Վերջինիս երկարությունը 10—15 սմ և միջին մասի լայնությունը՝ 5—10 սմ էր լինում։ Թելերը կանեփից էին՝ 80—100 սմ երկարությամբ։

Զվաչափ կլոր քարերով տղաները պարշթով նշան էին խփում։ Իբրև նշան էին ծառայում ժայռերը կամ տնկած մեծ քարերը։

Պարշթան Սասունում ժամանակ առ ժամանակ գործածվում էր իբրև զենք՝ հրացանի փամփուշտներն սպառվելիս (Հիշենք Անդոկի հերոսամարտը 1915 թ.)։ (Պետ. ձ.)։

452. ՖՈՇԱՆԳ

Խաղում էին պատանիները Կիրովականի շրջանի Վահագնի (Շահալի) գյուղում։ Բրդից, մազից կամ կանեփից հյուսված մոտ կես մետրանոց պինդ թելի մի ծայրը կապում էին աջ ձեռքի ցուցամատի արմատին մոտ, մյուս ծայրը 4—5 անգամ փաթաթում էին ընկույզի մեծությամբ մի կլոր քարի և քարը բռնում նույն ձեռքում՝ ցամատով, բութ մատով և միջին մատով ու նշան էին առնում։ (Դվ. ձ.)։

453. ՔԱՐ ԹԱԼԻԿ

Քար թալիկը ծայրը ճեղքած փայտ էր, որի արանքը տափակ ու փոքրիկ քար դնելով՝ երեխաները աջ ձեռքով պտտում կամ առանց պտտելու ետ տանում, առաջ բերում և ուժեղ ցնցում էին. փայտի ծայրի քարը ուժգնորեն նետվում էր առաջ, պարսաքարի ձևով։ (Ախ. I, 182 (Վ.)։

454. [ՇԱՄԻՐԱՄԻ ՊԱՐՍԱՏԻԿԸ]

Ես չհիշեցի... Արտամետու Մամխար ըսված ահագին ապառաժը, զոր Շամիրամ յուր ծամերուն կապեր, և վանա բերդեն պարսեստի պես նետեր է մինչև հոն։ (ԳՍ. ԳԲր., 106—107 (Վ.)։

455. ՆԵՏ—ԱՂԵՂ


Տարոնում աղեղը պատրաստում էին տղաները՝ կաղնի փայտից։ Ձև տալու համար այն կրակի վրա տաքացնում էին և ճկում, երկու ծայրերն իրար մոտեցնում։ Կապելով կամ կաղապարի մեջ դնելով պահում էին արևի տակ, որ չորանար և ամրանար։ Լարը պատրաստում էին տավարի աղիքից։ Նետերը պատրաստվում էին հացենուց։ (Մ. ԺԽ. ձ.)։

456. ՆԵՏ ՈՒ ԱՂԵՂ

Նետ ու աղեղները շինում էին ծառի ճյուղերից, առավելապես՝ ուռենուց։ Ճյուղը փոքր ինչ ծռում էին և ծայրերից լար կամ թել կապում։ Նետը ևս ծառի ճյուղ էր, բարակ ծայրը սրած, իսկ մյուսը՝ ծոնթած (քուրթած), անկյունաձև փոսացրած։ Սա միշտ այն մեծությանն էր լինում, որ լարելիս՝ 1/4 արշինաչափ էլ աղեղից դուրս էր մնում։ (Տե՛ս ԺԽ. № 64)։

457. ՆԵՏ—ԱՂԵՂ

8—10 տարեկան տղաները վերցնում էին սերկևիլի կամ կեռաս ճկուն ու տոկուն մի ճյուղ և կամարաձև կորացնելով՝ տալիս էին «Ո» տառի ձևը, երկու ծայրերը թելով իրար կապելով։ Շինում էին «Նաև կեռածայր պզտիկ-



Նկ. 45. Նշանառության ֆոշանգ (բնագիր № 452)

Նկ. Ռ. Մնացականյանի

պրտիկ նետեր, որոնց վրա լավ գաղափար կրնանք կազմել, մտաբերելով ժանյակ հյուսելու կեռասեղը (crochet)։

Այս ձևի աղեղով նետ արձակելու համար ձախ ձեռքով բռնում էին աղեղի կամարից կամ կամարը կրծքերին դեմ տալով՝ աղեղի մի թևը բռնում, նետի կեռը աջ ձեռքով կառչեցնում էին լարին ու քաշում էին, ապա անհրաժեշտ չափով լարը պրկելով նետի պոչը ձեռքից բաց էին թողնում, որով նետը թափով թռչում էր առաջ։ (Ա.խ. II. 270 (Վ.)։

458. [ՉԻԱՐՇԱՎ ԽԱՂԱԼ]

Շապին-Գարահիսարում 5—7 տարեկան տղաները մեկական փայտե ձող ձի էին ձևացնում, իսկ սանձի փոխարեն օգտագործում հաստ թելեր։ Որպես զենք՝ խառթամայից պատրաստում էին նետեր, ուռենու ճյուղերից՝ աղեղներ և ձգում բարակ ամուր թելով։

Այս նախապատրաստությունից հետո խաղացողները բաժանվում էին երկու խմբի։ Նրանցից յուրաքանչյուրը հեծնում էր ձին, սանձը գցում վիզը և ազատ ծայրերը կապում ձիու գլխից, որպեսզի ձեռքերում պահեր նետ ու աղեղը։

Ազդանշանը տալուց հետո կողմերն սկսում էին պատերազմը միմյանց դեմ։ Պատերազմի ընթացքում նետահար եղածներին վերցնում էին գերի և պահակների հսկողության տակ նրանց բանտարկում։

Խաղում հաղթող էր հանդիսանում այն կողմը, որը գերեվարում էր մյուս խմբի բոլոր անդամներին։ Վերջում կնքում էին հաշտություն և նորից խաղը կրկնում։ (Հս. խ. ձ. 30)։

459. ՆԵՏ ՈՒ ԱՂԵՂ

Նետ աղեղ շինեինք մեր տղայության և խաղայինք։ Սորա ձև Հայկա պատկերի վերա կարես տեսնալ։ Երկաթե և փայտե նետեր պատրաստելով ամառան հաճախ կրթություն առնեինք։ Այս նետ աղեղի խաղ սաստիկ հետաքրքրական և

զվարճալի էր մեզ համար, ուստի իրարու ձեռքեն ստեպ հափշտակեինք և աղեղն պիրկ պինդ քաշելով նետ ձգեինք։ (Ջ. № 4184, էջ 181ա (Վ.)։

460. [ՀՐԱՑԱՆԱՁԵՎ] ՆԵՏ-ԱՂԵՂ

Պատանիները վանում պատրաստում էին հրացանաձև նետ ու աղեղ։ Սա ունենում էր հրացանի նման կոթուն, որի ձգանը գցում էր գնդակաձև նետը։ Այս տեսակը arbalete-ի նմանություն էր ունենում, որը պատրաստելու համար վերցնում էին երկար մի փայտ՝ մի ծայրը բարակ, մյուսը բութ՝ հաստ։ Հաստ մասի աջ կողմի վրա կեռաձև ձգան էին ամրացնում, որ ճնճղուկ անունն էր կըրում, որը ձգված լարն իր կեռիքի մեջ պահելու դերն էր ունենում։

Փայտի մյուս ծայրի վրա, մի կողմից մյուսը, հորիզոնական դիրքով, մի ծակ էր բացվում, որտեղից անցնում էր ճկուն, առաձգական, մատնաչափ կլոր մի փայտ՝ կորացած դեպի բունը՝ իր երկու ծայրերից պրկված առասանի շնորհիվ։

Նետը կարճ մատիտի նման սրածայր փայտիկ էր լինում, որից մինչև 10 հատ պատրաստում էին՝ առատորեն գործածելու համար։

Հրացանաձև բնի վերին երեսի վրա ակոսաձև փորված էր լինում, որի մեջ դրվում էր նետը՝ ճնճղուկին կառչած պիրկ լարին կիպ։ Այս վիճակում նետն արձակելու համար աղեղնաբունը նշանառու դիրքի մեջ էր դրվում և աջ ցուցամատը ճնճղուկի ստորին մասը դեպի ինքը քաշելուն պես լարը կեռից թուչելով ուժգնորեն հրում էր իրեն կպած նետը 50—100 քայլ հեռու։

Հղկված և գեղեցիկ զարդարված աղեղնաբնի ակոսի ճիշտ մեջտեղը երբեմն դրով ծակում և երկգլխանի կեռավոր ճնճղուկ էին ամրացնում։ Այս ձևով ձգանված աղեղն ավելի շեշտակի ու թափով էր մղում նետը, քան կողի վրա ճնճղուկ կրող տեսակը։

Փայտե նետի փոխարեն պատանիները հաճախ գործ էին ածում ուղիղ երկաթալարեր, որոնք ավելի սլացիկ էին լինում։ (Ախ. II, 270—271)։։

461. [ՀՐԱՑԱՆԱՁԵՎ] ՆԵՏ—ԱՂԵՂ

Մոտավորապես 1,5 արշին երկարությամբ և մի վերշոկ հաստությամբ փայտին տալիս էին հրացանի ձև, փողի տեղը մոտ մի արշին երկարությամբ ակոսում էին, ծայրը մի ծակ էին անում, որից և անց էին կացնում ուռի ճյուղ, որը փոքր-ինչ ծռելով՝ ծայրերը լարով կամ թոկով կապում էին։ Փոսի սկզբում շինում էին մի չախմախ կամ ըստ վանեցիների՝ ճնճղուկ, ծայրը ծոնթած մի փայտ՝ մի մեխով ամրացրած աղեղի կողքին։ Արձակելիս ձախ ձեռքով բռնում էին աղեղի մեջտեղից, մյուսով ձգում լարը և նետը գցում չախմախի ծոնթին, որ փոսից փոքր-ինչ կարճ էր լինում, դնում էին փոսի մեջ, այնպես որ լարը ընկնում էր ծոնթի մեջ՝ ապա՝ աղեղի կոթը հենում էին աջ ուսին, աջ աչքով նշան առնում և չախմախը վայր գցելով՝ արձակում։ (Տե՛ս ժխ. № 64, էջ 37)։

462. ՆԵՏԱՂԵՂ

Սասունում սա փայտյա մանկական հրացան էր։ Փայտի ծայրին աղեղի փայտի հաստության համապատասխան մի կլոր անցք էին բաց անում։ Այդ անցքից մտցնում էին մոտ մի մետր երկարության ճկուն և ամուր փայտյա աղեղը, որի երկու թևերը հավասար երկարությամբ նետից հեռանում էին։ Աղեղի ծայրերին ոչխարի աղիքից պատրաստված շատ ամուր լար էին կապում։

Լարն ուժեղ քաշելով միացնում էին հրացանի կոթի վրա գտնվող ոտքին, որով լարն ուժանակ էր դառնում։ Լարի բերանին դնում էին նետը, որ մատիտի հաստությամբ, 20—25 սմ երկար մի կլոր փայտյա ձող էր, որ վերջանում էր ծայրին խրած երկաթե սուր մախաթով։ Նետն այսպես տեղավորվում էր նետաղեղի «փորում» և հրացանի ոտը ֆաշելիս լարն արձակվում ու նետն ուժգին մղում էր դեպի նշանը։


Նշանը կենտրոնում սև կետ ունեցող տախտակ էր։ Մրցողների նպատակը հենց այդ կետին նշան առնելն էր։ (Պետ. ձ.)։

463. ՀՐԱՑԱՆ

30—35 սմ երկարությամբ չոր բալդրղանի անամեջ ցողունի հատի ծայրին մոտ խրում և ամրացնում էին ճկուն ճիպոտի ծայրը։ Հրացանի մի այլ մասում 10—12 սմ երկարությամբ մի շերտ էին հանում և ճիպոտը կորացնելով՝ մյուս ծայրը մտցնում էին դրա մեջ։ Այս բոլորից հետո բարակ և սրած ճիպոտիկները դնելով հրացանի մեջ, ճի-

պոտը լարում և բաց թողնելով հարվածում էին նետին, որով վերջինս ուժգին դուրս էր թռչում։


Այս հրացանով երեխաները նշան էին բռնում, և խմբերն իրար հետ կռիվ էին անում։ (Բ. Ժխ. ձ. (Ախ.)։



Նկ. 46. Աղեղնավոր հրացան բալղրղանից
(թնագիր № 463)
Նկ. Հովհ. Քացակյանի


464. ՀՐԱՑԱՆ

Փ. Խանչալլիի պատանի տղաները ամռանը ձորերից հասունացած բալղրղան են հավաքում և ոստերը կտրելով, մինչոստային տարածությունը խողովակի վերածելով հրացան են պատրաստում։



Նկ. 47. Աղեղնավոր հրացան եղեգնից
Նկ. Հովհ. Քացակյանի

վերցնում են խողովակից 10 սմ երկարության ուղիղ ճողիկ և նրանից մատիտի հաստության մխոց են պատրաստում, որին ճըշտիկ անունն են տալիս։ Մղանի ծայրին այնքան բաց կտոր են փաթաթում և նուրբ թելով կապում, որ հազիվ տեղավորվում է հրացանի մեջ։ Այնուհետև բաց կտորներից մեկ սմ երկարությամբ և հրացանի փողի չափին գնդակներ են պատրաստում։ Եվ երբ փողի երկու ծայրերին օղակաձև թել են կապում, որ վզերը գցեն՝ ամբողջ հրացանը պատրաստ է լինում։ Դրանից հետո գնդակներից մեկը խցում են հրացանի փողի մեջ և մղանով հասցնում մինչև մյուս ծայրը։ Ապա բերանի գոլորշիով խտացնում են հրացանի փողի օդը և անմիջապես խցում երկրորդ գնդակը և իրար կամ որևէ թիրախի նշան բռնելով՝ մղանով մղում են առաջ։ Առաջին գնդակը երկրորդ գնդակի միջոցով խտացող օդի ճնշմամբ պայթյունով դուրս է թռչում և թռչում



Նկ. 48. Մխոցավոր հրացան բալղրղանից
(թնագիր № 464)
Նկ. Հովհ. Քացակյանի

նպատակակետը։ Հրացանի փողը շարունակ ջրով կամ թքով թաց են պահում, որպեսզի կրակելու համար դյուրություն պատճառի։

Հրացան-խաղի բնորոշ կողմը անհատական կարգով մրցումն է՝ նշան բռնելու և դեպի երկինք ու հորիզոնական ուղղությամբ հեռու ձգելու նպատակով։

Երեխաները զինված այս հրացաններով, երբեմն անհատն անհատի և խումբը խմբի հետ պատերազմ է վարում, որտեղ ընդունված կարգ է՝ գնդակ «ուտողը» պետք է մեռած կամ վիրավոր ձևանա, որին յուրայինները արագորեն տուն են տեղափոխում և «բուժում են»։ (Վ. Ժխ. ձ.)։


465. ՊԸԼԸՆՏՐՈՒԿ

Այդ նույնը Տարոնում երեխաները պատրաստում էին հացենու ճյուղերից։ Փայտն ունենում էր 10—15 սմ երկարություն և 1—1,5 սմ տրամագիծ։ Ջողիկի փողը բաց էին անում շիկացրած փամփուշտներով։ Փողի տրամագիծը հասնում էր 1—2 սմ։ Մղանը պատրաստում էին փողի մեջ ազատ շարժվող ձողիկից, որ կոթ էր ունենում և գնդակները՝ կանեփի խծուծից։

Սովորաբար գործածում էին ձմռանը։ Պատի վրա գծում էին մի շրջան և նշան էին բռնում, ատիճանաբար նշանակետից հեռանալով։ (Մ. Ժխ. ձ.)։

466. ՓԱԹԼԴԱՂ

Թիթեղյա, մոտ մեկ քառորդ արշին երկարության, հետզհետե նեղացող խողովակ էր, երկու ծայրն էլ բաց։ Մղանը փայտից էր՝ բարակ ծայրի հաստության։ Արձակելու համար նախ փաթլդաղի երկու ծայրն էլ խրում էին ձմերուկի կամ սեխի կճեպի մեջ, որով բերաննների չափով դրանք դուրս բերելուց հետո հաստ կողմից մղանով խտացնում էին օդը և կրակում։ (Նկ. Ժխ. № 64, էջ 3։ Համմտ. Վանա, «Ճլըխթրիկը». Ախ. I, 50)։



Նկ. 49. Փայտե մխոցով թիթեղյա հրացան
(բնագիր № 466)
Նկ. Հովհ. Քացակյանի

467. ԳՈՐԲԻՃ


Ակնում մանկական այդ հրացանը պատրաստում էին փայտից։ Վերցնում էին 3 մատի հաստության մի ճյուղ, կտրում էին մի թիզ երկարությամբ և միջի ծուծը հանում։ Կտավի և այլ նման լաթերի կտորներից խցան էին պատրաստում կամ իսկական խցան դնում գորբիճի մեջ ու մխոցով պայթեցնում։

Առանձնապես եռանդով խաղում էին վարդավառի տոնին։


Խցան-գնդակը միշտ ձեռքին ունենալու նպատակով այն մի երկար թելով կապում էին գորբիճի ծայրին։ (ՃՀԱ, 107, Նկ. Ժխ. № 64, էջ 3—4. ԳԲ, 245)։

468. ՄԱԽԱՌՆ ՀՐԱՑԱՆ


Վանա մի վարիանտով մախաոն հրացանը պատրաստում էին թելի կոճով։ Մխոցը փայտե ձողիկ էր։ Գնդակները պատրաստում էին կաշվից կամ կանեփից։ Այս հրացանով երեխաները մրցմամբ նշան էին առնում կամ իրար «գնդակահարում»։ (Խ. Ժխ. ձ. 62— 63)։



Նկ. 50. Գորբիճ-հրացան ծառի ճյուղից
(բնագիր № 467)
Նկ. Հովհ. Քացակյանի



Նկ. 51. Մխոցավոր հրացան շինելու համար ծառի ճյուղի միջուկը հանելու կերպը
Նկ. Հովհ. Քացակյանի



Նկ. 52. Միջուկը հանված ճյուղից շինված մխոցավոր հրացան
Նկ. Հովհ. Քացակյանի

469. [ՓԱՄՓՇՏԱԿԱՆ ՀՅՈՒՍԵԼ]

Հոտաղները և զբոսնող երեխաները Տարոնում հավաքում էին սավտուկ կոչված բույսի ցողունը՝ արմատահան անելով (սավտուկը նման է կանաչ սխտորին, որը ուտում էին կանաչ վիճակում, կեբակրից հետո)։

Հավաքված սավտուկից վարպետորեն հյուսում էին փամփշտակալներ, խաչաձև կապում էին կրծքերին ու գոտկատեղին։ (Մժխ. ձ.)։

470. [ՊԱՏՈՒ]

Սասունցի տղաները հավաքվում, դրսում կրակ էին վառում։ Փայտի կրակից մի խնձորաչափ կտոր վերցնում, դնում էին մարդու մեղով թրջած բամբակե շորի մեջ ու շտապ փաթաթում, մահակով ուժգին հարվածում. կրակը մեծ աղմուկով պայթում էր։ (Պետ. ձ.)։

Բ. ՄԱԿԱՆԱԽԱՂԵՐ

Հայկական ռազմական բնույթի մականախաղերը, որ հետիոտն ու ձիավոր խաղացողների կողմից կատարվում էին գնդով և մահակով, վկայակոչվում են «Սասնա ծռեր» վեպում, հինգերորդ դարու մատենագիրների մոտ և մանրանկարչության մեջ։ Սակայն հենց այն պատճառով, որ մականախաղերը ռազմական բնույթի են եղել և գունդը խորհրդանշել է իշխանության գաղափարը, միջնադարից սկսած հայերն այդ խաղերով զբաղվելու լայն իրավունքներից ու միջազգային հանդիպումներ ունենալուց զրկված էին։ XIX դ. վերջերին այս խաղերի չնչին հետքերն էին մնացել, իսկ XX դ. սկզբին հատկապես ձիագնդակներ հիշատակվում էին գլխավորապես բանահյուսության մեջ։ Ժողովուրդն իր սիրած խաղերից անբաժան մնալու համար էպոսում խանդավառ նկարագրներ է տալիս։ Պատահական չէ, որ Սասնա Դավթի քաջությունները ցույց տալու համար վեպը նրան գերբնական ուժով ու պատենցիալ կարողություններով օժտելով զինվորական կենսագրություն սկսում է հոլախաղերով։

Եվ որովհետև մականախաղերի հետիոտն ու ձիավորված կատարումները սակավ են նկարագրված, մենք դրանց հետ զետեղեցինք նաև վեպի բոլոր տվյալները։ Վերջիններս թեև գրի են առնված XIX դ. սկզբներին, վեպում հնագույն նստվածքներ են, ավելի հին, քան միջնադարյան հաղորդումները, որ նույնպես այստեղ ենք տեղավորել։

Ներկայումս չափազանց գործնական նշանակություն ունեն թե՛ հետիոտն և թե՛ ձիավորված գնդակախաղ մականախաղերը։ Այստեղ եղած նյութերի հիման վրա վերածնված ազգային խաղերը մեծ հետաքրքրություն կներկայացնեն ոչ միայն երկրի ներսում, այլև միջազգային ասպարեզում։

471. ՀՈՂ

Որբացած մանուկ Դավիթը Սասունից ուղարկվում է Մրսր, Մսրա Մելիքի մոր մոտ՝ խնամվելու։ 3—7 տարեկան հասակում Դավիթը մեծ ցանկությամբ դառնում է Մսրա Մելիքի հոյ խաղի դիտորդ և այդ ժամանակ էլ բռնելով Մելիքի հոլը կամ գուրզը, վերջինիս մեջ նախանձ ու թշնամանք է արթնացնում։

[Մեծ]... Մհեր որ մեռավ,
Էս խետին Մըսրա Մելիք էլավ թագավոր.
Էրկիրը բիրադի դարձրեց իր թրի տակը։
Ըզրանց կանոն-զայդին ուրբաթե ուրբաթ հոլ կը խաղային.
Ձիավորներին թամբահ կ'աներ, կ'եթային դաշտի մեջ.
Դաշտի մեջ իրարի գուրզ կը թալեին։
Ջորս-խինգ տարի էդպես խաղ կ'անեին։
Դավթի խինգ տարին որ թըմըմավ, մե ուրբաթ ասավ.
—Քեռի՛, ընձ էլ տար, գամ, թամաշա անեմ գուրզ թալելուն։
Ասավ.—Դավի՛թ, բալա՛մ,
Երանի դու էդ խոսք չասեիր ընձի.
Էս Մրսրա քաղաքն ա,
Հազա՛ր-հազա՛ր ձիավոր դուս կը գա.
Քեզ տանեմ ընտե, վա՛յ թե ձիանք տան ոտի տակ։
...Մրսրա Մելիքի մերը խելոք օղուլ-ուշաղ էր
Ասավ.— Որդի՛, բեր էրկու փայլեվան, դիր Դավթի խետը.
Թո ձեռը, ոտը կապեն,

Տանեն, դնեն մե բանձր դարի գլոխ.
Դավիթ Թո ընտից թամաշա անի,
Փայլեվաններն էլ նստին կուշտը,
Մուղաթ ըլլին Դավթին։
Ձըլլի՛, գա ցածր, ընկի ձիան ոտի տակը։
Մսրա Մելիք ասավ.—Մե՛րս, լավ ասիր դու։
Վերցրին, տարան, ձեռ-ոտ կապին, դրին դարի
գլոխ,
Էդ փայլեվաններ էրկուսն էլ նստան կուշտը
ղարաուլ։
Մըսրա քաղքի ձիանք դուս էկան էս խետին։
Խեճան, որ խաղան մեյդան.
Բիրադի ժողվան. էկան թամաշա։
Մըսրա Մելիք խեճավ իր ձին,
Քշեց, էկավ ղոշունի մեջ։
Մեկ գուրզ կար Մըսրա Մելիքի ձեռը,
Իրեք հարիր վաթսուն լիտր էր.
Խաղցնըմ էր—տանըմ էր աջ,
Բերըմ էր գուրզը ձեռի մեջը.
Դանին՝ պտըտցնելով գուրզը,
Օխտը գրվանքա կրակ էր թափըմ։
Դավիթն ընտից թամաշա արավ,
Սիրտը ղաբուլ չարավ.
...Դավիթ մե յավաշիկ հիրար տվեց իրան.
Կապված պարանը կտրվավ,
Էլավ, տարավ, բերեց,
Էրկու փայլեվանին էլ կապեց հիրարից.
Հինք իջավ, էկավ, գնաց հոլտունը կայնավ։
Մըսրա Մելիքը դուրբին դրեց աչքին,
Իրիշկաց, տեհավ՝ Դավիթ էկեր ա, հոլտան մեջ
կայներ ա։
Ընտից կանչեց Դավթին.—Դավի՛թ—հոլտնից
վե՛ր էլ.
Հեսօր կը զարկեմ. խող ես, խող կը դարձնեմ.
Դավիթ ձեն տվեց ընտից, ասավ.
—Քեռի՛, զա՛րկ. Թո գա՛ քո գուրզը.
Ձըլլեմ, չիմանամ էրկու մտանի ըլլես.
Աստծուց էնպես գրած չի,
Որ մեր ազգը ձեր ազգի դեմ փախնի.
Ես էլ չեմ փախնի քու դեմից։
Մըսրա Մելիք լսավ էդ խոսքերը,
Սիրտը բարկացավ, գուրզն էնպես զարկավ,
Խող է, խող դարձնեմ,—ասավ։
Գուրզն որ թալեց, էկավ,
Դավիթ էլ էրկո՛ւ ձեռքով չը բռնեց.
Մեկ ձեռքը տարավ դեմ, գուրզը բռնեց,
Որ գուրզը բռնեց, ծանդր—թեթև արավ, ասավ.
Ափսո՛ս, հազա՛ր ափսոս,
Մե քիչ թեթև ա էս գուրզը.
Քառասուն լիտր արճիճ ըլլեր,
Խալին լցընենք վրեն, նո՛ր լավ կը՛լներ։
Թալեց գուրզը Դավիթը.
Գնաց, Մըսրա Մելիքի գլխի վրով ընցավ,
Մե ավուր ճամբեխ գնաց, դեն ընկավ։
Մըսրա Մելիքն էս խետին կանչեց խալխին,
Թե՛.—Արե՛ք, էլ մե՛ք խաղա.
Էլ խաղալ մեզի չի ուրմըշի։
Փոր ու փոշման թողին ու էկան տունը։ (ՍՍ. բ. II, 247—249 (Ար.)։

472. [Հ Ո Լ]

...Համա ինչ կենիս օր մեկ ծուռ տղեմի կա, էտոր սովորութենն ի՞նչ է, հոլ կը խաղա Թագավորի ամարաթի հառաջ, մեկ հերկեն կոպալ մի առեր է ձեռը, հոլ մը լէ չարխաքաշ Թալեր է մեյդան, կես փութ կեղնի։ Մեյդընի էտա գլխուց կը զարնե, կերթա, կելնի էն գլոխ. կը վազնի կերթա էն գլխուց կը զարնե, կիգա իտա գլոխ։

Կըսե.—Հոլն իմն է, կոպալն իմն է, իմ հառջ դալողն որն է։

Ջուրի իրիկուն էտոր փեշակ էտ է, կըսե ու կը զարկե։ (Մրգ. III, 48 (Ապ.)։

473. [ՄԱԿԱՆԱԽԱՂ—ՀՈԼ]

Մականախաղը (հոլ) խաղում էին մեր նախորդների որդիքն անգամ։

Երեխաները երկու խմբի բաժանված, յուրաքանչյուրը ունի ձեռքին բռնած մի երկայն փայտ (վարոց), որը կեռ ծայր ունի և փայտեն կեռ ծայրով ամեն մեկը աշխատում է հափշտակել իր հակառակորդներից նույնպես փայտից շինած մի ոնդակ, որ ձգած է գետնի վրա, և այսպես մինը մյուսից խլելով, գնդակը քշում են դեպի հակառակ կողմը, մինչև հասցնում են նշանակված տեղը։

Այս խաղը հին ժամանակներում խաղում էին ձիու վրա նստած, և նույնպես մականներով, որ նշանակում է կեռ ծայր ունեցող փայտ կամ գավազան։ (Ր. Հկ, 105)։

Հեոլ խաղ կա մեջ Վանի, գուցե ուրիշ այլ գավառաց մեջ չգտնվի։ Հեոլ կարծվի թե հոլովել նշանակե, զի խաղն հոլովելով է 3—4—5—6—7—8—9—10 հոգվով խաղացվի խաղս։ Խաղացող տղայք և պատանիք մին մի կանգուն ու կես երկարությամբ բիր պատրաստած և ձեռք բռնած գան ժողովվ[վ]են ի խաղատեղն։

Մեկ թիզ լայնությամբ փոս մի փորեն, որո անուն ասեն տուն։ Հետո կոզակ մի՝ ի փայտե կամ ի հոսկերաց անասնոց, բերյալ տնկեն տան առաջ, կարգավ գան, բրի ծայրիվ զկոզակն հրեն և հոլովեն։ Երե հրողն և հոլովողն զկոզակն այնչափ հեռացույց ի փոս տունեն, որո այլքն այլևս չկարեն հասուցանել զբիրն կամ դիպեցուցանել անթոլկելով զբիրն, առաջին հրողն և հոլովողն խաղեն մեկուսանա և սպասե վախճանին։ Այս փորձ ամեն խաղացողքն առնեն, բայց այն ետին, որ սույն փորձի մեջ չհաջողեցավ, մեր մնա նորա վերա, այսինքն՝ կոզակն մնա նորա վերա։ Նա կամ պետք է զկոզակն յուր բրի ծայրին բերե փոս տան մեջ խոթե, որ ազատի և կամ զկոզակն հոլովողին բրի ծայրին հարկանե այն միջոցին, որ տակավին կոզակն ի գետին եռա, այսինքն է որ տակավին ի հոլովելույն չէ դադարած։ Երե այս երկու կերպիվ չհաջողեցավ ազատել, տղայքն այն կոզակն բիրերով հոլովելով մի արտաչափ, երկու արտաչափ տանեն հեռացուցանեն և մոր տեր սաստիկ տագնապեցուցանեն. ի վերջո երե հաջողեցավ մայր ուրիշի վերա ձգել, ինքն ազատի մոր տերն տագնապի մեջ իյնա։

Սույն խաղի մեջ շատ վազել, շատ հոգնել կա։ Այս խաղ ամառ ամեն կիրակի մեր թաղի հրապարակաց մեջ խաղալեն հետո երեկո, երբ ի Հայկավանք նախրատեղ երթայինք կովեր բերելո, նախրատեղաց մեծ ընդարձակ հրապարակի մեջ 20—30 տղայով խաղայինք, ըստ որում ամենքս բիր իձեռին երթայինք ի նախրատեղն, ուստի մինչև նախրի ժամանելն 1 ժամ, 2 ժամ այս հեոլի խաղն խաղայինք։ Երե կամիս այս խաղ խաղալ, ծանր ղգեստներ ձգե, կոշիկներդ հան, զի արագաշարժություն և սրընթաց վազել պետք է։ (Ձ. № 4184, էջ 182բ—183բ)։

475. ՀՈԼ

Խաղացողները բաժանվում են երկու խմբի։ Յուրաքանչյուր խմբի անդամների թիվը պետք է լինի 5 հոգուց ոչ պակաս, 12 հոգուց ոչ ավելի։ Ամեն մի խաղացող ունի իրեն համար հատուկ պատրաստված գավազան, որ կոչվում է «չոմախ»։ Չոմախը կեռ գլուխ ունի, որպեսզի հնարավոր լինի հոլը տանել ուզած ուղղությամբ։ Հոլը պետք է լինի երկարավուն և ոչ կլոր, որ ուժեղ հարվածից խաղադաշտից դուրս չընկնի և չդանդաղեցնի խաղի ընթացքը։



Նկ. 53. Ոտքերի սախկեր՝ քարե կամ փայտե գնդակներով խաղալու ժամանակ սրունքները պաշտպանելու առնապան և փաթաթան գործածելու ձևը Տարոնում և այլուր

Նկ. Հովճ. Քացակյանի

Խմբերից յուրաքանչյուրն ունի իր ավագը, որը կոչվում է պապ կամ հոլչի։

Խաղացողները սրունքներին փաթաթում կամ հագնում են հատուկ պատրաստված առնապաններ, որոնք սախ(կ) են կոչվում։ Դա բրդյա մի գործվածք է, որ գործում և նախշում են երիտասարդ հարսները, և որը ձմեռ ժամանակ հագնում են նաև որսորդները։

Խաղադաշտը հարթ և մաքուր պիտի լինի, ոչ մի քար կամ երկաթի, խեցու, ապակու բեկոր չպիտի լինի այնտեղ։ Սրա լայնությունը 25—30 մ և երկարությունը 60—70 մ է հասնելու, որի սահմանագլխին շինում են մեկական չոլ հոլտուն (չոլ)՝ յուրաքանչյուր խմբի համար։ Հոլտունը ավազանաձև է, որի խորությունը մոտ 10—15 սմ է, է, իսկ լայնությունը՝ 25—30 սմ։

Խաղն սկսելուց առաջ պապերը որոշ տարածությունից ոտ առ ոտ իրար դեմ են գալիս և եթե ա պապը բ պապի ոտքը կոխում է, ապա ա պապն սկսում է խաղը։ Խաղն սկսում է՝ իր չոլից ուժեղ հարված տալով հոլին։

Խաղացողները տեղ են գրավում դաշտի երկու կողմից՝ դեմ առ դեմ։ Պապի հարվածից հետո՝ մրցող կողմերը ճարպիկ շարժումներով աշխատում են հոլը քշել-տանել դեպի հակառակորդի հոլտունը։ Հոլ տանողին հետևում են թե իր և թե հակառակորդ խմբի խաղացողները։ Հոլ տանողն այսպիսի դեպքերում, որպեսզի կարողանա անարգել հոլն առաջ տանել, հանկարծ ետ է դառնում և «գը՛զզ» անում, այսինքն՝ հարված հասցնում հոլը խլող հակառակորդի ոտքերի սրունքներին. հակառակորդն էլ իր չոմախն է դեմ տալիս նրա հարվածին, մեղմացնում հարվածի թափը և եթե հաջողվում է, խլում է հոլը և դեպի հակառակորդի հոլտունը քշում։

Հոլը հոլտան մեջ գցելը բնավ չի նշանակում, որ գցող խումբը խաղը շահել է. ընդհակառակն՝ այս դեպքում խաղն է՛լ ավելի է սրվում։ Բոլոր խաղացողները խմբվում են հոլտան շուրջը։ Հոլտան տերերն աշխատում են չոմախներով դուրս նետել հոլը փոսից, իսկ հակառակորդները ջանում են հոլտան միջից ձեռքերով բռնել, հանել հոլը և հայտարարել՝ «չըլ հոլ», այսինքն հոլը չըլի մեջ է, խաղը տարված է։

Սրանով խաղը վերջանում է։ (ՍՄ. Բ. II, 853—854 (Արճ.)։

476. ՀՈԼ

Ալաշկերտում, հարթ դաշտում, կալում կամ մի այլ հարթ հրապարակում փորում են մի փոքրիկ փոս, որ կոչվում է «կրեճ»։ Դրա մոտ հավաքվում են 6—8—10 հոգի՝ իրենց ձեռքի մահակներով։ Մի կլոր քար, որ կոչվում է հոլ կամ կջի, դնում են կրեճի շուրթին, ապա բոլորն իրենց մահակները հավաքելով մի տեղ, չափում են, ում փայտն ամենակարճը եղավ, առաջինը նա պիտի կանգնի կրեճի մոտ և փայտի ծայրով խփի, հոլը տեղից թռցնի։ Հոլը որտեղ որ կանգնի, այս անգամ նրանից երկար փայտ ունեցողը պիտի կանգնի նույն տեղը և փայտը գցի, հոլը թռցնի.... Եվ այդպես շարունակ, մինչև որ մեկը չկարողանա իր մահակը դիպցնել հոլին։ Ով որ չկարողացավ դիպցնել հոլին, նա դառնում է մակ կամ մեր։ Այս անգամ մերն իր փայտով հասնում է և զարկելով՝ հոլը քշում է դեպի կրեճ, որ մի կերպ ներս մտցնի, իսկ մյուսներն իրենց փայտերի հարվածներով դիմադրում են և հոլը մոր առջևից հետու թռցնում։ Մերը հաղթություն տանելու համար երկու միջոց ունի։ Առաջինն այն է, որ կարողանա իր հոլը կրեճի մեջ գցել և իսկույն վրան կոխել, որ նորից չթռցնեն։ Այս դեպքում նա խաղը տարած է համարում, և ինքը պիտի հոլը թռցնի՝ կրեճի շուրթից, որպեսզի նորից շարունակվի խաղը։ Երկրորդ միջոցն այն է, որ հոլը դեպի կրեճը քշելիս՝ նա կարողանա իր մահակի ծայրը խաղացողներից մեկին դիպցնել և նրան «դը՛ժ» անել, այդ էլ պայմանով, որ «դը՛ժ» անելու ժամանակ հոլը գետնի վրա շարժողական դրության մեջ լինի. եթե հոլը տեղում դադար է առել, «դը՛ժ»-ը չի ընդունվում։ «Դը՛ժ»-ը ընդունվելու դեպքում ում որ «դը՛ժ» են արել, նա է դառնում մեր։ Եվ այսպես խաղը շարունակվում է, մինչև որ խաղացողները հոգնում են ու ցրվում։ (ՍՄ. բ. II, 652)։

477. ՀՈԼ

«Հոլը խաղ մըն է, որ առհասարակ կը խաղան 14—18 տարեկան տղաները։ Այս խաղի համար հարկավոր են՝ մեկ մոզտա. յուրաքանչյուր տղային գոմբալ..., մի փոս և 4—5 տղա»։ Մոզտեն լինում է գոմեշի, եղան, կովի ճան, կամ ճանի կլոր ոսկորը և կամ նրա նման մի գոնգոբա (=կլոր, գնդաձև...) ոսկոր։ Գոմբալը մեկ մետր երկարությամբ 40—50 մմ հաստությամբ, ծայրը կեռ ու գնդաձև մի փայտ է։

Փոսը փորում են խաղի վայրում, 40 սմ տրամագծով, 8—9 սմ խորությամբ։ Խաղատեղը պետք է լինի հարթ ու տափարակ, առանց երկրորդական փոսերի։

Հոլը դնում են փոսի վերջին եղերքի վրա և առաջին խաղացողը, որ վիճակով որոշված և կանգնած է փոսի վրա՝ հոլի գլուխը, իբրև հոլբաշի, խփում է մոզտին, իսկ մյուսները հետևում են հոլին. ով որ մոզտին իրա գոմբալով խփի, գցի փոսը, նա դառնում է հոլբաշի և կանգնում է փոսի գլուխը։

Շատ անգամ հոլբաշուն զբաղեցնելու, շփոթեցնելու համար խաղացողները զարկում, տալիս են մոզտեն մեկը մյուսին, մինչև որ մեկն ու մեկը հաջողեցնում է խփել, գցել փոսը։ Իհարկե, հոլբաշին էլ իր կարգին հսկում է և երբ տեսնում է՝ հոլը (մոզտեն) գալիս է, որ փոսն ընկնի, աշխատում է հակահարված տալ, հոլը քշել խաղացողների կողմը։ Այսպես փոխն ի փոխ շարունա-

կում են խաղը, մինչև որ խումբը հոգնի և ցրվի կամ թե փոխի խաղի բնույթը։ (ՍՍ. բ. II, 853—8954 (Տրն.)։

478. ԿՏԵՒՍ ՀՈՒ

Խաղը Տարոնի այս վարիանտում հետևյալն էր։ Հրապարակը լինում էր 60—80 մ երկարությամբ և 30—40 մ լայնությամբ։ Դաշտի կենտրոնում փորվում էր մի փոս՝ կուրտուն անունով, 10 սմ շառավիղով և 10 սմ խորությամբ։ Կուրտնից 2 մ աջ և 2 մ ձախ փորվում էր ևս մեկական փոս նախորդից փոքր, որոնք կտեխս էին կոչվում։ Ընդհանուրի համար ունենում էին փայտե մի գնդակ։ Խաղացողների կոպալներն ունենում էին կեռ ծայր։ Մասնակցում էին 4 հոգի՝ երկուսը վիճակով դառնում էին պաշտպաններ, մյուսները՝ գնդակ բռնողներ կամ տունը գրավողներ։ Աջ ու ձախ կտեխսներում կեցողները դնում էին իրենց ձախ կրունկները, աշխատելով թույլ չտալ, որ գնդակը կուրտան մեջ գցվեր։ Երբ դրսիննները գնդակը կոպալներով մոտեցնում էին կուրտան մեջ գցելու, նրանք առանց կրունկները կտեխսներից դուրս հանելու, հակահարված էին տալիս։ Երբ պաշտպանները հարվածում էին գնդակին, հարձակվողներն աշխատում էին հասնել գնդակի ետևից և կոպալով բռնել, քանի դեռ չէր «սառել»։ Երբ այդ նրանց հաջողվում էր, դերերը փոխվում էին։ Դերերը փոխվում էին նաև այն դեպքում, երբ կանգնողները կրունկները փոսերից դուրս հանելիս հարձակվողները կոպալներով կտեխսները գրավում էին կամ գնդակը գցում կուրտուները։

Կանոններ.—1 խաղի համար ժամանակ չէր որոշվում։ 2. Անթույլատրելի էր գնդակին հարվածել, երբ նա կուրտան մեջ էր գտնվում։ 3. Հարձակվողները գնդակը կուրտան մեջ կարող էին գցել 10 մետրից ոչ պակաս հեռավորությունից։ (Մ. ժո. ձ.)։

479. ԲՈՒՆՈՒԿ ՀՈՒ

Տարոնում խաղում էին 10—20 և երբեմն էլ ավելի բարձր տարիքի տղամարդիկ, աշնան ամիսներին, 12—30 հոգով, հոլի համար հատուկ հրապարակներում։ Խաղացողները անուն դնելով կամ պապերի անհատական ընտրությամբ բաժանվում էին երկու հավասար խմբերի և վիճակահանությամբ որոշում խաղն սկսող կողմը։ Ընդհանուրի համար ունենում էին մի հոլ-փայտե գնդակ և յուրաքանչյուրի համար՝ մի-մի կեռաձայր կոպալ (մական)։ Խաղադաշտը թեև չէր գծվում, բայց մոտավոր սահմաններ էին նշում (ջրաղացի առու, հանդամիջյան ճանապարհ, արտի սահման են)։ Վերջինիս մեծությունը կախված էր լինում խաղացողների թվից, նրանց հասակից և պատրաստականությունից։ Խաղակիցները դասավորվում էին դաշտի երկարությամբ, իրարից 10—20 մ հեռավորությամբ, իսկ հակառակորդ խմբերը՝ իրար դիմաց, միմյանցից 5—10 մ հեռավորությամբ։

Խաղն սկսվում էր դաշտի կենտրոնից։ Խմբի խաղացողներից մեկը, որը կանգնած էր լինում դաշտի կենտրոնում, գնդակը դնում էր գետնին և մականով ուժեղ հարվածում դեպի հակառակորդի վերջնագիծը։ Դրանից հետո յուրաքանչյուր խումբ աշխատում էր գնդակը հակառակորդից խլել և մականով տանել դեպի հակառակորդի վերջնագիծը և անցկացնել նրանից այն կողմ, որով շահում էին մեկ միավոր։ Ամեն անգամ գնդակը վերջնագծից անցնելուց հետո խաղը դարձյալ սկսվում էր կենտրոնից, նույն ձևով։

Խաղն այսպես շարունակվում էր 1—2 ժամ և այդ ժամանակվա ընթացքում, ո՛ր կողմն ավելի շատ միավորներ էր վաստակում, հաղթող էր ճանաչվում։ (Մ. ժո. ձ.)։

480. ՀՈՒ ԿԱՄ ՀՈԼՈՑԻԿ

Գետնին մի փոսիկ (բուն) բանալով մեջը գնդաձև մի ոսկոր (կողոփոց, ճարսճկուկ) կամ մի կլոր քար էին գցում և իրենցից մեկին թաց ու չորի միջոցով դարձնում բնի պահապան։ Խաղացողներն իրենց փայտով աշխատում էին հոլը բնից դուրս թոցնել և հեռացնել, իսկ պահապանը, ընդհակառակը, աշխատում էր թոցրած հոլը իր փայտով գլորել, գցել բունը՝ իր ծանր պաշտոնից ազատվելու համար։ Բայց այդ հազվադեպ էր հաջողվում նրան, որովհետև բոլոր կողմերից նրան վրա հասնող խաչաձև հարվածները գրեթե այն անկարելի էին դարձնում։ (Ա.Խ. II, 254—255 (Վ.)։



Նկ. 54. Հոլ-մականախաղ-գնդակախաղ Տարոնում (բնագիր № 479)
Նկ. Ժամազուրջյանի

481. ՀՈԼ

Խաղում են աշնանը կալերում 4 և ավելի հոգով, որոնք բաժանվում են 2 հավասար խմբի և դասավորվում խաղադաշտում, ունենալով մեկական մական (կոպալ), իսկ երկու խմբի համար՝ մի հոլ։

Վիճակահանությամբ կողմերից մեկն սկսում է խաղը։ Ապա յուրաքանչյուր խմբի անդամ ձգտում է ոտքով կամ մականով հոլը բռնել և հարվածով փոխանցել իր ընկերոջը։ Այդպիսով կողմերն աշխատում են գնդակը տանել ու անցկացնել մյուս խմբի սահմանի վերջին գիծը, որը սար է կոչվում։ Եթե այդ հաջողվում է, տվյալ խումբը շահում է մի միավոր։ (ՄԱԽ. Ա. (Ապ.)։

482. ՀՈՐԹ

Խաղում են պատանի տղաները երկար ձողերով։ Նախ փորում են մի փոս, մոտը դնում մի բռաչափ քար կամ ոսկոր, որ հորթ է կոչվում։ Մեկը ձեռքի ձողով խփում, առաջ է գլորում հորթը «արածելու» և անվանում է մեկին՝ նույնն անելու. սա ևս իր հերթին կանչում է մի ուրիշին և այս այսպես, մինչև որ մեկը չկարողանա խփել հորթին։ Այդ ժամանակ այս վրիպողը կոչվում է մայր և աշխատում է հորթին խփելով «արածելուց» ետ դարձնել, գցել փոսը, իսկ մյուսները, որոնք գայլ են կոչվում, աշխատում են խփել, հեռացնել փոսից։ Մայրը միևնույն ժամանակ աշխատում է ձեռքի ձողով դիպչել գայլերին և եթե հաջողեցնի, խփվածը կլինի մայր, իսկ ինքը գայլ։ Խաղը վերջանում է, երբ հորթը գցում են փոսը (Լ. ԺՄԽ, 42)։

483. ՄԱԿԱՆԱԽԱՂ

—...Հիշո՞ւմ ես և այն, երբ սկսվեցավ մականախաղը, երբ նախարարների երկաթապատ որդիները երկու հակառակ խմբերի բաժանվեցան և

երբ շառաչում էին մականները և փայտյա խոշոր գնդակները փոթորկի նման մի կողմից դեպի մյուս կողմ էին տարվում, այդ ջերմ մրցության միջոցին հայտնվեցավ մի օրիորդ, ոսկեգույն նժույգի վրա նստած։ Հիշո՞ւմ ես այդ օրիորդին։

—Հիշում եմ,—պատասխանեց պառավը։



Նկ. 55. Փայտե գնդակ (բնագիր № 483)
Նկ. Հովհ. Քացակյանի

—Հազարավոր ձայներ՝ խուռն ծափահարությամբ, ողջունեցին նրա հայտնվիլը։ Թագավորը երկար ճոճում էր յուր թաշկինակը։ Նա հայտնվեցավ, ինչպես մի դիցուհի և յուր հայտնվելով նոր ուժ, նոր ջերմություն ներշնչեց խաղին։ Գեղեցիկ էր այդ մանկահասակ օրիորդը յուր սքանչելի զրահավորության մեջ։ Կուրծքը պատած էր պողովատյա ոսկենկար լանջապանով. պղնձյա փոքրիկ սաղավարտը շողշողում էր արևի ճառագայթներից, շողշողում էին և նրա ոսկեգույն գիսակները, որ ծածանվում էին երկաթի մեջ սեղմված թիկունքի վրա։ Նախշուն երեսակալի նեղ ճեղքից հաղիվ երևում էին նրա լուսափայլ աչքերը և սևորակ աղեղնաձև ունքերը։ Հնչում էր փողը, որոտում էին թմբուկները և երկար, ծանր մականը նրա վարժ ձեռքում պտտվում էր, ինչպես մի թեթև փետուր։ Գեղեցիկ նժույգը որպես մի օդագնաց թռչուն, ճախրում էր ահագին ոստյուններ էր գործում, և քաջազնյա օրիորդի մականի ճարպիկ հարվածներով գնդակը սլանում էր մինչև ասպարեզի վերջը...

Հիշո՞ւմ ես, թե ում հետ էր մրցում նա։

— Սամվելի հետ։

—Այո, Սամվելի հետ... Երբ վերջացավ խաղը, հայոց տիկինը (թագուհին) հրավիրեց նրան մեզ մոտ, մեր նստած վրանում։ Յուր ձեռքով նվիրեց նրան առաջին մրցանակը՝ մի ոսկեղեն գեղաքանդակ թաս։... (Ր. III, 148—149)։

484. [ՄԱԿԱՆԱԽԱՂ ՁԻԵՐՈՎ]

Խաղում էին և՛ երիտասարդները, և՛ տարիքավոր մարդիկ, տոնական օրերին։ Խաղացողները նախապես ընտրելով 0,5—1 կմ երկարությամբ և 300 մ լայնությամբ մի հրապարակ, բաժանվում էին երկու խմբի։ Յուրաքանչյուր խումբ կազմվում էր 4 և ավելի հեծյալներից, որոնք կարող էին լինել ինչպես համագյուղացիներ, այնպես և երկու տարբեր գյուղերի բնակիչներ։ Վերջին դեպքում գյուղի, իսկ առաջինի դեպքում՝ թաղի կամ համախմբված բարեկամների խմբեր էին ցավաքաշ դառնում։

Լինում էին նաև բացառություններ։ Խաղացողներն ունենում էին մի-մի կեռածայր մական (կոպալ) և ընդհանուրի համար՝ մի փայտե գնդակ։ Խաղագնդակը դրվում էր հրապարակի, իսկ երբեմն նաև գյուղերի միջև ընկած լայն ու հարթ ճանապարհների մեջտեղը։ Ձիավորները դասավորվում էին դաշտի երկարությամբ՝ իրար դիմաց։

Խաղն սկսվում էր վիճակահանությամբ, դաշտի կենտրոնից, գնդակին տրված մականի հարվածով։ Դրանից հետո յուրաքանչյուր կողմ աշխատում էր գնդակը տանել և հասցնել դաշտի սահմանը՝ վերջնագիծը։ Ամեն անգամ, երբ կողմերից մեկին հաջողվում էր գնդակը հասցնել հակառակորդի վերջնագծին և նրանից անցկացնել, շահում էր մեկ միավոր։ Նախապես պայմանավորված միավորների թվի լրացումով էլ որոշվում էր հաղթանակը։

Խաղի կանոնները նույնն էին, ինչ որ էր հետոտոն մականախաղինը, միայն այն տարբերությամբ, որ այստեղ գործողությունները ծավալվում էին հեծյալ ձևով։ (Տարոնում ձիով մականախաղի ժամանակ հնում գործ էին ածում փայտե մի գործիք, որը վայր ընկած մականը իր կեռ ծայրով թռցնում, գետնից վեր էր բարձրացնում։ (Գ. Բ.)։ (Մ. ժԽ, ձ. (Տրն)։

485. [ԳՆԴԱԿԱԽԱՂ]

...Իսկ վահանը վերցնելով զորքը՝ իջեցրեց նրանց բուն ձորը։ Դարանակալները այստեղից այնտեղից հարձակվեցին իրար վրա. մեջտեղ առնելով՝ կոտորեցին նրանց (պարսիկներին)՝ առանց որևէ մեկին խղճալու։ Միայն հրամայեց բաց թողնելու քառասուն մարդ՝ պարսից թագավորին լրատար լինելու։ Միհրանի գլուխը ուղարկեց թագավորի մոտ, ասելով՝ այս մարզպանը երբ մեր երկիրը եկավ, զորքերը հակառակվեցին միմյանց հետ և գնդակ որոնեցին, բայց չկարողացան գտնել. ապա հույները ձեր թշնամիներն էին, նրանց մոտ չհամարձակվեցիք գնալ, իսկ ձեզ անհաճո էինք, ձեր զորքերը գնդակ չունեին, ուստի կտրեցինք այդ գլուխը և խաղացինք։ Այժմ լսեցինք, թե Շահաստանից եկել եք Բուստր քաղաքը՝ մի տաշտաձև և տափարակ երկիր. գիտենք, որ գնդակ կխաղաք. առեք ձեր քեռորդու գլուխը և թող սերնդե սերունդ ձեզ համար գնգակ լինի։ (ՅՄ. ՊՏ, 200—202)։

486. [ԳՆԴԱԿԱԽԱՂ]

...Իսկ Տիրանը ասում է. վարդուհրի՛, մի՛ մեղադրիր, գլուխդ կախվեց և քեզ գցեց. արդ՝ ուղղում եմ բեռդ և հետո բարձրացնում։ Եվ կտրելով նրա գլուխը՝ տվեց մի ծառայի և ասաց. Պահիր այդ, իջնենք Մատրավանում՝ գնդակ խաղանք սուրբ Կարապետի առջև, որովհետև դա էր, որ նախատում էր սպասավորներին։ (ՅՄ. ՊՏ, 274—275)։

487. [ՃՈԿԱՆԱԽԱՂ]

...Եվ այն գունդը, որով խաղում են տղաները, որով պետք է Բարեկենդանին գնդակ խաղալ, քանի որ գունդը բարձր է գնում և որին որ դիպչում է, ծառայեցնում է մյուս խմբին, որ նշանակում է սատանայի իշխանությունը բնության վրա բարձրացնում է և հարվածում մարդկանց։

Իսկ մեծ զատկին ճոկանով նոր գունդ են խաղում, այսինքն՝ սատանայի իշխանությունը ընկավ մարդկանց ոտքերի տակ և Քրիստոսի խաչելությամբ կոխկրտվեց։ Իսկ գունդը, որ հարվածում էր մարդկանց, դրանից հետո մարդկանց կողմից փայտով ծեծվում է և ընկնում մարդկանց ոտքերի տակ։ (Ձ. № 7550, էջ 79ա)։

488. [ՋԻԱԳՆԴԱԿ—ՄԱԿԱՆԱԽԱՂ]

...Մի անգամ մականով խաղալիս՝ Շավասպ Արծրունուն աջողվեց գնդակը երկու անգամ խլել Շապուհից։ Սա մականով նրան խփելով ասաց. «Ինքդ քեզ ճանաչի՛ր»։ Իսկ նա պատասխանեց. «Այո՛, ճանաչում եմ, որ ես էլ արքայորդի եմ, Սանասարի սերունդ, և իրավունք ունեմ քո եղբայրների հետ թագավորի բարձը համբուրելու, ինչպես և անուն եմ կրում»։ Այսպես ասելով մեծ քամահրանքով ձիարշավի ասպարեզից դուրս սլացավ։ (Մխ. ՊՀ, էջ 331)։

489. [ՋԻԱԳՆԴԱԿ—ՄԱԿԱՆԱԽԱՂ]

...Եվ երբ հայոց թագավոր Խոսրովը վախճանվեց ...Հազկերտը հանձն չառավ Արշակունյաց տոհմից որևէ մեկին թագավոր դարձնել... այլ նրանց վրա թագավորեցրեց յուր որդի Շապուհին, որ միայն իրեն նվիրել էր որսերի և խաղերի՝ հաճոյք ստանալու համար։

...Եվ քաջ Շավասպ Արծրունին ձիարշավի գընդակախաղի ժամանակ ձին մտրակելով նրա ետևից՝ խլում է նրանից գնդակը շատ անգամ, ասելով. «Աղջկամա՛րդ, հեռացիր ասպատակության ասպարեզից, կանացի ա՛յր, ճանաչի՛ր քեզ»։ Իսկ Շապուհը գնդի մականը Շավասպի դիպչելով շարժում է, որին արհամարհելով Շավասպը արձակեբասն երիվարը սիգաքայլ արշավասույր քշելով, աներկյուղ համարձակությամբ անցավ գնաց Անատոլ զորավարի մոտ։ (ԹԱ. ՊՏԱ, 125—126)։

490. [ՋԻԱԳՆԴԱԿ]

...Իսկ Աշոտը մտրակելով զորասպայի ասպազենքով զինված իր երիվարը և լրիվ սպառազինված խումբը կազմելով՝ պատրաստվեց մարտի և առաջ սուրաց գնդակախաղի։ Իր խմբի սակավությունը հաշվում էր հազարներով, որովհետև երկու հազարից ավելի հեծյալ չուներ։ (ԹԱ. ՊՏԱ, 348)։

491. [ՋԻԱԳՆԴԱԿ ԽԱՂԱԼ]

...Այն ժամանակ թագավորի մասին հարց ու փորձ է լինում, թե Հեր քաղաքի որ բերդում է գտնվում բանտարկված։ Նրան հայտնեցին, թե Ապլհաճա ամիրան Դերենիկին կապանքներից արձակել է և ամեն ժամանակ նրան հանում է Հեր

քաղաքից դուրս գտնվող հրապարակը գնդախաղի։ Ապլղարիբը այս լսելով շատ է ուրախանում։ Գաղտնի մարդ է ուղարկում Դերենիկ թագավորի մոտ և նրան այսպես է ասում.

«Ահա ես այս ինչ ժամին այնտեղ կլինեմ. ամեն բանով պատրաստ եղիր, հեծիր մի ընտիր և արագավազ ձի և ջանք թափիր, որ քեզ գցես ինձ մոտ»։ Եվ մի օր, Ապլահաճա դուրս գալով՝ իր բազմաթիվ ազնվականներով գունդ էր խաղում։ Հազարավոր զինված մարդիկ շրջապատել էին նրանց։ Ապլղարիբը հիսուն մարդով գտնվում էր դարանում։ Դերենիկը բուն իշխանների ավագից խնդրում է իրեն համար մի արագընթաց ձի՝ տալով իր ինչքերը։ Այդ ժամանակ Դերենիկը հարվածում է գնդին և վարում է այն կողմը, ուր Ապլղարիբը թաքնված էր Հերի ծառախիտ պարտեզների մեջ։ Եվ ուժգին ասպանդակելով երիվարը՝ Դերենիկը թողեց գունդը և դուրս ելավ։ Ապլահաճ ամիրան տեսավ այդ. զորքերը մեծ կատաղությամբ հարձակվեցին նրա հետևից. իսկ թագավորը հուսալով աստծու վրա, հաջողությամբ գնաց և իրեն գցեց Ապլղարիբի մոտ։ (ՄՈՒ. ժ, 31—32)։

492. [ԶԻԱԳՆԴԱԿ—ՄԱԿԱՆԱԽԱՂ]

...Երբ իմացավ [Ապլղարիբը], թե Ապլհաճ ամիրան արձակեց նրան [Անձևացյաց թագավոր Դերենիկին] և ամեն ժամանակ նրան հանում է գնդախաղի, շատ ուրախացավ և գաղտնի ուղարկեց թագավորի մոտ, թե՝ «այսինչ ժամին իմ զորքով պատրաստ կլինեմ այսինչ տեղում՝ ծառախիտ անտառում. դու զգույշ եղիր և այդ օրը արագավազ ձի նստիր և շտապ ինձ մոտ հասիր, դու հոգ մի անիր»։ Ինչ որ ասվել էր, այնպես էլ արեց. թամբեց մի սրընթաց ձի և նրանով մտավ խաղի մեջ. և գունդը վերցնելով տարավ հեռու տեղ, իսկ ինքը թողեց գնաց Ապլղարիբի մոտ՝ հուսալով աստծու վրա։ (ՍՍ. Տ. 38)։

493. [Ձ Ր Ի Ն Տ]

...Մի տասն օր [օձին տված] ախչկա մոտը չգնացին, տասն օրեն հետը թաքավորին մի ուրախություն էլավ, ձիավորներ թոփ արեց, որ իրա դռան աղաքը մեյտան էր, հաղ աներին։

Հազար ձիավոր թոփ արեց, կնկան ասեց.— Գացե՛ք [Օձ-Մայիլին տված] ախչկան էլ բերեք. Թո գա, թամաշա անի, սիրտը բացվի։

Թաքավորի կնիկը գնաց բերելու։

Օձ-Մայիլն իմացավ, ասեց.—Թաքավորի ախչիկ, հըմի մերդ կգա, քեզ կտանի. թաքավորը աթոռը դրեր ու դռանը, նստեր ա. հազար ձիավոր՝ հինգ հարուր էս դին ա կաղնած, հինգ հարուր էլ էն դիհը, նրինց էն հաղում. ես էլ, ասեց, բոզ ձինը նիլնեմ կգամ. սպիտակ շորերը կը հագնեմ, սպիտակ թոփուզը կառնեմ ձեռս, ո՛րին տամ, շուռ կտամ. քու քրերը, քու մերը ուրիշ բաներ կը խոսան քու վրեն. սկի՛ պատասխան չե՛ս տա. իմ սրտն էլ չես ասի. որ ասեցիր, էլ հնար չկա, քու ձեռը չեմ ընկնի։

...Թաքավորի կնիկը մտավ ներքև... [աղջկա հետ] վե կացան ու գնանցին. գնացին, տեհան ձիավորը էնպե՛ս ա հաղում, որ թամամ ա, թաքավորը նստեր աւ

...Կաղնեցին թամաշա, տեհան մի բոզ ձիավոր էկավ, սիպտակ շորերը հագին, սիպտակ թոփուզը ձեռին, ձին որ քշում ա, ձիու ոտների տակիցը կրակը թափում ա։ Էդ հազար ձիավորին էնպես արեց ո՛ր, դումանը հաննց. որին տվեց՝ շուռ տվեց, որին տվեց՝ շուռ տվեց։ Քշեց, էրկու քենակալների քամակը ընկավ, ամենքին մի դըրպ տվեց, ձիուցը վե քցեց։

...Ձիավորը ցրվրվան, գնացին. էդ բոզ ձիավորը էկավ, թոփուզը տվեց գետինն ու կաղնեց թաքավորի աղաքը։

Թաքավորը հաննց, մի նշան տվեց ըդրան։

Ասեց.— Անունդ ի՞նչ ա, ասա։

Ասեց.—Վերջի օրը իմ անումը կասեմ. թաքավո՛ր, մնաս բարին։ Մեկ էլ տեհան ձիու բոզն էրեվաց, էլ ինքը չերևաց։

...Պարկան քնան։ Մի տաս օր էլ անց կացավ. էլի թաքավորի ուրախութունի օրն էր. ձիավորները թոփ արեց. ասեց.—Գնացե՛ք, էն ախչիկն էլ բերեք, Թո թամաշա անի։

Թաքավորի կնիկը գնաց բերելու։

Օձ-Մայիլն ասեց.—Ախչի՛, թաքավորի՛ ախչիկ, հըմի մերդ կգա, քե կը տանի թամաշի. ես իմ կարմիր ձին կը նիլնեմ, կարմիր շորերս կը հագնեմ, կարմիր թոփուզը ձեռս կառնեմ, կը գամ, կը մտնեմ մեյտանի մեջը. ամենին էլ թոփուզով պտի տամ. ի՛նչ որ կը խոսան, իմ սրտը չես ասի։

Թաքավորի կնիկը մտավ դռնիցը... Վե կացան ու էկան ախչիկն ու մերը, էկան թաքավորի կշտին նստեցին։

Տեհան կարմիր ձիավորն էկավ, մտավ մեյտան. էնպես արեց էդ հազար ձիավորին, որ քոմմըքին էլ տվեց թոփուզով։

...[Օձ-Մայիլը] ձին քաշեց, էկավ, թաքավորի աղաքը կաղնեց։

Թաքավորը հանեց, մի նշան էլ տվեց։

Նշանն առավ ու ձիու գլուխը թողաց, էլ ինքը չերևաց. ձիու թոզն երևաց։

...Մի քանի օր էլ անց կացավ, մի ուրախությունի օր էլ էկավ։ [Թագավորը] ձիավորները թոփ արեց. ասեց.—Լսօր վերջի օրն ա, մի լավ քեֆ անենք։ Կնկան ասեց.—Գնա՛, էն ախչկան էլ բեր։

Թաքավորի կնիկը գնաց։

Օձ-Մայիլն ասեց.—Ախչի՛, թաքավորի՛ ախչիկ, հըմի մերդ կգա, քեզ կը տանի ընտե թամաշա, ես սև ձին կը նիլլեմ, սև շորերը կը հագնեմ, սև թոփուզը կառնեմ ձեռս, կգամ, էն մեյտանը լա՛վ կը հաղամ. քոմըքի բերանը բաց կմնա. ինչ որ քե կասեն, իմ սըրը չասես, իրեք օր ա մնացեր, որ քառասուն օրը թամմի. քառասուն օրը որ թամմավ, տղամարդի ղայտա կը տանեմ թաքավորի մոտը, նոր ընդունց դեն մենք կուտենք, կը խմենք, քեֆ կանենք։

...Տեհան, թաքավորի կնիկը մտավ նեքսև..., ախչկան վե կալավ տարավ։ Գնացին թաքավորի կշտին կաղնեցին թամաշա։

Տեհան մի սև ձիավոր էն դհիցը դուս էկավ. էկավ, թաքավորի առաջին կաղնեց, գլուխ տվեց, ասեց.—Թաքավոր ապրած կենա, կեթամ, ըսօր վերջին օրն ա ձիավորի. հազար ձիավորը մի՛ յան կաղնացրե, ես մի՛ յան կաղնեմ. քու հազար ձիավորի հետ հաղ անեմ ես. իմ ձին կը քշեմ ընդոնց մեջը, որին ըլլի պտի տա՛մ. ընդոնք էլ իրավունք ունեն որ ինձ տան։

Ասեց.—Իրավունք ունես, գնա՛։

Ասեց.—Թաքավոր ապրած, լավ թամաշա արա՛, տե՛ս, իրեք օրեն ետը, ես ու իմ նշանածն էլ քեզ ղոնաղ ենք։

Թաքավորն ասեց.—Որ ինձ ղոնաղ ըլլես, ես էլ պարգև կտամ, գնա՛։

Ընկավ էդ ձիավորների մեջը, խախալատակեց (մաղեց), մեկին էլա չթողաց, ամեքին մի թոփուզ տվեց. տալու քաշտան վեր էր քցում։ Սաղ ինչ տար թամաշավոր կար, էն մեկին ին թամաշա անըմ. իրար միջին խոսում ին ախչկերքը, կնանիքը։ Էն ասըմ էր.—Իմ մարդը ըլլի, էն ասում էր իմ մարդը ըլլի։

Թաքավորի էրկու ախչկերքը ասին.—Մերը հալա մարդ ա. խոսըմ էնք, պա մեր քվորը օձ ա։

Ախչիկը ուզեցավ ասեր էդ իմ մարդն ա, էլի հուպ տվեց իրան, չասեց։

Թաքավորին մի ախչիկն ասեց.—Էն օրվա բոզ ձիավորը իմ մարդն ըլլեր. էն օրվա կարմիր ձիավորն էլ էս քվորս մարդն ըլլեր. ըս օրվա սև ձիավորն էլ ըսրա մարդն ըլլեր։

...Էդ ախչկա սիրտը պատռեց, ասեց.—Ծողը ձեր գլխին ըլլի, ծողը՞։ Էնդար ասեցիք, ես չեմ խոսո՞ւմ. բոզ ձիավորն էլ ա մեկ, կարմիր ձիավորն էլ ա մեկ, էդ սև ձիավորն որ հաղում ա, էդ էլ ա մեկ. ընդուր ասըմ էք, «օձ, օձ». Էդ էն Օձ-Մայլին ա, հա, ձեր ջանը դուս գա...

Օձ-Մայիլը ձին քշեց, էկա՛վ թաքավորի աղաքը կաղնեց, ասեց.—Թաքավո՛ր, խոստացա իրեք օրին հետը գայի քեզ ղոնախ, էլ չե՛ս տեսնի ինձ, գնացի։ Պատճառը քու ախչկանից կիմանաս։

...Մեկ էլ տեսան ձիու թոզն էրևաց, էլ ինքը չերևաց։

...Ձիավորները, թամաշավորները բերատի ցվրվան, գնացին։ (ԷԱժ. IV, 315—319 (Վղ.)։ Համմտ. Հապրմանի խաղերը. Մրգ. III, 85 (Ապ.)։

494. Ջ Դ Ի Ր

Նշանդրեքից հդը նորափեսեն իրա թայդաշ տղերանցով դուրս էկավ թագավորի պալատի աղաքը՝ ջդիր հաղալու։

...Էդ նշանդրեքի օրը, քաչալը ուստից իզին ուզեց. ասեց՝ էթամ հանդը, մի շալակ ցախ բերեմ։ Որ դուս էկավ հանդը, կարմիր մազը կրակ տվեց թե չէ՝ կարմիր ձին իրա ամեն սարգ ու կարգովը էկավ աղաքին կաննեց։ Քաչալը ղառինը գլխիցը հանեց, շորերը փոխեց, նի էլավ ձին, էկավ ջդիր հաղալու։

Քաչալի ձիուն էշ չի կարա հասնի. ընենց էր թռնում, ծուլ ծուլ ըլնում, հենց գիտենաս երկնքի աստղերի հեննա էր հաղում։ Մի քանի գլուխ որ մեյդանի միջին դե՛ս քշեց, դե՛ն քշեց՝ ջդրավորները քո՛մմա էլ մեյդանը թողին՝ փախան։ Ջունքի

հենց ում հասնում էր՝ որ ջղրով չէր տալի, տեղն ու տեղը երես-հարքի վրեն փոկվում էր, վեր ընկնում։ (ՀԺՀ. 19 (Վղ.)։

495. ՋԻՐԻԴ

...Հեռվանց երևում էր, թե ի՞նչ ղիամաթ էր անում իգիթը [Աղասին]։ Ձիու ականջը մտած՝ էնպես էր քշում, կրակին տալիս՝ որ հենց իմանաս՝ թևավոր ղուշ ըլի։ Շատ անգամ ջիրիդը հեռու տեղից շպրտում, ձին չափ էր քցում, ու գետնից ծուլ ըլելիս ձիու վրիցը բռնում էր, էլ եղ քցում։ Շատ անգամ հենց էնպես դուղ շպրտում էր ու կրակի պես եռևիցը հասնում, կալնում, էլ եղ ծուլ անում։ Գետնին վեր ընկած տեղիցն էլ՝ էնպես էր թամքի միջիցը կռանում, բարձրացնում, որ ջիրիդն առաջին դողում էր։ Ընկերտանց վրա էլ որ վախտ-վախտ ջիրիդ չէր քցում, էնպես էր նշանում, որ գդակների ծերին էր դիպչում, կամ գդակը հետը տանում, որ իմանան՝ թե նա նրանց ղիմիշ չի անում։ Շատ անգամ թամքի միջին ջուխտ ոտի վրա կանգնում, էնպես էր ձին չափ քցում։ Աչք պետք է ըլեր, որ նրա ռաշտուքյունը, տղամարդուքյունը, հունարը տեսներ ու զարմանար։ «Ջանմ սան, ջանմ Աղասի՝ մերդ մեկ հատ ա քեզանից բերել, հազար տարի անց կենա, քեզ նման մեկն էլա չի բհամ տալ». ասում էին թամաշավորքն ու խնդում, ուրախանում, ծափ տալիս։ (Ա. Վ2. ե, էջ 37 (Կտ.)։

496. ՄԱԿԱՆ (ՋԻԼԻԲ) ԽԱՂԱԼ

Ջիլիբը, որ Ախալքալաքի հայ բնակչուքյունն իր հետ բերել էր Կարնո նահանգից, նրա ամենասիրած սպորտն էր։ Գյուղում, կարելի է ասել, յուրաքանչյուր գյուղում, 20—30 երբեմն և ավելի երիտասարդ, անգամ հասակավոր մարդիկ, ձմռան լավ օրերին, առավոտը, երբ մալը (տավարը) հոգացած վերջացրած էին լինում, թամբում էին իրենց որձ ձիերը, հեծնում և գյուղից դուրս գալիս կալերը՝ ջիլիբ խաղալու։ Նրանք կապում-հանգուցում էին ձիերի պոչերը, ձեռներն առնում մականները (ջիլիբները)՝ այդ կարճ մահակները և ելնում մեյդան։ Այդ օրը մականավորներն ավելի լավ ու խնամքով մաքրում էին իրենց նժույգները։ Սրանց շատերին կրծքից քաշ էին անում հուռութ-համայիլները, որ զարդարվում էին զանազան փինջերով ու ջմփուլներով։

Ձիավորները բաժանվում էին երկու խմբի՝ ասպարեզ ունենալով իրենց միջև 200 մ տարածություն։ Սկսվում էր խաղը կողմերից մեկի ձիարշավով և հակառակորդ կողմի ձիավորներից մեկի վրա մական արձակելով։ Արձակում էր օդով՝ հորիզոնական կերպով այնպես վարպետորեն, որ մականն օդում սուրալու ժամանակ իր առանցքի շուրջը պտույտ էր գալիս։ Մականը դիպչում էր նշան բռնած տեղին թե ոչ, արձակողը չէր նայում, այլ անմիջապես շուռ էր տալիս նժույգի գլուխը և ետ էր փախչում։ Երբ մեկը տեսնում էր, որ մականը դեպի իրեն են արձակում, նա ձիու գլուխը քիչ շուռ էր տալիս, կուրծքն ու դեմքը պաշտպանում հարվածից։ Հարված ստացող հակառակորդը քշում էր ձին նրա ետևից և հետապնդում, մինչև որ մոտենում և իր մականն արձակում էր նրա վրա։ Այստեղ արդեն նրան դիմավորում էր մյուս կողմից մի այլ խաղացող և իր մականով հարձակվում էր նրա վրա ու հարվածում կամ փախուստի մատնում։ Այս ձևով մականավորները հերթով, մերթ Ա, մերթ Բ կողմից առաջ էին շարժվում, լարում իրենց բազկամկանները, և հարվածում իրար։

Քանի գնում խաղը տաքանում, կատաղի բնույթ էր ստանում։

Դուրսը, նրանց շուրջը հավաքվում էին հարյուրավոր մարդիկ, որոնք ոգևորում էին, աղմկում, գովքի կամ փնովքի խոսքեր էին ասում, բացականչություններ անում։ Կանչը, ճիչը, ուրախության աղաղակը, գոռոցը և ծիծաղը իրար էր խառնվում։ Մեկ էլ տեսար՝ մականավորներն իրար էին խառնվում, էլ չսպասելով իրենց հերթին, որ Ա կողմը Բ կողմի վրա գնար, կամ ընդհակառակը, այլ բոլորը, իրար վրա մական էին նետում, ետ դառնում, կամ եկողին հակահարված տալիս։ Ձիերի սմբակների տակից ձյան փոշին բարձրանում և բռնում էր ամբողջ ասպարեզը։ Այստեղ լինում էին շեշտակի ու շեղակի հարվածներ։ Մեկի գլուխն էր ջարդվում, մյուսի կողքը կապտում, ցավում, երրորդի աչքն ու երեսն էր վնասվում, արյուն շաղախ լինում...

Մականների ամենաշատ հարվածները ձիերն էին ստանում, որոնց աչքը հանում, ոտքերը ջար-

դում, քիթ ու բերանից արյուն էր հոսեցվում... Բայց խաղալը, հարվածելը օրենք էր, ադաթ, տրադիցիա, այնպես որ ոչ ոք իրավունք չուներ տրտընջալու, բողոքելու, կամ որևէ թշնամական վերաբերմունք ցույց տալու։ Չես ուզում ջարդվել՝ մի խաղա՝ այս էր սկզբունքը։

Ըստ սովորույթի՝ յուրաքանչյուր խաղացող պետք է ունենար երկու մական և մի ճոկան։

Հուսկ հետո, երբ արդեն խաղի վերջն էր գալիս, ձիերն իրար հետ չափս էին գցում. և պետք էր տեսնել, թե ինչպես լավ պահված, մաքուր նժույգները արշավում էին իրար հետ, մրցում հաղթություն տանելու համար։ Սրանք վազում, սլանում էին մինչև 1 կմ տարածություն, մինչև որ միմյանցից անցնում , հաղթում էին։ Միայն երեկոյան դեմ, երբ զանգերի ժամանակն էր լինում, հետևապես մալը հոգալու ժամանակ՝ ցրվում էին իրենց տները, տանելով հետները բավականին քանակությամբ վիրավորներ ու ջարդվածքներ ստացողներ։

Այսպես է այս ծանր սպորտը, որը շատ հաճելի է ժողովրդին և որը 1900-ական թվականներից սկսեց կամաց կամաց վերջանալ։ Դրան նըպաստում էր նժույգներ պահելու սիրո և սովորության անհետացումը։

Մականախաղ խաղում էին նաև ամառ ժամանակ, երբ հերկը վերջացած էր լինում և հունձը վրա չէր հասնում։ Բայց այս սակավ էր պատահում։

Նույն մականը խաղում էին նաև մաղարի ժամանակ, երբ հարտնտուի էին գնում հարևան գյուղը։ Հարսին նստեցնում էին՝ ամռանը կամ աշնանը ֆուրգոնին, իսկ ձմռանը՝ սահնակին։ Իսկ իրենք ձիավորները հարսի շուրջը չափս էին գցում իրենց ձիերը և մական էին խաղում։ Պատահում էր, որ երբ վերադառնալիս մոտենում էին փեսայի գյուղին, ձիավոր մաղրվորներից մեկը, որի ձին ամենաարագընթացն էր լինում, մյուս մաղրվորներից մեկի փափախը գլխից խլում և սլանում էր դեպի գյուղ։ Երբ փափախատերը հասնում էր, վերցնում էր իր գլխարկը, ապա թե ոչ փախցնողը հասցնում էր հարսնեատիրոջ տունը և ձիու համար բախշիշ պահանջում։ Ստացված նվերը, որ լինում էր շալ, աղլուխ, կամ որևէ արժեքավոր կտոր, ինչպես նաև վարշագե գոտի, կապում էին հաղթանակող ձիու վզին։ (ՀՄ. ՀԳԱ, IV, ձ. 245—248)։

497. ՁԻԱՐՇԱՎ—ՄԱԿԱՆԱԽԱՂ

...Նոր կիրակի, կանաչ կիրակի ասելով պետք հիշես, թե այսօր Վանա Այրահարույց սուրբ Աստվածածնի եկեղեցվո տոն է։ Բայց եթե ճշմարիտն ուզես տեղեկանալ Ավազնոցի աշխարհահռչակ ձիարշավի տոնահանդեսն է, զոր ի զբոսանս մեր և ձեր մանկության պետք է նկարագրեմ աստանոր։

Արեգական ջերմություն և գարնան եղանակ, բոյսք դալարիք, կանաչք և ծաղիկք ի հողս արտաքս բերեն և սոքա ևս մարդիկ, անասունք և ձիք արտաք հանեն ի տանց և ի բնակությանց և բերյալ համահավաքեն ի գլուխ Այգեստանյաց ի Հավազնոց կոչեցյալ տեղին։ Աստի երևի լյառն վարագա, յուր բոլոր կանաչազարդ գեղեցկությամբ, աստի երևի Վանա դաշտն և արտորայք յուրյանց ընդարձակությամբ, աստի երևին Այգեստանք և բուրաստանք Վանա յուրյանց գարնանային գեղեցկությամբ, ուստի կանաչ կիրակի և Այրհարոց տոն ասելով քաղաքի շրջակա գյուղ[եր]ի բոլոր բնակիչք բաց ի կանանց, ժողովին, գան՝ նախ ի հրապարակ Արարք եկեղեցվո, ապա խումբ խումբ գնան ի Հավազնոց ի տեսանել զձիարշավն մեծ և երևելի.

Ահա աշխարհ թունդ առած տուներեն և թաղերեն համահավաքին ի հրապարակն Այրհարույց, ուստի մեք ևս մեր թաղի տղայոց հետ ի միասին՝ ի ճանապարհին խաղալով, խնդալով, տեղ տեղ կայնելով, հավկիթ խաղալով, տեղ տեղ ևս ուրիշներու խաղեր դիտելով հասանեաք ի մեծ հրապարակն, որ լի էր խուռն բազմությամբ։

...Շատ տեղեր հայոց երիտասարդք և տղայք վազելո և թռչելո խաղեր խաղան։ Խաղացողք բավական բազմություն ձգած են յուրյանց տեսարանին։ Քանի հանդուգն հայ տղայք հորերեն գաղտնի ձիանք հեծած, եկած են Ավազնոց, անկանոն ձիարշավ առնեն։ Բայց բազմության աչք մնացած [է] ձիավորաց գալուն։

...Ահա Թամար օղլիք, որոց պարագլուխ էր Թաֆուր պեյ, որդի Իսախ փաշային, հանդերձ ձիավորօքն հինգ (թուրք) գերդաստանական ազնըվականաց 100—150 և մինչ երկու հարյուր ձիավորօք գայր մտաներ ի հանդիսավայրն, զարդար-

յալք ի զարդ փառավոր, յուրաքանչյուր այր՝ մական ի ձեռին։ Հետո գայր գյուղատերանց ջոկատն, հետո հարստաց և ապա անհատից, մինչև թիվ նոցա երբեմն հասներ 3—4 հարյուր։

Երկու ջոկատ բաժանվեր այրուձին, մինչև երթար Ավազնոցի հյուսիսի ծայրն և մյուսն մնայր հարավային ծայրն և միջոցն մնայր մի երկու ձիարշավի ասպարեզ։ Ահա երկու կողմանց 2—3—4 արք ստորինք ելանեին հասպարեզ գրգռել ձիարշավն և զմականախաղություն։

Արվ[ե]ստ և ճարտարություն չկար սույն ձիարշավի մեջ, զի կամ գույգ-գույգ արշավեին, որո ձին մյուսեն անցաներ, հաղթող համարյուր և կամ ձիավոր մի հյուսիսեն գալով մական արձակեր ի վերա հարավայնոց և ի սոցանե զհետ նորա պնդյալ երկու երեք ձիավորք և եթե հասաներին մականով զկատափ նորա հարկանեին, իսկ եթե փախուցյալն սրարշավ լյալ մտաներ ի խումբ ջոկատի յուրո, զհետ պնչյալքն ի վերա ջոկատին արձակեին զմականն։ Հետո աստի զհետ մական արձակողաց պնդեին և հարկաներին։ Կային ի նոսա մի կամ երկու հազվագյուտ անձինք, որք ի հարձակել մականց ի թամքն ձիույն դառնային ի ներքո որովայնի ձիոցն և այսպես ունայնացուցանեին զդիպումն մականին։

Հանդիսականք ուրախանային հորժամ զձիան ուրուք անցաներ զձիան այլոց ուրուք, հորժամ որ մականավ ի հետուստ հարկաներ զոտն և զթև ուրուք և կամ ի մոտ հասյալ հարկաներ զկատափն փախուցելույն։ Բարձրաձայն ծիծաղ և ծափահարություն առ այս լիներ, հորժամ որ զհետն պնդելն և կամ ի փախչելն հերիվարեն հերկիր. արկաներ, որ իբրև ակնկարյալ այլևս չհամարձակեր մտնել ի խաղ, զի ամենքյան հո՜ւ քաշեին, այն նախատանոք ծաղր առնեին զանկյալն։ Երկու երեք ժամ սույն տեսարան տևեր ապա խումբ-խումբ ձիավորք դառնային յուրաքանչյուր տեղիս[86]։

...Բայց մի տարի Քաջբերունյաց գավառեն Գանձակեցի Հովհաննես վարդապետ սույն օր յուր նժույգ երիվարավ եկավ մտավ ձիարշավի մեջ։ Թևեր վեր տված, մականն ի ձեռին, հասպարեզ կարդաց տաճկաց քաջարշավ ձիավորք, քանի գլուխ գնաց եկավ, քանի տաճիկ մականավ ձիեն վար բերավ։ Տաճիկք վարդապետի քաջություն տեսնալով ուզեցին բազմությամբ արշավել նորա վերա և հերկիր տապալել, ուստի նա աույժաբար գոչեց.

—Եթե քաջ եք, մեկ եկեք, քանզի ես մեկ եմ, ամոթ է մեկի վերա տասնով քսանով արշավել խաղի մեջ։ Տաճիկք թեպ[ետ] ամոթահար ետ քաշվեցան, բայց ոխակալ թշնամությամբ գնացին Թամուր փաշային բողոքեցին նորա վերա, թե մահապարտ է, զի տաճիկներ ամոթահար արած[87]։ (Ջ. № 4184, էջ 120բ—123բ։ Համմտ. ՊՀԽ, 106—109 (Աշտ.)։

Հայոց ներելի չէր ձիով սույն ձիարշավի մեջ մտնալ, զի այն ժամանակի բարբարոսություն կատարյալ էր։ Հայք ոչ լավ ձի կարող էին պահել և ոչ համարձակ հեծանել, այլ միայն առաջնորդն և մի քանի իշխանք քաղաք երթալու գալու համար հրամանով փաշային հեծանեին ի հասարակ ձի և հասանել առաջի Թարվիզու դուռն իջանեին ի ձիույն և հետի երթային ի հառաջնորդարան կամ ի շուկայն։ Զի եթե Թամուր-Օղլիք կամ այլ օճախլիք հայոց մոտ լավ ձի և զենք տեսնային, բռնի առնեին և եթե տեսնային տաճիկք, թե հայք ձիով Թարվիզու դռնեն մուտ պիտի գործեն, խնդույն անարգարար ձիեն վար առնեին։ Իսկ միջին դռնեն անհնար էր առաջնորդի կամ իշխանի ձիով երթալ ու գալ, այլ ոտքով պիտի ելնեին՝ և մտանեին այդ դռնեն։ (Ջ. № 4184, էջ 123ա—123բ)։

87 Փաշան զվարդապետն հատյան կոչելով կշտամբեց զնա, ասելով,—Դու ընթերցող ես, քեզ ինչ կվայելէ, որ Ավազնոցի մեջ ձիարշավ լինիս առանց ակնածելու և ամաչելու։

Պատասխան վարդապետի, զոր տասն տարի առաջ նորա բերանեն իսկ լսեցի, [է].—Տեր իմ, ինձ լսե, ծերացյալ եղինք, որք այլ ևս չեն կարող լուծ քաշել և երկիր հերկել, տեր, այսպիսի եղինք կովուց հետ նախիր խրկին, ցուլեր ինչպես կովուց վերա, այնպես ևս այդ խեղճ ծերացած եզանց վերա թռչեն, կարծելով, թե նոքա ևս կով են։ Խեղճ եզինք յուրյանց հոգ[ը] պահելու համար մի փոքրիկ կից արձակեն, ոչ թե ցուլ հարկանելու համար, այլ իրենց նստո տեղ պահելու համար։ Այսպես, տեր իմ, տաճկաց երիտասարդք իբրև ցուլ զիս տեսնալով և կարծելով թե ես կով եմ, և ոչ թե եզ, թռնել ոտքեցին վրաս, ևս ալ իմ հոգս պահելու համար մեկ երկու կից տվի իրենց ոչ թե զիրենք հարկանելու համար, այլ իմ հոգս պահելու համար, վասնզի այդ երիտասարդք հազար անգամ զիս ծաղրած են և հանդիմանած, թե ասեն, թե դու քաջ ձիավոր ես, մեկ անգամ մտիր ի հասպարեզ, քեզ ցույց

Տես Ավազնոցի ձիարշավի մեջ ամենեն անվանի էր Թաֆուր պեյ, որ առաջին ձիավոր և մականախաղն էր։ Սա յուր բազուկն պիրկ կապեր, ապա թե ոչ յուր արձակած մական գնդակի պես հարվածեր զմարդն։ Բ. Թամուր-Օղլի Տևրիչ պեյն էր և իրեն մերախոռ որո անուն միտքս չէ։ Սա հսկա և հույժ քաջաբազուկ լինելով հարյուր քայլ հե[ռ]վանց մական արձակելով դիպեցուցաներ ում և կամեր։ Գ. Ռեզենց քոս Սելոն, որ առաջին կարգի ձիավարժ լինելով, ի հարշավելն զամենեցուն զձիս անցաներ։

498. ՋԻՐԻՆԴ

...Քիչ մը անդին (Վանա) Արարուց մեյտան, ուր չհասած տակավին այդ ավազուտ ասպարիզը կը տեսնա՞ս. Ազնոց կըսեն ադոր. այդտեղ ամեն տարի զատկի նոր կիրակիին հայ ու տաճիկ նույն ավուր համար պահված իրենց նժույգ ամեհի ձիերը հեծած կուգան ջիրինդ կը խաղան բավական կանոնավորությամբ, բայց հանդուգն հարձակմամբ. այնպես որ շատ անգամ անձանց վնասներ կը պատահին. տեսնելու բան է այնքան բազմություն արանց և կանանց, որ ճանճերու նման կը լեցվին այդ ասպարեզի շրջապատը և դատավոր կը հանդիսանան խաղացողներուն. նախատանաց քրքիջներ կարձակեն իյնողին կամ զարնվողին և խրախուսանաց աղաղակներ կընծայեն ճարտարին, հաղթողին, մանավանդ անոր, որ ամենեն վերջը տեր կը հանդիսանա ասպարեզին, և սիգապանծ ինքն ի նժույգ, կը ճեմե միայնակ հայս և հայն կողմն ճոճելով, հայելով... (ԳՍ. Մն., 57)։

499. ՋԻՐԻՆԴ

Սասունում ձիարշավին մասնակցում էին պատանիները և երիտասարդները։ Այստեղ ձիավորները հաղթահարում էին լեռնային-քնական արգելքները, ժայռերն ու ձորերը և թռչում գետերի վրայով։ Երբեմն արշավի միջոցին նրանք զբաղվում էին նաև նշանառությամբ։ (Պետ. ձ.)։

500. ՋԻՐԻՆԴ

Ամեն տարի ս. Աստվածածնի վերափոխման տոնին անթիվ բազմություն կը հավաքվին Հոս (Վասպուրականի Խաթուն Տիրամոր վանքը) ի հեռավորաց և մերձավորաց. ուխտ ու մատաղ ընելու հետ առատ կեր ու խում կընեն, ինչպես ամեն վանքերը ուխտ գնացողներ կընեն. մերձակա քյուրդերը և եզդիները կը զարդարվին և իրենց ձիերը հեծած, սպառազինած հոն կուգան ձի և ջիրինդ կը խաղան, որոց կը մրցին թե Ռուսաստանեն ու Պարսկաստանեն եկած և թե տեղացի կորիճ ձիավոր հայեր։ Ասոնց մեջ մշտահաղթ դյուցազն է այս դարուս՝ վանքին մոտ եղած Գործոթ գեղի հայ Մելիքն. դեռ անոր դեմքն դարձնող և թևն ոլորող մը չգտնվեցավ։ Երբ այս անձն կելլե ասպարեզ, ամենքն ալ ռայա կուգան իրեն։ Իրոք ալ իր հասակը, իր դեմքն ու իր հագուստը տեսնողը կզմայլի։ Այս հանդեսը կառավարելու համար վանա փաշային և առաջնորդեն հսկողներ կը ղրկվին, երբեմն ալ իրենք անձամբ կուգային։

Այս տոնը կանվանեն «Ասպարաժնի տոն»։ (ԳՍ. Մն, 122)։

501. ՃՈԿԱՆԱԽԱՂ

Ըմբշական մարզանքներու մասին Զեյթուն և շրջակա գյուղերը քաղաքեն ավելի համարձակ եղած են հինեն ի վեր։ Զեյթունցիներու ճոկանախաղի (ճիրիտ) և ըմբշամարտության մասին պատմություններ կան գրված։ Ասոնցմե հիշենք մեկ քանին.—Զեյթունցի համբավավոր Տեր Օհան (Տեվի Քեշիշ) Ղավուղը Պեոյյուքենց, որ իր եկեղեցիին շինության համար դրամ հանգանակելու մտադրությամբ 1802-ին վերջերը Ատանա մեկնած և չէր հաջողած բավականաչափ գումար ձեռք բերել՝ քենոտած կերթա և Ատանա Տելիներուն օճախը կամավոր զորք կը գրվի։ Տելիներու պետ Մեննեն պեյ իր քահանա ըլլալը գիտնալով՝ թեև չուզեր, սակայն անոր քաջության համբավը լսած ըլլալով՝ կը հաճի։ Կորոշեն, որ իր հայ ու քահանա ըլլալը գաղտնի մնա։ Պեյը Տեր Օհանին Յուսուֆ անունը կու տա ու կը հարցնե, թե ձիավա՞րժ է, կրնա՞ եիրիտ խաղալ։ Տեր Օհան կըսե թե կրնա, սակայն իր խաղալը վտանգավոր է, որովհետև զարկածը կամ կը մեռնի, կամ կիսամեռ կիյնա, միայն թե երբ բազուկը փակով մը լավ կապվի՝ քիչ մը կը տկարանա ու զարնվողը թերևս չի մեռնի։ Եվ որովհետև մյուս օրը ճիրիտի փորձ պիտի ըլլար՝ Յուսուֆ (Տեր Օհան) իր հավնած ձին կառնե պեյին հրամանով, կը փորձե ու պեյին հետ ճիարշավի հրապարակը կերթան, որ Ատանայի կամուրջեն քիչ մը հեռու տափարակ վայր մըն էր։ Թուրք և հայ մեծ բազմություն հավաքված էր խաղը դիտելու. կուսակալ Ալի-Րիզա փաշա ևս քաղաքին ավագանիով և կառավարական պաշտոնյաներով ներկա էր։ Կուսակալին առջև դրված

տամք, ահա ես էլ ձեր վրա վստահություն ունենալով մոտ և ցույց տվի, թե ես եղ եմ և ոչ թե կով։

Հոհական փաշային զայս ի վարդապետեն լսելով, ապրես, կեցցես ասելով խելայե զնա. գնա դու իմ Քոսումն ես, միշտ այդպես քաջ եղիր։

Արդարև եթե Գանձակեցի Հովհաննես վարդապետին հրաման լիներ մտնալ այդ ճիարշավի մեջ, բոլոր ճիավորք վարպետական և հալածական տաներ առջևեն, ինչպես այս անգամ տարավ։ (Ձ. № 4184, էջ 123բ—124ա)։

էր մեծ ծրար մը, որուն մեջ կը գտնվեին խիլաթներ (զգեստ) ամենաճարպիկ ճիրիտճիներուն սահմանված։ Հանդեսը կը սկսի. տասը ձիավորներ կը շարվին Տելի Յուսըֆի կողմե, իսկ ուրիշ տասը ձիավորներ ալ անոր հակառակորդ հռչակավոր Ասլան Ալի անուն ճիրիտճիի մը քով։ Երկու կողմի տասնյակները դեմ առ դեմ գալով կը խաղան. կարգը պետերուն կուգա։ Ալի և Յուսուֆ իրարու քով երթալով կը համբուրվին, և հրաժեշտ կու տան։ Օրենքով կարևոր էր այս ձևակերպությունը, որ խաղացողներ թե՛ հոս և թե՛ հանդերձյալին մեջ մահապարտ չի նկատվեին։ Կրնան քանի մը նախապատրաստական խաղեր, բայց իբրև ճիշտ խաղ՝ Ասլան Ալի ձայն կու տա. «ո՛վ Յուսուֆ, ամուր բռնե զքեզ. ահա ճիրիտս եկավ» և անմիջապես ճիրիտը կարձակե Յուսուֆին դեմ, որ շատ ճարպիկ ըլլալով՝ ձիուն մեկ կողմը կը ծռի և հակառակորդին ճիրիտը օդին մեջ կը սլանա։ Յուսուֆ կը շտկվի, կը կենա և կը կանչե. «Ո՛վ Ասլան Ալի, պատրաստվե՛, որովհետև կարգը ինձի եկավ», և վերջին բառը դեռ չարտասանած՝ ճիրիտը կը սլանա և Ասլան Ալիի ականջներեն մեկը կը տանի։ Խեղճ Ալիին արյունը կը հոսեր առատորեն։ Հանդիսականներ կը պահանջեն վերջ տալ խաղին և Ասլան Ալի գոհ կըլլա մեկ ականջով ազատվելուն համար։ «Կեցցե՛ Տելի Յուսուֆ, կեցցե՛». կը լսվի ամեն կողմե։ Վալին անմիջապես իրեն կանչել կու տա Յուսուֆը և կըսե. «Ա՛ֆերիմ, պունտան սոնկրա սենին իսմին ֆահրատ[88] տըր» («կեցցե՛ս, այսուհետև դուն ֆահրատ պիտի կոչվիս»)։ Նույն օր իսկ գիժախումբին հարյուրապետ կը կարգե 500 դահ. ամսականով և իբրև մրցանակ խիլաթի ծրարեն սրմալը չեփկենը (բաճկոն) և արձաթապատ պատյանով սուր մը կը նվիրե նորանուն Ֆահրատ աղային։ Մեննեն պէյ Յուսուֆին քաջությունը և հարցը ավելի բարձրացնելու համար, վալիին ցույց կու տա անոր աջ թևը, որ փոկով կապված էր՝ ուժը չափավորելու համար։ Վալին ձեռքովը կը քակե փոկը նորանոր գովեստներով, և բազմությունը կը ցրվի։ (ԳՄ, 345—346)։

502. ՋՐԻՆԴ-ՄԱԿԱՆԱԽԱՂ

Բարեկենդանին Բուլանըխցի երիտասարդ տղաները գյուղի ընդարձակ տեղերից մեկում մականախաղ էին կազմակերպում։ Ասպարեզի հանդիպակաց ծայրերում 15—20-ական ձիավորներ զինվորական կարգով շարվում էին ու սպասում խաղն սկսելու նշանին։ Հանդիսատես հասարակության մեջ կանգնած զուռնա-նաղարան հատուկ եղանակով ազդարարում էր խաղի սկիզբը։

Խմբերից մեկի մի ձիավորն արշավում էր դեպի հակառակորդ խումբը և մերձենալիս մականով նշան էր անում կամ մականը նետելով՝ ձիու գլուխը շուռ էր տալիս ու փախչում դեպի իր խումբը։ Նշանը կամ մականն ընդունող խմբից մեկն անմիջապես սլանում էր նրա հետից մականահարելու, որին դիմագրավում էր հակառակորդի մի այլ ձիավորը, նույն նպատակով։ Եվ այսպես ձիավորները փոխադարձաբար միմյանց հետապնդելով կամ դիմագրավելով մականահար էին անում։ Խաղն այս ձևով շարունակվում էր մինչև ձիերի փրփրակալումը, երբ ձիավորներից շատերը գլուխներից, ոտքերից և այլ տեղերից վիրավորվելով՝ դադարեցնում էին։ (Բ. ԱՀ, VI, 61)։

Գ. ՋԻԱԽԱՂԵՐ

Ձիախաղերի բաժնում հավաքված են նիզակախաղերը, ձիարշավները, կառարշավները և օղապարանով ձիավորի կողմից թշնամուն որսալու եղանակները։ Այդ նյութերը գրի են առնված միջնադարում, XIX դ. վերջերին և XX դ. կեսերին։

Ինչպես երևում է, ձիագնդակ-մականախաղերի համեմատ նիզակախաղերը Հայաստանում ավելի երկար են հարատևել։ Սրա պատճառներից մեկն այն էր, որ նիզակախաղերն ու ձիարշավները մեծ մասամբ տեղի էին ունենում ժողովրդական տոներին, ուխտագնացությունների և հարսանեկան հանդեսների ժամանակ։ Իսկ ծեսերի և ծիսակատարությունների նկատմամբ թուրքական իշխանությունները որոշ չեզոքություն էին պահում։

Մեր օրերում ձիարշավներն ու նիզակախաղերը մոռացության են տրված. միայն Երևանի ձիարշավարանն է, որ իր նեղ շրջանակներում պահպանում է այդ խաղերի չնչին մասը։

---

88 Ֆահրատ՝ ըստ Թրքաց կը նշանակե հաղթանդամ, զորեղ, կորիճ. Ամասիա քաղաքին մեջ կան մարդոց ձեռքով շինված քարայրներ, զորս Թուրք ավանդության համաձայն Ֆահրատ, իսկ հայկականին համաձայն Միհրդատ շինած է։

503. [ՁԻԱՐՇԱՎԻ ՀՐԱՊԱՐԱԿ]

...Իսկ փախած նախարարների և ազատների կանանց [Շապուհ թագավորը] հրամայում էր բերել Զարեհավան քաղաքի ձիարշավի հրապարակը։ (ՓՔ, ՊՀ, 268)։

504. [Զ Ի Ա Ր Շ Ա Վ]

Սինամ-Սարիմ, Սենե-Քարիմ ըսեցին.
— Մո՛լա, ըբը էս ի՞նչ ա,
Օր խեծած կը քշեն է՛ս յան, է՛ն յան։։
Մոլլան ըսեց.—Տղեկնե՛րս,
էտի ձի յա, վրավին էլ մարթ ա.
Կը քշեն էս յան, էն յան, ուրախութուն կ՛էնեն։
(ՍՍ. բ. II, 647/Ապ.)։

505. [ՁԻԱՐՇԱՎՆԵՐ ԵՎ ԱՅԼ ԽԱՂԵՐ]

...Այդպես քեզ էր վայել թագավոր լինել, այսպիսի պալատում ճեմել, այսպիսի խրախճանքներով ուրախանալ, այսպիսի հայրենիք ստանալ, այսպիսի գանձերով հարստանալ, այսպիսի կահկարասի ունենալ. այսպիսի կառքով կառամարտել, այսպիսի ձիարշավարաններում արշավել, այսպիսի ստադիոնում բազմել, այսպիսի մրցում տեսնել, այսպիսի փողահարներով և թմբկահարներով հպարտանալ, այսպիսի որսերով զվարճանալ, այսպիսի բաղնիքներով մաքրվել։ (ԳՄ. Թ, 40—41)։

506. [ՁԻԱՐՇԱՎՆԵՐ]

Լսում ենք, որ կան քահանաներ, որոնք զբաղվում են ձիավարժությամբ, զինվորների նման զենքեր են կրում և ձիարշավի խաղերի խրախճանքներին նրանց հետ արշավում են երիվարներով։ Մասնակցում են երիների որսի, նետաձգության և ամեն այս տեսակ գործերի, որոնք հարմար են աշխարհականներին և ոչ թե եկեղեցու սպասավորներին։ Այլ վայել չէ կարգավորներին, որ զենք վերցնեն, երիվարներով արշավեն՝ երիտասարդական սովորությամբ և դրանով նյութ տան տեսնողների բամբասանքներին։ (ՆՇ. ՀՔ. 66)։

507. [ԼԵՎՈՆԸ ՁԻԱՎԱՐԺ]

...Այլև Սուլթանի հետ դուրս գալով ձիարշավի ասպարեզ [Հեթումի որդի Լևոնը], գերազանցեց բոլոր զինվորներին ձիավարժության կանոնների մեջ... (ՍԱՆ. Հ, 222)։

508. Զ Ի Ա Ր Շ Ա Վ Ա Ր Ա Ն Ն Ե Ր

...Չորրորդ՝ ծուլությունը տիրում է ամենքին [Անիի ունևոր դասերին], որովհետև առանց աղախինների և ծառաների չէին կարող մնալ. ոտքով եկեղեցի չէին գնում. ոմանք գրաստով էին գնում, իսկ մի մասն էլ չէր ցանկանում գրաստներից իջնել, այլ ժամարարներին դուրս էին կանչում, բարձրացնել էին տալիս ավետարանը և համբուրում էին։ Եվ այդպես նշխարները վերցնելով՝ գնում էին թատերական խաղերի, թատրոններ և ձիարշավարանների հրապարակները։ (Ակ. Պ, 103)։

509. [ՁԻԱՐՇԱՎ ՏԱՐՈՆՈՒՄ]

Տարոնի հայության մեջ զարգացած էր ձիարշավներ կազմակերպելու սովորությունը, որին իբրև շարժառիթ հանգամանքներ էին հանդիսանում հարսանեկան հանդեսները, ժողովրդական տոներից մասնավորապես Համբարձումն ու Վարդավառը։ Ձիարշավներն առավել մասսայական բնույթ էին ստանում ս. Կարապետի մոտ, նրա տոներին։

Այստեղ հավաքվում էին, բացի տեղացիներից, նաև Կարնո, Վասպուրականի, Բաղեշի, Խնուսի և այլ հեռավոր շրջանների հեծյալ կտրիճները։


Ձիարշավների ժամանակ դավուլ-զուռնան նվագում էր այդ մրցման հատուկ եղանակը։ Նվագից ոգևորված ձիերը ելման կետերից սլանում էին դեպի նշանակված սահմանները և վերադառնում էին։

Ս. Կարապետում նշանավոր ձիարշավները կազմակերպվում էին հատկապես Վարդավառին, որը հաճախ տեղի էր ունենում արգելքների հաղթահարումով, նիզակախաղով և այլն։ Այս բոլորը լուրջ նախապատրաստություն էին պահանջում։

Խարս գյուղում ձիարշավների մեջ իր հմտությամբ ու համարձակությամբ երևելի էր Իրիցու Գրիգորը։ Սա ձիու ընթացքի բոլոր ժամանակներում զույգ ոտքով կամ գլուխկոնծի կանգնում էր ձիու մեջքին, անցնում էր ձիու պարանոցի տա-



58. Հեծյալ զինավարժություն, նիզակը նետել և օդում բռնել, նետել ցած և ընթացքի ժամանակ բռնել



Նկ. 57. Քիարշավ։

Նկ. Ռ. Մնացականյանի

կով, իջնում էր, բարձրանում, ցանկացած առարկան վերցնում էր գետնից, կամ որևէ իր նետում էր ու բարձրացնում։

Ձիարշավների ասպարեզում աչքի էր ընկնում նաև Գավռոցի Մոսոն, որը լավ, ընտիր ձի ունենալու համար զոհում էր ամեն բան։ Այս Մոսոն այնքան էր տարված մրցումներով, որ մի անգամ ձիարշավում առաջին տեղը չգրավելու հետևանքով տեղն ու տեղը գնդակահարում է իր ձին ու գնում արաբական մի նոր նժույգ։

Ձիարշավներից հետո ժողովուրդը դրան նվիրված երգեր էր հորինում, որոնց մեջ արտացոլվում էին հատկապես այս մրցումներում աչքի ընկնող գյուղերը։ (Մ. ԺԽ. ձ.։ Համմտ. «Կրակ տանել» խաղը. ՍՍ. բ. II, 848)։

510. Գ Ր Ո Հ

Արևմտահայաստանի որոշ գավառներում վարդավառին երիտասարդները թաղեթաղ կամ գյուղեգյուղ ձիարշավներ էին կազմակերպում, որին գրոհ (պասալու) անունն էին տալիս։ Արշավողներն իրար հետ զրզռիկներով (հողաման, խեցի) կռվում և աշխատում էին հակառակորդներին քշել ու լցնել մոտակա ջրերը, որը նրանց համար ոչ միայն ամոթ ու խայտառակություն էր բերում, այլև զրկում էր խաղին մասնակցելու իրավունքից։

Երիտասարդներն այդ օրը ջիրինտ ու փայտախաղ խաղալով և ըմբշամարտեր կազմակերպելով վայելում էին հանդիսականների խրախուսական ծափահարությունները։ Հաղթողները հանդիսապետերից վարդապսակ մրցանակներ էին ստանում, որով պսակում էին իրենց արախչիները։ (ԱԴ. II, 146—147)։

511. [ՀԱՐՍՆԱՈՒԻ ՁԻԱՐՇԱՎՆԵՐ]

Շաբաթ օրը ճաշից հետո փեսացուի հայրը և քավորը ձիավորվում էին մի շարք այլ մաղրվորնեերի հետ։ Երգով, խաղով ու դավուլ զուռնի առաջնորդությամբ նրանք ուղղվում էին դեպի հարսնացուի գյուղը։ Երիտասարդ մաղրվորները ճանապարհին աշխատում էին իրենց բոլոր շնորհքները բանեցնել, արշավում էին, ջիլիթ խաղում, երգում և հազար ու մեկ կատակներ անելով գնում, հասնում գյուղ։ Վերադարձին ևս ջիլիթ խաղալով և հրացանաձգությամբ, դավուլ զուռնայի առաջնորդությամբ հասնում էին իրենց գյուղը (ԵԼ. ԱՀ. I, 250, 254 (Ախ.)։ Այդ նույն շաբաթ օրվա առավոտյան վարանդայում ձիավորված թագավորն ու մակարները հարսի գյուղը գնալիս ձիարշավ էին սարքում, առաջ ու ետ գնում, կանգնում ձիու վրա, քշած միջոցին ոտը խփում գետնին և կրկին թռչում ձիու մեջքին, մտնում ձիու փորի տակ և ատրճանակ արձակում և այլն (ԵԼ. Վ. ԱՀ. II, 134)։

512. [ՀԱՐՍԱՆԵԿԱՆ ՁԻԱՐՇԱՎ]

...երբ [հարսանեկան] պարեն հետո հացի նստեցան, պատմեին, թե երբ երեկ Այրհարուց հրապարակեն անցած միջոցին հարսի տուն կերթայինք հա[ր]ս առնելո, տեր Սարգիս հրավիրեց երիտասարդք ձիարշավի։ Երբ հրապարակի մեջ բառասուն ձիավորեն 15 կտրիճ ձիավորք որոշվեցան տերտերի հետ ձիարշավ ելնել, տեր պապոն յուր խաղալ նժույգ մտրակելով զամենքն անցավ, բանի հոգի ձիաներեն վար բերավ, քանի տաճիկ նախանձելով տերտերի ձիարշավին և չճանաչելով, թե նա հին զորապետ մի է, ելան տեր պապոյի հետ ձիարշավ, բայց տեր Սարգիսն—իբրև զորապետ Սարգիսն, տաճիկներ ձիաներեն վար բերավ։ (Ձ. № 4184, էջ 60բ)։

513. Ձ Ի Ր Ի Տ

Սեբաստիայի գյուղերում ձիավորները՝ ուրախ յայլայի բերքով, պանիրի, կարագի, սերի, թարխանայի տիկերու պաշարով բեռնավորված երբ իրենց գյուղերուն կը մոտենային, ձիարշավ կը կատարեին իրարու հետ։ Յուրաքանչյուր ձիավոր կունենար երկու գավազան, որուն մեկին ծայրը կըլլար կեռ՝ անով գետին ինկած գավազանը վեր առնելու համար, զորս միշտ իր քով կը պահեր, իսկ մյուս գավազանը կը ծառայեր իր հակառակորդը հետապնդելու և անոր նետելու։

Հակառակորդը կաշխատեր իր ձիով խույս տալ դինքը հետապնդողեն և կաշխատեր նույն իսկ իրեն արձակվածը բռնել օդին մեջ, իսկ եթե գետին իյնար՝ իր կեռ գավազանով նույն գետնեն կը վերցներ և հակահարձակումի կը դիմեր. իր ախոյանը իր գավազանը արդեն արձակած ըլլալով կը համարձակվեր փախիլ անոր առջևեն և կաշխատեր իրեն արձակվելիք գավազանը բռնել օդին մեջեն կամ վերցնել գետնեն և դարձյալ դիմել հակահար-

վածի։ Հոդ էր, որ ցույց կը տրվեր յուրաքանչյուր ձիու վազքի արժեքը և ձիավոր երիտասարդի ճարպիկությունն ու նշանառությունը՝ իր հարվածի հաջողությամբ։

Պետք է նկատի ունենալ նաև այդ խաղին մասնակցող երիտասարդներու հարսերուն, նշանածներուն, և կամ դեռ իր սերը ծածուկ սնուցանող կույսերու հոգեկան ապրումները, իրենց սիրահարի հաջողության կամ անհաջողության վերաբերմամբ։ (ՆՍ. 1958, № 38, էջ 8—9)։

514. [Չ Ի Ա Ր Շ Ա Վ]

Մեծ պասի առաջին օրվա երկրորդ կեսին Գանձակի երիտասարդությունը դուրս էր գալիս մի հրապարակ, քաղաքում՝ «Ջաբուր» կոչված դաշտը, և արշավում։ Ահագին բազմությունը գալիս էր դիտելու և գովաբանելու իրենց ճարպկությունը ցույց տվող երիտասարդներին (ել. Ա.Հ, VI, 367)։ Վարանդայում այդ օրը երիտասարդները մականախաղ էին կազմակերպում (ել. Ա.Հ. III՝, 343)։

515. [Չ Ի Ա Ր Շ Ա Վ]

Զանգեզուրում ջրօրհնեքի օրը երիտասարդները ձի հեծնում և իրենց շնորհքը ցույց էին տալիս ձիարշավի մեջ։ Խաչը ջուրը գցելու միջոցին բոլոր ձիավորները մտնում էին գետի մեջ և հետո գալիս ճանապարհը կտրում էին ու հարուստներից նվերներ պահանջում, որ հետո այդ դրամով քեֆ անեին։ (ել. Ա.Հ. IV, 106—107)։

516. [Չ Ի Ա Ր Շ Ա Վ]

Թիֆլիսում տարեկան երկու անգամ ձիարշավ էին կազմակերպում։ Քաղաքից դուրս ընտրում էին մի ընդարձակ տեղ, ուր մի քանի կմ երկարություն ունեցող ասպարեզը շրջապատվում էր ցանցով։ Այդ ասպարեզի երկարությամբ մի հայտնի տեղից չափ էին գցում ձիերին, և այն ձին, որ ամենից շուտ էր հասնում նշանակած տեղը, ստանում էր մրցանակը։ (Աղբ. 1883, № 1, էջ 33)։

517. ՉԻ ԽԱՂՑՈՒՑՆԻ

Բարեկենդանի հինգշաբթի օրը, որ վարդան Մամիկոնյանի տոնախմբության ծեսն էր կատարվում, ի պատիվ այդ տոնի, էջմիածնի Հայթաղ գյուղի երիտասարդները ձիարշավ («ձի խաղցուցել») էին կազմակերպում։ Որոշ խմբեր մեկ-մեկ կարմիր դրոշակ վերցրած, դհոլ-զուռնայով փողոցներով անցնում, կեցցե՛, կեցցե՛ էին կանչում։ (ՀԱվ. № 106, էջ 112)։

518. Չ Ի Ա Ն Գ Ր Ո Ց Ի

Ձիարշավը վանում հայտնի էր նաև այս անունով։

Ձիանդրոցին կանոնավոր կարգով տեղի կունենար «Զատկեն երկու շաբաթ ետքը՝ կանաչ կիրակին։ Գարնանատոջումի տոնն էր ատիկա՝ հնավանդ, ճիշտ ինչպես Շամ-էլ-Նեսիմի տոնը եգիպտացիներուն համար։ Ան նույնպես քրիստոնեական կամ ավելի ճիշտ նախաքրիստոնեական հինավուրց սովորություն մըն է՝ նվիրական, որ կը տոնվի անփոփոխելիորեն զատկի երկուշաբթի օրը և որուն կը մասնակցին նաև եգիպտացի բոլոր իսլամ արաբները»։ (Նաթ. 30)։

519. ԽՈՉԻ ՏԱԼ

Նոր Նախիջևանում Բարեկենդանին ձիարշավ կազմակերպելու սովորություն կար, որը «խոչի տալ» անունն էր կրում։ (ՆՇ. Ա.Հ. IX, 19—20)։

520. [Չ Ի Ա Խ Ա Ղ Ե Ր]

Մայիսին տաք օրերը հասնելուն պես՝ Պր. Աբովյանին հետ մեկտեղ Թիֆլիզեն ելա։ Իր բոլոր աշակերտները ձիերով քաղքեն դուրս մեզի հուղարկավոր եկած էին։ Աս աշխույժ երիտասարդներուն տեսքը նորեն ինծի ուրախություն բերավ, որոնք անանկ վարժությամբ ձիերնին կը դարձնեին, կը խաղցնեին, ո՛ւ մարդ չիկրնար կարծել։ (Վգ. 3)։

521. [ՏՐԴԱՏԸ ԿԱՌՔ Է ԿԱՆԳՆԵՑՆՈՒՄ]

...եվ մեծ կրկեսում ձիարշավի ժամանակ կամենալով կառքը քշել, [Տրդատը] հակառակորդի ճարպկությունից վեր ընկավ. նա իսկույն կառքից բռնեց, կանգնեցրեց, որի վրա բոլորը զարմացան։ (ՄԽ. ՊՀ, 218)։



Նկ. 59. Տրդատը կառք է կանգնեցնում (բնագիր № 521—522)

Նկ. Ռ. Մնացականյանի

522. [ՏՐԴԱՏԸ ԿԱՌՔ Է ԿԱՆԴՆԵՑՆՈՒՄ]

Ի կըրկիսին մեծի դարձեալ,
Զիըննթացիկ կառավարեալ.
Իսկ ներհակին անդ հըմտացեալ,
Եւ Տըրդատայ յերկիր անկեալ,
Արիաբար անդուստ վազեալ,
Ըզքաջըննթաց կառքն կալեալ,
Եւ ըզքառից երիվարաց
Զիըննթացս արգել՝ յետ նահանջեալ։
(ՆՇ. ԲՂ, 515—516)։
վար. ՈՒԵ. ՊՀ, 112.US.ՊՏ, 53.

523. [ԱՐՏԱՇԵՍԸ ՕՂԱՊԱՐԱՆՈՎ ԱՌԵՎԱՆԴՈՒՄ Է ՍԱԹԵՆԻԿԻՆ]

Հեծաւ արի Արտաշես արքան գեղեցիկ սև ձի,
Եվ հանելով ոսկեօղ շիկափոկ պարանը,
Եվ անցնելով գետն իբրև սրաթև արծիվ,
Եվ նետելով ոսկեօղ, շիկափոկ պարանը,
Զգեց մեջքը Ալանաց օրիորդի,
Եվ շատ ցավեցրեց փափուկ օրիորդի մեջքը,
Արագաբար իր բանակը հասցնելով։ (ՄԽ. ՊՀ. 179)։

524. [ՕՂԱՊԱՐԱՆՈՎ ՄԱՐԴ ԲՌՆԵԼ]

...[Բասիլների թագավորը] հանում է ձիու վրայից ջլերից հյուսված կաշեպատ պարանը և հետևի կողմից ուժեղապես նետելով հաջողությամբ գցում է նրա [հայոց Տրդատի] ձախ ուսից մինչև աջ կողմի անութը, որովհետև (այդ միջոցին Տրդատը ձեռքը բարձրացրած էր՝ սրով մեկին խփելու համար. նա կրում էր զրահ պինդ պահպանակներով, որի վրա նետերը նույնիսկ գիծ չէին թողնում։ (Բասիլների թագավորը չկարողանալով հսկային տեղից շարժել ձեռքով (քաշելով)՝ (պարանը) իր ձիու լանջին գցեց, բայց չկարողացավ այնքան շուտ մարակել ձին, որքան որ շուտ հսկան աճապարելով ձախ ձեռքով բռնեց պարանը և սաստիկ ուժով ցնցելով դեպի ինքը քաշեց և երկաթյրի սրի հաչող հարվածով կտրեց կես արավ մարդուն և նրա հետ ձիու պարանոցն ու գլուխը։ (ՄԽ. ՊՀ, 230—231)։

525. [ՕՂԱՊԱՐԱՆՈՎ ՄԱՐԴ ԲՌՆԵԼ]

...Եվ Բասղերի թագավորը նրա մենամարտակիցը լինելով, քաջ Տրդատը գցեց ճոպանը և չկարողացավ ընկճել նրան, ինքը նրա կողմից միջքակատուր է լինում։ (ՄԿ. ՊԱԱ, 37)։

526. [ՕՂԱՊԱՐԱՆՈՎ ՄԱՐԴ ԲՌՆԵԼ]

...Այս տեսնելով բասիլների թագավորը մոտենում է [Տրդատ] արքային և հետևից ուժեղ նետում է պարանը և հարմար կերպով կպցնում է ձախակողմյան ուսին. և որովհետև մեկի կողմից սուսերով վերցված էր, ինքը վազում է շղթայաձև հյուսված պահպանակով (վահան), որի վրա նետերը անգամ գիծ չէին քաշում։ Եվ որովհետև չկարողացավ ձեռքով շարժել հսկային, երիվարի լանջի վրայից վերցրեց. և ոչ այնքան հասցրեց երիվարը մտրակել, քան թե ձախ ձեռքով ջիլերից պատրաստված պարանը հսկան աճապարեց սաստիկ ուժով իրեն փաթաթել և երկաթյրին հարմար կերպով այնպես խփեց, որ տղամարդու մեջքը կտրեց և պարանոցին զուգահեռ կտրեց նաև ձիու գլուխը։ (ՍՏ. ՊՏ, 62—63)։

527. [ՕՂԱՊԱՐԱՆՈՎ ՄԱՐԴ ԲՌՆԵԼ]


...Եվ քանի որ [հյուսիսային արքան] ճոպանավոր էր, շտապեց և ճոպանը գցեց աջ թևն ու պարանոցը և այնքան շտապով դարձավ ու քաշեց ճոպանը, որ Տրդատը անգամ չկարողացավ իր ուսը շարժել։ Եվ մտրակեց իր երիվարը Գեղսեհոնի հետևից այնքան արագ, մինչև անգամ չթողեց իրենից տասը քայլ էլ առաջ գնա։ (ՅՄ. ՊՏ, 135—136)։

Դ. ԱՅԼ ՌԱԶՄԱԽԱՂԵՐ

Այստեղ զետեղված են մի շարք մանր ռազմախաղեր, որոնք տարբեր ձևեր ու կիրառություններ ունեն։ Դրանք գրի են առնվել XIX դարում և XX դարի կեսերին։ Այդ խաղերին գերազանցապես մասնակցում էին տղաները։

Ռազմական այլևայլ նյութեր ներկայացնող խաղերը հետևյալներն են։

1. **Եղնիկախաղեր**: *Սրանք երբեմն կոչվում էին* խազալո, *որ հայերենից թարգմանված՝ քրդերեն* խ՚ազալ–եղնիկ *բառն է։*



Նկ. 60. Ֆրանկերի թագավորի և հայոց Տրդատ Հիսաւորը պատերազմ ու որոշում
(բնագիր № 524)

Նկ. Ո. Մեսրոպեանցը վարդապետ է ձեռնադրում

Եղնիկախաղերը երեկոյան մթնշաղի կամ լուսնյակ գիշերվա խաղեր են։ Փաստորեն պահմտուկ խաղերի զարգացումը լինելով՝ եղնիկախաղերը մի տեսակ հետախուզական բնույթ են ստացել։

2. Թաղակռիվներ։ Այս անվան տակ մտնում են մի շարք խաղեր. ա. մանկական խմբական խաղակատակներ ու կռիվներ։ բ. Պատանեկան թաղակռիվ-խաղեր։ Սրանք կատարվում էին ձեռնաքարերով, պարսաքարերով, ճիպոտներով, մահակներով են։ գ. Երիտասարդների ու պատանիների խառն թաղակռիվներ, որոնք նույնպես կիրառվում էին նշված միջոցներով, բայց ունեին կատաղի բնույթ։ Երկու դեպքում էլ ծանր վիրավորվելը և խեղանդամ դառնալը սովորական էին։ դ. Զնագնդի խաղեր, որոնց մեջ անհատն անհատի և խումբը խմբի դեմ կատակախաղ է ծավալում մինչև իսկ մեր օրերին։ ե. Գերեվարության խաղեր, որոնք ծավալվում էին երկու խմբերի միջև՝ կեցողների շրջթան կտրելով գերիներ տանելու նպատակով։ զ. Բռնցքամարտեր, որոնք սովորականից տարբերվում էին խմբավորման սկզբունքով։

528. ԵՂՆԻԿՆԵՐ

Բուլանըխում խաղին մասնակցում էին պատանիները։ Խաղը կազմակերպվում էր մասնավորապես մթնաշաղ երեկոներին կամ լուսնյակ գիշերներին։ Խաղացողները, որոնց թիվը 10 և ավելի էր լինում, մայրերի միջոցով բաժանվում էին երկու հավասար խմբերի։ Մայրերը վիճակով որոշում էին թաքնվող և կեցող-փնտրող կողմերը, ըստ որում վիճակը հանող խումբը գնում էր թաքնվելու։ Պահվող խմբի մայրը մնում էր որոնող խմբի մեջ, իբրև ներկայացուցիչ։ Երբ պահվողները թաքնվում էին փողոցներում, կտուրների փոսերում և ավերակների մեջ, կեցող խումբն սկսում էր իր որոնումը։ Պահվողների ներկայացուցիչը նրանց հետ շարժվում էր առաջ։ Փնտրողների առաջնորդը իր խմբով երբ մերձենում էր այն տեղին, ուր պահված էին հակառակորդները, պահվողների առաջնորդը մունետիկի նման բարձր ձայնով աղդարարում էր.

— Եղնիկնե՛ր. եկանք գյուղի վերին թաղը, եկանք Սեթոյենց կտուրը, ահա՛ իջնում ենք ներքին թաղը, մտնելու ենք այսինչի բակը, և այլն։

Թաքնված խումբը տեսնելով, որ որոնողները հեռու են գտնվում, հարձակվում էին նրանց վրա և անխնա ծեծում. ծեծվողներն աղաղակում և ասում էին.

—Ո՛յ, ա՛յ,— այսինքն՝ հպատակ ենք ձեզ, խնայեցե՛ք։

Գերվածներին ծեծելը դադարում էր այն ժամանակ, երբ վրա հասնելով՝ միջամտում էր նրանց ղեկավար ներկայացուցիչը։ (Բ. Ա.Հ, V, 138—139)։

529. ՁԻ ԿԱՄ ՓԱԽԿՎՈՑ

Խաղը տարածված է Նախիջևանի գյուղերում, խաղում են 10—12 տարեկան երեխաները, գլխավորապես ամռանը, լուսնկա գիշերներին։ Խաղացողները բաժանվում են երկու խմբի և վիճակ են գցում։ Կտրվող խմբի բոլոր անդամների աչքերը կապում են կամ մի անկյուն հավաքում, որպեսզի չտեսնեն, թե տանող խմբի մի երեխան որտեղ է պահ մտնում։ Երբ առաջնորդը նշան է տալիս, արձակում են երեխաների աչքերի կապերը և առաջարկում, որ պահ մտած երեխային գտնեն։ Սկսում են որոնել։ Որոնող երեխաների առաջնորդը այս կամ այն կողմը ուղղվելով, ասում է.

Ջիմաղա, չիմչիմ աղա,
Ջարե՛, ղարե՛,
Ջրմբըռըմ ղարե,
Օխտը կոճակ,
Սև սամաթիկ,
Թըխ վի՞ր դուռը։

Այսպիսով առաջնորդը ցույց է տալիս իր խմբի երեխաներին, թե ո՛ր կողմերում պետք է որոնել, հակառակ խմբի երեխաներին էլ մյուս կողմից խփելով ստիպում են ցրվել և որոնել։ Միևնույն ժամանակ թաքնված երեխային իմացնելու համար, թե որտեղ են գտնվում սրա ընկերները. բարձր բղավում են.

—Հա՛, եկանք խասանք Միրզայենց պա՛ակը և այլն։

Երբ մոտենում են թաքնված երեխային, նրա ընկերները հանկարծ գոռում են.

—Ձլի՛-ի՛-ի՛, ձլի՛-ի՛-ի՛,—որով իմացնում են մյուս փողոցներում գտնված իրենց ընկերներին, թե իրենց թաքնված ընկերը գտնվել է, և հետո նրանք ջարդված զորքի նման ետ են դառնում և

վազում դեպի բունը, իսկ որոնող երեխաները «բռնեք» ասելով ընկնում են փախչողների ետևից և երբ բռնում են, ելնում են շալակն ու գնում մինչև բունը։ (Եվ. ժխ. № 71, էջ 102—104. Համմտ. Կոտայքինը. Թժխ. Ա.)։

530. ԵՂՆԻԿՆԵՐ

Նոր Բայազետում կային հետևյալ տարբերությունները։

Թաքնված խմբի մայրը որոնողների հետ շրջելիս յուրայիններին ազդարարում էր.

—Եղնի՛կներ՛, մի՛ք էրեվա։

Պահ մտածներն էլ չէին շարժվում, բայց հենց որ շրջանցման պայմաններ էին ստեղծվում, նա ասում էր.

—Եղնիկնե՛ր, էրեվացե՛ք, էրեվացե՛ք։ Այդ վայրկյանին սպասող նրա ընկերներն իսկույն դուրս էին գալիս թաքստոցներից և վազում դեպի բունը։

Որոնողներն ընկնում էին նրանց ետևը, բռնելու և նրանց շալակը բարձրանալու նպատակով։ Բռնվածները բռնողներին շալակում էին մինչև բունը, խմբերի դերերը փոխվում էին, եթե որոնողները գոնե թաքնվողներից մեկին բռնում էին։ (Եվ. ժխ. № 71, էջ 139. Համմտ. ԳԲ. III, 18)։

531. [ԵՂՆԻԿՆԵՐ]


Կոտայքի այս փոփոխակում խաղացող պատանիների ղեկավարները մեռուն անունն են կրում։



Նկ. 62. «Եղնիկներ» խաղը Կոտայքի շրջանում (բնագիր № 531)
Նկ. Ռ. Մնացականյանի

Մեռուցները փնտրելու պարտականություն ևս ունեն, բայց իրենց ճուտերին հեծնելու կամ ուրիշներին իրենց շալակը վերցնելու պարտականությունից ազատ են։

Բռնվածները բռնողներին բուն հասցնելուց հետո խմբերի դերերը փոխվում են։ (Թ. ժխ. Ա.)։



61. Նիզակամարտի վարժություն Տարոնում

532. [ԵՂՆԻԿՆԵՐ]

Հնում խաղին մասնակցում էին մինչև 45 տ. տղամարդիկ, 20—50 հոգով։ Երկու առավել հասակավորի մայր էին նշանակում։ Սրանք քար պահելով որոշում էին թաքնվող խումբը։ Գերադասում էին խաղալ մթան մեջ։ Փնտրողներին բռնվողները շալակում և տեղափոխում էին մինչև բունը։ Իսկ գտնողը թաքնվածի անունը տալուն պես իր ընկերների հետ պետք է վազեր և թքեր բնի մեջ։ Դերերը փոխվում էին՝ եթե բոլոր թաքնվածներին գտնում էին առանց բռնվելու. այլապես խաղը կրկնում էին նույն դերերով։ (ՂՂ. ձ. կտ.)։

533. [ԴՈՒՐՍ ԵԿԱՎ]

Խաղը էջմիածնի շրջանում նույնն էր։ Երեխաներն այն խաղում էին ինչպես ցերեկը, այնպես էլ երեկոյան։ Վիճակով թաքնվող ու մնացող խմբերը որոշելուց հետո գծում էին մի շրջան, որի մեջ տեղավորվում էին մնացողները։ Ղեկավարները բա՛կ էին կոչվում։ Թաքնվողների բա՛կը հսկում էր, որ սրանք շրջանից դուրս չգային, մինչև յուրայինների պահվելը։ Հսկողը գոտին ձեռքը պահած գոռում էր. «դուրս եկա՛վ»։ Այդ ժամանակ ներսինները իրենց բա՛կի առաջնորդությամբ վազում էին գտնելու։ Հսկողը կրկնում էր. «դուրս եկա՛վ, հասան Պետրոսենց ծառի տակը, Պողոսենց գոմի մոտ», և միաժամանակ գոտիով խփում էր հետ ընկնողներին, որոնք դիտմամբ հետ մնալով՝ աշխատում էին չբռնվելու համար շուտ փախչել և մտնել շրջանի մեջ։ Գտնողը բղավում էր. «թո՛ւ, դուրս եկավ», որը փախչելու ազդանշան էր ծառայում։ Բռնողը բռնվածին 3 անգամ թեթև խփում էր։ Այն դեպքում, երբ փնտրողները մերձենում էին որևէ թաքնվածի, բայց չէին տեսնում, սա հանկարծ հարձակվում էր նրանց վրա՝ բռնելու. այդ դեպքում ևս փնտրողները «թո՛ւ, դուրս եկավ» էին ասում և փախչում բունը։ Հաղթանակ էր շահում այն խումբը, որը խաղի ընթացքում ավելի շատ դրսի խաղացող էր լինում։ (ԷԱԽ. ձ.)։

534. ԳՐՈՀԻ

[Տիրացու Հարություն Տևականց] ...ի տղայության, ի պատանեկության քաջասիրտ, կորովի պարսաքար, ձեռաքար եռևե եռև կտեղան փախ- և աշխույժ լինելով [ի վան] ամեն մանկական խաղերու մեջ պարագլուխ և պապ եղած է։

Նորա տղայության միջոցին մինչև մեր տղայության ժամանակ մի տեսակ սովորություն կար, որ մեկ թաղի տղայք և երիտասարդ մյուս թաղի վերա գրոհի (պատալու) կերթային, այսինքն քարիվ և փայտիվ իրարու վրա հարձակելով և հարվածնելով դիրար կվանեին։ Եվ եթե այս թաղի տղայք մյուս թաղի տղայքն միչի ասպարեզեն վանելով մղեին մինչև նոցա թաղ և փախուցանեին նոցա տուներու մեջ, հաղթանակ վաստակելով, անուն քաջության վաստակեին։

Այս սովորություն գարնան սկզբեն մինչև Վարդավառի կյուրակին կտևեր։ Ըստ հաճախ սովորության, մեր Տեր-Սարգսյան թաղեցիք, Փաշի թաղեցիք և Հայկավանից թաղեցիք միանալով, քաղաքամիջի տղայոց վրա հարձակելով, նույն Հայկավանից դրսի գերեզմանոցեն կվանեին քաղաքամիջի տղայքն և քաղքի տնեն մինչև նոցա տուներ հալածական տանեին։ Եվ միշտ դրսի միացյալք ներսի միացելց վրա հաղթանակ տանեին, ինչպես, որ մեր տղայության քանիցս տեսանք։ Վասնզի դրսի տղայք չարքաշ և ազատ դիրքով մեծանալով քաղաքամիջի փափկակյաց և ի պարսպի անապատ կյանք վարած երկչոտ տղայքներ քարին և փայտին հարձակելով վանեին, թեև անոնց կիսին հազիվ հավասար էին։

...Բայց այս սովորություն այժմ իսպառ անհետացած է։ (Զ, № 4184, էջ 29 ա-29 բ.)։

535. [ԹԱՂԱԿՈՒՎ]

Մուշտակովի խաղ կամ սովորություն մի ունին Տփխիսո հասարակության կտրիճ մասն, որ ինչպես կպատմեն, ի վաղուց մնացած բան է. ներքին թաղ վերին թաղ ժողովված խումբ բանակ կկազմեն ամեն կիրակի, ապելի Բարեկենդանի և տոնի օրեր կերթան Հալվապար ընդարձակ դաշտի մեջ կսկսեն մեկ մեկու հետ կռվիլ. հազարավոր անձինքներե մի ահագին տեսարան կբացվի. երկու կողմեն մեկ մեկ զորապետ կամ կարգադիր կձևանան, ձիեր հեծած խրախուս կկանչեն, հրահանգ կուտան և կհարձակին նախ ձեռքով մեկ մեկի քթին, աչքին, բերնին կզարնեն, մինչև որ մեկ սկսի տկարանալ տեղի տալ. այն ժամանակ



Նկ. 63. Պարսատիկով թաղակռիվ Թիֆլիսում (բնագիր № 535)
Նկ. Ռ. Մնացականյանի

չողներու գլխուն։ Հանդիսականներ տեսնես շատն ալնվական ու պատվավոր մարդիկ ձիերով, կառքերով էկած ստակ կբաշխեն, քաջալերս կուտան, պատերազմի պես դղրդյուն, աղաղակ, հարված ու փախուստ կգոռան չորս կողմ. գուռնան, նագարան հաղթականց առջևեն հնչելով կերթա. քաղաք մտած ժամանակ խանութներ կփակվին, ապա թե ոչ՝ հավարի կերթան։

Հետևյալ օր կտեսնեն մեկի աչքն է կապած, մյուսին թև, մեկին քիթն է ծռած, մյուսին բերան. բայց զարկողն ու զարկվողն մեկ զմեկ տեսած ժամանակ եղբոր պես սիրով կվարվին։ (ԳՍ. Ա.վ. 1861, № 4, էջ 124—125. տե՛ս նաև ԳՏԱ. ՄՀ, 1863, № 6, էջ 65—66)։

536. Կ Ռ Ի Վ

...Ինչպես նաև կա Վանա մեջ մեկ արարողություն մը ևս, որ նույն Վարդավառի օրը բնակիչք թաղ-թաղ բանակ կը կազմեն և իրարու դեմ պարսատով և փայտե նետով ու աղեղով կռիվ կելնեն իբրև խաղ։ (ԳՍ. ԳԲր. 123)։

537. Թ Ա Մ Ա Շ Ա

[Թիֆլիսում 1800-ական թթ.] մի ուրիշ հրապարակային զվարճություն կար, որին կանանց թույլ էր տրվում ներկա լինել, որպես դիտող։ Բոլոր մեծ տոնական օրերին գրեթե քաղաքի ամբողջ բնակչությունը քաղաքից դուրս էր գնում մի վայր, ուր երկու մասի էին բաժանվում և դիրք գրավում։ Երկու կողմի նպատակն էր իրար քշել իրենց գրաված դիրքերից։ Շատ բնական է, որ այս տեսակ շարժումներին ընկերանալին կռիվը և իրար քար նետելը, և նրանք սովորություն ունեին կարատել իրար փայտյա սուրերով։ Թեև փոքրիկ երեխաները չէին համարձակվում այս խառնակության

մեջ մտնել, սակայն թիկունքից նրանք քարեր էին նետում հակառակորդին և փոխադարձաբար ընդունում, այնպես որ վերջավորության ոմանք կաղում էին, ուրիշները ընդունում էին ճմլումներ և ոմանք հաշմանդամ մնում էին դաշտի վրա։ Որքան էլ, սակայն, ընդհանուր լինի մայրական սերը, բոլոր բնակիչները պատվո նվիրական հարց էին համարում որևէ բողոք չբարձրացնել, նույնիսկ այն պարագաներում, երբ հետևանքը մահացու լիներ։

Որովհետև այս խաղերը երբեք չէին վերջանում առանց այդ բնույթի մեկ կամ երկու դեպքերի, գեներալ Երմոլովը ժամանակ համարեց միջամտելու, և ըստ այնմ այլևս թույլ չէր տալիս որ կրկնվեն, միայն պայմանով, որ ոչ մեկ անձ չհամարձակվեր քար նետել կամ փայտյա սրից տարբեր ուրիշ զենք գործածել, որ թեև կարող էր շատ ջերթուկներ առաջացնել, բայց երբեք մահ չպատճառել։ Մարդիկ խոստացան հարգել այդ պայմանը, բայց չպահեցին իրենց խոսքը, որովհետև երբ կողմերից մեկը տեսնում էր որ իր դիրքերից պիտի քշվի, տաքացած՝ վարկենական տպավորության տակ դիմում էր ամեն հնարավոր ի միջոցի՝ պահպանելու համար իր դիրքը, և ոչ մի բան այնքան բնական չէր այս պայմաններում, քան ապավինել քարին։ Քանի որ թվում էր, թե ուրիշ միջոց չկար վերջ տալու համար սրան, խաղերը բոլորովին արգելվեցին, և ես համոզված եմ, որ շատ մայրեր գաղանորեն օրհնում են այս կարգադրությունը։

Այս խաղը կոչվում էր բամաշա (Tamacha), և շատ հաճախ երկրի առաջնակարգ ազնվականները մասնակցում էին դրան։ (Կոց. 503)։

538. [ՓԱՅՏԱԿՈՎ]

Տարոնում խաղին մասնակցում էին պատանիները և երբեմն՝ երիտասարդ տղաները։ Խաղում էին գարնանը և աշնանը։ Խումբը խմբի դեմ կազմվում էր ըստ թաղերի, իսկ հոտաղների մեջ՝ ըստ հարևան գյուղերի։ Եթե կռիվը փայտերով էր սկսվելու, յուրաքանչյուրը մի փայտ էր ունենում։ Կռիվ-խաղն սկսվում էր խմբերի ճակատամարտով և երբ այն լուրջ կռվի էր վերածվում, մեծերն անմիջապես անցնում էին միջամտության։

Այս նույն ձևերով խաղեր էին կազմակերպվում նաև քարով, որ անում էին մերթ ձեռքի, մերթ պարսատիկի միջոցով։ Պատահում էր նաև, որ փայտակռվի ժամանակ քարակռիվ էր ծագում՝ երբ տակտիկական պատճառներով իրարից հեռու էին դտնվում։ Բայց երբ մերձենում էին, գործի էին դրվում մահակները։

Այս խաղ-կռիվների ժամանակ, մանավանդ հոտաղների շրջանում, գլուխները, ձեռքերը, աչքերը, և մարմնի այլ մասերը վնասվածքներ էին ստանում։ Մեծերը հանդուրժելով այդ բոլորը, հորդորում էին։ (Մ. ժխ. Ա.)։

539. [ԹԱՂԱՅԻՆ ԿՌԻՎՆԵՐ]

«Անգամ մը [Մարաշի] Քյումպեթ թաղի պարտեզներեն մեկուն մեջ, ուր վերջը շինված էր գերմանական Պեյթ Շալոմ որբանոցը, ըմբշամարտության մը պահուն հանդիսականները երկու կուսակցության բաժանվելով կը սկսին իրար նախատել ու քարկոծել։ Այդ առթիվ Զիշեքլի թաղեն վաճառական Սարգիս Գըշլըյանի գլուխը կը պատռվի և անմիջապես կը մեռնի։ Քյումպեթ թաղեն ըմբիշ մահտեսի Պողոս Յաղուպյան կռվի միջոցին խոթան (այսինքն՝ մենք հաղթեցինք) պոռալուն համար կը բանտարկվի, ինչպես նաև ուրիշներ իրեն հետ։ (ԳՄ, 347)։

540. ԿՃԱՆՈՎ ԿՌԻՎ

Ախալքալաքում տարածված էր այդպես տարեբայնորեն կազմվող խմբերի միջև եղինճով (կճան) մղվող կռիվը։ Եղինճի ցողունների փնջով անխնայորեն խփում էին իրար ձեռքի ու երեսի, վզի՝ մարմնի այդ բաց տեղերը կճանով դաղելու նպատակով։ Հաճախ դա թաղակռվի կամ ազգակցական խմբերի պայքարն էր իրար դեմ, որ կատակի միջոցով փաստորեն ուժերի հարաբերակցության փորձի մանևրն էր նշանակում։ (Բ. ժխ. Ձ.).

541. ԳՐՈՀԻ ԶՆԱԳՆՈՎ

[Բարեկենդանին] եթե [վանում] նոր կակուղ ձյուն տեղալու լիներ, տանիքներու ձյուներ իրարու գլխին տալով տանիս սրբեինք, հետո բոլոր տղայք տանեն վար իջնալով թաղի առաջի Փաշենց արտի մեջ երկու խումբ բաժանված, իբրև պատերազմող զորք, շատ մը ձնկլորակ շինելով իբրև

գնդակ և ծոցերնիս լեցնելով զորապետաց հրամանավ իրարու վրա հարձակելով անխնա զիրար հարվածեինք։ Մի Բարեկենդանին մեկ կողմի զորապետ ես էի, մեկ կողմի զորապետ՝ տաճցածի լամուկ Մամոն։ Երբ ես իմ կողմի խումբին նշան տվի հարձակելո, առաջին գնդակ ես Մամոյի ձախ աչքի մեջ խփեցի. երկու ձեռքով աչք բռնեց, «ամման» ասելով գետին նստեցավ. աչքեր ապուղայի պես ուռելով կախվեցան և մեր պատերազմն ես վերջացավ, վասնզի նոցա զորապետն ընկավ։

Է՜հ, ամենքս թափեցանք,—բան չկա, բան չկա Մամո, խաղա՜լ ի, կաղա՜լ ի։

Այս առաջին և վերջին էր՝ Մամոն ուխտեց, որ մեկ էլ... գրոհի (պասալոյի) մեջ չմտնա։ (Զ. № 4184, էջ 82 ա)։

542. Զ Ն Ա. Գ Ն Դ Ի

Ձմռան տաք օրերին, երբ ձյունը փափկանում և գունդ շինելու հարմար է դառնում, տղա ու աղջիկ, պատանի թե երիտասարդ ձնագնդի պատրաստում և կատակով իրար են խփում։ Ունենալով խիստ մասսայական բնույթ, այն Հայաստանի բոլոր վայրերում կատարվում է ձմռան բոլոր ամիսներին, փողոցներում, դպրոցների բակերում, բարձրագույն ուսումնական հաստատությունների թաղերում, գործարանների ու ֆաբրիկաների բակերում և այլն։

Սովորական ձնագնդի խաղը վնասներ չի առաջացնում, այլ այն մեծ մասամբ կատակի բնույթ է ընդունում։ Կատակ-ձնագնդին, սակայն վերափոխվում է ռազմի բնույթի, երբ որ կողմերի շուրջն են համախմբվում նրանց համախոհները, և առաջանում են երկու ուժեղ, հակադիր բանակներ։ Լինեն նրանք դպրոցական դեռահաս երեխաներ, ուսանողներ, թե գյուղացիներ կամ բանվոր երիտասարդներ, միևնույն է ձնագնդով իրար «ջարդում» են, մինչև որ մեկ կամ մյուս կողմը տեղի է տալիս։ Խաղի այսպիսի սուր պահերին իգական սեռն ավելի շուտ տեղի տալով հրահրողի կամ զվարթ հանդիսատեսի դերի մեջ է մտնում. տղաները պայքարը հասցնում են մինչև հաղթանակը կամ պարտությունը, որը հաճախ աղջիկների ծաղր ու ծանակի առարկա է դառնում։ Բայց պատահում են դեպքեր էլ, երբ աղջիկները հոգնելով ձնագնդի տեղատարափից, անցնում են գնդեր պատրաստելու՝ զենք մատակարարելու գործին։ Այս անգամ արդեն նրանք չեն կարող խուսափել հակառակորդներից, ուստի ձնագնդի շինելիս դիրքավորվում, փոսերն են մտնում կամ թաքնվում են պատահած առարկաների ետևը։

Ձնագնդի խաղալիս սովորաբար ղեկավարներ չեն ընտրվում, բայց երբեմն տարերային կարգով կողմերից մեկական հոգի բարձրաձայն հրահանգներ տվողներ են դառնում. դրանք ամենալավ կրովողներն են լինում, որոնց հրամանները ակամայից կատարվում են նեղ պահերին։ (Բ. Ժխ. Ա.)։

543. Ձ Ն Ե Մ Ա Ր Դ

«Ձնե մարդը» երեխաները պատրաստում են երկու ձևով։ Մասսայական ձևն այն է, որ ձյունը փափկանալիս ձնգլորակ են տալիս, պատվանդան ստեղծում, ապա դրա վրա բարդում նոր գնդեր և շուրջ մեկ մ. բարձրության հասցնելուց հետո սկսում են բահով կամ այլ միջոցներով չորս կողմից քանդակել, մարդու կերպարանք տալ։ Աչքերի տեղերում ոչխարի կամ այծի կկոտրներ և կամ ածուխ են խրում, բերանը և քիթը ձևավորում են ցախերով կամ որևէ սև նյութով, գլխին իբրև մազ, խոտ են ցանում, ապա, ձնե մարդը ծերունի համարելով, բերանը իբրև ծխամորճ, մի ձող են դնում։

Ձնե մարդու պատրաստման մյուս եղանակը սառած ձյունաշերտից մի քառանկյունի և շուրջ մեկից մեկ ու կես մ. երկարությամբ տախտակ կտրելն ու ձևավորելն է, որին կերպավորում են նույն սկզբունքներով։ Այս երկու դեպքերում էլ ձնե մարդը երկու ձևով է ծառայում քանդակագործների հաճույքին՝ մեկ՝ երբ այն կանգուն է թողնվում և միշտ ուսումնասիրվում, թե ձնե մարդը ինչպես է հալչում, փոքրանում և մեռնում։ Այս դեպքում քանդակագործները մենակ կամ երկու հոգի են լինում։ Երկրորդ՝ երբ ավարտվում է ձնե մարդու կերտումը, որի վրա ոչ թե մեկ երկու, այլ բազմաթիվ երեխաներ են աշխատել, անմիջապես սկսվում է ռմբակոծումը ձնագնդիների միջոցով։ Ձնե մարդն այս պարագայում ծառայում է իբրև թիրախ այնքան ժամանակ, մինչև որ նշանառուների գնդակները նրան ջարդ ու փշուր անում, հիմնահատակ կործանում են։

Բոլոր պատերազմների ժամանակ ձնե մարդը

երեխաների համար ներկայացրել է հակառակորդ պետության ռազմական դեկավարը, որին ամբակոծելիս մեծ աղմուկ ու աղաղակ է բարձրանում։

Այդպես, օրինակ, 1910—1920-ական թթ. պատերազմների ժամանակ «ձնեմարդերը» անպայման թուրք փաշաների անուններ էին ստանում, իսկ 1941—1945 թթ. Հայրենական պատերազմի ժամանակ դրանք արդեն հայտնի էին Հիտլեր անունով, որին ոչնչացնելիս երեխաները երգում կամ արտասանում էին հետևյալ երգը.

Հրեն, կաշկեն գալիս ա,
Հիտլերը մեչը լալիս ա.
Մի՛ լա, մի՛ լա, քո՛ւ Հիտլեր,
Հրե՛ն, գյուլլեն գալի՛ս ա։

(Բ. ԺԽ. ձ.)։

544. ԶՆԱԳՆԴԻ

Հնուց հայտնի սովորության համաձայն փողոցներում պատանի և մասամբ երիտասարդ տղաները ձնագնդով խփում են անց ու դարձ անող հասակակից աղջիկներին։ Վերջիններս ձնագնդին ձնագնդով չեն պատասխանում, այլ երբեմն դժգոհության արտահայտություն անելով, իսկ որ սովորականն է՝ ադաթ համարելով, ծիծաղում ու փախուստի են դիմում։ Պատահում է, որ երեխաներն իրենցից էլ մեծերին են խփում. այդպիսի պարագաներում քիչ չի պատահում, որ ձնագունդը ամուսնացածներին է դիպչում։ Տղաներն այդ ժամանակ ներողություն են խնդրում։ (Բ. ԺԽ. ձ.)։

545. ԱԳԱԳԱՄԻ

Երիտասարդ հարսներն ու աղջիկները Շուլավերի կանաչ դաշտերում երկու խմբի էին բաժանվում ու իրար հանգեպ բավական հեռու կռնաբբռնուկ կանգնում էին։ Մի խմբի գլխավորը ձայն էր տալիս մյուսին, ծոր անելով և նման պատասխան ստանում.

—Ա՛ գա՛ գա՛մ։
—ա՛գրիգա՛գա՛մ։
— դովի՛թա՛մ։
—դո՛վ թի՛ մի՛ շա՛մ։
—մե՛ լի՛ քամ՛։
—մե՛լ քի՛ մի՛ շա՛մ։
—բիր բիչողին զիզի
հարսը քրցի կա՛։

Երկրորդ խմբից մի աղջիկ կամ հարս վազելով գնում էր դեպի առաջին խումբը և երկու հոգու թևերին խփում էր։ Սթե այդ հարվածով նա կարողանում էր նրանց բազուկներն իրարից բաժանել, նրանցից որին կամենում էր, գերի էր տանում, հակառակ դեպքում ինքն էր գերի ընկնում։ Խաղն այսպես շարունակվում էր, մինչև մի կողմը հաղթում էր մյուս կողմի անդամներին գերի վերցնելով։ (ԳԹ. III, № 18)։



Նկ. 64. Ագագամի (բնագիր № 545)
Հուս. Մ. Քոյանի

546. ԼԱԳԱՆ ԼԱԳԱՆԻ

Տղաները 10—30 հոգով բաժանվում են երկու խմբի և կանգնում իրարից 10—15 քայլ հեռավորության վրա, շարքով կամ շղթայաձև միմյանց ձեռքերը ամուր բռնած։ Ապա մայրերի միջև սկսվում է երկախոսություն.—

—Լագան լագանի,
—Ո՞վ գա,
—Բանքի լյուղա,
—Աթլասան,
—Ջախրի իչան,
—Քո ջանը գա։

Այս ասելով վերջին պատասխանող մայրը վազում է դեպի մյուս խումբը ամենայն արագությամբ՝ շղթան կոտրելու։ Նա ճղելու դեպքում սրանից մեկին տանում է իր խումբը՝ իբրև գերի, և ապա նույնը կրկնում ու փոխադարձաբար գերի են տանում այնքան, մինչև որ մեկի բանակն առանց

խաղացողի է մնում: (Բ. Մխ., 55—56: Համմտ. Քաջ. Ա.Հ, IX, 103 և հ. ԺՄխ, 8—9):

547. Գ Ե Բ Ի

Խաղում էին Այնթապում, գարնանից սկսած, բակերում, պարտեզներում և դաշտերում, տղաներն առանձին և աղջիկներն առանձին խմբերով, 12—20 հոգով, որոնք ընտրությամբ բաժանվում էին երկու խմբի, մեկական խմբապետով:

Նախապես ընտրելով իրենց սահմանները, խմբերը կանգնում էին իրարից 50 մ հեռավորության վրա, խմբերի միջև գծում էին մի ընդհանուր սահմանագիծ: Յուրաքանչյուրն իր տեղում դասավորվում էր կողք-կողքի:

Խմբապետները գալիս էին այդ գծի մոտ և «դիր ու տիպ»-ով որոշում խաղն սկսող խումբը:

Սկսող խմբից մեկն առաջ էր գալիս, հասնում մինչև սահմանը և խմբապետի հրամանով գիծն անցնելուց հետո, իր ուժերին վստահելով, մտնում էր մյուս խմբի տերիտորիան և հակառակորդ խմբի խմբապետը գիտենալով իր խմբի և դիմացինի ուժերը, հակառակորդի դեմ ուղարկում էր համապատասխան ուժ ունեցողին, որը վազելով գալիս և աշխատում էր ձեռքով խփել սահմանը խախտողին: Հաջողության դեպքում նրան գերի էր տանում, իսկ մյուսը միշտ աշխատում էր նրանից խույս տալ: Երբ հետապնդողը չի կարողանում շուտ խփել, վազելով առաջինի հետից, մտնում էր նրանց սահմանը, իսկ առաջինը խուսափելով վերադառնում էր իր խմբի մեջ և կանգնում իր տեղը: Սրա խմբապետն իսկույն հրամայում էր մի ուրիշին հալածելու իրենց սահմանը խախտողին: Եթե մի խմբից մեկ հոգի ցույց տալով, որ հալածում էր մյուս խմբից մեկին և վերջինիս խաբելով շուրջանց կատարեր հակառակորդ խմբին և առանց խփվելու կարողանար հասնել իրենց սահմանը, ապա նա ազատում էր իրենց գերի ընկերներին և գերության մատնում մյուս խմբին ամբողջությամբ, որով և խաղն ավարտվում էր: Խաղն ավարտվում է նաև այն դեպքում, երբ մի խմբի անդամները բոլորը մեկ-մեկ գերի էին ընկնում հակառակորդի ձեռքը: (Կ. ԺԽ. Ա.)

548. ՏԵԼՎԻ ՏՈԼ

Ակնում խաղը նույնն էր: Խմբերի սահմանները տներ էին կոչվում: Երկու տների միջև լինում էր ընդհանուր սահմանագիծ: Մի խմբից մեկը ասելով՝

Տելվի տիլվի տոլ,
Ջիվվիչինի լեպլեպի,—

անցնում էր ընդհանուր սահմանը, թևերը կոշկակարի նման երկու կողմի վրա շարժելով, ճկվելով, խույս տալով, առաջ էր ընթանում, և զգուշանում էր, որ իբրև թե չպաշարվեր: Սրա նպատակն էր՝ հասնել հակառակորդ խմբին, և նրա անդամներից մեկին խփելով՝ վերջինիս շարքից հանել և խույս տալով հասնել իր խմբի տունը: Հարձակվողը նույնպես շարքից դուրս կգար, եթե հակառակորդին հաջողվեր հետապնդել և խփել նրան: (ՃՀԱ, 173—174):

549. Գ Ե Բ Ի

Խաղը Բուլանըխում նույնն էր: Մասնակցում էին 10—20 տղաներ: Խմբերից մի-մի մարդ, երբ դիմացի խումբն էր ուղարկվում, պաշտոնն էր՝ գերի բերել: Սկողին դիմավորում էր ուրիշը, որը գերի տանել ցանկացողին խփում և փախչում էր իր խմբի սահմանը: Գերի տանել ուզողը նրան հետապնդում էր բռնելու ցանկությամբ և հաջողեցնելիս գերում էր: (Բ. Ա.Հ, V, 139):

550. ԳԵՐԱՌՈՒԹՅՈՒՆ

Խաղը նույնն էր: Տղաներից երկու ամենալավ խաղացողներին հրամանատար էին նշանակում: Խմբերը կազմվում էին հալա հալայի միջոցով: Շրջագծի ձևով պատկերված բեռդերը, որ խմբերի սահմաններն էին, գծում էին իրարից 60—80 մ հեռու:

Խաղն սկսող խմբից մի հոգի դուրս գալով բերդից, ուղղվում էր դեպի հակառակորդների բերդը՝ ներխուժելու դիտավորությամբ: Բայց չհասած սահմանագծին, այնտեղի պաշտպաններից մեկը նետվում էր մոտեցողի վրա և նրան գերեվարելու նպատակով հետապնդում մինչև նրանց բերդը: Եթե ճանապարհին հետապնդողին հաջողվում էր խփել փախչողին, բղավում էր՝ դադա՛ր և խփվածին որպես գերի ետ էր բերում դեպի խփողների բերդը և սահմանագծից 3 քայլ պակաս կանգնեցնում: Եթե փախչողը արագավազության շնորհիվ անվտանգ հասնում էր իրենց բերդը և միաժամանակ իրենց սահմանին էր մոտեցնում իրեն հետա-

պնդողին, այնտեղից մեկ ուրիշը անմիջապես դուրս գալով միևնույն ձևով հարձակվում էր իրենց ընկերոջը հալածողի վրա, ջանալով խփել և գերել։ Այս գործողությունները կրկնվում էին այնքան, մինչև որ որևէ կողմին հաջողվում էր գրավել դիմացինի բերդը։

Կանոններ.—1. Երբ պարզվում էր, որ դադար կանչողը չէր խփել, այլ խաբելով էր ուզում գերել, իրեն էին գերում։ 2. Երբ գերիների թիվը մեկից ավելի էր դառնում, նրանք կանգնում էին իրար ձեռք բռնած, որպեսզի նրանցից որին էլ որ իրենց ընկերները ազատելու համար ձեռք տան (խփեն), այդ ազատությունը հաղորդվի միաժամանակ բոլորին։ (ԲՄ. 1885, № 12, էջ 190—191. Համմտ. № 13, էջ 207)։

551. ԿՐԱԿՏԱՐՈՑ

[Գարնանը] կրակտարոց խաղն ոչ սակավ հետաքրքրական է։ Վեցեն մինչև տասներկու հոգի և այլ ավելի կարող են խաղալ։

Երկու խումբ կազմյալքն հավասար թվով 20—30 քայլ հեռու, հանդիպ միմյանց կանգնեն, թաց չորով որոշեն, թե ո՛ր խումբին առաջ պատկանի գալ, կրակ տանել։

...Ահա երկու խումբք կազմ պատրաստ հանդեպ միմյանց են։ Մին ի խմբեն թաղ ուզողին[89] խարազան չվանյա կամ խարազան ոլորյալ ի թաշկինակե, ի ձեռին, միջակ վազելով գա, հարկանե ի ձեռն միո, ի հանդիպակաց խմբին։ Ի հարկանելն, իբրև այծեման և եղջերու, դառնա ի փախուստ, զի կրակն առավ՝ փախչել և ազատել պարտի, զի աստի խմբեն հորս ի ձեռանե առ զրկակն և փախավ. խ[ա]րազանավ զհետ պնդե փախուցելոցն. եթե հասանե, առանց խնայելո ամենայն ուժգնությամբ հարկանե զգլուխ և զբիկունս նորա, մինչև հասյալ ի մեջ խմբի յուրո ազատեսցի։ Հետո կարգն առնու սույն զհետ պընդյալն և խարազանավն, որ ի ձեռքն յուրում, հարկանե ի ձեռն այս խմբի ուրումն առնու զկրակն և փախչի։ Նա պնդի զհետ նորա։ Եթե հասանե, անխնա հարկանե զնա, իսկ եթե ոչ, ի փախուստ աճապարե, զի մինն ի խմբեն կրակ տարողին պնդե զհետ նորա առ ի հարկանել զնա, զի չկարաց հարվածել զկրակ տարողն։

Այս խաղն զորավորք, ուժավորք, արագաոտքն միայն կարին խաղալ։ Եթե տկարք, անզորք, դանդաղաշարժք մրցեն ի խաղս, խաղալիկ լինի առաջի խարազանաց՝ ընդունելով զբազում գանս և հարվածս։ (Ջ. № 4184, էջ 160բ—161ա (Վ.)։

552. ԿՐԱԿՏԱՐՈՑ ԿԱՄ ԿՐԱԿՏԱՐՈՑԻԿ

Կրակ տանողը հակառակորդ խմբի անդամի ափին խփելու և դրանից կրակ տանելու փոխարեն, երբեմն սահմանների վրա մի-մի փոքրիկ փոս էին փորում, որի վրա խփելով իբրև թե փոսից (թունիրից) կրակ էին տանում։ Իսկ մարակ չունենալու դեպքում ձեռքով էին ափահարում և նրանով էլ հալածվում։ (Ախ. I. 133—134)։

553. [ԿԱՑԴ ԱՌՆԵԼ]

Շապին-Գարահիսարում խաղը նույնն էր։ Շարքերը կանգնում էին իրարից 80—100 քայլ հեռու։ Խաղն սկսվում էր նախահարձակությունը որոշելու համար ղեկավարների չոփ պահելուց հետո։ Մարակով (գոտի, թոկ) վազողը հարվածում էր դիմացիններից սահմանը որոշող նշանացույցին և արագ փախչում։ (Հս. խ. ձ., Համմտ. ԱՔ. ՀԺՀ, VI, 137՝ «Կանչովի լախտը»)։

554. ԵՐԿԵՆ ԳՈՏԻ

Բուլանըխում այդ նույն խաղի ժամանակ ճիլ կամ փալախ խոտից կամ էին ունենում, որի մի ծայրը գնդաձև էր լինում։ (Բ. ԱՀ. V, 139։ Համմտ. վանա «Գերիտարոցիկը» (Ախ. II, 210—211)։

555. ԴՄԲՈ-ԴՄԲՈ

Խաղը նույնն է։ Հրապարակի ծայրերին գտնվող սահմանները ուղիղ գծերով են ներկայացնում։ Սկսող խմբից մեկը մոտենում է մյուս

---

89 Արդ, սույն թաց-չոր բառ քեզ բացատրեմ, հետո կրակ տարող խաղ նկարագրեմ, զի այս թաց-չոր խաղից մեծագույն մասի մեջ իբրև վճռող դատավոր որոշելո իշխանություն ունի։ Ահա երկու խումբ հանդեպ միմյանց հետ։ Մի խմբի պապն հառաջ գալով մի ձեռաչափ փոքր սալ ի ձեռին, թքելով սալի մեկ երեսի վերա, հարցանե մյուս խմբի պապին.—Քե ո՞ր երես, թա՞ց կուզես, թե՞ չոր, այսինքն թաց երեսով կուզես առաջին կրակ տարող լինել, թե՞ չոր երեսով։ Եթե ասաց.—Ձիկ թաց, զսալն ձգե ի հող. ի հանկանելն եթե թաց երեսն մնաց ի դուրս այս թաց ուզողի խմբեն լինի կրակ տարողն, իսկ եթե չոր երեսն մնաց ի դուրս, նույն սալ ձգողի խմբեն լինի կրակ տարողն։ (Ջ. № 4184, էջ 160բ—161ա)։

խմբից ում որ կամենա։ Սա իր ափը պարզում է։ Եկողի հարցումով սկսվում է երկխոսություն.

—Դմբո, դմբո։
—Հա՞,—պատասխանում է մյուսը։
—Ք՛ո մայրը ի՞նչ է եփել։
—Քալաճոշ։
—Մեջն ի՞նչ է գցել։
—Կաուվի դոշ։
—Քեզի ի՞նչ է կորել։
—Ոսկե մատանիք։
—Ո՞ւր է կորել։
—Ժամի տանիք։

—Ես եմ գտել ու չեմ տա,—ասելով, եկողը պարկում է պարզած ափին ու փախչում դեպի իրենց բույնը։ Զարկվողը հետևից վազում է։ Եթե ձեռքով խփեց փախչողին մինչև բույնը հասնելը, վերջինս «մեռնում» է ու կանգնում հակառակորդի բնի հետևը, իսկ կորողն ինքն է մոտենում դիմացի բանակին և «դմբո-դմբո» ասում։ Եթե զարկվողը փախավ իր բույնը, սպասում է խաղալու իր հերթին, իսկ նրա տեղ իր կողմնակիցներից ուրիշն է դուրս գալիս։ (Լ. ԺՄԽ, 19—20)։

556. ԿՐԱԿ ՏԱՐՈՑ

Վանում խաղը նույնն էր։ Սահմաններն իրարից 50—60 քայլ հեռու էին լինում։ Երբ եկողն ապտակում էր պարզված ափին ու փախչում էր, ապտակվողը հետապնդելիս խփել կարողանալու դեպքում ելնում էր նրա շալակը և գնում մինչև իրենց սահմանը։ Ապտակվողը հետապնդելիս խփել չկարողանալու դեպքում ինքն էր կրկնում մյուսի արած ձևը։ (Խ. ՎԺԽ. Ձ., 58—59)։

557. Գ Ն Ր Ի

Խաղում են 10—30 երեխաներ, ընդարձակ, բաց տեղում։

Բաժանվում են երկու խմբի և միմյանց հանդեպ կանգնում 50—80 քայլ հեռավորությամբ։ Ապա Ա խմբից մինը վազում է դեպի Բ խումբը, որից մի ուրիշը 2—3 քայլ ընդառաջ է գալիս սրան և ձեռքը մեկնում։ Սա խփում է իր ձեռքը նրա ձեռքին երեք անգամ ասելով։

—Ալնի, աղի, շուռ տու... և ապա բացականչում «փախի՛» ու վազ տալիս դեպի իր խումբը։ Մյուսն ընկնում է նրա ետևից և աշխատում խփել նրան. եթե խփեց, տանում է իր հետ իբր գերի և մի առանձնացած տեղ, որ կոչվում է Բերդ, կանգնեցնում։ Գերվածը զրկվում է խաղին մասնակցելու իրավունքից։ Խաղը նույն ձևով կրկնվում է, միայն այս անգամ, քանի որ Բ խումբն է հաղթող հանդիսացել, այդ խմբից է մեկը գալիս Ա խմբի մոտ գերի տանելու։ Եթե չեն հաջողեցնում խփել, խաղը դարձյալ նույն կերպ կրկնում են և շարունակ միևնույն խմբից են գնում գերի բերելու, մինչև որ մեկը գերի է ընկնում։

Եթե գերի բերելու գնացողը կարողանա մոտենալ բերդին, խփել իր գերի ընկած ընկերներից մեկին, և կամ պատայտ գալ բերդի շուրջը և առանց խփելու վերադառնալ, այն ժամանակ առաջին դեպքում միայն մի, իսկ երկրորդում՝ բոլոր ընկերները ազատվում են գերությունից և վերադառնում, մասնակցում խաղին։ Խաղն այնքան է շարունակվում, մինչև որ մի խմբի բոլոր անդամները գերի են ընկնում։

Խաղը ավելի կենդանություն է ստանում, երբ փախչողին օգնության հասնելու համար նույն խմբից մեկը ընդառաջ է վազում և աշխատում է խփել, գերել հետևողին, սակայն սրան էլ օգնության է գալիս նրա ընկերը, հետո երրորդն է վազում, և այսպես խառնվում միմյանց և կոխ ներկայացնում։ (Եվ. ԺԽ, № 64, էջ 77—79)։

558. Գ Ն Ր Ի

Վեց և ավելի հոգով խաղացող տղաներն ընտրում էին երկու մայր և իրենք հալա-հալա գալով բաժանվում երկու խմբի։ Խաղատեղի մի ծայրին մի մայրն իր ճուտերով և մյուսին՝ մյուս մայրն իր ճուտերով կանգնում էր։ Մայրերի կանգնած տեղերը բներ էին կոչվում, որոնցից 6-ական քայլ հեռու հակառակորդները յերդ անունը կրող մի-մի քար էին դնում։ Այդուհետև մայրերից մեկը իր բնից գալիս, մոտենում էր մյուս մորը և նրա ձեռքին երեք անգամ ապտակելով փախչում էր։ Խըփվողը հետապնդելով նրան, աշխատում էր դեռևս բունը չհասած ձեռքով մեջքին խփել։ Հաջողեցնելիս նրան գերի տանում և իրենց բերդում պահում էր, հակառակ դեպքում ետ էր վազում, որին այս անգամ նույն նպատակով հետապնդում էր հակառակորդներից մի ուրիշը։ Այս ձևով խմբերը

փոխադարձաբար իրարից գերում էին, որոնց ազատելու համար յուրաքանչյուր խումբ մարդ էր ուղարկում։ Սրանք հանկարծակի և արագ թափով գնում, մտնում էին հակառակորդների բերդերը և ձգտում էին առանց նրանցից խփվելու, ձեռք տալ իրենց ընկերներին և փախչել։ Բայց խփվելու դեպքում իրենք ևս գերվում էին։ Ազատված գերին վերստին խաղալու իրավունք էր ստանում։

Տանող էր ճանաչվում այն խումբը, որը 1. իր ներկայացուցչի միջոցով հանկարծակի մտնում էր հակառակորդի բունը՝ առանց սրանցից խփվելու և 2. երբ գերեվարում էր հակառակորդի բոլոր անդամներին։

Այս երկու դեպքում էլ հաղթողներն իրենց բունը փոխում էին մյուսների բնի հետ և խաղը նույնությամբ կրկնում։ (Բ. Մխ, 69—70)։

559. ԱՐԱՒՋԻ ՏԱՐՕՑԻԿ

Չորսից մինչև 20 պատանիներ խաղավայրի կենտրոնում մի ձող էին տնկում և ծայրին մի գլխարկ դնում։ Ապա բաժանվելով երկու հավասար խմբի, ձողից հավասար հեռավորության վրա դեմ առ դիմաց կանգնում էին։ Երբ տրվում էր խաղն սկսելու նշանը, խմբերից երկուական հոգի արագ-արագ վազում էին գդակը տանելու։ Ո՛ր զույգին որ այդ հաջողվում էր, մյուս զույգին գերեվարում էր և այս ձևով փոխընդփոխ իրար գերի վարելով հաղթանակը ա՛յն խմբին էր տրվում, որը կարողանում էր մյուսի բոլոր անդամներին տանել։ (Ախ. II 24—205 (Վ.)։

560. ԽԱՂԱՅԻՆ

Վազք, որ կազմակերպում էին բարջանճեցի երկու խումբ տղաներ։ Խմբավարները 5—10-ական արագավազներ էին ընտրում քար-բռնուկով, մեկ-մեկ և փոխնիփոխ։ 50—60 քայլ հեռավորության վրա երկու շրջանակ էին գծում, որ բերդ անունն էին կրում, ուր հակառակորդ խմբերը դիրքեր էին գրավում։ Բերդի առջևը, 10—15 քայլ հեռու, մեկ-մեկ գիծ էին քաշում, որոնք հակառակորդների նախամարտիկների համար իբրև կայան էին ծառայում։ Թաց թե չորով որոշված խումբն իր նախամարտիկն ուղարկում էր դիմացինի կայանը։ Հակառակորդ խմբից մեկ կամ ավելի վազողներ, իրար ետևից հետապնդում էին նրան։ Սրանք խփել կարող էին այդ առաջապահին, իսկ իրենք բոլորն էլ ենթակա էին նրա զարկին։ Այս հարվածողների դեմ դուրս էին գալիս առաջամարտիկի ընկերները՝ նրան ազատելու կամ պաշտպանելու նպատակով։ Օդը լցվում էր իրար հալածողների ժխորով։

Ճարպիկ և փորձառու նախամարտիկների պարտականությունն էր՝ իրեն հալածողներին գրավել դեպի իր բերդը, իսկ իր պաշտպաններինը՝ պաշարել հալածողներին, արգելել իրենց բերդը վերադառնալը և «բնաջնջել» նրանց։ Հալածողները ճգնում էին թշնամու առաջապահ մասի առաջը կտրել և իր բերդից հեռացնել ու զարնել նրան՝ առանց թշնամուց զարնվելու։

Խաղամարտը կշարունակվեր, մինչև որ հալածվող առաջապահ մասը զարնվեր կամ ապահով իր տեղը հասներ, և հալածողների մնացորդը հաջողեցներ դառնալ իրենց բերդը։ Այդ դեպքում մյուսներն էլ քաշվում էին իրենց բերդերը։ Երբ առաջապահ մասը զարնվում էր, իր խումբը նոր առաջապահ էր ուղարկում, իսկ եթե ողջ ետ դառնար, առաջապահ ուղարկելու հերթը դիմացինին էր անցնում։

Խաղակռիվը այնքան էր շարունակվում, մինչև որ մեկի բերդը դատարկվում էր։ (Բրջ. 156)։


Ե. ԼԵՌՆԱՅԻՆ ՍՊՈՐՏ

Ներկայացված նյութերը, որ շատ սուղ են, հին Հայաստանի լեռնային սպորտի աննշան վերապրուկներն են։ Շատ ձևեր, որոնք պետք է որ աղերս ունեցային ամառային ու ձմեռային պայմաններում բարձր լեռների, խոր ձորերի ու կիրճերի, ժայռային խոշոր զանգվածների հաղթահարման, ինչպես նաև ռազմական ընդհարումների ժամանակ օգտագործվող հարձակողական ու պաշտպանողական ձևերի տիրապետման հետ, ժողովուրդը չի պահպանել։

Մոռացված ձևերից պետք է համարել չմուշկներով սահելը, զինվորական, որսորդական և այլ նպատակներով պարաններով ժայռերից վայրէջք և վերելք կատարելը, սահնակաձև դահուկներով լեռներից ցած սահելը, գրաստներով ձմռանը բարձր լեռնային տեղանքը հաղթահարելու ձևերը են։

561. Լ Ա Կ Ա Ն

Սասունում մինչև 1915-ը պահպանվել էր լա-կան կոչված կրկնակոշիկը, որը պատրաստվում էր կարմիր ուռենու և դըղկի կոչվող 2—3 տարեկան ծառերի բներից։ 8 թվանշանի ձևն ունեցող լակա-նի վրա կանեփաթելից կապիչներ կային, որոնցով կապվում էին ոտքերին։ Լական հագած մա՛ղիկ աշխատանքի, որսի և այլ տեղեր գնալիս առանց խրվելու քայլում էին ձյան վրայով։ Հենց այդ լականի մասին է, որ Թովմա Արծրունին դեռևս X դ. գրել է. «Այլ և ի ժամանակս հասելոց թշնա-մեաց՝ գան միաբան լեռնայինքն յօգնութիւն իշ-խանացն, ղի են տիրասէրք։ Իսկ վասն ձեռանն ան-կայուն զօրութեանն որ այն ինչ յամպոյն ի վայր գեղեալ լինին հնարաւորեալ իւրեանց փայտս իբրև զանուրս չուանօք պարունակեալ շուրջ զոտամբք, դիւրաւ ընթանան ի վերա ձեռանն իբրև ընդ ցամաք երկիր»։ (Տե՛ս Պետ. ձ. և Թ. ՊՏԱ, 204)։



Նկ. 65ա. Լական Սասունում (բնագիր № 561)
Նկ. Հովհ. Քացակյանի

562. Հ Ե Տ Ի Կ


Հետիկ կամ լական ըսվածը 32 սմ... տրամագը-ծով շրջանակ մըն է թեղիի փայտե շինված։ Այս փայտե շրջանակը իրարմե հավասարապես հեռու 12 կետերին ծակված է։ Այդ ծակերը կը ծառայեն կանեփի չվաններ անցնելու. այսպես. չվանները անցնելով այդ ծակեն, շրջանակը կըլլա այլանդակ մաղ մը խոշոր ծակերով կամ աչքերով։ Այս կազ-մածը ունի չվանե տեղեր և կապիչներ (խրացք), որոնք հետիկը ոտքին վրա հաստատելու կը ծա-ռայեն։ Բնական է, որ այսպիսի ոտքի աման ունե-ցող ոտքերը ձյան մեջ չեն թաղվի։ (Բրկ. 1899, № 1, էջ 14)։

563. Հ Ե Տ Ի Կ

Երբ ձյունը արշընններով կբարդվի միմյանց վրա, տերսխմցիները կհանեն իրենց սովորական շարուխները և նորա տեղ կհագնին տեսակ մը լայն, լայն, դավուկի նման կոշիկներ, որոնք իրենց այլանդակ լայնությամբ ու երկարությամբ երբեք չեն խրվիր փոքր-ինչ կարծրացած ձյունին մեջ, որուն կըսեն հետիկ։ (Անդ. 114)։

564. [ՀԵՏԻԿՈՎ ՔԱՅԼԵԼ]

Հետիկ էր կոչվում Համշենի հայերի մեջ այն «կոշիկը», որով ազատ, առանց խրվելու, քայլում էին ձյան վրայով։ Սա պատրաստում էին կաղնի կամ հոնի ճյուղերից։ Համապատասխան չափի ճյուղը կորացնում և ծայրերն իրար միացնելով ձվի ձև էին տալիս, ապա մեջը կանեփի թելով մաղանը-ման հյուսում էին։ Կողքերից հետիկը չորս կապիչ էր ունենում, որոնցով այն կապում էին ոտատա-կին ու քայլում։




Նկ. 65բ. Հետիկ (բնագիր № 562—564)
Նկ. Հովհ. Քացակյանի

Հետիկը գործ էին ածում ձմռանը երկար ճա-նապարհ անցնելիս, որսի գնալիս և այլ նման դեպքերում։ (Բ. Ժո. ձ.)։

565. [ՓՈԿՈՎ ԲԱՐՁՐԱՆԱԼ]

...Բարձրաբերձ տեղերում (Խնձորեսկում) ձորի այս կամ այն կողմը իրար դիմաց փորելով ապառաժ քարերը՝ քարայրներ են շինում, որոնք մաղարաձեռն են, և յուրաքանչյուրը դարձնում է իրեն համար տուն ու բնակվում է։ Եվ հենց զարմանալին այն է, որ կանայք կաշվե փոկով բարձրանում-իջնում էին՝ ծծկեր երեխաները շալակներին կապած կամ ջրի սափոր և այլ պետքական իրեր վերցրած. փոկով վեր էին բարձրանում մանում էին բարձր քարե բները և քաշում էին կաշվե պարանները վեր, որպեսզի ուրիշ մարդ չկարողանար մտնել։ (Ա.Կ. Պ, 74)։





Նկ. 66. Փոկով քրատակ բարձրանալու կերպը Ջանգիզուրում (բնագիր № 565)
Նկ. Հովհ. Քացակյանի

566. [ԳԱՄԵՐՈՎ ԿՈՇԻԿ]


Կովկասի գագաթները ձմեռը անանցանելի են, ամառը բարձրանում են՝ հագած եզան անաղաղ կաշուց կոշիկներ, տակին սուր գամերով, թմբու-

կի կաշիի պես լայն, ձյունի և սառույցի պատճառով. իջնելու ժամանակ նստում են կաշու վրա՝ իրենց բեռներով և ցած են սահում, ինչպես անում են Ատրոպատյան Մարաստանում և Մասիոս լեռան վրա՝ Հայաստանում։ Նույն տեղում կրունկների տակ դնում են նաև փայտե անվակներ՝ տակին սուր գամերով։ (Ս. 33)։






Նկ. 67ա. Գամերով տրեխներ՝ սառցապատ լեռներ բարձրանալու և իջնելու համար (բնագիր № 566)
Նկ. Հովհ. Քացակյանի



Նկ. 67բ. Քար-քար կոշիկներ (բնագիր № 567)
Նկ. Հովհ. Քացակյանի

567. ՔԱՊ-ՔԱՊ ԿՈՇԻԿՆԵՐ

[Մոկսում, Մամռտանքում և Սպարկերտում բնակիչները]... պիտվական շալ և աբա կը գործեն և կը շինեն «քապ-քապ» կոշիկները. [սա] նոր մաղով կամ կանեփով հյուսված կոշիկ է, տակն ամբողջ բևեռներով, ձյունի և քարի վրա քալելու հարմար։ (ԳՍ. ՀՀ. 100)։



568. [ՁԻԵՐԻ ՈՏՔԵՐԻՆ ՊԱՐԿԵՐ ՓԱԹԱԹԵԼ]

Այստեղ [Արմենիայի] ձիերը պարսկական ձիերից փոքր էին, բայց շատ ավելի կայտառ էին։ Հենց այդ ժամանակ գյուղապետը [հույներին] առվորեցրեց, որ ձիերի ու գրաստների ոտներին, ձյան վրայով գնալիս, պետք է պարկեր փաթաթեն, որովհետև առանց պարկերի կխրվեն ձյան մեջ մինչև իրանները։ (Քս. Ան, հատված 7, գիրք 4-րդ, գլ. 5, էջ 36)։



ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ

ՀԱՎԵԼՎԱԾ I

569. ՅԱՏԻԿ

Ճաշից հետո գնացինք նշանավոր՝ գոտեմարտիկ Յատիկի մոտ։ Սա մի վիթխարի մարդ է, մի սաժենից ավելի բարձրությամբ։ Սրա ուսերին մի-մի մարդ կարող են հանգիստ նստել. քաշը չգիտեմ, միայն հայտնի է, որ Թիֆլիսում մի անգամ «ադինաչկա» է նստել և կառքը նրա ծանրությունից երկու կտոր է եղել։

Մենք նստանք խոհանոցը չոր խոտերի վրա։ Պ. Աղեկյանը (գյուղի ուսուցիչը) կամեցավ ինչի բաժակով օղի տալ նրան՝ աշխուժի բերելու. նա արհամարանոք նայեց բաժակին, առաջ բերեց շիշը և ամբողջապես «գլուխը քաշեց» (խմեց). լիքը շիշը դատարկված էր, սակայն նրա «մեկ անկաճն էլ չէր խմացե». ես և իմ ընկերս «մատ պուկանց մնացինք»։ Երկրորդ շիշն էլ բերվեցավ, այն էլ առաջվանի պես դատարկվեցավ։ Նա փոքր-ինչ աշխուժի եկավ և սկսեց մի կողմից պատմել յուր արկածները, որոնք մյուս կողմից ծածուկ սղագրում էի ես։ Այստեղ կը հիշեմ միայն մի քանի արկածներ այս նոր Տորքի կյանքից։

Սա Կարնո գավառի Թուաղ գյուղից է, գոտեմարտիկ հոր և մոր միակ ժառանգը, եղիգյար, որի համար և Յատիկ է կոչում. իսկական անունը Սահակ Միլտոնյան է։ Իրեն հայտնի չէր, թե որ թվին է ծնվել, միայն Կարնից գաղթած միջոցին 15 տարեկան է եղել, ասել է, թե ծնվել է 1815 թվին և այժմ 72 տարեկան է։

Յուր ուժի զորությունը առաջին անգամ հայտնվել է հետևյալ դեպքի ժամանակ. 17 տարեկան հասակում Ալեքսանդրոպոլում մի օր երկաթե հաստ ձողով, քյուակիով ուզեցել է գլորել մի քանի հաստ գերան. երբ ձողը գետնի տակն է կոխել և դեպի վեր հրել, ձողը ծռվել է։ Հավաքված բազմությունը հիացել է դրա ուժի վերա և «Փահլվան» անունը տվել։ Թուլացքներ անելով կասեմ, որ նա Ախալքալաքում գրաղ գալով գոմեշը հետևից գրկել և գլխի վերայից դեն է ձգել, մի ձեռքով մի հասակավոր մարդուն ոտից բռնել և վերև է բարձրացրել, երեք մատով ջրաղացի քարը զսպել է դառնալուց. երբ մի անգամ ջրաղացպանը չէ կարացել առաջ յուր աղունը աղալ, սա ջրաղացի քարը յուր տեղից վերցրել և դեն է շպրտել. գրաղով գոմեշի հետ լծվել է հիսուն պուդ ալյուր բարձած սայլում և գոմեշին հաղթել։ Դեռ չեմ հիշում «Հոգեառ Կռոյի», ինչպես կոչում էին նրան Թիֆլիզցիները, շատ «Փահլվաններին» հետ ունեցած գոտեմարտները, որոնց բոլորի մեջ հաղթող է հանդիսացել՝ մահացու հարված տալով հակառակորդին։ Մինչ իսկ հայտնի գոտեմարտիկ Գլդանելին անցյալ տարիները չէ համարձակվել սրա հետ գոտեմարտել և «փեշքյաշներ» տալով՝ «պոչը քաշեր փախեր է»։ Վրաց Հերակլ թագավորազնը սրան հովանավորելիս է եղել, որովհետև սա բոլոր փահլևանների մեջ փայլել է որպես առաջին։ Մեզ առասպելական էին թվում սրա արկածները, սակայն գյուղացիներից շատերն, որոնք աչքով տեսել էին այդ արկածները, հավատացրին մեզ։ Այժմ այդ «փահլևանների փահլևանը» հետին չքավորության մեջ անց է կացնում յուր կյանքը»։ (Եվ.)։

570. ԸՄԲԻՇ ՅԱՏԻԿԸ

Այս հայտնի ըմբիշը—փահլևանը—վաչյանցի է (Վաչյանը գտնվում է 8 վ. Ախալքալաքից հետու,

դեպի հարավ)։ Հազիվը եղել է հասարակ գյուղացու շոր. գլխին փափախ, իսկ ոտքերին՝ մշտական տրեխ, բստ որում նրա չափազանց մեծ ոտքերին ոտնաման ճարվելիս չէ եղել։

Յատիկը՝ Սահակ Միլտոնյանը իբրև գոտեմարտող հայտնի է եղել 1860-ական թվականներին։ Նա տարօրինակ հատկություններ է ունեցել։ Նախքան գոտեմարտելը կամ որևէ ծանր բեռ տեղից շարժելը պատվիրելիս է եղել եղբորը, որ ճիպոտով մի քանի ամուր հարված հասցնի իր մերկ մարմնին։

Սրա չափից դուրս ուժեղ լինելու մասին ականատեսները հետևյալ դեպքերն են պատմում։

1. Վաչյանի ձորում, որով Կուր գետն է հոսում, Մարգաստան գյուղի մոտ ճանապարհի վրա եղել է մեծ քար, որ խանգարելիս է եղել մարդկանց անցուդարձը և 10—15 հոգի հնարավորություն չեն ունեցել այդ ժայռը տեղից հեռացնելու, գետը գցելու, իսկ անասուններ լծել, քաշել-հեռացնելը միանգամայն անհնար է եղել, որովհետև հակառակ կողմը եղել է Կուրը, շարժվելու տեղ չի մնացել։ Յատիկը տեսնում է այդ, հանում է շորերը, եղբորը պատվիրում, որ ճիպոտի մի քանի ուժեղ հարված հասցնի մարմնին, մտնում քարի տակ, շուռ տալիս, գլորում գետի մեջ։ Մինչև օրս էլ այդ քարը այնտեղ է, Կուրի ափին և կոչվում է Յատիկի քար։

2. Ախալքալաքից Ախալցխա գնալիս Նաքալաքյով գյուղի մոտ բեռնված սայլը ընկնում է ցեխը և գոմեշները չեն կարողանում տեղից շարժվել։ Յատիկը արձակում է այն գոմեշին, որի կողմը ավելի փոս է ու ցեխ։ Խնդրում է իրեն հարվածել գյառմաշու ճիպոտով մի քանի անգամ. զոռում է գոմեշի հետ, սայլը դուրս հանում։

3. 1850—60-ական թվականներին, երբ տակավին Թիֆլիսը կապված չէ եղել Ռուսաստանի հետ երկաթուղով, երբ Թիֆլիսին հացահատիկ ու ալյուր մատակարարելիս են եղել Ջավախքը և Շիրակը, Յատիկը իր գյուղացիների հետ ալյուր է տարած եղել Թիֆլիս ծախելու։

Նրանց սովորական կայանը եղել է Ալըրի մեյդանը, որ մինչ օրս էլ կա։ Այստեղ Թիֆլիսի պարսիկ կինոները հարձակվում են վաչյանցի սեյվորների վրա և սկսում բռունցքներով ջարդել։ Սայլվորները ոչինչ չեն կարողանում անել։ Յատիկը այդտեղ չի լինում, վաղ են տալիս նրան կանչելու։ Յատիկը գալիս է ու սկսում ոչ թե բռունցքով աջամներին խփել (որովհետև եթե նա մարդու գեշ տեղին խփեր իսկույն կսպաներ), այլ մեկ մեկ բռնում և գցում է մոտակա տան կտուրը։ Մնացած կինոները որ այդ տեսնում են, իրար ասում են. «տո փախեք, էտ էրգյան կռոն մեզ բոլորիս կսպանի»։ (Պատմողներն ասում են, որ այն ժամանակ Թիֆլիսի հասարակ տների կտուրները խիստ ցածր են եղել, ինչպես մինչև օրս նման կտուրներ կան Հավլաբարում, Ջուղո-բիթում և Վանքի թաղում)։ Պարսիկ վաճառականներն այդ որ տեսնում են, խանութները փակում, փախչում են տները։ Հետո գալիս են Յատիկի մոտ, 3—4 օր տանում իրենց տները ման ածում, հյուրասիրում։ Առաջին անգամ բերում և սրան կառք նստեցնում։ Սա որ ոտքերը դեմ է տալիս կառքի առաջին մասին, ուժով ձգվում, կառքի առաջին մասը պոկվում է, մեկ էլ կառապանը տեսնում է, որ ինքը մենակ է կուզի (թափքի) վրա և մի ղույգ անիվ, իսկ կառքի հետևի մասը չկա։ Աջամ վաճառականները հատուցում են կառապանի վնասը։

4. Ջառղանեցի թուրք բեկերը գալիս են Ախալքալաք, այնտեղի բեկերից մեկի աղջիկը հարս տանելու։ Նրանք հետները բերում են մի թուրք փահլևան և առաջարկում են Ախալքալաքի թուրք բեկերին՝ դուրս բերել իրենց ըմբիշը։ Բեկերը տեսնելով, որ իրենց թուրքերի մեջ այդ տեսակ ուժեղ ըմբիշ չկա՝ հրավիրում են Յատիկին։ Յատիկը դուրս է գալիս ասպարեզ. առաջին անգամ ըստ սովորության ձեռք է մեկնում, բարև տալիս, ծանոթանում. այդ րոպեին ձեռքը այնպես պինդ է սեղմում, որ թուրք փահլևանը սուր ճիչ է արձակում, ուշաթափ ընկնում է. մոտենում, բարձրացնում են, ուշքի բերում և տեսնում նրա մատների ծայրերը, եղնգաբերանները ճաքճքած են և արյուն է հոսում։ Դրանից հետո թուրք ըմբիշը չի գոտեմարտում. նշանակված մրցանակը ստանում է Յատիկը։

5. Յատիկի մասին լսում է Թիֆլիսի Մոսիպլատան գյուղացի Խրիմյանը, որի կեղծ անունն էր Գլուտանելի, և որի թիկունքը երբեք գետին չէր տեսել։ Գալիս է Ախալքալաք հատուկ նպատակով, որ Յատիկի հետ գոտեմարտի. դա եղել է 1884—85 թվերին, այն ժամանակ, երբ Յատիկը եղել է

մոտ 70 տարեկան։ Նախքան գոտեմարտելը Յատիկը ձեռք է տալիս Գլտանելուն, բարևում ու հուպ է տալիս (թեև առաջուց բարեկամները խորհուրդ են տված եղել, որ հուպ չտա)։ Ի՞նչ է զգացել Գլտանցի Խրիմյանը այդ հպումից, ոչինչ չէ հայտնել, միայն ետ է կացել գոտեմարտելու մրտքից, համբուրել Յատիկի ձեռքը և ասել. «Դու ինձ հոր տեղ կգաս, ինձ վայել չէ քեզ հետ գոտեմարտել, ես տեսա քեզ, բավական է, և 50 ռ. տալիս է Յատիկին նվեր։ (Այդ ժամանակ Գլտանցի Խրիմյանը եղել է 30—35 տարեկան)։

6. Յատիկը գնել էր Բաղդասի երեք ջվալ, որոնցից յուրաքանչյուրը տանում էր 7—8 փ. հացահատիկ։ Նա այդ երեք ջվալը լցնում էր հացահատիկով, մեկը քիչ թույլ, ինչպես իրենք են ասում՝ մեջընկած. այս մեջընկածը խուրջինի պես դցում են ուսին, մյուս երկուսը թևերի տակ և կալի հացը կրելիս է եղել տուն։ Կալն էլ տնից եղել է 1/8 կիլոմետր հեռու։

7. Յատիկը ունեցել է մեկ արու զավակ, անունը Գրիգոր (Գրիգոր)։ Սա 17—18 տարեկան հասակում գոտեմարտում է հոր հետ Պողոյենց կալի մոտ։ Եվ ի պատիվ Աղաբաբենց Սարգիս աղայի որդու պսակի, երբ նորապսակներին ժամից տուն են տանելիս եղել, հայրը թույլ է վերաբերվել դեպի որդին, որից օգտվելով Գրիգորը, հորը կողքին գցում է գետին։ Յատիկը վրդովվում է, որ մինչև այդ հասակը նրան ոչ ոք գետնին չէ տապալել, այժմ իր որդին... Առաջարկում է նորից գոտեմարտել. այս անգամ նա այնպես պինդ հուպ է տալիս որդու մեջքը, այնպես ուժգին հարվածում գետնին, որ որդին վնասվում է, կողերը ջարդվում, որից 20 օր անց Գրիգորը վախճանվում է։ Այդ դեպքը շատ վատ է ազդում Յատիկի վրա. նա վրշտից ու կսկծից է՛լ ավելի սկսում է խմել և այնուհետև այլևս ոչ ոքի հետ չի գոտեմարտում։

Վկայում են տեսնողները, որ եթե որդին՝ Գրիգորը կենդանի մնար՝ հորից ավելի զորեղ փահլևան դուրս կգար։

Յատիկը ոչ միայն հայտնի է եղել Ջավախքին, այլև Թիֆլիսին, Ախալցխային, Շիրակին, Կարսին և մյուս շրջակա երկրներին։ Նա եղել է սովորականից բարձրահասակ մարդ, մոտ երկու մետր բարձրությամբ, թիկնավետ, խոշոր ձեռքերով, հաստ և երկար մատներով, նրա սափրած սևաթույր դեմքը եղել է խոշոր, մեծ—մեծ աչքերով, խիստ թավ հոնքերով, կատես մի Տորք Անգեղ։

Յատիկը մեռել է 80 տարեկան հասակում 90—93 թվականներին։ Նա ծնված է եղել 1815 թվին, Արզրումի վիլայեթի ժողովրդի գաղթի ժամանակ (1830 թ.) նա եղել է 15 տարեկան պատանի։

Սրանք, Միլտոնենց տղերքը, չորս եղբայր են եղել, չորսն էլ փահլևան, միայն ամենից ուժեղը և փարթամ հասակովը եղել է Յատիկը, որը եղբայրների մեջ ամենից փոքրն է եղել։ (ՀՄ, ՀԳԱ, ձ., էջ 239—244 (Ախ.)։

571. ԸՄԲԻԾ ԲԱՂԴԱՍԱՐԸ

Բաղդասար Բդոյանը ծնվել է Կարնո Քոչք գյուղում, մոտ 1750-ական թվականներին և ապրել մինչև 1810-ական թվականները։ Անչափ ուժեղ Բաղդասարը, սակայն, ըմբշամարտությամբ չի զբաղվել։ Նրա սովորական մենամարտերից գիտեին, որ նահանգում հաար չի ճարվի։ Գիտեին, նաև, որ Բաղդասարը կարող էր լծվել գոմշի հետ, քաշել բեռնասայլը, ցորենով լիքը պարկերը դյուրությամբ բառնալ կամ բեռնաթափ անել, կամ կոտրված անիվի առանցին բռնելով շարժվող սայլը պահել մինչև տեղ հասնելը։

Ավանդությունն ասում է, թե ջրաղացից գյուղ վերադառնալիս Բաղդասարի սայլը խրվում է փոսի մեջ։ Գոմեշներից մեկի շարքից գրեթե դուրս գալու պատճառով, Բաղդասարը հարկադրվում է լծվել նրա փոխարեն։ Նա ճիպոտը տալիս է մշակի ձեռքը և ասում.—Ա՛ռ խի չիբուխը. եփ որ ես քաշելու կըլլենամ, առաջ ինձի, էտև հետս գոմշին էման կը զայնես, օր էրկուսս էլ բռռանք։ Վա՞յը էկել, քեզի տարել է, օր դու ինձի ամուռ չես զարկե։

Մշակին բան էր պակաս. ճիպոտը վերցնում և հո՛, հո՛ ասելուն պես նախ Բաղդասարին, ապա գոմշին այնպես է դաղում, որ կտրիճը գոռում և գոմշի հետ սայլը թոցնում է դուրս։

Ժողովուրդը այդ համբավով էր զբաղված, երբ Քոչք է գնում մի ածդահա թուրք փահլևան ու մենամարտող է պահանջում։ Պայմանն այս էր. ըմբիշ չներկայացնելու, ինչպես նաև ներկայացվածին հաղթելու դեպքում փահլևանը գյուղից պա-

հանջում է 1 կով, 1 մոզիկ և 5 ոչխար։ Իսկ եթե ինքը հաղթվեր, գյուղը կաղատվեր այդ տուրքից։

Մերակույտը հավաքվում, խորհուրդ է անում և հետևցնում, որ Բաղդասարից բացի սրա հետ ոչ ոք գլուխ դնել չի կարող։ Եվ դիմում են նրան։ Սակայն Բաղդասարը խույս է տալիս, պնդելով, թե ինքը փահլևանի հետ մրցելու փորձ չունի, հնարքներ չգիտե ևն։ Սակայն սպիտակամորուսները նրան խրախուսում են ու մեջ քաշում։ Ջիմանի վրա լայն հրապարակ են բացում, և այն գյուղովին շրջապատում։ Թուրք փահլևանը կաշվե կարճ տաբատով և մերկ ու յուղած մարմնով ընկնում է մեջտեղ։ Բաղդասարը սովորական հագուստով գալիս է հրապարակ և մոտենալով նրան, ձեռք է տալիս ու այնպես է սեղմում, որ թուրքի արցունքները կաթում են։ Ապա վրա են պրծնում ու փաթաթվում, գոմեշների նման իրար հրում։ Գյուղացիները ոգևորիչ խոսքերի հետ գոռում են.— Բաղդո լորդե՛, Բաղդո լորդե։ Ոգևորված համագյուղացիների խրախուսանքներից, Բաղդոն գրկում է փահլևանին, բարձրացնում վեր ու այնպես է գետնում, որ ուշագնաց է լինում։

Գյուղացիներն իրենց փահլևանին թևերի վրա են առնում ու վեր-վեր թռցնում, իսկ ուշքի բերված փահլևանն ընկերների հետ սուս ու փուս հեռանում է գյուղից, ինչպես կարգն էր։ (Բ. ժխ. ձ.)։

572. ՋԻԱԽԱՂԵՐ

Նազար Բդոյանը (1892—1950) Ախալքալաքի Փ. Խանչալլի գյուղում 1910—20-ական թվականներին զավառում ամենահայտնի ձիավարժներից մեկն էր։ Նա իր արագավազ նժույգից անբաժան էր։ Այդ ձիով նա 1916—17 թթ. բազմիցս մասնակցել է զավառական մրցություններին, որ կազմակերպվում էին ուխտավայրերում և հարսանեկան հանդեսների ժամանակ։ Նազարի հաղթանակները բնորոշվում էին առանձնապես գործելակերպով, որ նա իրացնում էր սրընթաց նժույգի վրա։ Նա ձիու րնթացքի ժամանակ կանգնում էր թամքին, պարանոցի ու փորի տակով պտույտ գործելով կրկին բարձրանում էր թամքի վրա, բռնելով ձիու բաշից, արագ-արագ քանիցս իջնում ու բարձրանում էր թամքի վրա, իսկ երբեմն էլ վազում ձիուն հավասար արագությամբ, ինչպես նաև կախվելով գետնից բարձրացնում էր իր ձեռքով առաջ նետած առարկան։

Նազարի այս հնարքները նրան փրկեցին 1918 թ. մայիսին, երբ թուրքական բանակը ներխուժեց Ախալքալաքի զավառը։

Տեղահան եղած ժողովրդին պաշտպանելու համար Ախալքալաքի գյուղերի պաշտպանական ջոկատները լեռներում դիմագրավել և կատաղի կռիվներ էին մղում թուրքերի դեմ։ Նազարը գրտնվում էր Հայրենի գյուղի մոտերքում՝ Աղբաբա տանող ճանապարհի վրա կովողների ջոկատում։ Նրա նժույգը սովոր էր լսել տիրոջ «պառկիր» և «ել» հրամանները։ Պառկած ձիու թիկունքում պարզված՝ նա կրակում էր թուրքերի վրա, երբ նկատում է, որ ինքը մենակ է մնացել։ Ուստի ձիուն բարձրացնում, նստում ու խույս է տալիս՝ մտնելով նրա փորի տակը։ Թուրքերը կարծելով, թե ձիավորն սպանվեց, կրակը դադարեցնում են և ձգտում բռնել խելոք ձին։ Բայց նա ձիու փորի տակին կպած՝ ղեկավարելիս է լինում ու ճակատից հեռանում։ Երբ թուրքերը հույսները կտրում և դադարում են հետապնդել, Նազարը ի հեճուկս նրանց, բարձրանում է, կանգնում թամքին ու զարմանք պատճառելով հասնում յուրայիններին։ (Բ. ժխ. ձ.)։

ԽԱՂԱՅՈՂՆԵՐԻՆ ՎԵՐԱԲԵՐՈՂ ՕՐԵՆՔՆԵՐ ՄԽԻԹԱՐ
ԳՈՇԻ ԴԱՏԱՍՏԱՆԱԳՐՔՈՒՄ

Ե

Երեխաների դատապարտության վերաբերյալ, եթե խաղերի ընթացքում իրար խեղվածքներ են պատճառում, կամ (մարմնի որևէ մասը) կոտրում են, կամ վնասում են զգայարանները:

5. Երբ երեխաները խաղերի մեջ միմյանց վնասում են՝ պատահական կերպով, թե բարկացած լինելով, այդպիսի դեպքերը քննվում են. նմանապես էլ սպանության դեպքում. և բոլորը սպանության նման. և հոգևկան վիճակի համեմատ էլ տուգանքն է լինում; վնասվածի համար բժշկության ծախսով է տուգանվում; Այս տեսանք երեխաների դատապարտության իրավունքներով:

Զ

Այն դատապարտության մասին, երբ երեխաները միմյանց ջրի մեջ են վնասում:

6. Երեխաները ջրի մեջ լողանալով, լինում է, որ միմյանց խեղդում են. դա պետք է ուշադրությամբ քննել. միամտաբար խաղի մեջ է եղել, թե ցասման վրեժով, կամ ինքն է գնացել խորքը և հնարավոր չի եղել, որ մյուսները դուրս բերեն; Դրանք քննիր, որ ամբողջը համեմատվի սպանության հետ և ըստ այնմ էլ իրավացիորեն վճիռ հանվի:

Է

Երեխաների դատապարտության մասին այն դեպքում, երբ գրավով միմյանց շարժում են, բարձրից ցած են վազում, դժվար տեղերով, ձյուների միջով և այլ այսպիսի տեղերով գնում են:

7. Եթե վերևում ասվածների և այդպիսի բանների պատճառով երեխաներին (վտանգ) պատահի, ապա հորդորողը պետք է դատվի ըստ իր տարիքի և վնասի կեսը պետք է կրի, եթե մահ տեղի ունենա, մանավանդ որ վնասվածը տարիքով ավելի լինի: Իսկ եթե կեսից ցած կամ կես լինի, օրինակ՝ տասնմեկ, տաս կամ ավելի ցած, նույնով են դատվում: Քանի որ, ինչպես վարդապետների (հայրերի) կանոնները բոլորովին դրանց չի արդարացնում, այնպես էլ դատը չի արդարացնի: Եվ եթե կատարելի դեպքը լինի, դրանով կդատվի:

Ը

Այն երիտասարդների դատապարտության մասին, որոնք իրար վնասում են դատարկ վայրիվերո գրավներով (գրազ):

8. Երիտասարդները սովորություն ունեն միմյանց վայրիվերո շարժել, բարձրացնել ծանրություններ, ինչպես օրինակ՝ քարեր և այլ այսպիսի առարկաներ, որի հետևանքով վնասում են միմյանց:

Նա, որ շարժեց որևէ բան և գրավ դրեց, հայտնի այն բանից, որ մյուսը խաբվելով վնասվեց, ապա առաջինը արյան կես վնասին պարտական է մնում, ըստ որում, եթե խաբեց, մանավանդ այն

դեպքում, երբ խաբողը տարիքով մեծ է, տուգանվում է վնասածի և բժշկության դիմաց։ Այս գրեցինք նրա համար, որպեսզի զուր տեղը մահացություն չլինի։

ժ

Գավառների և գյուղերի ու նրանց մեջ պատահած դեպքերի մասին։

...Որոը պատկանում է նրանց, ովքեր որ որս են անում, իսկ եթե օտարներն են որսում, ապա պարտավոր են տասանորդ վճարել (տասից մեկը), որը և սահմանն է։ Նմանապես, եթե (անտառում) փայտ են կտրում, ապա տասանորդ է տրվում նրան, ում որ պատկանում է սահմանը։ Ըստ այսմ էլ լինում է ծովային որսը և այլ որսերը։

ԽԱՂԱՑՈՂՆԵՐԻՆ ՎԵՐԱԲԵՐՈՂ ՕՐԵՆՔՆԵՐ
ՍՄԲԱՏ ԻՇԽԱՆ ԳՈՒՆԴՍՏԱԲԼԻ ԴԱՏԱՍՏԱՆԱԳՐՔՈՒՄ

ՀՈԴՎԱԾ Գ

Եվ եթե որևէ մեկը գնա ուրիշների երկիրը և որս անելով զբաղվի, պարտավոր է տասից մեկը տալ որսատեղի տիրոջը. իսկ եթե ձուկ է որսում, միևնույնն է, տասից մեկը տալիս է, ինչպես ցամաքային որսը։

ՀՈԴՎԱԾ ՃԻԵ

...Կամ թե ձիով դիպչի, կամ սայլի տակ գցի և սպանի, կամ որսի հետևից ուղարկի, կամ որևէ տեղ գցի, նա դիպչի և սպանվի։ Սպանությունն այլ կարգի է, երբ մարդ մարդու, եղբայրը եղբոր դեմ դանակ կամ սուր է քաշում և հետապնդում, հետապնդվողը իր ահից նա է գառնում և հետապնդողին սպանում է. և կամ թե մարդ, որ ընկնում է մարդասպանների մեջ և նրանք կամենում են սրան սպանել, իսկ սա դիմադրում է և իր ճարպկությամբ հաջողում է նրանց սպանել. այս դեպքում կամա և ակամա սպանությունները խառնվում են։

ՀՈԴՎԱԾ ՃԼԲ

...Եթե պատահի, որ խաղալիս երեխաները իրար սպանեն, ապա պետք է նկատի առնել սպանողի հասակը։ Եթե նա տասներկու տարեկանից բարձր լինի, ապա նրան իբրև մարդասպանի պետք է տույժի տակ գցել։ Իսկ եթե տասնմեկ տարեկան լինի, տույժի է ենթարկվում կիսով չափ։ Նույնպես է լինում տուգանքը նաև այլ վայրում։

ՀՈԴՎԱԾ ՃԼԳ

Իսկ եթե երեխան երեխային վնասում է և վնասելիս վիրավորում է կամ կոտրում (մարմնի որևէ մասը), ապա այս դեպքում էլ նկատի պետք է առնել հասակը և վերքի չափն ու ըստ այդմ դեղադինը դնել վնասողի վրա։ Նույնպես էլ՝ եթե լողանալու ժամանակ միմյանց խեղդում են, անհրաժեշտ է հաշվի առնել հասակը, ինչ չափ լինելը. իսկ դասը այնպես է, ինչպես վերևում գրվեց։

ՀՈԴՎԱԾ ՃԼԴ

Իսկ եթե երեխաները երեխայություն անեն և գրավով (գրաղ) բարձր տեղից վազեն դեպի ցած և դրանից մահ առաջանա, ապա երեխաների օրերը և չափը (հասակը) հաշվի են առնում, ինչպես վերևում գրվեց։ Եթե մանկական հասակում են լինում, ապա տույժի կեսը դնում են նրա վրա, որ ընկերոջը գրավ է տվել (գրաղ է եկել)՝ գրավ տալու պատճառով. իսկ եթե տուժողը վիրավորված է, ապա ըստ գրավ եկողի հասակի դեղադինն է լինում։ Բայց երկուսն էլ միևնույնն են, հարում են կես մարդասպանությանը (այսինքն՝ թե վիրավորվելը և թե մեռնելը)։

ՀՈԴՎԱԾ ՃԼԵ

Իսկ եթե գրավով ծանր առարկա վերցնեն, կամ ուժփորձուկ կատարեն, որ երիտասարդների համար սովորական երևույթ է և խաղի ժամանակ անում են,— ապա նա, որ մյուսին հրահրել է այդիսի գործողության և վնասել է ընկերոջը, նույնպես նրա վնասի կեսի տերն է, որ գրեցինք։

ՀՈԴՎԱԾ ՃԽԷ

Եթե որևէ մեկը չափահաս է դառնում և գարշելի ցանկությամբ սպանություն է կատարում, կամ պատճառ է դառնում, որ մեռնի, այդպիսին արժանի է մահապատժի։ Իսկ եթե կոտրվի կամ վիրավորվի, ապա բժշկի և դեղորայքի ծախքը ինքն է վճարում, իսկ կերակրի ծախքը և պակասը իր պատճառով է վճարում։

Իսկ եթե թերահաս է, ապա տուգանքի կեսն է տալիս վնասողը։

Իսկ եթե խաղի մեջ է պատահում դեպքը, իրավունքը միևնույնն է, բայց խաղի համար պետք է նկատի ունենալ. կամ կեսն է լինում կամ մեկ երրորդը։ Նույնպես է լինում նաև ապաշխարությունը, եթե դատի չի ենթարկվում. այն է, ինչ որ պալատը որոշում է։

Իսկ եթե երեխա է լինում, ապա պետք է հասակը հաշվի առնել և ըստ հասակի վերաբերվել, այսինքն այն, ինչ որ գրեցինք տասներկու, տասհինգ տարեկանների վերաբերյալ. և չարությամբ, վրեժով և կամա, թե ակամա և այն, որ մահվանից հետո լաց է լինում ու արտասում է, ուրախանում է։

ԱՂԲՅՈՒՐՆԵՐԻ ՀԱՄԱՌՈՏԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ա. Ա.Հ, IX. «Հավաքածո պոլսահայ ռամկական անգիր գրականության», հավաքեցին Հրաչյա և Արմենուհի Աճառյան, «Ազգագրական հանդես» գիրք IX, Թիֆլիս, 1902։

Ա.Դ, I. «Անգիր դպրություն և առակք», հատոր Ա, վահան վարդապետ Տեր-Մինասյան, Կ. Պոլիս, 1893։

Ա.Դ, II. «Անգիր դպրություն և առակք», հատոր Բ, վահան վարդապետ Տեր-Մինասյան, Կ. Պոլիս, 1893։

Աե. ՊՊ. Աբրահամ Երևանցի, Պատմութիւն պատերազմացն, 1721—1836 թ., Երևան, 1938։

Ազ. Ա. Ախուրյանի շրջանի Ազատան գյուղի խաղերը, 1952 թ. գրի առավ Գրիգոր Մարտիրոսի Գրիգորյան։

Ալ. Պ. Պատմութիւն Արիստակեսայ վարդապետի Լաստիվերացւոյ, Թիֆլիս, 1912։

Ախ. II. Ջիքունի, Արևելյան խաղաշխարհ. Տոհմիկ խաղեր և ժամանցներ. «Իզմիրլյանց» մրցանակով պսակված։ Ա հատոր, Կ. Պոլիս, 1919։

Ախ. II. Ջիքունի, Արևելյան խաղաշխարհ. Տոհմիկ խաղեր և ժամանցներ. «Իզմիրլյանց» մրցանակով պսակված։ Բ հատոր։ Կ. Պոլիս, 1919։

Ախզ. Ա. Ախուրյանի շրջանի Ազատան գյուղի խաղերը. 1952 թ. գրի առավ Վոլոդյա Կատայան։

Անս. Աբրահամու Խոստովանողի վկայք Արևելից։ Թարգմանութիւնք յատորներենից։ Աշխատասիրութեամբ Գալուստ Տեր-Մկրտչեանի, Էջմիածին, 1921։

Ակ. Պ. Աբրահամ կաթողիկոսի Կրնտացւոյ Պատմագրութիւն անցից իւրոց և Նատր-Շահին պարսից, ի Վաղարշապատ, 1870։

Ա.Հ. «Ազգագրական հանդես»։

Աղբ. «Աղբյուր» ամսագիր։

Ա.Ղ. ՍՄ.բ. II. «Դավա շինել» և «Փաշա շինել». գրի առավ Ա. Ղանալանյան։ Տե՛ս, «Սասնա ծռեր», Բ հատոր, II մաս, Երևան, 1951։

ԱՄ. Փ. Փշրանք Շիրակի ամբարներից. հավաքեց Աղ. Մխիթարյանց. «Էմինյան ազգագրական ժողովածու», հատոր Ա, Մոսկվա-Ալեքսանդրապոլ, 1901։

Անդ. Անդրանիկ, Տերսիմ. ճանապարհորդություն և տեղագրություն, Թիֆլիս, 1900 թ.։

ԱՇ. Մ. Ս. Գ. Աբրահամյան, Անանիա Շիրակացու Մատենագրությունը։ Ուսումնասիրություն, Երևան, 1944։

Աուլ. «Ուղեգրություն սրը Ուիլիըմ Աուզլեի (1810, 1811 և 1812)»։ Տե՛ս Հովհ. Հակոբյան, Ուղեգրություններ, հատ. Ջ., ԺԲ. դարի առաջին քառանամյակ (1800—1820), Երևան, 1934, էջ 430—498։

Ա. ՊՀ. Ագաթանգեղայ Պատմութիւն հայոց, Թիֆլիս, 1914։

Արձ. «Արձագանք», լրագիր։

ԱՏՄ. Պվ. Պանդուխտ Վանցին, նամականներ, երգեր, առածներ, առեղծվածներ, գրեց Արիստակես վարդապետ Տեր-Սարգսենց, Կ. Պոլիս, 1875։

Ար. «Արեւելք», օրաթերթ, Կ. Պոլիս։

Արրտ. XII. Ղարաբաղի ժողովրդական ջրօրհնյաց երգերից։ Գրի առավ Դ. Վ., Տե՛ս «Արարատ» XII, Վաղարշապատ, 1895, էջ 469—471։

ԱՔ. Սրսեն Քոսյանց, Տառախաղ տե՛ս «Հասկեր» ամսագիր, 1908, № 12, էջ 435—437։

Բ. Ա.Հ. V. Բենսե, Բուլանըխ կամ Հարք գավառ, «Ազգագրական հանդես», գիրք Ե, Թիֆլիս, 1899։

Բ. Ա.Հ. VI. Բենսե, Բուլանըխ կամ Հարք գավառ, «Ազգագրական հանդես», գիրք Զ, Թիֆլիս, 1900։

Բար. Ջոզեֆա Բարբարո (1471—1478), Ուղեգրություններ, ԺԳ-ԺԶ դար (1253—1582)։ Տե՛ս Հովհ. Հակոբյան, Ուղեգրություններ, հատ. Ա, էջ 175—214, Երևան, 1932։

Բ. ԵՊ. Վարդ Բդոյան, Երկրագործական պաշտամունքի մի քանի հետքեր հայերի մեջ, Երևան, 1950։

Բղ. Ա. Նոր Բայազետի Բաուիկյան գյուղի խաղերը. 1952 թ., գրի առավ Հովհաննես Ասատրյան։

Բ. ԺԽ. Ա. Ժողովրդական խաղեր, գրի առավ Վարդ Բդոյան, ձեռագիր (1940—1956)։

Բխ. Ա. Հոկտեմբերյանի շրջանի Բամբակաշատ գյուղի խաղերը. 1952 թ. գրի առավ Հարություն Գեղամի Եղիազարյան։

ԻՀ. ՀՄ. Ա. Բաղդասարյան Հակոբ Ղազարի, Հին գյուղական հարսանիքի ծեսերն ու սովորությունները (Կարսի գյուղերում)։ Գրի է առնվել 1946 թ. Լենինականում։ Ձեռագիրը տե՛ս Հայաստանի պատմության պետական թանգարանի ազգ. բաժնի գիտ. արխիվ № 100։

Բ. ձ. Վ. Բդոյան, Ազգագրական նյութեր Աշտարակի շրջանից։ 1945 թ. ձեռագիր։

Բ. Մխ. Մանկական խաղեր. ժողովեց Հովհաննես Բարխուդարյան, Տփխիս, 1895։

ԲՄ. «Բուրաստան մանկանց», ամսագիր, Կ. Պոլիս, 1882—1890, հրատարակիչ՝ Նշան Պերպերյան, խմբագիր՝ Կ. Կարագյուլյան, ապա Ս. Տեոդիքյան։

Բվպ. «Բազմավեպ»։

Բրկ. «Բյուրակն» լրագիր։

Բրջ. Բարջանճ գյուղ. Համապատում (1600—1937) աշխատասիրեց Մանուկ Պ. Մերոն Բարջանճցի, Պոստոն, 1938։

Գ. Գալուստ, Ճակատագրի տոնը (Համբարձումը), վիճակ հանելու սովորությունը և վիճակի երգերը, «Արարատ», 1908, № 10, էջ 912—939 և № 11, էջ 1026—1040։

ԴԱԳՍ. Գիրք աղօթից Գրիգորի Սկեվռացւոյ գիտնական վրդպտի։ Ի Կոստանդնուպոլիս քաղաքի, ի Թուին հայոց ՌՃՂԱ (1742) մարտի քսան։

ԳԱ. ՀԺՀ, VI. Գաս. Աղազադյանց, Մանկական խաղեր, տպագրված Տիգրան Նավասարդյանի «Հայ ժողովրդական հեքիաթներ» ժողովածուի VI հատորում, Թիֆլիս, 1890 և VII հատորում, 1891։

Գար. Ուղեգրություն գեներալ Կարդանի (1807—1808 թ.), Տե՛ս Հովհ. Հակոբյան, Ուղեգրություններ, հատոր Զ. ԺԹ դարի առաջին քսանամյակ (1800—1820), Երևան, 1934, էջ 82—135։

ԳԲ. Հայերեն գավառական բառարան. գրեց Հր. Աճառյան, Թիֆլիս, 1913։

Գն. ԱՀ. III. Գրիգորիս Խանանա Երզնկյանց, Լուռվա հարսանիք, «Ազգագրական հանդես», գիրք Գ, Թիֆլիս, 1898։

ԳՔ. I. № 111. Սարգիս Քամալյան, Շուլավերի, այժմ Շահումյանի մանուկների կենցաղից (խաղեր), Գրական թանգարան, Սարգիս Քամալյանի ֆոնդ, բաժին 11, № 111։

ԳՔ. II. № 113. Սարգիս Քամալյան, Խաղերի նկարագրիններ, Գրական թանգարան, Սարգիս Քամալյանի ֆոնդ, բաժին 11, № 113։

ԳՔ. № 361—368 Ծննդյան ավետիսներ Համշոնի գյուղացվոց, հավաքեց Գ. Սրվանձտյանց. Տե՛ս Գրական թանգարան։ Գ. Սրվանձտյանցի արխիվ № 361—388։

Գխ. ձ. Գորխի խաղերը. 1952—1953 թթ., գրի առավ Ս. Մելքումյան։

ԳՄ. «Մարաշ կամ Գերմանիկ և հերոս Զեյթուն», Երկասիրեց Գր. Հ. Գալուստյան [կիլիկեցի], Նյու-Յորք, 1934։

ԳՄԲ. Գրիգոր Մագիստրոսի Թղթերը։ Ալեքսանդրապոլ, 1910 թ.։

ԳՄՏ. Տաղասացութիւնք Գրիգորի Մագիստրոսի, ի Վենետիկ, 1868։

ԳՆ. Ո. Գրիգորի Նարեկայ Վանից վանականի Ողբերգութիւն։ Երուսաղեմ, 1897։

ԳՇ. ՎՍ. I. Վանա սազ, հավաքածուլք Վասպուրականի ժողովրդական երգերի, հեքիաթների, առածների և հանելուկների (տեղական բարբառով)։ Առաջին մաս. ժողովեց Գեորգ Շերենց, Թիֆլիս, 1895։

ԳՇ. ՎՍ. II. Վանա սազ. հավաքածուլք Վասպուրականի ժողովրդական երգերի, հեքիաթների, առածների, հանելուկների, օրհնություններ և անեծքների (տեղական բարբառով)։ Երկրորդ մաս։ Ժողովեց Գեորգ Գ. Շերենց, Թիֆլիս, 1899։

ԳՍ. ԱՎ. Գարեգին Սրվանձտյանց աշակերտ ժ. [առանգավորաց վարժարանին] Վարագա, Տփխիս քաղաք. «Արծրվի Վասպուրական», Վան-Վարագ, 1861, № 4։

ԳՍ. ՀՀ. Գար, եպ. Սրվանձտյանցի երկասիրությունները ա. Համով-Հոտով, Թիֆլիզ, 1904։

ԳՍ. ԳԲր. Գրոց ու բրոց և Սասունցի Դավիթ կամ Մհերի Դուռ. ծրագրյաց Գ. վ. Սրվանձտյանց, Կ. Պոլիս, 1874։

ԳՍ. ԱՄլ. Ժողովրդական երգեր, գրի առավ Գարեգին Սրվանձտյանց։ Տե՛ս «Արևելյան մամուլ», 1884, № 11։

ԳՍ. Մն. Մանանա, ժողովյաց և ի լույս էած Գ. վ. Սրվանձտյանց, Կ. Պոլիս, 1876։

ԳՏ. Առածք, ասացվածք և զրույցք հայոց Նոր Նախիջևանի. ժողովյաց Գևորգ Տիգրանյան, Ռոստով Դ/վ, 1892։

ԳՏԱ. ՄՀ. Գ[ևորգ] Տ.[եր]Ա.[ղեքսանդրեանց]։ Թիֆլիսի բարբառով թղթակցություններ ունի «Մեղու Հայաստանի» շաբաթաթերթում։

ԳՏՆ. Գրիգորի կաթողիկոսի Տղայ կոչեցելոյ նամականի ի Վենետիկ, 1838։

ԴԱ. Մ. Դավթի Անյաղթ փիլիսոփայի Մատենագրութիւնք և Թուղթ գիւտս կաթողիկոսի առ Դաւիթ. ի Վենետիկ, 1833 (տե՛ս Մատենագրութիւնք նախնեաց—Կորիւն, Մամբրե, Դաւիթ)։

Դատ. Դատաստանագիրք Սմբատ իշխանի (Գունդստաբլի). Կիլիկեան դատաստանագիրք XIII դարի)։ Ձեռագրերի համեմատությամբ լույս ընծայեց Արսէն վարդապետ Ղլտճեան իրաւաբանութեան դոկտոր։ Ս. Էջմիածին, 1918։

Դխ. ձ. Ղափանի շրջանի Դավիթ բեկ գյուղի խաղերը. 1952 թ. գրի առավ Պարգև Հարությունյան։

Եգ. Օննիկ Եգանյան, Ղարադաղի հայերի ազգագրությունը (գրել է 1946—1947 թթ.)։ Տե՛ս Պետական պատմության թանգարանի ազգագրության բաժնի գիտական արխիվ, № 157։

Ե. ՎԱ. Եղնըկայ վարդապետի Կողբացւոյ եղծ աղանդոց, Թիֆլիս, 1914։

ԵԼ. ԱՀ, I. Երվանդ Լալայան, Ջավախք։ «Ազգագրական հանդես», գիրք Ա, Շուշի, 1896։

ԵԼ. ԱՀ, II. Երվանդ Լալայան, Ջավախք, նշանավոր տոներ, «Ազգագրական հանդես», գիրք Բ, Թիֆլիս, 1897։

ԵԼ. ԱՀ, III. Երվանդ Լալայան, Վարանդա, նշանավոր տոներ, «Ազգագրական հանդես, գիրք Գ, Թիֆլիս, 1898։

ԵԼ. ԱՀ. IV. Երվանդ Լալայան, Ջանգեզուր, «Ազգագրական հանդես», գիրք Գ, Թիֆլիս, 1898։

ԵԼ. ԱՀ. VI. Ե. Լալայան, Դանձակի գավառ, «Ազգագրական հանդես», գիրք VI, Թիֆլիս, 1900։

ԵԼ. ԱՀ. IX. Ե. Լալայան, Բորչալուի գավառ, «Ազգագրական հանդես», գիրք IX, Թիֆլիս, 1902։

ԵԼ. ԱՀ. X. Ե. Լալայան, Բորչալուի գավառ, «Ազգագրական հանդես», գիրք X, Թիֆլիս, 1903։

Ել. ԱՀ. XI. Ե. Լալայան, *Բորչալուի գավառ*, «Ազգագրական հանդես», գիրք XI, Թիֆլիս, 1904։

Ել. ԱՀ. XII. Ե. Լալայան, *Օրդուբադի կամ Վերին Ագուլիսի ռատիկանական շրջան և կամ Դողին*. «Ազգագրական հանդես», գիրք XII, Թիֆլիս, 1905։

Ել. ԱՀ. XIII. Ե. Լալայան, *Վայոց Ձոր*, «Ազգագրական հանդես», գիրք ԺԳ, Թիֆլիս, 1906։

Ել. ԱՀ. XVI. Երվանդ Լալայան, *Նոր Բայազետի գավառ կամ Դեղարքունիք*, «Ազգագրական հանդես», գիրք XVI, Թիֆլիս, 1907։

Ել. ԱՀ. XX. Ե. Լալայան, *Վասպուրական*, «Ազգագրական հանդես», գիրք XX, Թիֆլիս, 1910։

Ել. ԱՀ. XXVI. Ե. Լալայան, *Մուշ-Տարոն*, ազգագրություն, «Ազգագրական հանդես», գիրք XXVI, Թիֆլիս, 1916։

Ել. ԺԽ. Ժողովրդական խաղեր (հավաքածու)։ Գրի է առել և զանազան ժողովածուներից ի մի է հավաքել Երվանդ Լալայան։ Տե՛ս Հայաստանի պետական պատմության թանգարանի ազգագրական բաժնի գիտական արխիվ, № 56—71։

Ել. № 77. Ե. Լալայան, *Մեծ պատ*, ձեռագիր նյութեր։ Տե՛ս Հայաստանի թանգարանի ազգագրական բաժնի գիտական արխիվ, № 77։

Ել. ՋՔ. Ջավախքի բուրմունք, հավաքեց Ե. Լալայանց, Թիֆլիս, 1892։

Ել. ՋՎ. Ե. Լալայան, *Ջավախք*, Ա հատոր, Թիֆլիս, 1897։

Ել. Ս. ԱՀ. III. Ե. Լալայան, *Սիսիան*, «Ազգագրական հանդես», գիրք Գ, 1898։

Ել. Վ. ԱՀ, II. Ե. Լալայան, *Վարանդա*, նյութեր ազգագրության համար, «Ազգագրական հանդես», գիրք Բ., Թիֆլիս, 1897։

ՆՇ. ԱՀ. IX. Եր. Շահազիզ, *Նոր Նախիջևան և նոր Նախիջևանցիք*, «Ազգագրական հանդես», գիրք IX, Թիֆլիս, 1902։

Ն. ՊՎ. Նոր Նախիջևանի Պատմութիւն Վարդանանց, ըստ Անձնագիտացն օրինակի, Թիֆլիս, 1912։

Նվ. Հեղինակն անհայտ։

Երև. Գ. Ս. Երևանյան, *Պատմություն Ջարսանճապի հայոց*, Պեյրութ, 1956։

ՋՍ. I, II, III. Ջաքարեայ Սարկաւագի Պատմագրութիւն, հատոր առաջին, երկրորդ և երրորդ, ի Վաղարշապատ, 1870։

ՋԱ. Օ. Ջաքարիա Ագուլեցու Օրագրութիւնը, Երևան, 1938։

ԷԱԺ. Էմինյան ազգագրական ժողովածու, հրատարակությամբ Լազարյան Ճեմարանի արևելյան լեզվաց։ Մոսկվա—Վաղարշապատ։

ԷԱԽ. Ձ. Էջմիածնի Ագավնատուն գյուղի խաղերը, 1952 թ. գրի առավ Ն. Մաթևոսյան։

ԹԱ. ՊՏԱ. Թովմայի Վարդապետի Արծրունւոյ Պատմութիւն Տանն Արծրունեաց, Թիֆլիս, 1917։

Թ. ՄԿ. Գեորգ Տեր-Աղեքսանդրյան, Թիֆլիսեցոց մասվոր կյանքը, մաս Ա, Թիֆլիս, 1886։

Թ. ԺԽ. Ձ. Ժողովրդական խաղեր, գրի առավ Նազիկ Թորամանյան, ձեռագիր, 1952։

Իկ. Թումա-Կրպո, Բաղեշի խաղերը, «Իլյուրակն լրագիր», Կ. Պոլիս, 1899։

ԺԱԲ. Ժողովրդական անգիր բանաստեղծություններ, ժողովեց Տիգրան Վարդանյանց, Թիֆլիս, 1900։

ԺԽ. Ձ. Ժողովրդական խաղեր. 1952 թ. գրի առավ Ա. Աբիկյան։

Ժոբ. Ուղեգրություն Պիեր Ամեդե Ժոբերի (1805—1806)։ Տե՛ս Հովհ. Հակոբյան, Ուղեգրություններ, հատոր Զ, ԺԲ. դարի առաջին քառորդ (1800—1820), Երևան, 1934, էջ 137—251։

Իգ. Արձ. Իգիթբաշի, Մշեցին յուր ծիսական տոների մեջ, «Արձագանք», 1895, № 109։

Լ. ԺՄԽ. Ժողովրդական մանկական խաղեր, Թիֆլիս, 1907։ Խմբագրեց Ստ. Լիսիցյան (խմբագրին նյութեր տրամադրել են Երվանդ Լալայանն ու Սենիքերիմ Տեր-Սահակյանը. տե՛ս գրքույկի առաջաբանը)։

Լմ. Մանկախաղ. հավաքեց գյուտ ա. ք. Աղանյանց. տե՛ս Լումա, Թիֆլիս, 1898, Բ Գիրք։

ԼՄԲ, III. Պրոֆ. Լ. Մելիքսեթ-Բեկ, Վրաց աղբյուրները Հայաստանի և հայերի մասին, հատոր Գ, (ԺԸ—ԺԹ դդ.), Երևան, 1955։

ԽԳ. Ձ. Արտադպրոցական խաղեր, 1952 թ. գրի առավ Խաչիկ Գեղամի Գևորգյան։

Խ. ՎԺԽ. Ձ. Վահան Խանջյան, Վանա ժողովրդական խաղեր, Երևան, 1932։ Տե՛ս Հայաստանի պատմության պետական թանգարանի ազգագրական բաժնի գիտական արխիվ, № 52։

Ծան. ծանոթություն։

ԿԱ. «Կյանք և արվեստ. տարեգիրք», Ա տարի, 1931, Փարիզ։

ԿԳ. ՊՀ. Պատմութիւն հայոց արտաքսել Կիրակոսի Վարդապետի Գանձակեցւոյ։ Թիֆլիս, 1909։

ԿԹ. Հ. ՍՄ. Բ, II. Հոլ-Ալաշկերտի վարիանտ։ Տե՛ս «Սասնա ծռեր», Բ հատոր, մաս Բ, Երևան, 1951, էջ 852։

Կխ. Ձ. Բասարգեչարի շրջանի Կարճաղբյուր գյուղի խաղերը. 1953 թ. գրի առավ Խաչիկ Գրիգորյան։

ԿՀ. Կանոնագիրք հայոց։ Ձեռագրերի համեմատությամբ խմբեց Արսեն Ղլտճեան։ Թիֆլիս, 1914։

Կոց. Ուղեգրություն Մորից Յոն Կոցեբուի (1817)։ Տե՛ս Հովհ. Հակոբյան, Ուղեգրություններ, հատ. Զ, ԺԲ. դարի առաջին քառորդ (1800—1820), Երևան, 1934, էջ 499—612։

Հ. «Հասկեր» ամսագիր, Թիֆլիս, 1905—1916, խմբագիր Կատարինե Լիսիցյան, ապա Ստեփան Լիսիցյան։

ՀԱղ. Հ. Հ. Ադաբաբի գրի առած խաղերը «Հասկեր» ամսագրում։

Հաս. Հասրաթյան Մորուս։

ՀԱվ, № 106. Հարություն Ավչյան, Օրացուցային նիստ ու կաց ուրմեցոց և խոյեցոց (Վաղարշապատի Հայքաղ գյուղի բարբառով), Տե՛ս ՀՊՊԹ Ազգագրական բաժնի գիտական արխիվ, № 106։

ՀԲԲ. Հայոց բառ ու բան, աշխատասիրեց Սահակ վարդապետ Ամատունի, Վաղարշապատ, 1912։

ՀԲՀ. Հայկաղյան բառարանի հավելվածներ։

ՀԳ. Ձ. Ժողովրդական խաղերը Ախուրյանի գյուղերում. գրի առավ 1952 թ. Գուրգեն Հարությունյան։

ՀՐՊ. Հ. Պ. Պողոսյան, Հաճընի ընդհանուր պատմություն, Կալիֆորնիա, 1942 թ.։
Հժխ. ձ. Հայկական ժողովրդական խաղեր, 1952 թ. գրի առավ Մկրտիչ Էմինի Մկրտչյան։
ՀԺՀ, IV. Հայ ժողովրդական հեքիաթներ, ժողովածու Տիգրանա Նավասարդյանց։ Չորրորդ գիրք, Տիխխս, 1888։
ՀԺՀ, V. Հայ ժողովրդական հեքիաթներ. ժողովածու Տիգրանա Նավասարդյանց։ Հինգերորդ գիրք, Տիխխս, 1889։
ՀԺՀ. X. Հայ ժողովրդական հեքիաթներ. ժողովածու Տիգրանա Նավասարդյանց։ Տասներորդ գիրք, Թիֆլիս, 1903։
ՀԺՀ, Հայ ժողովրդական հեքիաթներ. կազմեց և խմբագրեց Ա. Ղանալանյան, Երևան, 1950։
ՀՄ. ԱՀ, II. Հովճ. Մալխասյան, Բարեկենդան (Ախալքալաք), ԱՀ, գիրք Բ, Թիֆլիս, 1897։
ՀՄ. ՀԳԱ, IV. Հովճ. Մալխասյան, Հայ գեղջուկի ալբոմը, չորրորդ մաս, ձեռագիր, Երևան, 1931։ Տե՛ս Հայաստանի ՊՊԲ ազգագրական բաժնի գիտական արխիվ, № 52։
ՀՍ. Բ. Հարություն Ճնճ. Սարգիսյան, Բալու, իր սովորույթները, կրթական ու իմացական վիճակը և բարբառը, Գահիրե, 1932։
Հս. խ. ձ. Շապին-Գարահիսարի խաղերը, ձեռագիր ժողովածու, գրի առավ Գառնիկ Հյուսիսյան, 1952 թ.։
Ջ. № 4184. Երեմիա եպիսկոպոս Տեր-Սարգսյանց (Չևկանց), Տոհմային հիշատակարան, գիրք Ա և Բ, Վարագ, 1881, Մատենադարանի ձեռագիր, № 4184։
Ջ. № 6451. Մատենադարանի ձեռագիր, № 6451։
Ջ. № 8219. Մատենադարանի ձեռագիր, № 8219։
Ջ. № 515. Մատենադարանի ձեռագիր, № 515։
Ջ. № 3569. Մատենադարանի ձեռագիր, № 3569։
Ջ. № 3595. Մատենադարանի ձեռագիր, № 3595։
Ջխ. ձ. Կոտայքի Չորաղբյուր գյուղի խաղերը. 1952 թ. գրի առավ Ազատ Աստուրի Ագիշյան։
Ղխ. ձ. Կալինինոյի շրջանի Ղարաքիլիսա գյուղի խաղերը. 1952 թ. գրի առավ Հակոբ Գևորգի Առաքելյան։
ՂՂ. ձ. Քանաքեռ գյուղի խաղերը. 1952 թ. գրի առավ Ղազար Տրդատի Ղուկասյան։
ՂՎ. Պատմութիւն Ղևոնգեայ Մեծի Վարդապետի Հայոց, երկրորդ տպագրութիւն, Ս. Պետերբուրգ, 1887։
ՂՓ. ՊՀ. Ղազարայ Փարպեցւոյ Պատմութիւն հայոց և թուղթ առ Վահան Մամիկոնեան։ Աշխատութեամբ Գ. Տէր-Մկրտչեան և Ստ. Մալխասեան։ Տիխխս, 1904։
Ճ. ՀԱ. Հ. Կ. Ճանիկյան, Հնությունք Ակնա, Թիֆլիս, 1895։
ՄԱխ. ձ. Ապարանի խաղերը. 1952 թ. գրի առավ Վարանցով Արտեմի Մարկոսյան։
Մ. ԱՀ. IV. Հ. Մուրադյանց, Համշենցի հայեր, ազգագրական նյութեր, ԱՀ, գիրք Դ, Թիֆլիս, 1898։
ՄԱՊ. Մաղաքիայ Աբեղայի Պատմութիւն վասն ազգին Նահապետաց։ Ի լոյս ընծայեաց Ք. Պ., Ս. Պետերբուրգ, 1870։
ՄԱս. Ժ. Ժամանակագրութիւն տեառն Միխայէլի Ասորւոյ պատրիարքի, Յերուսաղէմ, 1871։
ՄԲ. I—II—III—IV. Ստ. Մալխասյանց, Հայերեն բացատրական բառարան, հատորներ I, II, III, IV, Երևան, 1944—1945։
ՄԳ. Ա. Միխթար Գոշ, Առակներ. տեքստը ձեռագրերի համեմատությամբ և ներածությամբ էմ. Պիվազյանի, Երևան, 1959։
ՄԳ. Գ. Միխիթար Գոշ, Դատաստանագիրք հայոց, Վաղարշապատ, 1880։
ՄԺ. Մանր ժամանակագրություններ XIII—XVIII դդ., հատոր 1, կազմեց Վ. Ա. Հակոբյան, Երևան, 1951։
Մ. ժխ. ձ. Ժողովրդական խաղեր, ձեռագիր, գրի առավ Մուշեղ Մամիկոնյան, 1940—1952։
Մխղ. ձ. Մարտունու խաղերը, 1952 թ. գրի առավ Համազասպ Դեղամի Կարեյան։
ՄխՄ. ձ. Էջմիածնի շրջանի Մուղան գյուղի խաղերը, 1952 թ. գրի առավ Սահակ Միխիթարյան։
Մխ. ՊՀ. Մովսիսի Խորենացւոյ Պատմութիւն Հայոց, Տիխխս, 1913։
ՄԿ. ՊԱԱ. Մովսեսի Կաղանկատուացւոյ Պատմութիւն Աղուանից աշխարհի, Թիֆլիս, 1913։
ՄՀ. Մեղու Հայաստանի։
ՄՀ. ՋՄ. Մխիթարայ բժշկապետի Հերացւոյ Ջերմանց մխիթարութիւն, ի Վենետիկ, 1832։
ՄՄ. Մ. Մամիկոնյան։ Տե՛ս Վ. Վարդանյան, Մ. Մամիկոնյան, Արտադպրոցական խաղեր, Երևան, 1940։
ՄՆ. Սիսիանի խաղերից. 1952 թ. գրի առավ Հարություն Մնացականյան. ձեռագիր։
Մ. Նու, III. Նկարագրական ուղևորություն ի հայաբնակ գավառս Արևելյան Տաճկաստանի։ Տեղագրութիւնք—Սարեն և ձորեն, հնեն և նորեն, պիտանի գիտնոց։ Մասն Գ։ Տեղագրեց Մանվել Կ. Միրախորյան, Կ. Պոլիս, 1885։
Մոր. Ուղեգրություն Ջեյմս Մորիերի (Ա. 1808—1809. Բ. 1810—1816)։ Տե՛ս Հովճ. Հակոբյան, Ուղեգրություններ, հատոր Ջ, ԺԹ դարի առաջին քսանամյակ (1800—1820), Երևան, 1934, էջ 253—394։
ՄՈհ. Ժ. Մատթէոս Ուռհայեցի, Ժամանակագրութիւն, Բ. տպ. Վաղարշապատ, 1898։
ՄՊ. ՀԺՀ, VI. Մ. Պ. Մանկական խաղեր, տպագրված Տիգրան Նավասարդյանի «Հայ ժողովրդական հեքիաթներ» ժողովածուի VI հատորում, Թիֆլիս, 1890։
Մրգ. I. Մարգարիտներ հայ բանահյուսության, Ա հատոր, Թիֆլիս-Վաղարշապատ, 1914—1915 ԹԹ.
Մրգ. II. Մարգարիտներ հայ բանահյուսության, Բ հատոր, Թիֆլիս—Վաղարշապատ, 1914—1915 ԹԹ.։
Մրգ. III, նույն ժողովածուն, Գ. հատոր։
ՄՕ. ձ. Հոկտեմբերյանի շրջանի Բամբակաշատ գյուղի խաղերը. 1952 թ. գրի առավ Ննիկ Մնացականյան։
ՅՄ. ՊՏ. Յովհաննէս Մամիկոնեան, Պատմութիւն Տարօնոյ։ Աշխատութեամբ և առաջաբանով պատմական գիտությունների թեկնածու Աշ. Աբրահամյանի, Երևան, 1941։
Յո. Մ. Տեառն Յովհաննու իմաստասիրի Աւձնեցւոյ Մատենագրութիւնք, թարգմանեալ ի լատին բարբառ, երկասիրութեամբ Տն. Հ. Մկրտչի վարդապետի Աւգերեան աթոռակալի ուխտի Մխիթարեանց, ի Վենետիկ, 1834։
Ն. I. Հովհաննէս Նազարեանց, Նախապաշարմունք, հատոր I, 1878։
ՆԴ. «Նոր-դար», լրագիր, Թիֆլիս։
ՆԺ. ԱՀ, V. Նժդեհյան Գրիգոր, ք. Ալաշկերտի բանավոր

գրականություն, «Ազգագրական հանդես», գիրք ե, Թիֆլիս, 1899 և գիրք VII—VIII, Թիֆլիս, 1901։

Նա. ձ. Արտաշատի շրջանի Նորաշեն գյուղի խաղերը, 1952 թ. գրի առավ Անդրանիկ Սաֆարյան։

ՆԵ. ԸԹ. Ընդհանրական թուղթք սրբոյն Ներսեսի Շնորհալւոյ, Յերուսաղեմ, 1871։

ՆԶ. Հ. Տ. Ներսեսի Հայոց կաթողիկոսի հանելուկք վասն ուրախութեան մարդկան։ «Մասիս» շաբաթաթերթ, 1886, էջ 852—853։

ՆՍ. «Նոր Սեբաստիա» տեղեկատու..., 1958, № 38։

Շ. Մշ., 1890, № 77, Շ. Գյուղական տպավորություններ, Մշակ, 1890, № 77։

ՇԲ. Պ. Պատմութիւն Շապհոյ Բագրատունւոյ։ Ի լույս ածին Գ. Տեր-Մկրտչեան և Մեսրոպ Եպիսկոպոս Էջմիածին, 1921։

Շա. ձ. Շարժական խաղերը Կալինինոյի շրջանում. 1952 թ. գրի առավ Հովհ. Մ. Ավետիսյան։

ՈՒՆ. ՊՀ. Ուխտանէս եպիսկոպոս, Պատմութիւն Հայոց, հատուած առաջին, Պատմութիւն Հայրապետաց և Թագավորաց Հայոց, ի Վաղարշապատ, 1871։

Աբամ Երեմյան, Ջահարմահալի ժողովրդական բանահյուսությունը, Վիեննա, 1923։

Պ. ԳՀ. Գեղջկական հարսանիք ի Հայաստան, հեղինակություն Ա. Կ. Պեյլերյան Վանեցվո, Կ. Պոլիս, 1870։

Պետ. Վարդան Պետոյան, Սասունի խաղերը, 1962։

ՊՀԽ I. Պերճ Պռոշյան, Հացի խնդիր, Երկերի ժողովածու, հատոր առաջին, Երևան, 1953։

ՊՇԽ. Պիոներական շարժական խաղեր. կազմեց Հաչիկ, Երեվան, 1929 (1930)։

ՊՊ. Գրիգոր Հ. Մխալյան, Պարտիզակն ու պարտիզակցին, Զահիրե, 1938։

ՊՍՎ, I, Պերճ Պռոշյան, Սոս և Վարդիթեր. Երկերի ժողովածու, հատոր առաջին, Երևան, 1953։

Ջ. Ջամբռ գիրք, որ կոչի յիշատակարան արձանացուցիչ, հայելի և պարունակով բնավից որպեսութեանց սբ. աթոռոյս, և իւրոյ շրջակայից վանօրէին։ Համաժողովեալ և շարադրեցյալ ի Սիմէօնէ ցաւահար և վշտակոծ կաթողիկոսէ Երևանցւոյ, Վաղարշապատ, 1873։

ՋԱ Ջավախեցի, Ախլոճը, տե՛ս «Աշխատանք» շաբաթաթերթ, Թիֆլիս, 1906, № 12։

Ջավ. Ն. Լալայան, Ջավախք, Ա հատոր, Թիֆլիս, 1897։

ՌՄ. ձ. Խաղեր, 1952 թ. էջմիածնի սովխոզում գրի առավ Ռաֆիկ Հովհաննեսի Մխիթարյան։

Ս. Ստրաբոն (Օտար աղբյուրները հայերի մասին). քաղեց և թարգմանեց Հ. Աճառյան։ Երևան, 1940։

Ս. ԱՔ. Սարգիս Սարգսյան, Ագուլեցոց բարբառը (գոկերի լեզուն), լեզվաբանական հետազոտություն, ժողովածու, հատոր II, Մոսկվա, 1883։

Ս. ԱՀ, XIX. Ա. Սոլաքյան, Վանա բանահյուսությունից, «Ազգագրական հանդես», գիրք ԺԲ, Թիֆլիս, 1910։

ՍԱՆ. Հ. Սամուելի քահանայի Անեցւոյ հաւաքմունք ի գրոց պատմագրաց յաղագս գիտի ժամանակաց անցելոց մինչև ի ներկայիս. ծայրաքաղ արարեալ, Վաղարշապատ, 1893,

Ս. Արձ. Սալմաստեցի Մ., «Խլվլիկ»։ Տե՛ս «Արձագանք», 1893, № 1։

Սե. Պ. Սեբէոսի եպիսկոպոսի Պատմութիւն, Արմֆան, Երեվան, 1939։

ՍՄ. Ա. «Սասնա ծռեր», Ա հատոր, խմբագրեց պրոֆ. դր. Մանուկ Աբեղյան, աշխատակցությամբ Կարապետ Մ. Օհանջանյանի, Պետական հրատարակչություն, Երևան, 1939։

ՍՄ. Բ, I, «Սասնա ծռեր», Բ հատոր, առաջին մաս, խմբագրեց ակադեմիկոս Մանուկ Աբեղյան, աշխատակցությամբ պրոֆեսոր Կարապետ Մելիք-Օհանջանյանի, Պետական հրատարակչություն, Երևան, 1944։

ՍՄ. բ, II. «Սասնա ծռեր», Բ հատոր, երկրորդ մաս, խմբագրեց ակադեմիկոս Մանուկ Աբեղյան, աշխատակցությամբ պրոֆեսոր Կարապետ Մ. Օհանջանյանի, Պետական հրատարակչություն, Երևան, 1951։

ՍՀ. № 1. Սարգիս Հայկունի, Ժամանակակից հայերի սովորության իրավունքը կամ ազգային իրավաբանական սովորույթները բագրեւանդահայերի մեջ։ 1901։ Անտիպ։

ՍՍ. Տ. Տարեգիրք արարեալ Սմբատայ Սպարապետի Հայոց որդւոյ Կոստանդեայ կոմսին Կոռիկոսոյ, Փարիզ, 1895։

ՍՏ. ՊՏ. Ստեփանոսի Տարօնեցւոյ Ասողկան Պատմութիւն տիեզերական։ Երկրորդ տպագրութիւն, ի Ս. Պետերբուրգ, 1885։

ԱՔ. ՀԺՀ, VI. Սարգիս Քոթանեյանց, (Կարսի) մանկական խաղեր, տպագրված Տիգրան Նավասարդյանի «Հայ ժողովրդական հեքիաթներ» ժողովածուի VI հատորում, Թիֆլիս, 1897։

ՍՕ. ՊՆՍ. Պատմութիւն նահանգին Սիսական, արարեալ Ստեփանոսի Օրբէլեան Արքեպիսկոպոսի Սիւնեաց, Թիֆլիս, 1911։

ՎԱ. ձ. Արթիկի շրջանի Հոռոմ գյուղի խաղերը. 1952 թ. գրի առավ Անժելետա Վ. Վարդանյան։

Վար. Վարիանտ։

ՎԲ. Մեծին Վարդանայ Բարձրբերդեցւոյ Պատմութիւն տիեզերական. ի լոյս ընծայեաց Մկրտիչ Էմին, Մոսկվա, 1861։

Վդ. Մ. Վագներ, Ճանապարհորդություն ի Հայաստան. քաղելով թարգմանեց Հ. Փիլիպոս Ճամճյան Մխիթարյան ուխտեն, Վիեննա, 1851։

Վ. ԺԽ. ձ. Ժողովրդական խաղերը Փոքր Խանչալլիում, գրի առավ Վաղինակ Վարդանյան, 1951։

ՎՇ. ձ. Ախուրյանի շրջանի Մարմաշեն գյուղի խաղերը, 1952 թ. գրի առավ Շավարշ Վարոսյան։

ՎՎ. Վ. Վարդանյան։ Տե՛ս Վ. Վարդանյան, Մ. Մամիկոնյան, Արտադպրոցական խաղեր, Երևան, 1940։

ՎՎ. ՄԽ. Վ. Վարդանյան, Մանկական խաղեր, Երևան, 1935։

ՎՎ. ՄՄ. Վ. Վարդանյան, Մ. Մամիկոնյան։

ՎՎ. Վ. Վիպասանութիւն Հայոց չափեալ ոտիւք՝ Տն Վահրամայ մեծի Վարդապետի (տե՛ս «Ոդր եդեսեայ քաղաքի» գրքի մեջ), ի Կալկաթա, 1832։

Տավ. Տավերնիեի ճանապարհորդական նոթերը Գաստեյրաս «Եվրոպայի ճանապարհորդները Հայաստանում ԺԲ

դարուց մինչև ժէ» հոդվածում։ Տե՛ս «Փորձ» 1880, № 10, էջ 74—90։

Տհ. ՀՏ. II. Տմբլաշի խաչան (Կ. Կ. Մելիք-Շահնազարյան), Ջուռնա Տմբլա, գիրք Բ, Վաղարշապատ, 1908։

Տկ. Կ. Տակիտոս (Օտար աղբյուրները հայերի մասին. լատինական աղբյուրներ)։ Բաղեց և լատիներենից թարգմանեց պրոֆ. պաշտ. Պ. Սոսնիկյան, Երևան, 1941։

ՏՄվ. Մա. Վ. Վ. Տեր-Միքայելյան, Բարեկենդան և աբեղաթող, «Մասիս», Կ. Պոլիս, 1901, էջ 86—88։

Ր. ՀԿ. Րաֆֆի, Հայ կինը և հայ երիտասարդությունը, Թիֆլիս, 1890։

Ր. I. Րաֆֆի (Հակոբ Մելիք-Հակոբյան) երկերի ժողովածու. առաջին հատոր, Հայպետհրատ, 1955 թ.

Ր. III. Րաֆֆի, երկերի ժողովածու, հատոր երրորդ, Երևան, 1950։

ՓԲ. ՊՀ. Փաստոսի Բիւզանդացւոյ Պատմութիւն Հայոց, Թիֆլիս, 1912։

Փշ. «Փշրանքներ ժողովրդական բանահյուսությունից», ժողովեց Գարեգին Հովսեփյանց, Թիֆլիս, 1892 (Ապարանի խաղեր)։

Քաջ. ԱՀ. VII—VIII. Քաջբերունի, Հայկական սովորություններ, «Ազգագրական հանդես». գիրք VII—VIII, Թիֆլիս, 1901։

Քաջ. ԱՀ. IX. Քաջբերունի, Հայկական սովորություններ, «Ազգագրական հանդես», գիրք IX, Թիֆլիս, 1902։

Քաջ. Փ. Քաջբերունի, Ճանապարհորդական նկատողություն, «Փորձ», 1879, № 10, էջ 39—47, 1881, № 5—6, էջ 57—62։

Քխ. Ա. Քանաքեռի խաղերը, 1952 թ. գրի առավ Նիկոլայ Ղուկասյան։

Քն. «Քնար մշեցվոց և վանեցվոց», ժողովյաց Արիստակես վարդապետ Սեդրակյան, ի Վաղարշապատ, 1874։

Քս. Կր. Քսենոփոն, Կիրոպեդիա։ Թարգմանություն Հ. Մանանդյանի։ Տե՛ս Հակոբ Մանանդյան, Քննադատական տեսություն հայ ժողովրդի պատմության, հատոր Ա, Երևան, 1944, Հավելված (էջ 381—412)։

Քս. Ան. Քսենոփոն, Անաբասիս, թարգմանություն Հ. Մանանդյանի։ Տե՛ս Հակոբ Մանանդյան, Քննական տեսություն հայ ժողովրդի պատմության, հատոր Ա, Երևան, 1944, Հավելված (էջ 381—412)։

ՏԵՂԱՆՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱՌՈՏԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ագլ.. Ագուլիս
Ալշ. Ալաշկերտ
Ալք. Ալեքսանդրապոլ
Ախ. Ախալքալաք
Ախր. Ախուրյանի շրջան
Ախց. Ախալցխա
Անթ. Այնթապ
Աշտ. Աշտարակ
Ապ. Ապարան
Առ. Առաջաձոր, գյուղ Խաչեն գավառում
Ավ. Ավետարանոց, գյուղ Վարանդայի գավառում
Արբ. Արաբկիր ավան
Ար. Արարատյան հովիտ,
Արթ. Արթիկ
Արճ. Արճեշ
Արմ. Արմաշ գյուղ Իջմիտի գավառում
Արտ. Արտաշատի շրջան
Բլ. Բալու
Բլխ. Բուլանըխ
Բղշ. Բաղեշ
Բն. Բենյամին, գյուղ Ախուրյանի շրջանում
Բշտ. Բամբակաշատ, գյուղ Հոկտեմբերյանի շրջանում
Բան. Բասեն
Բտ. Բատիկյան, գյուղ Կամոյի շրջանում
Բրշ. Բորշալու
Բրջ. Բարջանճ գյուղ
Գղթ. Գողթան գավառ
Գնդ. Գյոնդուրա, գյուղ Ախալքալաքի շրջանում
Գնձ. Գանձակ
Գվշ. Գավաշ
Դպ. Դիզակ գավառ
Դվ. Դավալու
Դրլ. Դարալագյազ
Եր. Երևան
Երդ. Երզնկա
Զնգ. Զանգեզուր
Էջմ. Էմիածին
Թ. Թիֆլիս
Թզ. Թավրիզ
Թրք. Թուրքիա
Իրն. Իրան
Լն. Լենինական
Լռ. Լոռի
Խ. Խոշաբ
Խլթ. Խլաթ
Խրբ. Խարբերդ
Կիլ. Կիլիկիա
Կս. Կարս
Կտ. Կոտայք
Կրն. Կարին
ՀԲզտ. Հին Բայազետ
Հդր. Հադրութ, գյուղ Դիզակ գավառում
Հձ. Հայոց ձոր
Հձ. Հ. Հայոց ձորի Հերեմերիկ գյուղ
Հմշ. Համշեն
ՀՆախջ. Հին Նախիջևան
Հոկ. Հոկտեմբերյանի շրջան
Հս. Հյուսեյնիկ գյուղ Խարբերդում
Ղզխ. Ղազախ
Ղլ. Ղուլալիս, գյուղ Ախալքալաքի շրջանում

Ղր. Ղրիմ
Ղրբ. Ղարաբաղ
Ղրդ. Ղարադաղ
Ճան. Ճանիկ, գյուղ Ջարսանճագի գավառում
Ճր. Ճարտար, գյուղ Վարանդայում
Մկս. Մոկս
Մճ. Դաւիթ Մոճկոնց գյուղ
Մրշ. Մարաշ.
Մրտ. Մարտունի
Նան. Նանկանց, գյուղ Կարճկանում
Նբղտ. Նոր Բայազետ
Ննխջ. Նոր Նախիջևան
Նոյ. Նոյեմբերյանի շրջան
Նրկ. Նարեկ, գյուղ Գավաշում
Շամ. Շամախի
Շար. Շարուր
ՇԳ. Շապին-Գարահիսար
Շմ. Շահումավան (Շուլավեր)
Շախ. Շատախ
Շրկ. Շիրակ
Ջար. Ջարսանճագ
Ջհր. Ջահարմահալ
Պզկ. Պարտիզակ
Պլս. Կ. Պոլիս
Ռշտ. Ռշտունիք
Սեբ. Սեբաստիա
Սխ. Սիսիան
Սմա. Սամսոն
Սպհ. Սպահան
Սպ. Սպարկերտ
Սան. Սասուն
Սրմ. Սուրմալու
Վ. Վան
Վսպ. Վասպուրական
Վրս. Վրաստան
ՎՁ. Վայոց Ձոր
Վղ. Վաղարշապատ
Վրնդ. Վարանդա
Տիգ. Տիգրանակերտ
Տմ. Տիմ գյուղ Նորադուզում
Տրն. Տարոն

Բ Ա Ռ Ա Ր Ա Ն

Ա

Ալեյ—*Տե՛ս Հալա-հալա գալ։*

Ալչու—*Վեցի կեռմանաձև փոսորակով երեսը, որի հակառակ երեսն է Թոխան։ Ալչուն հաջողության և թոխան՝ անհաջողության նշան էր համարվում։*

Ամարաթ—*Ապարանք, պալատ։*

Անամա—*Տե՛ս Արճիճկապ։*

Ապա՛—*Սահմանանշան։*

Աջ—*Տե՛ս Արճիճկապ։*

Ասլաե—*դափլաե*—*Կորճառյուծներ։*

Ավ—*Որս։*

Արճիճկապ—*Մեծ վեց՝ արճիճով ծանրացված, որով հարվածում էին շարված վեցերին։*

Արճնոտաե—*Տե՛ս Արճիճկապ։*

Բ

Բախշել—*Բաշխել։*

Բա՛ն—*տե՛ս Բեկ (պեչ)։*

Բեկ (պէչ)—*1. Ազնվական, ազատ ասպետ, սեպուհ, իշխան, գավառապետ։ 2. Խաղի մեջ՝ գլխավորող, ղեկավար։*

Բնատա—*Դուքանի կաշվե կամ երկաթե շղթա, որին լծում էին 4—12 ույգ լծկաններ։*

Բոշամ—*Մազափունջ։*

Բուճի (պահել)—*Ափի մեջ վիճակահանության իր պահել։*

Գ

Գախ—*Ժամանակ։*

Գիտ—*Գետ։*

Գոզիկ—*Սնձի նման թելերով և կարտոֆիլի նման կոճղեղով բույս, որի արմատը կճպում և ուտում են։*

Գուլաշ—*Տե՛ս Կյուլեշ։*

Գուպարաղիր—*Մենամարտի հանդեսի կարգադրող, հանդիսադիր։*

Գուռաշ—*Ըմբշամարտ։*

Դ

Դախկ—
Դաղկ } *Տե՛ս Արճիճկապ։*

Դոշակ—*Նիրքնակ։*

Դուզ—
Դուրաե— } *Ուղիղ, հարթ։*

Զ

Զամբեղ—*1. Արհեղայի գլխարկ. 2. Զամբյուղ։*

Զարբ—*Թափ, ուժ։*

Զրախ—*Զրահ, լանջապանակ, պահպանակ։*

Զիլա—*Երկու նիստերը քարին քսելով կոկած վեց՝ սորելու համար։*

Է

Էնկա՛ճդար—*Այնքան ժամանակ։*

Էշխ—*1. Կայտառություն, ժրություն, եռանդ, առույգություն։ 2. Խաղերում՝ «հանուն» (հանուն այսինչ նպատակի)։*

Էֆի—*Այգի։*

Ը

Ըռա՛դ աեել—*Վռնդել։*

Ըռա՛թել—*Հանգստանալ։*

Ըռեեկ—*Գույն։*

Թ

Թամաշա—*1. Տեսարան, փողոցային հանդես։ 2. Հանդիսատես։ 3. Հանդիսավորություն, գեղեցիկ բանի ցուցադրություն։*

Թափիշ—*Մրցության դատավոր և պարգևաբաշխ։*

Թեշի
Թեշիկ } *—Իլիկ։*

Թեո—*Խուրջինաձև մեծ պարկ՝ եզան կամ գոմշի մեջքով բափոցիկ նյութեր տեղափոխելու համար։*

Թոխաե—*Վեցի հարթ նիստը—թավ։ Հակառակ կողմը՝ ալչու։*

Թոռչի—*Ուսկանավոր։*

Թոփ—*Բրդից պատրաստված և գունավոր նախշազարդված խաղագնդակ։*

Թուճա աեել—*Կատակել։*

Թուռնա—*Փայտաձողիկ։*

Ի

Իբան—*Սահման, սահմանանշան։*

Իբրեղ, Իբրըգ } *Սափոր։*

Լ

Լազ *(վեզ)*—*Երկու նխտաերը (կողերը) քարով կոկած վեզ, որ սորելու գործ էին ածում ազարտային խաղերի ժամանակ։*

Լաֆաբա, Լաֆ ̈բա } —*Դուրս ընկած, անամոթ կին։*

Լեֆ—*1. Կաղ։ 2. Ձեռնբեկ։ 3. Խաղի մեջ՝ քացի, քացով հարված։*

Խ

Խ ̈ալիվ ̈իր, Խ ̈ալ ̈իվ ̈իր } —*Ալևոր, ծերունի։*

Խապախ—*1. Դռում։ 2. Բթամիտ։ 3. Տհաս (ձմերուկ)։*

Խավշիկ—*Դև*

Խըլըսուն, Խլիսուն } —*Մինչև լույս, մինչև վերջ։*

Խոզա—*Տե՛ս Ղոզա։*

Խոյի—*Տե՛ս Արճիճկապ։*

Խորունք—*Խորը, խորունկ։*

Կ

Կաբա—*Տե՛ս Կապա։*

Կապա—*Պարեգոտ։*

Կասավառոտկա—Косоворотка, *(վերնաշապիկ շեղ օձիքով)։*

Կյ ̈ալաշ, Կյուլեշ } *Տե՛ս Կյուրեշ։*

Կյուրեշ—*Ըմբշամարտի մրցություն, դուպարած, գոտեմարտություն, բռնամարտիկ կռիվ։*

Կոռոել—*Կոտրել։*

Կռել—*կտրել։*

Կտիկ—*Վեզ, ճան։*

Կրիրա—*Կրիա։*

Հ

Հալա-Հալա գալ—*Վիճակահանության համար զույգով դեկավարներին ներկայանալ։*

Հալբար—*Երևի, գուցե։*

Հանաֆա—*Տե՛ս Արճիճկապ։*

Հաճուեխ—*Այնտեղ.*

Հաշ—*Ուշք, հաշ գնալ, ուշագնաց լինել։*

Հարայ տալ— *1. Օգնություն կանչել։ 2. Ոգևորել խաղացողներին։*

Հ ̈ար երդա ̈—*Բոլոր տեղերում։*

Հոր—*Փոսիկ, որ երեխաները փորում են գետնի մեջ՝ ընկույզ կամ վեզ խաղալու համար։*

Հոջ—*Խաղացողների խաղատահման։*

Ձ

Ձիաբողս—*Ձիու պլուխը բայց թողնելը, ձին ամենամեծ արագությամբ քշելը, ձիարշավ։*

Ձող—Ձողատել—*Կաշին ձողերի բաժանել։*

Ղ

Ղաբալ—*Հոժար, համամիտ, համաձայն։*

Ղազան—*Պղնձե կաթսա։*

Ղ ̈ղդ ̈—*1. Կանոն։ 2. Երգի ու նվագի եղանակ։*

Ղասաբ—*Մսագործ։*

Ղարա—*1. Սև։ 2. Գեղեցկություն։*

Ղոզա—*Քարե գնդակ՝ լեփուկ խաղալու համար։*

Ղոշուն—*Ջորք։*

Ղուշ—*Թռչուն։*

Ղուվար—*Ուժ, զորություն։*

Ճ

Ճան—*Վեզ։*

Ճիզ—*Գիծ, սահմանագիծ։*

Ճիճալախտի—*Տե՛ս Ճղլախտի։*

Ճրդ-ճրդոտել—*Ճեղքոտել։*

Ճիրիտ—*1. Մական, ձող։ 2. Ձիով մականախաղ, ձողախաղացություն։*

Ճիրիտճի—*Մականախաղաց։*

Ճղլաստի—*Տե՛ս Ճղլախտի։*

Ճղլախտի—*Գծալախտի։*

Ճոկան—*1. Գավազան։ 2. Եպիսկոպոսական գավազան՝ կեռ գլխով։ 3. Հովիվների երկայն գավազան կեռ ծայրով, որով բռնում են փախչող ոչխարը։ 4. Կեռ ծայրով օգտակավոր գավազան մականախաղ խաղալու համար։*

Ճրիճա—*Տե՛ս Ճիրիտ։*

Մ

Մայա, Մայէ } *—1. Եմոր։ 2. Սկիզբն, արմատ, հիմք։ 3. Ձափ, կշիռ։ 4. Դրամագլուխ։ 5 Ինչք, դրամ։ 6. Մատակ։*

Մ ̈ընջ—*Մեջ։*

Մ ̈ռ ̈ախ—*Տագնապ, վախ, անհանգստություն, մտատանջություն։*

Մուղաբ (լինել)—*Պահպանել, հակել։*

Մուռտալ—*Փնթի։*

Մ ̈արիֆ ̈աթ—*Շնորհք, խելամտություն։*

Մուշբա—*Բռունցք։*

Մուշտեկոիվ—*Բռնցքամարտ։*

Մուշտի—*Տե՛ս Մուշբա։*

Յ

Յաշա—*Կեցցե։*

Յարխուշտա—*Մափխաղ, ծափկռիվ։*

Յափունճղա—*Վիճակահանության գալ։*

Յորղան—*Վերմակ։*

Ն

Նագաստան—*Հանկարծ։*

Նորաթ—*Հերթ։*

Շ

Շեֆ—*Երկու ոտքերի միջի բացվածքը։*

Շիրաթ—*«Խորհուրդ տալ» իմաստով, թեև բուն նշանակությունն է՝ դաշն, պայման։*

Զ

Զար—*Շեթ։*

Զալմա—*1. Չիլիկի այն փոքր գործիքը, որին խփելով թռցնում են։ 2. Փակեղ, գլխապատ, գլխանոց։*

Զարխ—*Տե՛ս Զարխ ու ֆալակ։*

Զարխ ու ֆալակ—*1. Անիվ բախտի ու ճակատագրի։ 2. Բախտ, ճակատագիր։*

Զէլիկ(ը)—*1. Ոստ, ձողիկ։ 2. Տե՛ս Զալմա։*

Զրխչրփել—*Դես ու դեն տարուբերել, թափահարել, տրորել։*

Զիլիկ—*Տե՛ս Զէլիկ(ը)։*

Զոգ—*Շատ։*

Զոհագուլաշ—*Լմբշամարտ ծնկած վիճակում։*

Զուր—*Մինչև։*

Զուրիճգ—*Ավստրալիական Արանդա ցեղի մեջ սրբազան և գաղտնի պահվող փայտե կամ քարե առարկա, որ խորհրդանշական զարդերով էր զարդարվում։ Ըստ դիցաբանական պատկերացումների, չուրինգը որոշակիորեն կապվում էր մարդու և նրա տոհմի տոտեմ նախնու հետ։ Այն պահվում էր հատուկ գաղտնարանում և օգտագործվում սրբազան արարողությունների ժամանակ։*

Պ

Պաղշել—*Բաշխել։*

Պապա—*1. Հայր։ 2. Պատվական, մեծարդո, անկեղծ։*

Պատրիլոկալ բնակվածություն—*Բնակվածության այն ձևը, երբ աղջիկը հարս է գնում տղայի տունը (տոհմը)։ Հակառակը՝ Մատրիլոկալ բնակվածություն։*

Պարբաշի—*Պարագլուխ, պարը գլխավորող։*

Պուճ—*Ափ, բուռ։ Համմտ. Պուճի պահել։*

Պուճի պահել—*Ափի մեջ վիճակահանության իր պահել։*

Ջ

Ջղիր—*Տե՛ս Ճիրիտ։*

Ջիլիր—*Տե՛ս Ճիրիտ։*

Ջիլլա—*տե՛ս Արճիճկապ։*

Ջիրիդ—*Տե՛ս Ճիրիտ։*

Ջիրինդ—*Տե՛ս Ճիրիտ։*

Ջղեզ, Ջղիզ } *Տե՛ս Ճիզ։*

Ջղլասպի—*Տե՛ս Ճղլախտի։*

Ջուղաբ—*Լուր։*

Ս

Սաղ—*Ողջ։*

Սամբ—*Հնար, հարմար դիրքավորում։*

Սարմա տալ—*Մենամարտելիս ոտ դցել, կեռ տալով դիմացինի հավասարակշռությունը կորցնել և վայր գցել։*

Սրճաբ—*Ժամ։*

Սոռել—*Ջույգ վիճերը գետնին կամ հատակին նետելով ազարտային խաղեր խաղալ։*

Սուրֆա, Սուփրա } *— Սփռոց-սեղան։*

Տ

Տալիա—*Առանցքի շուրջը մի պտույտ գալը։*

Տաղկ—*Տե՛ս Արճիճկապ։*

Տոլաճմագ—*Շրջել, շուրջ գալ, պատել։*

Ու

Ուչա (ֆաշել)—*Մենամարտելիս հակառակորդին մեջքի վրա քաշելով ուսի վրայով առաջ նետել և մեջքը սեղմել գետնին։*

Ուռուռց—*օրոցք։*

Փ

Փար—*1. Պտույտ։ 2. Անգամ։*

Փալան—*1. Բեռնակրի համեմատ։ 2. Խաղերի մեջ՝ հակառակորդի վրա բացասական միավոր հաշվելը («այսքան փալան ունեցար»)։*

Փայ—*Բաժին։*

Փեղիվան—*Տե՛ս Փէհլէվան։*

Փայլևան—*Տե՛ս Փեհլէվան։*

Փեշխեշ—*Նվեր, պարգև, ընծա։*

Փահլևան—*Տե՛ս Փէհլէվան։*

Փէղլէվան, Փէղիվան, Փէղլյուվան } *—Բռնամարտիկ, ըմբիշ, մերկաբաջ, արի, կորովի։*

Փիճ—*Ուս։*

Փխատ—*Տե՛ս Արճիճկապ։*

Ք

Քալբաճդ—*Դյխակռիվ, խաղ գլուխները խոյի նման իրար խփելով։*

Քամանդ բերել—*Օձիքից բռնելով քաշել թիկունքի վրա և ուսի վրայով գետնել։*

Քաշկա—*Երանի, երանի՜ թե։*

Քեչա—*Թաղիք։*

Քյալ—*Գոմիշ, գոմշացուլ։*

Քյուշաիկ բալել—*Տե՛ս Ճերըզնակ կովել։*

Քոզ—*1. Գործածված է «բերդ» առումով։ 2. Գառնոց։*

Քռռոելա—*Լայն ժապավեն։*

Օ

Օրա—*Տե՛ս Օպա։*

Օղլի—*Տղա, որդի։*

Օղուլ-ուշաղ—*Տե՛ս Օղլուշաղ։*

Օղլուշաղ—*Կին։*

Օպա—*1. Խորան, վաշե։ 2. Վաշկատուն, խորանաբնակ, վրանի բնակիչ։ 2. Խաղերի մեջ՝ բերդ, խաղի օբյեկտ։*

Ֆ

Ֆալակ—*Բախտ։ Տե՛ս նաև Զարխ ու ֆալակ։*

Ֆաճդ—*Հնարք մենամարտի ժամանակ։*

Ֆերըզնակ կովել—*Ըմբշամարտիկների պես կռվել, կռիվ մղտնել, գետին գարկել և մեջքը սեղմել գետնին։*

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՍՐԿՈՒ ԽՈՍՔ 5
Ներածություն 7
Բնագրեր

I. ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՄՐՑԱԿՑԱԿԱՆ ԽԱՂԵՐ

Ա. Ուժային վարժություններ 43
1. Քար վերցնել 43
2. Շեմկալ բարձրացնել 44
3. Սյուն բարձրացնել 44
4. Պղինձ վերցնել 44
5. Ջրաղացաքարով խաղ 44
6. Ռուբինը ջրավազան է բարձրացնում 44
7. Սմբատ Բագրատունին ոտքերով ձի է բարձրացնում 44
8. Սմբատ Բագրատունին ոտքերով ձի է բարձրացնում 44
9. Տորք Անգեղը քար է նետում 44
10. Տորք Անգեղը քար է նետում 44
11. Տորք Անգեղը քար է նետում 44
12. Տրդատը ծանրություններ է նետում 46
13. Տրդատը գրաստներ է նետում 46
14. Դավթի պղինձ շալակելը 46
15. Գոմեշը փայտով ուսել 46
16. Տրդատը քար է շալակում 46
17. Քանաքեռցի Մովսեսը գոմեշ է շալակում . . . 46
18. Դավթի գութան քաշելը 46
19. Քանաքեռցի Մովսեսը գոմեշի հետ սայլին է լծվել 47
20. Պողպատե սյուն կորել 48
21. Քաղիք կորել 48
22. Քրեր ոլորել 48
23. Փայտ քաշոցիկ 48
24. Փայտ խլոցիկ 49
25. Փետ քաշոցիկ կամ խրոչ 49
26. Փայտ շրջել 49
27. Շրջոցիկ 49
28. Շրջոցիկ 50
29. Իրար շրջել 50
30. Շրջել պատկածին 50
31. Ոտք ծալել 50
32. Բազկի ուժը փորձել 51
33. Մատների ուժը փորձել 51
34. Ձեռք ծալել 51
35. Ձեռք ծալել 51
36. Ափեր բաժանել 51
37. Բռունցքներ բաժանել 51
38. Կուտ կոտռել 51
39. Ջու կոտռել 52
40. Ջվալ վերցնել 52
41. Թեռ բարձրացնել 52
42. Խորոմ վերցնել 52
43. Մարդ բարձրացնել 53
44. Գարեխուրձ 53
45. Քար վերցնել 53
46. Քար վերցնել 54
47. Փեսի քար 54
48. Բեռ վերցնել բռունցքներով 54
49. Մահակ վերցնել 54
50. Մատներով բարձրացնել 55
51. Ծանրություն բարձրացնել 55
52. Ձիթամղոցի 55
53. Ճխթոցիկ 55
54. Լընկի 55
55. Գոմշակոփ 56
56. Կռնաբռնուկի 56
57. Քյալն ընկավ հորը 57
58. Ջաքին և զանձն 58
59. Թաթիկ-լաթիկ 58
60. Արդար-մեզավոր 58
61. Ի՞նչ կուզե 59
62. Գինինա, գինինա 59
63. Հրեշտակ և սատանա 60
64. Սատանան և հրեշտակը 60
65. Քեռու չվան 60
66. Խումբ խմբի դեմ 60
67. Բամբակի գնալ 60
68. Փայտ նետոցիկ 60
69. Քար նետել 61
70. Քար նետուկ 61
71. Քար թալոցիկ 61
72. Քար թալոցիկ 61
73. Քար թալոցիկ 61
74. Քար թալոցիկ 62
75. Քար թալոցիկ 62
76. Քար թալոցիկ 62

77. Թելմանց մական 62
78. Մական 63
79. Աստղապոշ 63
80. Միլոի 63
81. Կարմրագի 63
82. Միլլի 63
83. Երկինք քարել 63
84. Բարձրաբուլիկ 63
85. Ակլատիզ 63
86. Թաթուր-թաթուր խաչերկաթ 63
87. Ճնճղկի 64
88. Պուտ (կակաչ) 64
89. Ձեռքերի վրա 64
90. Բոնդա 64
91. Կրիրու կռիվ 64

Բ. Մենամարտներ 64

92. Դոմշակռիվ Դավթի և Մարամելիքի միջև . . . 65
93. Քալբանդ 65
94. Մենամարտ Դավթի և Մարամելիքի միջև . . . 65
95. Խանփարուի և շահ Սուլեյմանի փահլևանի մենամարտը 65
96. Լենքեմուրի ըմբիշի և գորխեցի հայ կնոջ մենամարտը 69
97. Վարազդատի ըմբշամարտները 69
98. Ըմբշամարտ 69
99. Ըմբշամարտ՝ մարմինն օծելով 69
100. Ըմբշամարտ Սագունի և Բոքայի միջև 69
101. Ըմբշամարտ Լիպարիտի քրոջ և իսմայելացի ըմբիշի միջև 70
102. Մենամարտ կնոջ և տղամարդու միջև 70
103. Սանասարի և Բաղդասարի մենամարտը . . . 71
104. Մենամարտ 72
105. Մենամարտ 72
106. Մենամարտ 72
107. Ուջա քաշել 72
108. Քյուշտիկ 72
109. Գուլաշ բռնել 73
110. Ըմբշամարտ 73
111. Ըմբշամարտ 73
112. Մենամարտ 73
113. Գոտեմարտ 73
114. Ըմբիշ Բաղդասարը 74
115. Մենամարտ Դավթի և խանդութի ուզնկանների միջև 74
116. Մենամարտ Սանասարի և Բաղդասարի միջև . . 74
117. Մենամարտ Ջենով Հովանի և Դավթի միջև . . 74
118. Մենամարտ Դավթի ու իր որդի Մհերի միջև . . 75
119. Մենամարտ 75
120. Մենամարտ Բաղդասարի և պղնձե քաղաքի Քագավորի, կարիճների ու առյուծների միջև . . 75
121. Մհերի մենամարտը Քուլբնկի դևի հետ . . . 77
122. Մենամարտ 77
123. Մենամարտ առյուծի հետ 77
124. Մենամարտ 77
125. Մենամարտ դևերի հետ 77
126. Մենամարտ Սաղնասարի և Դեղձունի միջև . . 79
127. Մենամարտ Բաղդասարի և Բրչամի միջև . . . 79
128. Մենամարտ Դավթի և խանդութի միջև 79
129. Մենամարտ Փոքր Մհերի և Գոհարի միջև . . . 80
130. Մենամարտ 81
131. Մենամարտ հարսնառին 81
132. Հարսանեկան գոտեմարտեր 81
133. Ավշումա և կշտուկի 82
134. «Գոտեմարտ» ամուսինների միջև 82
135. Կոխ հարսանեկան 82
136. Հարսանեկան գոտեմարտ 83
137. Հարսանեկան ըմբշամարտ 83
138. Մարտախաղ—յարխուշտա 83
139. Ըղտախաղ և գոտեմարտ 84
140. Գոտեմարտ շան հետ 84
141. Կոխ 84
142. Ըմբշամարտ 84
143. Գուլաշ 85
144. Տրդատի մենամարտը ցուլի հետ 86
145. Սմբատ Բագրատունու մենամարտը ցուլի հետ . 86
146. Տրդատի մենամարտը ցուլերի հետ 86
147. Տրդատի մենամարտը ցուլերի հետ 86
148. Սմբատ Բագրատունու մենամարտը առյուծի հետ 86
149. Սմբատ Բագրատունու մենամարտը արջի հետ . 86
150. Կոստանդինի մենամարտը առյուծի հետ . . . 86
151. Սմբատի մենամարտը կենդանիների հետ . . . 89
152. Վարազդատի մենամարտը առյուծի հետ . . . 89
153. Մենամարտ Ղովտի հետ 89
154. Կելկռիվ 89
155. Արջախաղ 89
156. Մենամարտ 89
157. Գոմեշ գլորել 89
158. Մուշտեկռիվ 90
159. Բանգքամարտ 90
160. Կռիամարտ 90

Գ. Լախտախաղեր 90

161. Լախտախաղ 90
162. Ջղլախտի 93
163. Ճղլախտի 93
164. Ճղլախտի 94
165. Ջղլաստի 94
166. Լախտի կամ ճիճալախտի 94
167. Գրտու խաղ 94
168. Գծալախտի 94
169. Լախտի 94
170. Կարպետ լախտի 95
171. Չմանոցիկ 95
172. Կենտ լախտի 95
173. Մենամիջի կամ գծի միջև 95
174. Ճղլախտի 95
175. Շրջանաձև լախտի 95
176. Կուժ կոտրուկ 96
177. Քըթկովի 96
178. Քըթուլփոսի 96
179. Տեղ խլուկ 97

180. Մամու շոր 97
181. Դալաք բորա 97
Դ. Բերդախաղեր կամ կտրոցներ 97
182. Կտրոց 97
183. Բերդ 98
184. Կտրոց 98
185. Անցքը կտրել 98
186. Օբա 99
187. Բերդ խաղ 99
188. Ջուռ 100
189. Ջուռ 100
190. Ջուռ առա 101
191. Բըռ 101
192. Բըռ 101
193. Բըռ 101
194. Բերդ 102
195. Մեչտեղից կտրել 102
196. Գերեվարություն 102
197. Նամ-նամ բուդիկ 102
198. Նամ-նամ բուդիկ 102
199. Բերդախաղ 102
200. Ջըռ խաղալ 102
201. Բերդավոր գնդակ 103
ե. Գնդակախաղեր 103
202. Գծագնդակ 103
203. Ախպերս հյուան, վրան է շինում 104
204. Շրջան 104
205. Ոտով գունդ 105
206. Հոլ գնդակով 105
207. Ջղեղ 105
208. Ախպերս հյուան, վրան է շինում 105
209. Խփոցի 105
210. Հեծնոցիկ 106
211. Թուփի 106
212. Կըռան թուփի 107
213. Կըռան թուփ 107
214. Թուփ չալուկին 107
215. Քարի գնդակ 107
216. Քար թուփի 107
217. Ճըզըր-վըզըր 108
218. Ջու, չու 108
219. Հեծնելով գնդակ 108
220. Իշագնդակ 108
221. Հոլ-Հաւլի 108
222. Սագի ոտքով գնդակ 108
223. Գնդակախաղ 108
224. Հալի-հալի 109
225. Թուփով պաղնիս-լշ 109
226. Թուփով տուշփեա 110
227. Սեթաք 110
228. Դաստակով գնդակախաղ 111
229. Թուփ 113
230. Թուփագան 113
231. Թուփ չորեցի 114
232. Թագավորի գնդակ 114
233. Մազագնդակ 114
234. Մազագնդակ 114
235. Ավելոցիկ 115
236. Քանըմիկ 115
237. Մայրը 116
238. Թուփ 116
239. Դառնալեն 116
240. Գնդակախաղ 116
241. Գնդակախաղ 116
242. Դառնալեն 117
243. Ջարնենք դառնանք 117
244. Ջարնենք դառնանք 117
245. Սայի 117
246. Գնդակ խաղալ 117
247. Գնդախաղ կանգնած 117
248. Համբանք 117
249. Խաղերգ 117
250. Օսկի խնձոր 118
251. Օսկի խնձոր 118
252. Ջամ՛ատ 118
253. Օրփևարի 118
254. Խաչի թուփ 118
255. Պատի գնդակ 118
256. Պատի գնդակ 119
257. Համբանք 119
258. Գնդակախաղ 119
259. Գնդակ խաղալ կոկոթան 119
260. Խորուբալ 119
261. Գդակ տարոց 119
262. Բուդի վիզ 119
263. Ջլիկ 120
264. Փափախ ջոցի 120
265. Արախչի տարոցիկ 120
266. Գդակ թոցնել 120
267. Փափաղ շընավորել 121
268. Մըղծղի կամ չուիչուփանուկի 121
Զ. Նշանաության խաղեր 122
269. Ապատարան չորթու 122
270. Հոդ 124
271. Սուլթան 124
272. Թութ 124
273. Թութ 124
274. Նշան առնել 125
275. Մեռել 125
276. Ճելե-մելե 125
277. Գուրզ 126
278. Քարգոր 127
279. Քարնվա 127
280. Կելե-մելե 127
281. Ով կհեծնի 127
282. Կտեխս ճղի 127
283. Ալեք քեռի 128
284. Պապե-պապե 129
285. Բոյ փեռ 129

286. Կոկոջ-կակաջ 129
287. Շակ 130
288. Կըռ-կըռ 131
289. Գլորոցիկ 131
290. Ընկուզի խաղ 131
291. Կլոխ 131
292. Գլուխ-գլխի 131
293. Եա-եա 132
294. Թուռնա 132
295. Յորղան դոշակի 132
296. Գրվանքա 132
297. Տուշ 133
298. Չելիկ 133
299. Շոր խաննելուկ 133
300. Դակի 133
301. Ջրկոկ 133
302. Սալբանդ 133
303. Բանկա պլավ 134
304. Փլավ 134
305. Յոթ քար 134
306. Յոթ քար 135
307. Յոթ քար 135
308. Բոլորակ 135
309. Արգրումի թուփ 135
310. Ջղիզ 135
311. Ընկուզի խաղալ 136
312. Չիլեր 136
313. Լեփուկ 136
314. Լափ 137
315. Լեփ 137
316. Լեպ 137
317. Խոզուկ 137
318. Լոփուկ 138
319. Լեպ 138
320. Հեզնելանց կոճուռ 138
321. Կըչ 139
322. Փուլ 139
323. Սատանի հոր 139
324. Սատանի փոս 140
325. Սատանի փոս 140
326. Սատանի օբա 141
327. Փոսի թուփ 141
328. Թոլոլանգի կամ մազ-մազի 141
329. Կոճիկ 141
330. Փոս 141
331. Սատանի փոս 142
332. Խլպուռ 142
333. Շաքարաման 142
334. Կնկատոցի 142
335. Բծավոր 143
336. Տապո 143
337. Ընկուզի խաղ 143
338. Ճղոպոր խաղալ 143
339. Պնդկի փոս 143
340. Բոն ձգուկ 143
341. Կըկուճ 143
342. Ջատկի ձու խաղալ 143
343. Գլորոցիկ 144
344. Գլորոցիկ 144
345. Թոլոլանգի 144
346. Կելգրամաշ 144
347. Գլուլա (գնդակ) 144
348. Գլորոցիկ 144
349. Գլերան 144
350. Դրամ գլորել 144
351. Սեր-մածուն 145
352. Դավիթը ճան է խաղում 145
353. Շարդա 145
354. Եռով զարկ 146
355. Աչի խաղ 146
356. Սուլթան 148
357. Տասսից 148
358. Սուլթան 149
359. Ամրոցախաղ 150
360. Ջան խաղալ 150
361. Խաղ ճանեքով 150
362. Ճան խաղալ 150
363. Ուջ ալա 150
364. Ճան խաղ նղելով 150
365. Ճանի ջղիզ 150
366. Ալլինաղում-ալլինաղում 151
367. Գլխի տալ 151
368. Գրոզ 152
369. Շրջոցիկ 152
370. Ճան կամ ճանխաղ 152
371. Ջխտար 153
372. Ջալու 154
373. Քըցըլավեն-գըցելավոն 154
374. Խումար կամ պաշ 155
375. Փոխընդոցիկ 155
376. Մնոցիկ 155
377. Մատխուցիկ 155
378. Վնգախաղի երգեր 155
379. Նշանառություն 156
380. Նշանառություն 156
381. Խնձորին նշան բռնել 157

է. Չիլիկախաղեր 157

382. Կընդափետի (կունձափետի) 159
383. Կենդե 159
384. Չիլիկ դաստա 160
385. Սիր ու բիր 161
386. Խիթ ու տլունկ կամ տիթ ու տլունկ 161
387. Ջալմա 161
388. Չիլի դաստա 162
389. Չիլիկ դաստա 162
390. Տլուլ 162
391. Հածիո-դածիո 162
392. Օդան գայլո 162
393. Դուշ փետ 163

394. Գետմանց դուշփետ 163
395. Գետմանց դուշփետ 163
396. Հիլուր 163
397. Խուպուլ 163
398. Բոյդ կա՞ 164
399. Չիլիկ 164
400. Լոտ 164
401. Տշի 164
402. Չալմա 165
403. Փոսանուկի 165
404. Թյություշ 165

Ը. Լողի ձևեր 165
405. Լող 166
406. Լող 167
407. Ընկղուզում 167
408. Սկցնել 167
409. Թևլող 167
410. Թևալող մեկ ձեռքով 168
411. Ոտնալող 168
412. Մնկած լող 168
413. Միջքի լող 168
414. Քաղակ 168
415. Տաշտակ անել 168
416. Տաշտակ ընկնել 168
417. Տաշտ ու քյալակ 168
418. Դորանլող 168
419. Դորանվել 168
420. Կորան լող 168
421. Դորանլող 168
422. Դորտալել 168
423. Բադալել 169
424. Շան լող 169
425. Ջմբիկ 169
426. Մքուք 169
427. Սուղվել 169
428. Քար հանել 169
429. Գլուխկոնծի 169
430. Գլուխկոնծի ցատկով 169
431. Ցատկում ջրի մեջ՝ ոտքերի վրա 169
432. Ցատկում ջրի մեջ՝ գլխի վրա 169
433. Ետ ցատկել ջրի մեջ 169
434. Ոստյուններ ջրում 169
435. Գոլ 169
436. Աբև-աբև 170
437. Ամպը գոռաց 170

II. ՌԱԶՄԱԿԱՆ ՄՐՑԱԿՑԱԿԱՆ ԽԱՂԵՐ

Ա. Զինախաղեր 173
438. Թուր ու մատուռ 173
439. Թրախաղ 174
440. Ասպարեզուկ 174
441. Ասպարախաղ 174
442. Պարսաքարել 174
443. Պարսաքարել 174
444. Պարսաքարել 174
445. Պարսաքարել 174
446. Պարսաքարել 174
447. Պարսատիկ 175
448. Պարսենտ 175
449. Պարսատիկ 176
450. Պարսատիկ 176
451. Պարշթով նշան խփել 176
452. Ֆռշանգ 176
453. Քար թալիկ 176
454. Շամիրամի պարսատիկը 176
455. Նետ-աղեղ 176
456. Նետ ու աղեղ 176
457. Նետ-աղեղ 176
458. Չիարշավ խաղալ 177
459. Նետ ու աղեղ 177
460. Հրացանաձև նետ-աղեղ 178
461. Հրացանաձև նետ-աղեղ 178
462. Նետաղեղ 178
463. Հրացան 178
464. Հրացան 179
465. Պըլընտրուկ 180
466. Փաթլդաղ 180
467. Գորբիճ 180
468. Մախաոն հրացան 180
469. Փամփշտակալ հյուսել 181
470. Պալթոց 181

Բ. Մականախաղեր 181
471. Հոլ 181
472. Հոլ 182
473. Մականախաղ-հոլ 182
474. Հեոլ խաղ 183
475. Հոլ 183
476. Հոլ 184
477. Հոլ 184
478. Կաճխա հոլ 185
479. Բռնոցկ հոլ 185
480. Հոլ կամ հոլոցիկ 185
481. Հոլ 186
482. Հորթ 186
483. Մականախաղ 186
484. Մականախաղ ձիերով 187
485. Գնդակախաղ 188
486. Գնդակախաղ 188
487. Ճոկանախաղ 188
488. Ձիագնդակ-մականախաղ 188
489. Ձիագնդակ-մականախաղ 188
490. Ձիագնդակ 188
491. Ձիագնդակ խաղալ 188
492. Ձիագնդակ-մականախաղ 189
493. Ճրինտ 189
494. Ջղիր 190

495. Ջիրիդ 191
496. Մական (չիլիթ) խաղալ 191
497. Ձիարշավ-մականախաղ 192
498. Ջիրինդ 194
499. Ջիրինդ 194
500. Ջիրինդ 194
501. Ճոկանախաղ 194
502. Ջիրինդ-մականախաղ 195

Գ. Ձիախաղեր 195
503. Ձիարշավի հրապարակ 196
504. Ձիարշավ 196
505. Ձիարշավներ և այլ խաղեր 196
506. Ձիարշավներ 196
507. Լևոնը ձիավարժ 196
508. Ձիարշավարաններ 196
509. Ձիարշավ Տարոնում 196
510. Գրոհ 198
511. Հարսնառի ձիարշավներ 198
512. Հարսանեկան ձիարշավ 198
513. Ճիրիտ 198
514. Ձիարշավ 199
515. Ձիարշավ 199
516. Ձիարշավ 199
517. Ձի խաղցուցել 199
518. Ձիանդրոցի 199
519. Խոչի տալ 199
520. Ձիախաղեր 199
521. Տղաւոը կաոք է կանգնեցնում 199
522. Տղաւոը կաոք է կանգնեցնում 201
523. Արտաշեսը օղապարանով առևանգում է Սաթենիկին 201
524. Օղապարանով մարդ բռնել 201
525. Օղապարանով մարդ բռնել 201
526. Օղապարանով մարդ բռնել 201
527. Օղապարանով մարդ բռնել 201

Դ. Այլ ռազմախաղեր 201
528. Նշնիկներ 203
529. Ձլի կամ փախվոց 203
530. Նշնիկներ 204
531. Նշնիկներ 204
532. Նշնիկներ 205
533. Դուրս եկավ 205
534. Գրոհի 205
535. Թաղակոխվ 205
536. Կոխվ 206
537. Թամաշա 206
538. Փայտակոխվ 207
539. Թաղային կոխվներ 207
540. Կճանով կոխվ 207
541. Գրոհի ձնագնդով 207
542. Ձնագնդի 208
543. Ձնե մարդ 208
544. Ձնագնդի 209
545. Ագագամի 209
546. Լագան լագանի 209
547. Գերի 210
548. Տելվի տոլ 210
549. Գերի 210
550. Գերատուքյուն 210
551. Կրակտարոց 211
552. Կրակտարոց կամ կրակտարոցիկ 211
553. Կայծ առնել 211
554. Երկին գոտի 211
555. Դմբո-դմբո 211
556. Կրակ տարոց 212
557. Գերի 212
558. Գերի 212
559. Արախչի տարոցիկ 213
560. Խալայուա 213

Ե. Լեռնային սպորտ 213
561. Լական 214
562. Հետիկ 214
563. Հետիկ 214
564. Հետիկով քայլել 214
565. Փոկով բարձրանալ 215
566. Դամերով կոշիկ 215
567. Քապ-քապ կոշիկներ 216
568. Ձիերի ոտքերին պարկեր փաթաթել 216

ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ

ՀԱՎԵԼՎԱԾ I

Յատիկ 217
Ըմբիշ Յատիկը 217
Ըմբիշ Բազդասարը 219
Ձիախաղեր 220

ՀԱՎԵԼՎԱԾ II

Խաղացողներին վերաբերող օրենքներ Մխիթար Գոշի Դատաստանագրքում 220
Խաղացողներին վերաբերող օրենքներ Սմբատ Իշխան Գունդստաբլի Դատաստանագրքում 221
Աղբյուրների համառոտագրություններ 223
Տեղանունների համառոտագրություններ 228
Բառարան 230

ՎԱՐԴ ՀԱՐՈՒԹՅՈՒՆԻ ԲԴՈՑԱՆ

ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԽԱՂԵՐ

II

Տպագրվում է Հայաստանի պատմության պետական թանգարանի
և Հայկական պետական ֆիզիկական կուլտուրայի
ինստիտուտի գիտական խորհուրդների որոշմամբ

Հրատ. խմբագիր Լ. Ս. ՍԱՐԱՖՅԱՆ
Կազմը Լ. Ա. ՍԱԴՈՅԱՆԻ
Գեղ. խմբագիր Հ. Ն. ԳՈՐԾԱԿԱԼՅԱՆ
Տեխ. խմբագիր Լ. Կ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
Սրբագրիչ Է. Ա. ՍՈՒԽԻԿՅԱՆ

Հանձնված է շարվածքի 5. 10. 1979 թ.։ Ստորագրված է տպագրության 1. 08. 1980 թ.։
ՎՅ 04819։ Չափը 84×108 1/16, Թուղթ, № 1։ Տառատեսակ գրքի սովորական։ Բարձր տպագրություն։ Պայմ. 26,26, տպագր. 15, մամուլ+4 ներդիր։ Հրատ. հաշվարկ 21,9 մամուլ։
Տպաքանակ 4000։ Պատվեր № 1120։ Հրատ. № 5252։ Գինը 4 ռ. 00 կ.։

ՀՍՍՀ ԳԱ Հրատարակչություն, 375019, Երևան, Բարեկամության փ., 24 գ։
Издательство АН Арм. ССР, 375019, Ереван ул. Барекамутян, 24 г.
ՀՍՍՀ ԳԱ Հրատարակչության տպարան, 375019, Երևան, Բարեկամության փ., 24։
Типография Издательства АН Арм. ССР, 375019, Ереван, ул. Барекамутян, 24.